



ISSN 1829-2992

Ա Կ Ո Ւ Ն Ք

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԹԻՎ 2(8)



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՄՆԱՃՅՈՒՂ

Ա Կ Ո Ւ Ն Ք

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԹԻՎ 2(8)

ԵՐԵՎԱՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2013

Գլխավոր խմբագիր՝

պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Խմբագրական խորհուրդ՝

Գրիշա Ալեքսանի Ղարիբյան – տնտեսագիտ. դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Պետրոս Հովհաննեսի Հովհաննիսյան - պատմ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր

Հարություն Ալեքսանի Մարգարյան – տնտեսագիտ. դոկտոր, պրոֆեսոր

Հենրիկ Մուշեղի Աբրահամյան – պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Ռաֆիկ Ասքանազի Նահապետյան – պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Սամվել Արշավիրի Առաքելյան – պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ

Հայկ Մկրտիչի Դերձյան – իրավագիտ. դոկտոր, պրոֆեսոր

Հենգել Գերասիմի Մանուչարյան – քաղաքագիտ. դոկտոր, պրոֆեսոր

Աննա Գրիգորի Ասատրյան - արվեստագիտութ. դոկտոր, պրոֆեսոր

Սամվել Պարզևի Մուրադյան – բանասիր. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Սեդա Քերոբի Գասպարյան – բանասիր. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Մեյրան Արտուշայի Ջաքարյան – փիլիս. գիտութ. դոկտոր, պրոֆեսոր

Մելսիկ Պարզևի Մկրտունյան – հոգեբանութ. դոկտոր, պրոֆեսոր

Ակունք. Գիտական հոդվածների ժողովածու / Խմբ. խորհուրդ՝
Գ.Ա. Ղարիբյան և ուրիշ.; Գլխ. խմբ.՝ Ա.Ա. Ներսիսյան. – Եր.:
ԵՊՀ հրատ., 2013 թ. – 222 էջ:

ՀՀ ԲՈՀ-ի 13.03.2012թ. որոշմամբ «Ակունք» ժողովածուն բավարարում է ԲՈՀ-ի պահանջները և ճանաչվում ընդունելի ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար:

© ԵՊՀ հրատարակչություն, 2013 թ.

© Հեղ. խումբ, 2013 թ.

АРМЯНО-РУССКИЕ ОТНОШЕНИЯ
В ЦЕРКОВНОЙ СФЕРЕ
1836 – 1917 ГГ.

ВАЛЕРИ ТУНЯН

Функционирование управления армянской церкви в Российской державе как синтез внутренних интересов самодержавия и Эчмиадзинского престола от принятия регламентационного акта 1836 г. до 1917 г. является знаменательным для понимания общего и особенного в развитии армянской нации. Тем более, что в этом контексте проблема имеет сложный характер, исследуется и актуальна в историографии¹.

В церковном “Положении” 1836 г. о управлении армянской церкви в Российской империи имелись недочеты: право наследование имущества духовенства светскими лицами, порядке назначение епископов и прерогатив католикоса. Не соответствие армянским традициям распоряжения личным имуществом затронуло прошение главе церкви Мадрасские и Калькуттские армяне в 1839 и 1840 гг., поскольку добровольные приношения предназначались духовенству, а не светским лицам; все принимавшие обет священнослужители находились на довольствии армянской церкви Индийские армяне предлагали расширить состав Синода из восьми членов до 12: шесть епископов и шесть архимандритов. Компетенцией католикоса, а не Синода сочтено рассмотрение вопросов веры. Неприемлемым указано требование “Положения” “О сложении монашесствующего и вообще духовного сана” лишь по разрешению Эчмиадзинского Синода. Кроме того, в 1839 г. появилась книга “Дополнения к доказательству о древности трехперстного сложения”, где, якобы, утверждалось о наличии двоеперстного сложения в армянской церкви, которое характеризовалось проявлением армянской ереси.

Все эти наблевшие вопросы католикос Ованес Карбеци (1831-1842) 8 августа 1840 г. направил прошением главноуправляющему Закавказья для предоставления царю Николаю I. Католикос Карбеци утверждал, что догматы армянской церкви “согласны с греческой”, и появление подобного утверждения являлось “оскорблением православной церкви нашей”. Испрашивалась высочайшая санкция на недопущение подоб-

¹ **В.Г. Тунян**, Восточная Армения в составе России. Ер., 1988; “Положение” Армянской церкви. Ер., 2001; Эчмиадзинский престол XIX - нач. XX вв. Ер., 2001; Эчмиадзинский вопрос в политике России. Ер., 2002; Армянская церковь: материалы еженедельника “Овив”. Ер., 2009; Дякин В.С. Национальный вопрос во внутренней и внешней политике царизма (начало XX в.) - Вопросы истории. 1996, N 11-12; Верт П. Глава церкви, подданный императора: армянский католикос на перекрестке внутренней и внешней политики империи, 1828-1914. - Ab Imperio. 2006, N 3; Архимандрит Августин (Никитин). Армянская христианская община в Петербурге. - Нева, 2011, N 1 (“Русский журнал” zhzh@russ.ru); Национальная политика XIX (конец) - XX (начало) + Руссификационная политика царизма XIX (конец) - XX (начало). - @ Vaeringjar Team; Амбарцумов И. В. Эчмиадзинские католикосы и их влияние на общественно-политическую жизнь Армении (1892 - 1912) . - Вестник ТвГУ. Серия “История”. 2012, с. 76-87.

ных мыслей со стороны русской цензуры в различных изданиях и публикациях.

Прошение было рассмотрено Николаем I. Относительно проблемы крещения монарх повелел сообщить верховному католикосу о принятии мер св. Синодом по недопущению подобных мыслей “на счет” армянской церкви. От Ованеса Карбеци затребовано изложение основ григорианского вероучения, представления в Министерство внутренних дел для рассмотрения св. Синодом. Высочайшая воля была сообщена А. Г. Строганову и обер-прокурору св. Синода графу Н. А. Протасову, а 12 декабря 1841 г. - верховному католикосу. Решение этой проблемы довелось осуществить католикосу Несесу Аштаракеци (1843 - 1857)².

В июне 1848 г. Нерсес V представил наместнику Кавказа свои замечания по наследственным статьям 39, 71, 89 и 91 “Положения”, затронутые в прошениях индийских армян. Католикос отвергал наличие собственности у армянского духовенства, достоянием которого располагала вся церковь: “Самый Эчиадзинский монастырь и церковь Армянская в Иерусалиме содержатся подобными средствами, и все это приобретает посредством монашествующих”³. Долг церковных иерархов усмотрен в служении пастве и богу, а не в обогащении родственников: “Епископу не подобает радеть и заботиться о обогащении своей родни, забывая своего Господня”⁴.

Все имеющиеся спорные дела о наследовании подлежали рассмотрению указанным подхода: “Силу сего закона допустить и на дела, возникшие после 11 марта 1836 года”⁵. Церковный подход к наследованию имущества духовенства представлялся залогом умиротворения общественного мнения: “Это успокоит умы целой нации и сохранит в святости церковные законы, коими руководствовались армяне с самого введения христианства”⁶. При этом католикос указывал, что изложенным правом наследования руководствуются все армяне других стран

Затрагивался также вопрос о процедуре избрания главы. В прибавление к статье 15 Аштаракеци указывал: “Национальный устав о выборе патриарха-католикоса всех армян, последователей св. апостолов христиан Фадея и Варфоломея (Бардугимеос) и преемника их святого Григория Великого просветителя, до кончины патриарха Гукаса Каринского в 1779 году, был следующим в течении веков”⁷. После чего следовало изложение избирательной процедуры до регламентации русской власти: “По кончине патриарха-католикоса почетнейшие из духовенства и мирян Араратской области собираются в патриаршем престольном монастыре к церемонии погребения усопшего патриарха. На другой или на третий день после погребения собираются в храме св. Эчиадзина архиепископы, епископы, архимандриты, протоиереи, иереи, также и почтеннейшие лица из светских сословий армян - меликов, юзбашей, старшин и других, и собором став перед Святым Престолом, возносят к Богу молитву о вспомоществовании силы ума и сердца всего собо-

² Матенадаран, ф. Архив Лазаревых, п. 146, д. 45, ед. хр. 9, л. 133 - 136., 225.

³ НАА, ф. 57, оп. 1, д. 84, л. 140.

⁴ Там же, л. 139 об.

⁵ Там же, л. 140.

⁶ Там же, л. 140, 141.

⁷ Там же, л. 120.

ра в выборе”⁸. Заслушивались отзывы каждого из присутствующего, итог суммировался, а полученный результат сообщалась армянам Константинополя, Иерусалима и других мест.

10 сентября 1848 г. Совет Главного управления Закавказья рассмотрел представление католикоса Аштаракеци об изменении наследственных статей главы церкви, епископов и монашествующих армянского духовенства. Совет постановил отложить дальнейшее рассмотрение дела, чтобы католикос уточнил свое мнение по оставшимся статьям прошения индийских армян - 11, 12, 13, 33, 35, 37 “Положения”, относящимся к избирательному процессу католикоса, процедурным вопросам, взаимоотношениям католикоса и Эчмиадзинского Синода, круга действий последнего⁹.

В исповедальном вопросе католикос Аштаракеци предпочел действовать каноническим путем. В отношении от 13 января 1850 г. наместнику Кавказа кн. М. С. Воронцову им отмечена занятость сбором исторических сведений в исповедальном вопросе. Указывалось о наличии канонического труда католикоса Нерсеса (Шнорали-Благодатного) XII в., содержащегося в книге “Исторические памятники вероучения армянской церкви, относящиеся к XII столетию”, изданной в переводе Ал. Худобашева за 1847 г. в С.-Петербурге, которая давала исчерпывающий ответ о сущности и характере вероучения как национальной христианской церкви. Аштаракеци отмечал: “Кто бы не принялся излагать в настоящее время наше вероисповедание, но все таки оно не может быть столь полно, столь удовлетворительно какое представляет соборное послание патриарха Нерсеса Клаэнского ко всему Армянскому племени, касающиеся существенных истин религии и в особенности в догматическом отношении переписки его с греческим императором Мануилом Комненом и зятем Комнена Алексеем и со всем собором церкви Константинопольской,...”¹⁰ Высылались два экземпляра книги: один - для наместника Кавказа, а другой - св. Синоду¹¹. Мнение католикоса Аштаракеци принято к сведению.

Нерсес Аштаракеци был волевым и авторитетным верховным католикосом. При нем установилось самовластие католикоса, непогрешимого и безотчетного в своих действиях, которые имели целью укрепить влияние и самобытность армянской церкви. В среде армянского духовенства воплощен тезис: “Верховный католикос - “Положение и закон”. Аштаракеци установил контроль над Эчмиадзинским Синодом, оставляя постоянно вакантным большинство его состава, управляя лично хозяйственной частью. Доходы епархий концентрировались в негласной казне, что позволило собрать 1 млн. руб. асс. на открытие духовной академии, учреждение духовной семинарии в Эчмиадзине и улучшить положение Тифлисского училища Нерсисян. В образовательной сфере главной заслугой стало открытие церковно-приходских училищ, с санкции царя Николая I, ставших кузницей национального просвещения для подрастающего поколения¹².

⁸ Там же, л. 121.

⁹ Там же, л. 126, 141.

¹⁰ Там же, л. 75.

¹¹ Матенадаран, Архив католикосата, п. 154, ед. хр. 541, л.1-2 об.

¹² Российский государственный военно-исторический архив (РГВИА), ф.169, оп.1, д. 4, л. 189; Извлечение из всеподданнейшего отчета министра внутренних дел за 1855. СПб, 1857 с.178

Общее состояние армянской церкви в России прогрессировало при католикосе Нерсесе Аштаракеци. В 1848 г. высочайшей санкцией осуществлено освобождение армянских церквей и монастырей в России от всех городских и полицейских повинностей. На следующий год разрешено продавать восковые свечи, используемые при духовных обрядах, в самих церквях либо находящихся при них лавках. В 1853 г. подтвержден вневедомственный статус армянских духовных училищ от попечительства Кавказского учебного округа., а спустя год регламентированы права детей священнослужителей при поступлении в военную службу.

Таблица 1.

Состояние белого армянского духовенства 1855 г.

Наименование епархий	Церкви	Духовенство	Число прихожан				
	кафед- ральные	приход- ские		припи- сные	кладби- щенские	свящ.- церковно служители	
Н.Бессарабская	4	28	1	3	54	48	23948
Астраханская	3	12	2	3	76	18	7002
Ереванская	1	446	1	3	504	350	143479
Грузинская	4	18	240	37	312	332	127560
Карабахская	1	164	3		169	82	62127
Шемахинская	35	3			32	32	15502
Всего...	13	703	244	56	1147	862	379618

По армянским епархиям России в 1855 г. значилось 1016 церквей: кафедральных - 13, приходских -703 приписных -244, кладбищенских - 56, а также 310 часовен. Из них во внутренних епархиях имелось церквей: Нахичевано-Бессарабской - 4 кафедральных, приходских-28, приписных -1, кладбищенских -3 (всего 36), а в Астраханской - 3 кафедральных, приходских -12, приписных 2, кладбищенских - 3 (всего20). В Нахичевано - Бессарабской епархии численность священнослужителей равнялась 54, церковнослужителей – 48 (всего 102), а прихожан 23948 обоего пола, а в Астраханской, соответственно, 76 и 18 (всего 94) и 7002 прихожан. Количество духовных лиц этих двух епархий от общего числа армянской церкви (2009) равнялась 196, что составляло 10,97%, а численность прихожан 30950: Нахичевано-Бессарабской - 23948, а Астраханской -7002. По сравнению с данными 1836 г. количество прихожан в Нахичевано-Бессарабской епархии (19792) увеличилось на 4156 человек, а по Астраханской (16135) произошло уменьшение в 9133 лиц. Если в первом случае действовал механизм естественного роста, то во втором случае резкий упадок имел связь с миграционным процессом.

Сопоставление с данными Эчмиадзинского прокурора Ф. Корганова за 1841 г. позволяет представить увеличение общего количества церквей при Аштаракеци, так приходских на 47, но отмечается уменьшение численности священнослужителей на 113 и церковнослужителей - 515. Фиксируется увеличение численности прихожан армянской церкви:1841 г. - 288018 и 1855 г.- 379618, т. е. на 91600 чел. Причем этот процесс был обеспечен за счет увеличения прихожан в Ереванской, Грузинской, Карабахской епархиях и естественного прироста в Шемахинской, но сокращение имело место в Нахичевано-Бессарабской и Астраханской епархиях (на 1000 и 11480 чел.).Число приходских училищ составило 21: Нахичевано-Бесса-

рабской - 9, Астраханской - 2, Ереванской-2, Грузинской - 6, Карабахской - 1, Шемахинской - 1¹³.

При этом действовала двойная тенденция развития армянской церкви: с одной стороны, расширение количественного состава священнослужителей, а с другой - оптимизация. Так, в 1848 г. в Карабахской епархии было возведено в сан священника 77 лиц, хотя и после этого процесс пополнения духовных лиц продолжался¹⁴, но вскоре возникла проблема соотношения количества и качества. В августе 1851 г. был составлен список непригодных священнослужителей Карабахской епархии, насчитывающий 34 фамилии¹⁵. Всего в ноябре в Карабахской епархии число священников, дьяконов и церковнослужителей составляло 277 человек, что означало значительность непригодных священнослужителей¹⁶.

Общая численность духовных лиц Нахичевано-Бессарабской епархии в 1837 г. равнялась 319, а в 1855 г. - 102. Уменьшение их количества составило 31,9%. Более резко сократилось численность священнослужителей и церковнослужителей по Астраханской епархии: 1837 г.-166 (56 + 110), а в 1855 г. - 94 (76+ 18), т. е. выбыло 78 лица или 46,98%. Оптимизация состава духовных лиц шла параллельно с процессом сокращения численностью армян Астраханской епархии, а также новыми возможностями на гражданском поприще. При этом произошел рост церквей в Нахичевано- Бессарабской епархии: 1855 г. - 36, а в 1837 г. - 28 (22,3%). В Астраханской губернии имелся застой: 1855 г. - 20 церквей, а в 1837 г. - 19.

Деятельность епархиальных консисторий перед Эчмиадзинским Синодом получила отражение в предоставлении полугодовых ведомостей.- именная о всех производимых делах, а также о следственных и уголовных делах. Для повышения эффективности деятельности отчетных структур о делопроизводстве вместо двухмесячных ведомостей¹⁷ стали использоваться квартальные срочные ведомости. Так в 1852 г. Астраханская епархиальная консистория их представило за июль, август, сентябрь, а также за октябрь, ноябрь и декабрь.

Взаимосвязь демографическое положение армянского населения и статистики в делопроизводстве Астраханской губернии показывают данные срочных ведомостей за конец 1852 г¹⁸.

Таблица 2.

Время поступления	Следственных и уголовных	Просительных	Метрических справок	Итого
От ноября к 1 декабря оставалось нерешенных дел	11	53	22	28
К 1 декабря поступило		3	61	86
Итого...	11	56	4	71

¹³ Извлечение из всеподданнейшего отчета министра внутренних дел за 1855 г. Приложение N 17, с. 118, 119.

¹⁴ Документальные материалы по истории армянской церкви. Сост. С. Бейбудян. Ереван, 2001, кн. 9, N112, с. 163, 164; N 114, с. 168; N 116, с. 170; N 128, с. 183; N 134, с. 191. - На арм. яз.

¹⁵ Там же, N 141, с. 200, 201.

¹⁶ Там же, N 143, с. 202 - 213.

¹⁷ НАА, ф.56, оп. 2, д. 522, л. 1, 3, 5, 6; д. 564, л. 1 - 23, 24 - 30.

¹⁸ Там же, , д. 522, л. 25.

В декабре решено: из нерешенных вновь поступивших			2 1	2 1
Итого...			3	3
К 1 января 1853 г. ос- талось нерешенных	11	56	1	68

Краткий срез представленных данных не позволяет делать обобщающее, годовое суждение, но показывают низкую эффективность решенных дел - за декабрь 1852 г. они составили 4,2% (3 дела). При этом, в Астраханской епархии имела тенденция стабилизации численности духовных лиц: 1855 г. -94 (священнослужителей 76 и церковнослужителей 18), а в 1862 г. - 98 (священников - 55, дьяконов-5, церковнослужителей - 38). Подпиткой являлось воспроизводство священнослужителей. В 1862 г. было посвящено 8 лиц: из духовного сословия 6, а светского 2. Явлению носило положительный характер, с учетом географического представительства духовных лиц епархии: города Астрахань, Владикавказ, Георгиевск. Ставрополь, Кизляр, Моздок, св. Креста, с. Армавир на Кубани, крепость Екатеринодар и укрепление Темир хан Шур¹⁹.

При этом католикос Аштаракеци строго следил за целеуказанной направленности епархиальных иерархов. 4 ноября 1856 г. глава Нахичевано-Бессарабской епархии архиепископ Матеос Вегапетям подал жалобу прокурору Эчмиадзинского Синода Г. Васакаюну, что католикос Аштаракеци отстранил его от управления епархией без суда и следствия, обусловленное покровительством министром внутренних дел С. Ланским²⁰.

Потребность литературы об армянском вероисповедании для русской общности побудила Хачатура. Лазарев в 1857 г. переиздать работу иерарха Аргутинского-Долгорукого “Исповедание веры Армяно-григорианской церкви”, посвященную императору Павлу I. Точно так же оно было связано с противостоянием католицизму и желанием возвысить православие²¹.

Произошло усложнение содержания церковной статистики, исходящей от требования властей, получившей новые градации в данных за 1857 и 1863 гг.²².

Таблица 3.

Епархии	Число родившихся		Число умерших		Число бракосочетаний	
	1857	1863	1857	1863	1857	1863
Астраханская (Став.губерния)	782	927	614	663	153	159
Шемахинская	836	910	936	561	267	218
Ереванская	8205	9537	5000	5040	2600	2040
Карабахская	2401	3003	2314	1343	1156	852
Итого....	12224	14377	8864	7607	4176	3269

¹⁹ Там же, оп. 1, д. 3628, л. 85; оп. 2, д. 795, л. 17, 18.

²⁰ Там же, оп. 2, д. 629, л. 1-2.

²¹ РГАДА, ф. 1252, оп. 1, д. 394, л. 3.

²² НАА, ф. 56, оп. 1, д. 4601, 41.

Данные имеют определенные неточности, так по Астраханской епархии они приводятся лишь по Ставропольской губернии, однако, представляют наличие определенных всплесков в прибыли и убыли армянского населения по каждой показанной епархии.

Время времени сказывалось на состоянии церквей в Петербурге, Москве, Кишиневе и других мест. Для обеспечения их существования в столицах представители фамилии Лазаревых возводили вокруг основанных церквей постройки, обеспечивающих их финансовое положение. Эти поступления позволяли содержать при армянских церквях причеты, бесплатных воспитанников в Лазаревском институте, студентов духовного отделения, а в Эчмиадзин высылались разные церковные принадлежности по требованию Синода²³. Аналогичным образом действовал иерарх Нерсес Аштаракец в Грузинской епархии, обеспечив безбедное существование основанного училища в Тифлисе построением караван-сарая и лавок. Точно также он поступил в Бессарабской епархии, где использовал доходы Кишиневской и Григориопольской церквей, как и ссуду от правительства в 5 тыс. рублей для возведения построек и лавок, сдаваемых в наем²⁴. Григориопольское духовное правление проявляя прагматизм взяло от городской магистратуры пустующий участок земля для “вспашки и посева”, чтобы увеличить самообеспечение провиантом²⁵. Доходные церковные дома были сооружены в г. Новый Нахичеван, поступления от которых затем высылались католикоу Аштаракец в Эчмиадзин²⁶.

Поддержание благолепия храмов требовало поддержки общественности. В 1836 г. для перестройки церковного дома, постройки нового дома церкви св. великомученицы Екатерины на Невском проспекте и улучшения состояния двух старых домов в Петербурге Хачатур Лазарев создал специальный строительный комитет из видный армянских представителей - ст. сов. А. М. Худобашев, сов. А.-С. Сумбатов, над. сов. И. С. Асхаранов, тит. сов. С. М. Лалаев. При этом предварительные проекты по улучшению и расширению церковного хозяйства были заказаны архитектору академии художеств над. сов. А. И. Мельникову. Некоторые проекты были поручены архитектору Е. Гр. Цолинову, что обеспечило хорошее качество проделанной работы²⁷.

В конце декабря 1843 г. Нерсес Аштаракец добился правительственной санкции на возведении св. Креста над армянским молебельным домом в Одессе. С главноуправляющим путей сообщений и публичными зданиями П. А. Клейнмихелем было достигнуто соглашение о необходимости восстановления обветшалого Собора Успения Богородицы в Астрахани, с предоставлением проекта необходимых ремонтных работ²⁸.

В то же время церковный капитал Петербургского и Московского духовного

²³ НАА, ф. 399, оп. 1, д. 79, л. 1 об.

²⁴ С. Самуэляц, Воспоминания из жизни католика Нерсеса У.- Базмавеп. 1904, с. 208, 251, 252. - На арм. яз.

²⁵ Дж. Фаньян, Описание армянских документов, опубликованных в “Трудах Бессарабской губернской ученой архивной комиссии. - Вестник архивов Армении. 1987, N 3, с.113.

²⁶ НАА, ф. 399, оп. 1, д. 79, л. 3.

²⁷ Там же, д. 70, л. 202, 218, 219.

²⁸ Там же, ф. 400, оп. 1, д. 48, л.243 об, 245.

правления стал уменьшаться в 60-гг. XIX в., что было связано с содержанием священнослужителей и иерархов, прибывающих по разным вопросам в обе столицы Российской державы. Это обусловило утверждение тайным советником, камергером Хачатуром Лазаревым 16 апреля 1865 г. “Руководство ктитора” по контролю церковной отчетности²⁹. Затем последовало распоряжение попечительству армянских церквей Москвы и Петербурга действовать “благоразумною осторожностью” во всех “надобностях, работах, счетах и в прочем”³⁰. Напряженность в средствах, ветхость деревянных церковных строений, заставила Хачатура Лазарева в 1869 г. получить у правительства ссуду в 50 тыс. руб. на 33 год на уплату церковных долгов и ремонт армянской церкви в Москве, что и было осуществлено. Кроме того он добивался направления церковных доходов на ремонт Кишиневской армянской церкви³¹.

При католикосе Геворге IV (1865-1882) произошла переоценка определенных ценностей: “Положение” из зла превратилось в добро. Оно сохраняло и гарантировало незыблемость статуса армянской церкви в Российской державе. 8 мая 1870 г. наместник Кавказа поставил в известность министра внутренних дел о желании католикоса Геворга IV повременить с изменением содержания церковной хартии: “Полагает необходимым отложить пересмотр действующего ныне Положения до более удобного времени”³². Вел. кн. Михаил Николаевич счел нужным удовлетворить ходатайство

Управляющий министерством внутренних дел кн. Б. Лобанов-Ростовский 27 августа запросил заключения внешнеполитического ведомства. На основании представления Азиатского департамента государственный канцлер А. М. Горчаков 15 сентября 1870 г. выразил мнение о совпадении точек зрения с наместником Южной окраины: “Я вполне разделяю выраженное е.в. наместником Кавказа мнение об уместности удовлетворения настоящего желания верховного католикоса”³³.

Министерство внутренних дел и руководство Кавказа были вынуждены учитывать позицию верховного католикоса. Сочтено возможным пойти на частичное удовлетворение прошения индийских армян. 1 марта 1871 г. царь Александр II утвердил постановление Государственного Совета о порядке наследования имущества армянского монашеского духовенства в духе национальных традиций³⁴. На следующий день юридическую силу получил новый штат Эчмиадзинского Синода в размере 9775 руб., превышающий прежний на 4725 руб. Для “благоустройства” Эчмиадзинского монастыря, а также армянских церквей Константинополя, пострадавших от пожара 1871 г., разрешено осуществить сбор пожертвования в державе³⁵.

²⁹ Там же, ф 399, д. 79, л. 1 - 16 об.

³⁰ Там же д. 70, л. 270.

³¹ Там же, д. 79, л. 4.

³² РГИА, ф. 821, оп. 140, д. 1, л. 229.

³³ Там же, л. 239.

³⁴ Отчет по Главному управлению наместника Кавказа за первое десятилетие управления Кавказским и Закавказским краем е.и.в. вел. кн. Михаила Николаевича. Тифлис, 1873, с. 100, 101

³⁵ Документальные материалы..., кн. 11, N 288, с. 364, 365; Пособие. - Арарат. 1871, 1871, сентябрь, с.28. - На арм. яз.

Кондаком от 20 сентября 1873 г. было утверждено специальное правление для заведования делами Эчмиадзинского монастыря, призванное содействовать его благоустройству и управлению экономической части. Кондак запрещал кому-либо вмешиваться в деятельность монастырского правления: “Никто из братии монастыря, ниже других, в какую бы он должность не был облечен, не осмелился бы явно или тайно вмешиваться в дела монастырского правления”³⁶. Состав правления включал шесть членов: епископы Степан и Иеремия, архимандриты Нересес, Григорий, Мамбре, Степан³⁷.

Необходимость прогресса в подготовке священнослужителей. для пользы нации и церкви являлась предметом внимания католикоса Геворга IV Константинопольского (Керестеджяна). 11 мая 1874 г. католикос направил свои соображения об открытии духовной академии в Эчмиадзине наместнику Кавказа. Для армянской церкви характерной чертой признавалась историческая забота о воспроизводстве собственных священнослужителей: “По издревле существующему порядку, каждый монастырь имел при себе училище. Монастырь же Эчмиадзин, престол католикоса всех армян, включал в стенах своих рассадник высшего образования”. Система действовала и при иноверческом господстве, - “даже во времена гонения. Первопрестольный монастырь сей не имел недостатка в монахах с познаниями из богословских и философских наук и языкознания”, - но затем дала сбой. Уменьшение подготовленных священнослужителей заставило католикосов Нересеса Аштаракеци и Матеоса Чухаджяна задуматься о необходимости духовной академии, которую, по разным обстоятельствам, не удалось осуществить. Дух времени и нахождение Эчмиадзина в составе Российской державы требовали решения данной проблемы: В видах пополнения крайнего недостатка в просвещенных и благовоспитанных духовных для армянской церкви. Академию предусматривалось освятить в октября.

Намечалось сохранить трехразрядную систему церковных заведений: 1. приходские школы при сельских и городских церквях; 2. среднеучебные заведения в каждом городе или монастыре, где имеется духовное правление; 3. по одной семинарии в каждой епархии и Эчмиадзине. Армянскую систему образования должна была увенчать духовная академия. Предусматривалось пересмотреть “уставы” приходских и среднеучебных заведений, которые после рассмотрения и утверждения “установленным порядком” подлежали сообщению правительству для сведения.

1 июня 1874 г. наместник Кавказа вел. кн. Михаил Николаевич поддержал намерение Геворга IV открыть духовную академию в отношении к министру внутренних дел. Ознакомление с ходатайством католикоса главы внешнеполитического ведомства Лобанов-Ростовского привело к убеждению, что речь идет о реализации державной программы по усилению воздействия Эчмиадзинского престола, которая требует учета интересов всех заинтересованных министерств. В отношении к управляющему министерством иностранных дел 6 июля 1874 г. указано: “В бытность патриарха-католикоса в Петербурге были заявлены им некоторые пред-

³⁶ РГИА, ф. 821, оп. 140, д. 44, л. 72.

³⁷ Там же, л. 1 - 5.

положения, имеющие целью скрепить религиозно-нравственные узы, соединяющие турецких армян с Эчмиадзинским патриаршим престолом. Предположения эти были подвергнуты предварительному обсуждению министров иностранных и внутренних дел, совокупно с находившимся тогда в Петербурге начальником Главного управления наместника Кавказа и найдены вполне соответствующим с целью и интересам армянской церкви³⁸.

Важность предполагаемого учебного заведения в форме семинарии связывалась с подготовкой священнослужителей для турецких армян: “В числе тех предположений находилось предположение об основании в Эчмиадзине некоторых учреждений, в особенности семинарии, для приготовления духовных пастырей, которые могли бы с честью занимать в последствии церковные должности в Турции³⁹”.

19 июля 1874 г. царь Александр II утвердил “Правила об армянских школах” для руководства духовным ведомством армяно-григорианского исповедания. Установливался льготный статус армянских училищ двухступенчатого уровня. Первый предусматривал ограниченный контроль над церковно-приходскими училищами со светским характером, а второй исключал всякой надзор над чисто духовными заведениями.

Вершиной системы образования армянской церкви должна была стать духовная академия⁴⁰. Межведомственный Кавказский комитет 24 сентября 1874 г. утвердил “Правила Эчмиадзинской Армянской Духовной Академии”, призванной поддержать религиозно-нравственное влияние Эчмиадзинского престола среди российских и зарубежных армян⁴¹.

Датой открытия академии было выбрано 28 сентября, которое совпадало с празднованием тезоимяньства главы армянской церкви. На торжестве присутствовали представители братства, высшего духовенства и общественности ближайших территорий⁴². Было открыто очередное учебное заведение у восточных армян, которое отличалось от ранее заведенных – Лазаревский институт в Москве, училище Нерсисян в Тифлисе и Агабабовское в Астрахани, местопребыванием в Эчмиадзине и духовным профилем. Академия рассматривалась католикосом Геворга IY флагманом армянской системы образования: церковно-приходские школы, среднедуховные училища и семинарии. Вся она должна была находиться под контролем Эчмиадзина, являвшейся автономной в системе образования Российской державы⁴³.

Уделено внимание регламентации деятельности духовных семинарий. 27 июня 1880 г. царь Александр II утвердил проект “Основных правил епархиальной Нахичевано-Бессарабской армяно-григорианской духовной семинарии”, представленный министром внутренних дел статс.-сек. Маковым. Семинария учреждалась в г. Нахичеване на Дону и содержалась за счет средств местных армянских церк-

³⁸ РГИА, ф. 821, оп. 140, д. 1, л. 33.

³⁹ Там же, л. 33, 33 об.

⁴⁰ Там же, л. 33 об.

⁴¹ Там же, д. 49, л. 25

⁴² Празднование открытия академии св. Эчмиадзина. - Арарат. 1874, сентябрь, с. 342 - 347. - На арм. яз.

⁴³ РГИА, ф. 821, оп. 130, д. 180, л. 34.

вей епархии, доходами со здания бывшего Халибовского училища в Феодосии и другого имущества, а также пожертвований.

Семинария включала 6 классов, где преподавались богословские и общеобразовательные сгруппированные предметы: 1. священная история и катехизис; 2. богословие догматическое, нравственное и пастырское; 3. гомилетика; 4. каноническое право; 5. история армянской церкви; 6. логика, психология и педагогика; 7. общая церковная история; 8. всеобщая история и география; 9. история и география России; 10. армянская история и география; 11. армянский язык с историей литературы; 13. латинский язык; 14. французский язык; 15. математика, физика и начало космографии; 16. естественная история; 17. церковное пение; 18. черчение и рисование.

Распределение предметов по классам осуществлял Учебный совет семинарии. Преподавание предметов в основном производилось на армянском языке, кроме истории и география России, русского языка. При этом русский язык, история и география России являлись обязательными предметами лишь для русскоподданных граждан⁴⁴.

Устав Нахичевано-Бессарабской семинарии обеспечил её исключительное положение в системе епархиальных семинарий и духовной академии. Он давал выпускникам разные льготы, полагаемые выпускникам государственных среднеучебных заведений, освобождал от военной службы и облегчал поступление в университеты. Учреждением Нахичевано-Бессарабской семинарии произошло окончательное разграничение между статусом и учебными программами среднеучебных заведений и духовной академии. Созданная целевая система включала компоненты: 1) распределение функций; 2) субординация должностей; 3) средства информации. Все эти функции объединял надзор руководства Эчмиадзинского престола.

Между тем академия поступательно развивалась. Число русскоподданных учеников пансионеров и вольноприемных в 1883 г. составило 283⁴⁵. Динамику состояния сферы просвещения Эчмиадзинского престола показывают следующие данные.

Таблица 4.

Состав церковно-приходских училищ 1874 - 1886/7 гг.

Епархии	1874		1882		1885	1886-1887	
	число	учащихся	число	учащихся	число	число	учащихся
Ереванская	73	3089	95	4085	103	75	1709
Грузинская	81	3712	103	5683	80	74	2090
Карабахская	45	1282	16	1266	24	21	474
Шемахинская	14	575	11	758	11	21	439
Карсская			7	529	52		
Астраханская	15	898	38	1955		36	613
Нах.Бессараб.	26	917	60	2602			
Итого...	254	10473	330	16878	270	227	5325

⁴⁴ Записка об Армянских школах. СПб., 1911, ..., с. У - УШ.

⁴⁵ НАА, ф. 56, оп. 1, д. 855, л. 15 об.

Из показанного количества учащихся за 1886 -1887 учебный год представителями духовного, дворянского и служебного сословий, соответственно, по епархиям составляли: Ереванская: - 110, 9 и 57; Грузинская - 108, 31 и 71; Астраханская - 28, 1 и 3; Карабахская - 44, 55 и 14, Шемахинская -16, 9, и 28. Эти сведения показывают общесословную принадлежность, поскольку, даже при всем несовершенстве представляемых данных, включали также представителей земледельческого населения, которые составляли большинство армянского народа в Российской империи. Из этого ясно, что церковно-приходские училища имели народный характер и давали доступное национальное образование⁴⁶.

Имелась потребность в семинарии для Астраханской епархии. На 1 января 1886 г. по городу Астрахани имелось подведомственных епархиальному руководству одно женское училище с 63 воспитанницами, отделение подготовительного класса для 22 учениц, церковное приходское училище для 21 учеников и ремесленная школа церковного попечительства общества армян г. Астрахани для 17 питомцев. Общее количество учащихся составляло 85 человек. Вопрос уперся в финансовое и материальное обеспечение семинарии⁴⁷. Лишь спустя двенадцать лет был объявлен конкурс для построения духовной семинарии в Астрахани. Где были представлены два интересных конкурсных проекта - "Опыт" и "Виктория", но правительство не утвердило "Устав" семинарии, представленный католикосом Мкртичем I Хримяном (1893 -1907), потребовав новой редакции⁴⁸.

Армянские волнения 1890 г. в Османской Турции и участие в них закавказских армян обусловило принятие самодержавием России репрессивных мер против духовенства. Тонкость геополитической ситуации состояла в том, что Туманный Альбион по Кипрской конвенции 1878 г. получил право обеспечивать территориальную целостность территорий Османской Турции. Англия неожиданно появилась у границ Кавказа и стала соседом Российской державы на границе Кавказа, что было чревато разными осложнениями.

16 марта 1891 г. царь Александр II утвердил "Правила о применении карантинных мер в административном порядке к армяно-григорианским священнослужителям", предусматривающее их заключение в монастырях и высылке в разные места державы за нарушения "общественного порядка"⁴⁹. Повышены требования к преподавательскому составу приходских школ, семинарии и академии. От большинства преподавателей стали требовать предоставления свидетельств об окончании духовных семинарий и Эчмиадзинской академии, педагогических институтов либо школьного ценза.

По указанию царя Николая II 16 января 1896 г. состоялось заседание комитета министров России, посвященное рассмотрению всеподданнейшей записки по Эчмиадзинскому вопросу главноначальствующего С. Шереметева. Комитет принял к исполнению программу поэтапного подчинения армянской церкви из трех пунктов: 1. изъятие общеобразовательных учреждений из ведения Эчмидзинского пре-

⁴⁶ Документальные материалы..., кн.14, N159, с.25 8- 262; Тунян В. Г. Армянская церковь: материалы еженедельника "Овив" 1906 -1910 гг. Ереван, 2009, с. 43.

⁴⁷ НАА, ф. 52, оп. 2, д. 406, л. 14.

⁴⁸ Там же, д. 696, л. 8, 9, 51, 59 об.

⁴⁹ НАА, ф. 56, оп. 14, д. 8682, л. 92 - 93 об.

стола; 2. усиление контроля над армянскими благотворительными обществами с возможностью закрытия; 3. в случае необходимости, осуществление секуляризации имущества армянской церкви. 12 февраля департамент общих дел внутриведомственного ведомства поставил в известность департамент духовных дел иностранных исповеданий о постановлении комитета министров России⁵⁰. К 1 января 1896 г. в Кавказском учебном округе имелось 240 церковно-приходских школ⁵¹. По распоряжению правительства на Кавказе было закрыто 168 армянских школ, которые имели светский профиль⁵². Упразднились льготы для церковно-приходской системы образования. Открыты министерские школы народного просвещения.

Угроза секуляризации получила воплощение 12 июля 1903 г., когда царь Николай II подписал указ о захвате имущества и капиталов армянской церкви. Несмотря на длительный срок обсуждения принятое решение оказалось поспешным и необдуманым Дело в том, что при обсуждении этого вопроса в совете министров России в мае-начале 1903 г. за секуляризацию высказалось пять министров, а против - 12. Царь поддался влиянию в этом вопросе тандема министра внутренних дел К. Ф. Плеве и главноначальствующего Кавказа Г.С. Голицына. Расчет царя строился на ряде факторов: 1) не допустить провала политики захвата армянских школ и превратить их в державно-народные, поскольку Эчмидзин в судах Тифлиса, Еревана и Карса стал эффективно отсуживать церковное имущество и собственность; 2) лишить материальной базы армянского движения за самоопределение Западной Армении в Османской Турции; 3) упразднить значение Эчмиадзинского престола как общенационального института, а его главу превратить в духовного начальника русскоподданных армян; 4) превратить армянских священнослужителей в чиновничью духовную коллегию, как было произведено с католико-сатами Мцхета и Бичвинта Грузии в первой половине XIX в., которые стали бы орудием политики самодержавной власти; 5) осуществить подавление революционных популяризаторов на Кавказе⁵³.

Католикос Хримян последовательно стремился осуществить возврат церковного достоинства. В начале января 1905 г. представителем главы армянской церкви в С.-Петербурге стал епархиальный Нахичевано-Бессарабской епархии архиепископ Нерсес, помощником которого являлся архимандрит Месроп. Перед иерархами было поставлена задача добиться в правительственных кругах возврата к "Положению" 1836 г., что означало отказ от секуляризации, имущества и школ, отмена репрессивных мероприятий относительно армянских священнослужителей. Католикос учитывал высочайший закон 12 декабря 1904 г. о разработке мер законности для населения державы, а также увольнение главноначальствующего Кавказа кн. Голицына 1 января 1905. В правительственных верхах окончательно сформировалось мнение, что тандем Плеве-Голицын совершил "большую ошибку несправедливым актом" об отобрании имущества армянской церкви⁵⁴.

⁵⁰ Национальное. - Арарат, 1896. № 8, с. 380; Справочник. - Там же, № 10, с. 467, 468, 470. - На арм. яз.

⁵¹ Систематический обзор состояния всех учебных заведений Кавказского учебного округа. - Кавказский календарь. Тифлис, 1896. У отдел, с. 195.

⁵² НАА, ф. 56, оп. 15, д. 360 б, л. 51.

⁵³ РГИА, ф. 1022, оп. 1, д. 60, л. 77.

⁵⁴ НАА, ф. 503, д. 19, л. 2.

Между тем армянская церковь в Российской державе развивалась в рамках существующего правопорядка, которая имела поступательный ха-рактер, даже при наличии определенных препон, сказывающихся на функциональной деятельности армянской церкви.

Таблица 5.

Состав армянской церкви в России: 1895 и 1904 гг.

Епархии	Церкви	Мона-стыри	Священно-служители	Церковно-служители	Число, тыс. прихожан
Ереванская	629 639 362	14 19	684 764	181 404	506405 619548
Груз.Имерет.	456 214 214	14 14	347 374	70 14	265710 323183
Карабахская	38 38	5 5	230 235	40 4	139726 173960
Шемахинская	42 44	2 1	36 43	7 5	39850 47134
Бессарабская	33 33	3 3	60 54	50 58	31255 18693
Астраханская			55 59	11 21	29770 41303
Итого ...	1318 1424	38 42	1412 1529	359 506	1012716 1222821

За десятилетний срок управления армянской церковью в Российской державе католикосом Хримяном состояние церквей, монастырей улучшилось, численность священнослужителей и церковнослужителей увеличилась⁵⁵. После закрытия в 1896 г приходских школ со светским уклоном, католикос Хримян лично принялся за строительство новых церквей и часовен с целью сохранению влияния и значения армянской церкви. Незначительная поступательность в церковном строительстве характерно для Нахичевано-Бессарабской епархии, а по Астраханской – отмечается застой. При этом численность прихожан первой уменьшилась, а второй увеличилась за счет армян Кавказа, которые влились в местную рабочую инфраструктуру.

Армянская самооборона, первая русская революция (1905-1907 гг.), Кавказская смута, а также позиция наместника Кавказа графа И.И. Воронцова-Дашкова, обусловили высочайший указ 1 августа 1905 г. о возвращении приходских школ и имущества армянской церкви. Восстанавливались “Правила” 1874 г. об управлении приходской системой образования, которые, в тоже время, подлежали изменению. Церковное имущество подлежало управлению на основе “Правил”, разработанных под руководством наместника Кавказа, основанных на практике деятельности попечительств при католикосе Нерсесе Аштаракецци⁵⁶.

Процесс движения к светской жизни в Российской державе стал оказывать влияние на Эчмиадзинский престол. 10 мая 1906 г. католикос Хримян издал кондак, предоставляющий право армянскому народу избирать епархиальных начальников, викариев, благочинных и членов духовно-административных учреждений. После чего должна была состояться утвердительная процедура, установленным правительством порядком. Для этого католикос созвал номинально училищный делегатский съезд (кондаки от 10 мая, 7 и 30 июня) из выборных представителей народа, где доминировали представители партии “Дашнакцутюн”, принявший резолюции о социализации. Съезд провозгласил себя распорядителем все дел церкви

⁵⁵ В.Г.Туян, Армянская церковь..., с. 66.

⁵⁶ В.Г. Туян, Последний период патриаршества Хримяна 1904-1907 гг. Ереван, 2003, с. 66 - 77, 120-123.

в хозяйственной и просветительской части. Лишь благодаря роспуску съезда властью наместника Кавказа в конце августа удалось избежать конфронтацию Эчмиадзина с самодержавием.

В феврале 1907 г. католикос направил в епархии кондак об исполнении “Правил” об управлении и программе обучения приходских заведений, которые были намечены училищным съездом и разработаны специальным комитетом. Намечалось опробовать “Правила” в течении года, чтобы определить их пригодность. Однако, поскольку они не были утверждены руководством Кавказа, то по настоянию Воронцова-Дашкова они были отозваны. Поэтому было отдано указание руководствоваться “Правилами” 1874 г.⁵⁷. Восстановлен институт епархиальных инспекторов и создана в училищная комиссия в Эчмиадзине под руководством архимандрита Гарегина. Соответствующая комиссия организована при наместнике Кавказа⁵⁸. Не был решен вопрос санкции на создание Астраханской духовной семинарии из-за общеобразовательного профиля⁵⁹.

Руководство Кавказа считало необходимым изменить статус семинарий, сделать упор на богословском образовании. В октябре 1908 г. министерство юстиции предложило наместнику Кавказа поручить Эчмиадзинскому Синоду составить “Устав Армянских семинарий”. Определены основные параметры содержания: 1) армяно-григорианские семинарии должны были иметь богословский профиль и готовить юношеств к поступлению в духовное звание; 2) семинарии подлежали контролю со стороны наместника Кавказа и департамента духовных дел иностранных исповеданий министерства внутренних дел; 3) главным начальством семинарий представлялся Эчмиадзинский Синод, который их управление вверял местному епархиальному; 4) непосредственное руководство семинарий осуществлял ректор, при содействии Педагогического совета и Хозяйственного правления; 5) преподавание общеобразовательных предметов поручилось в четырех старших классах выпускникам российских университетов, а в младших - русских средних учебных заведений; 5) количество поступающих подлежало определению со стороны епархиального руководства; 6) преподавание богословских наук намечалось на армянском языке, а общеобразовательных предметов - русском языке. Программы богословских предметов представлялись епархиальным начальством на утверждение Эчмиадзинского Синода, а общеобразовательных - министерству народного просвещения, с утверждением министра внутренних дел.

Наместник Кавказа не согласился с проектом. Предвиделось нежелание Эчмиадзинского Синода составить “Устав Армянских семинарий” на указанных началах и возник бы конфликт с правительственной властью. Учитывалась несвоевременность” проекта поскольку, армянская церковь приступила к разрыву связей с революционной партией “Дашнакцутюн”, которой ранее оказывалась “нравственную и материальную поддержку”. Главным же представлялось ликвидация льготного статуса армянской церкви, которая образовывала свою паству, лишения надзора над семинариями духовных властей и католикоса, с передачей департаменту духовных дел. Выразалась надежда, что духовные заведения богословского про-

⁵⁷ РГИА, ф. 821, оп. 139, д. 99, л. 9 - 10.

⁵⁸ Туземная жизнь.- Закавказье. 1907, 18 сентября.

⁵⁹ РГИА, ф. 821, оп. 139, д. 99, л. 10, 10 об.

филя будут сохранены за армянским духовенством. Правительству предложено разработать “нормальный” “Устав Армянских семинарий”, взяв за основу “Устав” Нахичевано-Бессарабской семинарии, признаваемых армянским духовенством и российской властью.

Католикосу Матеосу Измирлян (1908-1910) было направлено компромиссное предложение, чтобы до составления “Устава Армянских семинарий” использовался “Устав” Нахичевано-Бессарабской семинарии 1880 г. Корректировка осуществлена на примере “Проекта временных правил Астраханской духовной семинарии”, которую католикос Хримян хотел открыть в 1906 г., но с существенными изменениями. Правительственная власть предлагала: 1) определить штатный состав учащихся не более 300 человек, с ежегодным выпуском около 25 воспитанников; 2) ректор, инспектор и преподаватели назначаются на должности католикосом, с порядком замещения должностей для римско-католического исповедания, согласия министра внутренних дел; 3) преподавание общеобразовательных предметов в четырех старших классах семинарии вверялось выпускникам российских университетов, а в младших - русских средних учебных заведений.

При этом выявилось новое явление в церковном управлении армянской церкви в Российской державе. Католикосы Мкртич Хримян и Матевос Измирлян, отвечая на вызовы времени, стали осуществлять процесс “демократизации церковных учреждений”, усиливающих значение выборности и роль приходов, что вызвало недопонимание со стороны правительственной администрации. Власть стала требовать отмены кондаков о выборности, упорядочения перехода представителей различных исповеданий в армяно-григорианское, уведомлять об активной деятельности священнослужителей в революционном движении, осуществлять назначение на административные должности священнослужителей по согласию с гражданской администрацией. Возникли коллизии⁶⁰.

Правительственная ревизия управления Эчмиадзинского престола в конце 1910 и начале 1911 гг. выявила сохранение существовавшего положения дел. В состав привилегий Эчмиадзинского престола круг включены: развитая сеть приходских школ”, право избрания священников и епархиальных советов гражданским собранием, а также уполномоченных для решение дел. Составлено представление, что законодательный порядок “еще не санкционировал их существование”, в особенности право избрания священников и епархиальных советов гражданским собранием Тревожило умонастроение светских лиц, стремящихся возвести гражданского представителя на Эчмиадзинский престол, что противоречило “Уставу” духовных исповеданий.

В сфере образования имелись достижения. Расширилась школьная система. В 4 армянских епархиях Закавказья из 109200 детей школьного возраста 28819 (ок.25%) училось в 332 церковно-приходских школах. При этом суммарное количество учащихся подростков в министерских и церковно-приходских школах составляло 51136 или около 50%. В то же время число учеников в министерских школах 1909 г. по сравнению с 1908 г. увеличилось на 616, а в церковно-приходских - 5551.

⁶⁰ РГИА, ф. 821, оп. 139, д. 180, л. 96.

В духовной академии и армянских семинариях имелось 92 преподавателя, из которых лишь 4 имели духовный сан, 28 являлись выпускниками академии и 17 - армянских семинарий. Это означало, что 45 преподавателей имели духовное образование, что составляло менее 50% общего состава. Из оставшихся 47 преподавателей 22 являлись выпускниками государственных высших учебных заведений, 10 - средних учебных заведений, а оставшиеся закончили учительские институты и другие школы. Одна треть всего учебного персонала обучалась в русских и зарубежных учебных заведениях, обладала учеными степенями, но преимущественно не богословского характера.

Сохранился статус-кво в соотношении преподавания духовных и светских предметов армянских духовных семинариях.

Таблица 6.

Наименование заведений	Количество уроков		Число учащихся
	богословских	общеобразовательных	
Духовная академия			50
Эчмиадзинская сем.			146
Ереванская	36	166	363
Тифлисская	12	200	496
Шушинская	33	231	289
Нах. -Бессарабская	35	214	270
Всего...			1614

Главный вывод утверждал, что в духовной академии и армянских семинариях преобладало преподавание общеобразовательных предметов что противоречило богословско-духовному статусу⁶¹.

Разворот попечительной политики самодержавия к армянской церкви осуществил наместник Кавказа Воронцов-Дашков. В письме к царю от 10 октября 1912 г. им было подчеркнута жизненность данной позиции: “Вашему величеству известно, что во всей истории наших отношений к Турции по Кавказу вплоть до русско-турецкой войны 1877-1878 г., кончившейся присоединением к нашей территории нынешних Батумской и Карсской областей, русская политика непрерывно с Петра Великого базировалась на доброжелательном отношении к армянам, которые и отплачивали за это нам во время военных действий активной помощью нашим войскам”.

Подчеркивалась важность Эчмиадзина как национально-духовного политического института:”С присоединением к нашим владениям так называемой Армянской области, в которой находился Эчмиадзин, эта колыбель армяно-григорианства, император Николай Павлович употребил немало усилий для создания из Эчмиадзинского патриарха попечителя турецких и персидских армян, справедливо полагая тем самым достичь полезного России влияния среди христианского населения Малой Азии, через которую пролегал путь нашего исконного поступательного движения к южным морям. Покровительствуя армянам, мы приобретали

⁶¹ Записка об Армянских школах...с. 10 - 18, 21 - 25, 86.

верных союзников, всегда оказывавших нам большие услуги. Если эта политика и не всегда нам удавалась, ввиду противодействия Турции, желавшей сосредоточить духовное влияние над своими армянами у Константинопольского патриарха, то, во всяком случае, она проводилась последовательно и неуклонно почти полтора столетия”.

Смена “исконной политики” России в 90-х гг. XIX в. репрессивными мерами, по словам Воронцова-Дашкова, привела к “печальным результатам”. Их упразднения представлялось восстановлением русско-армянских доброжелательных отношений, особенно с западноармянством, которые надлежало закрепить: “Я полагаю, государь, что теперь настало время вернуться к исконной русской политике покровительства турецким армянам и настоятельно необходимо изыскать лишь те формы, в которые оно должно в данный момент вылиться”⁶².

Получила решение проблема усиления богословской подготовленности. 30 июля 1912 г. католикосом Геворг Ү Суренянц (1911-1930) кондаком утвердил преобразование специальных классов духовной академии в Эчмиадзине на два факультета - богословский и филологический, которые должны были составить высшее отделение. Начато разработка будущего устава высшего отделения духовной академии⁶³.

В конце 1912 г. католикос утвердил новый “Устав” и программу обучения для всех епархиальных школ. Она ставила целью установить связь обучения между приходскими школами, семинариями и духовной академией. Новая программа выстроила иерархию программных взаимоотношений образовательных учреждений: епархиальные училища являлись продолжением церковно-приходских школ, а эчмиадзинская семинария - дополняющей епархиальные. Хозяйственная и учебная часть вверялись избранному от прихожан попечителям, ставших полностью хозяевами положения. Высшая духовная власть сохраняла за собой лишь контрольную функцию⁶⁴.

В декабре 1913 г. в Эчмиадзине открылся съезд армянских представителей по школьному делу, обративший внимание на преподавание закона Божия и необходимости увеличения средств училищного фонда (основан 13 октября 1912 г.), призванного усилить образовательный процесс в самых отдаленных местах⁶⁵. Составлен проект образования для средних учебных церковных заведений, требующий от учителей образовательного ценза, наличие свидетельств для преподавания отдельных предметов как музыка, физкультура, рисование, вышивания. Проект был разослан епархиальным для ознакомления. Слабой стороной проекта признано отсутствия требования о педагогической подготовки, необходимости стажа для занятия должности старших учителей и допуск без ценза любого священнослужителя к преподаванию закона Божия⁶⁶.

⁶² Красный Архив.М., 1928, N 1(26), с. 118 – 120.

⁶³ РГИА, ф. 821, оп. 139, д. 43, л. 21.

⁶⁴ Вокруг армянских школ. - Закавказская Речь. 1913, 3 января.

⁶⁵ Документальные материалы..., кн. 4, , N 68, с. 130, 131; N 68, с. 130, 131

⁶⁶ По случаю нового Устава. - Арарат. 1915, 12 июля, с.401 402. - На арм. яз.

Состав церковно-приходских школ на Кавказе в 1913 г.

Наименование епархий	Число школ	Число учащихся	Число учителей
Грузино-Имерет.	98	9114	354
Карабахская	47	2783	67
Ереванская	175	13441	417
Шемахинская	14	1480	61
Астраханская	38	2435	89
Итого...	373	29243	989

Данные показывают сохранения значения национальной системы школьного образования армянской церкви, обеспечивающей интересы народных масс. При этом имело место конкуренция с правительственными народными школами, при отсутствии постоянного источника обеспечения, когда учитель из жалования в 300- 400 рублей недополучал 50-100 руб⁶⁷.

13 января 1914 г. и.о. попечителя Кавказского учебного округа поставил в известность главу Грузино-Имеретинской епархии епископа Месропа Тер-Мовсисяна о разрешении наместника Кавказа проводить утренние молитвы для армянских учащихся в учебных заведениях при наличии инословных законоучителей для представителей других конфессий по нормам каждого вероисповедания. В февраля епископ Тер-Месропян сообщил попечителю Кавказского учебного округа, что армянские законоучители в учебных заведениях г. Тифлиса получили указание во время утренних молитв армянским воспитанникам читать кроме “Отче наш” также “Евангелие” и молитву “Дело наших рук”. Обращено внимание на соответствующий запрос епархиального к католикосу, поскольку распоряжение наместника относилось ко всем учебным заведениям Кавказа⁶⁸.

В августе 1915 г. принят временный “Устав” армянских церковно-приходских школ”, имевший преимущества над актами предшествующих католикосов, тем что регламентировал деятельность администрации и учебного персонала. Это означало пресечение их произвола и вседозволенности. Проблема упиралась лишь в действительном исполнении принятого акта⁶⁹.

Начавшаяся Первая мировая война обусловила служение армянских священников на Кавказском и других фронтах. Деятельность армянских священников определялась “Инструкцией для военного духовенства”, разработанной военным командованием. Инструкция состояла из десяти пунктов: прихожанами военного священника являлся весь состав полка, обязательность ежедневных встреч с солдатами, учить их молитве “Отче наш”, читать им наставления из св. Писания и национальной церковной истории; быть в рясе на поле боя, но без оружия, раз в два месяца представлять отчет о своей деятельности местному епархиальному либо консистории⁷⁰.

В то же время “удобным” сочтено для сохранения драгоценностей Первопрестола и рукописей хранилища обеспечить их перемещение в безопасное место

⁶⁷ Новый временный Устав”. - Овит.1915, 20 сентября, с. 56. - На арм. яз.

⁶⁸ 1700-летию принятия христианства..., N4, с.18, 19.

⁶⁹ Новый временный “Устав”. ..., с. 56.

⁷⁰ РГИА, ф. 821, оп. 139, 272, л. 12 -19.

до окончания войны. 3 февраля 1915 г. они были направлены в Москву, в сопровождении члена Синода епископа Матеоса Матеосяна и архимандрита Бабкена, где 11 февраля были сданы на хранение армянской церкви св. Креста. Составленная опись представлена 1-3 марта 1915 г на хранение Духовному правлению армянских церквей г. Москвы, местной комиссии и представителям паствы⁷¹.

Католикос Суренянц 6 июля 1916 г. направил письмо наместнику Кавказа вел. кн. Николаю Николаевичу об организации помощи и государственного покровительства западноармянским беженцам⁷². Беженская смета Кавказского наместничества на апрель, май и июнь составляла 7107807 руб. Освобожденные районы Турецкой Армении были разорены, имелась большая потребность в средствах на покупку рабочего скота и инвентаря. Наместник Кавказа запросил 500 тыс. руб. у Министра земледелия для обсеменения плодородных земель в освобожденных районах Турецкой Армении, которые стали поступать для беженцев из Вана и Карса. Правительство России выделило 900 тыс. руб. для организации потребительских лавок для беженцев армян на Кавказе. К октябрю 1916 г. расходы на уст-ройство турецкоподданных 200 тыс. армянских-беженцев составили 25 млн. руб. Выделен специальный кредит на сумму в 300 тыс. руб. для поддержания ссудами турецкоподданных армян-интеллигентов⁷³.

Национальная трагедия - геноцид западноармянства находилась в фокусе внимания деятельности гуманитарных организаций - "Московский благотворительный комитет", "Армянский комитет Феодосии", "Союз городов Кавказа", "Татьянин комитет". "Армянское благотворительное общество" Тифлиса и "Армянский центральный комитет", комитет "Братской помощи", находящийся под патронажем Его Святейшества. Стали открываться приюты-школы⁷⁴. Октябрьская революция 1917 г. обусловила новую геополитическую ситуацию.

Таким образом, армяно-русские отношения в церковной сферы с 1836 по 1917 гг. представляют собой время развития церковного управления, состоящий из определенных периодов, имеющих свои характерные черты и особенности. Определение статуса армянской церкви показывают синхронизации державного правопорядка к армянским особенностям. Усилены церковные взаимоотношения. Регулятором синхронного духовно-образовательного развития и центрального устройства армян России стал св. Эчмиадзин, но определенное воздействие оказывал российский церковный правопорядок.

Соответственно, можно выделить три периода. Первый представляет попечительную политику самодержавия в отношении Эчмиадзинского престола, исходя из внешнеполитических интересов, отраженный в льготном статусе "Положении" 1836 г.: укрепление материальной базы, создание духовно-светской системы образования - церковно-приходские школы - семинарии - академия. Ставилась цель усилить духовно-политическое воздействие России на малоазиатских армян. Хронологические рамки второго периода начинаются с кончины католикоса Ге-

⁷¹ Первопрестол. - Арарат. 1915, N 2-3, с. 132, 133. - На арм. яз.

⁷² 1700 - летию принятию Христианства в Армении. - Вестник архивов Армении. 2001, N 9, с. 21 - 24. На арм. яз.

⁷³ Русские источники о геноциде армян в Османской империи 1915-1916 гг. Сост. Абрамян Г. А., Севан-Хачатрян Т. Г. Ереван, 1995, N 108, с. 140, 141; N 120, с. 163, 164; N 141, с. 199, 200; N 151, с. 212.

⁷⁴ 1700 летию принятия Христианства..., N, 10, с. 25, 26.

ворга IV в 1882 г. и длятся до 1905 г. Суть составляет сдерживание революционных поползновений, заключающихся в поддержке соплеменников Турции против насилиий султанского режима. Для этого вначале используются сдерживающие меры как школьный ценз для преподавателей, разграничение приходских школ на светские и духовные, изъятие первых из контроля Эчмиадзинского престола, секуляризация 1903 г., возвращение церковного достояния и армянских школ в 1905 г. Третий период включает время августа 1905 г. до 1917 г., когда наместничество Кавказа пошло на послабления в отношениях с армянской церковью.

Վալերի Թունյան – Հայ – ռուսական հարաբերությունների եկեղեցական ոլորտը 1836 – 1917թթ. – Հոդվածում լուսաբանված է հայ – ռուսական հարաբերությունների եկեղեցական ոլորտը 1836թ. Պոլսից մինչև 1917թ. Փետրվարյան հեղափոխությունը: Բացահայտված է միջեկեղեցական հարաբերությունների զարգացման տրանսֆորմությունը:

Valeri Tounyan – *The Sphere Between Russian-Armenian Church Relationships in 1836-1917.* – The article dwells on the sphere of Russian-Armenian religious relationships. The logic of the relationships between churches is investigated.

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐԻ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅԱՄԲ

ԱՆԻ ՈՒԹՈՒՋՅԱՆ

Միքայել Նալբանդյանի բազմաբնույթ և բազմաժանր ժառանգության մեջ իրենց ուրույն տեղն ունեն նրա պատմաբանասիրական բնույթի գրվածքները: Հայ հին մատենագրության ու պատմության բնագավառում ունեցած իր հետաքրքրասիրությունների մասին նա վկայել է տակավին «Կոմս Էմմանուելի հիշատակարան»-ում: Նալբանդյանն այստեղ հավաստում է. «Ճշմարիտ պիտո է ասել... ամենայն մարդ ունի յուր համար մի սիրական բան, իմ սիրականը է հնության խուզարկությունը, մանավանդ թե այդ բանը ունենա պատմական արժանավորություն»⁷⁵: Եվ իրոք, Նալբանդյանի գրական ժառանգության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրա համարյա բոլոր աշխատություններում շոշափվում են հայ ժողովրդի միջնադարյան պատմության և հայ հին գրականության հետ աղերսվող բազմաթիվ հարցեր: Քննարկման առարկա դարձնելով իր ժամանակի հայ գրականության վիճակը՝ Նալբանդյանը շատ հաճախ հետադարձ հայացք է ձգում նաև հայ հին գրականությանը, վերլուծության ենթարկում երկու տարբեր պատմաշրջաններում ստեղծված գրական երկերը և դրանք համադրում միմյանց: Դիտելի է, որ Նալբանդյանին հատկապես հետաքրքրել է անցյալի հայ գրականության կենսական նշանակությունը՝ ազգային կյանքի արտահայտման չափանիշով և ժամանակների առաջադրած պահանջի տեսանկյունով: Նալբանդյանը հին գրականության բնորոշման մեջ ելնում էր նոր գրականության պահանջներից՝ տարբեր կողմերով ցույց տալով նրա մեջ ոչ թե ազգային, այլ առավել կրոնական բովանդակությունը: Դեռևս Մոսկվայի համալսարանում ուսանելու տարիներին (1854-1855 թթ.) Նալբանդյանը հեղինակում է «Յաղագս հայկական մատենագրութեան ճառ» աշխատությունը, որը հայ հին գրականությանը նվիրված նրա առաջին ամբողջական գործն էր: Սույն երկասիրությունը հայ միջնադարյան մատենագրության ամբողջական տեսությունն է: Ի՞նչ նպատակ է հետապնդել երիտասարդ հետազոտողն իր այս ուսումնասիրությամբ: Այս հարցին նա պատասխանում է հետևյալ կերպ. «Եւ զի չէ մեր դիտաւորութիւն զպատմութիւն աւանդել զհայոցս գրականութեան, որպէս պահանջեն կարգք և օրէնք, այլ միայն քաղեալ անտի զկարևոր գիտելիս առ ի վկայութիւն ասացելոցն ի մէնջ»⁷⁶:

Ուրեմն, այստեղից ակներև է, որ Նալբանդյանի սույն «Ճառ»-ը նպատակ չի հետապնդում տալու հայ գրականության պատմության բազմակողմանի քննությունը, այլ, գրականության բովանդակության ու ձևի արմատական փոփոխության խնդիրն առաջադրելով, գնահատել անցյալի դարավոր ժառանգությունն ընդհանրապես: Այստեղ, հասկանալիորեն, խոսք չէր կարող լինել հին գրական տեսակների ու նրանց գեղարվեստական առանձնահատկությունների մասին, քանզի

⁷⁵ *Միքայել Նալբանդյան*, Երկերի լիակատար ժողովածու վեց հատորով (այսուհետև՝ ԵԼԺ), հատ. 3, Երևան, 1982, էջ 45:

⁷⁶ ԵԼԺ, հատ. 2, Երևան, 1980, էջ 22:

Նալբանդյանին հետաքրքրող հարցը միայն անցյալի գրականության գաղափարական բովանդակությունն է եղել և ոչ թե նրա գեղագիտական քննությունն առհասարակ: Իսկ ո՞րն է հեղինակի «ասացելուցը»: Նալբանդյանն իր այս երկով փորձում է ապացուցել «թե հին մատենագրութիւնն բաց ի պահելոյ յինքեան զնուիրականն բարբառ, չաւանդէ մեզ, ապա եկելոցս, զայլ ինչ, ուստի բաց ի Ազգային պատմութեանցն տեղեկութենէ»⁷⁷: Իսկ այդ տեղեկությունները և ընդհանրապես հին մատենագիրների երկերը, ըստ Նալբանդյանի, «իբր ի բազումս պակասեալք և ի կանոնաց՝ պատմագրութեան և ժամանակագրութեան, զորս մի խիստ ումեք թուեսցի բանս, եթե ասիցեմ արեղայական դերձակաց կարկատանս, յարեղայական հոգւոյ յղացեալս և ի լոյս ծնեալս նոյնպէս առանց գործակցութեան յաջողակ մանկաբարձութեան առաջնորդականին մտաց»⁷⁸:

Այստեղ հեղինակը զարգացնում է այն տեսակետը, թե հայ ժողովուրդը անցյալում չի ունեցել զուտ համազգային գրականություն, քանզի «Ազգ հայոց չէ եղեալ երբեք մասնակից այդպիսի օտարաշունչ ազգային դպրութեան. զի որչափ ինչ հասանէ տեսողութիւն աչաց, տեսանեմք, զի արեղայք էին, որ հիմն եղին գրականութեան ազգին... արեղայք էին, որ պահպանողք գտան այդր գրականութեան, ուստի և մինչև այժմ արեղայական տեսանի գրականութիւնդ այդ»⁷⁹: Նույն այս միտքը հեղինակը կրկնում է նաև 1857 թվականին հրատարակած «Թափառական հրեայի» թարգմանության առաջաբանում, որտեղ պնդում է, թե «հայերը մինչև այժմ աշխարհական դպրություն չեն ունեցել. լավ ու վատ եղել է ու կա արեղայական դպրություն»⁸⁰, որը նա գնահատում է որպես «զհետին չքավորութիւն ի վիստեցուցիչ միօրինակութեամբ»:

Իսկ «Մեռելիարցուկ»-ի տողատակերից մեկում նա դառնորեն գրում է. «Ի՞նչ կա հայերի դպրության մեջ, որ օտարազգին ցանկանա հայոց լեզուն ուսանել: Մի չար բախտով հայկական մատենագրությունը, այս բուպեիս չէ կարող հայերին ևս ծառայել որպէս կամուրջ լուսավորության, թեև հայերը չկամին այս բանի վերա մտածել, չկամին վաստակել մի պարծանք, հայկական խոպան և անշեն անապատը մշակելով՝ հայկական դպրության մեջ ուղ ու ծուծ դնելով, որ ազգի զավակը կարողանա յուր իմացական քաղցը կշտացնել յուր հատուկ ազգային հացով»⁸¹:

Ինչպէս տեսնում ենք, Նալբանդյանը փաստորեն անտեսում է հայոց հին մատենագրության գրական մեծ նշանակությունը ընդհանրապես: Դրանով նա անտեսում էր անհերքելի այն իրողությունը, որ Եվրոպայում և Ռուսաստանում հենց նույն այդ ժամանակ հայոց մատենագրության, լեզվաբանության ու պատմության նկատմամբ առաջացել էր բուռն և մեծ հետաքրքրասիրություն, որ օտարները ոչ միայն ցանկանում էին, այլև՝ ուսումնասիրում հայոց լեզուն ու պատմությունը:

Պետք է նշել, որ Նալբանդյանը հետագայում վերանայեց իր այս տեսակետը հայոց մատենագրության նշանակության մասին և ի հակադրություն վերևում բերված խոսքերի՝ «Հայոց լեզվի ուսումնասիրությունը Եվրոպայում և հայ գրա-

⁷⁷ ԵԼԺ, հատ. 2, էջ 15:

⁷⁸ Անդ, էջ 8:

⁷⁹ Անդ, էջ 8-9:

⁸⁰ Անդ, էջ 77:

⁸¹ ԵԼԺ, հատ. 1, Երևան, 1979, էջ 307:

կանության գիտական նշանակությունը» ռուսերեն աշխատությունում խիստ բարձր գնահատեց հայոց հոգևոր արժեքները ոչ միայն Հայաստանի, այլև հին աշխարհի շատ երկրների պատմության ուսումնասիրության բնագավառում⁸²: Ինչ խոսք, այստեղ Նալբանդյանը այլևս կոչ չէր անում ժխտելու անցյալի հայ մատենագրության արժեքները: Հայ հին գրականությանը տրված նրա գնահատականները չպետք է ընկալել միակողմանիորեն: Քննադատելով անցյալի մեր մատենագրությունը՝ Նալբանդյանը ելնում էր հայ ժողովրդի ներկա կյանքից ու պահանջներից՝ անցյալը վերագնահատելու և նրանից ներկայի վերակառուցման համար դասեր առնելու նպատակով: Բացի այդ, քննադատելով հին մատենագիրներին, Նալբանդյանը ասքի առաջ ուներ, ինչպես ճիշտ նկատել է Ա. Գ. Հովհաննիսյանը, նրանց դափնիների վրա հանգստացող կղերական կամ կղերամիտ հայկաբաններին, որոնց աշխարհայացքի ու մեթոդի տեսակետից հեռու չէին միջնադարյան աբեղաներից⁸³: Հայ հին գրականությունը գնահատելիս՝ Նալբանդյանը նախ և առաջ ելնում էր այն իրողությունից, որ այդ գրականությունը ստեղծվել է հոգևորականների կողմից, նրանց խցերում ու վանական մենաստաններում: Իսկ այդ խցերը, նրա կարծիքով, «չէ և չէ այն դիտանոցը, որտեղից կարելի լիներ ազատ տեսողութենով նկատել աշխարհի իրողությունը»: Այսպիսով, Նալբանդյանը հայ միջնադարյան մատենագրության մասին ունի այն որոշակի կարծիքը, թե եկեղեցական, աբեղայամիտ գաղափարախոսությունը արգելակել է գրականության աշխարհիկ լայն բովանդակությանը և, որ այն կտրված է եղել ժողովրդից ու վեր չի հանել նրա հոգսերն ու ձգտումները: Նալբանդյանը զարգացնում է այն տեսակետը, որ գրականությունը պետք է լինի ոչ միայն ժողովրդի համար, այլև նրա միջոցով. «Հեղինակն առանց ժողովրդեան և ժողովուրդն առանց հեղինակի չգորեն ինչ առնել, այլ միացեալ ի կամս և հոգի բազում ինչ ի լուսավորութիւն համազգեաց»⁸⁴: Այս կապակցությամբ է, որ Նալբանդյանը քննադատում է իր ժամանակներում ժողովրդին անհասկանալի գրաբարագիր գրականությունը:

Մ. Նալբանդյանը, հայ ժողովրդի պատմական անցյալում հոգևորականության՝ մատենագրության և ընդհանրապես մշակույթի բնագավառում կատարած դերի հարցում վիճելով պահպանողականների հետ, «Երկու տող»-ում գրում է. «Եթե կան մի տեսակ մարդիկ, որ ընդունում են այս սնտոի պարծանքը եկեղեցականների ոչ միայն չկատարած, այլ երազում անգամ չտեսած գործի մասին, մեր փույթը չէ. մենք մեր կողմից հոգու ամենայն զորությամբ մերժում ենք եկեղեցականների այդ մտացածին արդյունքը և խնդրում ենք գործ ցուցանել մեզ»: Այս տողերից անմիջապես հետո Նալբանդյանը կատարում է մի շատ կարևոր վերապահում՝ գրելով. «Մեր այս խոսքերը, հոգևորականների ընդդեմ, չէ վերաբերում մեր տոնելի թարգմանիչներին կամ նոցա հետևող փոքրագույն մասին: Ինքեանք, այդ սուրբ թարգմանիչքը, արքտրվեցան և հալածվեցան մինչև ի մահ ընդհանուր հոգևորականության ձեռքով»⁸⁵: Մ. Նալբանդյանը շեշտում է այն իրողությունը, որ հոգևորականության գործունեությունը և ընդհանուր նկարագիրը միաստարբ չի

⁸² «Об изучении армянского языка в Европе и научном значении армянской литературы», տե՛ս ԵԼԺ, հատ. 3, Երևան, 1982, էջ 245-253:

⁸³ **Ա. Գ. Հովհաննիսյան**, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք երկրորդ, Երևան, 1956 (մասնավորապես տե՛ս չորրորդ բաժնի 5-6-րդ գլուխները, էջ 459-522):

⁸⁴ ԵԼԺ, հատ. 2, էջ 57:

⁸⁵ ԵԼԺ, հատ. 4, Երևան, 1983, էջ 21-22:

եղել: Ճիշտ է, հինգերորդ դարի հայ մատենագրության խոշորագույն դեմքերը ևս հոգևորականների էին,- սակայն նրանց հոգևորականությունը,- գրում է նա,- «արհեստ չէր նյութական կյանքի պիտույքը հայթայթելու համար, այլ ծառայում էր ազգի առաջադիմության»: Ահա թե ինչու Նալբանդյանը նրանց գրական ժառանգությունն էլ չէր համարում բովանդակությամբ եկեղեցական: Նալբանդյանը հինգերորդ դարի պատմագիրների թողած ժառանգության արժեքը տեսնում էր նրանց երկերի աշխարհիկ բովանդակության և նույնիսկ եկեղեցականության դեմ ուղղված սուր քննադատության մեջ: Նրա միանգամայն ճիշտ գնահատմամբ, հինգերորդ դարի մեր մշակույթի վիթխարի գործիչները, որպիսիք էին Մեսրոպ Մաշտոցը, Եղիշեն, Փարպեցին, Մովսես Խորենացին, պատկանում են ժողովրդին ու հանդիսանում են ժողովրդի և ոչ թե հոգևորականության պարծանքը, որովհետև նրանք իրենց գործունեությամբ հոգևորականության բուն զանգվածից վեր են կանգնած եղել: Վերջում Նալբանդյանը հենց այս տեսանկյունից է մոտեցել ու արժևորել հինգերորդ դարի հայոց մատենագրությունը, որը նա համարում է հայ հին գրականության ամենափայլուն էջը: Ճշմարիտ հայրենասիրությամբ ու ազգային հպարտության զգացումով է նա գնահատում հինգերորդ դարի մեր երախտավորներին և նրանց հակադրում ժամանակաշրջանի արեղայամիտ գործիչներին, վեր հանում նրանց մեծ ավանդը ժողովրդի լուսավորության ու առաջադիմության գործում:

Մ. Նալբանդյանը խորին ակնածանքով է խոսում Մեսրոպ Մաշտոցի մասին և նրա գործունեությունը բնութագրում որպես աննախադեպ ու անկրկնելի: Իր «Սուրբ Մեսրոպի տոնին» բանաստեղծության մեջ նա Մաշտոցին համարել է ամենամեծ հայը, որը ազգի իսկական փրկիչն է ու լուսավորիչը: Նալբանդյանի կարծիքով, Մաշտոցի գործունեությունը ժողովուրդների օրենսդիր ու նրանց համար փրկության ճանապարհ նշող բիրիական Մովսես Մարգարեի գործունեությունից շատ ավելի բարձր է, որովհետև վերջինս «թեև օրենք տվեց, բայց գիրը կար շատ առաջ»: Իսկ «Մեսրոպը ազգերին գիր տվեց», ուստի նրա անունը աստղերից վեր է և «բոցավառ»: Ահա թե ինչու կգան ու կանցնեն «բյուր-բյուր դարեր», բայց «նորան չի տիրիլ խավար»: Նալբանդյանը ազգային լուսավորության, գիտության ու գրականության նահապետ և նախաշավիղ Մեսրոպ Մաշտոցին պաշտպանում էր պապական այն իմաստականերից, որոնք փորձում էին Մխիթար Մեբաստացուն վեր դասել Մաշտոցից: Նուրբ հումորով հեզնելով այդպիսիներին՝ նա գրում է.

Իբր «Մեսրոպ պարտական է
Սըվազցի Մխիթարին.
Հացեկացին սկսել է,
Բայց կատարել Սըվազցին»⁸⁶:

Նալբանդյանը մեծ սիրով ու հիացմունքով է խոսում նաև «Ոսկեդնիկ» Եղիշեի ու նրա «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմի» երկի և նրանում արձարժված կենսափիլիսոփայության մասին: 1850-1860-ական թվականներին ականավոր մտավորականը ամենատարբեր առիթներով անդրադարձել է Եղիշեի անմահ ստեղծագործությանը: Հրապարակախոս Նալբանդյանն իր «Հիշատակարան»-ում Եղիշեի երկը դարձնում է ազիտացիոն նյութ ժամանակաշրջանի սգի-

⁸⁶ ԵԼԺ, հատ. 1, էջ 117-118:

տության, խավարի, արեղայամտության, հետամնացության և ազգատյացության դեմ պայքարելիս: Նալբանդյանը բազմիցս օգտագործել է Եղիշեի պատմությունը ժամանակի հուզող հարցերի արծարծման համար: «Հիշատակարան»-ում բարձրացնելով հայ երեխաների դաստիարակության հարցը՝ Նալբանդյանը քննադատում է իր օրերի հայ կանանց նիստն ու կացը և կոչ անում նրանց նմանվել Եղիշեի կերտած հայ կանանց նկարագրին: Նա փորձում է XIX դարի կեսի հայ կանանց ոգեկոչել Եղիշեի Պատմության ջերմ հայրենասիրական շնչով՝ նրանց մեջ ազգային արժանապատվության զգացում ու պատվասիրությունն արթնացնելու և ներշնչելու միտումով: Նալբանդյանը կարևոր դեր է հատկացնում հայ կանանց՝ հայոց լեզվի պահպանման, մանուկ հայորդիներին հայեցի դաստիարակելու գործում: Եվ դարձյալ, նա իր մտորումները հայոց լեզվի պահպանման ու անաղարտության վերաբերյալ համեմուն է Եղիշեի Պատմության առողջ ու կենդանի հայեցողությամբ: Հրապարակախոսն այդ կապակցությամբ գրում է, որ ազգության սիրտն ու հոգին պահողը լեզուն է: Օտար լեզվի միջոցով հնարավոր չէ լուսավորել ազգը, «թող ուրեմն հայ մանուկը, նախ և հառաջ որպես հայի զավակ, ուսանի յուր սեփական լեզուն և ապա օտարինը»: Դպրոցն է այն արգանդը, որից ծնունդ են առնում ազգի զավիք սերունդները: Դպրոցը եթե չի ծառայում ազգի նպատակներին, «եթե նա մի մեքենա է, հայի զավակի մեջ օտարություն պատվաստելու, լավ է մանուկներին տգետ հայ մնալ, քան թե դառնալ թերակիրթ չհայ»⁸⁷: Մայրենին իմանալու գործում Նալբանդյանը մեծ նշանակություն էր տալիս ընտանեկան դաստիարակությանը, և հատկապես այդ գործում շեշտում էր մոր նշանակալից դերը: Եղիշեի երկի վերջաբանության ձևով ու գաղափարական բովանդակությամբ Նալբանդյանը քննադատում է իր ժամանակի այն կանանց, որոնք բացասական իմաստով հակապատկերն են հինգերորդ դարի «փափկասուն տիկնանց», որոնք հանուն իրենց ժողովրդի ճակատագրի, իրենց երեխաների գոյության՝ եղբայրների ու ամուսինների, հայրերի ու որդիների հետ միասին հերոսությամբ մարտնչում էին օտար նվաճողների դեմ. «Հինգերորդ դարում, երբ հայոց ընտիր որդիքը,-գրում է Նալբանդյանը,- գոհ գնացին պարսկական վիշապին, նոցա մայրերը, կանայքը, քույրերը և դստերքը պակաս չերևեցան այդ քաջերից, որ ազգի պահպանության համար քաջությամբ ընկան պատերազմի դաշտումը... Այսպես էին մեր հին մայրերը և քույրերը, այսպես էին մեր կանայք, բայց ի՞նչ մնաց այն օրից»⁸⁸: Եզրակացությունը պարզ է. Նալբանդյանը XIX դարի կեսերին հայ կանանց, որոնք դուստրերն ու թոռներն էին հինգերորդ դարի հայ կանանց, կոչ է անում նմանվել այն «մեծահոգի և խնկելի քաջ արմենուհիներին», ընկալել նրանց հերոսական գեները, բնավորությունների հաստատակամությունը, հայրենասիրությունը և առաքինությունը: Հետևելով Եղիշեի նկարագրած հայ կանանց՝ պետք է նոր ժամանակի երիտասարդներին կրթել ու դաստիարակել և նրանց ի սպաս դնել ազգի վերանորոգմանն ու զարթոնքին: Տարբեր առիթներով Նալբանդյանը հատկապես նշում է Եղիշեի առողջ ու կենդանի հայեցողության հետ լծորդված նրա զվարթ ու պայծառ ոճը, վեր հանում երկի անուրանալի գեղարվեստական արժանիքներն ու բարձր գնահատում այն՝ համաշխարհային գրականության լավագույն չափանիշներով: Ահա թե ինչու Եղիշեն տակավին «Յաղագս հայ-

⁸⁷ ԵԼԺ, հատ. 3, էջ 184:

⁸⁸ Անդ, էջ 185:

կական դպրութեան» ճառում անվանում է «Ոսկի բերանն առ հայս» «զի որ սորայս են պարգութիւնն ռճոյ լծորդեալ ընդ փիլիսոփայականին, առողջ և կենդանի հայեցողութիւնք առ և՛ ոչ մի ընկերակիցս նորին գտանեմք»⁸⁹:

Մ. Նալբանդյանը տարբեր առիթներով անդրադարձել է նաև Ղազար Փարպեցուն և խիստ բարձր է գնահատել նրա երկասիրությունների նշանակությունը հինգերորդ դարի Հայաստանի պատմության, հասարակական երևույթների ու հարաբերությունների, ազատագրական շարժումների իրական նկարագիրը ներկայացնելու գործում: Ոչ միայն այդ, Նալբանդյանը բազմիցս օգտագործել է Փարպեցու երկերը իր գրաքննադատական աշխատություններում, պոլեմիկական գրվածքներում, նամակներում: Մ. Նալբանդյանն իր ժամանակի տգետ, հետամընաց ու պահպանողական հոգևորականության ու հասարակական-քաղաքական գործիչների դեմ պայքարելիս Փարպեցու հռչակավոր «Թուղթ»-ը ուղղակի դարձնում է պայքարի հատու գենք: Եվ դա պատահական չէր: «Թղթի» քննադատական ոգին, նրա ընդգծված հակաաբեղայական շեշտվածությունը չէին կարող չգրավել երիտասարդ ուսումնասիրողի ուշադրությունը: «Թղթի» օգնությամբ նա ցույց է տալիս, որ հոգևորականությունը ոչ միայն XIX դարում, այլև վաղ անցյալում, երբեք էլ միատարր չի եղել և, որ առաջադեմ ու լուսավորչյալ անձիք հավածվել են տգետների ու խավարամիտների կողմից՝ լինի դա V, VII, թե XIX դարում: Մ. Նալբանդյանը այնքան է հրապուրվում Փարպեցու «Թղթով», որ որոշում է այն թարգմանել աշխարհաբար և այդ ճանապարհով է՝ լավելի ընդլայնել «Թղթի» ընթերցողների շրջանակը, որպեսզի գրվածքի բովանդակությունը հասնի ժողովրդին: Ահա թե ինչու նա 1864 թվականին՝ Պետրոպավլովյան բերդարգելության շրջանում, աշխարհաբար է թարգմանում Մկրտիչ Էմինի աշխատասիրությամբ 1853 թվականին Մոսկվայում հրատարակված Փարպեցու «Թուղթ առ Վահան Տեր Մամիկոնեից» աշխատությունը⁹⁰ և այն հազեցնում բազմաթիվ արժեքավոր, գիտական բարձր պատասխանատվությամբ ու հմտությամբ կազմված ծանոթագրություններով: Նալբանդյանի կատարած այդ թարգմանությունը լույս է տեսավ միայն նրա մահից հետո՝ 1868 թվականին՝ Մ. Տեր-Գրիգորյանի ջանքերով⁹¹: Ճիշտ է, Փարպեցու «Թուղթ»-ը ծավալով շատ փոքր է, բայց իբրև գրական երկ խիստ նշանակալից է: Դեռ ավելին, այն եզակի է իր ժանրի մեջ որովհետև այդ աշխատությունը մեր հին մատենագրության պատմության մեջ աշխարհիկ բովանդակություն ունեցող առաջին առանձին հրապարակախոսական-քննադատական երկն է: Այստեղ հեղինակը բացահայտում է ստախոս արեղանների խոսքի ու գործի միջև գոյություն ունեցող հակասությունները, ցույց տալիս բարձրաստիճան հոգևորականության կենցաղի ու գործունեության արատները, բարքերի ու սովորությունների ապականությունը: Մ. Նալբանդյանը, Ղազար Փարպեցու «Թուղթ»-ը գնահատելով որպես մի սքանչելի երկ, անշուշտ, իր դրական գնահատականի խոսքն է ասում նաև նրա «Հայոց պատմությանը», որը նա համարում է հայ միջնադարյան մատենագրության լավագույն երկերից մեկը: «Հայոց պատմությանը»

⁸⁹ ԵԼԺ, հատ. 2, էջ 29:

⁹⁰ «Ղազարայ Փարպեցոյ Թուղթ առ Վահան Տեր Մամիկոնեից», հրատարակեց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1853, 68 էջ:

⁹¹ «Ղազար Փարպեցու գրած Թուղթը. մեղադրութիւն ստախոս արեղաներին»: Թարգմանութիւնք և բացատրութիւնք Մ. Նալբանդեանց, տպագրութիւն Մ. Տեր-Գրիգորեանց, Ս. Պետերբուրգ, 1868, 84 էջ, տե՛ս նաև ԵԼԺ, հատ. 4, Երևան, 1983, էջ 303-368:

տրված բարձր գնահատականի մասին է խոսում նաև այն փաստը, որ Փարպեցու՝ ջերմորեն փառաբանած Վահան Մամիկոնյանին՝ Նալբանդյանը դարձնում է իր առանձին «Մամիկոնյան Մեծ Վահանի պատասխանը» խորագրով բանաստեղծության հերոսը⁹²։ Վերջինիս բերանով՝ Նալբանդյանը առաջ է քաշում նոր պայմաններում ազատագրական պայքարի հարցը՝ ընդդեմ օսմանյան բռնապետության և ցարական ինքնակալության։ Մ. Նալբանդյանը գտնում է, որ հայ ժողովրդի հաղթանակի նախապայմանն է ազգային միասնությունը, որը Փարպեցին համարում էր կերպ-կերպ բարության հիմքը, իսկ անմիաբանությունը՝ հազար ու մի չարիքների ծնողը։ Հրապարակախոսը, «Հայոց պատմություն» և Փարպեցու «Թուրք» ստեղծագործությունները հակադրելով Ազաթանգեղոսի ու Փավստոս Բուզանդի երկերին, դրանք ավելի բարձր է դասում վերջիններից և զուգակից համարում հռոմեական հայտնի պատմիչ Տակիտոսի Տարեգրություններին։ Նալբանդյանը միայն մեկին է տեսնում մեր մատենագրության մեջ, որ կարող է «նորա (Փարպեցու) առաջնությունը գրավել և դա անզուգական ու խնկելի Մովսես Խորենացին է»։

Անտարակույս իրավունք ունեն Նալբանդյանը, երբ Փարպեցու «Հայոց պատմություն»-ը զուգակից էր համարում Կոռնելիոս Տակիտոսի Տարեգրություններին, սակայն, մեր կարծիքով, չի կարելի թերագնահատել նաև Ազաթանգեղոսի ու Փավստոս Բուզանդի երկերի արժեքը։

Մ. Նալբանդյանի ստեղծագործությունից երևում է, որ նա առանձին հետաքրքրություն է ցուցաբերել դեպի հայ միջնադարյան պատմագրության ամենափայլուն դեմքի՝ Մովսես Խորենացու անձի և երկերի նկատմամբ։ Հայ մատենագիրներից ոչ մեկը այնքան չի արժանացել Նալբանդյանի ուշադրությանը, որքան Քերթոդահայրը։ Նալբանդյանը Խորենացու մեջ տեսել է նախ և առաջ իսկական ու ճշմարիտ հայրենասերի, գնահատել նրա խորաթափանցությունն ու քննական ոգին, համարել ժողովրդի իրական լուսավորիչ և պատվել «իմաստուն ու անզուգական փիլիսոփա» տիտղոսով։ Խորենացու «Հայոց պատմության» ջերմ հայրենասիրական շունչն այնքան է ոգևորել Նալբանդյանին, որ նա այդ երկը համարել է ոչ միայն հայ հին, այլև ամբողջ հայ գրականության ամենափայլուն ստեղծագործությունը։ Նալբանդյանը երախտագիտության ջերմ խոսքեր է ասել Խորենացու հասցեին հատկապես այն բանի համար, որ վերջինս մոռացության ու անդառնալի կորստյան գրկից փրկել ու մեզ է հասցրել հայ ժողովրդական բանահյուսության հնագույն թանկարժեք գոհարները։ Այդ կապակցությամբ նա գրում է. «Հայոց հին դպրությունը ևս ունեցել է երկեր, ավանդություններ և առածներ, որոնցից մի քանիսը Խորենացի պատվական ծերունու միջնորդութենովը հասած են մեզ. Որպես «Երկեր երկին և երկիր», «Հատուած գնացեալ Վարդգէս Մանուկն», «Հեծաւ արի արքայն Արտաշէս» և այլ մի քանիսը»⁹³։ Նալբանդյանը երգիծական սուր գրչով, սկզբունքային ու անհաշտ դիրքերից քննադատության է ենթարկել Պատմահոր վերաբերյալ արտահայտված թյուր տեսակետները։ Այսպես, «Կոմս Էմմանուելի հիշատակարան»-ում, պատասխանելով «Մեղու Հայաստանի» օրաթերթի թղթակից Մովսես Իսահակյանի բանավիճակի գրվածքներից մեկին, որտեղ հեղինակը նշում էր, թե Խորենացու «Ողբ»-ը որևէ ազդեցություն չի

⁹² Տե՛ս ԵԼԺ, հատ. 1, էջ 126-127:

⁹³ ԵԼԺ, հատ. 5, Երևան, 1984, էջ 46:

թողել հայոց հետագա մտածողության վրա և այդ կապակցությամբ մեղադրում էր Պատմահորը, Նալբանդյանը խիստ բարձր կարծիք է հայտնել «Ողբ»-ի արժանիքների մասին: Մերժելով Խորենացու նորահայտ քննադատի տեսակետները՝ նա գրում է. «Դուք կամիք արդարացնել Խորենացու անձը, ասելով, որ հանգամանքը բռնի խլել էր նորա բերանից Ողբը. առաջինը, պարոն, Խորենացին անկարոտ է մեր նման փաստաբանների պաշտպանությանը, մանավանդ ոչինչ սուտ չկա նրա ասածի մեջ. երկրորդ, ձեր այդ ընթացքով ցույց եք տալիս ձեր թուլությունը հայկական դպրության մեջ: Խորենացին, վերադառնալով Ալեքսանդրիայից, չգտավ Հայաստանը այն վիճակի մեջ, ինչ վիճակում բարյավ մնաց էր ասել նրան: Արշակունյաց թագավորությունը և հայրապետությունը Լուսավորչի տնից վերջացել էին, և նա մեծամեծ հույսերով ոտք էր կոխում Հայաստան՝ հունական լուսավորությունը տարածելու, և պատահելով ազգի իշխանների անսիրտ ընդունելությանը և հոգևորների կոպիտ, խավարասեր հալածանքներին, ամենայն արդարությամբ պիտո է գրեք, մանավանդ Խորենացու պես երկնաքաղաքացին և տոնելի մարդ»⁹⁴:

Այնուհետև Նալբանդյանը բերում է Ղազար Փարպեցու մի վկայություն այն մասին, որ «Հայոց աբեղայքը մինչև հիմա հալածելուց հետո և մահից զկնի չեն հաշտվում այն պատկառելի ծերունու հետ, սեղանապիղծ ձեռքով մոտենում են նրա խնկելի ոսկորներին և, հանելով գերեզմանից, թափում ջրի մեջ»⁹⁵: Նույն այս միտքը Նալբանդյանը բերում է «Նամակներ Այվազովսկու վարդապետարանի մասին» գրվածքում, գրելով, թե «Զողբ անդով հեծեն այսօր արձագանք լերանց Հայաստանի՝ առեալ ի բերանոյ ծերունույն Խորնոյ»⁹⁶:

Բանավիճելով նույն Իսահակյանցի հետ՝ Նալբանդյանը «Հիշատակարան»-ի մեկ այլ էջում բարձր է գնահատում Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի ջանքերը Հայաստանում դպրոցներ բացելու, զիրն ու գևականությունը տարածելու գործում: Նրա բառերով ասած, այդ երկու «բարի և օրհնյալ հիշատակի արժանի» սուրբ թարգմանիչների գործունեության ամենանշանավոր էջերից մեկն էլ կայանում էր նրանում, որ նրանք շուրջ 60 մտավարժ մանուկների ուղարկեցին այն ժամանակվա լուսավորության ու գիտության կենտրոնները՝ ուսում և կրթություն ստանալու նպատակով, որպեսզի վերջիններս, վերադառնալով Հայաստան, «կանգնեցնեին ընդհանուր ազգի լուսավորության ավազան»: «Ես տեսնում եմ, որ պարոն Իսահակյանցը ամենևին անտեղյակ է մեր մատենագրության պատմությանը, - շարունակելով քննադատությունը գրում է Նալբանդյանը,- խորհուրդ ենք տալիս նրան օրինավոր կերպով կարդալ և հասկանալ Խորենացին, և եթե բնագիրը անհասկանալի է, փառք աստուծո, շուտով ռուսերենը ևս դուրս կգա, պարոն Էմինի աշխատությամբ թարգմանված»⁹⁷: Այդ թարգմանությունը կարող է պարոն Իսահակյանցին և ուրիշներին հասկացուցանել Խորենացու Հայոց պատմությունը, ըստ որում ներկայումս հայոց լուսավորությունը այն թշվառ դրության մեջ է, որ ազգը ավելի շուտով կհասկանա Խորենացին ռուսերեն, քան թե հայերեն: Խորհուրդ ենք տալիս նույնպես կարդալ Ղազար Փարպեցու նամակը՝ գրած Մամի-

⁹⁴ ԵԼԺ, հատ. 3, էջ 22:

⁹⁵ Նույն տեղում:

⁹⁶ Անդ, էջ 227:

⁹⁷ St 'u «История Армении Моисея Хоренского». Перевель с Армянского и объяснил Н. Эмин, Москва, 1858, 384+VIII էջ:

կոնյանց տիրոջ Վահանին, որովհետև այդտեղից շատ բան է երևում»⁹⁸: Նալբանդյանը հասկապես խստորեն է քննադատել Ալ. Խուդաբաշևին, վերջինին՝ Խորենացու «Հայոց պատմության» վերաբերյալ արտահայտած վայրիվերո տեսակետների կապակցությամբ: Հրապարակախոսը, ցույց տալով Խուդաբաշևի «Обозрение Армении» աշխատության մեջ⁹⁹ տեղ գտած բազմաթիվ փաստական սխալները, գրում է. «Թողունք պարոն Խուդաբաշևի ծուռ ու սխալական հայացքը ազգային պատմության մեջ երևացած իրողությունների վերա, բայց ինչպե՞ս լուր մնանք համր դևի պես պապանձված, կամ ինչպե՞ս չբողոքենք այն զրպարտությունների ընդդեմ, որ պարոնը ժողովում է մեր երանելի և սուրբ նախահարց գլխին, որպիսիք էին սուրբ Պարթևը, սուրբ Մովսես Խորենացին, սուրբ Ներսես Շնորհալին, որոնց անունը խնկվում է հայկական եկեղեցու մեջ, և որոնց գերեզմանի հողը համբուրելի են մեզ: Ինչպե՞ս չհարցնենք պարոն Խուդաբաշևից, թե Խորենացու ո՞ր բանը իրավունք է տվել նորան, որ նա Խորենացին անվանե **թեթևամիտ**: Խորենացին՝ ազգի համար մինչև ի մահ աշխատողը, մեր պատմության հայրը, յուր ժամանակի անգուգակական փիլիսոփան և այն խոհեմ, ծանր, խելացի և իմաստուն ծերունին, մի թեթևամիտ հռչակել, և այն էլ օտար լեզվով, մինչ եվրոպական գիտությունը ընդունել է նորան և, օրինավոր քննություն առնելով, հատուցել է արժանի վարձը: Ո՛չ ապաքեն առավել, քան թեթևամիտ է նա, որ այսպիսի անհիմն և անտեղի կարծիք ունի այն երկնաքաղաքացի ծերունու վերա»¹⁰⁰: Այնուհետև Նալբանդյանը գրում է, թե, այս բոլորից ելնելով, ինքը եկել է այն հաստատ համոզման, որ Խուդաբաշևը կամ «ամենևին չէ կարդացել Խորենացին, կամ թե չէ հասկանում նորա գրվածքը, ավելի շուտ վերջինը»: Ամփոփելով վերոնշվածը՝ Նալբանդյանը գրում է, որ Խուդաբաշևը, մեղանչելով Խորենացու անձին դեմ, մեծապես մեղանչել է նաև պատմության դեմ՝ իր ցանկացածի պես աղճատելով իրողությունները: «Համորեն հայոց ազգի անունով,- գայրույթով գրում է Նալբանդյանը,- բողոքում ենք պարոն Խուդաբաշևի ընդդեմ»¹⁰¹:

Մ. Նալբանդյանը Խորենացուն և հինգերորդ դարի մյուս պատմիչներին հակադրում է իր օրերի՝ XIX դարի պահպանողական մտածողներին: Հրապարակախոսն իր «Երկու տող» քաղաքական գրվածքում պարզապես նշում է, որ հոգեվորականության դեմ ուղղված իր ամենասուր խոսքերը «չէ վերաբերում Խորենացուն և մեր մյուս թարգմանիչներին»: Ընդհակառակը, Խորենացու «ուգիտահալած մատյանները», որոնք կրոնամուլ արեղաները «փաթաղիկես անունով հռչակեցին», Նալբանդյանի կարծիքով, նախ և առաջ ուղղված էին հոգևորականության ապականված բարքերի ու սովորույթների դեմ¹⁰²: Այսպիսով, Նալբանդյանը Խորենացուն պաշտպանում էր հայ և օտարազգի բոլոր այն «հայկաբաններից», որոնք Խորենացու երկի մեջ տեսնում էին բազում կեղծիք ու հերյուրանք, թերություն ու արատ, բայց ոչ իսկական պատմություն: Մերժելով նման բոլոր որակումները՝ հրապարակախոսը մեծ հմտությամբ և ունակությամբ կարողացավ տեսնել ու գնահատել Խորենացու Պատմության մեծ ու անուրանալի արժեքը և նրա դերն ու տեղը հայ մատենագրության պատմության մեջ:

⁹⁸ ԵԼԺ, հատ. 3, էջ 90:

⁹⁹ Տե՛ս **Ա. Խուդաբաշև**, *Обозрение Армении в географическом, историческом и литературном отношениях*, С. Петербург, 1859.

¹⁰⁰ ԵԼԺ, հատ. 3, էջ 207-208 (ընդգծումը Մ. Նալբանդյանինն է):

¹⁰¹ Նույն տեղում, էջ 211:

¹⁰² Տե՛ս ԵԼԺ, հատ. 4, էջ 22-23:

Հինգերորդ դարի հայ մատենագրության նկատմամբ Նալբանդյանի ցուցաբերած այս բուռն հետաքրքրությունը ինքնանպատակ չէր: Նա հայ մատենագրության ուսումնասիրության գործում մեծ խորհուրդ էր նկատում ոչ միայն հայ ժողովրդի պատմության հարցերը լուսաբանելիս, այլև համաշխարհային պատմության շատ հարցեր վերազնահատելիս: Պատասխանելով այն հարցին, թե ի՞նչ օգուտ կարող է տալ V դարի հայ մատենագրության ուսումնասիրությունը համաշխարհային պատմությանն ու լեզվաբանությանը՝ Նալբանդյանը գրում է. «Այդ բանը հեշտ կարելի է եզրակացնել ժողովրդի պատմական կյանքից, որը, ինչպես տեսանք, կապված էր հին աշխարհի համարյա բոլոր ազգերի հետ և անմիջական կամ կողմնակի ազդեցություն է ունեցել այն բոլոր մեծ դեպքերի վրա, որոնք կատարվել են քաղաքացիական կամ կրոնական ասպարեզում»: «Եվ իրոք,- շարունակում է Նալբանդյանը,- հայ գրականությունը մեծ լույս է սփռում Արևելքի հին պատմության վրա՝ պահպանելով այնպիսի անհայտ մանրամասնություններ, որոնք վերաբերում են Մարական և Ասորեստանյան թագավորությունների պատմությանը»: «Հայ գրականությունը պարունակում է շատ հետաքրքրական և կարևոր տեղեկություններ Արշակունյան և Մասանյան հարստության պատկանող պարսից թագավորների մասին, ինչպես և լրացնում է Արևելյան Հռոմեական կայսրության բացերը», հինգերորդ դարի հայ դպրությունը որոշակի տեղեկություններ է պարունակում «Կովկասյան լեռների և Եվքսիսյան Պոնտոսի ափերին բնակվող ժողովուրդների մասին»: Մ. Նալբանդյանը շատ բարձր է գնահատել նաև հինգերորդ դարի հայ թարգմանական գրականությունը և այն համարել համաշխարհային նշանակություն ունեցող իրողություն: Նա գտնում է, որ անտիկ ու վաղ միջնադարյան հույն, լատին, ասորի փիլիսոփաների, մատենագիրների ու եկեղեցու հայրերի գործերի հայերեն թարգմանությունները վերին աստիճանի կարևոր են, «քանզի թարգմանական որոշ բնագրերի կորստյան պայմաններում դրանց հայերեն թարգմանությունները ձեռք են բերում բնագրի նշանակություն: Մյուս կողմից, հայ գրականության ուսումնասիրությունը, գրականություն, որն ունի Սուրբ Գրքի, եկեղեցու հայրերի ստեղծագործությանց, Պլատոնի, Արիստոտելի և հունական, լատինական, ասորական ու պարսկական այլ գրողների երկերի զարմանալի ճիշտ թարգմանությունները, վերին աստիճանի կարևոր է հիշյալ աշխատությունների շատ մութ կետերը բացատրելու, արտագրողների աղճատած բնագրերը մաքրելու համար»:

Ամփոփելով, Նալբանդյանը գրում է. «Մենք չունենք բավականաչափ տվյալներ, որպեսզի լիովին գնահատենք հայ գրականության հարստությունները, քանզի շատ ձեռագրեր անհայտ պահվում են վանական հաստատությունների գրադարանների փոշու մեջ, շատերը չեն հրապարակված, կամ կորած են, թեպետ և դրանց աննշան մասն է մատչելի եվրոպական գիտնականներին, բայց այդ տվյալներով իսկ մենք որոշ հավանականությամբ կարող ենք ենթադրել, որ հայ գրականության ուսումնասիրությունը անչափ շահեկան կլիներ եվրոպական գիտությանը»¹⁰³:

Ինչպես հինգերորդ դարի, այնպես էլ ընդհանրապես ամբողջ հայ մատենագրության ուսումնասիրությունը Նալբանդյանի համար ուներ մեկ կարևոր կողմ ևս: Նրան չէին բավարարում հրապարակի վրա գտնվող «Հայոց պատմութեան»

¹⁰³ԵԼԺ, հատ. 3, էջ 363:

յուններ»-ը: Քննադատելով Մ. Չամչյանի, Ղ. Ինճիճյանի և այլոց «Հայոց պատմություններ»-ը ու հայոց պատմության մասին լույս տեսած ուսումնասիրությունները՝ Նալբանդյանը գտնում էր, որ դեռևս չի ստեղծվել իսկական և ճշմարտապատում հայոց պատմություն: «Հայոց պատմության շատ երեսներ դատարկ են, ցավով գրում է Նալբանդյանը, եթե եվրոպականի ակնոցներով նայենք այդ պատմության վերա»: Իսկ ի՞նչ էր հարկավոր մի օրինավոր պատմություն գրելու համար «ոչ հում ու խակ, ինչպես մինչև այժմ կատարված է այդ գործողությունը, այլ եփած կրիտիկայի կրակով»¹⁰⁴: Մինչև նման աշխատանքի ստեղծումը, նա առաջարկում էր նախ և առաջ «մեր ազգային մատենագրության վերաբերյալ գրվածքները, որ ցեցակեր և հարյուրավոր տարեկան մագաղաթների մեջ փտում են վանքերի կամ այս ու այն մատենադարանի անկյուններում, ձգել տպագրական մամուլի տակ և այս ճանապարհով դարձուցանել նորանց հասարակաց ժառանգություն»¹⁰⁵: Այս միտքը Նալբանդյանը զարգացնում է նաև այլ կապակցությամբ: «Հյուսիսափայլ»-ի 1858 թ. 10-րդ համարում Նալբանդյանը, դարձյալ խոսելով այն մասին, թե ինչպիսին պետք է լինի ազգային պատմությունը և երբ այն կարող է դրվել սեղանին, նշում է, որ նախ և առաջ պետք է հրատարակել հայոց մատենագրական հուշարձանները համապատասխան պատմաբանասիրական լուսաբանություններով և դրանք դնել «մեր ազգի առջև»: Հայոց մատենագիրների երկերի նման հրատարակություններից հետո միայն, ըստ Նալբանդյանի, կարելի է ձեռնամուխ լինել վերաստուգման ու վերաարժեքավորման խնդրին: Նալբանդյանը հայ բանասերներին և պատմաբաններին կոչ էր անում զբաղվել հայ մատենագրական հուշարձանների ուսումնասիրության և հրատարակության խնդրով: «Մենք մեր կողմից, խոստանում էր նա, եթե ժամանակը թույլ տա մեզ, դնել մի օր մեր ազգի առջև նորա՝ V դարու հեղինակների գործերը, գործօրինակ Խորենացին, Եղիշեն, Ղազարը և այլն՝ նոր, ժողովրդական, կենդանի և հասկանալի լեզվով»¹⁰⁶: Պետք է նշել, որ Նալբանդյանը մասամբ կատարեց իր այս խոստումը: Հայտնի է, որ նա Պետրոպոլիտյան ամրոցում և հետո՝ 1865 թվականի ընթացքում, թարգմանեց Փարպեցու «Թուղթ»-ը և «Հայոց պատմության» որոշ հատվածներ: Վերջինիցս կատարված թարգմանությունները, ամենայն հավանականությամբ ամբողջական չէին, և, դժբախտաբար, դրանք ցայսօր հայտնաբերված չեն տակավին: Նույն Պետրոպոլիտյան ամրոցի Ալեքսեյան ռավելինում Նալբանդյանը սկսում է բնագրագիտական բնույթի մի շարք աշխատություններ, ինչպես օրինակ, Աստվածաշնչի հայերեն թարգմանության համեմատությունը բնագրերի հետ: Նաև սկսում է կազմել Էջմիածնի գրչագրերի սիստեմատիկ ցուցակը դասավորելով նյութերը ըստ հեղինակների: Վերջապես աքտորավայրում, ըստ որոշ տեղեկությունների, պատրաստվում է թարգմանել Մովսես Խորենացու «Հայոց պատմություն»-ը, գրում է ընդարձակ գրախոսական Ղ. Ալիշանի հրատարակած Վարդան Արևելցու «Հավաքումն պատմութեան» երկի մասին¹⁰⁷:

Այսպիսով, հինգերորդ դարի հայ պատմագրության մասին վերը բերված նալբանդյանական դիտողություններն ու մտորումները մեծ նշանակություն ու-

¹⁰⁴ ԵԼԺ, հատ. 2, էջ 317:

¹⁰⁵ ԵԼԺ, հատ. 3, էջ 194:

¹⁰⁶ ԵԼԺ, հատ. 2, էջ 317:

¹⁰⁷ Տե՛ս «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ», Վենետիկ, 1862: Սույն գրքի վերաբերյալ Մ. Նալբանդյանի գրախոսականը տե՛ս ԵԼԺ, հատ. 4, էջ 383-394:

նեն անցյալի մեր մատենագրության ուսումնասիրության գործում: Նրա՝ այդ կապակցությամբ արտահայտած շատ տեսակետներ, այսօր էլ ունեն ոչ միայն պատմագրական, այլև արդիական արժեք ու նշանակություն:

Ани Утуджян – Армянская историография пятого века по оценке Микаела Налбандяна. – В статье подвергается оценке и обсуждению доводы Микаела Налбандяна по отношению армянской историографии 5-ого века. Автор ппрраво находит, что многие аргументы М. Налбандяна не потеряли свою актуальность.

Ani Utujyan – Fifth century Armenian historiography by Michayel Nalbandyan's estimation. – The apreciations of Michayel Nalbandyan towards the Armenian historical thought of fifth century are analysed and evaluated in the article. The author is strictly sure, that Michayel Nalbandyan's views haven't lost their importance even up to now.

**ՅՈՉՂԱՏԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ԿՈՏՈՐԱՄՆԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝
ԸՍՏ ՕՍՄԱՆՅԱՆ «ՄԵՄԼԵՔԵԹ» ՕՐԱԹԵՐԹԻ**

ՄԵԼԻՆԵ ԱՆՈՒՄՅԱՆ

Սույն հոդվածը նվիրված է 1919 թ. փետրվար-ապրիլ ամիսներին Ստամբուլի ռազմական դատարանում կայացած Յոզղատի հայերի տեղահանության և կոտորածների դատաքննության նիստերի ժամանակ արձարված որոշ հիմնախնդիրների քննությանը՝ ըստ Ստամբուլում օսմաներենով (արաբատառ թուրքերենով) հրատարակված «Մեմլեքեթ» օրաթերթի հաղորդագրությունների:

1919 թ. փետրվարի 5-ից մինչև ապրիլի 7-ը կայացած՝ տասնութ նիստից բաղկացած, Յոզղատի դատավարությունն առաջինն էր 1919-1921 թթ. Ստամբուլի ռազմական արտակարգ ատյաններում հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով հարուցված շուրջ 63 դատական գործերի շարքում: Կարծես ճակատագրի հեգնանքով դատավարությունն ընթանում էր հենց այն դահլիճում, որտեղ դրանից 10 տարի առաջ Աբդուլ Համիդի ներկայությամբ հանդիսավորապես հռչակվել էր օսմանյան խորհրդարանի բացումը¹⁰⁸:

Մեղադրյալները սկզբնապես եղել են երեքը՝ Յոզղատի փոխնախագահիՖ (սանջակի կառավարիչ) և միաժամանակ Բողազլըյանի կայմակամ (գավառապետ) Մեհմեթ Քեմալը, Յոզղատի ժանդարմերիայի գումարտակի հրամանատար Թևֆիկը և Յոզղատի վաքֆային վարչության նախկին պաշտոնյա Ֆեյյազ Ալին: 17-րդ նիստում վերջինիս գործն առանձնացվել է՝ հետագայում քննվելու նպատակով, որը, սակայն, մնացել է սոսկ թղթի վրա¹⁰⁹: Դատավճիռը կայացվել է ապրիլի 8-ին, ըստ որի՝ ամբաստանյալներից Մեհմեթ Քեմալը դատապարտվել է մահապատժի¹¹⁰, իսկ Թևֆիկը՝ 15 տարվա տաժանակիր աքսորի¹¹¹:

Հարկ է նշել, որ Յոզղատի դատական նիստերի ընթացքում և, հատկապես, 1919 թ. փետրվարի 22-ի նիստում, ընթերցվել են բազմաթիվ պաշտոնական փաստաթղթեր, հատկապես՝ ծածկագիր հեռագրեր, որոնց վավերականությունը հաստատելուց հետո միայն ռազմական դատարանը մահապատժի է դատապարտել Մեհմեթ Քեմալին¹¹²:

¹⁰⁸ Ն. Փիլիպոսեան, Ա. Քեսուքեան (Ա. Կապենց), Յուշարձան եօզղատցիներու (Եօզկատ), Ֆրեզնօ, 1955, էջ 405:

¹⁰⁹ Ֆեյյազ Ալին բանտից ազատ էր արձակվել, որպեսզի հնարավորություն ունենար ներկայանալ մեկ այլ շրջանում գտնվող դատարանին, որը պետք է քններ իր գործը, սակայն նա ուղևորվել է Անկարա և պատգամավոր ընտրվել այստեղի նորաբաց Ազգային ժողովում: Տե՛ս V. Dadrian, T. Akçam, “Tehcir ve Taktıl”, Divan-ı Harb-i Örfi Zabıtları, İttihad ve Terakki'nin Yargılanması 1919-1922, İstanbul, 2008, s. 194.

¹¹⁰ Հարկ է նշել, որ Մեհմեթ Քեմալը մասամբ ընդունել էր իր մեղքը՝ ասելով, թե ինքն ընդամենը բարեխղճորեն կատարել էր կառավարությունից ստացված հրահանգը: Տե՛ս Tehcir ve Taktıl Muhakemesi, “Alemdar”, 28 Mart 1919. Նա կախաղան բարձրանալուց անմիջապես առաջ ևս փորձել էր արդարանալ նույն փաստարկով. այդ մասին տե՛ս **Գրիկեր**, Եոզղատի հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը, Նիւ Եորք, 1980, էջ 1:

¹¹¹ Takvîm-i Vekayi, № 3617, 7 Ağustos 1919 ss. 1-2.

¹¹² **Գրիկեր**, Եոզղատի հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը, էջ 66:

1919 թ. փետրվարի 15-ին կայացած 6-րդ նիստում վկա Ստեփանը ցուցմունքներ է տվել առ այն, որ նախ՝ Գյուլլեր, ապա՝ Էլեքչիլեր արքայազնը կացիններով, քլունգներով և գերանդիներով սպանվել են տեղի գյուղացիների կողմից¹¹³: Վկան հայտնել է, որ ջարդին ներկա են եղել նաև ամբաստանյալները, և որ կոտորվել է իր գյուղի ամբողջ բնակչությունը¹¹⁴:

Նույն նիստում հայերի կոտորածների փաստը հավաստող վկայություններով հանդես է եկել նաև տիկին Աննիկը, որը հաղորդել է, թե առաջին և երկրորդ քարավաններից առանձնացվել են տղամարդիկ, երրորդից՝ գեղեցիկ կանայք, իսկ մյուս հայերը կոտորվել են¹¹⁵:

1919 թ. փետրվարի 18-ի՝ թվով 7-րդ նիստում հանդես եկած վկաներից Անկարայի 15-րդ կորպուսի հրամանատար, գնդապետ Հալիլ Ռեջային վկայել է, որ «ըստ մայր Շահաբ բեյի»¹¹⁶ ստացած ծածկագիր-հեռագրի՝ Բողազլըյանում բնաջնջվել էին 2-ից 3 հարյուր հայեր»¹¹⁷: Արձանագրությունում կարդում ենք.

«Հալիլ Ռեջայի - Հանցագործությունների հետաքննիչ հանձնաժողովում ևս ինձ հարցրել են, թե Բողազլըյանից հեռագիր ստացել էմ, թե ոչ: Կարծեմ՝ նման մի հեռագիր է ստացել Շահաբ բեյը, որը վերաբերել է 2-ից 3 հարյուր հայերի բնաջնջմանը: Հեռագիրն ինձ մոտ չէ: Այն պետք է որ Կայսերիից (Կեսարիա-Մ.Ա.) հղված լինի Անկարա:

Դատախազ - Ի՞նչ պատճառներից ելնելով է Ռազմական գերատեսչությունը զբաղվել տեղահանության խնդիրներով:

Հալիլ Ռեջայի - Տեղյակ չեմ: Ինձ նման հեռագիր հասավ, և ես այն հանձնեցի գլխավոր հրամանատարությանը: Շահաբ բեյից չեմ հարցրել պատճառների մասին...:

Դատախազ - Որտեղի՞ց է Շահաբ բեյը նման տեղեկություն ստացել:

Հալիլ Ռեջայի - Բողազլըյանից¹¹⁸:

Նույն նիստում լսել են նաև ազգությամբ հույն վկա Հրիսթաֆի Անդրեյադիսին, որը հանդես է եկել հետևյալ վկայությամբ. «331 թ. (1915-Մ.Ա.) հուլիսի 24-ին՝ ուրբաթ առավոտյան, հրաման տեղ հասավ, և Ջեմալ բեյը¹¹⁹ սկսեց տեղահանությունը: Աքսորյալների առաջին խումբը հաջորդ օրը տարագրվեց Սվազ (Սեբաստիա-Մ.Ա.): Երկրորդ խումբը ևս ուղարկվեց Սվազ: Հայերի երրորդ խումբն արքայազնից Կայսերի: Այդ ժամանակ Միություն և առաջադիմություն կուսակցության պատվիրակը¹²⁰ հայերին բնաջնջելու վերաբերյալ բանավոր հրամաններ տվեց: Ջեմալ բեյը չհամաձայնեց դրանց: Գնաց Չորում: Լսեցինք, որ պաշտոնից հեռացվել է նրան փոխարինեց Քեմալը: Լսեցինք, որ բնաջնջվել են միայն Բողազլըյանի հայերը...»

Այնուհետև ժողովրդին զույգ-զույգ տարել են Բաղլըջայի և Բեզլիհանի կողմերը: Լցրել են մի փարախ, որի շուրջը ճահճոտ է եղել, և այնտեղից երեք-երեք

¹¹³ Katl ve Tehcîr Da'vâsı, "Memleket", 16 Şubat 1919.

¹¹⁴ Նույն տեղում:

¹¹⁵ Նույն տեղում:

¹¹⁶ Շահաբ բեյը եղել է Կեսարիայի 15-րդ կորպուսի հրամանատարը:

¹¹⁷ Tarihî Muhakeme, "Alemdar", 19 Şubat 1919.

¹¹⁸ Katl ve Tehcîr Da'vâsı, "Memleket", 19 Şubat 1919.

¹¹⁹ Յոզղատի մութասարիֆը:

¹²⁰ Յոզղատում Միություն և առաջադիմություն կուսակցության պատվիրակը եղել է Նեջաթի բեյը:

կամ հինգ-հինգ հանելով՝ սպանել: Փախած-թաքնվածներին բացահայտելու նպատակով ասել էին, թե իսկամ ընդունածները փրկվելու էին, սակայն երբ փախածները դուրս էին եկել իրենց թաքստոցներից, նրանց ևս կոտորել էին»¹²¹:

Հրիսթափ Անդրեյադիսը նույն նիստում հաղորդել է նաև, որ Յոզդատը տեղահանությունից առաջ ունեցել է 2000 տուն հայ բնակչություն, իսկ հետո՝ ընդամենը 200¹²²:

Դարձյալ միննույն նիստում վկաներից ունկնդրության է արժանացել նաև Միմոն էֆենդին, որը դատարանին հայտնել է, թե Սալիմ բեյը պաշտոնազրկվել է տեղահանության ժամանակ բնաջնջմանը չմասնակցելու պատճառով¹²³:

Նույն նիստում հիշյալ վկայից հետո ունկնդրության արժանացած վկա Գեղամ էֆենդին դատարանին տեղեկացրել է, որ հայերի բնաջնջմանը մասնակել են նաև Յոզդատի ժանդարմները¹²⁴:

Դատաքննության 9-րդ նիստում, որը տեղի է ունեցել 1919 թ. փետրվարի 22-ին, դատարանի նախագահ Հայրեթ փաշան դատական քարտուղարին խնդրել է ընթերցել մի շարք ծածկագիր հեռագրեր, որոնցից մեկում դիվիզիոնի հրամանատարը զինվորական կորպուսին էր հայտնում Բողազլըյանում 1500 հայերի սպանության մասին, իսկ մյուսում, որը կրում էր 207 համարը, հիշատակվում էր Բողազլըյանում և շրջակա բնակավայրերում 360 հայերի բնաջնջման մասին¹²⁵:

Նույն նիստում դատարանի նախագահի հրահանգով ընթերցվել է նաև 1915 թ. հուլիսի 17-ի թվակիր հեռագիրը, ըստ որի՝ տեղահանության ընթացքում հայերին սպանել է ժանդարմերիայի սերժանտ Հուսեյինը, ինչպես նաև օգոստոսի 11-ի թվակիր՝ թիվ 263 հեռագիրը, ըստ որի՝ Յոզդատի սանջակում ոչ մի հայ չպետք է մնար¹²⁶: Միննույն նիստում, դարձյալ դատարանի նախագահի ցուցումով, ներկայացվել է նաև մեկ այլ հեռագիր, որը վերաբերում էր Բողազլըյանում 130 հայերի ոչնչացմանը¹²⁷:

Սույն դատական գործընթացի 10-րդ նիստում՝ 1919 թ. մարտի 5-ին, վկաներից ունկնդրության արժանացած Թոքայթի մութասարիֆը հավաստել է, որ հայերի սպանությունների փաստը հայտնի է եղել բոլորին¹²⁸:

Այս նիստում լսված վկաներից Յոզդատի նախկին մութասարիֆ Ջեմալը բացասական պատասխան է տվել իրեն ուղղված այն հարցին, թե արդյո՞ք որևէ նախանշան եղել է առ այն, որ Յոզդատի հայերը պատրաստվում էին «ապստամբել»¹²⁹:

Միննույն նիստում, որպես վկա, ունկնդրության է արժանացել նաև վարչական տեսուչ Նեդիմ բեյը, որը հայտնել է, թե ըստ իրեն հասած խոսակցությունների՝ տարագրված 140 հոգանոց հայկական քարավանին զիջերը զավազաններով ոչնչացրել են մի փարախում: Վկան նաև շեշտել է, որ հայերին արքորել են ո-

¹²¹ Katl ve Tehcîr Da'vâsı, "Memleket", 19 Şubat 1919.

¹²² Նույն տեղում:

¹²³ Նույն տեղում:

¹²⁴ Նույն տեղում:

¹²⁵ Katl ve Tehcîr Da'vâsı, "Memleket", 23 Şubat 1919. Սույն նիստում ընթերցված մյուս ծածկագիր հեռագրի մասին տե՛ս **Գրիկեր**, Եոզդատի հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը, էջ 61:

¹²⁶ Katl ve Tehcîr Da'vâsı, "Memleket", 23 Şubat 1919.

¹²⁷ Նույն տեղում:

¹²⁸ Katl ve Tehcîr Da'vâsı, "Memleket", 6 Mart 1919.

¹²⁹ Նույն տեղում:

րոշ գյուղերից, և որ ճանապարհին նրանք ենթարկվել են չեթեներից բաղկացած ավազակախմբերի հարձակումներին¹³⁰:

Այս նիստում ևս ընթերցվել է Շահաբ բեյի՝ Բողազլըյանի տեղահանության ժամանակ կատարված սպանությունները և չարաշահումները փաստող ցուցումը: Ներկայացվել են ևս երկու ցուցում: Դրանցից առաջինում, ժանդարների հաղորդել էր, թե 36 հայերից 11-ը սպանվել էին հրոսակախմբերի կողմից, իսկ մյուսները՝ կոտորվել հետագայում: Երկրորդը, որի վրա նշված էր «գաղտնի» բառը, վերաբերում էր Բողազլըյանի տեղահանությանը¹³¹:

Դատավարության տասներկուերորդ նիստում, որը տեղի է ունեցել 1919 թ. մարտի 7-ին, դատական քարտուղարն ընթերցել է Կայսերիի ժանդարներիայի սերժանտի զեկույցը, ըստ որի՝ 26 հայ ժանդարներիայի պահպանության տակ տարագրվելիս ենթարկվել է ժանդարների հարձակումներին, որոնք նրանց սպանել են¹³²:

1919 թ. մարտի 24-ին կայացած դատական գործընթացի տասներեքերորդ նիստում դատախազը հիշատակում է Բաքբալ գյուղից պղնձագործ Մահմուդին հղված գրավոր հրամանի մասին, ըստ որի՝ (հայ-Մ.Ա.) կանանց, տղամարդկանց ու երեխաների հագուստը և իրերը պետք է պահվեն: Ինչպես պարզաբանել է դատախազը՝ «Այստեղ խոսքն, անկասկած, վերաբերում է հագուստին: Այդ դեպքում այս հրամանը, անկասկած, վերաբերում է ոչ այլ ինչի, քան սպանությանը»¹³³:

Յոզգատի դատաքննության տասնհինգերորդ նիստում (1919 թ. մարտի 27-ին) դատարանին ցուցմունքներ տված վկա Մեհմեթ բեյը, որն անգլոհպատակ գնդապետ էր, հայտնել է, թե անձամբ ինքը տեսել է, թե ինչպես են կացիններով ու դաշույններով հայերին կոտորում Քարաքուշ լեռնահովտում¹³⁴: Նույն նիստում ընթերցվել է նաև ամբաստանյալ Թեֆիկի ստորագրությունը կրող տեղեկագիրը, որը հիշարժան է, մասնավորապես «Հայերի արմատը չորացնել» արտահայտության պարունակությամբ¹³⁵:

Դատավարության տասնվեցերորդ նիստում, որը տեղի է ունեցել 1919 թ. մարտի 29-ին, դատախազն արձանագրել է, որ դատաքննության ընթացքում լսված վկաների ցուցմունքները պարունակում են մեղադրյալ Մեհմեթ Քեմալի մեղավորությունը հաստատող անհերքելի ապացույցներ. «Քեմալ բեյի դեմ հանդես եկած գլխավոր վկաներն են Բողազլըյանի մյուֆթին (հոգևոր առաջնորդը՝ Մ.Ա.) և զինվորական վերադասները: Ի հավելումն դրանց՝ կան նաև հայ վկաներ: Հետևաբար, Քեմալը գտնվում է բարդ կացության մեջ: Կարելի է ունկնդրության արժանացնել նաև պաշտպանող կողմի ներկայացրած վկաներին, սակայն քանի որ հանցագործությունը բացահայտ է, պաշտպանող կողմի վկաները որքան գովաբանեն այդ մարդուն, կարծում եմ, որ դա դատարանի համար անիմաստ կլինի»¹³⁶:

¹³⁰ Katl ve Tehcîr Da'vâsı, "Memleket", 7 Mart 1919.

¹³¹ Նույն տեղում:

¹³² Katl ve Tehcîr Da'vâsı, "Memleket", 8 Mart 1919.

¹³³ Katl ve Tehcîr Da'vâsı, "Memleket", 25 Mart 1919.

¹³⁴ Tehcîr ve Taktîl Muhakemesi, "Alemdar", 28 Mart 1919; Katl ve Tehcîr Da'vâsı, "Memleket", 28 Mart 1919.

¹³⁵ ««Պէտք է Հայերուն արմատը չորցնել» ըսեր է ամբաստանեալ Թեվֆիկ», «Ճակատամարտ», 28 մարտ, 1919, թիվ 115 (1936):

¹³⁶ Yozgat Tehcîr Da'vâsı, "Memleket", 30 Mart 1919.

Մակայն, չնայած այս բոլոր արժանահավատ վկայություններին ու փաստերին, քեմալական իշխանությունները Յոզգատի գործով մեղադրյալ և դատապարտյալ Մեհմեթ Քեմալին հետմահու ոչ միայն արդարացել են, այլև հերոսացրել: Նա կախադան է բարձրացվել 1919 թ. ապրիլի 10-ին՝ Ստամբուլի Մուլթան Բայազետ հրապարակում: Նախ՝ մահապատժի արարողությունն ինքնին կատարվել է ոչ ընդունված կարգով: Ըստ օրենքի՝ կախադանի դատապարտվածը մահապատժի էր ենթարկվում նախքան արևածագը՝ դատապարտյալի մարմինը հրապարակում էր մնում ևս 5-6 ժամ՝ ապա՝ անշուքորեն թաղվում: Մինչդեռ Մեհմեթ Քեմալի մահապատժի արարողությունն ի կատար է ածվել կեսօրից հետո՝ ժամը տասնինն անց քսանին¹³⁷, սովոր բազմության ներկայությամբ, որին մասնակցել են նաև բարձրաստիճան պաշտոնյաներ: Մահապատժից հետո Մեհմեթ Քեմալի դին դրվել է Բայազետ մզկիթի լվացարանում© գործողություն, որն անթույլատրելի էր մահապատժի դեպքում¹³⁸: Հաջորդ օրը մեծ շուքով կազմակերպվել է նրա թաղման արարողությունը՝ որին մասնակցել են ավելի քան տասը հազար ցուցարարներ: Ոճրագործը հռչակվել է «ազգային նահատակ», իսկ նրա այրու և զավակների նկատմամբ սահմանվել է ազգային խնամակալություն: Ինչպես նշում է Արամ Անտոնյանը, «այն թուրք ժողովուրդը որ հանրային հանգանակութեանց իր քսակը այն ատեն միայն կը բանայ» երբ վիզը կը սեղմեն« ինքնաբերաբար» 5-10 օրուան ընթացքին 20 հազար օսմ© ոսկի գումար մը հանգանակելով« յանձնեց Քեմալ պեյի այրիին»¹³⁹:

Ավելին, Անկարայի մեջլիսը 1920 թ. դեկտեմբերի 9-ին որոշում է կայացրել Մեհմեթ Քեմալի ընտանիքին թոշակ տրամադրելու մասին¹⁴⁰: Այսօր ևս Բողազլը-յանում կարելի է տեսնել հերոսի կոչմանն արժանացած մեծ հայասպան Մեհմեթ Քեմալի արձանը:

Այսպիսով, Յոզգատի դատաքննության ժամանակ ընթերցված բազմաթիվ հեռագրերը և բարձրաստիճան ականատեսների վկայությունները փաստել են, որ տեղի հայության բնաջնջումն իրականացվել է օսմանյան տեղական իշխանությունների, ժանդարմերիայի և բնակչության կողմից, որոնք իրենց հերթին հրահանգներ էին ստացել կենտրոնական կառավարությունից: Մույն դատավարության ընթացքում արձանագրված Յոզգատի նախկին կառավարչի ցուցմունքի համաձայն՝ հերքվել է Յոզգատում հայերի կողմից ապստամբության նախապատրաստվելու մասին վարկածը, որը XIX դ. վերջերից առ այսօր բազմիցս շահարկվել է Հայոց ցեղասպանության պատմությունը նենգափոխող պատմության կեղծարարների կողմից: Ըստ այդմ, Յոզգատի դատաքննության նյութերը, տարբեր կտրվածքներով, ամբողջությամբ պահպանում են իրենց այժմեականությունը:

Мелине Анумян – Судебный процесс по депортации и резни армян Йозгата согласно османскому ежедневнику “Мемлекет”. – В этой статье представляются те части 18 заседаний следствия по депортации и резни армян Йозгата, которые сос-

¹³⁷ Kemal Bey İdam Olundu, “Alemdar”, 11 Nisan 1919.

¹³⁸ **Գրիկեր**, Եոզգատի Հայասպանութեան վաերագրական պատմութիւնը, էջ 330:

¹³⁹ **Արամ Անտոնյան**, Մեծ ոճիրը, Պօսթըն, 1921, էջ 272:

¹⁴⁰ **Акçam T.**, İnsan Hakları ve Ermeni Sorunu, İttihat ve Terakki'den Kurtuluş Savaşı'na, 2. Baskı, İstanbul, 2002. s. 556.

тоялись в Военном трибунале Стамбула в февраль-апрель 1919 года. Эти части были зафиксированы на османском (на турецком с арабским алфавитом) в ежедневнике “Мемлекет”, который публиковался в Стамбуле.

По началу обвинителей было три: Мехмет Кемаль (губернатор Богазлыяна), Тевфик (командир подразделения Йозгатской жандармерии) и Фейаз Али (бывший чиновник Йозгатской вакуфской управления). Дело последнего было отделено в 17-ом заседании для рассмотрения в будущем, но так и осталось на бумаге. Вердикт был вынесен 8-ого апреля, согласно которому из обвиняемых Кемаль был приговорен к смерти, а Тевфик- на 15 летнюю каторжную ссылку.

Прочитанные многочисленные телеграммы и свидетельства высокопоставленных свидетелей во время Йозгатского судебного процесса фактически указывают, что резня сдешних армян была осуществлена со стороны местных властей, жандармерии и населения, которые в свою очередь, получили указания из центрального правительства. Во время этого судебного процесса, по свидетельствам и самого бывшего председателя Йозгата исключалась та версия, что в Йозгате готовилась восстание со стороны армян. Но, несмотря на все эти свидетельства и факты, осужденный по йозгатскому делу Мехмет Кемаль, посмертно был не только оправдан, но и возведен в герои со стороны кемальских властей.

Meline Anumyan – The Trials of the Deportations and Massacres of the Armenians of Yozgat according to the Ottoman Newspaper “The Memleket”. – This article presents those parts of the 18 court sessions of the deportations and massacres of the Armenians of Yozgat taken place at the Istanbul Military Tribunal from February to May in 1919, which were reported in the daily newspaper “The Memleket” published in Ottoman Turkish in Istanbul at that time.

At first there were three defendants- Mehmet Kemal, Kaymakam (county executive) of Bogazliyan county in Yozgat district, Mehmet Tevfik, a gendarmerie captain, subsequently promoted to major, and Abdul Feyyaz (Ali), Bogazliyan county’s Pious Foundations (Evkaf) official. The latter’s case was detached to be investigated later, but remained on the paper. The verdict was passed on April 8, according to which Mehmet Kemal was sentenced to death, and Tevfik was convicted to 15 years of penal servitude.

The numerous telegrams and testimonies of high-ranking eyewitnesses, which were read during the Yozgat trials, verify that the annihilation of the local Armenians was carried out by the local authorities, gendarmerie and the people, who had been given orders by the central government. During this trial the very former governor testified that there had not been any preparation for a rebellion by the Armenians.

However, regardless of all these vivid testimonies and facts, Mehmet Kemal, the defendant and convict of the Yozgat case, was not only acquitted, but also heroized by the Kemalist authorities.

**ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՈՅՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՄԲ**

ՀԱՄՄԻԿ ՄԻՄՈՆՅԱՆ

Արևմտահայ քաղաքական միտքը, որի կրողները 1918թ. հայ – թուրքական պատերազմի հետևանքով նույն թվականի մայիս ամսից սկսած գտնվում էին Արևելյան Հայաստանում, միանշանակ վերաբերմունք չդրսևորեցին ՀՀ գոյության նկատմամբ, որի արարմանը, բնականաբար, նպաստեցին: Այս ժամանակահատվածի արևմտահայ քաղաքական միտքը կրողները գործում էին բուն Հայաստանում և արտասահմանում՝ գլխավորապես Պողոս – Նուբար փաշայի գլխավորությամբ: ՀՀ-ում թե՛ արևմտահայ և թե՛ արևելահայ քաղաքական միտքը 1918թ. մայիսի 28 –ից հետո, անկախ հողային պահանջների առումով որոշ տարակարծություններից, վերաճեց պետական քաղաքական մտքի, որի ուղղվածությունները ցավոք չէր կիսում Պողոս – Նուբարի գլխավորած պատվիրակությունը: Մա հարկավ իր բացասական հետևանքներն ունեցավ ՀՀ անկման կամ ավելի նեղ սահմաններով խորհրդայնացման վրա:

Նախ՝ փոքր ինչ այն մասին, թե ի՞նչ դեր ունեցան արևմտահայերը հայոց նոր պետականության արարման գործում: Հարկավ, դժվար էր կանխատեսել, որ 1918թ. մայիսի վերջերին Անդրկովկասյան սեյմը, ուր ձևականորեն միավորված էին հայերը, վրացիները և թաթարները, կկազմալուծվի և կհռչակվի Հայաստանի Հանրապետությունը: Բայց, անկախ այդ հանգամանքից, թուրքական զորքերի առջևից նահանջող արևմտահայ կռվող ուժերը, որոնց հետ էր գաղթականությունը, նպաստեց այդ պետության կայացմանը՝ նախապես հայացնելով Հայաստանը: **Արևմտյան Հայաստանի հայացման գործընթացը, որին ձեռնամուխ էին եղել բազում գործիչներ դեռևս 1916թ. կեսերից, այնտեղ կիսատ մնալով՝ շարունակվեց Արևելյան Հայաստանում:**

Հունվարի վերջերին, խախտելով զինադադարը թուրքերը հարձակվում են Երզնկայի վրա, որը չնայած Սեբաստացի Մուրադի գործադրած ջանքերին, նույն ամսի 31 – ին պարպվեց: Հայկական 1000 –ից մի փոքր ավելի ուժերը գաղթականության հետ նահանջեցին մինչև Էրզրում: Փետրվարի 3 –ին նահանջի ճանապարհը բռնեցին Բաբերդի փոքրաթիվ կռվող ուժերը՝ Սեպուհի գլխավորությամբ: Փետրվարի 11 – ին նա և Մուրադը արդեն Էրզրումում էին, որը նույնպես ընկավ փետրվարի 27 –ին: Այսպիսով Արևմտյան Հայաստանը նորից անցնում էր թուրքերի ձեռքը: Մարտի 22 – ի լույս 23 – ի գիշերը պարպվեց Սարիղամիշը, ապրիլի 12 –ին՝ Կարսը, մայիսի 15 – ին Ալեքսանդրապոլը:

Մենք զանց ենք առնում Մայիսյան հերոսամարտերի կազմակերպման և դրանց տեսանկյուններից անդրադառնալու խնդիրը: Պարզապես փորձենք ճշտել այն դերը, որ ունեցան արևմտահայ շատ քաղաքական ղեկավարներ՝ այդ հերոսամարտերում հայերի հաղթանակի տեսանկյունից, որն նաև նշանակում է նպաստ պետության ստեղծման գործին:

Թուրքական արշավանքի հետևանքով նահանջի ճանապարհը բռնեց նաև Վասպուրականի 25000 – ի հասնող և Տարոնի, Մասունի և Խնուսի 60 – 70000 հասնող հայությունը: Վասպուրականի հայությունը մինչև ապրիլ ամիսը դիմադրեց թուրքերին, ապա՝ նահանջեց Պարսկաստան, ուր սպանվեց նրա առաջնորդներից Կոստի Համբարձումյանը: Ընդհանրապես նահանջող արևմտահայության մասին կարևոր տեղեկություններ է հաղորդում Կարո Մասունին: Վերջինս, որը Տարոնի նահանգապետի տեղակալն էր կենտրոն ունենալով Խնուսը, նահանջող ժողովրդի հետ հասնում է Ալաշկերտ: Հենց այստեղից սկսած ժողովուրդը, թերևս զգալով, որ վերջնականապես թողնում է իր հայրենիքը, սկսում է վերացնել այն բոլոր թաթարական գյուղերը, որոնք հանդիպում են իր ճանապարհին: Տարոնի և Խնուսի ժողովուրդը Ալաշկերտի Ղարաքիլիսա գյուղում և շրջակայքում մնում է մինչև մարտի 23 – ը՝ Մարիդամիշի անկումը՝ կրակի տալով տեղի հսկայաքանակ պահեստները, իսկ Կարսի անկումից հետո տարոնահայությունը զինված ուժերի հետ համախմբվում է Դիադիսի և Մոսունի շրջաններում՝ Մեծ Մասիսի ստորոտում: Այստեղ Տարոնի և Ալաշկերտի ղեկավարները խորհրդակցություն են ունենում՝ «գոյութեան պայքարի ուղեգիծ մը պատրաստելու համար»¹⁴¹:

Խորհրդակցության ընթացքում հետևյալ, փաստորեն քաղաքական որոշումն են կայացնում «Ժողովուրդի հետ մնալ եւ ղեկավարել գաղթարշավը, դառնալ տեսակ մը շարժական կառավարութիւն, կեդրոնացած պահել զինուորական, կուսակցական եւ վարչական ղեկավարութիւնը եւ ընթացք տալ 150.000է աւելի ժողովրդական զանգուածի մը շարժումներուն»¹⁴²:

Այսպիսով, ժողովուրդն ուներ իր քաղաքական և վարչական ղեկավարությունը, որի խնդիրն էր հիմնավորվել Արևելյան Հայաստանում, գործնականում հայացնելով այն և դարձնելով միատարր: Մա շատ կարևոր խնդիր էր, քանի որ ակնհայտ էր, որ Անդրկովկասյան դաշնությունը փլուզվելու է, իսկ ներքին թաթար դավադիր տարրը նպաստելու էր թուրքական զենքի հաղթանակին: Պատահական չէ, որ խորհրդակցությունը որոշում է զենքի ուժ կիրառել բոլոր այն մահմեդական տարրերի նկատմամբ, «ովքեր Արեւմտյան Հայաստանի կորստից հետո սպառնալիք էին՝ կախված արևելահայութեան գլխին»¹⁴³:

Կ. Մասունին հետևյալն է գրում. «Ռուսական Հայաստանի քարտեզը մեր աչքերուն առջեւ ունեինք: Մեր աչքերը կը հառէինք լեռնամասերուն եւ թաթարական շրջաններուն վրա: Հայկական լեռնամասերը մեր ժողովուրդի ապավենը պիտի ըլլային եւ մենք բնական ամրութիւններէն օգտուելով՝ գոյամարտը պիտի շարունակէինք: Գոյամարտն ապահովելու համար, անհրաժեշտ էր թաթարական ապստամբ շրջանները (որոնք կոնակէն եւ կողքերէն կը հարուածէին հայ ժողովուրդը) առնել առնել զինուած ժողովրդի ասդեցութեանը տակ: Պարզ տրամաբանութիւն մը ունէր դէպի Արարատեան Հայաստան դիմող թրքահայ զինուած զանգուածը: Անիկա կը մտածեր, եթէ թուրքը բռնի ուժով զինք դուրս կը քշէ իր հինավուրց հայրենիքէն, ուր ինքը Արարատն անցնելէն յետո անհող ու անծածք բազմութիւն մը պիտի դառնա, իր մարդկային սրբազան իրավունքն է, գրաւել զենքի ուժով թաթարական գիւղերը եւ բնակիլ հօն, որպէս իր **Նոր Հայրենիքը**»¹⁴⁴:

¹⁴¹ Կ. Մասունի, Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին 1914 - 1918, էջ 179:

¹⁴² Նույն տեղում, էջ 182:

¹⁴³ Աշոտ Ներսիսյան, Կարո Մասունի, էջ 113:

¹⁴⁴ Կ. Մասունի, նշվ. աշխ., էջ 182 – 183:

Այս մեջբերումով մի ավելորդ անգամ հաստատվում է, որ արևմտահայ քաղաքական միտքը ուղղորդված էր դեպի միատարր հայրենիքի ստեղծման գաղափարը, որի ուղղությամբ գործնական քայլերը չուշացան: Ավելորդ չենք համարում շեշտել, որ նման քաղաքական դիրքորոշում արևելահայ քաղաքական մտքի ներկայացուցիչների մեջ քչերը միայն ունեին, որոնցից կարելի է առանձնացնել Ռուբենին և Արամ Մանուկյանին:

Լցված վերոհիշյալ ուխտով՝ Տարոնի, Ալաշկերտի և Վասպուրականի ժողովուրդը 1918թ. ապրիլի վերջերից Արարատ լեռան բարձունքներից իջնում է դեպի Իգդիր, որի թրքությունը հիմնականում ընկճվում է և տեղի տալիս: Այնուհետև ժողովուրդը Արաքսն անցնելով՝ հարձակվում է Էջմիածնի և Աշտարակի թաթարական գյուղերի վրա: Ապա ծրագրվում է Թալինի բերդի գրավումը և շրջակա թաթարական գյուղերի մաքրագործումը: Թալինի բերդը գրավվում է մայիսի 5 – ին: Կարո Սասունու եղբայրը, Արմեն Սասունին, որն այս իրադարձությունների մասնակիցն էր, կարևոր տեղեկություններ է հաղորդում այն արևմտահայ գործիչների մասին, որոնք առաջնորդվում էին հիշյալ տրամաբանությամբ: Համաձայն դրանց՝ արևմտահայությանը տեղավորելու հարցը քննարկվում է մի ժողովում, որին մասնակցում են Կ. Սասունին, Վահագն Քրմոյանը, Արմեն Սասունին, Մխիթար Դարմանյանը, Միհրան Գրիգորյանը, Արամ Խոճուկյանը, Սասունցի Մուշեղը, Գելեցի Ղազարը, Թեղուտի Գալեն, Նորատինի Արշակը, Արշակ Մանուկյանը, Սասունցի Մանուկը, Աղջանի Վահանը և ուրիշներ: Ժողովը որոշում է, «որ Սասնո հեծելազորի առաջնորդութեամբ Տարոնի ժողովուրդը տեղափոխվի Արագածի թաթարական, պարսկական եւ քրդական զիւղերը, որոնք պիտի գրավվէին Սասնո հեծելազորի զինու զորութեամբ:

Պուլանուխ – Մանազկերտի ժողովուրդը, որոնց մեծ մասը սայլ ուներ եւ մեծ քանակութեամբ կենդանիներ, էջմիածնի եւ Աշտարակի խճուղիով պետք է բարձրանար Աշտարակ, Օշական եւ շարժուէր դէպի Ապարան:

Այս որոշումը, - գրում է Ա. Սասունին, - արագ կերպով գործադրուեցավ եւ հետագային բախտորոշ նշանակութիւն ունեցաւ Հայաստանի համար»¹⁴⁵:

Կռիվների մանրամասնությունների մեջ չխորանալով, շեշտենք, որ Թալինի բերդի գրավումից հետո ընկճվեցին մյուս թաթարական գյուղերը ևս, որի արդյունքում Թալինից մինչև Ուջան և Բյուրական, մոտ 70 քառ. կմ տարածքով հաստատվեց արևմտահայությունը: Ավելացնենք նաև, որ ՀՀ հռչակումից հետո էլ նրա հայացման աշխատանքները հիմնականում իրականացնում էին արևմտահայ ուժերը՝ գլխավորապես Ռուբենի գաղտնի ծրագրերի համաձայն¹⁴⁶:

Չպետք է մոռանալ նաև, որ Ալազցազի արշավանքը իր հաղթանակի բաժինն ունեցավ Մարդարապատի ճակատամարտի մեջ, քանի որ «Մարդարապատի դէմ գործող թրքական բանակը զրկվեցավ թաթարական ուժերու օժանդակութենէն, իսկ հայկական բանակը, ճակատամարտի պահուն, իր կոնակէն եւ կողքերէն հարուած տուղներէն ազատուեցավ»¹⁴⁷:

Եվ վերջապես, պետք է շեշտել, որ տարոնցիները և գնդապետ Ա. Բաղդասարյանի գնդից 400 վասպուրականցիներ, ինչպես նաև Անդրանիկը, կարևոր դեր ունեցան Ջանգեզուրի թաթար տարրի չեզոքացման գործում 1918թ. ամռանը:

¹⁴⁵ Պատմություն Տարոնի աշխարհի, էջ 1073:

¹⁴⁶ Տես Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. է, Lou Անճելլու, 1952, էջ 103 – 121, նաև՝ «Հայրենիք» ամսագիր, թիւ 7, Յուլիս, 1963:

¹⁴⁷ Կ. Սասունի, Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին՝ 1914 - 1918թ, էջ 197:

Այս մասով ասվածն ամփոփելով, ուզում ենք հետևյալ եզրակացությունները մատուցել.

Առաջին. Արևմտահայ քաղաքական կամ առհասարակ հայ քաղաքական միտքը հիմնականում մատուցվում է դիվանագիտական գործընթացներում իրենց դրսևորած կուսակցական և այլ՝ հանրային – քաղաքական գործիչների գործունեության հենքի վրա, որոնք ավելի շատ գնում էին քաղաքական գործընթացների հետևից և ոչ առջևից: Նրանց գործունեությունը հիմնականում կախված էր մեծ տերություններից:

Երկրորդ. Արևմտահայ քաղաքական մտքի այն ուղին էր արդյունավետ, որը մենք ներկայացրեցինք և որը գործում էր իրական հաջվարկով, չէր սահմանափակվում տեսություններով, այլ դրանք կյանքի էր կոչում, որով պետք է պայմանավորել հայոց պետականության ստեղծումը:

Եվ կարծում ենք, որ դրանում մենք բավականին համոզվեցինք:

Այժմ փորձենք ճշտել, թե ինչպիսի դիրքորոշում որդեգրեցին արևմտահայ քաղաքական գործիչները Հայաստանի Հանրապետության նկատմամբ, որը հռչակվեց նաև նրանց գործունեության արդյունքում, առանց որի դիվանագիտական հիմնավորումները չէին կարող արդյունավետ լինել:

1918թ. մայիսի 28 - ից շատ չանցած հոգեբանական անջրպետ էր առաջացել արևմտահայերի և արևելահայերի միջև: Արևմտահայերը, որոնք արևելահայերի հետ մեկտեղ երկար տարիներ պայքար էին մղել հանուն իրենց անկախության, իրենց այնքան էլ հոգեհարազատ չէին համարում Արևլյան Հայաստանում առաջացած պետությունը՝ այն համարելով Արարատյան Հայաստան: Իհարկե, նրանց կարելի էր հասկանալ այն առումով, որ չէին ուզում կորցրած տեսնել իրենց հայրենիքը: Բայց նրանք չէին դնում անջատողականության հարց, որն անում էր Պողոս-Նուբարի գլխավորած պատվիրակությունը՝ արդյունքում բավական վնաս հասցնելով Հայկական հարցին, այլ միավորման: Այս խնդրին մենք դեռ կանոդարադառնանք: Մինչև այդ, տեսնենք, թե որոնք էին հոգեբանական խզման բուն պատճառները: Դրանք լավ է ներկայացրել Ս. Վրացյանը. «Տասնեակ տարիներ հայ քաղաքական միտքը դաստիարակվել էր այն ուղղութեամբ, որ Հայաստանը այնտեղ էր, Բարթողեան լեռնաշղթայի միուս կողմը, հայկական հարց, Հայաստանի ինքնավարութիւն, հայ պետութիւն կարող էր լինել միայն Թիւրքահայաստանում, եւ յանկարծ, բոլորովին չսպասած տեղից՝ մեջտեղը բռնում է ինչ որ մի «Հայաստանի Հանրապետութիւն» - մարտելի՞ բան էր այդ: Յետոյ այդ «Հանրապետութեան» մէջ դեռ շատ բանից՝ օրէնքներից ու լեզուից սկսած մինչեւ ներքին կարգերը, մինչեւ հանրային կենցաղն ու բարքերը՝ ռուսի հոտ էր բուրում: Արևմտահայութեան մտքին ու զգացմունքներին խորթ էր այդ, անհարազատ:

Ուստի եւ զարմանալի չէ, որ անկախութեան առաջին օրերից հէնց նրանք սկսել էին մտածել «ինքնորոշման», իրենց քաղաքական դիրքն ու ընթացքը որոշելու մասին»¹⁴⁸:

Արևմտահայությունը հիմքեր ուներ անհանգստանալու, քանի որ անորոշ էր Արևմտյան Հայաստանի ճակատագիրը: Նրա՝ զեթ ծխականորեն ՀՀ մաս հայտարարելու փաստը կարող էր վերացնել արևելահայ - արևմտահայ անջրպետը: Այդ հաստատում են Ալ. Խատիսյանի հետևյալ մտորումները՝ կապված ստեղծ-

¹⁴⁸ Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետութիւն, էջ 254 – 255:

ված իրավիճակի հետ. «Թրքահայաստանի ամայացած վիլայեթները հայ ժողովրդի անկապտելի սեփականությունը կը կազմէին. պէտք էր, որ անոնք եւս մտնէին հայկական նորակազմ պետութեան մէջ, որպէսզի բովանդակ հայութիւնը կարենար համախմբուիլ իր պատմական հայրենիքին մէջ: Ճիշդ է, այդ վիլայեթները մեր ձեռքը չէին, բայց հայ ժողովուրդի գիտակցութեամբ անոնք չէին կրնար պատկանիլ ուրիշ ոեւէ մէկուն, բացի Հայաստանէն. հայութիւնը հասած էր ազգային այնպիսի գիտակցութեան մը, որ չէր կրնար ճանչնալ սահմաններու պատահական բաժանում եւ հատուածներու գոյութիւն. ան կզգար ինքզինքը իրրեւ մէկ ամբողջութիւն եւ իր այդ միութեան գաղափարը կուզէր մարմնատրել ուրեւէ մէկ ակտի մէջ: Երեւանը դարձած էր հայութեան քաղաքական կեդրոնը, որ պէտք է միացնէր նաեւ հայկական բոլոր հատուածները»¹⁴⁹:

Ինչպէս համոզվում ենք խնդիրն ավելի շատ վերաբերվում էր ՀՀ շուրջ հայկական հողերի միավորումը համահայկական նպատակ դարձնելուն, երբ դեռ տարածքային առումով ոչինչ ճշգրտված չէր: Ուստի պատահական չէ, որ արևմտահայ քաղաքական ղեկավարներն անհրաժեշտ գտան նրան լուծում տալ: 1919թ. փետրվարի 6 – 13 –ը Երևանում գումարվեց արևմտահայերի երկրորդ համագումարը:

Դեռևս 1917թ. դեկտեմբերի 19 – ին միջկուսակցական մի շարք խորհրդակցություններից հետո կազմվում է համագումարի կազմակերպիչ կոմիտե, որն էլ նախաձեռնում է նրա գումարումը: Համագումարին մասնակցում էին 55 պատգամավորներ: Զերծ մնալով աշխատանքները մանրամասնորեն ներկայացնելուց, նշենք, որ քննարկումների արդյունքում փետրվարի 12 – ին ընդունվում է հետևյալ բանաձևը.

«Արեւմտահայ երկրորդ Համագումարը՝ քննելով հայ ժողովրդի ներկայ կացութիւնը

1. Սրտագին կկողջունէ եւ կը հայտարարէ Ազատ եւ Միացեալ Հայաստանի անկախութիւնը:
2. Լիակատար վստահութիւն կը յայտնէ Ազատ եւ Միացեալ Հայաստանի Պողոս Նուպար փաշայի անդրանիկ դահլիճին (Այդ օրերին լուրեր էին տարածվել, թէ Պողոս Նուպարը Փարիզում հայտարարել է Հայաստանի միությունն ու անկախությունը և կազմել միացյալ Հայաստանի կառավարություն, որը չէր համապատասխանում իրականությանը – Չ. Ս.):
3. Կը յայտարարէ իր վճռական որոշումն ու կամքը՝ ունենալ քաղաքական եւ պետական մէկ միութիւն համազգային հատուածներու եւ երկրամասերու միաւորութեամբ:
4. Կը պարտադրէ ընտուած «Գործադիր Մարմին»՝ նախարարական դահլիճին հետ անմիջական յարաբերութեան մէջ մտնել՝ իրականացնելու եւ գործնականացնելու քաղաքական եւ պետական այն բոլոր աշխատանքները, որոնք հարկաւոր են Ազատ եւ Միացեալ Հայաստանի պետական գոյութիւնը հիմնաւորելու համար:
5. Միաժամանակ կը պարտադրէ ընտուած Գործադիր Մարմին՝ գործնական քայլեր առնել Արարատեան Հանրապետութեան նախարարութեան եւ Խորհրդարանի հետ Միացեալ Ազատ Հայաստանի անկախու-

¹⁴⁹ Ալ. Խատիսեան, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Բէյրութ, 1968, էջ 150:

թինը յայտարարելու եւ իր մասնակցութիւնը բերելու գոյութիւն ունեցող պետական եւ օրենսդրական հաստատութիւններու մէջ համազգային միութիւնը իրականացնելու համար (Ս. Վրացեանի վկայութեամբ՝ այս կետին դէմ են արտահայտվում ռամկավար 5 պատգամավորներ և պատճառը ներկայացնելով՝ հետանում են: Իսկ պատճառն ընդունելի չի կարելի համարել, քանի որ նրանք գտնում էին, թէ Միացյալ և ազատ Հայաստանի մասին հայտարարությունը պետք է աներ Ազգային Պատվիրակությունը, որի տեսակետներն էին նրանք ընդունում¹⁵⁰: Սակայն միթէ կարևոր էր, թէ ով է անում հայտարարությունը, երբ կար մի ժողովուրդ շահերի ընդհանրությամբ - Հ. Ս.):

6. Կը պահանջէ Ազատ եւ Միացեալ Հայաստանի պետական գոյութեան երաշխաւորումը՝ դաշնակից պետութիւններու քաղաքական, տնտեսական եւ ռազմական օժանդակութեամբ եւ աջակցութեամբ:
7. Կը պահանջէ Հայկական Մեծ Եղեռնի հեղինակ եւ պատասխանատու ճիւղներուն՝ Վիլհելմի, Էնվերի, Թալէթի, Ճեմալի, Պեհաւետին – Շաքիրի եւ ընկեր նահանգապետներու, կառավարիչներու եւ բոլոր ղեկներու զինգինորական դատարանու պատժիլը:
8. Կը պահանջէ հայ ժողովրդի վնասներու ամբողջական հատուցումը ի հաշիվ օսմանեան կառավարութեան»¹⁵¹:

Համագումարն ընտրում է 9 հոգուց բաղկացած Գործադիր Մարմին, որի մէջ մտնում էին արևմտահայերի ներկայացուցիչներ Սմբատ Բորոյանը, Խ. Բոնապարտյանը, Ս. Սասունին, Բուլղարացի Գրիգորը, Վ. Տերոյանը. Ռ. Դրամբյանը, Վ. Քրմոյանը, Վ. Օլիկյանը և Արսեն Կիտուրը:

Ինչպէս հաստատում է նույն Ս. Վրացյանը, այս մարմինը, որի ստեղծմամբ լուծարվեցին արևմտահայ նախկին բոլոր մարմինները, փաստորեն կառավարության մէջ մի նոր կառավարություն էր, քանզի իր անդամները կատարում էին նախագահական գործառնություններ: Հարկավ, սա ճիշտ չէր և Գործադիր Մարմինը շուտով դա հասկանալով, դիմեց ՀՀ կառավարությանը՝ Հայաստանի երկու հատվածների միավորման հայտարարության անհրաժեշտության մասին, որն էլ տեղի ունեցավ 1919թ. մայիսի 28 – ին: Հայտարարության մէջ մասնավորապէս ասված էր՝ «Հայաստանի ամբողջութիւնը վերականգնելու եւ ժողովրդի լիակատար ազատութիւնն ու բարգաւաճումն ապահովելու համար, Հայաստանի կառավարութիւնը, համաձայն հայ ժողովրդի միահամուռ կամքի եւ ցանկութեան, յայտարարում է, որ այսօրուանից Հայաստանի բաժան - բաժան մասերը մշտնջենապէս միացած են իբրեւ անկախ պետական միութիւն»¹⁵²:

Այս հայտարարությունը, որն առաջ բերեց Պողոս - Նուբարի գլխավորած պատվիրակության ղեկավարությունը, ինչպէս նաև ռամկավարների և ՀԺԿ – ի, որը կառավարությունից հանեց իր նախարարներ Ս. Հարությունյանին, Ս. Էնֆիաջանին, Գ. Մելիք – Ղարազոյանին և Վ. Քրմոյանին՝ վերջ բերելով կոալիցիային, ժամանակի պահանջն էր և այն կարելի է համարել միանգամայնորեն ճիշտ: Միայն էին նաև հնչակյանները, որոնք դէմ գնալով միավորման ակտին՝ հրաժար-

¹⁵⁰ Տե՛ս *Սուրեն Սարգսյան*, Հայ սահմանադրական ռամկավար կուսակցություն (1908 – 1921թթ.), էջ 161:

¹⁵¹ Վ. Վրացեան, նշվ. աշխ., էջ 257 – 258:

¹⁵² Ալ. Խատիսեան, նշվ. աշխ., էջ 152, Ս. Վրացեան, նշվ. աշխ., էջ 262:

վեցին մասնակցել 1919թ հունիսին կայացած խորհրդարանական ընտրություններին¹⁵³:

ՀՀ – ում գտնվող արևմտահայ քաղաքական մտքի ներկայացուցիչները, որոնք արդեն իշխանության մաս էին դառնալով խորհրդարանի պատգամավորներ, իսկ մինչև այդ 12 հոգով մտան Խորհրդի կազմի մեջ, ավելի իրատեսական ճանապարհ էին ընտրել, քան Պողոս - Նուբարը և մյուսները: Եվ այդ ճշտությունը կայանում էր հետևյալում.

Առաջին. անկախ նրանից, թե ինչպիսի տարածքներ կներառեր միացյալ Հայաստանը, դրան գնալու շուրջ արևմտահայ և արևելահայ քաղաքական ուժերի միավորումն անհրաժեշտ էր:

Երկրորդ. անկախ այդ տարածքների անորոշությունից՝ հոգեբանական անջրպետը վերացնելը կենսական նշանակություն ուներ, քանզի ներքին տարածայնություններից շահելու էր միայն թշնամին:

Երրորդ. անհրաժեշտ էր պետական դիրքորոշում ապագա Հայաստանի տարածքների նկատմամբ և միասնական գործելակերպ, ինչը հնարավոր դարձավ Միացյալ Հայաստանի ակտով:

Սակայն, ցավով պետք է ավելացնել, որ Պողոս - Նուբարի գլխավորած Պատվիրակությունը մեծ տերությունների մոտ իրեն շարունակեց ներկայացնել որպես արևմտահայության միակ ներկայացուցիչ, նրանց մատուցելով անիրատեսական հողային պահանջներ, փորձեց Արևմտյան Հայաստանի խնդիրը տարանջատել ՀՀ – ից, որի բացասական հետևանքներն զգալի դարձան արդեն 1920թ. ի երկրորդ կեսից: Եվ սա այն դեպքում, երբ հայկական պետականության առկայության պայմաններում պետք է իր բոլոր գործառույթներից զրկվեր նրա Պատվիրակությունը, որի գոյությունն արդեն ոչնչով չէր հիմնավորվում: Նա իրավունք չուներ շարունակելու իր գործընթացը, որը ներծծված էր քաղաքական ռոմանտիզմով, քանզի Հայաստանի Հանրապետությունում գործում էին ավելի իրատես քաղաքական գործիչներ և նաև՝ արդեն գործում էր այդ հանրապետության պատվիրակությունը, որին պարտավոր էր զիջել իր դիրքերը: Սակայն, դժբախտաբար, Ավ. Ահարոնյանի գլխավորած պատվիրակությունն էր ավելի շատ գնում նրա հետևից, քան հակառակը, իսկ ՀՀ իշխանությունները տարբեր պատճառներով չէին գնում դրա լուծարմանը: Չէ որ այն ստեղծվել էր կաթողիկոսի հրամանով, երբ ՀՀ-ն չկար, իսկ այժմ այդ նույն կաթողիկոսին մնում էր պետությանը թողնել քաղաքական խնդիրները, որոնց լուծման նրա ջանքերը, թելադրված ցարական իշխանությունների կողմից, ի դերն եղան և կատարել հավատի և բարոյականության իր առաքելությունը: Սակայն, քանի որ այս ամենը տեղի չունեցավ, Պողոս - Նուբարը շարունակեց իր անիրատեսական գործունեությունը:

Асмик Симонян – Позиции западного армянского политического ума к существованию первой Республики Армения. – В статье анализируется положение западного армянского политического ума к первой Республики Армении в процессе его формирования и в годы существования. Здесь показано, что после оккупации Западной Армении, известные политические деятели, которые

¹⁵³ *Սուրեն Մարգարյան*, նշվ. աշխ., էջ 164:

переехали Восточную Армению, имели их вклад в реализации РА. Было доказано, что их планы были более реалистичными, чем планы Армянской Национальной Делегации во главе с Погос Нубар.

Hasmik Simonyan – *The position of western-armenian political mind towards the existence of the first Republic of Armenia.* – In the article, it is analyzed the position of western-armenian political mind towards the first Republic of Armenia during its formation and in the years of existence. There, it is shown that after the occupation of Western Armenia, famous political figures, who moved Eastern Armenia, had their input in the realization of RA. It is proved that their plans were more realistic than the plans of Armenian National Delegation led by Poghos Nubar.

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳՐԱՏՊՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ՄԱՐԻԱՍ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Հայ հնատիպ գիրքը շուրջ 300 տարվա պատմություն ունի (1512-1800 թթ.): Հայ առաջին տպագրիչները և՛ բնագիր պատրաստող էին, և՛ խմբագիր, և՛ սրբագրիչ, և՛ տպագրիչ ու վարպետ: Գրքի տպագրության նախնական շրջանում այս գործին կոչված մասնագետները զբաղվում էին միայն տեքստի ճշտմամբ՝ սխալների վերացմամբ: Հակոբ Մեղապարտից հետո գրատպության գործը շարունակեցին Աբգար դպիր Թոքատեցին (Թոխաթեցին) և նրա որդի Սուլթանշահը, Հովհաննես Տերզնցին, Վանանդեցի եղբայրները և ուրիշներ: Սկսած 1660-ական թվականներից՝ այս գործիչները տպագրական կենտրոններ ստեղծեցին Նոր Ջուղայում, Հռոմում, Լվովում, Կ.Պոլսում և այլուր:

1660 թ. Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի հրամանով Մատթեոս Ծարեցին Ամստերդամում հիմնում է Ս. Էջմիածնի և Ս.Սարգսի անվան տպարանը, որի աշխատանքները 1664 թվականից շարունակում է Ոսկան Երևանցին: Կարևոր երևույթ էր մեզանում 1664 թ. Ոսկանյան տպարանի ստեղծումը և նրա ծավալած բեղուն գործունեությունը Հովանդիայում, Իտալիայում, Կ.Պոլսում: Ո.Երևանցին 1669-1672 թթ. միայն Լիվոռնոյում և Մարսելում հրատարակել է 40 անուն գիրք¹⁵⁴:

Հայ գրքի տպագրության նոր փուլ էր Մխիթարյան միաբանության հայրերի գործունեությունը՝ Մխիթար Սեբաստացու գլխավորությամբ: 1775 թ. տպարան են հիմնում Տրիեստի մխիթարյանները և մինչև 1811 թ. Վիեննա տեղափոխվելը լույս են ընծայում 70 անուն հայատառ գիրք: Վենետիկի մխիթարյանների՝ Ս. Ղազար կղզում հիմնած տպարանն սկսել է գործել 1789 թվականից և փակվել է 1990-ականների սկզբներին: Վիեննայի 7-րդ թաղամասի Մխիթարյանների նրբանցքում գտնվող տպարանը հիմնադրվել է 1810 թ. ու դադարել է գործել 1998 թ.¹⁵⁵: Միջազգային համբավ ունեցող այս տպարանը 189 տարվա ընթացքում հրատարակել է բազմաթիվ գրքեր ընդհանուր առմամբ 41 լեզվով: Վիեննայի մխիթարյան միաբանության գրադարանում հաշվառված է ավելի քան 170.000 հրատարակություն՝ հիմնականում հայերենով: Դրանցից 2600-ը հայկական ձեռագրեր են, որոնցից ամենահիները թվագրվում են 9-րդ դարով: Այս գրադարանում է գտնվում նաև հայ պարբերական մամուլի ամենամեծ հավաքածուն: 1915 թ. հետո Վիեննայի մխիթարյանների հրատարակչական գործունեությունն ստանում է նոր նշանակություն հայ մշակութային ժառանգության փոխանցման գործում¹⁵⁶:

Բուն Հայաստանում տպագրական գործը սկսվել է 1771 թ., երբ Միմեռն Երևանցին կառուցում է Գ. Լուսավորչի անվան Էջմիածնի տպարանը¹⁵⁷: Արդեն 1772 թ. տպարան է հիմնվում Հնդկաստանի Մադրաս քաղաքում, որտեղ Հարություն քահանա Շմավոնյանի խմբագրությամբ 1794-1796 թթ. հրատարակվում է

¹⁵⁴ *Ջավեն Ավետիսյան*, «Տեքստաբանություն», Երևան, 2000, էջ 10

¹⁵⁵ «Հայ ժողովրդի պատմություն», հ. 4, Երևան, 1972, էջ 620

¹⁵⁶ *Բարբարա Դենշեր*, «Կամուրջ Արևելքի և Արևմուտքի մշակույթների միջև», Երևան, 2011, էջ 31

¹⁵⁷ «Հայ ժողովրդի պատմություն», հ. 4, Երևան, 1972, էջ 623

հայերեն աստաջին պարբերականը՝ «Ազդարարը»¹⁵⁸: Մինչև 1800թ. աշխարհի տարբեր ծայրերում գործող հայկական տպարաններում տպագրվել է շուրջ 1000 անուն հայերեն գիրք¹⁵⁹: Այս ընթացքում հայ հրատարակիչների գործը սահմանափակվում էր բնագրերի ճիշտ վերարտադրությամբ. գրքերի վրա նշվում էին միայն տպագրության թիվը, տեղը, առանձին դեպքերում էլ՝ տպագրիչի անունը և ազգանունը: Բացառություն է կազմում միայն Աստվածաշնչի հայերեն հրատարակությունը (1666-1668 թթ.) Ամստերդամում: Բնագիրը պատրաստելու համար Կարապետ Անդրիանացին և Օհան Երևանցին քննական լուրջ աշխատանք էին կատարել՝ Աստվածաշնչի հայերեն տեքստը համեմատելով լատիներեն հրատարակության հետ:

Հայ գրքի տպագրության ռուսական դպրոցը (Պետերբուրգ, Նոր Նախիջևան, Աստրախան) 1781-1800 թթ. տպագրել է շուրջ 50 անուն հայերեն գիրք¹⁶⁰:

Վաղ շրջանի հայ տպագրիչները հիմնականում հրատարակում էին կրոնական բնույթի գրականություն, նաև հայ պատմիչների և տաղերգուների գրքերը: Մխիթարյանները այս ամենի հետ միասին տպագրում էին նաև թարգմանական գրքեր (Եզովպոս, Հումերոս, Վիրգիլյոս, Միլտոն, Դանիել Դեֆո, նոր շրջանի հայ գրողներից՝ Սունդուկյան, Բաֆֆի, Ալիշան): Արդեն 20-րդ դարի կեսերից ՀԽՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը ձեռնամուխ է եղել նոր և նորագույն շրջանի հայ դասական գրողների գրական ժառանգության գիտամասսայական և ակադեմիական հրատարակությանը:

Անդրադառնանք արևմտահայ գրահրատարակչական գործընթացի որոշ մանրամասներին:

17-րդ դարի վերջերից հայկական տպագրության զարգացումը Եվրոպայից տեղաշարժվում է Կ. Պոլիս, որտեղ կենտրոնացած էր արևմտահայ մտավորականության սերուցքը: Այն 18-րդ դարում դառնում է հայ տպագրության հիմնական կենտրոններից մեկը: Այստեղ նշված ժամանակաշրջանում լույս է տեսել 300 անուն հայերեն գիրք: Կ. Պոլիսն այս առումով զիջում էր Վենետիկին, որը 2-րդ տեղում էր իր հրատարակած 250 անուն հայերեն գրքերով¹⁶¹:

Օսմանյան Թուրքիայում տպագրական գործը գտնվում էր պետական վերահսկողության ներքո: 1841 թ. հուլիսի 4-ի իրատեով սահմանվում էր այն սկզբունքը, ըստ որի՝ գիրք և թերթ կարելի էր հրատարակել միայն կառավարության թույլտվությամբ: Խոսքը հատկապես վերաբերում էր օտարալեզու հրատարակություններին: 1857 թ. փետրվարին ընդունված «Տպարանների մասին օրենքը» թույլ էր տալիս գրաքննություն գրքերի, բայց ոչ պարբերականների նկատմամբ: Մինչև 1870-ականները մամուլի գործունեությունը սահմանափակվում էր գրավոր հրահանգներով: Արդեն 1864 թ. դեկտեմբերին ընդունված «Մամուլի մասին օրենքը» պարբերականների համար սահմանում էր որոշակի տպագրական կանոններ¹⁶²: Կ. Պոլսում պարբերականների հրատարակության արտոնագիրը տրվում էր սուլթանական ֆերմանով, իսկ գավառներում այն տա-

¹⁵⁸ «Հայ պարբերական մամուլի պատմություն 18-19-րդ դարեր», Գահիրե, 2006, էջ 21

¹⁵⁹ «Հայ ժողովրդի պատմություն», հ. 4, Երևան, 1972, էջ 624

¹⁶⁰ Նույն տեղում, էջ 621

¹⁶¹ Նույն տեղում, էջ 618

¹⁶² **Այլերտ Խառատյան**, «Արևմտահայ մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում», Երևան, 1989, էջ 19-21

լիս էին վալիները: Ընդառաջ գնալով Ժամանակի պահանջներին՝ սուլթան Մահմուդ 2-րդը Թանզիմաթին կամ բարենորոգումներին զուգընթաց 1831թ. Կ. Պոլսում թույլ է տալիս հրատարակել թուրքերեն առաջին թերթը՝ «Թազվիմ-ի վազալիս», որից օգտվելով հայերը ստեղծում են այդ թերթի թարգմանված տարբերակը՝ «Լրո գիր» պարբերականը (1832-1850 թթ.)¹⁶³: Հրատարակիչ-խմբագիրը Գալուստ Արապյանն էր: 1840-1843 թթ. Կ. Պոլսում հրատարակվում է Խաչատուր Օսկանյանի «Ազդարար Բյուզանդյան» թերթը: Այս երկու թերթերը տպագրվում էին Գ.Արապյանի՝ Կ. Պոլսում հիմնած տպարանում: Քանի որ Կ. Պոլսի մամուլը արևմտահայ Գավառ էր հասնում մի քանի ամիս ուշացումով, Մկրտիչ վարդապետ Խրիմյանը 1855-1856 թթ. Կ. Պոլսում հրատարակում է «Արծուի Վասպուրականի» ամսագիրը, որը հետագայում՝ 1858-1864 թթ. տպագրում է արդեն Արևմտյան Հայաստանի ամենամեծ հայաբնակ նահանգներից Վասպուրականում՝ Վարազա վանքում¹⁶⁴: «Արծուի Վասպուրականի» ամսագիրը արևմտահայ առաջին պարբերականն էր: Ընդհանրապես արևմտահայ գրքերի և պարբերականների մեծամասնությունը հրատարակվել է ոչ թե բուն Արևմտյան Հայաստանում, այլ Կ. Պոլսում և Ջուրտոնիայում: Ի դեպ, Կ. Պոլսում առաջին հայերեն գիրքը տպագրվել է 1567թվականին, երբ Աբգար Թոքատեցին այստեղ հիմնել է հայկական 1-ին տպարանը (1567-1569 թթ.)¹⁶⁵, իսկ [Երեմիա Քյումուրճյանը](#) 1677 թ. Կ. Պոլսում հիմնել է հայկական 2-րդ տպարանը (1677-1678 թթ.)¹⁶⁶:

1863 թ. Մկրտիչ Խրիմյանը տպարան է հիմնել Տարոնի Սուրբ Կարապետ վանքում: Այստեղ Գարեգին Սրվանձտյանցը հրատարակել է «Արծուիկ Տարոն» երկշաբաթաթերթը (1863-1865 թթ.): Տպարանի աշխատանքները շուտով դադարեցվում են, և այն տեղափոխվում է Վան, որտեղ գործում է մինչև 1884 թ.¹⁶⁷:

Վանում 20-րդ դարի սկզբներին հիմնադրվել են մի քանի տպարաններ (օրինակ՝ Հովնանյանի, Ժամկոչյանի, Բարսեղյանի): Դրանք գործել են մինչև 1915 թ.: Հիշյալ տպարաններում է հրատարակվել տեղի պարբերական մամուլը:

Սեբաստիայում (Սվազում) հայտնի էին 1875 թ. Անդրանիկ Վարդանյանի, 1905 թ. Հայկ Վարդանյանի, 1909 թ. Կ. Ա. Պարսամյանի կողմից հիմնադրված տպարանները: Վերջին տպարանը 1913 թ. իր ձեռք բերած նորագույն տպագրական մեքենաներով առաջնակարգ տեղ էր զբաղում Օսմանյան Թուրքիայում: Այստեղ է հրատարակվել «Հող դար» թերթը (1910-1914 թթ.)¹⁶⁸:

Կարինում հայկական տպարան է հիմնադրվել 1909 թ.¹⁶⁹ հունիսի 4-ին, երբ այստեղ սկսել է «Հառաջ» թերթի (1909-1914 թթ.) տպարանը¹⁷⁰:

Մինչև 1915 թ. հայկական տպարաններ էին գործում Արևմտյան Հայաստանի ու Հայկական Կիլիկիայի մի շարք այլ վայրերում ևս՝ Արմաշում, Ադանայում, Ադաբազարում, Նիկոմեդիայում, Սամսունում, Երզնկայում, Եվրոկիայում, Խար-

¹⁶³ «Հայ պարբերական մամուլի պատմություն», Գահիրե, 2006, էջ 110 (տե՛ս Վիկտորյա Ղուկասյան, «Լրո գիր»)

¹⁶⁴ Նույն տեղում, էջ 289 (տե՛ս Էմմա Կոստանդյան, «Արծուի Վասպուրականի»)

¹⁶⁵ **Թերեզա Գալստյան**, «Հայ գրատպությունը 500 տարեկան է», («Ազգ» օրաթերթ, Երևան, 2012, թիվ 25)

¹⁶⁶ www.wikipedia.am (Հայ տպագրիչների ցանկ)

¹⁶⁷ **Ռաֆայել Իշխանյան**, «Հայ գիրքը 1512-1920», Երևան, 1981, էջ 120

¹⁶⁸ **Թեոդիկ**, «Տիպ ու տառ», Կ. Պոլիս, 1913, էջ 143

¹⁶⁹ **Ռաֆայել Իշխանյան**, նշվ. աշխ., էջ 121

¹⁷⁰ **Թեոդիկ**, նշվ. աշխ., էջ 145

բերդում, Ամասիայում, Մարաշում, Մարզվանում, Այնթապում, Տրապիզոնում և այլուր¹⁷¹: Հիշատակենք, որ Մարզվանում և Տրապիզոնում գործել են երեք տպարան (առաջինում՝ «Ներսո և Արապյանենց», Լ.Ս.Միածինյանի և «Գոտտենբերգ»¹⁷², երկրորդում՝ «Մեռառի եղբայրների», «Ոսկինար» և «Մեշվերեթ» տպարանները), իսկ Այնթապում եղել են երկու՝ «Կեդր. Թուրքիոյ Գօլէճի» և «Ավետիս Խանգետյան և ընկ.» տպարանները¹⁷³: Կրոնաբարոյական բնույթի հրատարակություններին զուգահեռ՝ արևմտահայ տպագրիչները գրաբարով ու աշխարհաբարով տպագրում էին գիտական, գեղարվեստական, ուսումնական գրքեր, այդ թվում՝ թարգմանական գրականություն:

Արևմտահայ գրահրատարակչական գործը նոր թափ ու մեծ ծավալ է ստացել հատկապես 1909-1913 թթ., երբ մասնավորապես Կ.Պոլսում հիմնվել են նոր տպարաններ, օրինակ՝ Ատոմ Շահենի, Օննիկ Արզումանի, Հայկ Թիրյաքյանի և այլոց կողմից բացվածները¹⁷⁴: Լույս են տեսել բազմաթիվ հայերեն գրքեր ու պարբերականներ: 1908-1915 թթ. Արևմտյան Հայաստանում հրատարակվել է ավելի քան 200 անուն հայերեն պարբերական ու 15 անուն տարեգիրք¹⁷⁵: Թեոդիկը վերլուծելով 1908-1912 թթ. սնկի պես աճած արևմտահայ պարբերականների գործելակերպը՝ դրանց մեջ ամենից փայլունը, կարկառունը և անխախտը համարում էր 1908 թ. նոյեմբերին բացված «Օննիկ Արզուման» տպարանը: Այդ տպարանի նշանաբանն էր՝ «մաքուր, արագ և առատ գործ»¹⁷⁶: «Ճաշակաւոր ու մաքուր գործ արտադրելու տեսակետով» Թեոդիկը սակավաթիվ լավ կազմակերպված տպարանների շարքին էր դասում 1909 թ. փետրվարի մեկին Մերուժան Պարսամյանի և Նուբար Յազճյանի կողմից բացված «Շանթ» տպարանը¹⁷⁷:

Արևմտահայ գրահրատարակչության պատմության մեջ յուրահատուկ էր 1913 թվականը, երբ աշխարհասփյուռ հայությունը նշում էր հայ գրերի 1500-ամյա և հայ տպագրության 400-ամյա հոբելյանները (հայտնի պատճառներով՝ իրական հոբելյանական թվականից (1912 թ.) մեկ տարի հետո): Արևմտահայ իրականության մեջ դրանք մեկ այլ ցնծությամբ և ոգևորությամբ էին տոնվում: Դրա վկայությունն են 1913թ. հոկտեմբերին արևմտահայ մամուլի էջերում ամփոփված հրապարակումները: Անկախ կուսակցական պատկանելիությունից՝ արևմտահայ պարբերականները բացառիկ դեր էին հատկացնում այս երկու կարևոր իրադարձություններին հայ կյանքում: Արևմտահայ մամուլի ներկայացուցիչներից շատերը այդ հոբելյանների առիթով հրապարակել են դրանց նվիրված բացառիկ համարներ: Բերենք օրինակ: «Հայ գրի տոնը» վերնագրով խմբագրականում «Շանթ» հանդեսի աշխատակիցները մեծ պատիվ էին համարում, որ իրենց հրապարակումներով մասնակցում էին այդ կրկնակ տոներին. «Բախտաւոր ենք որ կ'ապրինք այն տեսակ շրջանի մը մէջ՝ երբ բազմաթիւ ճակատագրական մտահոգութիւններու եւ աղէտներու մէջէն առիթը կ'ընծայուի մեզի ազատօրէն փառաւո-

¹⁷¹ «Հայ ժողովրդի պատմություն», հ. 5, Երևան, 1974, էջ 564

¹⁷² **Թեոդիկ**, նշվ. աշխ., էջ 145

¹⁷³ Նույն տեղում, էջ 146

¹⁷⁴ «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, թիվ 6, էջ 65-72, 80-82 (Հ. Սիրունի, «Ազատամարտի սերունդը»)

¹⁷⁵ «Հայ ժողովրդի պատմություն», հ. 6, Երևան, 1981, էջ 880

¹⁷⁶ **Թեոդիկ**, նշվ. աշխ., էջ 124

¹⁷⁷ Նույն տեղում, էջ 130

րելու Հայ Գիրքը եւ Հայ Տպագրութիւնը»¹⁷⁸: «Հայ հորիզոնէն» բաժնում անդրադառնալով այդ հորէլյաններին՝ նշում էին, որ հայրենիքում և աշխարհի տարբեր անկյուններում հանգրվանած հայ ժողովրդի համար չի եղել մի տոն, որն այդքան միահամուռ խանդավառությամբ և հանդիսավոր պայմաններում տոնված լինէր: Թվում էր, թէ էլեկտրական ընդհանուր «հոսանք մը բոլոր հայ սրտերը թրթռացուց ճովտ. 13-ին, և երկրագունդին որ և է անկիւնը, ուր 4 հայեր գտնուեցան, անոնք առանց դաւանանքի, սեռի, տարիքի ու դասակարգի խտրութեան, իրարու քով եկան»՝ հայկական քաղաքակրթության ռահվիրաների հիշատակը երախտագիտորէն հարգելու նպատակով¹⁷⁹:

Իզմիրի «Աշխատանք» պարբերականը «Համագայի մեծ տոն» վերնագրով խմբագրականում գրում էր հետևյալը. «Գրերու գիւտն ու տպագրութեան մուտքը հայերուն մէջ այն երկու ոսկեձոյլ դարագլուխներն են, որոնք Ազգը գօտեպնդում են անջնջելի գորութեան մը գրահներով՝ իր աչքերուն մէջ վառելով ապրելու անշիջանելի աստղը»¹⁸⁰:

Իր հերթին Վանի «Աշխատանք» շաբաթաթերթը «Մեր գոյության իրավունքը» խմբագրականում հայ գիրն ու տպագրությունը համարում էր հայ կյանքի խորհուրդը և այն անսասան պատվանդանը, որի վրա հենվելով՝ հայ ժողովուրդը գոյատևել էր դարերի ընթացքում: Դրանք հայ ժողովրդի առջև նորանոր ուղիներ բացող լուսավոր ջահեր էին, որոնք արտացոլում էին ազգային կյանքի լավագույն իդեալները: «Հայ գրի ու տպագրութեան շնորհիվ մենք ձեռք ենք բերել մեր ազգային գոյութեան իրավունքը», գրում էր պարբերականը¹⁸¹: «Հայ տպագրությունը՝ հիմնաքար հայ նոր պատմության» վերնագրով հողվածի հեղինակ Վանիկը համոզված էր, որ հայ ժողովրդի՝ իբրև ազգություն գոյատևման ամենամեծ գործոնը տպագրությունն էր. «Առանց տպագրութեան անկարելի կ'ըլլար ազգային վերածնունդը: Շարունակենք պահպանել և զարգացնել այդ թանկագին աւանդը»¹⁸²: Հնայակ Մանուկյանը «Ազգայինն ու միջազգայինը» վերնագրով հողվածում պատահական չէր համարում հայ գրերի գյուտի 1500-ամյակի համընկնումը հայ տպագրության 400-ամյակի հորէլյանին: Նրա կարծիքով՝ հայ տպագրությունը նպաստել է ազգային և համաշխարհային մտքի սերտ զուգակցմանը¹⁸³:

«Ազատամարտ»-«Բյութանիա» օրաթերթը գտնում էր, որ լրագրողներն ու հրապարակախոսները արևմտահայ մտավորականության ողնաշարն էին¹⁸⁴:

«Ուսանող» ամսաթերթը գրում էր, որ հայ գիրն ու դպրությունն հայ ժողովրդի փրկության միակ խարիսխն ու լույսն էին¹⁸⁵:

«Երկունք» ամսաթերթի խմբագրակազմը համոզված էր, որ այդ երկու իրարարձությունները հայ մտքի և ազգային մշակույթի վերագարթոնքի տոներն էին: «Երկունքի» կարծիքով՝ հայ գրերի գյուտն ու տպագրությունը հայի մտածողությանն ու զգացումին տվել էին ձև և կերպարանք, իսկ հայի հոգուն՝ մարմին,

¹⁷⁸ «Շանթ», Կ. Պոլիս, 1913, թիվ 48, էջ 1

¹⁷⁹ Նույն տեղում, 1913, թիվ 49, էջ 12

¹⁸⁰ «Աշխատանք», Իզմիր, 1913, թիվ 32, էջ 2

¹⁸¹ «Աշխատանք», Վան, 1913, թիվ 48, էջ 1

¹⁸² Նույն տեղում, էջ 3

¹⁸³ Նույն տեղում

¹⁸⁴ «Բյութանիա» («Ազատամարտ»), 1913, թիվ 1103

¹⁸⁵ «Ուսանող», 1913, Կ. Պոլիս, թիվ 7, էջ 7-15

դրանք դարձնելով սերունդների սեփականությունը: Հայ գրերն ու տպագրությունը հնարավորություն էին ընձեռել հաղորդակցվելու համաշխարհային քաղաքակրթության նվաճումներին ու ձեռքբերումներին՝ այդպիսով նպաստելով հայ ժողովրդի զարգացմանն ու առաջընթացին¹⁸⁶:

Հայոց ցեղասպանության տարիներին Արևմտյան Հայաստանում և Օսմանյան Թուրքիայի հայաշատ քաղաքներում գործող տպարանները դադարեցին գոյություն ունենալ: Այդ տարիներին ոչնչացվեցին հարյուրավոր տպարաններ, գրադարաններ և մատենադարաններ, այրվեցին տասնյակ հազարավոր հայերեն գրքեր¹⁸⁷:

Հայ ժողովուրդը վերապրեց և կրկին հոգևոր-մշակութային վերելք ունեցավ՝ Հայաստանում և Մփյուռքում:

1918 թ. Մուղոսի զինադադարից հետո արևմտահայության փրկված բեկորները հիմնականում կենտրոնացան Կ. Պոլսում և իրենց ընձեռված հնարավորությունների շրջանակներում վերակազմակերպեցին իրենց ազգային-մշակութային կյանքը: Նույն թվականից սկսած՝ այստեղ հրատարակվել են մի շարք պարբերականներ («Ճակատամարտ» օրաթերթը (1918-1924 թթ.), «Ճակատամարտ» գյուղատնտեսական ամսօրյա (1919-1920 թթ.) և «Ճակատամարտ» մանկավարժական ամսօրյա (1918-1920 թթ.) հավելվածները, «Շանթ» գրական-քաղաքական (1918-1919 թթ.) և «Հայ սկաուտ» մարզական (1919-1922 թթ.) հանդեսները, «Աստղաբերդ» (1951-1953 թթ.), «Ճառագայթ» (1947-1952 թթ.), «Կուլիս» (1946-1996 թթ.) պարբերականները և այլն): Այսօր Մտամբուլի հայ համայնքի կողմից առավել շատ ընթերցող ունեցող թերթերն են «Ժամանակը» (1908 թ. առ այսօր), «Նոր Մարմարան» (1940թ. առ այսօր, ի դեպ սկզբնապես այն կոչվում էր «Մարմարա») և «Ակուսը» (1996 թ. մինչ օրս):

Մտամբուլահայ ժամանակակից գրահրատարակչական կյանքում կարևոր դեր է խաղում «Արաս» հրատարակչությունը: Այն զբաղվում է ինչպես հայերեն գրքերի հրատարակմամբ, այնպես էլ հայ գրականության թուրքերեն թարգմանությամբ և տպագրությամբ¹⁸⁸:

Ներկայումս առաջնայինը ստամբուլահայ համայնքի շարունակականությանը և ապագային սպառնացող խնդիրներն են: Թվարկենք դրանցից մի քանիսը՝

- փակվել է հայկական դպրոցների մի մասը,
- աճում է խառնամուսնությունների թիվը,
- հայկական ընտանիքներից շատերում միմյանց հետ չեն շփվում մայրենիով, պակասել է հետաքրքրությունը ազգային, եկեղեցական, մշակութային կյանքի նկատմամբ,
- ստամբուլահայ համայնքի այսօրվա գրահրատարակչական գործընթացը հայտնի պատճառներով համեմատության եզրեր չունի մինչև 1915 թ. արևմտահայ գրահրատարակչական գործընթացի հետ:

Ամփոփելով՝ փաստենք, որ ահռելի չափով չուսումնասիրված նյութ կա արևմտահայ գրահրատարակչության պատմության բնագավառում: Անհրաժեշտ են լուրջ ուսումնասիրություններ, որոնք կօգնեն մեզ ամբողջական պատկերա-

¹⁸⁶ «Երկունք», Կ. Պոլիս, 1913, թիվ 4-5, էջ 74

¹⁸⁷ www.genocide-museum.am

¹⁸⁸ **Ռուբեն Մելքոնյան**, «Ակնարկ Մտամբուլի հայ համայնքի պատմության (1920-ականներից մինչև մեր օրերը)», Երևան, 2010, էջ 94

ցում կազմել արևմտահայ կյանքի այդ կարևոր ոլորտի մասին, որը հային հայ էր պահում, որը կարող է նույն առաքելությունը կատարել այսօր նույնպես՝ չնայած վերը թվարկված հայակործան հանգամանքների:

Мариам Овсепян – Из истории западно-армянской книгопечатания. – Большинство западноармянских книг и периодики печаталось не в самой Западной Армении, а в Константинополе и Змюрнии. До 1915 года во многих городах Западной Армении и Армянской Киликии существовали армянские типографии.

В истории западноармянского книгопечатания свое важное место занимает 1913 год, когда армяне всего мира праздновали 1500-летие армянских писмен и 400-летие книгопечатания. В западноармянской среде эти даты праздновались с особым рвением и энтузиазмом. Об этом свидетельствуют публикации напечатанные в периодике за октябрь 1913-го года.

Многие западноармянские издания, не взирая на партийную принадлежность, опубликовали по этому поводу эксклюзивные номера.

Mariam Hovsepyan – On the history of Western Armenian book printing. – Most Western Armenian books and periodicals were being print in Constantinople and Smyrna, not in Western Armenia.

Before 1915 there were Armenian publishing houses in a number of cities of Western Armenia and Armenian Cilicia – Karin, Armash, Adabazar, Nikomedia, Samsun, Sebastia, Erzinka, Evdokia, Kharberd, Amasia, Marash, Marzvan, Ayntap, Trapizon, etc.

The year 1913 was of special importance in the history of Armenian publishing. World-spread Armenians were then celebrating the 1,500th anniversary of creation of the Armenian alphabet and the 400th anniversary of Armenian printing. Western Armenians were celebrating the dates with particular jubilation and inspiration. This was evidenced by the publications in Western Armenian papers of 1913.

Irrespective of party affiliation, Western Armenian papers were paying exceptional attention to these two important events in the Armenian history. Many representatives of the Armenian press published special issues on the occasion of the two jubilees.

ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐԻ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ

Հակված լինելով աշխարհն ընկալել քննադատաբար՝ մտահայեցողական և իմաստասիրական լայն տեսանկյունով, Քոչարը չէր կարող սոցիալական պատվերների հլու հնազանդ, մունջ կատարածու կամ վերններում հաստատված՝ «թույլատրված ճշմարտություններ» ազդարարող մունետիկ դառնալ: Մշակութային պաշտոնական քաղաքականությունից պատասպարվելու և այսպես կոչված «հասարակական մեծ հնչում» ունեցող թեմաներից խուսափելու հնարավորությունը Քոչարը փորձում է գտնել արվեստի առայժմ իրեն անձանթ տեսակներից մեկի՝ բեմանկարչության մեջ: Այդ նպատակով նա նախընտրում է ձևավորել սոցիալական հրատապ խնդիրների հետ ուղղակիորեն չառնչակցվող դասական գրականության ու երաժշտության այնպիսի երկեր և ստեղծագործություններ, ինչպիսիք են Ալեքսանդր Պուշկինի «Քարե հյուրը» փոքր ողբերգությունը (Գ.Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոն, 1937), Կարլո Գոլդոնիի «Կոջինյան տուրուղաբոցը» («Բամբասանք և սեր», «Չկնորսներ») կատակերգությունը (նույն թատրոնում, 1941) և Իմրե Կալմանի «Կրկեսի իշխանուհին» օպերետը (Հ.Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն, 1947): Ինչ վերաբերում է հաստոցային արվեստին, ապա Քոչարը կտրուկ նեղացնում է իր աշխատանքների ժանրաթեմատիկ խաղացանկը, գրեթե բացառապես կենտրոնանալով դիմանկարի և դիմաքանդակի վրա:

Ճիշտ է, սկզբնապես նա դեռ հույս ուներ, որ գոնե մասամբ, բայց կպաշտպանի իր գեղարվեստական սկզբունքները, ինչի մասին են վկայում թեկուզ Քոչարի «Ինքնանկարը» (1936) և նույն թվականին նրա կերտած Մաքսիմ Գորկու գիպսե գլուխը: «Ինքնանկարում», որտեղ կտավի կամ ստվարաթղթի փոխարեն հիմք է ծառայել փայտե տախտակը¹⁸⁹, վերջինիս ամբողջ մակերեսը գրավում է նկարչի՝ դեմքով դեպի մեզ շրջված խոշոր գլուխը, որն ակամայից մեր ուշադրությունը բնեռում է այդ փոքրաչափ նկարի վրա: Նույն նպատակին է ծառայում նաև բնորդի լայն բացված, ուղիղ մեզ նայող աչքերի սաստիկ, սառը հայացքը: Դեռ երիտասարդ, բայց արդեն հասուն նկարչի խոհուն, առնագեղ դեմքն ակոսված է խոր կնճիռներով ու խորշումներով, ուռչած և այտուցված են աչքատակի պարկերը... Սա թեև հոգնած ու կյանքի դժվար փորձություններով անցած, սակայն չընկճված, ուժաբեկ չեղած և ճակատագրի գոհը չդարձած տղամարդու դեմք է: Վճռապես սեղմված են նրա շուրթերը, ձիգ է նայվածքը, իսկ գլխի կտրուկ շրջադարձը հոգեկան ուժ և գործելու պատրաստականություն է արտահայտում:

¹⁸⁹ Իր հաստոցային նկարչության մեջ Քոչարը սովորաբար աշխատում էր կտավի կամ ստվարաթղթի վրա: Փայտե տախտակի վրա նրա կատարած աշխատանքները սակավաթիվ են: Վերոհիշյալ «Ինքնանկարից» բացի, մեզ հայտնի են միայն մի քանի նման ստեղծագործություններ՝ «Ուլունքներով աղջիկը» (1925), «Նատյուրմորտ» (1931), «Աննա Մովսիսյան» (1936), «Պատշգամբում» (1959) և «Պատուհանի մոտ» (1968):

Լակոնիկ ու խիստ գծանկարը, ողջ հորինվածքի հավաք և ամփոփ, կուռ կազմությունը մոնումենտալ շունչ են հաղորդում չափսերով ոչ մեծ այս պատկերին: Դրան է նպաստում նաև բաց կապույտ, մանուշակագույն, վարդագույն ու մոխրագույն երանգներից բաղկացած պաղ կոլորիտը: Հրաժարվելով լուսաստվերի ծառայությունից, բավարարվելով միայն գույների հարադրությամբ ու ելևէջումով՝ նկարիչն իր ստեղծագործությունն օժտում է պլաստիկական շեշտված բնութագրով: Ընդ որում, գույնը ոչ այնքան նմանակող և կերպավորող, որքան ներշնչական էքսպրեսիվ դեր է կատարում:

Հանդիսականի վրա գաղափարական ու կերպարային խոր ազդեցություն է թողնում նաև Մաքսիմ Գորկու գլխաքանդակը, որը Քոչարն ստեղծել է գրողի մահվան թարմ տպավորությամբ: Հիմնականում մնալով ռեալիստական արվեստի սահմաններում, Քոչարը սրում և նույնիսկ մի փոքր չափագանցում է իրական ձևերը: Թեև քանդակը հաստատուն ամուր կառուցվածք ունի, այն թափանցված է ներքին անհանգիստ, շարժուն ռիթմով, որի ճնշման տակ գիպսե անտարբեր, իներտ զանգվածը, կարծես, ողջանում ու տրոփում է: Օգտագործելով գեղարվեստական չափագանցության և ռճավորման սկզբունքները, Քոչարն ստեղծում է մարտնչող մարգարեի, հեղափոխական գաղափարների մոլեռանդ քարոզչի, “սոցիալիստական ռեալիզմի” կնքահոր, բայց միաժամանակ նաև ձախորդությունների ու դառնությունների թասը ճաշակած, հոգեմաշ ապրումների ու կասկածների կնիքը դեմքին տառապյալ մարդու, ծեր իմաստունի բարդ, հակասական կերպար: Վարքագրական դիմապատկեր, շոշափելի թանձրանյութ ձևեր ու արտաքին ստացած հոգևոր կյանքի հանրագումար՝ այսպես կարելի է որակել քանդակի կերպարային և հուզական բովանդակությունը: Քոչարն ինքն էլ, հավանաբար, այդ աշխատանքը համարում էր իր հաջողված գործերից մեկը: Իզուր չէ, որ 1970-ին նա կրկին դարձավ Գորկու քանդակին, երկապատկեց դրա չափսերն ու այն փոխադրեց որձաքարի՝ սևակուճի մեջ:

Ավա դ, շատ շուտով վարպետը համոզվեց, որ արվեստում սեփական դիրքերն ու սկզբունքները պաշտպանելու նույնիսկ վեհերոտ, թեթև փորձերը սվիններով են ընդունվում և հղի են անցանկալի լուրջ հետևանքներով: Հայրենական Մեծ պատերազմի սկսվելուն պես՝ 1941-ի հունիսին, Քոչարը մեղադրվեց “հակասովետական ազիտացիայի և պրոպագանդայի” մեջ, ձերբակալվեց ու բանտ նետվեց: Միայն Ներսիսյան դպրոցի իր ընկերների՝ պետական և կուսակցական գործիչ, ՀամԿ(բ)Կ Քաղբյուրոյի անդամ, ՍՍՌՄ արտաքին արևտրի նախարար Անաստաս Միկոյանի և ճարտարապետ՝ Սովետական ճարտարապետների միության պատասխանատու քարտուղար Կարո Հալաբյանի բարեխոսությամբ 1943-ի օգոստոսին նա ազատվեց կալանքից: Սակայն Քոչարի առողջությունը բավականին քայքայված էր (վատացել էր նրա լսողությունը), իսկ է՛լ ավելի շատ նա բարոյապես էր ճնշված: Եթե “Ինքնանկարի” և Գորկու գլխաքանդակից հետո արվեստագետը ևս մի քանի հետաքրքիր նկարներ ու արձաններ ստեղծեց, որոնցից են, օրինակ, Աննա Մովսիսյանի վերոհիշյալ դիմանկարը (1936) կամ Ալեքսանդր Պուշկինի մահվան հարյուրամյա տարելիցին նվիրված գիպսե ֆիգուրը (1937)¹⁹⁰,

¹⁹⁰ Նկատի ունենք Պուշկինի՝ հասակով մեկ ներկայացված, բնական չափսերի հասնող արձանը Հայաստանի ազգային պատկերասրահից: Նույն թվականին Քոչարը կերտել է ռուս բանաստեղծին պատկերող գիպսե մեկ այլ, համեմատաբար փոքրադիր քանդակ, որը կատարված է առավել պասսիվ ու նմանակող ձևերով (զտնվում է Երվանդ Քոչարի թանգարանում):

ապա ազատ արձակվելուց հետո նա, ըստ էության, տևական անկում, ճգնաժամ ապրեց, մեջտեղ չհանեց գեղարվեստական մակարդակով դրանց համարժեք որե-վիցե գործ: “Կոլտնտեսուհին խաղողով” (1945), “Աղջիկը փշատի ճյուղով” (1946) կտավները, գեներալ-լեյտենանտ Միքայել Բարսեղովի դիմանկարը (1948) կամ մեքենավար Աբաջյանի կիսանդրին (1948) դիտելիս դժվար է տարբերել փարիզյան փայլուն՝ մտքով ու ոգով նորարարական պաստառների և քանդակների հեղինակի ձեռքը:

Սակայն հենց այդ տարիներին է Քոչարը կարևոր մի հայտնագործություն կատարում. հետպատերազմյան իր առանձին կտավներում (“Կանացի դիմանր-կար”, 1945, “Տղայի գլխանկար”, 1945, “Կապույտ սափորով նատյուրմորտ”, 1946, “Կոմիտաս”, 1946, “Մանիկը”¹⁹¹, 1947, “Թենիսիստուհին”, 1948 և այլն) նա սովորական յուղաներկերի կամ արծնաներկերի փոխարեն օգտագործում է հատուկ մոմաներկեր, որոնց պատրաստման համար 1948-ի փետրվարի 19-ին ՍՍՌՍ Մինիստրների Խորհրդին առընթեր Գյուտարարությունների և հայտնագործությունների կոմիտեի որոշմամբ նրան հեղինակային վկայագիր է տրվում¹⁹²: Բայց ինչու՞ մն էր Քոչարի վաստակը: Չէ՞ որ մոմաներկ նկարչության գաղտնիքը հայտնի էր արդեն հին եգիպտական վարպետներին, իսկ մ.թ.ա. V դարում հին հույները մշակեցին դրա կիրառման “տաք եղանակը”՝ այսպես կոչված “էնկաուստիկան”, որից երկար ժամանակ օգտվում էին նաև բյուզանդացի նկարիչները և ուրիշ նրանք ավելի ուշ նախընտրեցին “սառը եղանակը”՝ բնեկնին խառնած մոմաներկերը: Բայց երկար չանցած այդ տեխնիկան իր տեղը զիջեց տեմպերային և ապա՝ նորահայտ յուղաներկին: Մոմաներկերի պատրաստման դեղագիրը ժամանակի ընթացքում աստիճանաբար մոռացվեց: XVIII–XIX դարերի հնագիտական պեղումները, որոնք կրկին բացահայտեցին անտիկ նկարչության ողջ հմայանքն ու գեղեցկությունը, կենդանացրին հետաքրքրությունն այդ տեխնիկայի հանդեպ: Մոմաներկերի պատրաստման տարբեր դեղատոմսեր առաջարկվեցին, բայց դրանցից և ոչ մեկը չբռնեց դիմացկունության ու տոկունության քննությունը: Մինչդեռ թե՛ էնկաուստիկայի, թե՛ Քոչարի վերականգնած “սառը եղանակի”՝ հենց այդ հատկություններն են համարվում մոմաներկերի հիմնական արժանիքը: Յուղաներկերի համեմատությամբ, դրանք չեն ենթարկվում քիմիական քայքայիչ հակազդումներին, չեն մգանում ժամանակի ընթացքում, չեն ծածկվում մանր ճաքերով ու ճեղքվածքներով, չեն խոնավանում, չեն պահանջում, որ կտավի, փայտի կամ ստվարաթղթի մակերեսը նախապես պատվի ապահով հատուկ աստառաներկով, չեն վախենում ցրտից ու շոգից, ընդունակ են դարերով պահպանել իրենց սկզբնական, կուսական թարմությունը: Մոմաներկերի լուսընկալությունը նկարչին հնարավորություն է տալիս աշխատել թափանցաներկի բարակ շերտերով և միաժամանակ դիմել կիսատոներով հարուստ բազմաշերտ նկարչության մեթոդին: Վերջապես՝ մոմաներկերով կարելի է ստանալ ներկաշերտի ինչպես որմնանկարին բնորոշ փայլատ, այնպես էլ (մակաշերտի ողորկման դեպքում) լաքված յուղանկար հիշեցնող փայլուն ֆակտուրաներ: Քոչարի դեղագրով պատ-

¹⁹¹ Նկարում պատկերված է Երվանդ Քոչարի վերջին կինը՝ Մանիկ Մկրտչյանը (1913–1984), որի հետ նա ամուսնացել է 1946-ին:

¹⁹² Դատելով ամենից, մոմաներկերով աշխատելու առաջին փորձերը Քոչարը ձեռնարկել է դեռևս Փարիզում: Համենայն դեպս, 1930-ին նրա ստեղծած և հետագայում հայ անվանի գեղանկարիչ Հարություն Կալենցի հավաքածուի մեջ ընդգրկված դիմանկարներից մեկը կատարված է մոմաներկերով:

րաստված մոմաներկերն օժտված էին բոլոր այդ հասկություններով ու արժանիքներով, ինչն էլ հաստատեց պետական հեղինակավոր հանձնաժողովը¹⁹³:

Մակայն նկատենք, որ 1930-ականների ավարտին և 1940-ական թվականներին Քոչարի ստեղծագործության մեջ հատկապես առանձնանում, աչքի են ընկնում նրա գրաֆիկական աշխատանքները: Նախ և առաջ նկատի ունենք “Մասունցի Դավիթ” հայ ժողովրդական դրուցագնավեպի ստեղծման 1000-ամյա տարեդարձի առթիվ 1939-ին Մոսկվայում և Լենինգրադում ռուսերեն հրատարակված հոբելյանական հատորը՝ նկարչի հրաշակերտ պատկերներով¹⁹⁴: Քոչարի առջև բարդ խնդիր էր դրված. անհրաժեշտ էր վիպական ճյուղավորված պատմության բազում անցքերից ընտրել ընդամենը մի քանի հանգուցային տեսարաններ, որոնք ընդունակ էին ընթերցողներին և դիտորդներին հասցնել գրական հուշարձանի գաղափարական ու բարոյական խոր բովանդակությունը, հայրենասիրական պաթոսը և հերոսական ոգին: Խնդիր էր դրված նաև յուրատեսակ ոճ, արտահայտվելու կերպ ու միջոց գտնել “Մասունցի Դավիթ” կոմպոզիցիոն չափասահուն ռիթմն ու բանաստեղծական բարձր հանգր տեսողական համարժեք ձևերով հաղորդելու համար: Սանասարի և Բաղդասարի, Մեծ Միերի, Դավիթի և Փոքր Միերի մասին պատմող ավանդազրույցի էջերում արտացոլվել են հայ ժողովրդի պատմական ճակատագրի առանձնահատկությունները, նրա ազգային բնավորության ցայտուն գծերը, հոգեկան աշխարհի կերտվածքը, մտածողությունն ու աշխարհընկալումը: Գրաֆիկական յոթ պատկերներից բաղկացած շարքում, գրական աղբյուրին խիստ համապատասխան, ներկայացված են առասպելական հերոսների չորս սերունդները¹⁹⁵: Նկարաշարի առաջին՝ “Բերդի անվանադրումը” թերթում պատկերված են տոհմի ավագ դրուցագուններ Սանասարն ու Բաղդասարը: Ցուցադրված է ավանդավեպի այն պատահարը, երբ երկվորյակ եղբայրների կառուցած անառիկ ամրոցի շուրջը Սանասարի ձեռքերում պտույտ կատարած ծեր սերմնացանն այն անվանում է “Մասուն” (ժողովրդական ստուգաբանությամբ՝ “սաստկաշունչ”, “ահեղ”, “ահարկու”): “Առյուծաձև Միերը” թերթում էպիկական երկրորդ ճյուղի հերոս Մեծ Միերը ներկայացված է գիշատչի հետ մենամարտելիս: Երկիրը սովից փրկելով՝ նա, ինչպես բիրիակյան Սամսոնը կամ անտիկ դրուցագուն Հերակլեսը, պատռում է հացի ճանապարհը կտրած առյուծի երակը: Շարքի հաջորդ չորս թերթերը նվիրված են զրույցի գլխավոր գործող անձին՝ Մասունցի Դավիթին. ահա մանկահաս գառնարած Դավիթը, որն անտառներից, սար ու ձորերից բռնել, հավաքել, քաղաք է քշել վայրի գազանների և ոչխարների խառնակ խումբը, ահա դեռահաս Դավիթը, որը գանձարանից վտարում է ընչասեր հարկահավաք Կոզբաղինին, ահա պատանի Դավիթը, որը պատ-

¹⁹³ Մոմաներկերի ստեղծման պատմությանը և դրանց պատրաստման տեխնոլոգիային վերաբերող մանրա-մասները տե՛ս. **Երվանդ Քոչար**, Նոր մոմաներկեր / Գիտություն և տեխնիկա, Երևան, 1964, № 2, էջ 34–37:

¹⁹⁴ Տե՛ս. Давид Сасунский. Москва-Ленинград, 1939:

¹⁹⁵ Հետագայում Քոչարը մի քանի անգամ ևս դիմել է ժողովրդական դրուցագնավեպի թեմաներին, սակայն գրաֆիկական այդ ուշ թերթերը չեն կարող դիտվել իբրև 1939-ի վերոհիշյալ պատկերները համալրող՝ տրամաբանորեն շարունակող ու զարգացնող աշխատանքներ, քանի որ դրանք հեղինակային այլ մտահղացում ունեն և գեղարվեստական այլ ոճով են լուծված: Որպես հաստոցային ինքնուրույն ստեղծագործություններ պետք է ընկալել Քոչարի՝ “Դավիթն ու արաբ ծերունին” (1944), “Մարա Մելիքը փորձում է փոքրիկ Դավիթին” (1962), “Դավիթի հանդիպումը Քուռկիկ Զալալու հետ” (1969) գծանկարները:

րաստ է Թուր-Կեծակիով տապալել արյունաբքու թշնամուն՝ Մսրա Մելիքին, ահա, վերջապես, արդեն չափահաս, հասուն Դավիթն իր հավատարիմ, անձևվեր ընկերոջ՝ հրացայտ նծույզ Քուռլիկ Ջալալու հետ: Իսկ նկարաշարը եզրափակող, ավարտող թերթը պատմում է էպիկական վերջին ճյուղի հերոս Փոքր Մհերի մասին, որը անթիվ-անհամար չար ուժերի դեմ երկարատև պայքարից հետո ճեղքում է ժայռը և մտնում քարանձավ՝ մինչև գալիք նոր, ավելի խաղաղ ու արդար աշխարհի ստեղծումը: Բազմապլան, լայնածավալ ու ճյուղավորված պատմվածքի ընդամենը յոթ դիպված է ընտրել Քոչարը “Մասունցի Դավիթը” նկարագրող իր պատկերներում, որոնք գրեթե սպառիչ լրությանբ ու գեղարվեստական ընդհանրացման ազդեցիկ, կարծես, խտացված ուժով են արտահայտում դյուցազնավեպի հիմնական՝ թե՛ գաղափարական և թե՛ կերպարային բովանդակությունը:

Քոչարի գրաֆիկական նկարաշարի յուրաքանչյուր թերթ այլաբանական որոշակի իմաստ է կրում: Ժողովրդի անկոտրում կամքի, տոկունության մասին է պատմում “Բերդի անվանադրումը”, նրա ազատասիրության և արհուրյան, իր անկախությունը պաշտպանելու, թշնամու առջև չխոնարհվելու պատրաստակամության մասին են խոսում “Առյուծաձև Մհերը” և “Դավթի կռիվը Մսրա Մելիքի հետ”, որպես արդարության ջատագովներ, առաքինի կերպարներ, ժողովրդի բարոյական հիմքերի պահապաններ են հանդես գալիս ավանդավեպի հերոսները “Դավիթը և հարկահավաքը” և “Փոքր Մհերը” թերթերում, ժողովրդի հաշտարար, պարզասիրտ բնավորությունն է դրսևորվում “Դավիթը գառնարած” ջրանկարում, հայրենի հողի ու բնության հետ ժողովրդի սերտ կապն արտահայտող միտքն է ամփոփված “Դավիթը Քուռլիկ Ջալալու հետ” գծապատկերում: Ինչպես տեսնում ենք, Քոչարի նկարագրումները բովանդակում են բազմապիսի խոր և նշանակալից, ազգասիրական վեհ գաղափարներ:

Տպավորիչ է նկարաշարի ձևական լեզուն, բանեցված ոճը: Խոշոր չափսերի, գրքում էջով մեկ տեղադրված, ջրաներկի տեսակներից մեկով՝ գուաշով արված գրաֆիկական այդ աշխատանքներն արծաթավուն գորշ երանգներ ունեն¹⁹⁶: Նկարիչն այստեղ գործածում է պատկերման այնպիսի յուրահատուկ եղանակ, որի շնորհիվ վիպական ասքի պատահարները ներկայանում են ժայռավոր խորաքանդակի տեսքով: Հնոտրեն նմանակելով ժամանակի ընթացքում քայքայված, կերված ու ճաքեր տված մամուապատ քարի մակերեսը, Քոչարն այդպիսով, կարծես, հիշեցնում է պատմական այն հեռավորության մասին, որն ընկած է էպիկական հերոսների և այսօրվա ընթերցողի միջև, ու “բավարարվում” քարագործ անհայտ վարպետի ձեռամբ իբր թե դարեր առաջ քանդակված տեսարանները բարեխղճորեն արտանկարող պատճենահանի համեստ դերով:

“Մասունցի Դավիթ” դյուցազնավեպը նկարագրելիս Քոչարը դիմել է ինչպես հին արևելյան և միջնադարի հայ քանդակագործության ավանդույթներին¹⁹⁷, այնպես էլ եվրոպական նոր՝ ռեներսանսյան պլաստիկայի գեղարվեստա-

¹⁹⁶ Բացառություն է նկարաշարի թերթերից մեկը՝ “Դավթի կռիվը Մսրա Մելիքի հետ” ջրանկարը, որը ոչ թե միատոն արծաթափայլ, այլ գունավոր բազմերանգ աշխատանք է:

¹⁹⁷ Ինչպես նկատել է Հ. Փիլիպոսյանը, Քոչարի նկարագրումները կոմպոզիցիոն որոշ տարրերով և պատկերագրական սկզբունքներով մոտ են հայ միջնադարյան քանդակի առանձին կոթողներին, մասնավորաբար այսպես կոչված “կտիտորական քանդակներին”՝ վանքերի ու տաճարների կառուցմանը կամ նորոգմանը սեփական միջոցներով աջակցած անձանց խորաքանդակ պատկերներին (տե՛ս Գ. Փիլիպոսյան Հասմիկ, Երվանդ Քոչարի գրաֆիկան / Սովետական արվեստ, Երևան, 1974, № 10,

կան լեզվին: Թեև ներկայացված պատահարներն ու դրանց հերոսները ներքուստ լարված են, սակայն նկարաշարի բոլոր թերթերն էլ կոմպոզիցիոն գուգակշիռ, հաստատուն կառուցվածք ունեն: Կերպարները հիմնականում պատկերված են խոշոր պլանով՝ զբաղեցնելով թերթերի գրեթե ամողջ մակերեսը: Նկարների մեծ մասը լուծված է սովերազմային շեշտակի ռիթմով, իսկ գործողությունը ծավալվում է ձախից աջ, թղթի մակերևույթին զուգահեռ: Քոչարը լայնորեն ընդհանրացնում ու պարզեցնում է գծանկարը, միաժամանակ հրաժարվելով տարածական բարդ կրճատումներից և հատումներից: Ընդ որում, նա պատկերների մեջ մուծում է նաև արխաիկ՝ հնաբույր տարրեր: Այսպես՝ հետևելով հին եգիպտական նկարիչների և քանդակագործների օրինակին, նա իր վիպական հերոսների գլուխներին պրոֆիլային՝ կիսադեմ դիրք է հաղորդում, ուսերն ու իրանը տալիս ճակատային հանդիպահայաց դիրքով, իսկ ոտքերը կրկին մի կողմ շրջում: Այդ արխաիկ տարրերից գուրկ է միայն “Դավիթը Քուռկիկ Ջալալու հետ” առավել խոշոր ջրանկարը, որի արտահայտիչ լեզուն ու ոճը լիովին համահունչ են ձևի դասական պատկերացմանը: Կերպարների պլաստիկական մշակումն այստեղ չափազանց եռանդուն է: Քոչարը ոչ միայն չի շեշտում հարթությունը, այլ նույնիսկ ջանում է “հաղթահարել” այն՝ առավելագույնս մոտեցնելով, առաջ մղելով իր հերոսներին, ամբողջ պատկերը նմանեցնելով սովերապատ բարձրաքանդակի: Դավթի թիկնեղ ու հաղթ մարմինը և փարթամ ձիու խոնարհ գլուխը դիմացից են տրված: Ծավալների լուսաստվերային հյուսեղ ձեփվածքն ու ընդհանրացված, սակայն կենդանի գծանկարը պատկերն օժտում են մոնումենտալ հզոր թափով և գեղարվեստական ներգործության բացառիկ ուժով:

Ծանոթանալով ժողովրդական դյուցազնավեպի համար Քոչարի վրձնած նկարաշարին, ակամայից այն համադրում ես դրանից շուրջ երկու տասնամյակ առաջ գրքի գրաֆիկական ձևավորման ճանաչված վարպետ Հակոբ Կոջոյանի “Սասունցի Դավիթ” (1922) ստեղծագործության հետ: Ջրաներկով ու տուշով կատարված այդ համեմատաբար փոքրաչափ հորինվածքն ունի ընդհանուր պատումով կապված, սակայն մեկուսի՝ առանձին, բաժան “կադրերի” տրոհված մանր հատվածներ, որոնք երկու գոտիներով երիզում են կենտրոնական՝ առավել խոշոր տեսարանը: Համեմատությունը տեղին է ոչ միայն առասպելական միևնույն թեմայի հանդեպ երկու նկարիչների տաժած հետաքրքրության պատճառով, այլև նրանով, որ հետագայում, երբ Կոջոյանն արդեն հեռացել էր կյանքից, նրա նկարի հատվածներով պատկերագարողվեց ավանդավեպի հայկական երկրորդ հրատարակության սովոր հատորը¹⁹⁸: Քոչարի միագույն թերթերին հակառակ, Կոջոյանի հորինվածքում առաջատար դեր է խաղում ոչ թե լուսաստվերը, այլ միտումնավոր ոճավորված գծանկարը, որին աջակցում է դեկորատիվ հնչեղություն ստացած կոլորիտը: Կոջոյանը հենվում է միջնադարյան հայ կերպարվեստի ոչ թե քանդակային, ինչպես Քոչարը, այլ նկարչական ավանդույթների վրա, հատկապես կարևորելով այն երևույթները, որոնցում առավել վառ են արտացոլվել ժողովրդի բնատուր ճաշակն ու գեղագիտական ընկալումները:

Յոթ տարի հետո արվեստագետը ձեռնամուխ եղավ իրագործելու համաշխարհային գրականության մեկ այլ փառահեղ հուշարձանի՝ պարսիկ հանճարեղ

Էջ 38 և ՄՄՇՄ ժողովրդական նկարիչ Երվանդ Քոչար: Գրաֆիկական աշխատանքների ցուցահանդեսի կատալոգ, Երևան, 1978, էջ 13):

¹⁹⁸ Տե՛ս. Սասունցի Դավիթ: Հայկական ժողովրդական էպոս, Երևան, 1961, երկրորդ հրատարակություն:

բանաստեղծ Նիզամու “Խամսե” հնգամատյանի երրորդ գրքի՝ “Լեյլի ու Մեջնուն” սիրո տաղերգի գրաֆիկական ձևավորման աշխատանքները՝ սիրավեպի հայերեն հրատարակության համար, որը Մկրտիչ Խերանյանի ու Սողոմոն Տարոնցու թարգմանությամբ և Ավետիք Իսահակյանի խմբագրությամբ 1947-ին տպագրվեց Մոսկվայում՝ Նիզամու ծննդյան 800-ամյա տարեդարձի առթիվ¹⁹⁹: Այստեղ Քոչարը չբավարարվեց միայն տեքստային պատկերումներով, այլ հանդես եկավ որպես գրքի ձևավորման իրազեկ վարպետ: Նիզամու դիմանկարի և պոեմի հիմնական բովանդակությունը բացահայտող սյուժետային գծանկարների հետ մեկտեղ նա գեղարվեստական ուրույն տեսք տվեց նաև հատորի գրաշապկին, կազմակալին, ճակատանկարին ու անվանաթերթին, ոճավոր նրբաճաշակ գլխագարդերով և վերջնագարդերով եզրապատեց սիրավեպի առանձին դրվագները: Դժբախտաբար, “Լեյլի ու Մեջնուն” պոեմի համար Քոչարի ստեղծած էսքիզները մնացին Մոսկվայում, որտեղ էլ նա աշխատում էր գրքի ձևավորման վրա: Դրանց հետագա ճակատագիրը՝ գտնվելու վայրն ու առկա վիճակը, ցայսօր անհայտ է²⁰⁰: Ցածր է հայերեն հրատարակության տպագրական մակարդակը. սև ու սպիտակ և բաց դարչնագույն խավար վերատպումները թույլ չեն տալիս օբյեկտիվորեն գնահատել բնօրինակների իսկական արժանիքները²⁰¹:

“Մասուցի Դավիթ” դյուցազնավեպին հասցեագրված գրաֆիկական նկարաշարի հաջողությունն ուղեկցում էր Քոչարին նույն արժաթափայլ գուաշով կատարված ևս մի քանի աշխատանքներում, որոնց թվին են դասվում ”Տիգրան Մեծը” (1940), նկարչի քրոջ՝ Մարգարիտի դիմանկարը (1940), “Շեքսպիրը Հայաստանում” (1943), դերուսույց Տիգրան Շամիրխանյանի դիմանկարը (1945), “Ոսկան Երևանցին” (1946) և այլն, որտեղ գործ ունենք ինչպես նկարչի ժամանակակիցների, այնպես էլ պատմական անձանց պատկերների հետ: Բայց եթե վերջիններս լուծված են վիպական նկարաշարում կիրառված ոճով, այսինքն՝ քարակոփ քանդակներ են հիշեցնում, ապա կենդանի մարդկանց դիմանկարներում Քոչարը ոչ միայն շեշտում, այլև աճեցնում է պլաստիկ զանգվածներն ու ծավալները, իսկ բնորոշների դեմքերը և մարմինների մերկ հատվածները, կարծես, ծածկում ցանցանման թափանցիկ քողով: Բայց երկու դեպքում էլ գեղարվեստական նույն տպավորությունն ենք ստանում. մեր աչքի առջև մարդու զգայական շնչավոր կերպարն ասես կարծրանում, արձանանում է՝ առմիշտ պահելով, հավերժացնելով անցնող-գնացող ակնթարթների զարկն ու թրթիռը: Քոչարի դիմանկարները խոշոր ձևաչափ ունեն, աչքի են ընկնում կոմպոզիցիոն յուրահավաք ու ձիգ համակարգով, կերպարային լիավարտ բնութագրով: Դրանք ոչ միայն չափսերով,

¹⁹⁹ Տե՛ս. *Նիզամի Գյանջևի*, Լեյլի ու Մեջնուն, Երևան-Մոսկվա, 1947:

²⁰⁰ Երևանում՝ Երվանդ Քոչարի թանգարանում է պահվում մատիտանկար մի սովերազիր, որն ընդամենը մոտավոր, աղոտ պատկերացում է տալիս Նիզամու բանաստեղծական այդ երկի շապկանկարի կամ տիտղոսաթերթի մասին: Դա նախապատրաստական սևագիր աշխատանք է, որը բավականաչափ հիմքեր չի տալիս անաչառ դատողություններ անել վարպետի կորած էսքիզների գեղարվեստական որակի և տեխնիկական կատարման վերաբերյալ:

²⁰¹ Նիզամու “Լեյլի ու Մեջնուն” սիրավեպի քիչ թե շատ հանգամանալից և բազմակողմանի վերլուծման եզակի փորձը ձեռնարկվել է դեռ 1995-ին մեր շարադրած „О книжной графике Ерванда Кочара” ընդարձակ հոդվածում, որն ինչ-ինչ պատճառներով այդպես էլ մնաց անտիպ: Դրա մեքենագիր առաջին օրինակը գտնվում է տղերիս հեղինակի մոտ, իսկ երկրորդը նույն թվականին տրվել է Երվանդ Քոչարի թանգարանին: Հողվածի լրամշակված տարբերակը շուտով կտպագրվի ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի նախապատրաստած “Հայ արվեստի հարցեր” գիտական ժողովածուի հերթական՝ հինգերորդ պրակտում:

այլև կատարման՝ գեղակերպ ձևերի մշակման և մեկնաբանման եղանակներով հաստոցային մոնումենտալ աշխատանքներ են: “Սասունցի Դավթի” ջրաներկ շարքի նմանությամբ գրաֆիկական այդ թերթերը ևս առանձնանում են առաջին պլան արտամոդված, ընդհանրացված ու խոշորացված, զուսպ և լակոնիկ գծանրկարով: Իրենց գեղարվեստական որակով դրանք չեն զիջում Քոչարի երբևէ կերտած երփնագիր ու քանդակային լավագույն գործերին:

Նկարչի գրաֆիկական ուշագրավ աշխատանքներից է նաև Սերվանտեսի “Դոն Կիխոտ” վեպի մոտիվներով 1951-ին կատարված համանուն պատկերը: Այն համադրելով “Սասունցի Դավթի” նկարագարողումների հետ, դժվար չէ տեսնել, որ Քոչարն այստեղ օգտագործել է կոմպոզիցիոն նույն հնարանքը, որը գտել ու հաջողությամբ կիրառել էր “Դավիթը Քուռկիկ Ջալալու հետ” վերոհիշյալ ջրանրկարում: Տխուր Պատկերի Ասպետը և նրա մարտաձին՝ Ռոսինանտը, ներկայացված են խոշոր պլանով, ճակատային՝ ֆրոնտալ դիրքով, ընդ որում ձիու գլուխը նույնպես հենված է տիրոջ ուսին: Այդ երկու ստեղծագործությունների միջև կա նաև ռճական որոշ ընդհանրություն, եթե հաշվի առնենք գծանկարի պլաստիկական շեշտադրումները: Սակայն նկատենք, որ Քոչարի “Դոն Կիխոտը” զուրկ է ուճավորական արխաիկ տարրերից: Պատկերը միանգամայն ռեալիստական բնույթ ունի: Դա հատկապես վերաբերում է նկարի խորքում երևացող բնանկարին, ինչպես նաև գլխիկոր իշուկի և հացկերույթից հետո ծառի տակ ննջած Սանչո Պանսայի ֆիգուրներին: Հետին պլանի նման պրոգնաիկ՝ կենցաղային մեկնաբանումը արդարացված է որպես հակադիր, հակադարձ միջոց գլխավոր հերոսի՝ անուղղելի ցնորատես ու գաղափարասեր Դոն Կիխոտի ռոմանտիկ կերպարն է՝ և ավելի վառ դարձնելու համար:

1953 ին՝ Իոսիֆ Ստալինի մահվանից քիչ անց, ծնունդ է առնում Քոչարի “Բիբլիական Դավիթը” (“Դավիթը հաղթում է Գողիաթին”)՝ պլաստիկական անհամաչափ, սնամեջ խեղված ձևերով զիպսե գլուխը²⁰²: Շուտով նկարիչն ստեղծում է գրաֆիկական մի շարք թերթեր՝ “Երկատված անձը: Խոհեր” (“Երկփեղկվածը”), “Պար”, “Ստածում” (բոլորն էլ՝ 1954), որոնցում վերածնվում են ոչ միայն նրա փարիզյան բնորոշ կերպարներն ու մոտիվները, այլև ավանգարդիզմի համարձակ լեզուն, որից Քոչարին փորձում էին տարավարժել Երևանում: Լինելով մեծ արվեստագետ, նա կանխավ զգում էր, որ երկրին բախտորոշ փոփոխություններ են սպասում, և վերը նշված աշխատանքները Ստալինի մահվամբ վերջապես եկած ու կուսակցական համագումարի ամբիոնից հայտարարված քաղաքական “հալոցքի” առաջին ծիծեռնակներն էին: Վարպետի նախագագումներն իրականություն էին դառնում: Թեև զգուշաբար ու խտրականորեն, բայց հետզհետե վերանայվում էին նախկինում անվիճարկելի գեղարվեստական չափանիշները, իսկ “սոցիալիստական ռեալիզմի” մեթոդն աստիճանաբար ընդլայնում էր իր նեղ ամփերը: Մովետահայ կերպարվեստում այդ տարիներին կատարվող տեղաշարժերը, թերևս, առավել վճռական, եթե չասենք՝ արմատական բնույթ էին կրում, և արդեն տարեց, ծերացող Քոչարը նորոգիչների առաջին շարքերում էր: Նա կրկին դիմում է Տարածական նկարչությանը (“Խնձորներով կինը”, 1960, “Առավոտ”,

²⁰² 2009-ի հոկտեմբերի 27-ին՝ հայկական խորհրդարանում տեղի ունեցած արյունոտ սպանդի տասնամյա տարելիցի օրը, ՀՀ Ազգային ժողովի այգում բացվեց ահաբեկչության զոհերին հարգող հուշակոթողը. գրանիտե ցածրադիր պատվանդանին վեր է խոյանում Երվանդ Քոչարի “Բիբլիական Դավթի”՝ չափսերով հինգ անգամ բնօրինակը գերազանցող բրոնզաձուլ կրկնակը:

1962, “Կալանավորներ”, 1964, “Կերպարներ”, 1975), ստեղծում գունագծային սուր, լարված ձևեր և այլաբանական խորհուրդ ունեցող հորինվածքներ (“Մերկ կինը”, 1959, “Գրկախառնություն”, 1959, “Էքստազ”, 1960, “Մեր”, “Համբույր”, “Երջանկության բանալին”, բոլորը՝ 1962), վրձնում ականավոր բուսաբան, ակադեմիկոս Արմեն Թախտաջանի ոչ մեծակտավ, սակայն չափազանց արտահայտիչ դիմանկարը (1963), կիրառում գրաֆիկական ծեփատման, դրոշմագարդման եղանակը (“Կանացի ֆիգուր”, 1960), ավարտին հասցնում իր ինքնատիպ քանդակներից մեկը՝ “Մելամաղձություն” (1959) գիպսե արձանը²⁰³, որտեղ մենք նորից հանդիպում ենք Քոչարի փարիզյան շրջանից եկող երկսեռ էակին: Եթե վարպետի խորհրդային շրջանի ստեղծագործական նվաճումները մինչ այդ կապված էին առավելապես գծանկարչության հետ, ապա նրա արվեստի վերջին փուլերը հատկանշվում են գեղանկարչության նոր վերելքով և քանդակագործության աննախադեպ բուռն ծաղկումով: 1959-ին ջրաներկով, կավձաներկով, մելանով և մատիտներով կատարված գրաֆիկական գործերից հետո (“Աղջկա գլխանկար”, “Հիշողություններ”, “Աղջիկն ու լուսինը”, “Կոմպոզիցիա”, “Գլանակով կինը”, “Պատկածը” և այլն) նկարիչը, կարծես, կորցնում է հետաքրքրությունը կերպարվեստի տվյալ տեսակի հանդեպ:

Բավականին ընդհանրություններ կան Քոչարի այդ և հետավոր փարիզյան տարիների նկարչության միջև: Նույնիսկ թվում է, թե անցյալի հետ՝ արվեստագետին ստեղծագործական երկարատև “պարապուրդի” մատնած ոչ մի ճարահատ խզում չի եղել: Փարիզյան նկարչության կտրուկ ընդհատված, թերավարտ խոսքը կրկին բարբառում ու շարունակվում է նրա նորաստեղծ տասնյակ աշխատանքներում: Վերածնված Տարածական նկարչության հետ անգոյությունից ու մոռացությունից վերադառնում են նաև նրա օրինատալիստական տարփավետ ցնորանքներն ու այլաբանական կերպարները: Այսուհանդերձ, Քոչարի ուշ նկարչությունը շատ չի հեռանում բնությունից: Գեղարվեստական արտահայտության ձևը և կերպը գրեթե չեն իշխում բովանդակության վրա ու միայն բացառիկ դեպքերում են ինքնաբավ նշանակություն ստանում: Դա հավասարապես վերաբերում է թե՛ Քոչարի հաստոցային կտավներին և թե՛ նրա Տարածական նկարչության ուշ նմուշներին: Խրուչչոյվյան “հալոցքից” ի վեր վարպետի երփնագիր գործերում նկատելի տեղ է հատկացվում դիմանկարի ժանրին, որն այնքան էլ չէր կարևորվում Փարիզում եղած ժամանակ, և հակառակը՝ մարում է հետաքրքրությունը նատյուրմորտի նկատմամբ, որն աչքի էր ընկնում երիտասարդ Քոչարի թիֆլիսյան առաջին աշխատանքներում:

Նրա նկարչությունը եզրափակող փուլերի մասին կարելի է հանգամանորեն ու երկար խոսել՝ մատնանշելով մի շարք բարձրարվեստ գործեր, սակայն պատկերը թերի կմնա, եթե շրջանցենք Քոչարի երբևէ վրձնած ամենախոշոր յուղանկարը՝ “Պատերազմի արհավիրքը” (1962)²⁰⁴, որտեղ, ինչպես մի կաթիլ ջրում, արտացոլվել է կյանքի մեծ փորձով իմաստնացած վարպետին հուզող ոչ միայն գեղարվեստական, այլև գաղափարական ու բարոյագիտական խնդիրների ամ-

²⁰³ Տասնամյակներ անց՝ 2003-ի սեպտեմբերի 23-ին, Երևանի Փավստոս Բուզանդի փողոցի վրա, Նորարար փորձառական արվեստի կենտրոնի հարևանությամբ, գրանիտե բարձր խարսխին դրվեց Քոչարի այդ ստեղծագործության՝ բնօրինակից չորս անգամ խոշոր բրոնզե տարբերակը:

²⁰⁴ Համաշխարհային կերպարվեստի պատմության մեջ նույն կամ համանման վերնագրեր կրող բավականին շատ աշխատանքներ կան, որոնցից են, օրինակ, ֆրանսիացի վարպետ Ժակ Կալոյի (1592–1635) կամ իսպանացի նկարիչ Ֆրանսիսկո Գոյայի (1746–1828) հանրահայտ օֆորտները:

բողջ լուսակր: Կտավին նախորդած գրաֆիկական էսքիզները հուշում են, որ ստեղծագործության միտքը ծագել է դեռ 1950-ական թվականներին: Թեև դրանցում արվեստագետն արդեն ճշտել է կոմպոզիցիոն գլխավոր շեշտերն ու հանգույցները, սակայն սևագիր թերթերն առայժմ գուրկ են այն հավաք ու ձիգ, կոտ կառուցվածքից, որը տեսնում ենք յուրանկարում: Վերջինս նաև համալրված է նոր կերպարներով, որոնք հարստացնում են ստեղծագործության բովանդակային շերտերը, հագեցնում դրա գեղարվեստական առանց այդ էլ բարդ ու խիտ բանվածքը:

Սկարն սկզբում հատվածական մասնատված տպավորություն է թողնում. ցավից և կատաղությունից ծամածոված մարդկային դեմքեր ու ձիու դնչեր, սարսափից չոված ու կապիճներից դուրս պրծած աչքեր, կիսախելագար ու խենթ հայացքներ, առ երկինք պարզած աղերսող ձեռքեր, ամուր կծկված ու բռունցք դարձած, թշնամու կոկորդը սեղմող ջղաձիգ մատներ, ընկածներին կոխտոող ոտքեր, ճարտարապետական ավերակներ... Այդ ամենը շարժվում ու երերում է մեր աչքի առաջ գեղադիտակի փշրանքների պես, որոնց արտառոց խճճանքներին դժվար է իսկույն ընտելանալ՝ ժամանակ է պետք ամբողջ պատկերը մեր տեսողության դաշտում պահելու, հիշողության մեջ տպավորելու համար: Միայն հետո է իր մոնումենտալ ազդեցիկ ուժով ներկայանում մահացու կովի աշխարհակործան այս տեսարանը՝ Հովհաննու Հայտնությունն ըստ Երվանդ Քոչարի:

Սկարի առանցքը գոտեմարտի մեջ ներքաշված երեք հեծյալներն են: Պատկերված մարդկանց և կենդանիների դեմքերն ու դնչերը գիշատիչ ավարասեր արտահայտություն ունեն. արյամբ են լցված նրանց աչքերը, վայրի բռռոցներ և խուլ հառաչանքներ են արձակում նրանց խոչափողերը: Մարդկանց ու ձիերի մարմինները միաձուլվել և սերտաճել են. նրանք, կարծես թե, մարդիկ ու կենդանիներ չեն, այլ երկատված տարօրինակ էակներ՝ կենտավրոսների խառնածին ցեղից: Այսպիսով հեծյալների գոտեկոնիվը Քոչարի կտավում փոխակերպվում ու վերածվում է մարդաձիերի ճակատամարտի առասպելական տեսարանի, որը եվրոպական կերպարվեստի հնագույն և առավել տարածված պոմեներից է՝ Ֆիդիասից մինչև Պիկասո: Հայացք գցելով կտավի ստորին հատվածին, տեսնում ենք մարդկանց ու կենդանիների ոտնաթաթերի և սմբակների տակ ծնկի եկած մի տղամարդու ու նկարչի փարիզյան շրջանից մեզ ծանոթ դիցուհու՝ Վեներայի գետնահար ֆիգուրը, որի ափի մեջ սարսուել է խաղաղության վտիտ աղավին: Որպես անարգված կանացիության ու ոտնահարված գեղեցկության խորհրդանիշ է ընկալվում այս կերպարը: Նույնքան արտահայտիչ և խորհրդավոր է նաև փռու մեջ ընկած և իր կենարար հյուրն իգուր գեղող խաղողի ճուրջ: Ողջ տեսարանի համար բեմական հետին վարագույրի, հենքի ու ֆոնի դեր են կատարում քաղաքակրթության և մշակույթի կործանումն ակնարկող՝ հրկիզված, այրվող, ծխի մեջ կորած ճարտարապետական փլատակները: Եվ այնուհանդերձ, Քոչարի նկարը վախճանաբանական անելանելի, անարև, մռայլ գուշակություն չէ, այլ մարդկության ճակատագրով մտահոգված, տագնապալի մի ուղերձ՝ “աղետի նշան”, որի մասին հարկ է մշտապես հիշել, որպեսզի այն երբեք չիրականանա: Այստեղ գործ ունենք ոչ թե սոսկանքի, ահ ու սարսափի գեղագիտացման, այլ արվեստագետի հակաուտոպիկ՝ ցնորամերժ տեսակետի հետ, որը կոչված է սթափեցուցիչ ապաքինող տպավորություն թողնել: Այդպես էին վարվում հին հունական ողբերգակները, դիմելով կատարսիսի՝ քավության և մաքրագործման, հանդիսականի հոգեբանական վիճակի հաշտեցման միջոցին:

Անտիկ ողբերգության ոգին թևածում է նաև “Պատերազմի արհավիրքում”, և դա զգացվում է ոչ միայն իրենց “հերոսական մերկությամբ” մեզ ներկայացող առնական կերպարներում, այլև առաջին հայացքից աննկատ, կտավի աջ կողմում պատկերված՝ լայն ուսնոցով դեմքն ստվերած գլխիկոր կնոջ՝ աղբսամոր սգազգեստ ֆիգուրում: Իրականում այդ կերպարն իմաստային, գաղափարական և հուզական կարևոր նշանակություն ունի: Վշտակիր կանանց համանման ֆիգուրներ շատ կան հին հունական քարատապանների՝ մարմարյա սարկոֆագների վրա, ռենեսանսյան և կլասիցիզմի դարաշրջանի մահարձաններում. զավակներին ողբացող մայրեր, ամուսիններին ողբացող կանայք, ընտրյալներին ողբացող մուսաներ... Քոչարի կտավում առկա ողբասաց կնոջը սովորաբար նույնացնում են Ճակատագրի կամ Մահվան խրատական պատկերների հետ: Ինքը՝ Քոչարը, խորհրդավոր այդ կերպարին տալիս էր անտիկ խորոսին (պարերգակներին կամ խմբերգիչներին) վստահված դերը՝ կանխաբանել ու զգուշացնել վերահաս վտանգի մասին և հասարակական համերաշխության կոչել²⁰⁵:

Նկարի պայմանական այլասաց բովանդակությունն իր արտացոլումն է գտել նաև ստեղծագործության գեղարվեստական լեզվում ու ռճական համակարգում, որոնց տարբերակիչ հատկանիշներից է փոքր ինչ փայլատ, սակայն էքսպրեսիվ կոլորիտը և ձևախեղված սուր ստվերագիրը: Քոչարի կտավում դրանք կապ չունեն առարկայական բնանյութի ու լուսավորության իրական հանգամանքների հետ. ծառայելով ոչ թե բնությունը նմանակելու, այլ հակառակը՝ գերիրապաշտ նկարիչների պես այն տարապայման եղանակներով փոխակերպելու նպատակներին: Բայց Քոչարի սյուրռալիստական տեսիլը ժխտվում, մերժվում է հենց իր՝ վարպետի կողմից. հորինվածքի մեծ անկյունագծերը հատվում, խաչվում են կտավի ուղիղ մեջտեղում, դրա կենտրոնական առնակի վրա և, կարծես, ջնջում ու բացասում են ապոկալիպտիկ ողջ տեսարանը: Այդպիսով Քոչարը ոչ միայն արձագանքում է պատերազմի և խաղաղության՝ մշտապես հրատապ, հարածամ խնդրին, այլև հաստատում հաշտասեր, զինատյաց արվեստագետի յուր տեսակետը: Հիշեցնենք, որ կտավն ավարտվել է 1962-ին, երբ ճայթեց այսպես կոչված “Կարիբյան ճգնաժամը”, և աշխարհը կանգնեց անդունդի եզրին: Ու թեպետ նկարի բուն գաղափարը ծնունդ էր առել դեռ 1950-ական թվականներին, այն գեղարվեստական ավարտուն կերպար ու ողբերգական ուժ ստացավ միայն Խորհրդային Միության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև քաղաքական լուրջ, միջուկային աղետով հղի առճակատման պայմաններում:

Հաճախ, խոսելով Քոչարի “Պատերազմի արհավիրքի” մասին, մտաբերում են Պիկատոյի հանրածանոթ “Գեռնիկան” (1937)՝ նույնպես բռնությունների ու կռիվների դեմ ըմբոստացող հսկայածավալ յուղանկարը, իսկ հույն անվանի գրող և հրապարակախոս Միցոս Ալեքսանդրոպոլոսը Քոչարի նկարն ուղղակիորեն անվանում է “հայկական “Գեռնիկա””²⁰⁶: Ի տարբերություն մերազնյա որոշ մասնագետների, մենք պախարակելի ոչինչ չենք տեսնում այն հանգամանքում, որ տվյալ դեպքում հայ նկարիչը մասամբ ազդվել է նախընթաց դարի համաշխարհային կերպարվեստում առանձնահատուկ տեղ զբաղեցրած “Գեռնիկայից”²⁰⁷:

²⁰⁵ Այդ մասին մեզ պատմել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր Վիգեն Ղազարյանը՝ հիշելով Երվանդ Քոչարի հետ իր անձնական հանդիպումներն ու զրույցները:

²⁰⁶ *Александропулос Мицос*. Армяне. Москва, 1990, с. 184.

²⁰⁷ Ի դեպ, Պիկատոյի գլուխգործոցը Նյու Յորքից բերվել ու ներկայացվել է 1962-ին Սիեթլում (ԱՄՆ) բացված Համաշխարհային ցուցահանդեսում՝ նորովի լուսաբանվելով հենց “Կարիբյան ճգնաժամի” համատեքստում:

Մարտեցուցիչ “պաղած մղձավանջ”, “արհավիրք”, “գարգանդ”՝ այս բառերով է բնութագրում Պիկասոյի աշխատանքը ճապոնացի ճանաչված վարպետ Տարո Օկամոտոն և ավելացնում. “Բայց նկարի պաթոնս ու հուզական լիցքն այդպես էլ չեն հատում այն կողագիծը, ուր սկիզբ է առնում խելահեղությունը”²⁰⁸: Մրանք ճշմարիտ այն խոսքերն են, որոնք անվերապահ կարելի է հասցեագրել նաև Քոչարի կտավին: Հայ արվեստագետի յուղանկարն իր դրամատիկ լարումով հանդերձ, այնուամենայնիվ, ծանրալուր խոլոր տպավորություն բնավ չի թողնում: Մա ռ՛չ “անդալուզյան հնավանդ լալաձայն տաղ է”, ռ՛չ “ննջեցյալներին ուղղված սգերգ” և ռ՛չ էլ գիշերվա խավարում արձակված “հուսահատության արեկտուր ճիչ”²⁰⁹, այլ՝ պատերազմի արհավիրքին, մահաբեր սպանդին դիմակայելու շանթալեզու կոչ: Պայքարն առայժմ շարունակվում է, այն չի ավարտվել, դրա արդյունքը նախորոշված չէ. մարդկանց և կենդանիների ֆիզուրները լի են կենսական ուժով ու յուրահատուկ գեղեցկությամբ, գոյատևելու անհատնում կամքով, ինչն էլ նրանց կերպարներն օժտում է հուզական վառ, արտահայտիչ հատկանիշներով, իսկ կտավի համեմատաբար նեղ և ուղղաձիգ ֆորմատը, հակադրվելով միապաղաղ գորշ, մթամած գույներ ունեցող հորիզոնադիր “Գեոնիկային”, ոչ այնքան մղում ու կուտակում է հերոսների բացասական՝ շիկացած մոլի, կատաղի տենչը, որքան կաշկանդում և զսպում է այն՝ խափանելով դրա ճարակումը:

Մեծ է Քոչարի այդ տարիների նկարների թիվը՝ ուշագրավ տասնյակ յուղաներկեր է ստեղծել վարպետը “հալոցքից” հետո, բայց համաժողովրդական լայն ճանաչում և հանրական հռչակ նրան բերեցին քանդակային խրոխտ կոթողները: Ու եթե 1966-ին Վալդեմար Ժորժը, հետադարձ հայացք նետելով Քոչարի փարիզյան շրջանի վրա, վերջինիս Տարածական նկարչությունը որակեց որպես “ժամանակակից արուեստի մեծագոյն յաղթանակներէն մեկը”²¹⁰, ապա ստեղծագործական իսկական սխրանք պետք է համարել նրա մոնումենտալ պլաստիկայի լավագույն նմուշները, մասնավորաբար՝ 1959-ին Երևանում տեղադրված “Մասունցի Դավիթ” հուշարձանը (ճարտարապետ՝ Միքայել Մազմանյան): Քանդակի վրա աշխատանքներն սկսվել են առել դեռ 1939-ին՝ հայկական դյուցազնավեպի գրաֆիկական վերոհիշյալ նկարաշարին զուգընթաց: Ծայրագույն սեղմ ժամկետներում, կոթողային ծանրանիստ արձանագործության բնագավառում գրեթե փորձ չունեցող Քոչարին հանձնարարված էր Հայաստանում առաջին անգամ հեծվոր հերոսի մի մեծածավալ հուշարձան կերտել: Ընդամենը 18 օր (այլ տվյալներով՝ մի քանի ամիս) պահանջվեց վարպետին երեք մետրանոց գիպսե արձանը ծեփելու համար: Հայկական վիպերգության հազարամյա տարեդարձի օրերին՝ 1939-ի սեպտեմբերին, այն առժամանակ կանգնեցվեց Երևանի կայարանամերձ հրապարակում, ուր քսան տարի անց իր վերջնական գրանցումն ստացավ “Մասունցի Դավիթ” հիմնովին վերամշակված մետաղյա տարբերակը: Քոչարն ի սկզբանե մտադիր էր վիպական դյուցազնի կերպարը մարմնավորել համապատասխան մետաղի մեջ, սակայն նրա կալանավորումն ու “տեղական նացիոնալիզմի” դրսևորումների դեմ պայքարով պայմանավորված հարատև շնորհազրկումը վարպետին ստիպեցին հրաժարվել իր նախատեսած ծրագրից: Ի լրումն ա-

²⁰⁸ *Окамото Таро*. Застывший образ трагедии / Курьер ЮНЕСКО, Москва, 1981, январь, с. 18.

²⁰⁹ Պիկասոյի կտավը հակիրճ բնորոշող այդ պատկերավոր գուգորդումների հեղինակը նրա մտերիմ ընկեր, իսպանացի թատերագիր և արվեստի պատմաբան Խոսեպ Պալաու-ի-Ֆարբեն է (տե՛ս Երնիկա / Курьер ЮНЕСКО, Москва, 1981, январь, с. 18):

²¹⁰ *Շորժ Վալտենար*, Քոչար եւ նկարչութիւնը տարածութեան մէջ..., էջ 27:

մենի շուտով կործանվեց, ոտնատակ կորավ և ինքը՝ գիպսե քանդակը²¹¹: Կրկընվեց այն իրավիճակը, որում դրանից հարյուրամյակներ առաջ հայտնվել էր նաև Լեոնարդո դա Վինչին, երբ Միլանը գրաված ֆրանսիացի աղեղնագնեսները ջարդուփշուր արեցին Ֆրանչեսկո Մֆորցայի ձիարձանի՝ արդեն ձուլման պատրաստ կավե մոդելը: Պատմությունից գիտենք, որ տարիներ խլած այդ աշխատանքը վերականգնելու համար Լեոնարդոն ոչ ժամանակ, ոչ բարոյական ուժեր ունեցավ: Քոչարի դեպքում, բարեբախտաբար, այլ ելք գտնվեց. 1957-ին նա կրկին դարձավ «Մասունցի Դավթին», և արդեն 1959-ի դեկտեմբերի 3-ին հայ արվեստագետի «պղնձե հեծյալը» մեծ հանդիսությամբ տեղակայվեց մայրաքաղաքի կայարանամերձ նույն հրապարակի կենտրոնում²¹²: Ինչպես գրում է Ռ. Դրամբյանը, «տարիներն ապարդյուն չանցան, ժամանակն օգնեց քանդակագործին մի շարք էական փոփոխություններ մտցնել»²¹³: Եռակի անգամ խոշորացնելով քանդակի չափերը (կոթողի ընդհանուր բարձրությունը 12,5 մետր է, արձանի ծավալներն ու սահմանային ուրվագծերը՝ 650x930x220 սանտիմետր), Քոչարը վճռողաբար վերաձևեց դրա հորինվածքը. նա հրաժարվեց ավելորդ մանրամասներից և, ամփոփելով պլաստիկ ձևերը, հեծյալի ու ձիու ֆիգուրներին մոնումենտալ թափ և խորհրդավոր իմաստ հաղորդեց: Թոթափելով նկարագրական բոլոր տարրերը, հեռանալով գրական երկի «տառացի ընթերցումից»՝ Մասունցի Դավթի պղնձակոփ հուշարձանը գաղափարային ու կերպարային խոր բովանդակություն և գեղարվեստական նոր որակ ստացավ:

Քանդակը ուշադրություն է գրավում կերպարի զարմանալի ամբողջականությամբ: Դավիթը ներկայացված է ցատկելու պատրաստ նժույգի վրա, թուրը հետ քաշած, մարտի նետվելու և թշնամուն ջախջախելու նախընթաց պահին: Նա ախոյանին է նայում ունքակախ, ցասկոտ հայացքով: Հաստատական ու աներկյուղ է նրա թավախիտ, զգուզ վարսերով պսակված հպարտ, առնագեղ դեմքը: Անմոռանալի տպավորություն է գործում պլաստիկական անթերի վարպետությամբ ծեփված Դավթի գլուխը: Անտիկ աստվածներին ու հերոսներին, Միքելանջելոյի գրոցի շնորհիվ մարմարի մեջ հավերժացած իր բիբլիական անվանակցին նմանվող Քոչարի Դավիթը միաժամանակ պահպանում է ազգային ցայտուն դիմագծերը՝ ընկավելով որպես ժողովրդի ծոցից եկած դյուցազնի հավաքական կերպար: Ի տարբերություն գիպսե քանդակի, հայկական ավանդագրույցի հերոսը նորոգված արձանում ոչ թե սխրության անշրջանկատ ծարավով կամ տղայական իգիթությամբ, այլ արդարակյաց և իմաստավոր բարկությամբ դրդված հասուն, խելահաս ու քաջարի այր է: Գերմարդկային վիթխարի ուժ է քամհարում Դավիթի

²¹¹ «Մասունցի Դավթի» առաջին՝ գիպսե տարբերակի մասին որոշ պատկերացում են տալիս եղած լուսանկարներն ու վերատպությունները, որոնցից մեկը կարող ենք տեսնել հանրապետական «Коммунист» օրաթերթի՝ 1939-ի սեպտեմբերի 16-ի հոբելյանական համարում:

²¹² Մինչ այդ Քոչարի ստեղծած կոթողային եզակի քանդակներից է «Զվարթնոցի արծիվը» (1955): Միջնադարյան հայ ճարտարապետության գոհարներից մեկը հարդարող արծվաքանդակ ռելիեֆներով ներշնչված, Զվարթնոցի ճանապարհին տեղադրված այս ուղենշան-սյունարձանը (ճարտարապետ՝ Ռաֆայել Իսրայելյան) միաժամանակ օժտված է թե՛ դեկորատիվ և թե՛ մոնումենտալ հատկանիշներով: Երկրաչափական պարզ ձևեր ունեցող տուֆե հուշայան կատարին նստած արծվի բրոնզե խոշոր (250x100x120 սմ) ֆիգուրը նույնիսկ հեռավոր դիտակետերից ազդեցիկ ու վեռ տպավորություն է թողնում, իսկ մոտիկից բացահայտվում են ստեղծագործության դեկորատիվ-գարդային հատու տարրերը:

²¹³ Տե՛ս. Հայկական ՍՍՌ արվեստի վաստակավոր գործիչ Երվանդ Քոչար: Կատալոգ, Երևան, 1965, էջ 10:

մարմինը, ուռչել-պրկվել են նրա ամրապինդ, լեռ մկանները: Քոչարը փոքր ինչ շեղվում է անատոմիական կանոններից, խեղաթյուրում ու չափազանցում ռեալ ձևերը՝ գեղարվեստական մեծ համոզությամբ բացահայտելով վիպական հերոսի ֆիզիկական և հոգևոր արժանիքները: Դավթի մարմնին կիպ նստած զգեստը ոչ միայն չի խաթարում կերպարի ընդհանուր բնութագիրը, այլև շեշտում է նրա ատլետիկ, հաղթ կազմվածքը: Բոբիկ ռոսներին քուղակապված հաստ սանդալները, թավ թելախաճով երիզված վարտիքը, հերոսի իրանը գրկող լայն մեջքակապը, բաց օձիքով քաթանե շապիկը, կարճ պատմուճանը, տիրոջը վայել ծանրակուռ թուրը՝ հերոսի զգեստի, նրա տարագի այդ խիստ ջոկջկված դետալները Դավթին մի կողմից օժտում են հայ խաշնարածի կամ ռանչպարի տեսքով, իսկ մյուս կողմից՝ հատկանշում որպես ժողովրդի պաշտպան ու քաջածին մարտիկ: Հերոսը շրջվել ու հետ է քաշել իր կեծակ թուրը: Ոչ այնքան գորականին, որքան հնձվորին հարիր այդ շարժվածքը ևս հայտաբերում է միայն փորձության ժամին ձեռքը գենք վերցնող հայ կտրիճների և խաղաղասեր ժողովրդի հաշտ ու համերաշխ բնավորությունը: Քոչարի Դավիթը զինակիր է ոչ թե կոչումով, այլ ակամայից, իր մարտական սխրանքներով նա պատվարում ու միաժամանակ մարմնավորում է հարազատ ազգի ստեղծագործ ոգին և նվիրական ձգտումները: Նրա ֆիզուրը չափազանց լարված է. թշնամուն զարկելուց առաջ նա կիսականգնել է՝ ոտքը հենելով ասպանդակին: Դավթի ուսերի ու մարմնի շարժումը, հակադրվելով նրա գլխի հետադարձ դիրքին, դինամիկ կտրուկ կոնտրաստ է ստեղծում, որը կերպարին ներքին հորդաբուխ նոր հուր է տալիս: Եթե քանդակի դիմային դիտակետը շեշտում է Դավթի ֆիզիկական ուժը, ապա կողային ձախ տեսանկյունը ցուցադրում է հեծյալի թեթև խոյացման պահը: Հերոսի ծավված ու ձիու թարթին հպված ոտքը, թեքված գլուխը, խոիվ մագերը, քամուց ծածանվող բարակ թիկնոցը, կարծես անկշիռ թրի սայրը՝ այդ ամենը պարզ դիմաստվերով ուրվագծվում է երկնքի ֆոնին ու ստեղծում շղթայազերծ ազատ ուսայունի պատրանք: Քոչարի հուշարձանում նկատելի փոփոխությունների է ենթարկվել նաև ձիու կերպարը: 1939-ի գիպսե մոդելում, Դավթի կերպարի համեմատությամբ, կենդանին կարճլիկ ու անբարեկազմ էր. իր հաղթ մարմնի ծանրությամբ դյուցազնը, կարծես, նեղում էր նրան: Ձին անատոմիական բնականոն կազմվածք ուներ, սակայն գուրկ էր գեղարվեստական համոզեցուցիչ այն որակներից, որոնք առկա են քանդակի վերջին տարբերակում: Համաշխարհային կերպարվեստի պատմությունից ձիարձանների հաջողված մի շարք նմուշներ գիտենք՝ սկսած Հռոմի կայսր Մարկոս Ավրելիոսի հուշակոթողից մինչև Դոնաթելլոյի, Վերոքիոյի, Շյուրթերի, Ֆակոնեի, Բուշարդոնի, Բուրդելի, Մեշտրովիչի և այլոց մոնումենտալ ստեղծագործությունները: Բայց նույնիսկ նշված աշխատանքներում բացառիկ են օրինակները, որոնցում կենդանուն նույնքան կարևոր դեր է հասկացված, որքան Մասունցի Դավթի քանդակում: Այդ առումով Քոչարի “պղնձե հեծյալը” համահնչուն է թերևս միայն Ֆակոնեի հանրահայտ արձանին, որտեղ մեծն Պետրոսի պատվանդանից անջատված, ծառացած ձիու խրոխտ կերպարն ընկալվում է նրան թամբած ու, կարծես, նրան “սերտաճած” տիրոջ կերպարի հետ ոչ միայն կոմպոզիցիոն, այլև գաղափարական անխզելի, սերտ առնչությամբ: Աշխատանքի ընթացքում Քոչարը բախվեց նույն բարդություններին ու խոչընդոտներին, որոնք ժամանակին դարանել էին նաև Ֆակոնեի: Ձին պետք է համակված լիներ բուռն շարժումով ու ներքին խանդով, բայց դրա հետ մեկտեղ պահպաներ կայուն հավասարակշռություն,

լինէր ոչ միայն կայտառ ու թեթև, այլև ծանրագին ու ահեղաթափ, մի խոսքով՝ համատեղէր իր իսկ անձնավորած բնության տարերքի ազատությունը և զորութունը: Կանխավ ասենք, որ այդ կնճռոտ խնդիրներին Քոչարը փայլուն լուծումներ տվեց: Հետևի ոտքերին հենված, դիմացիները գետնից պոկած, իր գեղեցիկ ու մտառու գլուխը հակած կենդանին մի պահ պաղել է պատվանդանին՝ հետևյալ պահին իր հաղթամկան մարմնով ոստնելու, առաջ մղվելու, սուրալու պատրաստ: Ճիշտ է որոշված հորիզոնական շարժման և այն տիրաբար սաստող՝ չափավորող կամ արգելակող վարընթաց ուժերի հաշվեկշիռը: Կուլմինացիոն պահը ցուցադրված է “ճոճանակի սկզբունքով”. քանդակագործը ներկայացրել է դինամիկ գործողության եզրային վերջին՝ մեռյալ կետը, երբ միակողմանի շարժումն արդեն ավարտվել, սպառել է իրեն, իսկ հակադարձ շարժումը հապաղել, դեռ չի ծավալվել: Ընդ որում, թե՛ հեծվորի և թե՛ կենդանու ֆիգուրները ենթադրում են միանգամից մի քանի նպաստավոր, շահավետ հայեցակետեր, որոնցից յուրաքանչյուրը լրացնում է մյուսին՝ հնարավորություն ընձեռելով ամբողջացնելու գեղարվեստական կերպարն ու ընկալելու զարգացման մեջ: Այսպես՝ եթե կողային ձախ տեսանկյունից առավելապես ուժգնանում և ակնհայտորեն գերիշխում է հորինվածքի հորիզոնական դինամիկ առանցքը, իսկ աջ դիտակետից վերջինիս հատում ու ընդմիջում է ուղղաձիգ անշարժ, ստատիկ առանցքը, ապա քանդակի ցածրից բացվող դիմային ասպեկտը վերջնականորեն մարում, կասեցնում է ձիու խանդաշատ, պոռթկուն շարժումը՝ մեր ուշադրությունը բնեռելով նրա ծանրակերտ մարմնի վրա:

Հուշարձանի կոմպոզիցիոն բարդ կառուցվածքը, տեսանկյունների և դիտակետերի հարստությունը Քոչարի կոթողում զուգորդված են կերպարային սակավաբան՝ ամփոփ ու հավաք բնութագրի հետ: Կուրորեն չհետևելով բնությանը, արվեստագետը միևնույն ժամանակ կարողացել է գտնել գեղարվեստական ընդհանրացման և պայմանաձևի այն աստիճանը, երբ նույնիսկ համամասնությունների բացահայտ խաթարումը մեզ դժգոհելու կամ առարկելու առիթ չի տալիս, այլ միանգամայն տեղին է թվում, քանի որ ստեղծագործական ճկուն մտքի և գեղարվեստական զարգացած լեզվի արգասիք է: Քոչարը գործ ունի խոշոր, լայնարձակ ծավալների ու հարթությունների հետ և միայն անհրաժեշտության դեպքում է քանդակն աշխուժացնում գրաֆիկորեն եզրագծված, դրվագված կամ ընդլուզված հատվածներով: Կոկ ու կորնթարդ ձևերի ներհակ համադրությունը հատկապես տպավորիչ է ձիու կերպարում, որի պարզորոշ ուրվապատկերը հաստատում է ֆիզիկական ուժի, զորության գաղափարը, այնինչ կենդանու փարթամ բաշի հերափնջերը և աղբյուրացած թավախիտ պոչը (ըստ ավանդության, դրանով էր նա ջնջում թշնամիներին) արտահայտում են շարժման, հոգևոր ազատության գաղափարը:

Արձանը դրված է բազալտե անկոփ խոշոր քարերից կառուցված համեմատաբար ցածր ու վարձիգ պատվանդանի վրա, որի մոխրագույն մուգ երանգները ներդաշնակում են մետաղի թաղանթապատ մակերեսի հետ: Եթե քանդակի գիպսե առաջին տարբերակում ուղղաձիգ բարձր (գրեթե 7 մետր), երկրաչափական պարզ ձև ունեցող քառանիստ խարիսխը սոսկ հենարանի դեր էր կատարում ու բովանդակային իմաստ չէր կրում, ապա բնական տեսք ստացած՝ սևակուճ անտաշ քարերից բարդված ժայռանման ներկայիս պատվանդանն ընկալվում է որպես հուշակոթողի անկողնուպտելի, անբաժան մասը, որը ոչ միայն ճարտարապե-

տական կոնստրուկտիվ գործառույթ ունի, այլև նպաստում է քանդակի գեղարվեստական գաղափարի բազմակողմանի և լիակատար դրսևորմանը: Կոմպոզիցիոն կառուցվածքն այնպիսին է, որ քարափի եզրին ծառացած Դավթի որձաձին չի կարող վար դնել դիմացի ոտքերը: Ուղղանկյուն նախորդ պատվանդանի համեմատությամբ, որի լայնարձակ հարթակի վրա ազատ կանգնած էր քանդակախումբը, բազալտե վերջին պատվանդանը չափազանց նեղ է կենդանու հաղթակերտ մարմնի համար: Մակայն Քոչարը գիտակցաբար էր այդպես վարվել: Մի կողմից նա ցանկանում էր էլ ավելի շեշտել ձիու անկայուն, դյուրաշարժ դիրքը՝ ողջ հորինվածքի կարևոր հանգույցն ու կիզակետը, իսկ մյուս կողմից՝ խտացնել և երևութապես արտահայտել այն միտքը, թե երկրի ու ժողովրդի գորությունը միշտ չէ, որ չափվում է դրանց մեծությամբ և որքանությամբ: Իր որոշումը քանդակագործը հիմնավորել ու պարզաբանել է Վալդեմար Ժորժի գրքույկի թարգման Թորոս Թորոնյանի հետ զրուցելիս. «Այո, փոքր է «Մասունցի Դավիթ»ի պատուանդանը: Պատուանդանից դուրս են մնացել հրեղեն ձիու ոտքերը: Հայաստանը փոքր է: Ես կարող էի վիթխարի ժայռաբեկորներ բերել ու պատուանդան դարձնել մեր Դավիթի համար: Քարաշատ Հայաստանում քար չէր պակասի. բայց արի ու տես, որ հրեղեն ձիու ոտքերը պատուանդանից դուրս են մնացել: Ուզեցել եմ ասել, որ փոքր է Հայաստանը, մեր ժողովրդի մի կարեւոր հատուածը դուրսն է մնացել: Բայց լավ դիտիր Դավիթն ու իր ձին. մեծ է մեր ժողովրդի հոգեկան կորովն ու թռիչքը»²¹⁴:

Տեխնիկական որոշ խնդիրներ առաջացան ձիարձանը պատվանդանին ամրացնելու կապակցությամբ: Անհրաժեշտ էր մետաղյա ծանրաձույլ քանդակն այնպես առկցել հենարանին, որպեսզի բացառվեր «պղնձե հեծյալի» կործվելու, շուտ գալու հնարավոր վտանգը: Բեռնվածության զգալի մասը պետք է ընկներ ձիու հետին ոտքերի վրա, սակայն դրանով բավարարվելը կնշանակեր ռիսկի ենթարկել ողջ նախագիծը: Այդ իսկ պատճառով երկու բնական հենակետերին արվեստագետն ավելացրեց ևս մի հենակ: Կենդանու լայնածավալ լալիքներով վայր իջնող և վերնամասում դեկորատիվ շրջանակով պարուրված փարթամ պոչն էլ հենց դարձավ այդ երրորդ՝ առավել կայուն, հուսալի կետը:

Ոչ թե պարզապես անցումնային՝ արձանը պատվանդանին կապակցող օղակ, այլև խորհրդալի բաղադրիչ տարր է ձիու ոտքերի մոտ տեղադրված՝ ջրով առլեցուն «համբերության թասը»: Հուշարձանը երիզող կլոր ավազանի մեջ պատվանդանի դարիվեր որմով ներքև են թափվում ջրի շիթերը՝ «հարազատ այն տարերքը, որին էպոսի հերոսները պարտավոր էին իրենց ծագումով, որտեղից նրանք քաղում էին իրենց գերմարդկային ուժը»²¹⁵:

Ինչպես տեսնում ենք, կոթողի խնամքով մտածված, իրար սերտորեն փոխկապված բոլոր մանրամասները գեղարվեստական բարեձև ու պատկերալի միասնություն են կազմում, ինչն էլ, ի վերջո, կանխորոշեց «Մասունցի Դավթի» աննախադեպ հաջողությունը և հիրավի համընդհանուր ճանաչումը: Արձանը ոչ միայն հեշտորեն ընդգրկվեց կայարանամերձ հրապարակի մինչև այդ արդեն ձևավորված ճարտարապետական ու տարածական տեսարանում, այլև տեղացի բնակիչների ու Հայաստան ժամանած հյուրերի աչքում և մտապատկերում տպավորվեց որպես հայկական մայրաքաղաքի մի հատուկ նշան: Ոնց Ֆալկոնեի

²¹⁴ Տե՛ս՝ *Ճորժ Վալունկար*, Քոչար եւ նկարչությունը տարածութեան մեջ..., էջ 13:

²¹⁵ *Тревел Камилла*. Водный Антей армянского эпоса / Коммунист, Ереван, 1939, 16 сентября.

“պղնձե հեծյալը” դարձավ Պետրոս Մեծի կառուցած Սանկտ Պետերբուրգի խորհրդանիշը, նույնպես և Քոչարի հուշակոթողը դարձավ նորացած Երևանի հանգունակ նշանակը:

Քոչարի անունն առհասարակ գուցարդվում էր Մասունցի Դավթի ձիարձանի հետ, որն ստվերոտեց նրա ծեփածո, մետաղակուտ ու քարաքանդակ այլ աշխատանքները: Միգուցե մասամբ դա էր պատճառը, որ ինչպես հարկն է չգնահատվեցին և հասարակական լայն արձագանք չստացան հետագայում վարպետի կերտած “Կիբեռնետիկայի մուսան” (1972, ճարտարապետ՝ Հայկազ Քոչար) և 1975-ի դեկտեմբերի 20-ին Երևանում բացված՝ վաղ միջնադարի հայ սպարապետ, ազգային հերոս Վարդան Մամիկոնյանի ձիարձանը (ճարտարապետ՝ Ստեփան Քյուրքյան):

Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի բակում տեղադրված, ցածր խարսխի, նեղ պատվանդանի վրա ամրացված “Կիբեռնետիկայի մուսան” պլաստիկական ինքնատիպ հորինվածք է: Այստեղ անսովոր կերպով համադրվել են մի կողմից անտիկ-դասական քանդակի հղկված, համաչափ ձևերը, իսկ մյուս կողմից՝ Երվանդ Քոչարի փարիզյան շրջանին հատուկ նորարարական մոտեցումները: Կիսապատկած մերկ կնոջ դիրքը, նրա կեցվածքը, պատկերագրական տիպն ամբողջությամբ հարաբերվում ու գուցարդվում են հին հունական առասպելներից և արվեստի պատմությունից բոլորիս ծանոթ Ափրոդիտեի, Դանայայի կամ Լեդայի կերպարների հետ: Բայց Քոչարի այս պղնձակոփ մեծադիր (188x352x175 սմ) ստեղծագործության մեջ գեղեցկության դասական իդեալը կտրականապես տարափոխվել է: Կնոջ “երկատված” տեղ-տեղ թափանցուն, մասամբ դատարկ, սնամեջ ֆիգուրը միաժամանակ օժտված է և զգայական կենդանի շնչով, և արհեստածին, ավտոմատ սարքի մեքենայական անզգայությամբ:

Վարդան Մամիկոնյանի՝ նույնպես պղնձե կռածո քանդակը, որը չափսերով (850x750x150 սմ) գրեթե չի զիջում “Մասունցի Դավթին”, վեր է խոյանում դեղնավուն ավազաքարի սալերով երեսված պատվանդանին: Միանգամից նկատենք, որ թե՛ վերջինիս շեղությամբ ընկած սեղանաձև զանգվածը, թե՛ քարի գույնն ու հատիկավոր անողորկ մակաշերտը բավականաչափ դաշնավորված չեն պղնձակոփ քանդակի հետ: Այնքան էլ համոզիչ չեն նաև հուշարձանի տեղադրությունն ու դիրքավորումը, որոնց անվրեպ, ճիշտ ընտրությունը, ինչպես հայտնի է, կարևոր նշանակություն ունի կոթողային քանդակի ընկալման համար: Հուշարձանը տեղակայված է համեմատաբար նեղ, մայթերին կպած, բանուկ մայրուղիներով շրջափակված, Օղակաձև զբոսայգու ծառերով ծածկված հարթակի վրա և, ըստ էության, զուրկ է հեռադիր դիտակետերից, թեև բավականին պատկառելի՝ 17 մետրանոց բարձրություն ունի: Մակայն կարծում ենք, որ “Վարդան Մամիկոնյանի” հանդեպ զուսպ ու վերապահ վերաբերմունքի բուն շարժառիթն այն բացահայտ հակասությունն է, որն ընկած է հայոց պատմության առավել հարզված այրերից մեկի կերպարի մասին մեր պատկերացումների և Քոչարի քանդակում այդ նույն կերպարի գեղարվեստական ոչ այնքան սովոր մեկնաբանության միջև: Հայ ժողովրդի համար պատմական բախտորոշ դեր կատարած, մեր ազգի լեզվական, կրոնական ու մշակութային ինքնությունը հաստատած Ավարայրի ճակատամարտի (մ. թ. 451) առաջնորդ և սուրբ նահատակ Վարդան Մամիկոնյանի արտաքինի մասին հավաստի, ստույգ տեղեկությունները

պակասավոր են: Ուստի ժողովրդի գիտակցության, նրա “կուլեկտիվ հիշողության” մեջ գորավարի կերպարը դարերի ընթացքում ձեռք է բերել առասպելահյուս փառապսակ, դարձել առնագեղ վիպական ֆիգուր: Եվ հանդիսականն իրավագոր էր ակնկալելու, որ անդրադառնալով այդ կերպարին Քոչարը նրան ևս կօժտի Անթեոսի դյուցազնական անպարտելի ուժով ու գորությամբ, ինչպես նա վարվել էր Սասունցի Դավթին ներկայացնելիս: Բայց սպասելիքները չարդարացվեցին: Հավանաբար, խուսափելով կրկնությունից, արվեստագետն սկզբունքորեն այլ լուծում գտավ. հրաժարվելով կերպարային և բովանդակային բազմանիստ ու բարդ բնութագրումից, նա ուշադրությունը կենտրոնացրեց հեծյալի կրքոտ խոյացման, նրա գահավեժ շարժման վրա: Քոչարին մշտապես գրավող գեղարվեստական ոճավորման եղանակը տվյալ դեպքում բացառիկ, գրեթե ինքնաբավ դրսևորում ստացավ:

Քանդակը ոչ այնքան մոնումենտալ, որքան... դեկորատիվ տպավորություն է թողնում: Կարծես շախմատային նրբատաշ ֆիգուր լինի ձիու գլուխը, չափազանց մանրագեղ է թվում հեծյալը, և եթե արձանը փոքրաչափ լիներ, ապա անպայման հանդիսատեսն այն ափի մեջ կառներ ու կշոշոփեր, շուտումուտ կտար աչքերի առաջ՝ զննելով բոլոր մանրամասները: “Սասունցի Դավթին” բնորոշ պլաստիկական հյութեղ մշակումները Վարդան Մամիկոնյանի արձանում փոխարինվել են ոճավորական կոկիկ ձևերով: Ուրվագծային սկզբունքով լուծված, գրաֆիկական և դրվագակերտ հատու տարրերով նախշագարդված հուշակոթողը երկկողմանի մեծադիր խորաքանդակ է հիշեցնում: Կենդանու բարակ, գեղաձույլ ոտքերը, ոլորուն պոչը, սպարապետի ուսերից կախված պատմուճանի ծալքերը, դիմաստվերային սուր շեշտադրումները քանդակին դեկորատիվ նրբաճաշակ տեսք են հաղորդում: Եվ դա առարկում չէր հարուցանի, եթե արձանը մտածված լիներ որպես պատմական կոնկրետ դեմքից, իրական դեպքից վերացարկված՝ այլաբանական “հաղթանակների” ոգուն համահունչ ազատ հորինվածք:

Ինքը՝ Քոչարն էլ չէր թաքցնում, որ “Վարդան Մամիկոնյանում” առավելապես ֆորմալ, ձևական նպատակներ է հետապնդել: Պատահական չէ, որ հուշարձանի գլխավոր առավելություններից մեկը նա համարում էր կոթողային քանդակագործության այդ տեսակի մեջ իսկապես հազվադեպ, եթե չասենք՝ եզակի այն հանգամանքը, որ ձիու չորս ոտքն էլ պոկված է պատվանդանից, իսկ կենդանու ֆիգուրը, կարծես, ճախրում է օդում, հենվելով միայն մեկ կետի՝ փոշու մետաղյա քուլայի վրա: Սակայն Քոչարի ստեղծագործությունը չի կարելի գնահատել բացառապես ֆորմալ չափանիշներով, քանի որ իր դեկորատիվ արժանիքներով հանդերձ գեղարվեստական արտահայտման ձևն ու կերպն այստեղ, վերջին հաշվով, չեն խափանում քանդակի հիմնական գաղափարը: Լեռնային գահավանդակից դեպի հարթավայր, թշնամու անհամար գորքին ընդառաջ, առանց վահանի, բաց երեսկալով վար է սլանում նժույզը հեծած հայ սպարապետը՝ ձախ ձեռքի վստահ շարժվածքով մարտի կանչելով զինակիցներին, իսկ մյուս ձեռքով վեր պարզելով իր հաղթական խաչաձև սուրբ: Եթե քանդակին նայենք աջ կողմից, ապա կտեսնենք, թե ինչպես են հատվում ու խաչավորվում նաև հերոսի բազուկները: Հավատո հանգանակը, խղճի ազատությունը, ազգի հոգևոր անկախությունը՝ ահա թե ինչն էր առաջին հերթին պաշտպանում Վարդան Մամիկոնյանը, և այդ խորհուրդը քանդակագործը մարմնավորել է “խաչակնքելով” հերոսին, խաչաթն ուրվագծի մեջ ներառելով նրա կերպարը:

“Վարդան Մամիկոնյանը” դարձավ Քոչարի նշանակալից վերջին աշխատանքը, նրա ստեղծագործական երկարուձիգ ճանապարհի կարևոր հանգույցներից մեկը:

XX դարի հայ կերպարվեստում վարպետը շատ խոր հետք է թողել: Քոչարն այն արվեստագետներից է, որոնց տաղանդի ու վաստակի չափն իսկապես գիտակցվում և գնահատվում են միայն նրանց անցավոր կյանքի ավարտից հետո: Իր ստեղծագործության կերպարային բովանդակությամբ, գեղարվեստական մտածողությամբ ու արտահայտչական լեզվով նա ամբողջապես և անվերապահ պատկանում էր այն հակասական դարաշրջանին, որի տարեկիցն էր ծննդյան փաստով, բայց նրա արվեստը մի “բաց մատյան” է, որի էջերը թռուցիկ նայվել ու թերթատվել են, սակայն առ այսօր հանգամանորեն և լրջամտաբար չեն հետազոտվել: Քոչարը, անշուշտ, նախընթաց դարի առավել խոշոր և ինքնատեսակ վարպետներից է: Ու թեպետ նրա անունն առայժմ Հայաստանից դուրս լայն հռչակ չունի, բոլոր հիմքերը կան կարծելու, որ վաղ թե ուշ այն ձեռք կբերի նաև միջազգային ճանաչում: Դրա առաջին գրավականն էր 1989-ին Գարիկ Բասմաջյանի փարիզյան պատկերասրահում կայացած, մի քանի ամիս տևած և մասնագետների հետաքրքրությունը շարժած ցուցահանդեսը²¹⁶:

Իհարկե, սխալ կլիներ ասել, թե իր կենդանության օրոք Քոչարն անտեսվել կամ չի գնահատվել: Նա ընդունվել է Փարիզի գեղարվեստական վերնախավի, ընտրանու կողմից, արժանացել խորհրդային երկրում արվեստագետներին շնորհվող բարձրագույն՝ ԽՍՀՄ ժողովրդական նկարչի պատվավոր կոչմանը, մի շարք պարգևներ ու վաստակագրեր ստացել, նրան հարգանքով և պատկառանքով “վարպետաց վարպետ”՝ Մաեստրո են կոչել: Իսկ նրա մահից հինգ տարի անց՝ 1984-ին, Երևանում դռները բացեց Երվանդ Քոչարի թանգարանը, որի երկարամյա տնօրեն Լալա Մարտիրոսյան-Քոչարի անխոնջ գործունեության շնորհիվ այն աստիճանաբար դարձավ մեծ արվեստագետի ստեղծագործական ժառանգության ոչ միայն պահոց ու ցուցասրահ, այլև գիտական հետազոտման եզակի կենտրոն, որտեղ հետևողական աշխատանք է տարվում Քոչարի նկարների ու քանդակների փորձաքննության և գատորոշման, ցուցակագրման և քարտավորման, նրա կյանքի ու ստեղծագործության լիակատար տարեգրությունը և մատենագիտական տեղեկատուն կազմելու, օրագրերն ու նամականին, հողվածներն ու ելույթները, խոհագրությունները և գրական փորձերը հրատարակելու նպատակով²¹⁷:

Վարպետին նվիրված այս մենագրությունը ուսումնասիրվող նյութը սպառելու և վերջնական կտրուկ դատողություններ ու եզրահանգումներ անելու հա-

²¹⁶ St' u. Kotchar (1899–1979). Exposition retrospective: 18 mai – 9 septembre 1989. Paris, Galerie Garig Basmadjian, 1989.

²¹⁷ Քոչարը գրական արտասովոր ձիրք ու շնորհք ուներ, լավ էր զգում խոսքը և կարողանում էր այն տեղին բանեցնել: Վարպետի երևանյան թանգարանում առանձին պահվում են նրա արձակ, չափածո և թատերագրական տեքստերը: Մասնագետներն ու ընթերցասեր հանրությունը ուշադրությամբ թերթեցին մի քանի տարի առաջ Անատոլի Հովհաննիսյանի և Լալա Մարտիրոսյան-Քոչարի խնամքով կազմած և խմբագրած ժողովածուն, որն ընդգրկում է վարպետի տեսական, քննադատական, հրապարակախոսային և գեղարվեստական հատընտիր գրվածքները (տե՛ս. Քոչար Երվանդ, Ես և դուք, Երևան, 2007):

վակնում չունի, այն ընդամենը “Քոչարի ուղղության” արված ևս մի քայլ է²¹⁸: Ու էթե այստեղ արտահայտված մտքերը, դիտարկումները, ենթադրումները և կոահումները հետաքրքրեցին ընթերցողներին կամ նրանց ինքնուրույն մտորելու ու խորհրդածելու առիթ տվեցին, ապա մեր առջև դրված խնդիրը կհամարենք իրականացված:

Արարտ Ագասյան – В пространстве Ерванда Кочара. – Состоящий из трех частей очерк посвящен жизни и деятельности одного из крупнейших армянских художников XX века – выдающегося скульптора, живописца и графика Ерванда Кочара (1899-1979). Последовательно рассматриваются основные этапы и характерные особенности творческой эволюции мастера, подробно анализируются его наиболее интересные и значительные произведения. Большое внимание уделяется парижскому периоду в искусстве Кочара, отмеченному поисками новых, нетрадиционных форм и методов художественного высказывания, – поисками, которые велись им в общем русле русского и западноевропейского авангардизма.

В данном сборнике вниманию читателей предлагается третья часть очерка, которая рассказывает о заключительном – ереванском периоде творчества армянского мастера.

Ararat Aghasyan – In Yervand Kochar’s space. – The three-part essay presents the life and activity of one of the greatest Armenian artists of the XX century – the outstanding sculptor, painter and graphic artist Yervand Kochar (1899-1979). The major phases and specific features of the master's creative evolution are sequentially considered, detailed analysis of his most interesting and remarkable works is conducted. Considerable attention is given to the Parisian period in Kochar’s art, marked by quests of novel, non-traditional forms and methods of artistic utterance – quests, conducted in line with the general trends of Russian and west-European avant-garde.

In this collection, the readers are offered the third part of the essay, telling about the Armenian period in the career of the master.

²¹⁸ Ներկայիս ակնարկից բացի, Երվանդ Քոչարի արվեստին մենք անդրադարձել ենք նաև հետևյալ հոդվածներում ու հրատարակումներում. **Արարտ Ագասյան**, Երվանդ Կոչար / Творчество, Москва, 1990, № 1, с. 3–5, **Արարտ Ագասյան**, Парижский период творчества Ерванда Кочара / Пути и перепутья. Материалы и исследования по отечественному искусству 1920–1930-х годов. Москва, 1994, с. 168–185, **Ararat Aghassian**, Yervand Kotschar / Armenien. Wiederentdeckung einer alten Kulturlandschaft. Museum Bochum, 1995, S. 384–385, **Արարտ Ագասյան**, О некоторых предпосылках и художественном своеобразии Живописи в пространстве Ерванда Кочара / Ակադեմիկոս Ռուբեն Չարյանի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտաժողով: Ջեկուցումների թեզիսներ: Երևան, 1999, էջ 38–39, **Արարտ Ագասյան**, Երվանդ Կոչար. Երևան, 1999, **Մրաշիտ Միաշույն**, Երվանդ Քոչար / Երվանդ Քոչար: Հոբելյանական ցուցահանդեսի կատալոգ, Երևան, 2010, առանց էջակարգման:

ԱՐԱՄ ՍԱԹՈՒՆՑԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ
(նվիրվում է ծննդյան 100-ամյա հոբելյանին)

ԱՆՆԱ ԱՍՍՏՐՅԱՆ

Ճիշտ 100 տարի առաջ՝ 1913 թվականի փետրվարի 18-ին Հայաստանից շատ հեռու, Թուրքմենիայի Մերվ քաղաքում, բնիկ զանգեզուրցի՝ Գորիսի շրջանի Խնձորեսկ գյուղից սերող, բայց 18 տարի Բաքվում աշխատած, իսկ 1902-ին միջինասիական Մերվ քաղաքում բնակություն հաստատած Մովսես Սաթյանի ընտանիքում լույս աշխարհ է գալիս երեք որդիներից կրտսերը՝ Արամը:

Ի՞նչ իմանար նորածինը, որ տարիներ հետո պիտի տեղափոխվեր հայրենիք՝ Հայաստան, և եղբոր՝ Աշոտ Սաթյանի հետ ողջ կյանքը նվիրեր հայրենական երաժշտական մշակույթի զարգացման գործին:

Ի՞նչ իմանար, որ տարիներ անց՝ 1945-ից, պիտի Սաթյան ազգանունը փոխարիներ իր նախնյաց՝ Սաթունց ազգանվամբ:

Ի՞նչ իմանար, որ իր ծննդից 34 տարի անց արդեն Երևանում պիտի լույս աշխարհ գար Արամ Սաթյան երկրորդը՝ իր տաղանդավոր որդին, Սաթյան երաժշտական գերդաստանի արժանի շառավիղը:

Ի՞նչ իմանար, որ իր երաժշտությունը դառնալու էր հարազատ ժողովրդի համար այդքան սիրելի, իսկ գործընկերների կողմից՝ այդքան գնահատված:

Ի՞նչ իմանար, որ իրեն սպասում է մի կյանք, որը կարող է օրինակ ծառայել յուրաքանչյուր հայ երաժշտի համար...

Վաղ են ի հայտ գալիս երաժշտական մթնոլորտում մեծացող Արամ Սաթյանի երաժշտական ընդունակությունները, որոնք փոքրիկին էին փոխանցվել ծնողներից, հայրը նվագում էր թառ և հարմոն, իսկ մայրը՝ Վարսենիկը, երգում և, հատկապես լավ էր կատարում օրորոցայինները²¹⁹: Ավագ եղբայրը՝ Պավելը, մանդոլինա էր նվագում, իսկ միջնակ եղբայրը՝ հետագայում հայտնի հայ կոմպոզիտոր և դիրիժոր Աշոտ Սաթյանը՝ շեփոր և դաշնամուր: Տանը հաճախակի կազմակերպվում էին ինքնագործ սիրողական երաժշտական երեկոներ, որոնցից մեկի ժամանակ յոթնամյա Արամն անսպասելիորեն վերցնում է մանդոլինան և լսողությամբ նվագում: Այդ պահից ևս մի երազանք ունի՝ դառնալ պրոֆեսիոնալ երաժիշտ: Մակայն երկար ժամանակ դա լոկ երազանք էլ մնաց, քանի որ Մերվում չկար որևէ պրոֆեսիոնալ ուսումնական հաստատություն, որևէ պրոֆեսիոնալ երաժիշտ, որի մոտ հնարավոր լիներ պարապել:

Գպրոցական տարիներին Արամը կազմակերպում է պատանի մանդոլինահարների խմբակ, որը հաճախ հանդես է գալիս ձեռնակություններում և դրպրոցական երեկոներին:

Կատարելագործելով կատարողական վարպետությունը, դառնալով լավ մանդոլինահար, սակայն չունենալով ստեղծագործական փորձ, չիմանալով անգամ նոտագրության հիմունքները, կողմնորոշվելով լոկ բնածին հոտառությամբ

²¹⁹ Ա.Սաթունցի մասին տե՛ս *Թ.Արազյան*, Արամ Սաթունց, Երևան, 1971: *Т. Аразян*, Арам Сатунц (Жизнь, деятельность, творчество), Ереван, 2003:

և ինտուիցիայով, պատանին հորինում է սեփական ստեղծագործություններ. մանդոլինայի համար գրում է գործիքային ոչ մեծ պիեսներ՝ “Վալս” և “Լեզգին-կա” պարերը:

1934-ին Արամն ընդունվում է Բաքվի երաժշտական տեխնիկում և սովորում կոմպոզիցիայի դասարանում՝ Գ.Բերնշտայնի ղեկավարությամբ: Ուսումնառության տարիներին նա գրում է երգեր և ռոմանսներ, պրեյլուդներ դաշնամուրի համար, ջութակի համար “Ինտրոդուկցիա և պար”, որոնք առաջին անգամ կատարվում են 1937-ին Բաքվի պետական կոնսերվատորիայի դահլիճում, երաժշտական տեխնիկումի կոմպոզիցիայի դասարանի ուսանողների հաշվետու համերգի ժամանակ: Ուսումնառությանը զուգահեռ նա աշխատում է Ադրբեջանի ռադիոկոմիտեում՝ սկզբում որպես մենակատար (մանդոլինա և դուրա), այնուհետև լարային նվագախմբի ղեկավար ու երաժշտական խմբագիր:

Ուսմանն ու ռադիոյում աշխատանքին զուգընթաց՝ մի քանի տարի Սաթյանը ղեկավարում է Կարմիր Բանակի և ավիացիայի Սպայի տան գեղարվեստական ինքնագործունեությունը, կազմակերպում երաժշտական խմբակներ: Նա ստեղծում է սիրողական ինքնաստիպ գործիքային անսամբլ՝ ժողովրդական գործիքների տրիո (մանդոլինա, դուրա, կիթառ), որը 1934-ին Թբիլիսիի Շ.Ռուսթավելու անվան օպերայի և ֆալետի թատրոնում մասնակցում է գեղարվեստական ինքնագործունեության Անդրկովկասյան օլիմպիադային և գրավում առաջին տեղը: Մեկ տարի անց Տրիոն Մոսկվայի Միությունների տան Սյունազարդ դահլիճում մասնակցում է գեղարվեստական ինքնագործունեության Համամիութենական օլիմպիադային՝ կրկին գրավելով առաջին տեղը:

Ադրբեջանի արվեստի գործերի վարչությունը 1938-ին երաժշտական տեխնիկումի շրջանավարտ Արամին ուղարկում է Գրոզնի՝ Չեչեն-Ինգուշեթիայի դրամատիկական թատրոնին կից ժողովրդական գործիքների ազգային նվագախումբ ստեղծելու նպատակով: Կարճ ժամանակահատվածում նա կազմակերպում է այն, ըստ էության, դառնալով ստեղծողը ոչ թե լսողությամբ, այլ նոտաներով նվագող ժողգործիքների առաջին անսամբլի: Աշխատելով որպես թատրոնի երաժշտության բաժնի վարիչ, դիրիժոր և կոմպոզիտոր, Ա.Սաթյանը հավաքում է, նոտագրում և ազգային նվագախմբի համար մշակում չեչենական, ինգուշական ժողովրդական երգեր ու պարեր, հաճախակի այդ մշակումներով հանդես գալիս համերգներին:

Հաջողությամբ կատարելով առաջադրանքը՝ Արամ Սաթյանը վերադառնում է Բաքու, 1938-ին ընդունվում Պետական կոնսերվատորիա՝ դառնալով Բորիս Ջեյդանի կոմպոզիցիայի դասարանի ուսանող: Կատարելագործելով իր կոմպոզիտորական գրելաոճը, նա գրում է մի շարք ստեղծագործություններ, այդ թվում Լեռնոնտովի խոսքերով երկու ռոմանս՝ “К себе” և “Как солнце зимнее прекрасно”, նվիրված բանաստեղծի մահվան 100-ամյա տարելիցին: 1940-ին նա կազմում է և Բաքվում հրատարակում մանդոլինայի և քառալար դուրայի համար պիեսների ժողովածուն: Դա գեղարվեստական ինքնագործունեության կոլեկտիվներում և ժողովրդական գործիքների ուսումնասիրության բնագավառում Սաթյանի կատարած բազմամյա աշխատանքի արդյունքն էր: 1939-ին նա դառնում է Ադրբեջանի կոմպոզիտորների միության երիտասարդական սեկցիայի անդամ: Սեկցիայում կատարվում են նրա պիեսները՝ “Օրորոցային”, “Ինտրոդուկցիա և պար”, “Պարային”, ինչպես նաև հայկական, չեչենական, ինգուշական ժողովրդա-

կան երգերի մշակումներ: Հենց այս տարիներին Արամ Սաթյանն առաջին անգամ սկսում է երաժշտություն գրել Բաքվի հայկական դրամատիկ թատրոնի մի շարք ներկայացումների համար: 1938-ին հայկական թատրոնը հաջողությամբ բեմադրում է Արամ Սաթյանի “Ատամնաբույժն արևելյան” երաժշտական կոմեդիան՝ ըստ Հակոբ Պարոնյանի համանուն կոմեդիայի, որը ջերմորեն ընդունվեց Բաքվի երաժշտական հասարակայնության կողմից:

1940-ին Բաքվում հրատարակվում է ռուսական երաժշտական գործիքների համար Սաթյանի պիեսների և այլ կոմպոզիտորների ստեղծագործությունների փոխադրությունների առաջին ժողովածուն:

1941-ի ամռանը սկսվում է Հայրենական մեծ պատերազմը. ընդհատվում է Սաթյանի ուսումնառությունը Բաքվի կոնսերվատորիայում: Պատերազմի առաջին իսկ օրերից նա Սովետական բանակի շարքերում է, 89-րդ հրաձգային հայկական դիվիզիայի կազմում, որտեղ հիմնական ծառայությանը զուգահեռ կազմակերպում է 15 երաժշտից բաղկացած կարմիրբանակային ինքնագործ էստրադային նվագախումբ, տալիս համերգներ զինվորական մասերի և ստորաբաժանումների ակումբներում, հոսպիտալներում կատարում սովետական հեղինակների երգեր և քայլերգեր, իր արվեստով ոգևորում զինվորներին՝ դեպի մեծ ու հերոսական սիրանքներ, նրանց ներշնչում քաջության ու համարձակության զգացում, հավատ հաղթանակի հանդեպ: Սաթյանը գրում է մի շարք հայրենասիրական երգեր՝ “Մահ դահիճներին”, “Հաղթանակը մերն է”, “Առաջ դեպի հաղթանակ”, “Փռոք Սովետական բանակին” և այլն, որոնք կատարվում են ու լայն արձագանք գտնում մարտիկ-ունկնդիրների շրջաններում: Զորացրումից հետո Ադրբեջանական ԽՍՀ արվեստի գործերի վարչությունը նրան աշխատանքի է գործուղում Լեռնային Ղարաբաղ՝ Ստեփանակարտ, որպես Գորկու անվան հայկական դրամատիկական պետական թատրոնի երաժշտական մասի վարիչ և կոմպոզիտոր: Ստեփանակերտի դրամատիկական թատրոնի համերգային մեծ խմբով Սաթյանը շրջագայում է Լեռնային Ղարաբաղի գյուղերով և շրջաններով, տալիս բազմաթիվ համերգներ, հավաքում և գրառում հայ ժողովրդական երգեր, թատերական ներկայացումների համար գրում երաժշտություն՝ Դ.Դեմիրճյան՝ “Քաջ Նազար”, Ալ.Շիրվանզադե՝ ”Պատվի համար”:

1944-ին Ա.Սաթյանն իր ավագ եղբոր, արդեն հանրաճանաչ կոմպոզիտոր Աշոտ Սաթյանի առաջարկով փոխադրվում է Երևան և ընդունվում Կոնսերվատորիայի կոմպոզիցիայի դասարանը: Ուսման տարիներին նա հաջորդաբար ստեղծում է պրելյուդներ և “Սոնատ-պոեմը” դաշնամուրի համար, “Զանգեզուր” սիմֆոնիկ պոեմը, երգեր և ռոմանսներ: Առավել հայտնի են մենակատարների և ժողգործիքների անսամբլի համար գրված՝ Ա.Սաթյանի “Կոլխոզի աղջիկ”, “Զանգեզուրի աղջիկ”, “Խնջույքի” երգերը: Ուսմանը զուգահեռ 1945-ից Ա.Սաթյանն աշխատում է “Հայֆիլմ” կինոստուդիայում որպես երաժշտական բաժնի վարիչ՝ մասամբ գրելով, իսկ հիմնականում ձևավորելով մի շարք կինոնկարների և կինոակնարկների (“Մեսրոպ Մաշտոց”, “Խաչատուր Աբովյան”, “Սևանի կասկադը”, “Էջմիածին”, “Հայերի վերադարձը”, “Սովետական Հայաստան”) երաժշտությունը:

Ծանրակշիռ է Ա.Սաթյանի դերը ռադիոբեմականացումների և թատերական ներկայացումների երաժշտական ձևավորման բնագավառում: Նա կատարել է բազմաթիվ դրամատիկ ներկայացումների երաժշտական ձևավորումներ ոչ

միայն Երևանում, այլև Մոսկվայում, Բաքվում, Թբիլիսիում, Ստեփանակերտում, Լենինականում և այլուր: 1949-ից մինչև 1974-ը Ա.Սաթունցն աշխատում է Հայաստանի ռադիոյի և հեռուստատեսության պետական կոմիտեում, սկզբում որպես երաժշտական խմբագրության պատասխանատու խմբագիր, ապա երաժշտական ձևավորումների խմբագրության պատասխանատու խմբագիր: 1951-ին Ա.Սաթունցն ընդունվում է Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ: Սկսած 1951-ից կոմպոզիտորը մեծ ուշադրություն է դարձնում երեխաների գեղարվեստական դաստիարակության հարցերին: Տարբեր տարիների “Հայպետհրատը” հրատարակել է Ա.Սաթունցի կազմած դպրոցական և պիոներական երգերի երեք ժողովածու:

Հիրավի անուրանալի է Արամ Սաթունցի դերը հայ երաժշտական մշակույթի զարգացման գործում: Նրա բազմարդյուն գործունեությունն ընթացավ մի քանի ուղղություններով՝ յուրաքանչյուրում արձանագրելով նշանակալի ձեռքբերումներ: Դրանք են՝

- ա) ստեղծագործական գործունեությունը
- բ) երաժշտական-հասարակական գործունեությունը
- գ) կատարողական գործունեությունը:

Ա.Սաթունցն այն եզակի կոմպոզիտորներից է, ովքեր ունեն իրենց ուրույն ձեռագիրը՝ մի քանի տակտ լսելուց հետո արդեն հասկանալի է, թե ով է ստեղծագործության հեղինակը: Նրա երաժշտությունը մի կողմից՝ խարսխված է ժողովրդական ստեղծագործության վրա, մյուս կողմից՝ առանձնանում է մեղեդիական շռայլությամբ: Պատահական չէ, որ նրա երգերն ու ռոմանսները ժամանակին մեծ ժողովրդականություն են վայելել, քանի-քանի սերունդներ են կյանք մտել այդ երաժշտության ուղեկցությամբ՝ շատ անգամ չիմանալով իսկ դրանց հեղինակին: Իսկ Հայկական հեռուստատեսությունը քառորդ դար իր երեկոյան հաղորդումները եզրափակում էր “Միրո վալսով”: Հարուստ է կոմպոզիտորի գեղարվեստական աշխարհը. մի կողմից՝ նուրբ քնարականություն, մյուս կողմից՝ ակտիվ արձագանք իր ժամանակի արդիական պրոբլեմներին և իրադարձություններին:

Կոմպոզիտորը թողել է բազմաժանր երաժշտական ժառանգություն: Նրա սիմֆոնիկ ստեղծագործությունը ներառում է “Զանգեզուր” պոեմը սիմֆոնիկ նվագախմբի համար (1942), “Հայկական ֆանտազիան” սիմֆոնիկ նվագախմբի համար (1960), “Ռապսոդիան” սիմֆոնիկ նվագախմբի համար (1960), Երկու վալս սիմֆոնիկ նվագախմբի համար (1967), “Լուսնի ճառագայթները” հնգամաս խորեոգրաֆիկ պատկերները սիմֆոնիկ նվագախմբի համար (1988) և “Հավերժ հիշողություն” դրամատիկ պոեմը սիմֆոնիկ նվագախմբի համար՝ նվիրված Հայաստանի երկրաշարժի զոհերի հիշատակին (1988):

Կոմպոզիտորի ստեղծագործական կյանքում ուրույն տեղ է գրավում նրա ստեղծագործական նվաճումներից մեկը՝ “Հայկական ֆանտազիան”: Այստեղ առավելագույնս դրսևորվեցին կոմպոզիտորի երաժշտական լեզվի առանձնահատկությունները՝ ամուր կապը ժողովրդական երաժշտության հետ, հայկական ազգային երգերի ու պարերի բնորոշ առանձնահատկությունների օրգանական մարմնավորումը սիմֆոնիկ նվագախմբի պարտիտուրում: Ինչպես հետագայում խոստովանել է կոմպոզիտորը՝ ինքը սովորաբար չի օգտագործում ժողովրդական մեղեդիներ որպես մեջբերում, բայց հենվում է դրանց ինտոնացիոն, մետրառիթմական, լադահարմոնիկ առանձնահատկությունների վրա: Իսկ Առոն Բաբա-

ջանյանը “Հայկական ֆանտազիայի” մասին նկատել է, որ “Սաթունցի “Հայկական ֆանտազիայում” զգացվում է հայ ժողովրդական երաժշտության ոգին”²²⁰: Այստեղ բնականաբար դրսևորվեց Սաթունցի ողջ ստեղծագործությանը բնորոշ կենսահաստատ ոգին:

Փողային նվագախմբի համար գրված Սաթունցի երկերն են՝ Քայլերգեր փողային նվագախմբի համար (1961) և Տոնական-պարային սյուիտ փողային նվագախմբի համար: Քառամաս Տոնական պարային սյուիտը, որը նվիրված է Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակին, գրվել է 1967-ին և առաջին իսկ կատարումից արժանի ճանաչում ձեռք բերել: Մեկ տարի անց՝ 1968-ին, մեծ հաջողությամբ հնչել է Մոսկվայում:

Ա.Սաթունցը, առաջինը հայ արվեստագետներից, 1974-ին պարզևատրվել է Ա.Վ.Ալեքսանդրովի անվան արծաթե մեդալով՝ մեծ հայրենասիրությամբ ու լավատեսությամբ հագեցած “Տոնական պարային սյուիտի” Աշոտ Գրաշու խոսքերով գրված “Փառք Սովետական բանակին” երգի համար:

Կոմպոզիտորի առավել նշանակալի վոկալ-սիմֆոնիկ ստեղծագործություններից են 1979-ին գրված “Վերածնված նաիրյան երկրի երգերը” վոկալ-սիմֆոնիկ շարքը մենակատարների, երգչախմբի և սիմֆոնիկ նվագախմբի համար և 1980-ին հորինված “Ժողովրդի սխրանքն ամահ է” կանտատը մենակատարների, երգչախմբի և սիմֆոնիկ նվագախմբի համար:

Մերը ժողովրդական երաժշտության և ժողովրդական գործիքների հանդեպ պայմանավորեց նաև նրա ժառանգության մեջ ժողգործիքների նվագախմբի համար ստեղծագործությունների առկայությունը՝ 1963-ին գրում է “Բարեկամության պար” ժողգործիքների անսամբլի համար և ”Մարտական պար” ժողգործիքների անսամբլի համար, 1970-ին՝ քառամաս “Տոնական Հայաստան” Սյուիտը խառը երգչախմբի և ժողգործիքների անսամբլի համար, իսկ 1987-ին՝ “Կոնցերտինոն” քանոնի և ժողգործիքների նվագախմբի համար: Ժողովրդական գործիքների համար Սաթունցն ունի նաև կամերային գործեր՝ խոսքը 1963-ին թառի համար գրված “Նոկտյուրնի” մասին է:

Ա.Սաթունցի ստեղծագործության վառ էջերից են նրա կամերային գործերը՝ 1937-ին գրված “Երեք պրելյուդ դաշնամուրի համար”, “Ինտրոդուկցիա և պար” ջութակի համար և “Զանգեզուրյան պար” դաշնամուրային տրիոն, Թեման վարիացիաներով դաշնամուրի համար (1938), Սոնատ-պոեմը դաշնամուրի համար (1946) և “Էլեգիա” և “Վալս-կապրիս” երկու ջութակի և դաշնամուրի համար (1968):

Ա.Սաթունցի երգային ստեղծագործությանը բացահայտում է նրա ժամանակակիցների հարուստ ու գեղեցիկ հոգեկան աշխարհը և հանդիսանում այն հույզերի անմիջական արտահայտությունը, որոնցով ապրում է կոմպոզիտորը: Երգերն ու ռոմանսներն աչքի են ընկնում ձևի կատարելությամբ, մեղեդիների ու ռիթմերի բազմազանությամբ, հագեցած են քնարականությամբ և ջերմ հուզականությամբ: Երգերի ու ռոմանսների մեղեդին հիմնականում սահուն է, արտահայտիչ և հիմնված է հայ ժողովրդական երաժշտության ինտոնացիաների վրա: Ինքնատիպ հարմոնիկ լեզուն, որոշ պարայնությունը, ֆակտուրայի սրընթաց զարգացումն ամբողջությամբ վերցրած, այդ երգերին ու ռոմանսներին տալիս են կեն-

²²⁰ *Т. Аразян*, Арам Сатунц (Жизнь, деятельность, творчество), стр. 28.

սախինդ, լավատեսական բնույթ, որին նպաստում է նաև տեքստի բանաստեղծականությունն ու պատկերավորությունը: Հատկապես մեծ ժողովրդականություն են վայելում “Միրո վալս” (խոսք՝ Վ.Արամունու), “Բուժքույր” (խոսք՝ Ա.Դարբնու), “Իմ հայրենի Զանգեզուր” (խոսք՝ Վ.Արամունու), ”Իմ Ղարաբաղ” (խոսք՝ Ա.Գրաշու), “Փառք Սովետական բանակին” (խոսք՝ Ա.Գրաշու), “Հայրենիքիս առավոտը” (խոսք՝ Ս.Հարությունյանի), “Քեզ եմ սպասում” (խոսք՝ Ա.Գրաշու), “Կատակերգ Յոթ քույրերի մասին” (խոսք՝ Ա.Սաթունցի), “Երիտասարդական վալս” (խոսք՝ Ս.Սուրադյանի) երգերը և “Օրորոցային” (խոսք՝ Վ.Աղայանի), “Իրիկնային ռոմանս” (խոսք՝ Վ.Արամունու), “Միրո բալլադ” (խոսք՝ Վ.Կարենցի) ռոմանսները՝ կոմպոզիտորի քնարական լավագույն երգերը: Ա.Սաթունցի երգերն ու ռոմանսները լայն ճանաչման են արժանացել և կատարվում են ոչ միայն մեր հանրապետությունում, այլև նրա սահմաններից դուրս:

Դժվար է համառոտ հողվածի շրջանակներում ներկայացնել հայ երաժշտությանը նվիրված մի ամբողջ կյանքի պատմությունը: Առաջիկայում Արամ Սաթունցի ստեղծագործությանն են անդրադառնալու առանձին մենագրության տեսքով, որը կիրատարակվի այս՝ հոբելյանական տարվա ընթացքում:

Ավարտելով խոսքս կուզեի նկատել, որ մենք ոչ միայն պարտավոր ենք հիշել հայրենական երաժշտարվեստի երախտավորներին, հրատարակել նրանց ստեղծագործությունները, ուսումնասիրել ու կատարել դրանք, այլև շատ ու շատ բաներ ունենք սովորելու նրանցից:

Եվ պատահական չէ, որ Երևանի ավագանու 2013թ. սեպտեմբերի 10-ի նիստում միաձայն քվեարկությամբ տրվեց համաձայնություն ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, կոմպոզիտոր Արամ Սաթունցի հիշատակը հավերժացնող հուշատախտակն իր ապրած տան ճակատային մասում փակցնելու համար:

Հ. Գ.

Մեր ժողովրդի համար հոբելյանազարդ 2013-ին լրանում է ոչ միայն Արամ Սաթունցի ծննդյան 100-ամյակը, այլև ՀՀ ԳԱԱ հիմնադրման 70-ամյա հոբելյանը: Եվ փառապանծ հոբելյանի կապակցությամբ ստեղծվեց ՀՀ ԳԱԱ հրաշալի օրհներգը, որի երաժշտության հեղինակն է մեր հոբելյարի տաղանդավոր որդին՝ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր Արամ Սաթյանը...

Анна Асатрян – Творчество Арама Сатунца (100-летнему юбилею посвящается). – Статья посвящена жизни и многожанровому музыкальному наследию народного артиста Арм. ССР, композитора, общественного деятеля Арама Сатунца, чье творчество охватывает: **произведения для симфонического оркестра** (поэма “Зангезур”, “Армянская фантазия”, “Рапсодия”, “Два вальса”, хореографические картинки “Лунные лучи”, драматическая поэма “Вечная память”, посвященная жертвам землетрясения в Армении и т.д.); **произведения для духового оркестра** (марши, “Празднично-танцевальная сюита” и т.д.); **вокально-симфонические произведения** (вокально-симфонический цикл “Новые песни страны Наири” и кантата “Подвиг народа бессмертен” для солистов, хора и симфонического оркестра и т.д.); **камерные произведения** (“Три прелюдии” для фортепиано, “Интродукция и танец” для скрипки, “Зангезурский танец” для фортепианного трио, “Тема с вариациями” для фортепиано, “Соната-поэма” для фортепиано, “Элегия” и “Вальс-каприс” для двух скрипок и фортепиано и т.д.) и другие.

Любовь к народной музыке и народным инструментам обусловили наличие в творчестве композитора произведений для ансамбля народных инструментов, таких как: “Танец дружбы” и “Боевой танец” для ансамбля народных инструментов, сюита “Праздничная Армения” для смешанного хора и ансамбля народных инструментов, “Концертино” для канона и ансамбля народных инструментов, “Ноктюрн” для тара и т.д.

Яркую страницу в творчестве А. Сатунца являют собой песни и романсы.

Anna Asatryan – Creative heritage of Aram Satunc (to the 100-year anniversary).

– The article presents the creative life and multi-genre musical heritage of composer, People's Artist of Armenian SSR, prominent public figure Aram Satunts, whose creation involves: works for **symphony orchestra** (poem «Zangezur», «Armenian Fantasia», «Two waltzes»; choreographic pictures «Moon Rays»; dramatic poem «Eternal Memory», dedicated to the victims of 1988 earthquake in Armenia, etc); works for **brass orchestra** (marches, «Festive-Dance Suite», etc.); **vocal symphonic** works (vocal symphonic series «New Songs of the Land of Nairi», cantata «Immortal Is the People's Deed» for soloists, choir and symphony orchestra, etc.); **chamber works** (“Three Preludes» for piano, «Introduction and Dance» for violin, «Zangezur Dance» for piano trio, «Theme with Variations» for piano, «Sonata-Poem» for piano, «Elegy» and “Waltz-Caprice” for two violins and piano, etc.), and others.

The composer's love for folk music and folk instruments is reflected in his works for a folk music orchestra, which include: «Friendship Dance» and «Combat Dance» for folk music orchestra, «Festive Armenia» for mixed choir and folk music orchestra, «Concertino» for kanon and folk music orchestra, «Nocturne» for tarr, etc.

Songs and romances make a special page in A. Satunts's creation.

**ՆԻԿՈԼ ԳԱԼԱՆԴԵՐՅԱՆ. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄԱՆԿԱԿԱՆ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ԼԻԼԻԹ ՀԱԿՈՒԹՅԱՆ

“Գալանդերեանն արդէն իսկ իր կենդանի ժամանակ յղկել, բարձրացրել է իր արձանը, մի արձան, որը կապուած է մեր ժողովրդի գոյութեան հետ: Այդ նրա զեղեցիկ երգերն են, որ նրան պիտի պահեն անմահ: Գաղափարական մարդկանց համար անելի մեծ հաճոյք չկա, քան այն, որ հասնում են իրենց իղեպին, թէկուզ իրենց կեանքի գնով: Գալանդերեան այդ սակավաթիվ մարդկանցից է”:

Ո. ԳՐԻԳՈՐՅԱՆ²²¹

Հայ դասական երաժշտարվեստի երախտավորների շարքում իր առանձնահատուկ տեղն ունի իրանահայ կոմպոզիտոր, մանկավարժ և երաժշտական-հասարակական գործիչ Նիկոլ Գալանդերյանը (1881-1944): Ականավոր երաժիշտն իր գործունեության 30 տարիների ընթացքում հորինել է շուրջ 1000 երգ (այդ թվում՝ նաև մանկական երգեր), զուգերգեր, խմբերգեր, 3 օպերաներ և մանկական 8 օպերաներ, գործիքային մանրանվագներ ու անսամբլներ, վոկալ-գործիքային անսամբլներ²²²:

Ն.Գալանդերյանի գործունեության կարևոր բնագավառներից էր մանկավարժությունը: Փայլուն մանկավարժն իր ողջ ստեղծագործական կյանքի ընթացքում դասավանդում էր, սովորեցնում, երգեցիկ խմբեր կազմակերպում: Որքան աշակերտներ են սովորել նրա մոտ՝ առանց նյութական վարձատրության: Ինչպիսի՝ սրտաբացությամբ բոլորին, ովքեր դիմում էին նրան, իր ձեռքով գրում էր իր անտիպ աշխատությունները, և այդ դեռ բավական չէր, նստում էր ու սովորեցնում²²³:

Ընդգրկուն է աշխարհագրությունն այն դպրոցների, որտեղ երեխաներին իր երաժշտական գիտելիքները, փորձն ու հմտությունն է փոխանցել նվիրյալ երաժիշտը: Որպես երգեցողության ուսուցիչ նա պաշտոնավարել է Շումեն քաղաքի հայոց դպրոցում (1904-1906, Բուլղարիա), Վառնայի ազգային դպրոցում (1906-1910, Բուլղարիա), Սուվաումի շրջանի Օբերեդա գյուղի դպրոցում (1910-1911, Վըրաստան), Թեհրանի Հայկազյան միջնակարգ դպրոցում (1911-1915, Իրան), Խորասանի քաղաքական, մշակութային և տնտեսական կենտրոնի՝ Մեշեհեդի հայոց դպրոցում (1935-1937, Իրան) և “Մաբգեվարի” պարսկական ուսումնարանում (1937-1938, Իրան):

Գալանդերյանի մանկավարժական գործունեության հետ է սերտորեն առնչվում մանկական ստեղծագործությունը, որը ներառում է հայերեն և պարս-

²²¹ **Ա. Երեմյան**, Երգահան Նիկոլ Գալանդերյան (նրա կեանքը եւ երաժշտական արուեստի հիմնական գծերը), Թեհրան, 1947, էջ 50:

²²² **Ա. Ասատրյան**, Նիկոլ Գալանդերյան, Նշանավոր ճեմարանականներ, Պրակ Բ. Ս.Էջմիածին, 2009, էջ 67:

²²³ **Յ. Բրուտյան**, Սփյուռքի հայ երաժիշտները, Երևան, 1968, էջ 192:

կերեն տեքստերով մանկական երգերն ու մանկական օպերաները²²⁴:

1924-ի աշունը նշանավորվեց **մանկական երգերի** ստեղծմամբ, որի խթանն էր Հայկազյան դպրոցի երգեցողության ուսուցիչ, Գալանդեյանի նախկին սան, երգիչ Արա Հովհաննիսյանը: Ինքնակենսագրության մեջ հետագայում Գալանդեյանը գրեց. «Այդ աշնանը ես 8 կտոր մանկական երգեր պատրաստեցի՝ «Օի-ծեռնակին», «Օիտիկ-ծիտիկ», «Կաչաղակ», «Երկու արցունք», «Օրօր», «Օտի հարսանիքը», «Ձու ածող հաւը», «Անբախտ փիսօն», «Լորիկի»»²²⁵: Սակայն այս երգերից մի քանիսը՝ «Օիծեռնակին», «Օիտիկ-ծիտիկ», «Օրօր», «Լորիկի», ցավոք, մեզ չեն հասել: Պատճառն այն է, որ «Իր կենդանութեան օրոք իր ձեռքով գրած երգերը աջ ու ձախ նւիրաբաշխում էր, որի պատճառով էս տիպի յիշողութիւններ ունէի, թէ ինչպէս նրա որոշ երգերը հրատարակւել և ներկայացուել են մի ուրիշի անունով և կամ իր երգերը սրա-նրա ձեռքը ընկնելով աղաւաղուել ու անձանաչելի էին դարձել»²²⁶:

Մանկական երգերից հինգը՝ «Կաչաղակ» (օր. 16), «Երկու արցունք» (օր. 17), «Անբախտ փիսօն» (օր. 22), «Դարբինը» (օր. 140) և «Ուլիկը» (օր. 371), կոմպոզիտորը գրել է հայ գրող և մանկավարժ, հայկական առաջին մանկական օպերայի՝ Դանիել Ղազարյանի «Հաղթված բազեն» օպերայի լիբրետոյի հեղինակ Հակոբ Աղաբաբի խոսքերով: Խնկո-Ապոբ բանաստեղծությունները հիմք են ծառայել «Բըզեզ» (օր. 365), «Գիրք» (օր. 366) և «Ուկէ ձիկը» (օր. 373), Հովհաննէս Թումանյանինը՝ «Հարի, հարի, խնոցի» (օր. 369) և «Ոլունք» (օր. 374), Ղազարոս Աղայանինը՝ «Օրը տաքցաւ» (օր. 372) և «Առաւօտը գիւղում» (օր. 386), Դերենիկ Դեմիրճյանինը՝ «Օիտիկի հարսանիքը» (օր. 19) երգերի համար: Ուշագրավ է, որ մանկական երգերից երեքի՝ «Ձու ածող հաւը» (օր. 23), «Նոր տարի» (օր. 286) և «Ժամացոյց» (օր. 432), խոսքերի հեղինակն ինքը՝ Գալանդեյանն է:

Հատկապէս բեղմնավոր էր Գալանդեյանի գործունեության մեջհեղյան շրջանը, որի ընթացքում ստեղծվեցին մեզ հասած նրա մանկական 30 երգերի ուղիղ կեսը՝ 15-ը և «Ուղոս-Պետրոս» օպերան:

Գալանդեյանի մանկական երգերը թե՛ բովանդակությամբ և թե՛ երաժշտական մարմնավորմամբ մոտ ու հարազատ են մանուկների հոգեբանությանը, պարզ ու պատկերավոր են, կատարման համար մատչելի: Այդ պատճառով էլ դրանք արագորեն տարածվեցին իրանահայ գաղթօջախում: Երգերը բազմաբնույթ են: Դրանցից շատերն ունեն ճանաչողական նպատակ և պատմում են տարբեր թռչուններին և կենդանիներին բնորոշ գծերի մասին: Բոլոր երգերին հատուկ են հնչյունների վերընթաց և վարընթաց սահուն շարժումները, բացակայում են ինտերվալային թռիչքները, որոնք կարող են վնասել երեխաների ձայնային ապարատը:

Հայ դասական երաժշտության պատմության մեջ սակավաթիվ են այն կոմպոզիտորները, ովքեր իրենց ստեղծագործական արվեստում անդրադարձել են մանկական օպերա ժանրին: Նրանք, ովքեր ծանոթ են երաժշտական արվեստի էությանը, վստահաբար կհավաստեն, որ մանուկների համար ստեղծագործելն ամենաբարդ ու պատասխանատու գործերից է, և ամեն մեկը չէ, որ պատրաստ է

²²⁴ Ի դեպ, մանուկների համար Ն.Գալանդեյանի գրած անդրանիկ ստեղծագործությունը «Չարի վերջը» (օր. 13) օպերան էր:

²²⁵ **Ն.Գալանդեյան**, Դու նորից եկել ես. երգեր, Երևան, 1999, էջ 17:

²²⁶ **ՄԵԳԱՍ** (Մեղա Գալանդեյան), Յուշեր, Թերիան, 2002, էջ 83-84:

ստանձնել այդ պատասխանատվությունը: Այս առումով հայկական երաժշտության պատմության մեջ անգնահատելի մեծ է Նիկոլ Գալանդերյանի դերը:

Մանուկների համար կոմպոզիտորը գրել է երաժշտական-դրամատիկական փոքրածավալ երկեր, որոնք անվանել է «մանկական օպերաներ» և իր առջև համեստ խնդիր դրել՝ երաժշտականացնել մանուկներին քաջածանոթ գրական ստեղծագործությունները: Հայտնի հեքիաթներից վերցված հետաքրքրաշարժ պյուժենների, գործող անձանց սահմանափակ թվի, մանուկների կատարման համար նախատեսված վոկալ դերերգերի պարզության և հստակության շնորհիվ օպերաները մանկապարտեզների և դպրոցների հայ մանուկների ուժերով բազմիցս բեմադրվել են Թեհրանում, մեծ հաջողություն ունեցել ու հրճվանք պատճառել փոքրիկ հանդիսատեսներին: Ինչպես հետագայում կհիշի կոմպոզիտորի դուստրը՝ կոմպոզիտոր ՄԵԳԱԼԸ (Մեղա Գալանդերյան). “Հայրս Հայկազեան դպրոցում երաժշտութեան ուսուցիչ էր: Նա Տարեվերջի հանդեսի համար ձայնագրել էր և պատրաստել “Օադիկների Համերգը” մանկական օպերետը: Յիշում եմ, փոքր երեխաները ծաղիկների հագուստներով բեմի վրայ, իսկ արևը բեմի յետևում աթոռի վրայ կանգնած անելի բարձր դիրքով, և դեմքը բեմից արևի դեքորի միջոց հանել էր և երգում էր: Իսկ ծաղիկները բեմի վրայ իբր թէ քնած, կամաց-կամաց արթնանում էին և վերջում միասին երգում: Ինձ համար դա մի հրաշալի և անմոռանալի յիշողութիւն է”²²⁷: Իսկ 1925-ի մայիսին տեղի ունեցած կոմպոզիտորի անդրանիկ համերգի ընթացքում, ի շարս քառաձայն խմբերգերի ու երգերի, ներկայացվում է “Եւ “Օադիկների երգը” opera-ն”²²⁸: Գալանդերյանի ութ մանկական օպերաներից պահպանվել են հինգը. “Չարի վերջը” (օր. 13, խոսք՝ Հովհ.Թումանյանի), “Հոտաղ-հոտաղի” (օր. 194, խոսք՝ Հ.Աղաբաբի), “Պօղոս-Պետրոս” (օր. 387, խոսք՝ Հովհ.Թումանյանի), “Պապն ու շաղգամը” (օր. 611, խոսք՝ Աթ.Խնկոյանի) և “Մետուկ ուլիկը” (օր. 612, խոսք՝ Հովհ.Թումանյանի): Չեն պահպանվել “Օադիկների երգը”, “Կնունք-կնունքը” և “Օիծեռնակի գալուստը” մանկական օպերաները: Մեզ հասած բնագրերում նոտագրված են միայն վոկալ պարտիաները առանց նվագակցության: Օպերաները չունեն նախերգանք. հենց սկզբից ներկայանում են գործող անձինք, ովքեր վարագույրները բացվելուն պես բեմում են: Բայց, քանի որ հեքիաթները հաճախ ունենում են պատմողական սկիզբ, կոմպոզիտորն այդ հատվածները կատարելու պարտականությունը հանձնարարել է երեխաների խմբին, որը, փաստացիորեն, փոխարինում է երգչախմբին: Սա նաև հիանալի հնարավորություն է տալիս երեխաների մեջ ձևավորելու և զարգացնելու անսամբլի զգացողությունը, ինչը չափազանց կարևոր է:

Դրամատիկ դասավորվեց Գալանդերյանի մանկական ստեղծագործությունների ճակատագիրը: Նրա հայերեն մանկական երգերից վեցը տպագրվեցին 1935-36թթ. Թեհրանում լույս տեսնող “Նոր հասկեր” մանկապատանեկան երկշաբաթյա պատկերազարդ հանդեսում, որի խմբագիր-արտոնատերն էր Մ.Սարվարյանը: Թեհրանում են հրատարակվել նաև կոմպոզիտորի պարսկերեն մանկական երգերից չորսը: Կոմպոզիտորի մահից չորս տարի անց՝ 1948-ին նրա ձեռագիր ժառանգությունը տեղափոխվեց Հայաստան: 1999-ին նրա դուստրերի՝ Մեղա և Լիդա Գալանդերյանների մեկենասությամբ և Ե.Չարենցի անվան գրա-

²²⁷ **ՄԵԳԱԼ** (Մեղա Գալանդերյան), Յուշեր, Թեհրան, 2002, էջ 17:

²²⁸ **Ն. Գալանդերյան**, Դու նորից եկել ես. երգեր, Երևան, 1999, էջ 17:

կանության և արվեստի թանգարանի աշխատակիցների ջանքերով լույս տեսան մանկական 30 երգերն²²⁹ ու հինգ օպերաները²³⁰: Իսկ երկու տարի անց՝ 2001-ին թողարկվեց “Նիկոլ Գալանդերյան. Մանկական Երգեր” խոսասալիկը, որտեղ “Տաթև” մանկական երգչախմբի կատարմամբ, խմբավար Վաչագան Նավասարդյանի ղեկավարությամբ ձայնագրվեցին կոմպոզիտորի 30 մանկական երգերը: Երգերի գործիքավորումը նուրբ ճաշակով ու վարպետորեն կատարել է ՀՀ ժողովրդական արտիստ, կոմպոզիտոր Մարտին Վարդազարյանը:

Ամփոփելով մեր անդրադարձը Ն.Գալանդերյանի մանկական երկերին, գտնում ենք, որ՝

1. Ն.Գալանդերյանի հայերեն մանկական երգերն իրականում ոչ թե 28-ն են, ինչպես շրջանառվում է գրականության մեջ, կամ՝ 30-ը, այլ ավելի շատ են՝ առնվազն 34:

2. Նպատակահարմար է նախադպրոցական ուսումնական հաստատություններում մանուկներին սովորեցնել Գալանդերյանի հետևյալ երգերը՝ “Կաչաղակ”, “Ծիտիկի հարսանիքը”, “Անբախտ փիսոս”, “Ձու ածող հաւը”, “Դարբինը”, “Ծափ տու”, “Նոր տարի”, “Նոր տարի”, “Բզեզ”, “Տատիկի խաղը”, “Ծիտի օրորը”, “Ուլիկը”, “Ոսկե ձիկ”, “Արագիլի երգը”, “Ժամացոյցը”: Սրանք իրենց կառուցվածքով, բովանդակությամբ և ձայնաձավալով լիովին համապատասխանում են միջին և ավագ խմբերի երեխաների տարիքային առանձնահատկություններին: Դաստիարակների համար հիանալի ուղեցույց կարող են ծառայել երգերի նոտաներն ու “Տաթև” մանկական երգչախմբի կատարումների ձայնագրությունները:

3. Նպատակահարմար է դպրոցների տարրական դասարանների աշակերտների ուժերով Ն.Գալանդերյանի մանկական օպերաների բեմականացումը, ինչը ժամանակին արվել է մեծ հաջողությամբ:

Лилит Акопян – Никол Галандерян: педагогическая деятельность и произведения для детей. – Армянская музыкальная культура дала много знаменитых людей, в ряду которых особое место занимает талантливый композитор и педагог Никол Галандерян. В его музыкальном наследии особо выделяются произведения для детей, которые доступны для их психологии, легки для исполнения и могут способствовать развитию у детей эстетического вкуса.

Lilit Hakobyan – Nikol Galanderyan - the pedagogical activity and compositions for children. – Among Armenian cultural workers in Iran talented composer and teacher Nikol Galanderyan has a special place. In his musical heritage the children’s works are available for children’s psychology, easy for performance and may promote the aesthetic development.

²²⁹ **Ն.Գալանդերյան**, Մանկական ստեղծագործություններ, հատոր Ե, Երևան, 1999, էջ 8-43:

²³⁰ Նույն տեղում, էջ 44-85:

**ԹԱՏՐՈՆԸ ԵՎ ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱՆ
ԴԵՐՆԵՒԿ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԳՆԱՀԱՍՄԱՍԲ**

ԱՆՆԱ ԳԻԼԱՎՅԱՆ

Դեմիրճյանի գրականագիտական ժառանգության գերակշիռ մասը նվիրված է թատրոնի և դրամատուրգիայի հարցերին: Թատրոնը և դրամատուրգիան կարծես անբաժան են միմյանցից: Եվ սակայն նրանց ոլորտը ինչ-որ տեղ սկզբունքորեն տարբեր է: Թատրոնը պատկանում է արվեստի բնագավառին, իսկ դրամատուրգիան գրականության գլխավոր ժանրերից մեկն է, ինչպես պոեզիան և գեղարվեստական արձակը: Այս իմաստով այս հոդվածում ես չեմ անդրադառնալու թատրոնի խնդրին և քննելու եմ դրամատուրգիային առնչվող խնդիրները որպես գրական ժանր: Ուշագրավ է, որ հարցն այդպես է դիտել նաև Դեմիրճյանը: «Մեր դրամատուրգիայի խնդիրներից» հոդվածում նա գրում է. «Մեր հասարակության առջև ի միջի այլ խնդիրների, կարծում ենք կարող է և պետք է դրվի դրամատուրգիայի խնդիրը: Ասում ենք կարող է և պետք է, հանդեպ այն հոգեբանության և վերաբերմունքի, որին արժանացած է եղել դրամատուրգիան մեզանում: Ինչ կուզեք ասեք՝ բայց դրամատուրգիան կապել են առավելապես թատրոնի հետ: Նրա գրական հանգամանքը թերագնահատված է»²³¹: Դրաման գրվում է իբրև գրական երկ, իբրև ընթերցողական երկ և պետք է «մտնի գրականության մեջ իբրև գրականության մի ճյուղ, ինչպես վեպն է, պոեմը... նա կապված է գրականության հետ իր խնդիրներով ... իդեոլոգիա, փիլիսոփայություն, պատկերներ, տիպեր, լեզու և այլն»:

Օրագրային այս հոդվածը Դեմիրճյանը գրել է 1932 թվականին, և խնդիրն այնքան հրատապ է ներկայանում գրողին, որ նա հանդես է գալիս հոդվածների մի ամբողջ շարքով՝ «Խորհրդային դրամատուրգիայի խնդիրները», «Դրամատուրգիայի մասին», «Դրամատուրգիա», «Նոր ժանրի մասին», «Պետք է հանդրգնել», «Խորհրդային գրականության խնդիրներից» և այլն: Դեմիրճյանը գրում է. «Մեր երկրում կատարվում են աննախընթաց դեպքեր: Կառուցվում են սոցիալիստական գյուղն ու քաղաքը: Սոցիալիզմ կառուցողի տիպը կառուցում է նոր կենցաղ, նոր հոգեբանություն, նոր փոխհարաբերություններ, նոր փիլիսոփայություն: Առաջ են գալիս նոր զգացմունքներ, կրքեր, բախումներ»²³²:

Այս մեջբերումը արտահայտում է ամեն ինչ՝ և՛ դրամատուրգիայի աշխարհայացքը, և՛ թեման, և՛ կոնֆլիկտը, և՛ կերպարի հոգեբանությունը և, այսպես կոչված, նոր մարդը նոր կենցաղավարությամբ: Այստեղ, ըստ Դեմիրճյանի, առաջանում է նաև դրամատուրգիական արվեստին տիրապետելու խնդիրը: Ժանրը ունի երկու հազարից ավելի տարիների պատմություն, որն ստեղծել է իր պոետիկան, որից չի կարելի հրաժարվել: Ինչ վերաբերում է նրա մեթոդին, ապա դա ունի իր որոշակի սահմանումը: «Մեր էպոխայի նպատակասլաց շարժումը արվեստի և գրականության մեջ սոցիալիստական ռեալիզմն է: Ոչ՝ նատուրալիզմ, որն ար-

²³¹ Դ. Դեմիրճյան, երկերի ժողովածու, հ. 12, Երևան, 1985, էջ 72-73

²³² Նույն տեղում, էջ 85

տաքուստ է պատկերում նյութական միջավայրը, չտալով իրերի ներքին դիալեկտիկան, ոչ ռոմանտիզմ, որ հաճախ չի կարող պարզորոշ ցուցադրել մեր հարաշարժ կոնկրետ այսօրը, այլ սոցիալիստական ռեալիզմը, որ նյութական միջավայրը պատկերում է օբյեկտիվ կերպով»²³³: Այստեղ էական դեր ունի դրամատուրգի աշխարհայացքը, որը ուղղություն է տալիս նրա մեթոդին: «Դրամատուրգները,- գրում է Դեմիճյանը,- պետք է լավ զինվեն Մարքս-լենինյան ուսմունքի զենքերով, դիալեկտիկական մատերիալիզմի լրիվ գիտությամբ՝ չջվողելու համար սոցիալիստական ռեալիզմը բուրժուական ռեալիզմի հետ: Սոցիալիստական ռեալիզմի դինամիկ բնույթը, պատմություն, ներկա հասարակական փոխհարաբերությունների դիալեկտիկական ընթացքը, օրգանական շղթան, երկը, այսօր, վաղը-այս ամենը պիտի երևա երկի մեջ»²³⁴:

Դեմիճյանը դրամատուրգիայի հարցը սուր խնդիր է համարում այն նկատառումով, որ այն ուղղված է սխեմատիզմի, դրամայի, ագիտկայի դեմ՝ հանուն կենդանի արվեստի: Դրա իրականացման համար կարևոր է խարակտերի ստեղծումը: Խարակտերը սոցիալական և անհատական գծերի միացությունն է մի անհատի կերպարում, որն ունի դասակարգային իր պատկերը և միաժամանակ անձնական-անհատական բնավորությունը:

Բուրժուական ռեալիզմը չի կարող ստեղծել խարակտերի լիակատար կերպար հասարակական միջավայրի հետ: Այդ կարող է ստեղծել սոցիալիստական ռեալիզմը՝ կերպարի մեջ ներդնելով դասակարգային էությունը և հոգեբանական զարգացման դինամիկան:

Դեմիճյանը չի խրախուսում նորարարությունը ժանրի հարցում, որին հետամուտ են ֆորմալիստները: Նորը ոչ թե ձևի մեջ է, այլ բովանդակության ու գաղափարի մեջ: Այս հարցին դեմիճյանը անդրադառնում է «Նոր ժանրի մասին» հոդվածում: Խնդրի լուծումը առնչվում է որոշակի հարցադրումների՝ «դրությունների դրամա», թե խարակտերների դրամա, տրագեդիա, թե հերոսական դրամա, կոմեդիա հումորի էլեմենտներից, թե սատիրայի և այլն»: Դեմիճյանը սխալ է համարում «նոր ժանրիստների» փորձերը հրաժարվելու դրամայի դասական ձևերից: Էականը կյանքի ճշգրիտ ընդգրկումն է. կյանքը ինքը կյոելադրի նոր ժանրի ձևն ու բովանդակությունը: «Չի կարելի այսպիսի խնդրի դնել. դեպքերի դրամա, թե՞ խարակտերների տրագեդիա, թե՞ հերոսիկա... Անշուշտ խորհրդային տրագեդիան և հերոսիկան կծագեն և կզարգանան (նրանք որոշ չափով արդեն կան) ուրույն, խորհրդային ձևով ու բովանդակությամբ: Խորհրդային դրամատուրգիան կտա նաև դեպքային ու խարակտերային դրամաների համոզիչ և ուսանելի նմուշներ»²³⁵:

Պետք է նկատել, որ Դեմիճյանը դրամատուրգիայի խնդիրներն արժարծում է՝ հիմք ընդունելով ռուսական դրամատուրգիան, քանի որ հայ դրամատուրգիան դրա համար հիմքեր չի տալիս: «Խորհրդային դրամատուրգիայի խնդիրներից» հոդվածում նա որպես փորձնական օրինակներ վկայակոչում է Կիրճոնի «Հրաշալի ձուլվածքը», Պոզոդինի «Արիստոկրատները», Գորկու «Եզոր Բուլըչը», Կորնեյչուկի «Պլատոն Կրեչետ» և այլն: Հետևությունն այն է, որ «կլասիկներին պետք է քննադատորեն օգտագործել՝ սիրելով սակայն նրանց: Իսկ դրա համար

²³³ Նույն տեղում, էջ 87

²³⁴ Նույն տեղում, էջ 92

²³⁵ Նույն տեղում, էջ 108

պետք է կանգ առնել, բարեկամաբար նայել նրանց և ոչ թե «իդեալիզմ ասել ու անցնել»:

«Հայ դրամատուրգիայի զարգացման հեռանկարները» հոդվածում Դեմիրճյանը հայ դրամատուրգիայի հարցը դիտում է թատրոնի հետ անխզելի կապի մեջ: Նա ուղղակի գրում է. «Հայ դրամատուրգիայի կյանքը կապվում է հայ թատրոնի պատմության հետ»: «Օրիգինալ դրամատուրգիան, այսինքն՝ ազգային ինքնուրույն դրաման, ուղեկցել է հայ թատրոնին, սակայն ունեցել է անհամաչափ ընթացք: Այս երևույթին գրական իմաստ տվեց Սունդուկյանը: Նա ստեղծեց օրիգինալ դրամատուրգիայի թատրոն: Սակայն հայ դրամատուրգիայի կորագիծն ունեցել է մեծ զիգագներ: Կարելի է ասել, որ նա ապրել է զարգացել է աննորմալ պայմաններում»²³⁶: Սունդուկյանի դրամատուրգիան չեզոքացրեց կեղծ կլասիկական և գերզանցապես պատմական դրամատուրգիային: Սունդուկյանը հեղաշրջեց հայ թատրոնն ու դրամատուրգիան, եղավ Աբովյան այդ բնագավառում: Դա հայ թատրոնի և դրամատուրգիայի վերածնունդն է: Սակայն Դեմիրճյանի բնորոշմամբ «հայ դրամատուրգիային սպասվում էր մի հարված, որը պիտի դառնար հետագա անկման պատճառ»: Դա Պետրոս Ադամյանի հայտնությունն էր, որ թատրոնն ու դրամատուրգիան տարավ այլ ճանապարհով: Նրա շնորհիվ Շեքսպիրը տիրեց հայ թատրոնին, հայ բեմը տրամադրեց համաշխարհային դասական դրամատուրգիայի թարգմանական ներկայացումներին: Հայ դրամատուրգիայի հեղինակները Սունդուկյանից հետո որոշ թարմություն ներարկեցին ազգային ռեպերտուարին, սակայն մեծ հոսանք չստեղծեցին հայ թատրոնում: Դրանք էին՝ Հ. Պարոնյանը, Մուրացյանը, Շիրվանզադեն, Փափազյանը: Եվ, այնուամենայնիվ, նրանք գրականացրին հայ թատրոնի լեզուն, ինչպես նաև ընդլայնեցին դրամատուրգիայի թեմատիկան՝ ազատելով այն կենցաղագրությունից: Հայ դրամատուրգիայի վերելքը Դեմիրճյանը կապում է սովետական դրամատուրգիայում տեղի ունեցող որոնումների հետ, որի հիմքը նոր հասարակության կյանքի արտացոլումն է, «նա ամենից առաջ հանդես է գալիս իբրև մի հասարակության արգասիք , որը կցված է համամիութենական կուլտուրայի զարգացման գործին՝ իբրև այդ նոր հասարակության լիարժեք և իրավագոր անդամ: Հայ թատրոնն ունի այնքան կուլտուրա և հնարավորություններ, որ կարող է բարձրանալ և բարձրացնել դրամատուրգիան իր արժանի աստիճանին»²³⁷:

«Նոր դրամատուրգիայի խնդիրներից» հոդվածում Դեմիրճյանն առաջադրում է գործնական խնդիրներ, որոնք անհրաժեշտ են ժանրի զարգացման համար: Ամենից առաջ նշվում է թեմայի ընտրության հարցը: Կարևորը տվյալ պարագայում նոր ռեպերտուարի ստեղծումն է:

Թատրոնը այն բնագավառն է, որը անմիջապես կապ է ստեղծում հասարակության հետ: Դա կենդանի ամբիոն է գաղափարների ու կենսափորձի տարածման համար: Դեմիրճյանը կարևոր է համարում թեմայի ընտրության և թեմատիկ կադրապարներից ազատվելու հարցը: «Մեր դրամատուրգիան,- գրում է Դեմիրճյանը,- վերջերս կանգ է առել թեմայի նեղ սահմաններում: Դիվերսանտների, ժողովրդի թշնամիների, հակահեղափոխականների ներկայությունը պիեսում մի ժամանակ նոր տարր մտցրեց խորհրդային դրամատուրգիայի մեջ: Դա ժամանակի պահանջ էր: Սակայն երբ այդ պերսոնաժը սկսեց ողողել մեր դրամատուր-

²³⁶ Նույն տեղում , էջ 198-199

²³⁷ Նույն տեղում, էջ 202

գիան, հասավ մի սահման, երբ պիեսներն սկսեցին իրար կրկնել»²³⁸: Ժամանակակից դրամատուրգիայի գլխավոր թերություններից մեկը Դեմիրճյանը համարում էր դրական հերոսի անկատարությունը: Բացասական հերոսները բեմի վրա տպավորիչ են, շեշտված բնավորությամբ, իսկ դրական հերոսները անգույն են, անարտահայտիչ, շաբլոն: Չկա մեր ժամանակի իսկական հերոսը, բանվորը, գյուղագիրը, որոնք նոր կյանք են կառուցում և բերում են նոր հոգեբանություն: «Ի՞նչն է պատճառը... Մենք կարծում ենք, որ բազմաթիվ այլ պատճառներից մեկն էլ այն է, որ դրամատուրգը չինայելով իր բացասական հերոսին՝ նրան տալիս է ռեալիստական գույներով: Իսկ դրական հերոսին «խնայելով» աշխատում է կերպավորել շատ լավ և դուրս է բերում նրան օժտված նաև շատ վերացական գծերով: Մա գրկում է դրական հերոսին մարդկային իրական հատկություններից»²³⁹: Այս պարագայում, Դեմիրճյանի կարծիքով, առաջանում է խարակտերների կերպավորման պրոբլեմը, որը ենթադրում է բնավորությունների բազմազանություն, կյանքի բարդ հարաբերությունների դրամատիկ պատկերում, սուր կոնֆլիկտներ:

Թատրոնի և դրամատուրգիայի հարցերին նվիրված Դեմիրճյանի գրառումները բավականին լայն ընդգրկում ունեն: Գրել է գրախոսություններ, դիմանկարներ, հուշեր և այլն: Հոդվածների թվարկումն իսկ ցույց է տալիս, որ Դեմիրճյանը թատրոնի և դրամատուրգիայի հարցերը դիտել է որպես իր գրական գործունեության էական բնագավառ: Բացի բազմաթիվ տեսական հոդվածներից գրել է «Իսահակ Ալիխանյան», «Վաստակավոր դերասանուհի ժասմեն», «Լեզվի կուլտուրան թատրոնում», «Դիմակահանդես», «Մեծատաղանդ արտիստը», «Երգիծական դիմանկարներ» (Հովհաննես Ադամյան, Միշո, Իսահակ Ալիխանյան), «Արժեքավոր գիրք հայ թատրոնի պատմությունից» և այլն:

Ընդհանուր համակարանքի մթնոլորտ կա Ալիխանյանի շուրջ, գեղեցիկ արտաքին, բարի ժպիտ և դերասանական ինքնություն ուճ. «Շատ արագ որոշեց իր դերերը և արագ էլ առաջ անցավ: Մանավանդ որ համակրելի ու գեղեցիկ էին թե իր ընտրած դերերը և թե ... ինքը: Վանահայրության հետ շատ էլ գլուխ չունեցավ: Միբերով ծովն ու Մեղան՝ գերադասեց Աբեղայությունը: Ալիխանյանի դեմքը, ինչպես և խարակտերը մի փոքր դժվար է նկարելը: Ինչպես դժվար է հասկանալը Ցար Բոհան Ֆեոդորովիչին: Օսվալդ, Միշկին, Աբեղա, Ցար Բոհան, Խլեստակով, ահա դերեր, որ դժվարացնում են հարցը»²⁴⁰:

Դիմանկարի իսկական նմուշ է «Վաստակավոր դերասանուհի ժասմեն» հոդվածը: Դեմիրճյանը ուրվագծում է նրա արտիստական ուղին՝ ընդգծելով նրա ավելի մեծ հնարավորությունները և առանձնահատուկ տեղը հայ թատրոնում: Ժասմենի խաղին յուրահատուկ է ուժեղ տեմպերամենտ, ամենալայն դիապազոն և որ գլխավորն է «ռեգիստրների հարստություն և հուզականություն, որ խորքից է»:

Աբեղյանի և Միրանուշի փառավոր շրջանի աշակերտը լինելով՝ նա դրանցից վերցրել է լավագույնը և կերտել այնպիսի դերեր, ինչպիսին են՝ Դեզդեմոնան (Շեքսպիր՝ «Օթելլո»), Լուիզան (Շիլլեր՝ «Մեր և խարդավանք), Կրուչինինա (Օստրովսկու «Ամմեդ մեղավորներ»), Մարգարիտ (Շիրվանզադե՝ «Պատվի համար») և այլն: «Մեծատաղանդ արտիստում» Հրաչյա Ներսիսյանն է՝ «ինքնատիպ

²³⁸ Նույն տեղում, էջ 206

²³⁹ Նույն տեղում, էջ 207

²⁴⁰ Նույն տեղում, էջ 13

մտահղացման արտիստը», որ ստեղծագործում է իր դերը՝ մշտապես բացահայտելով ինչ-որ անակնկալ: Ներսիսյանը ինքն է ստեղծում բեմական կերպարը, այսինքն՝ ինքն է՝ Ներսիսյանը՝ իր ռեալիզմով: Նրա դերերն են եղել՝ վարպետ Հայնրիխ, Խլեատակով, Համլետ, Ֆալստաֆ, Օթելլո, Հելմեր, Անհայտը, Պրոտաստով, Մակբեթ, Պաղղասար աղբար, Էլիզբարով, Աբխտղոմ աղա և այլն:

Անհասկանալի է, թե ինչու Դեմիճյանը չի հիշատակում Պեպոյի դերակատարությունը: Մի կարևոր դիտարկում հետաքրքրական է: «Ուրեմն ի՞նչ պարադոքս: Բանն այն է, որ Ներսիսյան – արտիստի այս հատկության օրինակով պարզվում է շատ հետաքրքրական մի տեսություն. այն, որ հեղինակի ներկայացրած կերպարը կարող է նյութ դառնալ բազմաթիվ մեկնաբանությունների և չկորցնել զուտ հեղինակային մեկնաբանությունը»²⁴¹: Այս ֆենոմենի պարզաբանումը թատերագիրների համար հիմնական դրույթ պիտի լինի Ներսիսյանի մասին ուսումնասիրություններում:

Անվանի թատերագիր Սարգիս Մելիքսեթյանը 1953 թվականին հրատարակել է Գևորգ Չմշկյանի «Իմ հիշատակարանը» գիրքը՝ բնութագրող առաջաբանով և ծանոթագրություններով: Այդ աշխատության մասին է «Արժեքավոր գիրք հայ թատրոնի պատմությունից» հոդվածը: Գիրքը Դեմիճյանին գրավել է ոչ միայն իբրև հուշագրության հաջող օրինակ, այլև հայ թատրոնի պատմություն՝ մի հետաքրքրական շրջանի մասին վավերագրական տվյալներով: Բարձր գնահատելով Մելիքսեթյանի գիտական սահմանումներն ու բովանդակալից ծանոթագրությունները՝ Դեմիճյանը նշում է, որ իր հուշերում Չմշկյանը ներկայանում էր որպես «ժամանակի պրոգրեսիվ մտածող, ռեալիստ արվեստագետ և քննադատ...ազնիվ և խանդավառ մի թատերական գործիչ, որի այս արժանիքներից պետք է ավելացնել նաև դերասանական տաղանդը»: Հանդես գալով ժամանակի դրամատուրգիայում իշխող երկու ուղղությունների՝ պատմական, ժամանակակից կեղծ կլասիկան, և ռեալիստական դրամայի պայքարի շրջանում՝ Չմշկյանը կողմնորոշվում է դեպի ռեալիստական դրամատուրգիան և հայ թատրոնին տալիս «իդեոլոգիական գեղարվեստական» առաջադեմ ուղղություն: Այսպիսով՝ «Չմշկյանը եղավ ոչ միայն հայ նոր թատրոնի խոշոր հիմնադիրներից մեկը, այլև Մունդուկյանի զինակիցն ու պայքարակիցը՝ հանուն ռեալիստական, դեմոկրատական թատրոնի և դրամատուրգիայի»: Չմշկյանը ուսուցիչ եղավ դերասանական մի ամբողջ սերնդի՝ Մատինյան, Տեր-Դավթյան, Ամրիկյան, Մանդիկյան և ուրիշներ:

1948 թվականին Դեմիճյանը գրում է «Հուշեր և խոհեր հայ դրամատուրգիայի և թատրոնի մասին» ծավալուն ուսումնասիրությունը: Կարելի է ասել, որ այստեղ արտահայտություն են գտել ոչ միայն հայ դրամատուրգի ու թատրոնի մասին Դեմիճյանի գրառումները, այլև առհասարակ դրամայի պատմության ու տեսության վերաբերյալ հայացքները ու դրույթները: Դա հուշագրության ու պատմության ուրույն գիտական միասնություն է, որ չափազանց արժեքավոր նյութ է տալիս Դեմիճյանի թատերական հայացքների կազմավորման մասին: Ուսումնասիրությունն սկսվում է մանկության ու պատանեկության տարիների ընտանեկան պայմանների, Ախալքալաքի ներքին կենցաղի ու թատերական իմիտացիաների վերաբերյալ: Առաջին: Ամեն ինչ սկսվեց հոր սրճարանից, որ իսկա-

²⁴¹ Գ. Դեմիճյան, Երկերի ժողովածու, հ. 13, Երևան, 1983, էջ 316

կան հավաքատեղի է հետաքրքրասերների համար և ուր կատարվում են թատերանման ներկայացումները: Մրճարանային առաջին ներկայացումը կոչվում էր «Ղարագոյո», որը հիշեցնում է այժմյան տիկնիկային թատրոնը: Ներկայացումների ռեպերտուարում շուտով հայտնվում է «Արշակ Բ», «Վարդան Մամիկոնյան», «Օսկան Պետրովիչը դժոխքում» և այլն: «Եվ որտեղի՞ց էր այս պիեսների մուտքը մեր մանկական թատրոնում: Դա Ադամյանի և այլ դերասանների գաստրոլների շորշովին էր, Կարենյանի և այլոց պատմական ողբերգությունների, Մունդուկյանի, Տեր - Գրիգորյանի և մյուսների կոմեդիաների արձագանքներն էին, որ տալիս էինք երեխաներս: Այս մանրամասն հիշատակումներով ես կամենում եմ ցույց տալ այն ուղղություններն ու ազդեցությունները, որ 80-ական թվերին շրջում էին օդի մեջ և հասնելով Ախալքալաքի պես մի գավառական անկյուն, նրա աղքատիկ թատրոնի միջոցով թափանցում էին մինչև մանուկները»²⁴²:

Բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում Դեմիրճյանի նշումները ժամանակի թատերական կյանքի վերաբերյալ՝ «Մեծապատիվ մուրացկանների» բեմականացումը, Գևորգյան ձեմարանում Լևոն Մանվելյանի դասախոսությունները Շեքսպիրի ողբերգությունների մեկնության, թատրոնում առկա ուղղությունների՝ հատկապես գավառներում տարածված մեղադրանքների վերաբերյալ: Հատկապես տպավորիչ է Դեմիրճյանի անձնական մտերմությունը Միքայել (Միշո) Մանվելյանի հետ և վերջինիս թատերական գործունեությունը Թիֆլիսում:

Ուշագրավ է Դեմիրճյանի խոստովանությունը, թե ինքը երիտասարդության տարիներին թատրոնի հանդիսատես չի եղել և թատրոնով սկսել է հետաքրքրվել 1910 թվականից հետո:

Արդեն առաջ էին եկել տարբեր տիպի թատրոններ: Գոնե երկու տիպի թատրոնների մասին կարելի է խոսել: Դա հասարակական երկու շերտի թատրոն էր՝ բուրժուազիայի և ժողովրդական: Առաջինը կոչվում է «Արիստոկրատական», երկրորդը՝ «Ժողովրդական»²⁴³: Այս թատրոնները բնականաբար տարբերվում էին իրենց ազդեցության ոլորտներով, հանդիսատեսով, ռեպերտուարով և այլն: Իհարկե, հնարավոր էին ռեպերտուարային ընդհանրություններ, նաև առանձին դերասանների ելույթները երկու թատրոններում, ապա նաև բուրժուական թատրոնի դեմոկրատական տարբեր, այնուամենայնիվ տարբերություններն առկա են: Մի էական հանգամանք գործում էր հայ թատրոնում, դա ռուս թատրոնի և դրամատուրգիայի ազդեցությունն էր: Խոսքը վերաբերում էր ոչ միայն ռեպերտուարին՝ «Բորիս Գոդունով», «Ռևիզոր», «Իռան Ահեղի մահը», «Մի ամիս գյուղում», այլև դրամատուրգներին՝ Պոտեխին, Պիսեմսկի, Սուբատով-Յուսին և այլն:

Նույն երևույթը տեղ ուներ նաև թատրոնական ուղղությունների խնդրում: «Մոտենիստական թատրոն-դրամատուրգիան,- գրում է Դեմիրճյանը,- նշանավորվեց 20-րդ դարի սկզբներում, և իմպեիոնիզմի իրականության ռեալիստական վերարտադրությունը փոխարկվեց սուբյեկտիվ տրամադրությունների արտահայտություններով (Լեոնիդ Անդրեև, Բլոկ, Անդրեյ Բելի, Մուլգոբ): Սակայն այս մոդենիզմին հզոր հարվածում էր Գորկիին իր մի շարք սոցիալական նշանակություն ունեցող պիեսներով՝ «Հատակում», «Քաղքենիներ», «Թշնամիներ» և այլն»²⁴⁴: Ընդհանուր այս հարցադրումներից հետո Դեմիրճյանը անդրադառնում է

²⁴² Գ. Դեմիրճյան, երկերի ժողովածու, հ. 14, Երևան, 1987, էջ 72

²⁴³ Նույն տեղում, էջ 86

²⁴⁴ Նույն տեղում, էջ 88

հայ թատրոնին ու դրամատուրգիային: Նա նշում է երեք ուղղություն, որոնք արտահայտում են 50-60-ական թվերի հայ հասարակական մտայնությունները: Առաջին ուղղությունը պատմական ողբերգությունն է, որ առավելապես արևմտահայ ծագում ունեւր և մուտք գործեց նաև արևելահայ թատրոնի ռեպերտուար: Այդ ուղղության գուգահեռ ասպարեգ եկավ երկրորդ ուղղությունը՝ կենցաղային կոմեդիան (Մ. Տեր-Գրիգորյան, Ն. Փուղինյան, Մ. Պատկանյան): Երրորդ ուղղությունը եվրոպական և ռուսական դրամատուրգիան է, որը զգալապես զբաղեցնում է հայ թատրոնի ռեպերտուարը:

Դեմիքճյանի բնութագրամաբ այն երեք ուղղություններից ամենաանհասկանալին պատմական տրագեդիայի հարատւությունն է, որը թեև խիստ քննադատության էր ենթարկվում դեռևս 50-60 ական թվականներից (Միքայել Նալբանդյան), այնուամենայնիվ շարունակվեց հետագա տասնամյակների նոր սերնդի գրողների կողմից (Մուրացան, Լեռ, Վ.Փափազյան): Դրա պատճառը Դեմիքճյանը համարում էր «Հայ հասարակության ազգային ինքնաճանաչության, հայրենասիրական զգացմունքների, ապա նաև այն պատմական մոմենտների արձագանքներն էին, որ տվին Ձեյթունի ապստամբությանը ընդդէմ թուրք բռնակալության, որ դրդեց ազգային ազատագրական շարժումները և վառ պահեց, առհասարակ, ազգային ազատագրական, հայրենասիրական ոգին»²⁴⁵: Ըստ էության հայրենասիրության գաղափարը ծածկում է պատմական ողբերգությունների հետադիմական ուղղությունը: Դեմիքճյանի գնահատամաբ Կարենյանը կղերական – ռեակցիոն գաղափարների արտահայտիչ է, պատկանում է կղերա-պահպանողական այն խավերին, որոնք դեռ էին պրոգրեսիվ շարժումներին: Պատմական ողբերգությունների մյուս թեր Պեշկոթաշյանի և Դուրյանի դրամաներում արձագանքում էին ժամանակի առաջադեմ գաղափարներին: Այս երկվությունը նկատում է Դեմիքճյանը: Նա գրում է. «Դժվար է ջոկջոկել և իրարից լավ անջատել հայ պատմական տրագեդիաների այս իդեոլոգիական տարբերությունները, այնքա ն նրանք իրար մոտ են... Այնքան դյուրին չէ անցյալի իդեալականացման և ազգայնական զգացումների հետև թաքնված ճշմարիտ հայրենասիրական, ազատագրական տրամադրություններ գտնել»²⁴⁶:

Բոլոր պարագաներում Դեմիքճյանը փորձում է երևույթի ընդհանուր փատարկները հիմնավորել գիտական մոտեցմամբ, առանց միակողմանի բացառման կամ հաստատման: Ի հակակշիռ պատմական ողբերգությունների՝ բարձր է գնահատում կենցաղային ռեալիստական ուղղությունը: Հատկապես ընդգծում է Մունդուկյանի դերը՝ նշելով, որ նրա «հայտնությունը հայկական իրականության մեջ մեծ, պրոգրեսիվ նշանակություն ունեցավ»: Դեմիքճյանը հանգամանորեն վերլուծում է Մունդուկյանի ստեղծագործության յուրահատկությունը, անդրադառնում նրա լեզվի ընտրության խնդրին, միանգամայն օրինաչափ համարում թիֆլիսյան թատրոնի ընտրությունը, քանզի գրական լեզվի օգտագործումը կլիներ արհեստական ու անարտահայտիչ: Նույնպես ճշգրիտ է ներկայացված և միջավայրը, և հերոսների կազմը, որի մեջ փայլում է Պեպոյի կերպարը: Դեմիքճյանը Մունդուկյանի ստեղծագործության մեջ նշմարում է ինչպես Շեքսպիրի, նույնպես և Օստրովսկու ազդեցությունը: Առանձնացնելով «Մունդուկյանի ֆենոմենը»՝ Դեմիքճյանը իր ակնարկն ավարտում է հետևյալ գնահատականով. «Մուն-

²⁴⁵ Նույն տեղում, էջ 91

²⁴⁶ Նույն տեղում, էջ 91

դուկյանը հիմք դրեց հայ ազգային դրամատուրգիային և թատրոնին: Նրանից հետո, երբ նա ուղի հարթեց դեպի ռեալիզմ, դեպի ժողովրդի կյանքը, տվեց նրա դեմոկրատիկ ոգով ստեղծած արվեստը, արդեն դյուրին էր շարունակել: Իր ուսումնասիրության մեջ Դեմիրճյանը տեղ է հասկացնում Պետրոս Ադամյանին: «Մուն-դուկյանից հետո,- գրում է Դեմիրճյանը,- մյուս ֆենոմենը՝ Պետրոս Ադամյանը, անհամեմատ ավելի վիթխարի երևույթ եղավ հայ իրականության մեջ»: Ուշագրավ էր, որ Պուլիսը տալիս է դերասանական կադրեր, որոնք իրենց հանճարը դրսևորում են արևելահայ իրականության մեջ: Դեմիրճյանը հանգամանորեն վերլուծում է Ադամյանի արվեստը՝ դիտելով այն համատեղությամբ արվեստի գուգահեռի վրա: Այստեղ Դեմիրճյանի վերլուծականները խստապես սկադեմիական շեշտ ունեն և աչքի են ընկնում թատրոնի պատմության ու տեսության լայն իմացությամբ: Դեմիրճյանը նշում է, որ նախապես Ադամյանի ռեպերտուարում իշխում է մելոդրաման, որտեղ որոշ հետք ուներ նաև Հեքիմյանի, Թերզյանի, Թղյանի ազգային ռոմանտիկական ուղղության մելոդրամաները: Թիֆլիսյան միջավայրը Ադամյանի արվեստի ուղղությունը տանում է դեպի ռեալիզմը (Մուն-դուկյան, Չմշկյան), որը աստիճանաբար հանգում է Շեքսպիրի հայտնությանը: Դեմիրճյանը նշում է, որ Շեքսպիրի արվեստի յուրահատկությունը ըմբռնելու գործում հսկա դեր է ունեցել Գյոթեն: «Հուշեր և խոհեր հայ դրամատուրգիայի և թատրոնի մասին» աշխատության վերջաբանում Դեմիրճյանը անդրադառնում է հեղափոխությունից հետո՝ 20-ական թվականների հայ թատրոնի անկման մասին: Հեղափոխությունը ցրեց հասարակության միտքն ու ուշադրությունը դեպի թատրոնը... իրարանցում մտցրեց ողջ Անդրկովկասյան կյանքում և այդ օրերին, երբ սկսվում էր նոր կյանք, նոր աշխարհ, թատրոնի ժամանակ չէր կարծես»²⁴⁷: Ժամանակը նոր խնդիրներ դրեց թատրոնի և դրամատուրգիայի վրա, ժողովրդական և արտիստական թատրոններում տակավին չկային նոր տեղաշարժեր: Այս ժամանակ էր, որ Մոսկվայից ռեժիսոր հրավիրվեց՝ Արկադի Բուրջալովը, որը, սակայն, հայերեն չգիտեր և սկսեց նոր սկզբունքներ մշակել թատրոնում: «Բուրջալովը հայերեն չգիտեր և չէր էլ ուզում սովորել, և չէր էլ զգում ոչ մի անհարմարություն: Նա բեմադրական սկզբունք համարում էր խաղի ռիթմը, միզանսցենան, պլաստիկությունը և խմբավորումները, որոնց մեջ վարպետ էր...»²⁴⁸: Բեմական ներկայացումներում նա արժեք չէր տալիս խոսքին, քանի որ չէր հասկանում հայերենը և հիմնավորում էր նոր թեորիա՝ «խոսքին երրորդական նշանակություն տալը»: Այդուհանդերձ, Դեմիրճյանի գնահատականով, Բուրջալովը ռուսական թատրոնի սկզբունքները բերեց հայ թատրոն, դա որոշակի կազմակերպական կուլտուրա էր հայ դերասանների համար: Ընդհանուր առմամբ, Միության թատրոնները դեռ չէին տիրապետում սոցիալիստական ռեալիզմի արվեստին, դեռ տիրում էին կոնսերվատիվիստական, բիո-մեխանիկական ֆորմալիստական ուղղությունները և թատրոնը տրամալին էր դարձել ամեն տեսակ մտացածին տրյուկների և էֆեկտների համար, աղավաղվում էին դասական դրամատուրգների երկերը՝ նրանց բեմադրությունը դարձնելով պլակատ, ֆորմալիստական խաղեր և այլն: Դեմիրճյանը գրում է. «Ես չէի կարողանում առանց տխրության նայել, թե ինչպես են մեր Ավետ Ավետիսյանը, Վաղարշյանը, ինչպես և Ներսիսյանը, խաղի ժամանակ ցիրկային թռիչքներ կատարում: Բիոմեխանիկա»²⁴⁹: Դեմիրճյան-

²⁴⁷ Նույն տեղում, էջ 229

²⁴⁸ Նույն տեղում, էջ 230

²⁴⁹ Նույն տեղում, էջ 232

նը գոհունակությամբ նշում է, որ, հաղթահարելով այդ խոչընդոտները, հայ թատրոնը տիրապետում է սոցիալիստական ռեալիզմի արվեստին՝ դառնալով «հայ ժողովրդի նոր կուլտուրայի օջախներից մեկը»:

Анна Гилявян – Театр и драматургия по оценке Дереника Демирчяна. – Записи Д. Демирчяна, посвященные вопросам театра и драматургии, имеют довольно широкий охват. По этой теме Д. Демирчян выступал с ряд статьями, рецензиями, портретами и т.п. Из этих: "Задачи советской драматургии", "О драматургии", "О новом жанре" и т. п. Только перечисления статей показывает, что Демирчян вопросы театра и драматургии рассматривал как значимую сферу своей литературной деятельности. Он признал живое искусство на сцене и удачные исполнения ролей. В мемуарах упоминаются чудесные игры таких артистов, как В. Папазян, Асмик, Сирануйш, Жасмин, М. Манвелян и других. Интересны также мемуарные акцентирования, которые придают особенную привлекательность демирчяновским толкованиям.

Anna Gilavyan – Theater and dramatik art in the view of Demirchyan. – Demirchyan has very often gone into the problems of theater and Dramatic Art. He published a lot of articles and review on this topic and has a lot of portraits and notes concerning this theme. Some of them are "The problems of Soviet Dramatic Art", "On Dramatic Art", "Dramatic Art", "On a new genre" etc.. The amount of the articles shows that Demirchyan considered theater and Dramatic Art problems to be the main subject of his literature activity. He appreciates the live play on the stage and real actors. In his notes a lot of excellent actors and actresses can be found, such as V. Papazyan, Hasmik, Siranuysh, Jasmen, M. Manvelyan and others. Accentuations in Demirchyan's notes are also very interesting, as they give some separate attraction to Demirchyan's comments.

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆԻ ՍԻՐԵՐԳՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՆԵՐԸ
(Նվիրվում է Հ. Սահյանի ծննդյան 100-ամյակին)

ԱՌԴԱ ՍԱՐՀԱՏՅԱՆ

Մերը գեղարվեստական գրականության և հատկապես քնարերգության հավերժական թեմաներից մեկն է, մարդու գոյության հավերժական ուղեկիցը, մարդկային ապրումներից ամենանվիրականը գորեղը, ամենագեղեցիկն ու դրամատիկը ...

Սիրո մեծ զգացումներից են ծնվել հայ և համաշխարհային սիրերգության մեծագույն դեմքերի հրաշակերտ ստեղծագործությունները, որոնք ջնջում են ժամանակի ու տարածության բոլոր սահմանները և մարդկային սրտերը հուզում կարոտի ու ցավի, արբեցումի ու տառապանքի զգացումներով...

Ընթերցողի առաջ սիրո բազմախորհուրդ ապրումների հարուստ մի աշխարհ է բացում մեր ժամանակների լավագույն քնարերգու Համո Սահյանը: Նրա մեծ սիրո առարկան ամենից առաջ հայրենի բնությունն է՝ նրա քարափները, նրա մասրենին, նրա անդունդները, սարերն ու մթին ձորերը, լեռնային աղբյուրներն ու կաճանները, Նրա գրչի տակ շնչավորվում են քամին, անտառն ու ամպը, ձյունն ու ձնծաղիկը, առուն ու աստղը, մամուռն ու տունկը, օժտվում սիրելու, ատելու, կարոտելու ու արբենալու մարդկային հատկանիշներով: Սահյանն իրեն որոնում է հովի անվերժանելի շշուկների մեջ, տատրակների վույ-վույների ու ծիածանների ծիծաղի մեջ, մացառների, շամբուտների և մամուռների արցունքների մեջ... Եվ ընթերցողը սիրելի բանաստեղծին գտնում է նկարչի վարպետ վրձնահարվածներով ստեղծած նրա գունագեղ բնանկարներում. «Դրանք անկրկնելի են որպես հեռավոր հեքիաթների մշուշը, կուսական՝ որպես մանկության լույս երագները, անարատ՝ որպես մայրական կաթը, անաղարտ՝ որպես մանկան արցունքը: Հոգևոր սրված տեսողության, հուզական և խոհական լարման մթնոլորտում ծնվում է հրաշքը...»²⁵⁰:

Իր բնաշխարհի կանաչ ու կարմիր, սև ու սպիտակ գույները, արթնացող ամպի տազնապն ու հառաչը, անտառի շուրթի շշուկն ու խորհուրդն ունեն նաև նրա սիրո երգերը: Սահյանի սիրո երգերը նաև նրա կենսագրության էջերն են՝ բոլոր տարիքներում ապրած սերերի բազմերանգ տրամադրություններով... Դրանք մերթ պատանեկան սիրո թրթիռներ են՝ նման նոր բողբոջած ռոսերի, մերթ սիրո հեքիաթի անրջային պատկերներ են՝ կանաչ գարնան պես ծաղկափթիթ ու խոստումնալից, մերթ արդեն ապրածի մշուշոտ հուշեր՝ նման կապտավուն, անձրևաբեր ամպերի, մերթ սրտի մեջ մխրճված սիրո փշերի կսկծամորմոք սև դառնություն, հուսահատություն ու հիասթափություն, մերթ էլ անհասանելի սիրո համար ապրած տառապալից դրամա... Ապրումներ, որ դառնում են Սահյանի սիրերգության բովանդակությունը: Եվ ամեննին էլ պարտադիր չէ, որ նա սիրած կնոջ հմայքները գովերգեր, նրան տիրանալու խելակորույս ցանկություն

²⁵⁰ Հր.Թավրազյան, Գրական դիմանկարներ, հոդվածներ, Եր., 1998, էջ 259:

կամ տանջող խանդ արտահայտեր, հատկանիշներ, միայն որոնք է սիրերգությա-
նը բնորոշ համարում Ա.Ս. Հայրապետյանը. «Դասական սիրերգության լավագույն օրինակներում իշխողը սիրո զգացումն է, և դրանից ծնվող անհատական մտորումներն ու խորհրդածությունները, որոնք, անշուշտ, կրում են ժամանակաշրջանի, տիրող բարքերի, հասարակական-բարոյական նորմերի դրոշմը: Սակայն Սահյանի սիրերգությունն այնքան յուրօրինակ է, որ դժվար է նույնիսկ սովորական առումով սիրերգություն անվանել: Սիրած կնոջ գեղեցկության, հմայքների գովերգում, բուռն, խելակորույս ցանկություն սիրած էակին տիրանալու, տանջող խանդ, սիրած կնոջ իդեալականացում- այս ամենը համարյա տեղ չեն գտել Սահյանի սիրերգության մեջ»²⁵¹:

Ճիշտ է, Սահյանը չի իդեալականացնում սիրած կնոջը, տանջող խանդ չի արտահայտում նրա նկատմամբ, բայց նրա սիրերգությունը նույնքան բարձրարվեստ է ու բազմաեղանգ: Այն ծնվել ու սնվել է անցած-գնացած օրերում ապրած սիրո քաղցր ու դառնադի վերհուշերից, անցած-գնացած, բայց չմոռացված սերերից, անշշուկ, անարձագանք, համրացած, խլացած, սրտի տաք-տաք արցունքով լվացված սերերից...

Ա՜խ, այս անտեր աշխարհում

Ինչքան սերեր ունեցա:

....Բոլոր սերերն ուրացան

Հառաչանքներն իմ բոլոր:

....Բոլոր սերերն աշխարհում

Գլխիս կրակ թափեցին.../հ.2, էջ370/

Սիրո առաջին բանաստեղծությունները մանկական հիշողությունների արտացոլանքներն են: Ահա «**Երկրորդ հարկի պատշգամբը**» բանաստեղծությունը: Գյուղում, բայց գյուղից պարիսպներով պատված դղյակի երկրորդ հարկում էր ապրում սիրած աղջիկը, որտեղից նայում ու դարձյալ չքանում էր նա՝ վշտացնելով տղայի՝ սիրուց կրակված անբիժ հոգին: Մի օր էլ դափ ու գուռնով տանում են նրան... Անցնում են տարիներ. փառքի բարձունքներն է ելնում բանաստեղծը, բայց նրա համար անհաս է մնում պատշգամբն այն երկրորդ հարկի.../հ-1,174/

Մանկական սիրո անմոռանալի վերհուշ է «**Առաջին սեր**» /հ-1,175/ բանաստեղծությունը՝ անբացատրելի հույզերի, միամիտ արարքների, պարզ ու մաքուր առաջին սիրո մասին: Հետո միայն՝ տարիներ անց, պատանին պիտի հասկանար, թե ինչ էր այն զգացումի անունը, որի պատճառով քունը չէր տանում, որ չէր քարկոծում նրանց գիժ հորթերին, երբ իրենց բանջարանոցն էին մտնում, թե ինչու էր շփոթվում, երբ նրա տատը իրենց տուն էր գալիս... Նա հետո պիտի հասկանար, որ այդ է եղել առաջին սերը, որ երբեք, երբեք չի մոռացվելու և իր լույսով փարատելու է հոգին շա՛տ հաճախ պարուրած մոայլը ...

Առաջին համբույրի վախճանը հենց ու ամոթխած թրթիռը, աղջկա՝ նուան գույն ստացած դալուկ այտերի շիկնանքն ու «գողացված մեղքի» զգացումն է պատկերված «**Առաջին համբույրը**» բանաստեղծության մեջ /հ-1,174/: Թեմատիկ առումով այստեղ նորություն չկա /շատերի համար է առաջին համբույրը բանաստեղծություն դարձել/, հետաքրքիրը ապրումի պարզությունն է, անկրկնելի պահի բնականությունը:

²⁵¹ Ա.Ս. Հայրապետյան, Բնությունը և մարդը Համո Սահյանի պոեզիայում, Ե., 1974, էջ 58:

Պատանեկան հույզերի, սիրո անմոռաց ապրումների ու երազանքների քաղցր վերհուշն է **«Հրաշք լիներ»** բանաստեղծությունը.

Հրաշք լիներ, կրկնվեր,
Այն հրաշքը իրական,
Առուն ստվերս տաներ
Ջաղացպանի աղջկան.../հ-2, 20/

Մերը բանաստեղծին մեկ անակնկալ հայտնվել է ձնծաղկի պես, մի անգամ ժպտացել ու փակել է աչիկները, մեկ հայտնվել է որպես մանուշակ, թաքուն ծիծաղել ու ամոթից կախել է գլուխը, մեկ էլ եկել է որպես վարդ, գերել, խաղացել նրա սրտի հետ, փշերը նրան տվել, բուրմունքը՝ ուրիշի... **«Առաջին սերս...»**, հ-1, 182/

Անհուն թախիծ է ծորում Սահյանի սիրո երգերից. աննկատ են երջանկությունը պարզևող լուսաշող պահերը, փոխադարձ սիրո ցնծուն արտահայտությունները: Այստեղ գերակշռում են անդարձ ու անվերադարձ կորցրած սերերից, տանուլ տված կյանքից ծնված մորմոքի տրամադրությունները.

Վահագն Դավթյանը ճիշտ է նկատում. «Ո՛չ, սուկ բնանկարներ չէ, որ Սահյանը բերեց մեր պոեզիային. այդ բնանկարների ծալքերում, նրա ամենախոշոր շերտերում մի արդար ու բարի, մեծ ու ազնիվ հոգու շարժում կա, հոգու ամբողջ մի պատմություն, իսկ ճշմարիտ բանաստեղծությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ պատկերների խորքում թաքնված հոգու պատմություն...»:

Հ.Սահյանի սիրերգությունը սիրո զգացման ելևէջումների յուրօրինակ արտահայտություններ ունի: Սահյանը չի նկարագրում սիրած կնոջ գեղեցկությունը, ընթերցողը նրա բանաստեղծություններում գեղեցկուհու դիմանկար ու գեղական մարմնաձևեր չի տեսնում, ինչը շեշտվում է Նարեկացու տաղերում, Քուչակի հայրեններում, մեր ժողովրդական էպոսում, Մայաթ-Նովայի երգերում և այլն: Դրա կարիքը չկա էլ. և ո՞վ է ասում, որ սիրած էակը անպայման զգլխիչ գեղեցկություն պիտի ունենա: Ամենևին էլ՝ ո՛չ... Նրա սիրո երգերի հերոսուհին մերթամոթխած դեռատի աղջնակ է՝ անտեղյակ հարևանի տղայի թաքուն հետամըտումներին, մերթ հողեղեն, հողոտ, հողածին սիրահարին անհնազանդ ու անհավատարիմ առեղծվածային Լիլիթ՝ աննյութեղենը որոնող, մերթ աշխարհիկ ցանկություններով սովորական կին՝ բարդ ու անհասկանալի, մերթ բռնակալ, մերթ հլու, բայց, այդուհանդերձ, իր կյանքի իմաստն ու զինը, լավագույնը ամենքի մեջ.

Դու իմ կյանքն էիր, կյանքիս զինն էի,

Լավագույնն էիր ամենքի մեջ,

Դու իմ գրկի մեջ ուրիշինն էիր,

Իմն էիր միայն իմ երգի մեջ:

Առաջինն էիր, ու վերջինն էիր,

Իմ անքուն, անքեն տարերքի մեջ:

Դու իմ ձեռքի մեջ ուրիշինն էիր,

Իմն էիր միայն իմ վերքի մեջ: /հ-1, 327/

Տառապանքը պայծառ չի լինում, բայց այն պայծառ մի հիշողության հետագիծ է թողնում՝ Սահյանի սիրերգությունը դարձնելով լույսի ու ստվերի, սպիտակի ու սևի համերաշխ ներդաշնակություն...

Ավ. Իսահակյանի «Եվ քո գրկի մեջ գրկում ուրիշին» հայտնի պատկերի նմանությամբ, բայց այլ բովանդակությամբ Սահյանը երգում է մերժված սիրո եր-

գր, որ նման է հրդեհված հոգուց պոկված հուսաբեկ թառանչի: Բանաստեղծությունն արժևորվում է ոչ միայն մերժման ցավի պատճառած դրամատիկ հույզերի հարստությամբ, այլև իր նվագայնությամբ, որը պայմանավորված է նմանաձայն տարրերի ու կապակցությունների առկայությամբ /գրկի, երգի, տարերքի, ձեռքի, վերքի, գինն էիր, ուրիշինն էիր, վերջինն էիր և այլն/²⁵²:

Հոգիների դաշնություն է երագում բանաստեղծը, բայց վրա է հասնում բախումը, բաժանումը, հեռացումը՝ անպատասխան հարցականներ թողնելով օդում. ... ինչու՞, ինչպե՞ս...

Ես չիմացա, թե ինչու,

Դու չիմացար, թե ինչպես... /ՄԲ-77/

Միտք վայելումի պահերը երգեր չեն դառնում. դառնության, հուսահատության ու հիասթափության ցավոտ ապրումներն են դառնում բանաստեղծություններ: Տեղին է ասված՝ տառապանքից ու կարոտից է ծնվում ամեն լավ բան... «Ցավը, ճիշտ է, երբեք աչք չի փակում, ժամանակ առ ժամանակ բոցկլտում են արյունահոսող վերքի օջախները, բայց դրանից թունավոր հղացում չի ծնվում ու չի ստանում ցավից ծամածոժված մարմնավորում... Հոգեկան հարստությամբ են փոխհատուցված Սահյանի կորուստները, սա ցամաքած արցունքի խաղաղ հայացք է լիարժեք ապրած կյանքին, տառապանքի ակունք է, որ այս էլ որերորդ անգամ **արվեստի համար դառնում է ոսկերեր.**

Լռած զանգ է կյանքս...

Ես, ավերակ վանքս,

Էլ աղաթող չունեմ:

...Հոգեվիճակն է մղվում առաջին պլան, և ցավի ու հոգնության սաղմոսներով են ուղեկցվում սահյանական աշխարհի լուսաբացն ու մայրամուտը, ծնունդները, հարսանիքներն ու վարդավառները, ճաշթողի դադարին մաճկալի գողունի զրույցը աստծո հետ, մաճկալի թևավոր երազն ու սիրո սարսուռը...»²⁵³:

«Հիսուսավարի խաչված» բանաստեղծի «մեղադրական» է ինքնատիպ հանգավորում ունեցող ցավահառաչ **«Եթե ես մի օր»**-ը /ՄԲ-79/: Բանաստեղծը առանց պատասխան ակնկալելու հարցեր է ուղղում անգութ սիրեցյալին. եթե մի օր ինքը աշխարհից գնա, ու մ հոգին է հանելու առանց պատճառի, ու մ հառաչից է նա վեր թռչելու, ու մ է տանջելու ու խաչելու հիսուսավարի, ու մ է անճարի կոչում շնորհելու, ու մ է ահաբեկելու, ու մ սուտ խոսքով է իր մեղքը քավելու...

Մինչդեռ ինքը, սիրո անսպառ հույզերը հոգում ամբարած, պատրաստ է վերադառնալու՝ հավերժորեն սիրելու, նրա մոտ վերջին հանգրվանը գտնելու... **«Կգամ»**-ը սիրո անգուցական պտոթկում է, որ սահմաններ չի ճանաչում, ժամանակ ու տարածություն չի ճանաչում, որովհետև եթե անգամ այս աշխարհում չլինի, կգա, եթե անգամ լույսը մարած ու ինքն էլ կուրացած լինի, կգա, եթե անգամ հազար սարի ետև հազար կապով կապված ու հազար խաչով խաչված լինի, միևնույն է, կգա, եթե չկանչի էլ, կգա, կգա գետնի տակից, հեռավոր ու անհայտ մի մոլորակից կգա... Թվում է՝ ոչ թե կարողում, այլ լուծում էս բանաստեղծի ձայնը, որ գալիս է հեռավոր մոլորակներից, երկրի ընդերքից, Գյազբեկից ու Աղոթասարից... Միրած կնոջ մոտ գնալու բուռն ցանկությունը խորացնում ու խտացնում և բանաստեղծությանը հուզական անկրկնելի արտահայտչականություն է հաղորդում

²⁵² Տե՛ս **Արտ. Պապոյան**, Չափածոյի լեզվական արվեստի հարցեր, Եր., 1976, էջ 29:

²⁵³ Տե՛ս **Հ. Մահյան**, հ.2-րդ, Ե., 1984, /Ֆ. Մելոյան, Պեղախի ժամանակը /վերջաբան/, էջ 417:

տասվեց անգամ կրկնված **կգամ**-ը... /ՄԲ-80/ «**Բառակրկնությունը** լեզվական-քերականական մի իրողություն է, որ հայտնի չափով նպաստում է ասույթի հուզական լիցքավորմանը, քնարականությանն ու մեղեդիականությունը: Որպես խոսքարվեստի երաժշտականության տարրեր՝ բառակրկնությունները ...գալով առաջին գծի վրա, վեր են ածվում արտահայտչական հիմնական միջոցի՝ կանխորոշելով տողի ու հատվածի գեղագիտական ներգործության ուժն ու արժեքը»²⁵⁴:

...Եթե մինչև անգամ մեջքս ծավված լինի,
Եթե մինչև անգամ ոտքս վառված լինի,
Եվ ճակատիս հազար հողմի հարված լինի,
Միննույն է, **կգամ**, ուր էլ լինեմ, **կգամ**:
Գետնի տակից **կգամ**,
Մի հեռավոր անհայտ մոլորակից **կգամ**:
Կգամ ու թափ կտամ
Հարդագողի փոշին շեմքիդ վրա:

Անգուզական լեզվական արվեստով են հյուսված նրա երգերը. «Նրա հընչումները մերթ նուրբ են ու մեղմ՝ թավշյա խավի պես, մերթ խրոխտ են, կայծակնացայտ ու շանթող, ինչպես սամում, միշտ մնալով առինքնող ու անկրկնելիորեն ինքնատիպ: Խոսքը ձուլյ է ու միահյուս՝ իր հայրենի ժեռ ապառաժների պես, դողանջուն է ու գեղեցիկ, ինչպես հարագատ Ձանգեգուրի լեռնային աղբյուրները, մաքուր ու վճիտ, ինչպես տառապանքի արցունքը՝ սիրահարի տամուկ աչքերի մեջ»²⁵⁵:

Սիրած էակի հետ լինելու հուզագգացական տենչանքի անկրկնելի արտահայտություն է «**Թող մութն ընկներ...**» /հ-1, 185/ տասնմեկվանկանի տասը տողանոց հրաշալի բանաստեղծությունը, որն իր արտահայտչականությամբ ու պատկերավորությամբ երազային հեքիաթ-մեղեդի է կարծես:

Թող մութն ընկներ... անտառի մեջ մի հեռու
Մենք հրաշքով հանդիպեիք իրարու:
Թող մեզ վրա հացենին մեղմ օրորվեր,
Թող լուսաստղը ճանապարհին մոլորվեր,
Առավոտը թող համառեր ու չգար:
Թող չգտներ մեզ հովն ինչքան որոներ,
Մեր շշուկը թող չլսեր ոչ մի քար,
Ակնթարթը հավասարվեր մի տարու,
Չանջատվեինք, չտանջեինք իրարու:

Բնապաշտ բանաստեղծը միայն բնության մեջ է պատկերացնում սիրո պարզևած երջանկությունը: Այնքա՞ն միաձուլյ են սերն ու բնությունը. սիրո ապրումը լիարժեք է դառնում բնության մեջ՝ հեռու մի անտառում, ծովի ափին, աստղերի լույսի ներքո: Բնությունն էլ կարծես շնչավորվում է սիրո շշուկներից, անձնավորվում են հացենին, լուսաստղը, հովը, առավոտն ու անգամ քարը... Նրա բառերի հուզական կախարհանքի ուժը այսպես է բնութագրում Լ. Հախվերդյանը. «...Ինձ համար գաղտնիք է մնում, թե Հ. Մահյանն ինչպես է կարողանում հասարակ խոսակցության լեզվով բարդ ու խորունկ մտքեր բյուրեղացնել... Ինչպես է կարողանում «մաշված» բառերին առաջին գործածության թարմություն հաղոր-

²⁵⁴ Արտ. Պապոյան, նույն տեղը, էջ 86:

²⁵⁵ Տե՛ս Արտ. Պապոյան, նույն տեղը, էջ 162:

դել: Ինչպես է բառերի վրա դնում իմաստային մեծ բեռ, և բառերը... թեթև ու վստահ տանում են իրենց բեռը... Խոսքի վարպետը գիտի իր գործը... Հ. Սահյանը նման էր իր պոեզիային, ինչպես պոեզիան՝ իրեն...»:

Օռվն էր, գիշերն էր, ես էի ու դու,

Չորս հոգով էինք, էլ ոչ ոք չկար,

Թե իմանար մեզ ինչից է գրկում,

Առավոտն ինքն էլ երևի չգար:

Մենք մեզ իրար մեջ որոնում էինք,

Դաշնությունն էինք հյուսում մեր հոգու,

Աստղերից կախված օրորվում էինք...

Օռվն էր, գիշերն էր, ես էի և դու: /հ-1, 192/

Թվում է՝ պարզ մի նկարագրություն է բանաստեղծությունը, բայց «Որքան էլ արտաքին նկարագրությունը առաջին հայացքից գերիշխող լինի քնարական ստեղծագործության մեջ, այն միշտ իր ներսում պարփակում է լիրիկական հույզ, ապրում: Մուրջեկտի հուզական աշխարհի դրսևորումները /սեր, հուսահատություն, տխրություն, կարոտ, վիշտ, հրճվանք և այլն/ ի վերջո անընդհատ կրկնվում են տարբեր ձևերով, իսկ պոեզիայի անսահման բազմազանությունը ծնվում է դրանց արտահայտման ամենատարբեր եղանակներից: Մի դեպքում դա սոսկ բառերի կամ հնչյունների խաղ է, մեկ այլ դեպքում՝ գուտ լիրիկական խոհի պատկերում, մյուս դեպքում՝ բնանկար կամ թվացյալ սյուժեի, գործողության տարբեր, իսկ երբեմն էլ՝ այս ամենի այլևայլ գուգորդումներ»²⁵⁶:

Մերը կարող է այցի գալ նաև կյանքի մայրամուտին. մեծերի կենսագրության մեջ սա օրինաչափ է ու հասկանալի: Մերը Աստծու կողմից մարդուն շռայլորեն տրված պարզն է, կյանքի ու գոյության իմաստը, ապրելու խորհուրդը: Մերը տարիք չի ճանաչում, բայց տարիքների հակադրությունը տխուր մտորումների և դրամատիկ ապրումների առիթ է տալիս նաև Սահյանին: Ահա նրա տրիոլետներինց մեկը, որը լեզվաարտահայտչական մի քանի միջոցների վարպետ գործածությամբ /շրջադասությամբ, փոխաբերություններով, բաղաձայնություններով, հակադրություններով և այլն/ հնչում է որպես կյանքի աշունն ապրողի տխուր խոհ.

Դեռ նոր է պայթում բողբոջը քո,

Տերևաթափ է իմ անտառում...

Խուլ մի խուճապ է իմ անտառում,

Դեռ նոր է պայթում բողբոջը քո:

Ուշ է, մշուշ է ու երեկո,

Մի սև սարսափ է իմ անտառում,

Դեռ նոր է պայթում բողբոջը քո,

Տերևաթափ է իմ անտառում: /ՄԲ-238/

Միրո անվերադարձ վայելումի անհնարինությունն ու ավստասնքի անկումային տրամադրությունը տխրության քողով են պարուրում բանաստեղծի հոգին, որովհետև

ինչպես անհամատեղելի են մայրամուտն ու առավոտը, այնպես էլ ինքը և **Նա՝** հավանաբար ցողոտ-շաղոտ մի լուսաբաց-աղջիկ /**«Դու առավոտ ես, ես մայրամուտ եմ»**/.

²⁵⁶ **Ս. Ջրբաջան**, Բնապատկերը իբրև քնարական ապրումի արտահայտման միջոց, ԵՊՀ, Համալսարան-2002, Ե., 2002, էջ120:

Ես առավոտ եմ, դու մայրամուտ ես,

Մի ողջ ցերեկ է բաժանում մեզ... /հ-1,182/

Համեմատության մեջ նոր որակ ու անգուգական ուժ են են ստացել անձնավորված **առավոտ, մայրամուտ ու ցերեկ** բառերը, որոնք ասելիքը դարձրել են առավել ներգործուն, ապրումը՝ դրամատիկորեն հուզական: «Ու թեն հուզական ապրումը ողջ արվեստի անքակտելի աղբյուրն է, բայց այն լիրիկայում արտահայտված է ավելի բացահայտ, շոշափելի ձևով՝ հանդիսանալով լիրիկայի բազան... Միայն ապրումներ,-դրանք կարող են միանգամայն տարբեր լինել՝ կախված նրանց հատուցող կենսական պարագաներից, և մնացած ամեն ինչ միայն ապրումների միջոցով,-այս է քնարերգության հիմնական սպեցիֆիկ գիծը»²⁵⁷:

Կենսական բազմազան ապրումների ծնունդ են Սահյանի բոլոր սիրերգերը:

«**Գիշերերգում**» արթուն գիշերվա տանջանք կա, հառաչանք, մի անգամ տրված կյանքը վայելելու համամարդկային պահանջ, որ միայն սիրո գոյությամբ է պայմանավորված, և որը միակ օազիսն է անապատ-աշխարհում, բայց, ցավոք, նա էլ էր միրաժ, ու սիրո մեծ տառապանքի մատյանում գրանցված բանաստեղծին մնում է սրտի տաք-տաք արցունքով լվանալ իր անցած-գնացած սերերը /«**Այս անապատ աշխարհում**»/: Սահյանի սիրերգերը հոգեբանական խորունկ խորքեր ունեն՝ նուրբ ու համոզիչ, իրարամերժ ու հակասական հույզերի ալեբախումներով: Մեկ նրան տեսնում ենք հեռանալու, մոռանալու, չհիշելու, խելքի ձեռքից ավերից փախած գետի պես ծովն ընկնելու ու կորչելու որոշման պահին, մեկ էլ՝ գոջման, երբ նա պատրաստ է իրեն ծովից գողանալու, նորից տալու Նրան... /«**Չհիշեի քեզ**», հ-2, 165/: Ի վերջո, ինչպես Սևակն է ասում, մարդուն, ՄԱՐԴ ԱՐԱՐԱՄԻՆՆԸ, ՄԱՐԴՈՒՆԸ է հատուկ սիրելը, հիասթափվելը, ասելն ու կրկին սիրելը և «Իսկական բանաստեղծությունը չի կարող չլինել զգացմունքային, բայց այդ զգացումն էլ չի կարող չլինել խոհական, որովհետև մենք մարդ ենք կոչվում, այսինքն՝ Homo sapiens, այսինքն՝ ԲԱՆԱԿԱՆ արարած, որի զգացումներն էլ պիտի լինեն բանական, ինչպես բանականությունն է զգայական»²⁵⁸:

Տարիքի հետ իմաստնանում է բանաստեղծը, իմաստավորում են ապրած տարիները, որոնցից յուրաքանչյուրն իր գույնն ունի, իր խորհուրդը: Տարիների հեռվից գալիս, բանաստեղծի առաջ հառնում են ապրած բոլոր տարիները՝ սիրավոր ու սևավոր, թևավոր ու ձիավոր /«**Տարիներս**»/: «Իր կյանքի կեսօրին բանաստեղծը, Չարենցի ասածի պես՝ դառնում է իմաստուն, որ գալիս է հասակից, ճանապարհից, ցավերից ու երազներից, ժողովրդական փորձից ու անձնական որոնումներից: Բայց ամեն դեպքում նա մնում է հուզական լարումների, հին ու նոր ապրումների և երազների տարերքում: Ինչպիսի՞ բնականությամբ են իրար հյուսված ցավն ու սերը, **սևն ու սպիտակը**, խեղճությունն ու թռիչքը, քանի՞ նորարարական բանաստեղծություն կարող է կշռել այս գույլալ ու անպաճույճ երգը՝ մարդու ճանապարհի, հեռավոր կարոտների և մորմոքների մասին: Մա հավերժական այն դրաման է, որն ապրում է բոլորի մեջ, բոլոր ժամանակներում, բայց ամեն անգամ հնչում է նոր լեզվով ու այրումով»²⁵⁹:

²⁵⁷ Գրական ժանրեր. Պատմական զարգացումը և ժամանակակից վիճակը, Ե., 1973, էջ 176:

²⁵⁸ Տե՛ս **Պ. Սևակ**, հ.3. , Ե., 1983, էջ 244, 263:

²⁵⁹ **Հր.Թավրազյան**, նույն տեղը, էջ 255:

Տարիներ~րս, տարիներ~րս,
Ուր մնացին տարիներս,
Կանաչ-կարմիր,
Սև-սպիտակ տարիներս,
Իմ սառն ու տաք,
Ծուռ ու շիտակ
Տարիներ~րս, տարիներ~րս:
...Իմ սիրավոր,
Իմ ձիավոր
Տարիներս ու՞ր մնացին...

Համո Սահյանի սիրո երգերը պարզ են, բնական, անկեղծ ու անբռնազրու: Նրանք նման են իր ապրած տարիներին. կանաչ են, կարմիր, սև ու սպիտակ, սառն ու տաք, ու բոլորը՝ սիրավոր~ր, սիրամորմոք...

Аида Саргатыан – Палитра любовных песнопений Амо Сагияна. – Из множества нитей любовных переживаний переплетены любовные песни лучшего лирика наших времен Амо Сагияна, являясь страницами его биографии они предстают нам многоцветьем любви прожитых им в разном возрасте... То они незабываемые трепетания юношеской любви, то бесконечные желания любить и быть любимым, то туманные воспоминания уже прожитых чувств, муки, страдания и разочарования, то драма рожденная от недостижимой любви... И все переживания просты и естественны, откровенны и непосредственны, мелодичны и колоритны, похожие на прожитые годы поэта- красные и зеленые, черные и белые...

Aida Sarhatyan – Colors of Hamo Sahyan love lyrics. – The love songs of modern lyricist, Hamo Sahyan were woven by multi feelings of love, which are the pages of his biography: with love colors felt in all ages. They are either unforgettable vibrations of youth love, or infinite desire to love and be loved, or hazy memories of felt feelings, suffering and disappointment or drama born from inaccessible love. And all feelings: simple and natural, frank and direct, colorful and melodic...

**ՆԵՌՈՒՄԱՆՏԻՉՄԻ ՏԵՍԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄԸ
ՌՈՒՄ ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՃ**

ԱՐՄԻՆԵ ԱԴԱՄՅԱՆ

Համաշխարհային գրականագիտության՝ մասնավորապես գրականության տեսության և գրաքննադատության ամենագրավիչ և հարցահարույց, միաժամանակ տեսականորեն բարդ ու բազմատարր խնդիրներից է նեոռոմանտիզմի սահմանման ու տարրոշման, առավել ևս բազմաթիվ գրական ուղղությունների և հոսանքների, գեղարվեստական մեթոդների գունեղ խճանկարում գրական այս յուրօրինակ երևույթի ամրագրման խնդիրը: Քննվող հարցի նրբությունը և դիտարկման ավանդական կաղապարները հաղթահարող զարտուղությունը էապես պայմանավորված են այն նշանակալից հանգամանքով, որ նեոռոմանտիզմը՝ իբրև գրական - պատմական գործընթացի փուլային դրսևորում և գեղագիտական ոճամտածողության նոր աստիճան, հանդես եկավ 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի եզրագծին՝ նորամուտ հարյուրամյակի առաջին տասնամյակը ևս ներառելով իր շրջապատյուրի մեջ: Նշված ժամանակաշրջանը, որպես կանոն, հատկանշվում է գրական - գեղարվեստական որոնումների ու հակասությունների, նորարարական միտումների ու «փորձարկումների» երբեմն կանոնակարգված, երբեմն էլ տարերային ու խուռնեղամ երևակումներով, արդեն իսկ ամրակայված և հեղինակավոր, ինչպես նաև «ինքնադրսևորման» ուղին բռնած նորընձ-յուղ ուղղությունների ու դպրոցների, մեթոդների ու տեսական ըմբռումների ուշագրավ մրցապայքարով: Ուստի չպիտի զարմանալի թվա այն իրողությունը, որ թե՛ անցյալի, թե՛ մերօրյա բազմահմուտ տեսաբաններն ու գրականության պատմաբանները վաղուց խոստովանել ու խոստովանում են դիտարկվող խնդրին հստակ և միահունչ մեկնաբանություն տալու դժվարությունը՝ արտահայտելով տարբեր տեսակետներ:

Վերոնշյալ հարցի դիտելի կողմերից մեկն էլ այն է, որ, ի տարբերություն եվրոպական և ռուս գրականագիտության, հայ տեսական - գրաքննադատական միտքը շատ քիչ է անդրադարձել նեոռոմանտիզմի խնդրին, թեև այս դեպքում չպիտի անտեսել եզրույթի և երևույթի տարբերակման անհրաժեշտությունը²⁶⁰, քանզի միշտ չէ, որ հիշյալ գրական իրողությունն ընկալվել է «նեոռոմանտիզմ»²⁶¹ անվամբ: Նշենք, սակայն, որ երևույթը բնութագրող հետաքրքիր և նույնիսկ դարակերտիկ դրսևորումներ հայ իրականության մեջ, այնուամենայնիվ, եղան, որ, տվյալ ժամանակաշրջանին բնորոշ նոր գեղարվեստական - գեղագիտական փնտրտուքների ու իդեալների մարմնացումը լինելով, ուրույնացան պարզունակ կրավորական դրոշմից գերծ ազգային ինքնատիպ դիմագծով:

²⁶⁰ Նշված տարբերակումը հիմնականում պայմանական բնույթ է կրում, բայց որոշ դեպքերում, ինչպես կտեսնենք հետագա շարադրանքում, ուղղակիորեն անհնար է շրջանցել այն:

²⁶¹ Խոսքը ոչ միայն հայ, այլև ռուս և եվրոպական գրական տիրույթներին բնորոշ տարակարծությունների մասին է. գրական-գեղագիտական նորաշունչ հոսանքն արձանագրելով հանդերձ՝ որոշ տեսաբաններ կա՛մ խուսափել, կա՛մ էլ պարզապես այլ «վերաառությամբ» են լուսաբանել այն:

Ի դեպ, ռուս գրականագիտության մեջ ևս հարցն ամբողջական և համա-կողմանի քննության չի տրվել. իհարկե, այս դիտանկյունից ռուսական տեսական մտքի ձեռքբերումները խոստումնալից են (գրական – պատմական միջավայրում և գրականության տեսության մեջ «նեոռոմանտիզմ» գիտական եզրը միանգա-մայն որոշակի, ինքնուրույն գործածություն ունի²⁶²), սակայն դեռ չկան բավակա-նաչափ լիարժեք ուսումնասիրություններ, որոնք կբացահայտեին նեոռոմանտիզ-մի առնչություններն այլ գրական հոսանքների, ուղղությունների և դպրոցների հետ: Նեոռոմանտիկական շարժման վերլուծությունը դեռևս համապատասխան տեղ չի գրավում գրականության տեսության և պատմության վերաբերյալ գիտա-կան աշխատություններում և ձեռնարկներում: Անդրադառնանք, սակայն, այն էական և հարցի պատմության տեսանկյունից ուշագրավ ձևակերպումներին ու տեսակետներին, որոնք հնչել են տարբեր տարիների ռուս ականավոր գրակա-նագետների կողմից:

«Նեոռոմանտիզմ» եզրույթը շրջանառվել է դեռևս 19-րդ դարավերջին ռուս նշանավոր սիմվոլիստ, մտածող և գրաքննադատ Դ. Մերեժկովսկու, ավստրիացի գրող և էսսեիստ Հուգո ֆոն Հոֆմանսթալի և ուրիշների կողմից, իսկ 20-րդ դ. երկ-րորդ կեսին առավել կամ նվազ չափով հաստատվել ռուսական, գերմանական, անգլիական և ամերիկյան գրականագիտության մեջ:

Ժամանակի հայտնի գրական – մշակութային հանդեսներից մեկում լույս տեսած իր մի բովանդակալից հոդվածում՝ «Նեոռոմանտիզմը դրամայում»²⁶³ վեր-տառությամբ, Դ. Մերեժկովսկին նշում է «նեոռոմանտիզմ» անվանումը, Մորիս Բուշորի, Մորիս Բոբորի, Մետեռլինկի, Գերհարդ Հաուպտմանի դրամաները համարում նեոռոմանտիկական արվեստի ցայտուն նմուշներ: Նախապես տալով անցման դարաշրջանի քաղաքական – հասարակական մթնոլորտի սեղմ, բայց դիպուկ բնութագիրը՝ քննադատը շեշտում է, որ ժամանակակից մարդն ապրում է մտավոր տագնապի, թափառումների, խուճապի, անհայտ ապագայի հանդեպ հիվանդագին – խռովահոյզ և անպտուղ պոռթկումների ամենաձանր ու տանջա-լից ժամանակահատվածը: Եթե քաղաքական կյանքի հորիզոնը մոայլվում է Ա-նիշխանականություն (անարխիզմ) կոչվող հրեշի ամենակույ և անձռոնի սովե-րով, ապա «գեղարվեստական անարխիզմի» առաջին քայլերը նկատելի են գրա-կանության ասպարեզում. «Գրականությունն արտացոլում է իրականությունն ինչպես մի ճշմարիտ, երբեմն նույնիսկ գուշակ հայելի: Այն, ինչ կյանքում դեռ ա-նորոշ կերպով է կանխագագցվում, արվեստում արդեն իրագործվում է: Այս ա-ռումով չափազանց հետաքրքիր է դիտարկել ծնվող գրական դպրոցների ընդլը-զումը ռեալիզմի, պոզիտիվիզմի, նատուրալիզմի հին սկզբունքների և օրենքների

²⁶² Որոշ վերապահումներ, իհարկե, կան (այս մասին տե՛ս սույն հոդվածի էջերում):

²⁶³ Դ. Մերեժկովսկին հիշյալ հոդվածում ներկայացնում է իր ժամանակի եվրոպական գրականության մեջ ընձյուղավորված նեոռոմանտիկական դրամայի առանձնահատկությունները և հնչած քննադա-տական կարծիքներն ու արձագանքները: Թեև հոդվածագիրը քննում է միայն եվրոպական նեոռո-մանտիզմի դրսևորումները՝ մասնավորապես ֆրանսիացի, բելգիացի և գերմանացի դրամատուրգնե-րի նեոռոմանտիկական պիեսները, սակայն այս հոդվածը, հիրավի, նեոռոմանտիզմի յուրօրինակ հռչակագրի դեր ստանձնեց ռուսական իրականության մեջ: Քանի որ այն արտացոլում է Դ. Մերեժ-կովսկու վերաբերմունքը նորաստղծ նեոռոմանտիկական դպրոցի հանդեպ, դիտելի է նաև որպես համաժամանակյա կարևոր գրական վավերագիր, ուստի անհրաժեշտ ենք համարում մեր ուսումնա-սիրության մեջ մանրամասնորեն անդրադառնալ Մերեժկովսկու տեսական արծարծումներից մի քա-նիսին:

դեմ, որ գրեթե միասնաբար իշխում են վերջին երեսուն տարիների եվրոպական գրականության մեջ»²⁶⁴:

Մերեժկովսկին պատճառաբանում է «նեոռոմանտիզմ» անվան ծագումնաբանությունը՝ ելնելով պատմական – գրական օրինաչափության տրամաբանությունից, բազմաթիվ երևույթների կամ գործընթացների մասին կարելի է ասել, որ սկիզբը և վերջը ունեն ընդհանրություններ, նման են իրար. զուր չէ, որ շատ քննադատներ նոր շարժումը որակում են իբրև նեոռոմանտիզմ: Իրապես, համոզված է Մերեժկովսկին, այն ամենը, ինչ վերապրում է 19-րդ դարավերջի քաղաքացին, շատ գծերով հիշեցնում է դարասկզբի նույնակերպ շարժումը՝ «նախ, պատանեկան ռոմանտիզմը», այն տարբերությամբ միայն, որ ինը տասնամյակ առաջ՝ ռոմանտիզմի կազմավորման նախօրեին, նմանաբնույթ որոնումների, հոգեկան խռովքի ու խառնաշփոթի, անընդգրկելի հույսերի ու «համաշխարհային վշտի» ալիքը ծավալվում էր ոչ թե անկարգ ու անվերահսկելի քաոսի (անարխիզմ), այլ նապոլեոնյան մարտերի, ոչ թե դինամիտային ռումբերի պայթյունների, այլ թնդանոթների որոտի ողբերգական և վիթխարի հիմնապատկերի վրա:

Նորագույն ռոմանտիկների ձգտումները յուրահատուկ հստակությամբ պիտի արտացոլվեին տարատեսակ ներգործություններին առավելագույնս ենթակա գրական ժանրում՝ դրամայում: Ըստ էության՝ դրամատիկական արվեստը հասարակության մեջ իշխող տրամադրությունների ամենազգայունակ ցուցիչներից մեկն է, որովհետև բեմական ստեղծագործությունը ամենից ավելի, քան որևէ այլ տեսակ, կախված է դրամատուրգի անհատական ստեղծագործության և ամբոխի գերիշխող ճաշակների, հանդիսատեսի տրամադրության մշտադադար փոխազդեցությունից: Ահա թե ինչու, եզրակացնում է Մերեժկովսկին, անսխալ բնագոյով առաջնորդվող նեոռոմանտիկներն իրենց մարտական գրոհն առանձնահատուկ կրքով ուղղեցին ժամանակակից թատրոնի ռեալիստական, ինչպես նաև ավելի հին՝ դասական պատվարի դեմ: Մետեյլինկը Բելգիայում, Մորիս Բուշոնը, Սիլվեսթրը, Բոբուրը և շատ ուրիշներ Ֆրանսիայում, Հաուպտմանը Գերմանիայում, Իբսենը Նորվեգիայում՝ բոլորն ասես պայմանավորված իրենց ճիգերն ուղղում են մի հիմնակետի՝ ընդհանուր ճանաչում գտած բեմական հին կանոնների և հասարակական ճաշակի վերափոխմանը, նոր իդեալիստական հիմքերով **դրամայի** վերածնությանը:

Մերեժկովսկին հետաքրքրությամբ է դիտարկում մեծ մասամբ երիտասարդ սերնդին պատկանող գերմանացի քննադատների վերաբերմունքը բելգիական և ֆրանսիական նեոռոմանտիզմի ներկայացուցիչների հանդեպ: Նրա հավաստմամբ՝ տեսաբան Կոնրադ Ալբերտին (Կոնրադ Ջիտենֆելդ) իր քննադատական էսյուներից մեկում հապճեպ և հազիվ թե արդարացի գնահատական է տալիս նեոռոմանտիկական դպրոցին. քննախոսության մի փորձ, որը գերձ չէ Գերմանիայում «նորաձև» դարձած ծայրահեղ ազգայնամոլության մասնաբաժնից: Գերմանացի քննադատի կարծիքով՝ Ֆրանսիայում սկսված այդ շարժումը թերևս նյարդային գրգռումի արդյունք է և ոչ թե հոգևոր վերածնունդի միտում: Նոր զգացողություններ, նյարդային համակարգի ցնցումներ՝ հնարավորինս բուռն և անսպասելի տպավորությունների ազդեցությամբ, ահա այս վերջնագծին են նրա պատկանում նոր հոսանքի հետևորդ ֆրանսիացի դրամատուրգները՝ չինա-

²⁶⁴ *Д. Мережковский*, Неоромантизм в драме, «Вестник иностранной литературы», СПб., 1894, № 11, с. 99-123 (http://dugward.ru/library/merejkovskiy/merejkovskiy_neoromantizm_v_drame.html):

յելով ջանք ու եռանդ: Երբեմն դրանից ինչ-որ բան ծնվում է՝ իմաստալից և գեղեցիկ, խոստովանում է Ալբերտին, իսկ երբեմն «արարվում» է հերթական անմտությունը: Մերեժկովսկին հետևողականորեն արձանագրում և վերլուծում է Կոնրադ Ալբերտի «հականեռոժմանտիկական ընդվզումը»։ «Ֆրանսիացիների համար,- շարունակում է Ալբերտին ինքնահատուկ ազգային մեծամտությամբ,- արվեստը և քաղաքականությունը սուկ գրավիչ խաղեր են, խանդավառության դրսևորման միջոցներ: Գործողությունները փոխարինվել են հույզերով. քաղաքականության ոլորտում տիրում է մեծ խառնաշփոթը, արվեստում՝ նեոռոմանտիկական»²⁶⁵: Նեոռոմանտիզմի և Մետեռլինկի հեքիաթային թատրոնի ծագումը Ալբերտին պատճառաբանում է անբուժելի ֆրանսիական թեթևամտությամբ, լուրջ հիմքերից զուրկ և նորաձև համարվող ցանկացած մարմնաչի տրվելու սովորությամբ:

Մերեժկովսկին, ոչ առանց ժպիտի, մատնանշում է գերմանացի քննադատի՝ միամիտ շովինիզմի շնչով լեցուն դատողությունները. այսպես, ուրեմն, դեռ հասկանալի և ներելի է, որ գրական օժտվածությամբ «թույլ և տգետ» մի ժողովուրդ, ինչպիսին ֆրանսիացիներն են, տարված է նեոռոմանտիզմով: Բայց իրենք՝ «անհունորեն կրթված գերմանացիները», իրենք ինչպես կարող էին հրապուրվել այդ փարիզյան նորամուծությամբ. ահա ինչը չի կարելի ո՛չ հասկանալ, ո՛չ ներել...

Մերեժկովսկին անդրադառնում է նաև այլ գերմանացի տեսաբանների՝ Կարլ Կրաուսի և Թեոդոր Վոլֆի հայացքներին: Ի տարբերություն Կոնրադ Ալբերտի և Կարլ Կրաուսի՝ անհամեմատ լրջմիտ, խորաքնին ու հիմնավոր են Թեոդոր Վոլֆի տեսական ընդհանրացումները Մետեռլինկի մասին, որ նա շարադրել է իր «Հեքիաթային թատրոնը» ("Mar-chensoiel") քննադատական ակնարկում: Արժե փոքր-ինչ հանգամանալիորեն ծանոթանալ Մետեռլինկի՝ իբրև նեոռոմանտիկական թատրոնի ներկայացուցչի մասին վերջինիս կարծիքին: Վոլֆը նախ բացահայտում է ֆրանսիացի նեոռոմանտիկների «տառապանքի» հիմնադրյալը. այդ հանդուգն, կրքոտ, բայց թույլ և հիվանդ երագողներն անդադրում փնտրում են նոր իդեալ՝ անսպասելի, թեկուզ անբնական, ստապատիր, բայց անպայմանորեն նոր, գայթակղի չ խաբկանք:

Մետեռլինկն իր «Ջերմոցներ» ("Serres Chaudes", 1889) բանաստեղծությունների ժողովածուով հարում է այսպես կոչված «անառողջ» հոսանքին: Սակայն խորապես սխալվում են այն քննադատները, որոնք, արտաքին ձևին տուրք տալով, նրան համարում են պարզունակ և միամիտ գրող: Այդ թվացյալ պարզությունը, իրապես, անսահման բարդ պտուղն է անսահման բարդ աշխատանքի:

Սարսափի և զարմանքի հեքիաթային սարսուռը Մետեռլինկի համար նորաձև խաղ չէ, այլ՝ էության, ներանձնական պահանջմունքի գոհացում: Մետեռլինկը տեսնում է երեխաների ճերմակ, խաղաղ հոգիները, որ կեսգիշերին ճախրում են հեքիաթային պարտեզների վրա: Թեոդոր Վոլֆն ուրվագծում է մետեռլինկյան դրամաների հիմնական մեկնակերպը. Մետեռլինկի աշխարհում բնակվում են միայն երեխաներ: «Այնտեղ բոլոր մարդիկ՝ թե՛ սպիտակահեր, թե՛ ոսկեզանգուր, գործում, սիրում, ծիծաղում, լալիս են, ինչպես մանուկները: Նույնիսկ նրանց արատներում ինչ-որ մանկական բան կա, նրանց կրքերում և ցանկություններում՝ երեխայական-մաքուր մի բան»²⁶⁶:

²⁶⁵ Տե՛ս նույն տեղը:

²⁶⁶ Տե՛ս նույն տեղը:

Կարծում ենք՝ Մետեռլինկի՝ նուրբ և դալուկ խորհրդավորությամբ պարուրված հերոսների մասին Վոլֆի նույնքան մեղմ ու համակրալից գնահատականն է պատճառը, որ խորհրդապաշտ Մերեժկովսկին երբեմն ընդարձակ դրվագներ է մեջբերում Վոլֆի հեքիաթաշունչ տողերից: Ահա մեկ օրինակ. «Նրանք ապրում են մշուշով սքողված հինավուրց դոյակներում: Ամեն ինչ այնտեղ հին է, փտած և երերուն: Ամենուր փչում է պաղ խոնավությունը: Ներքում՝ գետնի տակ, մթին, գաղտնի մառաններն ու նկուղներն են: Արևի ճառագայթները երբեք չեն թափանցում այդ մռայլ հարկաբաժինները, այլ հագիվ լուսավորում են այգին, որտեղ սաղարթախիտ, հարյուրամյա կաղնիները խիստ թանձր ստվեր են նետում: Բոլոր պիեսներում միևնույն աշխարհն է, օրվա միևնույն պահը՝ աղջամուղջների և գիշերվա միջնահատվածը, և մոտավորապես միևնույն դեմքերը՝ ծեր թագավորներ՝ բարի և թախճոտ, հիվանդ արքայադուստրեր՝ թույլ ոտիկներով, ծփացող զանգուրներով, հնազանդ և մելամաղձիկ սիրով տոչոքուն հավատարիմ արքայորդիներ, իշխանատենչ թագուհիներ՝ կանաչ, սարսափելի աչքերով: Եվ նրանք բոլորը երեխաներ են»²⁶⁷:

Ըստ այդմ՝ ընդհանուր գունաշխարհը, լույսի վետվետումները մետեռլինկյան դրամաներում աղոտ և նուրբ են, ինչպես միամիտ իտալացի վարպետների կտավներում:

Ներկայացնելով վերոնշյալ գերմանացի քննադատների ինչպես խիստ, այնպես էլ բարեհաճ արձագանքները՝ Մերեժկովսկին միաժամանակ ցուցահանում է նորագույն թատերագիրների գլխավոր թերությունը, ստեղծագործություններն այնչափ առեղծվածային են, որ հեղինակներն ստիպված հանդես են գալիս բեմի վրա՝ հանդիսատեսին և գրախոսներին մանրամասնորեն լուսաբանելով, թե հատկապես ինչ են կամեցել արտահայտել այս կամ այն սիմվոլի միջոցով: Առհասարակ, վատ նշան է, երբ գրողն ապավինում է իր դրամաներին կցած առաջաբաններին, ներածական մասերին, սեփական պիեսների վերաբերյալ գրած քննադատական հոդվածներին: Այն, ինչ կենդանի, գործող կերպարների միջոցով մեկնաբանված չէ հանդիսատեսի առջև, այլևս չի բացատրվի ոչ մի նախաբանով, լրագրային ոչ մի նախապատրաստական հոդվածով, սա է Դ. Մերեժկովսկու տեսակետը: Նկատելի է, հավելում է Մերեժկովսկին, որ հանդիսատեսին նվաճելու փոխարեն նեոռոմանտիկները հաճախ փորձում են համոզել քննադատներին:

Իր ծավալուն հոդվածի վեցերորդ ենթագլխում («Բոբուրը և իդեալիստական դրաման») Մերեժկովսկին հիշատակում է ֆրանսիացի նեոռոմանտիկ Մորիս Բոբուրի այլաբանական փոքրածավալ արձակ պոեմը՝ «Կանաչ և սառը ջուրը» խորագրով (1893)՝ այն խորհրդանշական համարելով գրողի գրական դավանանքի բնութագրման տեսանկյունից: «Այստեղ մենք արդեն կանխագրում ենք գրողին, որին վիճակված է հասնել նեոռոմանտիզմի անսանձահարելի ծայրահեղություններին»²⁶⁸, - խորհրդածում է Մերեժկովսկին:

Երկի սյուժետային հյուսվածքը սիմվոլիկ արժեք ունի: Քաջ լողորդները ցանկանում են կտրել-անցնել «սառը, կանաչ ջրերը»՝ հասնելու համար իրենց Իդեալին: Ջրերի կենտրոնում վեր է խոյանում ապակյա վիթխարի պատը, և նավարկողները՝ բանաստեղծը և նրա միակ ընկերը, պետք է հաղթահարեն թափանցիկ, սարսափելի արգելքը, որպեսզի մոտենան բաղձալի երազին: Կյանքնե-

²⁶⁷ Տե՛ս նույն տեղը:

²⁶⁸ Նույն տեղում:

ըը վտանգելով՝ մխրճվում են նրանք պատի մեջ՝ կոտրելով ապակին: Մուր բեկորները ծակծկում, խրվում են սրտի և ուղեղի մեջ, և շուտով ողջ մարմինը վերածվում է համակ բաց խոցի... Նրանք, սակայն, չհնայելով ոչինչ, ավելի ու ավելի հեռուներն են մղվում իրենց խորհրդավոր նավակով՝ հատելով սառը, կանաչ ջրերը: Աստվածների պես հպարտ՝ նրանք չեն զգում տանջանքները, որովհետև վերջապես հասնում են այն երկիրը, որի համար ստեղծված էին: Նրանց դիմավորում և մեծարում են որպես հաղթահանդեսի հերոսների, ծնկաչոք երկրպագում, ողողում են ծաղիկներով ու փառաբանություններով:

Մերեժկովսկին քողազերծում է գրվածքի այլաբանական նրբիմաստը. «կանաչ, սառը ջուրը» ոչ այլ ինչ է, եթե ոչ խորհրդանիշը նատուրալիստական դպրոցի, որ իդեալիստները պետք է հաղթահարեն: Բայց առավել քիչ է հայտնի, թե որն է արյունոտ զոհեր պահանջող Իդեալիզմի բուն էությունը: Ի վերջո, ամեն ինչ հանգում է այն հետևությանը, թե Բոբուրի և ամենայն հավանականությամբ նրա համախոհներից մեծ մասի ընկալմամբ՝ իդեալիզմը նատուրալիզմի կտրուկ ժրխտումն է:

Գնահատելով Մետեռլինկ դրամատուրգի բացառիկ տաղանդը՝ Մերեժկովսկին չափազանց թույլ և մակերեսային է համարում նեոռոմանտիկական թատերական արվեստի՝ իր կողմից դիտարկված բոլոր փորձերը, որտեղ փիլիսոփայական միտումը սոսկ նորաձև և ապարդյուն նկրտում է: Բողբերի և Էդգար Պոյի ստեղծագործական ավանդների այդ անվերջանալի կրկնությունները պարզապես անուժ և խամրած ընթրիինակումներ են: «Այս բիրտ և միաժամանակ երկչոտ փորձերի վրա կենտրոնանալու դեպքում նեոռոմանտիկական թատրոնի համար չի կարելի կանխագուշակել լուրջ ապագա»²⁶⁹, - եզրակացնում է Մերեժկովսկին: Նրա կարծիքով՝ իր ժամանակի գերմանական դրամայի ուսումնասիրությունը հուշում է, որ նորակազմ նեոռոմանտիկական դպրոցը թերևս առավել խոր, առողջ և ամուր արմատներ է ձգում Գերմանիայում, քան Ֆրանսիայում և Բելգիայում:

Եվ, այնուամենայնիվ, 20-րդ դ. նախաշեմին Դ. Մերեժկովսկին տարբերակում է «նեոռոմանտիզմ» և «դեկադենտություն» գիտաբառերը, գիտակցում նեոռոմանտիզմի՝ այդ դեռևս մշուշոտ, անուրվագիծ, բայց խորքային երևույթի ծավալման ուժն ու հեռանկարը: Ռուսական սիմվոլիզմի հիմնադիրներից մեկի ու հոչակավոր տեսաբանի պատկերավոր բնորոշումն արդեն իսկ խոսում է նրա խորունկ ընկալունակության և լրջախոհ վերաբերմունքի մասին. «Ողջ եվրոպական գրականությունը նվաճած, դեռ սակավ պարզաբանված, բայց իր բազմազանությամբ, այրող ու հիվանդագին սրությամբ զարմանալի, մեծաշեն ու համառ այս երևույթից, ինչ խոսք, չի կարելի խուսանավել մակերեսային քննադատության քիմքին հաճելի, բայց ոչինչ չասող «այլասերում», «դեկադենտություն» եզրույթներով: Ամեն դեպքում եվրոպական արվեստի, գուցե և մշակույթի ապագան կախված է այս դեռևս մութ, հանելուկային, երբեմն ուղղակիորեն չարագույժ, հոգեկան համաճարակի պես սպառնալից, բայց անկասկած հզոր շարժումից»²⁷⁰:

Նեոռոմանտիզմի և 19-րդ դարասկզբի ռոմանտիզմի փոխհարաբերության խնդիրը ռուս գրականագետների մշտաբնեռ ուշադրության կենտրոնում է գրտնրվում 20-րդ հարյուրամյակում: Հետագոտողների մեծամասնությունը նեոռո-

²⁶⁹ Նույն տեղում:

²⁷⁰ Նույն տեղում:

մանտիզմը դիտում է իբրև առանձին հոսանք կամ ուղղություն (բացառությամբ պետերբուրգցի գրականագետների, ինչպիսիք են Ն. Դյակոնովան և Բ. Վոզնեսենսկայան, որոնք կասկածելի են համարում ինքնին երևույթի գոյությունը դարերի սահմանագծի անգլիական գրականության մեջ)՝ տարակարծություններ հանդես բերելով, սակայն, նրա առանձնահատկությունների տարորոշման հարցում:

Ինչպես նշեցինք, ռուս գրականագետների պետերբուրգյան թևը երկնտությամբ է վերաբերում «նեոռոմանտիզմ» գիտական եզրին: Ն. Դյակոնովան, օրինակ, տարակուսանք է հայտնում այն փաստի առնչությամբ, որ ռուս և արևմտյան որոշ տեսաբաններ նեոռոմանտիզմի հետևորդներ են համարում գրական հակումներով ու բնույթագրով այնքան տարբեր Ալֆրեդ Թեննիսոնին, Ռոբերտ Բրաունինգին, Ալջեռնոն Չարլզ Մուլինբեռնին, Ուոլթեր Փեյթերին, Օսկար Ուայլդին, Ռոբերտ Լյուիս Սթիվենսոնին, Ջոզեֆ Ռեդյարդ Կիպլինգին, Ջոզեֆ Կոնրադին: «Այսպես կոչված նեոռոմանտիկներ»՝ սա է գրականագետի դիրքորոշումը այս կամ այն չափով նեոռոմանտիկ համարվող գրողների նկատմամբ: Դյակոնովան հետևյալ կերպ է բացատրում իր «անվստահությունը» շրջանառվող եզրույթի վերաբերյալ. «Կարծում եմ՝ չարժե ներմուծել գիտաբառը, քանի դեռ այն զուրկ է տեսական հիմնավորումից, քանի դեռ ձևակերպված չէ նրա արտահայտած հասկացության գեղագիտական էությունը, և ամրագրված չեն նրա կիրարկման սկզբունքներն ու սահմանները: ...Արդարև, այսպես կոչված նեոռոմանտիկները նկատելիորեն մոտ են կանգնած 19-րդ դարասկզբի ռոմանտիկներին, սակայն պետք չէ նեոռոմանտիկ լինել՝ ռոմանտիզմի դասերը յուրացնելու համար»²⁷¹: Ըստ Դյակոնովայի՝ ռոմանտիկներին և նեոռոմանտիկներին միավորում են մի շարք ընդհանուր հայտանիշներ՝ հիասթափությունն իրենց ժամանակակից իրականությունից, հրաժարումը գորշ առօրեականությամբ շրջանակված կենցաղագրությունից և ժողովրդական ստեղծագործության՝ մասնավորապես բալլատի ժանրի հանդեպ հետաքրքրության աշխուժացումը: 19-րդ դարասկզբի ռոմանտիկներին և նրանց դարավերջյան երկրպագուներին ոգեշնչում էին ճղճիմ բուրժուական մշակույթի հանդեպ համանման հակակրանքն ու համանման ձգտումը դեպի աշխարհընկալման առավել բարդ ու հոգեպես հարուստ ձևերը: Մակայն, շեշտում է Դյակոնովան, նրանց միջև տարբերություններն ավելի ակնառու են, քան նմանությունները. «Եթե ռոմանտիզմը տնտեսական, քաղաքական, փիլիսոփայական և գեղագիտական մեծագույն հեղափոխությունների դարաշրջանի ծնունդն է, ապա դարավերջի գրական շարժումն արտացոլում է «մեծագույն» փոխզիջումների դարափուլը, փոխզիջումներ, որ գրողներին մղում են իրականության հետ աստիճանական հաշտեցման՝ եթե ոչ ներքին, ապա գեթ արտաքին»²⁷²:

Ի թիվս այլ տարբերությունների՝ ռուս գրականագետն առանձնացնում է ներքոհիշյալ յուրահատկությունները: Դարավերջի բանաստեղծները (Դյակոնովան ակներևաբար խուսափում է «նեոռոմանտիկներ» եզրույթի գործածությունից) կրում են ոչ միայն ռոմանտիզմի, այլև ռեալիզմի և նույնիսկ իրենց կողմից մերժվող պոզիտիվիստական փիլիսոփայության ազդեցությունը: Եթե մեծ ռոմանտիկների՝ ողբերգական ոգով թաթախված ստեղծագործությունը կյանքի կոչ-

²⁷¹ *Н. Дьяконова*, Стивенсон и английская литература XIX века, Л., 1984, с. 189:

²⁷² Նույն տեղում, էջ 189-190:

վեց համաշխարհային համադեմոստրացիայի հերոսական շնչով, ապա դարավերջի բանաստեղծներին սնուցողն այն դարաշրջանն էր, որը պատվաստեց նրանց հոգում քաղաքական խաղի արվեստը, զգուշությունն ու չափավորությունը:

Օրինաչափ է, որ Դյակոնովան, հավատարիմ հետազոտողի իր սկզբունքայնությանը, ռուս քննադատներից շատերի կողմից նեոռոմանտիկ ճանաչված Ռ. Լ. Սթիվենսոնի մասին խոսելիս անգամ չի հիշատակում «նեոռոմանտիկ» անվանումը. «Նրա (Սթիվենսոնի – Ա. Ա.) ստեղծագործությունը փոխներգործել է իր ժամանակի կարևորագույն գրողների ստեղծագործության հետ, որոնք կիրառել են մեծ ռոմանտիկների փորձը՝ ստեղծելու համար 20-րդ դարաշեմին կանգնած ավելի բարդ և դիալեկտիկորեն ճկուն արվեստ»²⁷³:

Միանգամայն այլ տեսանկյունից է խնդրին նայում անգլիական վիպասանության գիտակ, խորամիտ գրականագետ Մ. Ուրնովը իր «Դարերի սահմանագծին. անգլիական գրականության ուրվագծեր» (Մոսկվա, 1970) մենագրության մեջ: Վերլուծելով ծագումով շոտլանդացի, բայց անգլիական գրականության ներկայացուցիչ Ռոբերտ Լյուիս Սթիվենսոնի ստեղծագործությունը՝ Մ. Ուրնովը նրան համարում է համոզված և ներշնչված, բայց յուրօրինակ նկարագրի տեր ռոմանտիկ, որ ոչ այնքան կողմնակից, որքան հակառակորդ է 19-րդ դարակազմի ռոմանտիզմին, նրա այն գաղափարներին ու տրամադրություններին, որոնք բխում էին եսակենտրոն անհատապաշտությունից, ինքնահաճ կամքից:

«Սթիվենսոնը,- նշում է Ուրնովը,- 19-րդ դ. վերջին քառորդի անգլիական ռոմանտիզմի հիմնադիրը, տեսաբանը և գլխավոր ներկայացուցիչն է. այդ նշանակալից գրական ուղղությունն ընդունված է անվանել նեոռոմանտիզմ՝ ի տարբերություն դարի առաջին տասնամյակների ռոմանտիզմի»²⁷⁴: Սթիվենսոնից բացի՝ գրականագետը հանրահայտ նեոռոմանտիկներ է համարում Ջոզեֆ Կոնրադին, որոշ չափով՝ նաև Ռեյյարդ Կիպլինգին և Կոնան Դոյլին: Ուրնովն ընդգծում է Սթիվենսոնի «Ճանապարհորդություն երկրի ներսում» (1878) ակնարկաշարի էջերից քաղված և նեոռոմանտիկների ձգտումները հատկանշորեն ամփոփող խոսքերը. «Ցավոք, մենք բոլորս նվազում ենք քնքշահույզ սրինգի վրա, և հարկ է, որպեսզի մեզնից որևէ մեկը զարկի գոռ թմբուկին»²⁷⁵: Որպես նեոռոմանտիկ՝ Սթիվենսոնը մերժում էր դեկադենտների անկումային տրամադրությունները, նրանց հուսալքությունը, ներամփոփությունը, ինչպես նաև նատուրալիստների խղճուկ կենցաղագրությունը: Նեոռոմանտիկներին խորթ էր նատուրալիստների «կողմնակալությունը» կենցաղային պատկերների, շարքային հերոսների, «փոքրիկ մարդկանց» նկատմամբ: Նրանց պետք էին գունդ հերոսներ, արտասովոր իրավիճակներ, բուռն իրադարձություններ: Սթիվենսոնը բացասաբար էր վերաբերվում նաև «ռոմանտիկների եսակենտրոնությանը»:

Նեոռոմանտիկների երևակայությունն ընթերցողներին առաջնորդում էր տարածաժամանակային տարբեր տիրույթներ՝ դեպի անցյալ կամ հեռավոր երկրներ: Թեև պարտադիր չէր հեռացումը արդիականությունից, բայց այն ձերբազատվում էր քաղաքային տաղտուկից, ներկայացվում նորահրաշ գովներով: Եվ, իսկապես, սա ռոմանտիզմի և նեոռոմանտիզմի առանցքային տարբերույթ-

²⁷³ Նույն տեղում, էջ 192:

²⁷⁴ *М. Урнов*, На рубеже веков. Очерки английской литературы, М., 1970, с. 251:

²⁷⁵ Նույն տեղում, էջ 311:

յուններից մեկն է. նեոռոմանտիկական աշխարհայեցողության համաձայն՝ քրն-նախույզ մոտեցման դեպքում բոլոր իդեալական արժեքները կարելի է հայտնաբերել առօրյա իրականության մեջ, կամ, այլ կերպ ասած, անհրաժեշտ է տեսնել ու վերհանել կյանքի միօրինակ հոսքի մեջ ներսուզված, բայց երբեք չանկացած գեղեցիկն ու հերոսականը, անսովորն ու ցանկալին: Նեոռոմանտիկների համար դա իրատեսիլ պատրանքի ամենօրյա փնտրտուք է սովորական, կենսական հանգամանքներում: Երբ ձգտում են իրականությունը դիտել գեղադիտակով, կյանքի շարժանկարում ցուանում է պատրանքը, իրական աշխարհում ապրող երազը: Առաջին ֆրանսիացի նեոռոմանտիկներից Թեոդոր դը Բանվիլի, ինչպես և մյուսների «նեոռոմանտիկական ծրագրում» իրականության հակասությունների խոր վերլուծությունը փոխարինվում է սեփական բանաստեղծական աշխարհի ստեղծմամբ, որտեղ այդ հակասությունները հարթվում, և իրականությունը հառնում է պայմանական, զարդարուն, գունավառ ձևերով:

Գեղեցիկ, քնարական աշխարհի ստեղծելու մղումը բացատրում է, թե ինչու նեոռոմանտիկ դրամատուրգներն այդքան հաճախ են դիմում «չափածո դրամայի» տեսակին: Չափածո դրաման նեոռոմանտիկներին սիրելի, իրականության պայմանական – բանաստեղծական ընկալման և արտահայտման ամենից համապատասխան ձևն է: Յուրատեսակ բանաստեղծական աշխարհի կերտումը թույլ է տալիս իրական աշխարհի ուսումնասիրման գործընթացում բավարարվել պատրանքով: «Մարտնչող պատրանքը» ելակետ է դառնում նեոռոմանտիկական աշխարհայացքի ձևավորման համար:

Իրականությունը պատրանքով փոխարինելու միևնույն ձգտումն արտացոլված է նեոռոմանտիկ Լուի Մարսոլյոյի «Պսիքեի ժապավենը» (1894) չափածո կատակերգության մեջ: Ժապավենը, որն Ամուրի պահանջով դրվում է Պսիքեի աչքերին, պետք է ոչ միայն նրանից թաքցնի աստվածային սիրեցյալին, այլև սովորեցնի նրան լուկ երագով ապրել: Ժապավենն արձակելով՝ Պսիքեն ընդմիջտ կործանում է իր երազի ռոմանտիկական աշխարհը:

Այսպիսով՝ նեոռոմանտիկներին բնորոշ է հորինված բանաստեղծական աշխարհն իրականությունից չպոկելու, իրականությունը պատրանքի շրջափոխելու հակումը, որը նեոռոմանտիկական պատմական պիեսներում մարմնավորվում է իբրև պատմության և առասպելի համադրություն: Ֆրանսիացի նեոռոմանտիկ Ֆրանսուա Կոպպեն իր պիեսների մեծամասնության մեջ ճշգրտորեն ցույց է տալիս պատկերվող իրադարձությունների տեղն ու ժամանակը. «Կրեմոնացի ջութակահարը» (1877) պիեսում պատկերված է 1750 թվականի Կրեմոնան, սակայն ներկայացվող իրադարձությունները մեծ մասամբ երևակայության արդյունք են, նշված դարաշրջանի պայմանական ոճավորում:

Է. Ռոստանի «Հեռավոր արքայադուստրը» (1895) բանաստեղծական դրամայում նկարագրվող իրադարձությունների կիսաառասպելական բնույթը հեղինակին հնարավորություն է տալիս արդեն իսկ սյուժեի ընտրությամբ մարմնավորելու երազի և իրականության անխզելիության գաղափարը: Միաժամանակ պատմության և առասպելի միավորումը պատկերվող աշխարհի արժանահավատության պատրանք էր ստեղծում նեոռոմանտիկական թատրոնի պայմանականությունների ընդգրկույթում:

Այնուամենայնիվ, որքան ակնհայտ է ռոմանտիզմ – նեոռոմանտիզմ հասկացությունների մերձավորությունը, որ թույլ է տալիս ենթադրել, թե նրանց հիմ-

քում առկա է միննույն գեղարվեստական մեթոդը, նույնքան ակներև են դրանց գանազանման անհրաժեշտությանը միտվող էական տարբերությունները:

Գրականության պատմաբան Մ. Լադիգինի պնդմամբ՝ դեռևս ուսումնասիրության կարոտ է նեոռոմանտիզմի յուրակերպության, ժամանակի և նեոռոմանտիզմի հարաբերակցության հարցը: Լադիգինը ևս արձանագրում է այն փաստը, որ նեոռոմանտիզմը ոչ այնքան բացառում է իրականությունը, որքան շրջակա աշխարհի հանդեպ վերաբերմունքը փոխելու կոչ է անում: Նեոռոմանտիկները հաստատապես համոզված են, որ մարդկային կյանքի լիարժեքությունը մեծապես կախված է մարդուց: Սոցիալական հակասությունների հիմքում, նրանց կարծիքով, ընկած է Բարու և Չարի միննույն հավերժական պայքարը: Չարը նեոռոմանտիկների կողմից նույնացվում է ոչ միայն դաժանությանը, դավաճանությանը, այլև ճղճիմությանը, առօրեականությանը, գորշությանը: Վերջնական հաղթանակը կպատկանի Բարուն, համոզված են նեոռոմանտիկները, իսկ աշխարհում տիրող Չարի գոյությունն անտարակույս պայմանավորված է այն հանգամանքով, թե որքան հանդուրժողական է նրա հանդեպ մարդկային բանականությունը:

Նետազոտելով անգլիական նեոռոմանտիկական պատմավեպի առանձնահատկությունները՝ Մ. Լադիգինը նշում է. «Նեոռոմանտիկական ստեղծագործության հիմնական խնդիրն ամփոփում է աշխարհը գեղեցիկ տեսնելու կարողությունը, կյանքում հիասթափությունները հաղթահարելու հմտությունը, մարդու գեղեցկության ու բարության հանդեպ հավատի պահպանումը»²⁷⁶: Գրականագետը կարևորում է նաև գլխավոր հերոսի ընտրության նեոռոմանտիկական սկզբունքը. «Նրանք երբեք չեն առաջադրում բացառիկ անհատի, հրաժարվում են ռոմանտիկական հերոսների տիտանական կերտվածքից»²⁷⁷:

Մասնագետների հավաստմամբ՝ 21-րդ դարի շեմին դարձյալ նկատվում է ծանոթ բևեռացումը նեոռոմանտիզմի նկատմամբ, բայց այս ոլորտում հետազոտությունները դեռևս քիչ են²⁷⁸:

19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի գրական վերթնումների բովում նեոռոմանտիզմի ճշտորոշման հարցն անդիմադրելի ու շարունակական «խայծ» է նաև նորօրյա ուսումնասիրողների համար: Արդի ռուս գրականագիտության բնագավառում, օրինակ, հիշատակելի է մեծավաստակ գրականագետ և մշակու-

²⁷⁶ *М. Ладыгин*, Английский исторический роман неоромантизма // Вопросы национальной специфики произведений зарубежной литературы XIX-XX веков. Межвузовский сборник научных трудов, Иваново, 1979, с. 64:

²⁷⁷ Նույն տեղում:

²⁷⁸ Որպես օրինակներ՝ հիշատակելի են Ե. Յու. Կարմալովայի «Նեոռոմանտիկական միտումները Ն. Մ. Գոմիլյովի՝ 1900 - 1910-ական թթ. քնարերգության մեջ» («Неоромантические тенденции в лирике Н. С. Гумилева 1900 - 1910 годов». Омск, 1999), Տ. Պ. Սմիռնովայի «Քնարական դրաման Հուգո ֆոն Հոֆմանսթրալի վաղ շրջանի ստեղծագործության մեջ. ժանրի կայացումը և հաղթահարումը» («Лирическая драма в раннем творчестве Гуго фон Гофманстала: становление и преодоление жанра». Н. Новгород, 2000), Բ. Գ. Սանինայի «Արևմուտքը և Արևելքը ճապոնական նեոռոմանտիզմի գրականության մեջ. Նագաի Կաֆուի և Տանիձակի Չյունյիտիրոյի ստեղծագործությունը» («Запад и Восток в литературе японского неоромантизма: творчество Нагаи Кафу и Танидзаки Дзюнъитиро», Санкт-Петербург, 2004) թեկնածուական ատենախոսությունները, ինչպես նաև նշված հեղինակներից՝ Կարմալովայի «Նեոռոմանտիզմը Արձաթե դարի մշակույթի մեջ» («Неоромантизм в культуре серебряного века», Омск, 2005) և Սանինայի «Երկու աշխարհների խաչուղիներում. հատվող մշակութային կապերը ճապոնական նեոռոմանտիզմի գրականության մեջ» («На перепутье двух миров. Кросскультурные связи в литературе японского неоромантизма», Владивосток, 2006) մենագրությունները:

թաբան, պրոֆ. Վ. Ա. Լուկովի նշանակալից ներդրումը նեոռոմանտիզմի էության և դերի արժևորման գործում: Ականավոր տեսաբանը նեոռոմանտիզմի խնդրին նվիրված իր մի շարք հոդվածներում²⁷⁹ և «Էդմոն Ռոստան» (Մամարա, 2003), «Ֆրանսիական նեոռոմանտիզմ» (Մոսկվա, 2009) արժեքավոր մենագրություններում բազմակողմանիորեն ներկայացնում է այս հոսանքի տեսական դրույթները, յուրահատկությունները, քննում հայտնի նեոռոմանտիկ գրողների ստեղծագործության հիմնարար միտումները:

Վ. Լուկովը հստակորեն սահմանազատում է նեոռոմանտիզմը 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի գրական - գեղագիտական համապատկերում՝ իբրև դարերի սահմանագծին հանդես եկած հոսանք արվեստի և գրականության մեջ: Ռոմանտիզմի ավանդույթների հետ սերտ աղերսներ ունեցող, սակայն պատմական այլ ժամանակաշրջանում ծնունդ առած նեոռոմանտիզմը զավակն էր մի դարավուրի, երբ առաջնային տեղ էր գրավում ոչ թե բովանդակության և ձևի նորարարությունը, այլ գեղագիտական և բարոյագիտական ընդվզումն անհատի նկատմամբ ցուցաբերվող հակամարդասիրական տրամադրությունների դեմ, հակագրումը նատուրալիզմին և անկումայնության (դեկադանս) ծայրահեղ դրսևորումներին:

Ուստի պատահական չէ, որ նեոռոմանտիզմն արտացոլեց նախ և առաջ անցման դարաշրջանի գլխավոր առանձնահատկությունները, որոնց շարքում տեսաբանն առաջին հերթին առանձնացնում է գրական կյանքի գունագեղությունը, մեծաթիվ ուղղությունների, հոսանքների, դպրոցների զուգընթաց գոյակցումը, գերիշխող ուղղության բացակայությունը, տարակերպ գեղարվեստական համակարգերի սահմանների թափանցելիությունը, բազմաթիվ ազդեցությունների և ավանդույթների առկայությունը, գրական «աշխարհագրության» ընդլայնումը (սկանդինավյան և սլավոնական ժողովուրդների գրականությունների ներառումը եվրոպական գրական գործընթացի մեջ, իտալական և իսպանական գրականությունների «վերադարձը» և այլն)²⁸⁰:

Լայն իմաստով նեոռոմանտիզմը բնութագրվում է իբրև հիշյալ ժամանակաշրջանին հատուկ և ռոմանտիզմին ազգակից գանազան ուղղությունների և հոսանքների ամբողջություն (այսպես կոչված նեոռոմանտիկական շրջանակ՝ խորհրդապաշտություն, գեղապաշտություն և այլն): Հանդիպադրելով ռոմանտիզմի և նեոռոմանտիզմի դրույթները՝ Լուկովն ընդգծում է նեոռոմանտիզմի գաղափարական - գեղագիտական առանցքի մերձ և միաժամանակ տարբերակիչ գծերը: Թե՛ նեոռոմանտիզմը, թե՛ նրա ընդգրկման տիրույթն արտաքուստ հիշեցնում էին 19-րդ դարասկզբի դասական ռոմանտիզմի վերածնունդ՝ դասական և ոչ դասական ձևերով: Ռոմանտիկական հերոսի՝ բացառիկ, առեղծվածային ան-

²⁷⁹ Նեոռոմանտիզմի մասին գրականագետի ուշագրավ դիտարկումները խոսում են այս բնագավառում նրա բազմալի, չմարդ հետաքրքրության և զարմանալի եռանդի մասին, ինչի վկայությունն են մեկ տասնյակի եզրագիծը հատող հոդվածները հարցի շուրջ՝ «Маленькие драмы» Мориса Метерлинка» (Մ., 1973), «Виктор Гюго и неоромантизм» (Մ., 1977), «Своеобразие французского неоромантизма» (Մ., 1979), «Черты неоромантизма в поэтической драме Э. Ростана «Орленок»» (Մ., 1981), «Судьба классицизма и романтизма в зарубежной литературе конца XIX – начала XX века» (соавтор – В. П. Трыков, Орск, 1994), «Французский неоромантизм» (Մ., 2007), «Неоромантизм: термин в тезаурусном ключе» (Մ., 2009), «Неоромантизм» (Մ., 2012), «Неоромантизм во Франции» (Մ., 2009, 2012) և այլն:

²⁸⁰ Տե՛ս **Վլ. Луков**, Неоромантизм: термин в тезаурусном ключе // Тезаурусный анализ мировой культуры. Сборник научных трудов, выпуск 19 / под общей ред. проф. Вл. А. Лукова/, М., 2009, с. 61:

հատի, սոցիալական հանգամանքներին չենթարկվող, այլ ի հեճուկս դրանց ապրող հանճարի հանդեպ նոր հետաքրքրությունը, ինչպես նաև ձգտումը դեպի վառ, արտասովոր սյուժեները, տարաշխարհիկ միջավայրի պատկերումը, արվեստի որոշ տեսակների ու սկզբունքների վերածնունդը, թվում է, վկայում էին ռոմանտիզմի վերածաղկման մասին անկումի տևական շրջանից հետո, անկում, որի դիմորոշ գիծը ռեալիզմի ճնշմամբ պայմանավորված նահանջն էր դեպի գեղարվեստական կյանքի ծայրագիծը: Այս «նորացված» ռոմանտիզմի առավել գրավիչ հատկանիշը, ըստ Լուկովի, նրա լավատեսական պաթոնն էր՝ ի հակադրություն մեծ տարածում գտած և գրական ոլորտ ներթափանցած հոռետեսությամբ: «Բայց նեոռոմանտիզմի մերձավորությունը ռոմանտիզմին՝ ոգով և ձևերով, հանգեցնում էր ռոմանտիկների հոչակած գրեթե գերագույն գեղագիտական սկզբունքի կորստյանը. «Գեղեցիկ է այն, ինչ նոր է»: Եվ իրենց նախորդների փորձին դիմած գրողներին նրանց հակառակորդները սկսեցին անվանել կույր հետևորդներ, հետադիմականներ, պահպանողականներ»²⁸¹, - շարունակում է տեսաբանը: Նրա համոզմամբ՝ նեոռոմանտիզմի հանդեպ գրականագետների ոչ պատշաճ ուշադրության էական պատճառներից մեկն էլ դա է՝ կարծրացած մտայնությունը նրա էպիգոնյան բնույթի, այսինքն՝ ռոմանտիզմի կրկնօրինակը լինելու մասին, ինչը բխում է նեոռոմանտիկների տեսության և գեղարվեստական պրակտիկայի մասին անստույգ պատկերացումներից²⁸²: Նեոռոմանտիզմն անշուշտ կապված է ռոմանտիզմի ավանդույթների հետ, բայց ծագում է այլ պատմական ժամանակաշրջանում և հիմնված է աշխարհի և մարդու վերաբերյալ այլ հայացքների վրա: Նեոռոմանտիզմի մասին խոսելիս Լուկովը վկայակոչում է մեկ ուրիշ գրականագետի՝ Ի. Վ. Վերշինինի ներմուծած²⁸³ հետաքրքիր մի ըմբռնումը՝ «սովերի» հասկացությունը՝ այն կիրառելով նեոռոմանտիզմի վերաբերմամբ: Համակարծիք լինելով Վերշինինին՝ քննադատը յուրովսանն համալրում ու զարգացնում է նրա տեսակետը: Այսպես՝ եթե նախառոմանտիզմը բնութագրվում է իբրև ապագայից անցյալ նետված «սովեր» (նախառոմանտիզմը որոշ դիտանկյունից ընկալվում է որպես ապագա ռոմանտիզմի «սովեր»), ապա մինչև նույն ժամանակ «սովեր»-ը կարող է հակադարձ ուղղորդմամբ անցյալից ապագա փոխանցվել (նեոռոմանտիզմն իբրև ռոմանտիզմի «սովեր»)»²⁸⁴:

Հաճախ նեոռոմանտիկական միտումները դրսևորվել են տարերայնորեն, չգիտակցված կերպով՝ հիմնականում միահյուսվելով 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի բազմազան ուղղությունների գեղարվեստական սկզբունքներին:

Լուկովը, հետևաբար, հակված չէ նեոռոմանտիզմը հատուկ ուղղություն համարելու: Իր իսկ կիրառած եզրաբանության պայմանականությունն ընդունելով՝ նա, այնուամենայնիվ, կարևորում է պատմական - տեսական մոտեցման

²⁸¹ Նույն տեղում:

²⁸² Տե՛ս նույն տեղը, էջ 63:

²⁸³ 18-րդ դ. անգլիացի բանաստեղծ Թոմաս Չաթերթոնին նվիրված իր «Չաթերթոն» մենագրության մեջ Ի. Վերշինինը, անդրադառնալով նախառոմանտիզմի խնդրին, նախառոմանտիզմը բնորոշում է որպես «սովերային ժամանակաշրջան»: Ընդ որում գրականագետը «սովեր» հասկացությունը գործածում է ոչ միայն առաջատար ու երկրորդային գրական ուղղությունների, այլև ժանրերի ու գրողների մասին իր դիտարկումներում: Կարևոր է և այն նկատառումը, որ ըստ Վերշինինի՝ «սովեր»-ը թերևս կերպավորում է, քան եզրույթ (տե՛ս *И. Вершинин*, «Чаттертон», СПб., 2001, с. 34):

²⁸⁴ Տե՛ս *Вл. Луков*, Неоромантизм: термин в тезаурусном ключе // Тезаурусный анализ мировой культуры. Сборник научных трудов, выпуск 19 /под общей ред. проф. Вл. А. Лукова/, с. 64:

գործոնը. նեոռոմանտիզմը նեղ, կոնկրետ նշանակությամբ հատկորոշելիս նպատակահարմար է գտնում օգտագործել «նեոռոմանտիկական հոսանք» արտահայտությունը (այն դեպքերում, երբ հիմնավորապես կարելի է խոսել հատկանշական, իրապես նեոռոմանտիկական բնույթ կրող գեղագիտության և պոետիկայի մասին (Է. Ռոստան, Ռ. Լ. Սթիվենսոն և ուրիշներ), իսկ նեոռոմանտիզմը լայն իմաստով բնորոշելիս նախապատվությունը տալիս է «նեոռոմանտիկական շրջանակ» եզրույթին (որպես նեոռոմանտիզմին մերձակից գեղարվեստական երևույթների ամբողջություն):

Նեոռոմանտիզմի խնդրի արծարծումներում վերլուծաբանն անդրադառնում է ոչ միայն եզրույթի և նրա իմաստավորման հարցին, այլև խորամուխ է լինում կոնկրետ երևույթի քննության մեջ: Իր «Ֆրանսիական նեոռոմանտիզմ» գրքում, օրինակ, նա նեոռոմանտիկական երևույթները բնութագրելիս առաջնորդվում է ոչ թե ֆրանսիական գրականագիտության մեջ տարածված նեղ ժանրային սահմանումներով, այլ «նեոռոմանտիզմ» գիտաբառով, որ գեղարվեստական երևույթների էությունը բացահայտում և բացատրում է գեղագիտության, պոետիկայի ու ոճաբանության, ինչպես նաև աշխարհի, մարդու և արվեստի վերաբերյալ պատկերացումների համաշրջայում: Տվյալ դեպքում նեոռոմանտիզմը դիտարկվում է իբրև ռոմանտիզմի ինքնատիպ կերպափոխում՝ 19-րդ դարավերջի նոր հասարակական պայմաններում առաջացած և այդ շրջանի գրական ուղղությունների պայքարում ձևավորված:

Արժանահիշատակ է այն փաստը, որ տեսաբանը տարբերակում է դարերի հերթափոխում նշանավորված նեոռոմանտիզմը որպես որոշակի հոսանք և որպես լայնահուն, հակապոզիտիվիստական գրական - գեղարվեստական շարժում:

Ի տարբերություն 19-րդ դարավերջի ռոմանտիկական շարժան՝ նեոռոմանտիկական շարժումը չէր հակադրվում կլասիցիզմին, ուստի փոխառեց որոշ նեոկլասիցիստական միտումներ, դրույթներ, ձևեր:

Ֆրանսիայում նեոռոմանտիկական շարժումը, ըստ Լուկովի, բուն նեոռոմանտիկական հոսանքին համընթաց բազմաթիվ այլ ձևեր ընդունեց. «Ներկապընակը գույներով հարուստ է՝ դեկորատիվ սիմվոլիզմից մինչև հերոսական ռեալիզմ, իմպրեսիոնիզմից՝ էքսպրեսիոնիզմ, գիտաֆանտաստիկական գծից մինչև կաթոլիկական ուղղվածություն և այլն»²⁸⁵:

Վլ. Լուկովը, փաստորեն, ընդլայնում է արբագործված ավանդույթի շրջանակը և յուրովի մոտեցում ցուցաբերում. նեոռոմանտիկական շարժան հոլովույթին վերագրում է ուղղություններ, հոսանքներ, դպրոցներ և խմբակներ, ազգային գրականության տարատեսակներ, որոնք հաճախ հիշատակվել են առանց նեոռոմանտիկական «թիկնոցի»: Այս հայեցակետից ուշարժան է նեոռոմանտիկական շարժան «ենթակառուցվածքի» լուկովյան մեկնաբանությունը: Քննադատը նեոռոմանտիկական շարժան ընդհանուր հոսքի մեջ, իբրև ուղղություն, ներառում է ֆրանսիական սիմվոլիզմը՝ իր բազմաբնույթ դրսևորումներով՝ նեոկլասիցիստական (Ժան Մորեաս)²⁸⁶, իմպրեսիոնիստական (Պոլ Վեռլեն), մոդերնիստական

²⁸⁵ Вл. Луков, Французский неоромантизм, М., 2009, с. 94:

²⁸⁶ Ծագումով հույն է (իսկական անուն – ազգանունը՝ Յաննիս Պապադիամանտոպոլոս): Ժան Մորեասին է պատկանում «սիմվոլիզմ» եզրույթը, որը տեսականորեն հիմնավորվել է նրա «Սիմվոլիզմի սանիֆեստ»-ում (1886):

(Արթուր Ռեմբո) և այլն: Միմվոլիզմից բացի՝ առանձնացվում են գեղագիտական - դեկադենտական (Ժորժիս Կարլ Հյուլիամանս), կաթոլիկական (Պոլ Կլոդել, Շառլ Պեգի), գիտաֆանտաստիկական (Ժյուլ Կեռն), հերոսական (Ռոմեն Ռոլան), ինչպես նաև բեզիական թևի ազգային - էպիկական (Շառլ դը Կոստեր, Էմիլ Կեր-հան) և սիմվոլիստական - փիլիսոփայական (Մորիս Մետեռլինկ) ենթատիրույթները, լատինաամերիկյան մոդեռնիզմը և հետմոդեռնիզմը (այս մասին ավելի մանրամասն տե՛ս *Вл. Луков, Французский неоромантизм, М., 2009*):

Թեև իր ամբողջական բնութագրով նեոռոմանտիկական շարժումը բավականաչափ հեռու է դեկադենտական տրամադրություններից, բայց նրա առանձին ճյուղեր (սիմվոլիզմ, գեղագիտություն) միտվում են դեպի անկումայնություն, ինչը պայմանավորված է անցման շրջանի գրական – գեղարվեստական գործընթացի անձնությամբ ու քառասյնությամբ, համակարգերի «անցանելիությամբ»²⁸⁷:

Ֆրանսիական նեոռոմանտիկական շարժման պարույրներում նեոռոմանտիկական հոսանքը միջին, կարելի է ասել, քիչ նկատելի տեղ է գրավում, ինչն էլ, ըստ էության, ժամանակակիցների ու սերունդների խիստ համեստ գնահատանքի գաղտնիքն է: Սակայն ֆրանսիացի բուն նեոռոմանտիկների շարքում անհամեստ մեծ ու անփոխարինելի է Էդմոն Ռոստանի՝ աշխարհահռչակ դրամատուրգի դերն ու վաստակը, որ մարդկությանը նվիրեց հասարակության մարդատյաց օրենքների դեմ ծառայած միայնակ ու անձնուրաց ասպետի՝ Սիրանո դը Բերթերակի («Սիրանո դը Բերթերակ», 1897) և Անուրջների չքնաղ արքայադստեր՝ Մելիսինդայի («Հեռավոր արքայադուստրը») հավերժական կերպարները:

Չենք կարող չհիշատակել և Ռոմեն Ռոլանին (ստեղծագործական վաղ շրջան), որ թեև բավականին շուտ լքեց նեոռոմանտիզմի դիրքերը, բայց հրաժեշտ տվեց հոսանքին և ոչ թե գրական – գեղարվեստական այդ հետաքրքիր շարժանը:

Ի դեպ, ռուս գրաքննադատներին հուզում է ոչ միայն գեղարվեստական, այլև հրապարակախոսական գրականության մեջ նեոռոմանտիզմի դրսևորման հարցը:

«19-րդ դ. հրապարակախոսության մեջ ռոմանտիկական և նեոռոմանտիկական ուղղությունների առկայությունը ցույց է տալիս, որ ժառանգելիության գործոնը գերիշխել է փորձարարության վրա, իսկ անհասանելի մասին երազն առավել հստակորեն արտահայտվել է այս շրջանի, քան 20-րդ դ. հրապարակախոսության մեջ»²⁸⁸, - մակաբերում է գրականագետ Վ. Խորոլսկին իր տեսական դիտարկումներից մեկում:

Այսպիսով՝ 19-20-րդ դդ. սահմանագծին, երբ գեղարվեստական մտածողությունը նոր չափանիշներ է փնտրում, երբ խախտվում կամ երեքուն են դառնում բոլոր սահմանները, իսկ երևույթները նոր նշանակություն են ստանում, իրենց հակադրություններով հանդերձ՝ հեշտորեն համակցվում և նույնիսկ փոխներթափանցում, գրական-մշակութային հորիզոնի վրա գծագրվում է դարաշրջիկ երևույթներից մեկի՝ նեոռոմանտիզմի ընդհանուր պատկերը՝ որպես բարոյագի-

²⁸⁷ Տե՛ս *Вл. Луков, Французский неоромантизм, с. 27-28*:

²⁸⁸ *В. Хорольский, Романтическая и неоромантическая модели публицистического текста (На примере англоязычной публицистики XIX века), «Вестник ВГУ». Серия: филология, журналистика, Воронеж, 2008, № 1, с. 239:*

տական – գեղագիտական բողոք հակամարդկային հասարակական կառույցի, անկումային պոզիտիվիստական փիլիսոփայության, նատուրալիզմի և դեկադենտական գրականության դեմ: Նեոռոմանտիզմը, սերտորեն կապված լինելով ռոմանտիզմի հետ, ծագեց այլ սոցիոմշակութային պայմաններում և, բնականաբար, նոր հիմնագծեր ներառեց: Տարբեր երկրների գրական կյանքում այդ հատկանիշները տարբեր են:

Армине Адамян – Теоретическое осмысление неоромантизма в русской литературоведении. – В статье рассматривается проблема неоромантизма как художественной системы. В частности, представлены теоретические взгляды известных русских литературоведов о вопросе. Подчеркивается, что этот термин в историко-литературной практике и теории литературы употребляют как вполне определенный. Однако проблема самого явления, как и дефиниции его обозначающей, остается открытой. Под неоромантизмом интерпретируют феномен, передавший своеобразие переходной эпохи конца XIX – начала XX века. И, как правило, интерпретируют как "новый романтизм". Между тем, романтизм и "неоромантизм" представляют собою разные художественные системы.

Armine Adamyan – Theoretical Conceptualization of Neoromanticism in the Russian Literary Criticism. – The article deals with the problem of Neoromanticism as the artistic system. Famous Russian literary historians' theoretical outlooks about this question are particularly represented in the article. It is emphasized that this term in the historically-literary practice and theory of literature is used as the definite one. However, the problem of the occurrence itself as well as its differentiations remains unsolved. Neoromanticism is interpreted as the phenomenon that delivered the peculiarities of the transitional epoch of the late 19th – early 20th c. And as a rule it is understood as the "new Romanticism". Meanwhile, Romanticism and "Neoromanticism" serve as different artistic systems.

ԼԵԳԵՆԴԻ ԺԱՆՐԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԱՍՄԻԿ ՎԱՆՅԱՆ

Գրական ստեղծագործության ուսումնասիրության համար միշտ էլ կարելի է ժանրային պատկանելության խնդիրը: Այն եղել և շարունակում է մնալ տարբեր ժամանակների մտածողների, գրողների ու տեսաբանների մտասերման առարկան: Այդ մասին են վկայում Պլատոնի ու Արիստոտելի, եվրոպական կլասիցիստների՝ մասնավորապես Ն. Բուալոյի, 18-րդ դարի լուսավորական շարժման ներկայացուցիչների՝ Դիդրոյի ու Լեսսինգի, գերմանացի մեծ մտածող Հեգելի, ռուս տեսաբաններ Վ. Բելինսկու, Մ. Բախտինի ու Դ. Լիխաչովի, Գ. Պոսպելովի ու Մ. Կոզանի, իտալացի մտածող Բ. Կրոչեի, ամերիկացի գրականագետներ Ռընե Ուելլեքի և Օսթին Ուորրենի և շատ ուրիշների հոդվածները, ուսումնասիրություններն ու աշխատությունները:

«Ժանր» եզրույթն առաջացել է ֆրանսերեն «genre» բառից, որը նշանակում է սեռ (նաև տեսակ): Հատկանշական է, որ ժանրի պատմական զարգացման ընթացքում տարբերակվել են սեռ և ժանր հասկացողությունները. սեռը՝ որպես բովանդակային ընդհանուր ըմբռնում, իսկ ժանրը՝ որպես նրա ձևայնացման մասնավոր դրսևորում:

Որո՞նք են ժանրի բնորոշ առանձնահատկությունները:

«Գրական ժանրը իր բնույթով արտացոլում է գրականության զարգացման առավել կայուն, «հավերժական» տենդենցները: ...Ժանրը վերածնվում և նորանում է գրականության զարգացման ամեն մի նոր փուլում և տվյալ ժանրի ամեն մի անհատական ստեղծագործության մեջ: Դրա մեջ է ժանրի կյանքը: ...Ժանրը ապրում է ներկայով, բայց միշտ հիշում է իր անցյալը, իր սկիզբը: Ժանրը ստեղծագործական հիշողության ներկայացուցիչն է գրական զարգացման պրոցեսում²⁸⁹, գրում է ռուս տեսաբան Բախտինը՝ ընդգծելով **ավանդականն** ու **արդիականը** մշտապես ներառելու նրա միտումը:

Էդ. Ջրբաշյանը, ժանրերը սահմանելով որպես «գրական երկերի ընդհանուր տիպեր, որոնք աչքի են ընկնում բովանդակության ու ձևի համեմատաբար կայուն հատկանիշներով», առանձնացնում է երեք կարևոր չափանիշ՝ **բովանդակության, պատկերի կերտման և ստեղծագործության կառուցման** ընդհանուր առանձնահատկություններ²⁹⁰:

Մյուս տարբերակիչ հատկանիշն այն է, որ գրական ժանրը **ընդհանուրի և անհատականի** միասնությունն է: «Ընդհանուր» ասելով՝ հասկանում ենք ժանրային ընդհանուր կադապարը, իսկ «անհատականը» դրսևորվում է հեղինակային կոնկրետ ստեղծագործության մեջ:

Ժանրերի պատմական զարգացման ճանապարհին իրար են բախվում գրական սեռերի ու տեսակների ընկալման երկու ծայրահեղ մոտեցում՝ դասական և ժամանակակից: Դասական տեսությունը, որը զարգացրել էին կլասիցիզմի

²⁸⁹ *Մ. Բախտին*, Проблемы поэтики Достоевского, М., 1963, с. 141-142.

²⁹⁰ Տե՛ս էլ *Էդ. Ջրբաշյան*, Պոետիկայի հարցեր, Եր., 1976, 138-145:

հետևորդները, ժանրային ձևերը սահմանում է որպես քարացած ու անփոփոխ միավորներ՝ մերժելով նաև նրանց փոխներթափանցման հնարավորությունը:

«Դասական տեսությունը ոչ միայն հավատում է, որ մի ժանրը տարբերվում է մյուսից իր բնույթով ու համբավով, այլև, որ ժանրերը պետք է պահվեն առանձին, անխառն: Սրանում է «ժանրի մաքրության կամ *genre tranché*-ի (անջատված ժանր) նշանավոր ուսմունքի էությունը»²⁹¹, - երևույթը այսպես է բնութագրվել ժամանակակից տեսության կողմնակիցներ Ռոննե Ուելլեքի և Օսթին Ուորրենի կողմից:

Իրականում ժանրերն անշարժ, իրարից միանգամայն անջրպետված միավորներ չեն, այլ նրանց միջև գործում է փոխներթափանցման, այդ ճանապարհով գրական նոր տեսակների առաջացման երևույթը: Ժանրերի փոխընդգրկման այս միտումը լիովին խրախուսում են ժանրի ժամանակակից տեսության ներկայացուցիչները. «Այն ընդունում է, որ ավանդական տեսակները կարող են «միախառնվել»՝ առաջ բերելով նոր տեսակ (ինչպես տրագիկոմեդիան): Նա տեսնում է, որ ժանրերը կարող են խարսխվել ոչ միայն «մաքրության», այլև փոխընդգրկման կամ «հարստացման» վրա (այսինքն՝ ոչ միայն նվազման, այլև սերտաճման վրա)»²⁹²:

Գրականության ժանրային համակարգը կարող է փոփոխության ենթարկվել՝ պայմանավորված գեղարվեստական մեթոդի ներքին պահանջներով կամ տվյալ ժամանակի հասարակական-հոգեբանական գործոններով: Ասվածի ակնառու արտահայտությունն է 19-րդ դարում ռոմանտիկական մեթոդի թելադրանքով պոեմի նոր տեսակի՝ քնարակապիկական պոեմի, ինչպես նաև բավադի առաջացումը: Իսկ ահա 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին մեր ազգային-հասարակական կյանքում տեղի ունեցած փոփոխություններն ազդեցին նաև գրականության ժանրային կազմի վրա. բանաստեղծական ժանրերն ստացան բացահայտ գերակշռություն, արձակի մեծ ձևը՝ վեպը, իր տեղը զիջեց փոքր ձևերին (պատմվածք, նովել, ակնարկ, գրույց, հեքիաթ և այլն):

«Երկու դարերի սահմանագլխին սոցիալական և ազգային կյանքում տեղի ունեցած մեծ ցնցումները,- գրում է Էդ. Ջրբաշյանը,- մեր արձակագիրներին մի պահ զրկեցին իրականությունն իր էպիկական ամբողջության մեջ տեսնելու, նրա բազմազան կողմերը գեղարվեստորեն համադրելու հնարավորությունից: ...Եվ արձակագիրները գերադասում էին փոքր ձևերի մեջ որսալ հարափոփոխ կյանքի առանձին տիպական պահերը»²⁹³:

Այս շրջանում արևմտահայ գրականության մեջ արձակի փոքր ձևերը, մասնավորապես՝ նովելն ու պատմվածքը, հասան աննախադեպ զարգացման: Արևելահայ գրականության մեջ Հովհ. Թումանյանն ու Ավ. Իսահակյանն այդ շրջանում ստեղծեցին իրենց պատմվածքները, հեքիաթները, Իսահակյանը՝ նաև իր արձակ բանաստեղծությունների, պոեմների ու լեգենդների մեծ մասը:

Հաճախ դժվար է տարբերակել մի ժանրը մյուսից: Այս իմաստով բնորոշ է Հովհ. Թումանյանի «Գեղարվեստական երկերի» առաջաբանում Ե. Չարենցի արտահայտած դժգոհությունը. «Անհրաժեշտ է մի քանի խոսք ասել մանավանդ այդ չարաբաստիկ «ժանրերի» մասին: Թե որքան խախուտ բան է «ժանր» հասկացո-

²⁹¹ *Ռոննե Ուելլեք, Օսթին Ուորրեն*, Գրականության տեսություն, Եր., 2008, էջ 347:

²⁹² Նույն տեղում, էջ 349:

²⁹³ *Էդ. Ջրբաշյան*, Գեղարվեստություն և գրականություն, Եր., 1983, էջ 304:

դությունը, գուրկ գիտական որևէ օբյեկտիվ հատկանիշից, ապացուցում է թեկուզ հենց այն հանգամանքը, որ ինքը Հովհ. Թումանյանը իր ժողովածուները կազմելիս շատ հաճախ միևնույն գրվածքը զետեղել է մերթ իբրև «լեզենդ», մերթ իբրև «հեքիաթ» և այլն,- և բոլոր դեպքերում էլ հավասար իրավունքով, որովհետև ամբողջ գրականության մեջ չենք գտնի երկու հոգի, որ միևնույն բնորոշումը տային պոեմին կամ բալլադին, պատմվածքին կամ վեպին...»²⁹⁴: Այս կապակցությամբ բավական է հիշել միայն մեր երեք անվանի գրականագետների կողմից Թումանյանի «Փարվանա» երկին տրված ժանրային բնութագրումները: Էդ. Ջրբաշյանն այն անվանել է բալլադ²⁹⁵, Մ. Մկրյանը համարել է պոեմ՝ տատանվելով «լեզենդ», «բալլադ», «պոեմ» բնորոշումների միջև և գալով այն եզրահանգման, որ «Վերջ ի վերջո, այդ անվանումները չեն, որ որոշում են Թումանյանի պոեմների գեղարվեստական արժեքն ու մեծությունը»²⁹⁶: Հր. Թամրազյանը «Փարվանան» կոչել է լեզենդ-պոեմ²⁹⁷:

Հովհ. Թումանյանը շեշտել է իր երկերի («Շունն ու կատուն», «Անբախտ վաճառականներ», «Ախթամար», «Փարվանա», «Լուսավորչի կանթեղը», «Գառնիկ ախպեր», «Չարի վերջը», «Մի կաթիլ մեղրը», «Աղավնու վանքը», «Թագավորն ու չարչին» և այլք) ժողովրդական հիմքը՝ դրանք հրատարակելով «Ավանդություն» («Բանաստեղծություններ», 1899), «Լեզենդներ» («Բանաստեղծություններ», 1903), «Ժողովրդական մոտիվներ» («Բանաստեղծություններ», 1908), «Լեզենդներ, բալլադներ, առակներ, առասպելներ» («Բանաստեղծություններ», 1922) ենթավերնագրերով:

Ժանրային ոչ հստակ տարբերակումը նկատելի է նաև Ավ. Իսահակյանի գեղարվեստական արձակի դեպքում: Այսպես՝ Ավ. Իսահակյանի չորսհատորյակը (1958-1959) կազմելիս «Չինական մեծ պարսպի երգը» զետեղվել է լեզենդների և զրույցների մեջ, իսկ վեցհատորյակում (1973-1979)՝ արձակ բանաստեղծությունների և պոեմների մեջ, «Ուշինարան» չորսհատորյակում՝ արձակ պոեմների, իսկ վեցհատորյակում՝ լեզենդների և զրույցների մեջ, կամ՝ «Այդ ոչինչը ես եմ» «Արձակ»-ում (1973)՝ լեզենդների և զրույցների մեջ, իսկ վեցհատորյակում՝ առակների մեջ և այլն:

Չափածո լեզենդները համախմբված են «Բալլադներ և լեզենդներ» վերնագրի ներքո:

Դիտարկենք լեզենդի հետ առնչվող բանահյուսական ժանրերի՝ մասնավորապես բալլադի և ավանդության հիմնական հատկանիշները, նրանց ընդհանրություններն ու տարբերությունները, ըստ այդմ՝ վերհանենք լեզենդի ժանրային առանձնահատկությունները:

Բալլադի ժանրը՝ (ֆրանսերեն և ժող. լատիներեն ballare - պարել, պարերգ) պատմական զարգացման բարդ ուղի է անցել:

12-րդ դարից սկսած՝ Ֆրանսիայի հարավում (Պրովանսում) «բալլադ» անվանումով ի հայտ եկան պարի ուղեկցությամբ կատարվող քնարական բանաս-

²⁹⁴ Ե. Չարենց, ԵԺ, հ. 6, Եր., 1967, էջ 249:

²⁹⁵ Տե՛ս Էդ. Ջրբաշյան, Թումանյանի բալլադները, Եր., 1969, էջ 28: Գրականության տեսություն, Եր., 1972, էջ 384: Գեղագիտություն և գրականություն, Եր., 1983, էջ 193:

²⁹⁶ Տե՛ս Մ. Մկրյան, Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունը, Եր., 1980, էջ 137-138:

²⁹⁷ Տե՛ս Հր. Թամրազյան, Հովհաննես Թումանյան բանաստեղծը և մտածողը, Եր., 1995, էջ 321:

՝ Բալլադի ժանրը ուսումնասիրելիս հիմք ենք ընդունել Էդ. Ջրբաշյանի «Թումանյանի բալլադները», «Գրականության տեսություն», «Գեղագիտություն և գրականություն» աշխատությունները և Էդ. Ջրբաշյանի, Հ. Մախչանյանի «Գրականագիտական բառարան»-ը:

տեղծություններ: Դրանք մեծ մասամբ կենցաղային բովանդակություն ունեցող երգեր էին, որոնք կատարվում էին ժողովրդական տոների ժամանակ: Պրովանսական բալլադների կառուցվածքային գլխավոր հատկանիշը բուն տեքստից բխող և նրան քնարականություն հաղորդող կրկներգն (ռեֆրեն) էր:

13-14-րդ դարերում իտալական պոեզիայում հանդիպող բալլադներն արդեն զերծ էին կրկներգից և պարի հետ անմիջական կապից:

14-16-րդ դարերում Ֆրանսիայի հյուսիսում բալլադը դարձավ պալատական պոեզիայի ամենահայտնի տեսակներից մեկը: Ֆրանսիական գրական բալլադն ուներ հստակ կառուցվածք՝ 28 տող, երեք ութտողանի տներ, վերջում մի ուղերձ-քառյակ այն անձին, որին նվիրված էր բալլադը և այլն:

15-րդ դարից սկսած՝ անգլո-շոտլանդական ժողովրդական բանահյուսության մեջ բալլադ էին կոչվում որոշակի սյուժե ունեցող, քնարականությամբ ու դրամատիզմով հագեցած չափածո պատմությունները:

Թեմատիկ-գաղափարական հատկանիշներով անգլո-շոտլանդական բալլադներն ընդգրկվում են երեք խմբի մեջ՝ կենցաղային թեմաներ, ազգային-քաղաքական իրադարձություններ և ներքնախավերի սոցիալական պայքարը թագավորական իշխանության ու եկեղեցականների դեմ: Այդ պայքարի վառ արտահայտությունն են Ռոբին Հուդի մասին ստեղծված մի քանի տասնյակի հասնող անգլիական ժողովրդական բալլադները:

Ժողովրդական բալլադն անհրաժեշտ է տարբերակել գրական բալլադից:

Ժողովրդական բալլադները որոշակի սյուժե ունեցող չափածո ստեղծագործություններ էին, որոնց հիմքում ընկած էր որևէ անսովոր, հերոսական ու ողբերգական դեպք: Դրանց մեջ ներհյուսված էին գրական երեք սեռերի (էպիկական, քնարական, դրամատիկական) տարրերը: Ընդ որում՝ քնարականությանը նպաստում էր կրկներգերի, իսկ դրամատիզմին՝ երկխոսությունների առկայությունը:

18-րդ դարի II կեսից եվրոպական, մասնավորապես՝ գերմանական գրականության մեջ առաջ եկավ գրական բալլադը: Ի տարբերություն ժողովրդական բալլադի՝ այն բանահյուսական նյութի՝ ավանդության, լեգենդի գրական մշակում էր:

Ռոմանտիզմի շրջանում բալլադը բնութագրվում էր որպես «սարսափելի ժանր», քանի որ հագեցած էր ուրվականներով, խորհրդավոր, չարագուշակ պատկերներով:

Գրական բալլադի մեջ հետզհետե դրսևորվում են ազգային բնավորության գծեր՝ արտահայտված տվյալ ժողովրդին բնորոշ բանահյուսական մոտիվների ու կերպարների միջոցով: Բալլադի դասական նմուշներ են Գյոթեի «Անտառի արքան», «Ձկնորս», Ժուկովսկու «Սվետլանան», «Լյուդմիլան», Պուշկինի «Ջրահեղձը», «Օլեգի երգը» և այլն:

Հայկական գրական բալլադի հիմնադիրը Հովհ. Թումանյանն է: Բանահյուսական ավանդությունների հիման վրա ստեղծված նրա անգուգական երկերը՝ «Փարվանան», «Ախթամարը», «Աղջկա սիրտը», «Աղավնու վանքը» և այլն, հայկական գրական բալլադի դասական արժեքներ են:

«Ժամրի այդ դասական կատարելությունը, որին հայկական բալլադը հասավ Թումանյանի շնորհիվ,- գրում է էդ. Ջրբաշյանը,- բնորոշ է նաև Ավետիք Իսահակյանի՝ ժողովրդական ավանդությունների լավագույն մշակումներին: Խոս-

քը վերաբերում է առաջին հերթին սիրո ռումանտիկ պաթոսով տոգորված «Հավերժական սերը», «Ասպետի սերը», հայրենասիրության և հումանիզմի, արդարության և ճշմարտության մեծ գաղափարներով ներշնչված «Ժողովրդի քնարը», «Հայրենի հողը» և այլ բալլադների»²⁹⁸:

Սովետական շրջանում բալլադի ժանրը ենթարկվեց որակական փոփոխությունների: Բալլադն արդեն հիմնվում էր ժամանակակից կյանքի դեպքերի հերոսականության վրա (օրինակ՝ Ե. Չարենցի «Բալլադ Վլադիմիր Իլյիչի, մուժիկի և մի գույգ կոշիկի մասին», « Բալլադ քսանըվեցի մասին», «Իմ ընկեր Լիպոն», Գ. Մարյանի «Լուսանկարը», «Բալլադ սիրո և հերոսության մասին», «Բարդիների պուրակում» և այլն): Այսուհանդերձ, սովետահայ բալլադը ոչ միայն դիմեց ժամանակակից թեմաների, այլև շարունակեց հետևել ժանրի հին սկզբունքներին՝ բանահյուսական նյութը ենթարկելով գեղարվեստական մշակման:

Այսպիսով՝ բալլադը միջանկյալ, քնարաեպիկական ժանրին պատկանող չափածո ստեղծագործություն է, որի բնորոշ հատկանիշներն են անսովորի, հերոսականի և ողբերգականի հակումը, քնարական ու դրամատիկական միջոցների օգնությամբ ծավալվող շարժուն ու լարված գործողությունը, հրաշապատում, ֆանտաստիկ տարրերի, խորհրդավոր, այլաբանական պատկերների առկայությունը²⁹⁹:

Ավանդությունը ևս ժողովրդական բանահյուսության ժանրերից է, փոքր ծավալի արձակ ստեղծագործություն, որի միջոցով մարդիկ ձգտել են ստուգաբանել աշխարհագրական տեղանունները, բացատրել բնության երևույթները, քաղաքների ու գյուղերի, տարբեր շինությունների ստեղծման պատմությունը:

Ա. Ղանալանյանն ավանդությունները դասակարգում է երեք հիմնական խմբի՝ ստուգաբանական ավանդություններ (որոնց մեջ ժողովուրդը ձգտել է ստուգաբանել տեղանունները, անձնանունները և այլն), բացատրական ավանդություններ (որոնցում բացատրվել են արևի, լուսնի, աստղերի ծագումը, բույսերի ու կենդանիների հատկանիշները) և վարքաբանական ավանդազրույցներ (որոնք կենսագրական տեղեկություններ են հաղորդում ռազմական, մշակութային, եկեղեցական սրբացված գործիչների վերաբերյալ)³⁰⁰:

Ժողովրդական բանահյուսության թերևս ոչ մի տեսակ այնքան ընդհանրություններ չունի հարակից ժանրերի հետ (լեգենդ, առասպել, վիպերգություն, հեքիաթ, առակ և այլն), որքան ավանդությունը: Սակայն «Ավանդության մեջ, ի տարբերություն հեքիաթի, վիպերգության կամ առակի, գեղարվեստական սյուժեն և կերպարները արտահայտվում են սոսկ սաղմնային ձևով»³⁰¹:

Ավանդությունների մյուս բնորոշ հատկանիշը նրանց նկատմամբ անխառն հավատն է, որը դրսևորվում է ոչ միայն պատմողների, այլև ունկնդիրների կողմից: Ուշագրավ է, որ լեգենդներին, միֆերին հավատալու հանգամանքը Իսահակյանը համարել է բարձր արվեստ ստեղծելու նախապայման. «Հին հույն բանաստեղծների մոտ դիցաբանությունը, նրանց երգելը օրգանական էր, անկեղծ էր, որովհետև հավատում էին: Լեգենդներին, միֆերին հավատում էին և դրա համար էլ բարձր արվեստ ստեղծեցին: Արվեստի հոգին անկեղծությունն է»³⁰²:

²⁹⁸ **Էդ. Ջրբաջյան**, Պոեմ և բալլադ, Գեղագիտություն և գրականություն, Եր., 1983, էջ 194:

²⁹⁹ Տե՛ս **Էդ. Ջրբաջյան**, Թումանյանի բալլադները, Եր., 1969, էջ 31:

³⁰⁰ Տե՛ս **Ա. Ղանալանյան**, Ավանդապատում, Եր., 1969, էջ ԻԸ-ԻԹ:

³⁰¹ **Էդ. Ջրբաջյան**, Գրականության տեսություն, Եր., 1972, էջ 362:

³⁰² **Ավ. Իսահակյան**, Արվեստի մասին, Եր., 1977, էջ 44:

Վերոնշյալ ժանրերից ավանդությունը տարբերվում է իր առաջնահերթ ճանաչողական դերով: «Ավանդությունները, - ընդհանրացնում է Ա. Ղանալանյանը, - նպատակային և ճանաչողական բնույթի ստուգաբանական, բացատրական և վարքաբանական ստեղծագործություններ են, որոնք ժողովրդի կողմից ընկալվում են իբրև հեռու ու մոտիկ անցյալում եղած ու կատարված իրերի ու երևույթների, դեպքերի ու դեմքերի վերաբերյալ ճշմարտացի հաղորդումներ և հուշապատումներ»³⁰³:

Լեգենդը (լատ. *legenda* - այն, ինչ պետք է կարդացվի) ժողովրդական ավանդության այն տեսակն է, որն ունի հրաշապատում բնույթ: Չափածո կամ արձակ այդ ստեղծագործության մեջ գերակշռող են երևակայական դեպքերն ու դեմքերը, իրերն ու առարկաները:

Լեգենդը Ավ. Բսահակյանի նախասիրած ժանրերից է: «Լեգենդները, առասպելները ցանկությունների արդյունք են: Մարդկային տեսիլները, ձգտումները առասպելների, լեգենդների մեջ գտնում են իրականացում, բովանդակություն, վարձատրություն: Այն, ինչ չի կարելի աշխարհում նյութապես իրականացնել, իր կենսագործումը, ուրեմն, գտնում է երազների, տեսիլների, լեգենդների, առասպելների, պոեզիայի մեջ: Դրանով, դրանց միջոցով տենչացող հոգին հանգստանում է ու բավարարվում»³⁰⁴, - գրում է Բսահակյանը:

Ֆրանսիացի տեսաբան Անդրե Ժյուր լեգենդը դասել է նախնական կամ պրիմիտիվ այն ժանրերի թվին, որոնցից առաջացել են գրական ավելի բարդ ձևերը: Տարրական ժանրերի նրա դասակարգումը հետևյալ պատկերն է ներկայացնում՝ լեգենդ (*legende*), սագա (*sage*), առասպել (*mythe*), հանելուկ (*ratsel*), ասացվածք (*spruch*), դիպված (*kasus*), ավանդապատում (*memorable*), հեքիաթ (*marchen*), սրախոսություն (*witz*)³⁰⁵:

Ռուս տեսաբան Վ. Գուսնն իր «Эстетика фольклора» աշխատության մեջ լեգենդը զետեղել է բանահյուսության էպիկական ժանրերի այսպիսի համախմբի մեջ՝ առած, ասացվածք, հանելուկ, առասպել, ավանդություն, **լեգենդ** (ընդգծ՝ Ն. Վ.), հեքիաթ, անեկդոտ, առակ, պատմվածք, էպիկական երգ-ասք, էպոպեա, իսկ բալլադն ու ռոմանսը՝ որպես անցումային (լիրոէպիկական) ժանրեր³⁰⁶:

Ծագելով միջին դարերում՝ լեգենդը սկզբում հանդես է եկել որպես եկեղեցական նշանավոր գործիչների՝ հրաշքներով լեցուն կյանքի ու մահվան պատմություն:

Նայ միջնադարյան լեգենդների լավագույն օրինակներ են Գրիգոր Լուսավորչի, Գրիգոր Նարեկացու վերաբերյալ հյուսված գերբնական պատմությունները:

19-րդ դարավերջից սկսած՝ հայ գրականության մեջ լեգենդի ժանրի նկատմամբ դրսևորվում է առանձնակի ուշադրություն: Այդ երևույթն այսպես է բացատրել Հովհ. Թումանյանը. «Ամեն մի ազգի բանաստեղծություն ժողովրդական լեգենդաներով, ազգային ոգու ստեղծագործություններով է զորանում ու ինքնուրույնության կնիք առնում, հաստատվում, առաջ գալիս, որպես մի ամբողջ ժողովրդի խոսք և դրանով էլ դառնում պատկառելի»³⁰⁷:

³⁰³ Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Եր., 1969, էջ ԼԳ:

³⁰⁴ «Գրական թերթ», 1960, N 44:

³⁰⁵ Տե՛ս Ռ. Ուելլեք, Օ. Ուորրեն, Գրականության տեսություն, Եր., 2008, էջ 350-351:

³⁰⁶ Տե՛ս Բ. Կլեյն, Эстетика фольклора, Л., 1967, с. 98-163:

³⁰⁷ «Թումանյանը քննադատ», Եր., 1939, էջ 77:

Ժողովրդական լեգենդները հիմք դարձան ոչ միայն տարբեր ժանրի գրական ստեղծագործությունների՝ պոեմների (օրինակ՝ Հովհ. Թումանյանի «Թմկաբերդի առուր», Հովհ. Շիրազի «Միամանթոն և Խջեգարե» պոեմները), այլաբանական գրույցների (օր.՝ Վրթ. Փափազյանի համապատասխան երկերը), բալլադների (Հովհ. Թումանյանի «Լուսավորչի կանթեղը», «Աղավնու վանքը», Ավ. Իսահակյանի «Հավերժական սերը», «Ասպետի սերը» և այլք), այլև գրական լեգենդների առաջացման համար: Գլխավորապես ժողովրդական լեգենդների հիման վրա են ստեղծվել Ավ. Իսահակյանի չքնաղ երկերը՝ չափածո և արձակ լեգենդները. «Ավելի վաղ չափածո լեգենդներ, մի փոքր ուշ, չափածոյի կողքին, իսահակյանական արձակ լեգենդներ. առաջինների մի զգալի մասը գրված ազգային ավանդության կամ ավանդավեպի հենքով. «Իրիցկնկա աղբյուրը», «Մայրը», «Մոր սիրտը» և այլն, մյուս խումբը առնված արևելքի ու արևմուտքի ժողովրդական ավանդության հարուստ գանձարանից, բայց և իմաստավորված սեփական ժողովրդի՝ դարերի ճանապարհ կտրած իմաստության դիտակետից»³⁰⁸:

Ամփոփելով՝ նշենք, որ գրական ժանրերի խնդիրը ներկայացնում է տեսական բարդ ու ընդգրկուն մի ոլորտ, ուր բախվում են տարբեր, հաճախ իրարամերժ դրույթներ ու տեսակետներ, որոնք շարունակական ընթացքի մեջ են շնորհիվ ժանրի «հավերժական» տենդենցների (Բախտին)՝ անցյալի հիշողության և մշտական նորացման:

Асмик Ванян – Жанровые особенности легенды. – В статье выявлены главные особенности жанра: тенденция совмещения традиционного и новаторского, три важнейших критерия построения произведения, создания образа и содержания, явление взаимопроникновения жанров и создания этим путем новых литературных родов. Представлены происхождение жанра легенды и его историческое развитие, соотношение с другими жанрами устного народного творчества (балладой, преданием) и свойственные ему особенности.

Hasmik Vanyan – The Generic Peculiarities of the Legend. – In the application the main features of this genre are brought about with the goal of bringing together the traditional and the contemporary. We are introduced with the plot and the creation of images, the three important criterions of building up the legend, the interpenetrating of the genres and the phenomenon of creating new literary types in this way. Here we deal with the origin and the historical development of the legend as a literary genre and its correlation with other folk genres (ballads, sagas) and its peculiarities.

³⁰⁸ Գ. Հովհաննիսյան, Ավետիք Իսահակյանի արձակը, Եր., 1963, էջ 130:

LA LEXICOGRAPHIE FRANCO-ARMÉNIENNE
ET L'ARMÉNIEN MODERNE

ANNA STEPANYAN

La lexicographie a toujours été et reste encore aujourd'hui un domaine très étudié parmi les sciences du langage. Les dictionnaires et les moyens de leur confection ont fait l'objet de nombreuses études très intéressantes et instructives (J. Casares, Fr. J. Haussman, J.-Cl. Boulanger, D. Corbin, L. Guilbert, H. Meschonnic, A. Rey, J. Rey-Debove, J. Dubois, B. Quemada, J. Pruvost et beaucoup d'autres). Aujourd'hui aussi les dictionnaires restent très attractifs pour les linguistes, comme peuvent le démontrer les nombreux sites Internet qui leur sont consacrés:

www.dicorevue.fr et www.u-cergy.fr/dictionnaires/index.html «Le musée virtuel des dictionnaires» sous la direction de Jean Pruvost;

<http://atilf.atilf.fr/tlf.htm> «Le Trésor de la langue française informatisé» sur le site de l'ATILF (Analyse et traitement informatique de la langue française);

<http://www.academie-francaise.fr/dictionnaire/> pour les dictionnaires de l'Académie Française.

On trouve sur le site de la Bibliothèque Nationale de France³⁰⁹ beaucoup de dictionnaires, dont, notamment, le *Nouveau dictionnaire illustré français-arménien* de Guy de Lusignan³¹⁰, l'un des dictionnaires les plus célèbres de l'histoire de la lexicographie franco-arménienne.

Le dictionnaire permet de répertorier les mots d'une langue, de prescrire le bon usage ou de décrire un état de langue ou son évolution. Il est « à la fois témoin et agent de la démocratisation des connaissances³¹¹». Aujourd'hui avec le développement des techniques du traitement automatisé des langues (TAL), des moyens de traduction automatique, ainsi que des corpus numériques, il acquiert un rôle des plus importants.

Les dictionnaires présentent une dualité qui les distingue d'autres types de production écrite. D'une part ils tendent à l'objectivité en représentant les mots des langues, l'ensemble de leurs acceptions. Ils sont les témoins de l'histoire et de l'évolution de la communauté dans laquelle ils sont nés du fait qu'ils contiennent les mots exprimant les notions de la vie quotidienne, de la vie spirituelle et de la culture d'un peuple à une époque donnée. D'autre part ils sont subjectifs (dans la mesure où les dictionnaires peuvent être subjectifs), car ils sont nettement marqués par la volonté, l'idéologie, les principes et les préférences de leurs rédacteurs. Donc, les dictionnaires sont autant de prises de paroles qui peuvent être étudiés comme telles avec leur environnement culturel, le contexte.

³⁰⁹ www.gallica.bnf.fr

³¹⁰ <http://gallica.bnf.fr/ark:/12148/bpt6k5494344w.r=arm%C3%A9nien.langFR>

³¹¹ Encyclopædia Universalis, article DICTIONNAIRE, signé B. Quemada.

Pourquoi et à quel moment on décide de faire un dictionnaire, quels en sont les motifs personnels, mais aussi politique, culturel, économique, etc.? L'époque, la situation politique, culturelle, économique et idéologique, la personne du lexicographe lui-même (ainsi que des éditeurs, des mécènes, des commanditaires) prennent une importance et sont étudiés pour une meilleure appréhension de la valeur culturelle d'un dictionnaire. Les correspondances privées et d'autres types de témoignages deviennent très importants car ils relèvent de la représentation de l'objet étudié à l'époque donnée.

La lexicographie arménienne est largement étudiée comme le démontre la bibliographie du présent article. De même, dans *Bazmavep* (ou *Pazmaveb* par la suite), une revue scientifique publiée à partir de 1843 à l'imprimerie de Saint-Lazare, à Venise, et *Handes amsorya* (ou *Hantess*), autre revue de la Congrégation des Mékhitaristes de Vienne on peut trouver des articles très intéressants concernant la lexicographie et la philologie arméniennes.

La lexicographie arménienne est aussi ancienne que la littérature arménienne qui date du V^e siècle. La présente étude se donne pour objet l'étude de la lexicographie franco-arménienne à un moment très important dans l'histoire de la langue arménienne, la transition de l'arménien classique (le grabar) vers l'arménien moderne qui se situe dans la deuxième moitié du XIX^e siècle. C'est la période de ce que l'on appelle *la lutte de lettres* (գրապայքար) dans l'histoire de la langue arménienne et qui représente la grande discussion qui séparait les intellectuels de l'époque en deux camps : ceux qui étaient pour l'arménien classique et ceux qui voulaient le délaisser au profit de l'arménien moderne³¹². Cette *lutte des lettres* commence aux années 1850 par une jeunesse arménienne nourrie aux idées révolutionnaires françaises. Il est intéressant qu'elle ait été poursuivie en Arménie orientale tout comme en Arménie occidentale. Et si en Arménie orientale l'arménien moderne met très peu de temps pour vaincre la langue classique, la lutte se poursuit en Arménie occidentale jusqu'aux années 1890³¹³.

Les relations de l'arménien et du français ont une longue histoire et le nombre des dictionnaires arménien-français et français-arménien en est la preuve. Le premier dictionnaire français-arménien est publié à Venise, dans l'imprimerie de la Congrégation des Pères Mékhitaristes de Saint-Lazare. Il est admis de considérer comme des chefs-d'œuvres du genre les dictionnaires bilingues de Norayr de Byzance³¹⁴ et de Guy de Lusignan³¹⁵. Le dictionnaire arménien-français le plus récent, rédigé par le professeur A. Barlézizian³¹⁶ vient couronner la lexicographie bilingue arméno-française.

Nous avons étudié deux dictionnaires de l'époque qui ont participé à la lutte des lettres et qui sont révélatrices des facteurs du succès d'un dictionnaire.

N. de Byzance, grand connaisseur des manuscrits arméniens, a longtemps travaillé aux dictionnaires de l'arménien classique, et du moyen arménien qui sont restés inédits. Il a travaillé pendant 13 ans (1866-1879) pour rédiger son dictionnaire qui contient 50 000 mots de la nomenclature du Dictionnaire de Littré et de celui de l'Acadé-

³¹² La presse d'époque regorge de polémique et de différentes propositions (*Pazmaveb*, *Handes amsorya*, et autres).

³¹³ *H. Adjarian*, Histoire de l'arménien, Erevan, 1951, pp. 504-505.

³¹⁴ *N. de Byzance*, Dictionnaire français - arménien, Constantinople, 1884.

³¹⁵ *G. de Lusignan*, Le Nouveau dictionnaire illustré français-arménien, Paris, 1900.

³¹⁶ *A. Barlézizian*, Dictionnaire arménien-français, Erevan, 2009.

mie française. C'est le troisième dictionnaire français-arménien après ceux de H. Avkérlian de la Congrégation Mékhitariste de Saint-Lazare et de S. Éminian de la Congrégation Mékhitariste de Vienne, comme le remarque N. de Byzance dans la Préface de son Dictionnaire.

Dans la préface, N. de Byzance parle des mots nouveaux qu'il a créés et qu'il a marqués d'un astérisque. Il a marqué d'un double astérisque les mots déjà existants employés dans un nouveau sens. Il a utilisé aussi un autre symbole (†) pour marquer les mots français qui ne sont pas enregistrés dans le Dictionnaire de l'Académie ni dans celui de Littré. Il faut remarquer que ces mots sont assez nombreux. Après la Préface l'auteur a placé les lettres qu'il a reçues d' E. Littré. Nous apprenons de ces lettres que N. de Byzance a envoyé au grand lexicographe français des notes. Le Supplément de Littré s'est enrichi de 9 mots grâce à N. de Byzance³¹⁷.

Sans s'attarder sur la composition du dictionnaire, remarquons que généralement les entrées sont traduites et expliquées en grabar, avec parfois des explications en arménien moderne.

Au moment de la rédaction du dictionnaire N. de Byzance est déjà préoccupé par son sort et il écrit beaucoup de lettres aux rédacteurs de différentes revues arméniennes, aux mécènes et aux représentants de l'intelligentsia arménienne. Ses lettres qui se trouvent maintenant à la Bibliothèque centrale de l'Université de Göteborg en Suède ont été publiées en 2003³¹⁸. Parmi ces lettres on peut trouver sa correspondance avec M. Mamourian, le rédacteur de la revue *Arévélian Mamoul* (la Presse Orientale), une correspondance qui est particulièrement significative de ce qui va se passer par la suite, de ce que Démirdjibachian appellera la guerre de Troie dans la lexicographie arménienne. Norayr écrit à Mamourian à la suite de la publication des remarques de ce dernier sur son dictionnaire. Après une série d'éloges, Mamourian s'était demandé s'il ne valait pas mieux rédiger la partie arménienne en langue moderne. Dans sa lettre à Mamourian, Norayr le remercie pour l'intérêt qu'il porte à son dictionnaire et répond à la préoccupation du rédacteur en écrivant qu'il est impossible de faire un dictionnaire en arménien moderne car il manque de littérature et que son vocabulaire ne lui permettrait pas de traduire toute la richesse du vocabulaire français, tandis que « le grabar est une langue riche et en donne toute la possibilité ». Il écrit en plus que le choix de la langue moderne en impliquerait un autre, celui de l'un des dialectes de l'arménien moderne.

Alors que se forment des comités pour organiser l'abonnement au dictionnaire, il commence à courir beaucoup de rumeurs compromettant Norayr et son dictionnaire. Pour les uns il a épousé sa femme pour sa dot (pour pouvoir couvrir les frais de publication du dictionnaire), pour les autres il a volé des manuscrits à la bibliothèque de la Congrégation, pour les troisièmes son dictionnaire est un échec, etc. etc. Il apprend par ailleurs que M. Nubarian a commencé à travailler à un dictionnaire français-arménien. Mamourian publie deux articles à la Presse Orientale où il se permet de critiquer amèrement N. de Byzance et où il fait des éloges à Nubarian qui a pu faire « ce que Norayr croyait impossible », à savoir, faire suivre les mots français des mots de l'arménien moderne. Norayr de Byzance répond à ces articles de Stockholm où il s'est installé avec sa

³¹⁷ G. Gasparyan, Histoire de la lexicographie arménienne, Erevan, 1968, p. 209.

³¹⁸ N. Buzandatzí, Études, Textes, Lexicographie, Genève, 543 p.

femme par une lettre très modérée où il regrette avoir mentionné Mamourian trois fois dans la préface de son dictionnaire, il parle aussi des fautes du «traducteur expérimenté» et «fin connaisseur du français» comme M. Nubarian est qualifié dans l'article de Mamourian³¹⁹.

Le dictionnaire de N. de Byzance, unique pour son époque, rédigé minutieusement, dans lequel chaque article est un petit guide de l'histoire du mot, où l'on trouve près de 5 000 mots de l'arménien moyen jamais enregistrés dans d'autres dictionnaires, beaucoup de néologismes créés d'après les mots français dont une grande partie est assimilée en arménien contemporain, ce dictionnaire, donc, reste méconnu, et dans la liste présentée à la fin du Dictionnaire il n'y a que quelques 300 abonnés. L'échec peut être expliqué par le fait que c'est un dictionnaire français – arménien classique tandis que la langue prédominante était déjà, depuis peu il est vrai, l'arménien moderne. Pourtant le dictionnaire de N. de Byzance est considéré comme l'un des meilleurs dictionnaires bilingues tant par ses contemporains (N. Akinian, E. Démirdjibachian, H. Adjarian) que par les linguistes d'aujourd'hui (A. Barlézizian, V. Hambartsumian).

Mesrob Nubar (Mesrop Nubarian), philologue, traducteur et lexicographe, ouvre une nouvelle page dans la lexicographie franco-arménienne en faisant suivre dans son dictionnaire les mots français des mots de la langue laïque, comme il appelle l'arménien parlé ou moderne. La rédaction du dictionnaire de M. Nubar³²⁰ est entreprise en 1879, juste l'année où N. de Byzance a terminé le sien. L'idée de faire un dictionnaire lui vient quand il est en train de traduire *Notre-Dame de Paris* de V. Hugo. Il en fait part à Hugo dans une lettre dont la réponse est bien encourageante pour le lexicographe en herbe³²¹. Dix ans après voit le jour le *Dictionnaire français – arménien* à Constantinople.

M. Nubarian remarque dans la préface de son dictionnaire qu'il ne faut pas être trop puriste et continuer d'employer des mots du grabar que personne ne comprend, que la tâche qu'il entreprend est très difficile, car l'arménien moderne n'est pas une langue écrite standardisée et ne possède pas de lexique très riche dans différents domaines et que son dictionnaire est un essai dans ce sens. Il est donc obligé de créer un nombre assez important de mots (plus de 5 000), des néologismes, surtout des calques, marqués dans le dictionnaire par une croix. Il remarque que le travail qu'il a fait convenait à une Académie³²². « Celles de mes créations qui sont réussies vont bénéficier à la langue arménienne, alléger le travail des traducteurs, les autres, non réussis, vont faciliter la création des mots meilleurs, car il est plus facile de créer un mot d'après les mots déjà formés³²³». Il cite aussi la lettre de l'écrivain arménien E. Otian, qui remarque que même si le quart des mots qu'il a formé s'assimilait, ce serait un grand service rendu à sa patrie. Nubarian est surtout contre les longs mots du grabar qui ne sont pas agréables à l'oreille³²⁴.

Pour ceux qui ne pourraient pas acheter son grand dictionnaire, Nubarian rédige (1892-1895) le Dictionnaire abrégé français – arménien (pp. 1-818) qui contient 33 000

³¹⁹ *N. Buzandatz*, *ibid*, p. 488.

³²⁰ *M. Nubar*, Dictionnaire français-arménien, Constantinople, 1889 (1^{ère} édition).

³²¹ *M. Nubar*, *ibid*, Préface, p. XVI.

³²² *M. Nubarian*, *ibid*, p. VI.

³²³ *M. Nubarian*, *ibid*, p. VII.

³²⁴ *M. Nubarian*, *ibid*, p. VII.

entrées. Dans la préface nous lisons les remarques de l'auteur concernant l'accueil chaleureux de son premier dictionnaire dont celui-là est le condensé³²⁵. Nous apprenons aussi qu'il a placé dans ce dictionnaire abrégé quelque 3 000 néologismes créés par lui-même lors de la rédaction de son grand dictionnaire et dont une partie est déjà très employée en arménien moderne, un fait qui le rend très heureux³²⁶.

Le *Dictionnaire français-arménien* de Nubarian a eu un grand succès. Ce qui explique le fait qu'il ait eu des rééditions, dont celle de Beyrouth en 1955. Le *Nubar* a joué un rôle décisif dans la formation d'un nouvel esprit dans la société arménienne de l'époque. «Le Dictionnaire de Mesrop Nubarian a explosé comme une bombe qui a détruit tout ce qui était dépassé (...) et qui apportait ce qui était nouveau³²⁷». Le dictionnaire a divisé les intellectuels arméniens en deux camps, celui des puristes qui défendaient le grabar et le dictionnaire de N. de Byzance et l'autre des progressistes qui défendaient l'arménien moderne et donc le dictionnaire de Nubarian.

Le Norayr est publié en 1884, 5 ans avant la publication du Nubar. Du point de vue de la nomenclature ce dernier est plus pauvre (40 000 entrées) que celui de N. de Byzance (50 000 entrées), mais M. Nubarian n'avait pas l'intention de faire un dictionnaire extensif et il a très souvent délaissé les mots peu utilisés.

Cette opposition, mais en fait la lutte entre l'arménien classique et l'arménien moderne, s'est terminée naturellement avec la victoire de l'arménien moderne. Si du point de vue de la lexicographie le dictionnaire de Nubarian n'a pas tous les avantages de celui de Norayr de Byzance, il a l'avantage d'être rédigé dans une langue compréhensible à la majorité des contemporains. Cette lutte, ayant mis à l'ordre du jour le problème crucial du choix de la langue, est remportée par ceux qui sont pour la modernité et le Nubar. Le rôle de la presse dans toute cette *lutte* n'est pas le moindre.

L'étude de ces deux dictionnaires, ainsi que de la presse de l'époque nous permet de faire quelques conclusions.

Ainsi, les dictionnaires les plus appréciés ne sont pas toujours les plus consultés, comme nous le montre l'exemple du Norayr. Parfois les dictionnaires qui ne sont que des compilations sont beaucoup plus estimés que ceux qui ont été rédigés après une étude minutieuse des œuvres littéraires, de la presse, etc. Les dictionnaires réussis sur le plan lexicographique peuvent être des échecs complets sur le plan financier.

D'autre part nous avons vu que la lexicographie française a énormément influencé la rédaction des dictionnaires arméniens. Les lexicographes arméniens ont suivi les méthodes et les principes de leurs collègues français. Le dictionnaire le plus apprécié dans ce sens est le Littré. Autre fait constaté : les dictionnaires bilingues sont publiés en majorité par des lexicographes de la Diaspora arménienne et rarement en Arménie. L'histoire culturelle des dictionnaires donne la possibilité de tracer un réseau d'interdépendance des éléments qui régissent la vie des dictionnaires et qui pourraient de premier abord paraître inutiles.

BIBLIOGRAPHIE

Ouvrages en arménien:

³²⁵ *M. Nubar*, Dictionnaire abrégé français-arménien, Constantinople, 1911, p. I.

³²⁶ *M. Nubar*, *ibid*, p. III.

³²⁷ *G. Gasparyan*, *ibid*, p. 213.

1. Adjarian H., 1951, *Histoire de l'arménien*, Erevan, 608 p.
2. Aghayan E., 1958, *Histoire de la linguistique arménienne*, vol. 1, Erevan.
3. Aghayan E., 1987, *Fondements de la linguistique*, Erevan, 734 p.
4. Amalyan H., 2007, *Lexicographie médiévale arménienne*, Erevan, 400 p.
5. Barlézizian A., 2006, *Les liens linguistiques arméno-français au XIX^e siècle*, Erevan, 212 p.
6. Buzandatzi N. Norayr, 2003, *Études, Textes, Lexicographie* (éd. préparée par M. Minassian), Genève, 543 p.
7. Djahukian G., 1987, *Histoire de la langue arménienne*, Erevan, 748 p.
8. Gasparyan G., 1968, *Histoire de la lexicographie arménienne*, éd. de l'Académie arménienne des sciences, Erevan, 565 p.
9. Ghazaryan R., 2002, *Pages de l'histoire de la lexicographie arménienne*, éd. Makmilan-Armenia, Erevan, 167 p.
10. Hambartsumian V., 2009, *Une nouvelle acquisition de la lexicographie arménienne contemporaine*, in *Langue et Linguistique*, Erevan, pp. 91-93.
11. Hambartsumian V., 2006, *Aperçu de l'histoire de la lexicographie arménienne, XVII^e-XIX^e ss.*, Erevan, 140 p.
12. Sukiasyan A., 2008, *L'arménien contemporain*, Erevan, 352 p.

Reuves:

1. Bazmavep (dans les publications postérieures Pazmavep et Pazmaveb), revue des sciences naturelles, économiques et philologiques, édition de Saint-Lazare, NN de 1843, 1844, 1852, 1876, 1896, 1897, 1913, 1924, 1930, 1949, 1950.
2. Handes amsorya (ou Hantess), Revue philologique arménienne, Vienne, édition Mékhitariste, NN de 1877, 1896, 1921, 1930.

Ouvrages en français:

1. BUZON C., 1979, *Dictionnaire, langue, discours, idéologie*, in *Langue française*, N 43, pp. 27-44.
2. MEILLET A., 1962, *Etudes de linguistique et de philologie arméniennes, I – Recherches sur la syntaxe comparée de l'arménien*, suivi de *la Compositions en arménien*, Fondation Calouste Gulbenkian, Lisbonne, 185 p.
3. MEILLET A., 1977, *Etudes de linguistique et de philologie arméniennes, II*, Imprimerie orientaliste, Louvain, 571 p..
4. REY A., DELESALLE S., 1979, *Problèmes et conflits lexicographiques*, in *Langue française*, N 43, pp. 4-26.

Ouvrage en russe:

1. CASARES J., 1950, *Introducción a la lexicografía moderna*, Madrid, trad. en russe Arutyunova, 1958, Moscou, 354 p.

Dictionnaires:

1. Byzance N. de, *Dictionnaire français-arménien*, Constantinople, 1884.
2. Nubar M., *Dictionnaire français-arménien*, Constantinople, 1889.
3. Nubar M., *Dictionnaire abrégé français-arménien*, Constantinople, 1911.

SITOGRAFIE

1. www.dicorevue.fr
2. www.u-cergy.fr/dictionnaires/index.html
3. <http://atilf.atilf.fr/tlf.htm>
4. <http://www.academie-francaise.fr/dictionnaire/>
5. www.gallica.bnf.fr
6. www.fr.wikipeida.org
7. www.universalis.fr

Աննա Ստեփանյան – Ֆրանս-հայերեն բառարանագրությունն ու արդի գրական հայերենը: – Սույն հոդվածի խնդրո առարկան ֆրանս-հայերեն բառարանագրությունն է՝ ուսումնասիրված ժամանակակից բառարանագիտության մեջ նոր՝ մշակութային պատմության լույսի ներքո: Քննության առնված երկու բառարանները՝ Նորայր Բյուզանդացու և Մեսրոպ Նուբարյանի խմբագրությամբ, լույս են տեսել հինգ տարվա տարբերությամբ ժամանակակից հայոց լեզվի կայացման համար մի շատ կարևոր ժամանակաշրջանում: Ժամանակի հանդեսները պարզորոշ ներկայացնում են տիրող մթնոլորտն ու գրապայքարը՝ հնի և նորի դաժան հակամարտությունը, որն անհետևանք չի անցնում նշված բառարանների համար ևս: Ինչպիսի՞ դերակատարություն ունեցան ֆրանսերենն ու ֆրանս-հայերեն բառարանագրությունը հնի ու նորի այդ պայքարում, ինչպե՞ս կարող է մասնագետների հավանությանն ու հարգանքին արժանացած բառարանը հաջողություն չունենալ ընթերցողների շրջանում և հրատարակչական առումով ձախողում լինել: Սույն հոդվածում փորձել ենք գտնել այս և այլ հարցերի պատասխանները:

Анна Степанян – Французско-армянская лексикография и современный армянский язык. – Предметом исследования данной статьи является французско-армянская лексикография, в свете нового подхода в этой лингвистической науке, а именно культурной истории.

Изучение двух словарей (Норайра Византийского и Месропа Нубаряна), их истории, факторов успеха и провала не случайно. Они были опубликованы с разницей в пять лет, в важнейший период для становления современного армянского языка. Какую роль в борьбе нового и старого языков сыграл французский язык и французско-армянская лексикография, каким образом и почему словарь, удостоенный уважения и одобрения специалистов не имел успеха издательского и финансового? Данная статья является попыткой ответить на эти и другие вопросы.

**ԴԵՐԲԱՅ + ԳՈՅԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՈՎ
ԲԱՌԱԿԱՊԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՊԱՐՈՒՅՐ ՄԵՎԱԿԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ**

ԼՈՒՄԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՄՅԱՆ

Դերբայները՝ որպես բայի անդեմ ձևեր, կատարում են ձևաբանական և շարահյուսական դեր: Նշված գործառնություններով, սակայն, ոչ բոլոր դերբայներն են օժտված: Անկատար, վաղակատար, ժխտման դերբայներն ունեն միայն ձևաբանական, անորոշ և ենթակայական դերբայները՝ միայն շարահյուսական, իսկ անկատար 2-րդ, ապառնի, հարակատար դերբայները և շարահյուսական և՛ ձևաբանական դեր:

Դերբայների շարահյուսական գործածությունն ունի իր առանձնահատկությունները, որոնց բացահայտմանն էլ կանդրադառնանք սույն հոդվածում: Դերբայների լրացական կիրառությունների ուսումնասիրությունը, ինչպես իրավացիորեն նշում է Վ. Քոչայան³²⁸, բարդ պատկեր է երևան հանում: Պատճառն այն է, որ դերբայներն իրենց իմաստային ու շարահյուսական առանձնահատկություններով հարաբերակից են այլ խոսքի մասերի: Դերբայների շարահյուսական կիրառությունների ուսումնասիրության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել այդ հարաբերակցությունը:

Առարկայի և հատկանիշի հարաբերություն արտահայտելու առումով դերբայ լրացումով գոյականական բառակապակցությունները նման են ածական լրացումով բառակապակցություններին: Հիմնական տարբերությունն այն է, որ եթե ածականով արտահայտվում է առարկայի անփոփոխ հատկություն, դերբայներն արտահայտում են փոփոխվող հատկություն:

Գոյականի լրացման դերով հանդես են գալիս անորոշ, հարակատար, ենթակայական և ապառնի երկրորդ դերբայները: Ենթակայական դերբայի համար հատկանշականը խոսելու պահին դրսևորվող հատկանիշն է, այսինքն՝ ներկայի իմաստը, ինչպես օրինակ՝ *ձածկող տանիք*³²⁹, *շոշափվող հոգի* (հ. 4, 258 էջ), *գրսնող խումբ* (հ. 3, 107 էջ), *պարող այծյամ* (հ. 4, 138 էջ), *բնաջնջվող ազգ* (հ. 4, 176 էջ), կամ մի հատկանիշ, որն ընդհանրապես բնորոշ է առարկային՝ *այրող կրակ* (հ. 3, 31 էջ), *տանջող ցավ* (հ. 4, 150 էջ), *վառվող մոմեր* (հ. 4, 114 էջ), *վառվող խարույկ* (հ. 3, 157 էջ) և այլն:

Հարակատար դերբային բնորոշ է անցյալի իմաստը՝ օժտված հարատևման հատկությամբ, օրինակ՝ *հոգնած դեսք* (հ. 4, 223 էջ), *ջարդված ճյուղք* (հ. 4, 221 էջ), *մրսած հոգի* (հ. 4, 230 էջ) և այլն:

Անորոշ դերբայի սեռական հոլովաձևին և ապառնի 2-րդ դերբային բնորոշ է ապառնիության իմաստը՝ *աչքը փակելու բախտ* (հ. 4, 270 էջ), *տնքալու իրավունք* (հ. 4, 251 էջ), *կառուցելիք ակումբ* (հ. 3, 9 էջ), *ծնվելիք մանուկ* (հ. 4, 80 էջ) և այլն:

³²⁸ Վ. Ս. Քոչայան, Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Եր., 1975, էջ 131:

³²⁹ Պ. Մևակ, Երկերի լիակատար ժողովածու վեց հատորով, Եր., 1971, հ. 4, 221: Հետագա շարադրանքում նշվում են միայն համապատասխան հատորն ու էջը:

Անորոշ և ապառնի 2-րդ դերբայ լրացումով գոյականական բառակապակցություններում լրացումը հանդես է գալիս սեռական հոլովաձևով և հատկանիշ է ցույց տալիս: Դերբայի փոփոխված ձևերից գոյականի լրացում դառնում է սեռական հոլովաձևը, որով արտահայտված որոշիչն ունի որակային, հատկանշային երանգ: Դիտարկենք օրինակներ.

Իր կայսերական մականն էր զարկում աշխարհի մեջքին,
Ա՛յն խեղճ աշխարհի,
Որ զարկի ցավից նույնիսկ **սնքալու իրավունք** չուներ: (հ 4, 251 էջ)

Կամ՝

...Քեզ **կորցնելու ցավից** ահավոր
Ա չ ք ե ր ս լ ի ք ր լ ա ց ա ... մրմնջաց... (հ. 4, 213 էջ)

Բառակապակցություններում անորոշ դերբայը հանդես է գալիս հիմնականում նախադաս դիրքով, իսկ կապակցության լրացյալի և լրացման հարաբերությունները այնպիսին են, ինչպիսին գոյականի սեռական հոլովով դրված լրացման և նրա լրացյալի դեպքում:

Ժամանակակից հայերենն ունի երկու ապառնի ապառնի դերբայ՝ ապառնի 1-ին (–ու վերջավորվող) և ապառնի 2-րդ (–իք վերջավորվող): Ապառնի 2-րդ դերբայը, սահմանափակ լինելով ձևակազմական ընդգրկման տեսակետից, կատարում է սոսկ շարահյուսական դեր³³⁰:

Ապառնի 2-րդ դերբայն իր արտահայտած իմաստով ունի որոշչային կիրառություն, ինչպես օրինակ՝

... Թե **կառուցելիք** իր նոր **ակումբը** անպատճառ պիտի
Իր ձևով անշուշտ, ոչ թե մեծությամբ,
Խիստ նման լինի փառահեղ շենքին այն օպերայի: (հ. 3, 9 էջ)

Կամ՝

Նրանց փոխարեն

...թող հոսի ավո՛ւն, թող հոսի քրտի՛ նք
ու սրբագրի վրիպակները նույնիսկ բնության՝
ապառաժները դարձնելով հնձան **ճմլելիք գինու...** (հ. 4, 319 էջ)

Ենթակայական դերբայը, որը ցույց է տալիս գործողություն կատարողի բայական հատկանիշ, գաղափար, ժամանակակից հայերենում ունի միայն շարահյուսական դեր³³¹:

Պարույր Սևակի խոսքարվեստում գոյականի լրացման դերում հանդես եկող ենթակայական դերբայը հիմնականում գործածվում է նախադաս դիրքով և ունի որոշչային կիրառություն: Դիտարկենք օրինակներ.

...Ասացեք, որ նա մի փակ այգի է,

³³⁰ Այս մասին տե՛ս **Ա. Աբրահամյան**, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Եր., 1953, էջ 145, 317-341:

³³¹ **Պ. Պողոսյան**, Բայի եղանակային ձևերի ոճական կիրառությունները արդի հայերենում, Եր., 1959, էջ 103-115:

Այգու մեջտեղում՝ դռնփակ հնձան,
Բուրող հնձանում՝ եռացող գինի,
Իսկ դուք Բարիներ, սնուցում եք ինձ
Ուրի շ մի գինով... (հ. 3, 151 էջ)

Կամ՝

Դերը չսիրվածի կամ մերժվածի
Ես կարող եմ խաղալ նո՛ւյն հեշտությամբ,
Ինչ հեշտությամբ կյանքում պիտի դառնա
Համ **չզգացող մարդը**՝ լավ գինեգործ,
Գույն **չջուկող մարդը**՝ լավ ծաղկագետ: (հ. 3, 196 -197 էջ)

Նշված գործողություններում նկատելի է, որ խոսքի արտահայտչականության ուժեղացման, երևույթի ընդգծված բնութագրման առումով առանձնապես կարևոր դերով հենց ենթակայական դերբայն է հանդես գալիս, ինչպես հետևյալ դեպքերում՝ «Նա ուներ շրթե՛ր. Այրող կարոտից **դողացո՞ղ շրթեր...**» (հ. 4, 148 էջ), «Գո՛ւյն է ճանաչում, Բայց միշտ էլ համառ Միրահարված է **քսմավող ներկի՛ն...**» (հ. 4, 144 էջ), «Մանրող հայացքով իմ շուրջն եմ նայում», (հ. 3, 155 էջ), «Մի **գերեզմանավող լռություն** տիրեց նրա հոգու մեջ» (հ. 4, 212 էջ) և այլն: Դիտարկված օրինակներում մակդրային գործածություն ունեցող ենթակայական դերբայները ստեղծել են անհատականության թարմ դրոշմ ունեցող կապակցություններ:

Ենթակայական դերբայը չափածո ստեղծագործություններում հաճախ գործածվում է նաև որպես ետադաս որոշիչ: Նշված հանգամանքը պայմանավորված է նաև տաղաչափական գործոնով: Դիտարկենք օրինակներ.

Անցած ձմռանը նշանվածների կոպերի տակով
Անհամբերությամբ սահում է հիմա **երազանքն այրող**
Այն հարսանիքի,
Որ պիտի լիներ, Բայց դեռ, ա՜խ, չկա: (հ. 4, 53 էջ)

Կամ՝

...Պերեկոպից Բեռլին հասան՝
Իրենց սրտում արծարծելով
Խաղաղ կյանքի **կրակն այրող**... (հ. 3, 31 էջ)

Քննության առարկա բառակապակցություններն անփոխարինելի դեր ունեն Սևակի չափածո խոսքում: Այդ կապակցությունների ոճական նշանակալի դերն առանձին ցայտունությամբ դրսևորվում է խոսքի համեմատաբար մեծ միջակայքում, երբեմն ամբողջ բանաստեղծության մեջ: Բերենք օրինակ.

Տաճարի շուրջ՝ սուրբ-սուրբ վանքեր,
Հնչող,
Շնչող,
Կանչող զանգեր...
Եվ ձեմարան՝ մտքի կաճառ: (հ. 4, 17 էջ)

Գոյականի լրացման դերով հանդես եկող հարակատար և ենթակայական դերբայների հիմնական պատկերը վերաբերում է առարկայի հատկանիշի դրսևորման տևողությանը, ժամանակին:

Գոյականի լրացման դերում հանդես եկող հարակատար դերբայն արտահայտում է որոշչային հարաբերություն: Կարծիք կա, որ ներգործական սեռի բայերի հարակատար դերբայը որոշիչ է դառնում կրավորական ձևով, իսկ ներգործական ձևն այդ իմաստով սահմանափակ գործածություն ունի³³²: Պարույր Սևակի ստեղծագործությունների լեզվի ընձեռած փաստերը վկայում են, որ այդպես չէ: Դիտարկենք օրինակներ.

Այստեղ՝
Ծերեր, որ մանկացած
Վեգ են խաղում կամ **ներկած ձու**: (հ. 4, 103)

Կամ՝
...Մի մահաբաղձ պահի կախ են տալիս իրենց՝
Իրենց ավշե հյութից իրենց **հյուսած թոկով**,
Սպա... չէ ն խեղդվում, չէ՛: (հ. 3, 195)

Կամ՝
...Երբ քո ոսկեհատ սրսուռ ցորնի տեղ
Սերմ էին հաշվում **բոված աղանձը**... (հ. 4, 152)

Բերված օրինակներում ներգործական սեռի *ներկել*, *հյուսել*, *բովել* բայերը հանդես են եկել որոշչային կիրառությամբ: Ընդ որում՝ Սևակը հաճախ կրավորականության իմաստն արտահայտում է առանց -վ- ածանցի, այսինքն՝ բայը ներգործական ձևով գործածելով՝ արտահայտում է կրավորական սեռի իմաստ:

...**Կոտրած ձեռով** Սաթո բաջին
Ուզում է, որ տա մի օգուտ
Իր կոլխոզին: (հ. 3, 95)

Այսպիսի գործածություններով բանաստեղծը ցանկացել է ընդգծել գործողի գաղափարը, իսկ երբ անհրաժեշտ է ներկայացնել, ընդգծել գործողությունը՝ որպես լրացյալով արտահայտված առարկայի հատկանիշ, շեշտել առարկայի որևէ վիճակում կամ դրության մեջ լինելը, այդ դեպքում հարակատարը գործածվում է կրավորական սեռով, օրինակ՝ «**Բեկված սնե՛ր, Այրված շենե՛ր, Եվ մարդկանցից գերադասված անտեր շնե՛ր...**» (հ. 4, 193), «**Սպրոդ մարդուց հանկարծ դարձան Մի մտովի կերտված արձան...**» (հ. 4, 190), «**Մկրտված ոգով քո սուրբ հանճարի՛ Քանի՜~ երգչուհի, քանի՜~ հայ երգիչ, ... Մեր տաղ ու պարի թովչանքն են ցրում ...**» (հ. 4, 226) և այլն:

Բանաստեղծի լեզվին բնորոշ են նաև հարակատար դերբայներով կազմված անվանական հարադրությունների որոշչային կիրառությունները, օրինակ՝

...և այսպիսին են գայլի աչքերը,
իսկ **մեծաստաված-խորհրդանշված** Գորշինն՝ առավել լ... : (հ. 4, 282)

Կամ՝

³³² Վ. Քոսյան, Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, էջ 138:

Եվ Արարատից մինչև Արաֆաթ, Միփանից – Մինա,
Սև ծովից – Կարմիր, Կարմիրից – Մեռյալ
Վռոված – սփռված մեռելներն իրոք
վրե ժ լուծեցին թշնամուց իրենց... (հ. 4, 272)

Այսպիսով՝ Պարույր Սևակը դերբայներով թարմ, ինքնատիպ բառակապակցություններ ստեղծելու նպատակով լեզվում եղած բառերն օտտել է ընդգրծված անհատական բնույթի իմաստային առումներով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Քոսյան Վ.Ա., *Ժամանակակից հայերենի բառակապակցությունները*, Երևան, 1975:
2. Սևակ Պ., *Երկերի լիակատար ժողովածու վեց հատորով*, հ. 3, հ. 4, Երևան, 1973:
3. Արրահամյան Ա., *Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը*, Երևան, 1953:
4. Պողոսյան Պ., *Բայի եղանակային ձևերի ռճական կիրառությունները արդի հայերենում*, Երևան, 1959:

Лусине Оганнисян – Применение словосочетаний моделью причастие + существительное в поэтическом искусстве Паруйра Севака. – В статье рассматриваются словосочетания по моделью *причастие + существительное*, которые применяются в поэтическом искусстве Паруйра Севака.

Поэт, с целью создания своеобразных-самобытных словосочетаний, подчеркнутыми индивидуальными смысловыми значениями наделял причастия (неопределенное, прошедшее результативное, субъектное и 2-ое будущего времени), выступающие в роли *дополнения существительного*.

Lusine Hovhannisyan – The usage of word-combinations in participle+noun construction in Paruyr Sevak's art of speech. – The present article tackles upon the problem of the word-combinations in *participle+noun* construction used in Paruyr Sevak's art of speech.

The poet aiming to create ingenious *word-combinations* endowed the infinitive, resultative, subject and future second participles in the function of a noun complement with emphasized meanings of individual nature.

Ի Մ Ա Ս Տ Ա Ս Ի Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ե Վ Ք Ա Ղ Ա Ք Ա Գ Ի Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՓԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀՈՒՄԱՆԻԶՄԻ ՏԱՐԱՏԵՍԱԿՆԵՐԸ, ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՀՈՒՄԱՆԻԶՄ (ԷԿՈՀՈՒՄԱՆԻԶՄ)

ԳՐԻԳՈՐ ԱՍԱՏՐՅԱՆ

Էկոլոգիական հումանիզմը (Էկոհումանիզմ) արդի հումանիզմի ինքնատիպ տարատեսակներից է, որը սերտ առնչվում է նոոսֆերային հումանիզմի հետ: Սակայն քննարկվող հարցերի և նրանց նկատմամբ մոտեցումների նմանությամբ հանդերձ՝ դրանք ոչ միայն նույնական չեն, այլև դրանց միջև կան էական տարբերություններ: Օբյեկտիվ իրականության՝ Էկոհումանիզմի ընդգրկումներն ավելի լայն են, քան նոոսֆերային հումանիզմինը, քանզի Էկոհումանիզմի հետաքրքրության ու մտահոգության առարկան ոչ միայն մարդկության ու բնականության պահպանումն է, այլև երկիր մոլորակի վրա օրգանական աշխարհի, կենդանության բոլոր դրսևորումների ազատ ու անկաշկանդ զարգացման հարցերը:

Հումանիզմի այս երկու տարատեսակներին չի նույնացնում նաև նրանց կողմից կիրառվող ընդհանուր սինտետիկական մեթոդաբանությունը:

Իր բովանդակությամբ Էկոհումանիզմը հենվում է աշխարհի սինտրեգետիկական պատկերի վրա, որտեղ աշխարհը ներկայանում է որպես ամբողջական ու միասնական գոյացություն՝ կենդանի, ինքնազարգացող Ունիվերսում, և որտեղ ընդգծվում է “կոոպերացիայի, սինտրեգիայի և Էկոլոգիական կախվածության արժեքավորության ընդունումը”³³³:

Էկոհումանիզմի հիմքում ընկած է այն գաղափարը, որ տեխնածին քաղաքակրթության, գլոբալացման, բնապահպանական ճգնաժամի, նոր սպառնալիքների ու ռիսկերի պայմաններում կյանքի գոյություն ունեցող ձևերը բախվում են բազում և գնալով ավելի սրվող ու բարդացող նեգատիվ գործոնների հետ: “Զարգացման հումանիստական վեկտորների, նրա մարդկային էության դրսևորումների շարքում գնալով ավելի մեծ նշանակություն է ձեռք բերում Երկիր մոլորակի վրա ամեն մի կենդանության պահպանման վեկտորը”, - գրում է Ե.Ա.Կոռայը³³⁴: Առաջին պլան է մղվում բնական ու սոցիալական միջավայրի հետ մարդու հարաբերությունների ներդաշնակեցման հարցը, որի դեպքում շեշտը դրվում է ոչ թե բնությունը “նվաճելու”, “մարդուն ենթարկելու” վրա, այլ բնության նկատմամբ այնպիսի վերաբերմունքի մշակման վրա, որի դեպքում “Բնությունը ... դադարում է դիտվել որպես մարդկային գործունեության անսպառ ռեսուրս՝ ենթակա անվերջ, անընդհատ նվաճման ու ձևափոխման”³³⁵:

³³³ **E.A. Koray**, Гуманизм и ценностные основания экологической культуры // Возможность невозможного: Планетарный гуманизм для России и мира, М., РГО, 2004, стр. 114.

³³⁴ Տե՛ս **E.A. Koray**, Гуманизм и ценностные основания экологической культуры // Возможность невозможного: Планетарный гуманизм для России и мира, М., РГО, 2004, стр. 105:

³³⁵ Տե՛ս **E.A. Koray**, Гуманизм и ценностные основания экологической культуры // Возможность невозможного: Планетарный гуманизм для России и мира, М., РГО, 2004, стр. 107:

Արդի քաղաքակրթության արժեքային հիմունքները անհրաժեշտաբար իրենց մեջ են ներառում էկոլոգիական հրամայականները, որոնք ամենասերտ կերպով կապված են հումանիստական հրամայականների հետ: Էկոհումանիզմը ձգտում է յուրովի հաղթահարել աշխարհի ավանդական մարդակենտրոն պատկերացումը՝ միաժամանակ խուսափելով բիոցենտրիզմին հատուկ ծայրահեղություններից:

Մրա հետ սերտորեն առնչվում է աշխարհի նկատմամբ կոելոյուցիոն մոտեցման հարցը, որի պաշտպաններն այն համարում են մշակույթի ասպարեզում արդի իրողություններին և պարադիգմային տեղաշարժներին ամենից ավելի ադեկվատ և դրա մեջ շեշտը դնում կենդանի և ոչ կենդանի, սոցիալական և բնական աշխարհներում կատարվող կենսական գործընթացների փոխկապակցվածության ու զուգակցվածության վրա:

Ե.Ա.Կոզայր նշում է, որ “Կոելոյուցիոն պարադիգման, որպես սոցիումի և բնության համաձայնեցված զարգացման պարադիգմա, իր մեջ ներառում է էկոլոգիական մշակույթի ժամանակակից տիպի մի շարք օնտոլոգիական և ակսիոլոգիական դոմինանտներ”:

Մարդու և բիոսֆերայի կոելոյուցիոն ուսմունքի հիմնարար դրույթների ձևակերպման առաջնության դափնին պատկանում է Ն.Վ.Տիմոֆեև-Ռոստովսկուն, ով տակավին անցած դարի 60-ական թվականների վերջերին առաջին անգամ ուշադրության է արժանացրել այն իրողությունը, որ “նույնիսկ չափազանց փոքր մարդածին ներգործությունը բնական գործընթացների վրա՝ ընդունակ է առաջացնելու զգալի հետևանքներ կենդանի կյանքի կազմակերպման բոլոր մակարդակներում՝ մոլեկուլյար-գենետիկական, օնտոգենետիկական, պոպուլյացիոն և բիոսֆերային”³³⁶:

Ստացվում է այնպես, որ սոցիոբնական զարգացման կոելոյուցիոն սկզբունքը պահանջում է հրաժարում ռացիոնալ-տեխնոկրատական պարադիգմայից և մարդու, սոցիումի ու բնության փոխհարաբերությունների մարդակենտրոն և բիոկենտրոն պատկերացումների ծայրահեղություններից և պաշտպանում է կյանքի նոր, արտերնատիվ ձևերն ու ոճերը, կողմնորոշումը դեպի հասարակության հեռանկարային արժեքները, “կոլեկտիվ պլանետար մտածողության ձևավորումը”³³⁷:

Դա նշանակում է, որ կոելոյուցիոն սկզբունքը էկոհումանիզմի միջոցով դառնում է հումանիստական աշխարհայացքի օրգանական մասը, դրանով իսկ ձգտելով ավելի լրիվ համապատասխանել ինչպես իրականությանն ու աշխարհի արդի գիտական պատկերին, այնպես էլ ապագայի սպառնալիքներին ու մարտահրավերներին: Մա լույս է սփռում նաև այն միտումի վրա, որի ուժով հումանիստական աշխարհայացքը դառնում է գերիշխող՝ գիտական և արժեքային աշխարհըմբռնման մյուս տեսակների շարքում:

Էկոհումանիզմի մյուս կարևոր արժանիքն էլ այն է, որ նա միտված է ոչ միայն շրջակա միջավայրի պահպանմանը: Նրա համար խիստ էական է նաև մշակույթի, մշակութային ժառանգության պահպանումն ու զարգացումը, որը չափազանց հրատապ է հատկապես ինքնանույնականացման արդի ճգնաժամի պայմաններում, որի հաղթահարումն անհնար է առանց անցյալի պոզիտիվ ար-

³³⁶ Տե՛ս Գ. Փարսոնս, Человек в современном мире. Пер. с англ., М., “Прогресс”, 1985, стр. 109:

³³⁷ Գ. Փարսոնս, Человек в современном мире. Пер. с англ., М., “Прогресс”, 1985, стр. 111.

ժեքներին ու փորձին, մեզ հասած մշակութային ժառանգության ակունքներին դիմելու: “Եթե առաջինը կողմնորոշում է դեպի մարդու՝ որպես կենսաբանական տեսակի պահպանումը բիոսֆերայի բիֆուրկացիայի պայմաններում, ապա երկրորդն ուղղորդում է մարդու՝ որպես սոցիալական, մշակութային էակի էական հիմքի պահում-պահպանումը, սոցիալ-մշակութային հիշողության պահպանումը, հազարամյակներով ստեղծվող մշակույթի խնայումը”³³⁸:

Անհրաժեշտ է նաև նկատել նաև, որ ինչպես էկոլոգիական հումանիզմի, այնպես էլ արդի հումանիզմի՝ նրա հետ սերտորեն առնչվող մի քանի այլ տարատեսակների՝ էվոյուցիոն, նոոսֆերային և կոսմիկական հումանիզմի ընդհանուր գաղափարները և հիմնարար սկզբունքները բնորոշում են արդի հումանիզմի առավել էական հատկանիշները՝ նրա մոլորակայնությունը և ուղղվածությունը համաշխարհային ընկերակցությանը՝ որպես ոչ միայն մոլորակային էթիկայի, այլև մոլորակային էկոլոգիական գիտակցության վճռորոշ սուբյեկտի:

Այդ պլանետար հումանիզմի հատկանիշներից են նաև հեռանկարայնությունը, ֆուտուրիստությունը և պոստերիտիզմը³³⁹, այսինքն՝ ուղղվածությունը ապագային՝ կապված մարդկանց ապագա սերունդների ճակատագրի նկատմամբ հոգատարության հետ:

Էվոյուցիոն, նոոսֆերային, կոսմիկական և էկոլոգիական հումանիզմի առավել ընդհանրացնող հատկանիշներն են՝ մեր ժամանակների հումանիստական հրամայականների հրատապության ըմբռնումը, յուրաքանչյուր անհատի բարոյական աշխարհի արմատական ընդլայնման ու հարստացման գաղափարը, անհատի ու համայն մարդկության կրթվածության, գիտակցության ու ինքնագիտակցության մակարդակի բարձրացումը, մարդկանց համախմբումը և համամարդկային համերաշխության ամրապնդումը, մարդու ներքնաշխարհի և նրա շրջակա միջավայրի կերպարանափոխումը՝ մինչև իսկ տիեզերական մասշտաբները:

Հումանիզմի վերը թվարկված տեսակները խորհրդանշում են այն պլանետար ծրագրերը, որոնք ընդունակ են ոչ միայն արտացոլելու արդի քաղաքակրթության առավել սուր ու կենսական հիմնախնդիրները, այլև մատնանշելու դրանց ռացիոնալ լուծման ուղիները:

Մյուս կողմից՝ չափազանց կարևոր է, որպեսզի հումանիստական նախագծերի գլոբալ մասշտաբները չհանգեցնեն քաղաքակրթական միաչափ ու կենսագուրկ ստանդանտների հաստատմանը, որպեսզի այդ ամենն ուղղվի ոչ թե ազգային ու մշակութային բազմազանության վերացմանը, այլ դրա պահպանմանն ու զարգացմանը, ինչը լիովին համապատասխանում է հումանիզմի վեհ կոչմանը, կյանքն իր ողջ բազմազանության մեջ ընդունելու նրա հռչակած գաղափարին: Դա համահունչ է նաև պլանետար մտածողության հիմնարար սկզբունքներ-

³³⁸ **E.A. Korazh**, Глобализация в контексте экологии культуры // Философия и будущее цивилизации. Тезисы докладов и выступлений IV Российского философского конгресса, т. 3, стр. 272.

³³⁹ “Պոստերիտիզմ”՝ անգլերեն “posterity” բառից, որ նշանակում է “սերունդ”, “հետագա սերունդներ”: “Հումանիստական մանիֆեստ - 2000”-ի “Միասնական մարդկության առջև մեր ընդհանուր պարտքը” բաժնում ասվում է. “Մենք պատասխանատվություն ենք կրում սերունդների (posterity) առջև, որոնք ապրելու են մերձավոր և հեռավոր ապագայում: Այսպիսով, մարդիկ, ովքեր իրենց բարոյականությունը հիմնում են բանականության վրա, գիտակցում են իրենց պարտքը մեր զավակների զավակների, մարդկային բոլոր էակների ընկերակցությունների առջև՝ ինչպես ներկայումս ապրող, այնպես էլ նրանց, ովքեր կապրեն մեզից հետո:

րին, որի համաձայն «մշակութային բազմազանության պահպանումը մեր մոլորակի վրա լավատեսական ֆուտուրոլոգիական կանխագուշակումների իրականացման հնարավորության գրավականն է»³⁴⁰:

Այսպիսով, էկոլոգիական հումանիզմն իր ռացիոնալ բովանդակությամբ, գաղափարների կենսունակությամբ ու հարցադրումների ինքնատիպությամբ կարող է ուրույն նպաստ բերել հումանիստական նոր պարադիգմայի մշակմանը:

Григор Асатрян – *Разновидности современного гуманизма: Экологический гуманизм.* – Статья посвящена анализу одной из ведущих разновидностей современного гуманизма - экологического гуманизма. В ней рассматриваются сущность и специфические особенности экологического гуманизма, указывается особое место этого вида гуманизма в общей системе современных гуманистических учений.

Grigor Asartyan – *Varieties of modern humanism: Ecological humanism.* – The article is dedicated to the analytical research of the most advanced variants of humanism – ecological humanism, Analyzed is the gist of ecological humanism, the characteristic features, the exclusive role it plays in the system of modern humanistic teachings.

³⁴⁰ **К.Н. Губанов**, Глобалистика как интегральная парадигма ноосферного мировоззрения // *Философия и будущее цивилизации: Тезисы докладов и выступлений IV Российского философского конгресса*, т. 3, стр. 259.

**ԱՐԴԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀՈՒՄԱՆԻՍՏԱԿԱՆ
ՇԱՐԺՈՒՄԸ. “ՀՈՒՄԱՆԻՍՏԱԿԱՆ ՄԱՆԻՖԵՍՏ 2000.**

ՆՈՐ ՊԼԱՆԵՏԱՐ ՀՈՒՄԱՆԻԶՄԻ ԿՈՉ”

(հողված երկրորդ)

ԳՐԻԳՈՐ ԱՍԱՏՐՅԱՆ

Հումանիստական մանիֆեստի առանցքը կազմող պլանետար հումանիզմի՝ արդի հումանիզմի այդ ամենից տարածված տարատեսակի առավել բնորոշ հատկանիշներն են համաշխարհային հանրության բոլոր անդամների արժանապատվության հարգումը և Երկրագնդի յուրաքանչյուր բնակչի պատասխանատվությունը համայն մարդկության ճակատագրի համար, հումանիզմի էթիկայի համամարդկային բնույթի ճանաչումը, համաշխարհային հանրության կողմից այն բարոյական կանոնի անվերապահ ընդունումը, որի պահանջն է՝ վարվիր այնպես, որ աշխարհում մարդկային տառապանքները պակասեն, իսկ երջանկությունն ավելանա: Դա նաև ձեռնպահ մնալն է ազգային ու մշակութային առանձնահատկությունների չափազանցումից և անհարկի ու ավելորդ ընդգծումից, եթե դա կարող է հարուցել հասարակական լարվածություն և ազգային (էթնիկական) ու կրոնական (կոնֆեսիոնալ) կոնֆլիկտներ: Դա, վերջապես, պոստերիտիզմի սկզբունքի հետևողական կիրառումն է՝ պատասխանատվությունը ինչպես մերձավոր, այնպես էլ հեռավոր ապագայի, այն սերունդների նկատմամբ, որոնք ապրելու են մեզնից հետո:

Մանիֆեստում շեշտվում է այն հիմնարար գաղափարը, որ նոր հազարամյակում անհրաժեշտ է բացահայտել մարդկային առաջադիմության հսկայական պոտենցիաները: Հարկավոր է գիտությունն ու տեխնոլոգիան որպես գործիք օգտագործել դարի սոցիալական մեծագույն հիմնախնդիրների լուծման համար, ձերբազատվել մոգական մտածողությունից ու առասպելագործությունից, որոնք կաշկանդում են մարդկային առաջադիմությունը, ընդունել, որ բարոյական սկզբունքները պետք է ծառայեն մարդկությանը և չպետք է հիմնվեն որպես ժառանգություն մեզ հասած այնպիսի մինչգիտական կոնցեպցիաների վրա, որոնք այլևս չեն համապատասխանում ներկա գլոբալացվող, արագ փոփոխվող աշխարհի իրողություններին ու պահանջումներին:

Պլանետար հումանիզմի առավել բնորոշ գծերից մեկն էլ նրա լավատեսական ուղղվածությունն է, լուսավոր ապագայի նկատմամբ հավատը, մարդկության առաջադիմության, նրա բարօրության ապահովման գործում գիտության ու տեխնիկայի դրական դերի ընդգծումը, լավատեսությամբ լի այն հայացքի հաստատումը, որ 21-րդ դարը պետք է դառնա հումանիզմի դար:

Պլանետար հումանիզմը, ինչպես և Մանիֆեստն ամբողջությամբ վերցրած՝ իրենց բնույթով հետ-լուսավորչական են, հետ-հետմոդեռնիստական: “18-րդ դարի փիլիսոփայական Լուսավորչականությունը,- ասվում է Մանիֆեստում,- որը մեծապես կազմում է սույն Մանիֆեստի ոգին, անկասկած, սահմանափակված էր իր ժամանակի շրջանակներով: Բանականության նրա մեկնաբանությունը, որով այն ավելի շուտ դիտվում է որպես ինչ-որ արտոյուտ, քան թե մարդկա-

յին նպատակներին հասնելու համար փորձարկումներ ու սխալներ ենթադրող գործիք՝ ներկայումս հաղթահարված է: Եվ չնայած դրան, նրա այն համոզմունքը, որ գիտությունը, բանականությունը, ժողովրդավարությունը, կրթությունը և հումանիտար արժեքները նպաստում են մարդկային առաջադիմությանը՝ այսօր էլ մեզ համար օժտված է հսկայական ձգողական լիցքով: Մանիֆեստում ներկայացված պլանետար հումանիզմն իր աշխարհայացքով լինելով հետ-հետամոդեռնիստական՝ “... հենվում է արդիականության բարձրագույն արժեքների վրա, ձգտում է հաղթահարել հետամոդեռնիզմի բացասական ազդեցությունը և կողմնորոշված է դեպի տեղեկատվական դարը, որի արշալույսը նոր է բացվում, և դեպի այն ամենը, ինչ այդ դարը նախագուշակում է մարդկության ապագայի համար”³⁴¹:

Պլանետար հումանիզմը ձգտում է առաջադրել ռեալ ու հասանելի նպատակներ տևական հեռանկարի համար: Դրանում է այդ հումանիզմի սկզբունքային տարբերությունը արխաիկ, մասնավորապես, կրոնի վրա հենվող մորալից: **Այդ հումանիզմն ուրվագծում է ապագայի նոր, համարձակ պատկերներ, ծնում է համոզվածություն մարդկության ընդունակության նկատմամբ՝ լուծելու իր առջև ծառայած հիմնախնդիրները՝ հենվելով բանականության և պոզիտիվ աշխարհայացքի վրա:**

Պետությունների առաջնորդները և զանազան կորպորացիաների ղեկավարները պետք է հրաժարվեն նեղմիտ քաղաքականությունից և պաշտպանեն այն ծրագրերը, որոնք միտված են ապագային: Պետական իշխանությունները պետք է զբաղվեն ոչ միայն առաջիկա տնտեսական ու քաղաքական խնդիրների լուծմամբ՝ նրանք անհրաժեշտ ուշադրություն պետք է դարձնեն նաև ամբողջ մոլորակի, համաաշխարհային հանրության պահանջմունքներին՝ ապահովելու համար մարդկության կայուն ու հուսալի ապագան:

Հումանիզմի առանձնահատուկ առաքելությունն արդի աշխարհում որոշվում է ամենից առաջ գիտական աշխարհայացքին նրա հավատարմությամբ՝ ընդդեմ իռացիոնալիզմի, հակաինտելեկտուալիզմի ու ֆիդեիզմի³⁴² զանազան դրսևորումների:

Չնայած գիտատեխնիկական հսկայական առաջընթացին՝ աշխարհի մասին ներկայումս գոյություն ունեցող տեսակետների զգալի մասը իրենց բնույթով կրոնական են, միստիկական կամ աստվածաբանական³⁴³: Այդ հայացքների ակունքները գտնվում են խոր հնադարում, մինչուրբանիստական, քոչվոր և երկրագործական հասարակությունների ժամանակներում, բայց ոչ երբեք ներկա ինդուստրիալ կամ հետինդուստրիալ գլոբալ տեղեկատվական մշակույթում:

“Գիտական նատուրալիզմը”³⁴⁴ (ոչ ռեդուկտիվ մատերիալիզմը) օգնում է մարդուն մշակելու տրամաբանորեն հետևողական աշխարհայացք, որն ազատ է

³⁴¹ Современный гуманизм: Документы и исследования. М., 2001, стр. 38-39 (Здравый смысл: Журнал скептиков, оптимистов и гуманистов, Спец. выпуск).

³⁴² **Ֆիդեիզմը** (ֆրանս.՝ fideisme, լատ.՝ fides - հավատ) հակագիտական աշխարհայացք է՝ հիմնված գիտության ու բանականության նկատմամբ կրոնական հավատի գերակայության ընդունման վրա: Նա սահմանափակում է գիտության գործողության ոլորտը, ժխտում գիտական գիտելիքի աշխարհայացքային նշանակությունը՝ աշխարհի ըմբռնման գործում վճռական դեր հատկացնելով կրոնական հավատին:

³⁴³ St’ u “Гуманистический манифест 2000. Призыв к новому планетарному гуманизму”, “Раздел III Научное мировоззрение”, абзац первый:

³⁴⁴ Գիտական մատերիալիստական աշխարհայացքը Մանիֆեստի ամբողջ տեքստում նրա հեղինակներն անվանում են ոչ այլ կերպ, քան **գիտական նատուրալիզմ**:

մետաֆիզիկայի կամ աստվածաբանության կապանքներից և հիմնված է գիտության վրա³⁴⁵:

Գիտական նատուրալիզմն իրենից ներկայացնում է մեթոդաբանական դրույթների ամբողջություն: Նրա մեթոդաբանության համաձայն՝ ցանկացած հիպոթեզ կամ տեսություն պետք է հաստատվի էքսպերիմենտալ կերպով, հիմնավորվի բնական պատճառներով ու փաստերով: Չի թույլատրվում ենթադրել օկուլտային պատճառներ կամ դիմել տրանսցենդենտալ բնույթի բացատրությունների: Թեև, ինչպես հայտնի է, գիտական մեթոդներն իրենց բնույթով անսխալական չեն և մեզ չեն տալիս անփոփոխ բացարձակ ճշմարտություններ, սակայն, չնայած դրան, մեր տրամադրության տակ գտնվող բոլոր մեթոդներից հենց դրանք են հանդիսանում առավել հուսալի, թույլ են տալիս ընդլայնել մեր իմացության սահմանները և լուծել մեր առջև դրված խնդիրները: Նրանք հսկայական ներգործություն են ունեցել համաշխարհային քաղաքակրթության ձևավորման ու զարգացման վրա:

Մեր օրերում հասարակության լայն շերտերը գիտակցում են գիտության պրակտիկ արժեքը, այն, որ գիտությունը տալիս է դրական արդյունքներ: Սակայն գիտական մեթոդների կիրառումը հաճախ սահմանափակվում է նեղ մասնագիտական խնդիրներով և գիտության ավելի ընդհանուր կիրառությունները, որոնք ընդունակ են ձևավորելու իրականության ճշգրիտ պատկերը, անտեսվում են:

Մանիֆեստում այն կարծիքն է հայտնվում, որ անհրաժեշտ է գիտության մեթոդների կիրառումը տարածել մարդկային գործունեության մյուս բնագավառների վրա, և որ գիտական հետազոտությունների համար չպետք է լինի ոչ մի սահմանափակում, բացի այն դեպքերից, երբ նման հետազոտությունները խախտում են անհատի իրավունքները: Ազատ հետազոտությունները բարոյական, քաղաքական, գաղափարական կամ կրոնական բնույթի որևէ նկատառումով խոչընդոտելու փորձերը անթույլատրելի են և ձախողման դատապարտված:

Այն հնարավորությունները, որոնք ընձեռնում է գիտությունը բնության և հասարակության մասին մեր իմացությունների ընդարձակման համար, հսկայական են, սկզբունքորեն՝ անսահման:

Գիտական նատուրալիզմը Մանիֆեստի հեղինակները համարում են կոսմիկական աշխարհայացք՝ հիմնված վերիֆիկացվող հիպոթեզների և տեսությունների վրա:

Իրականության մասին իր պատկերացումները գիտական նատուրալիզմը չի կառուցում կրոնի, պոեզիայի, գրականության կամ արվեստի վրա, չնայած դրանք բոլորը հանդիսանում են մարդկային հետաքրքրությունների կարևոր դրսևորումներ:

Գիտական մատերիալիզմը հակված է ոչ ռեդուկտիվ մատերիալիզմի որոշակի ձևի. բնական պրոցեսներն ու իրադարձությունները առավել ադեկվատ բացատրվում են իրենց բնական նյութական պատճառներով: Նատուրալիզմի այս ձևը, ամեն ինչից զատ, տեղ է թողնում տիեզերքի բազմազանության գաղափարի համար:

³⁴⁵ Տե՛ս “Гуманистический манифест 2000. Призыв к новому планетарному гуманизму”, “Раздел III Научное мировоззрение”, абзац первый:

Թեև բնության հիմքը ֆիզիկաքիմիական բնույթ ունի՝ նրա պրոցեսներն ու օբյեկտները դիտարկման համար մատչելի են մի շարք մակարդակներով. դրանք ենթատոմային մասնիկներն են, ատոմները, մոլեկուլները, դրանք գեներն են և բջիջները, միկրոօրգանիզմները, բույսերն ու կենդանիները, հոգեբանական ընկալումներն ու իմացությունը, սոցիալական և քաղաքական ինստիտուտները, դրանք, վերջապես, մոլորակներն են, աստղերը և գալակտիկաները: Այստեղից բխում է աշխարհի՝ իրար ոչ նման, սկզբունքորեն միմյանցից տարբեր ֆիզիկական, կենսաբանական, սոցիալական կամ հոգեբանական պատկերների հնարավորությունը՝ կախված հետազոտության բնագավառից: Այս հանգամանքը, սակայն, մեզ չի ազատում զանազան բարոյական, գեղագիտական և մարդկային փորձի այլ մշակութային դրսևորումները հասկանալու և գնահատելու պարտականությունից:

Գիտական աշխարհայացքի կողմնակիցները գտնում են, որ չկան բավականաչափ օբյեկտիվ, ռացիոնալ և փորձնական եղանակով հաստատվող ապացույցներ, որոնք վկայեին իրականության կրոնական բացատրությունների կամ օկուլտային պատճառների գոյության մասին ենթադրությունների հավաստիության օգտին:

Դասական մետաֆիզիկական ուսմունքները, որոնք ելնում են տրանսցենդենտի գոյության ընդունումից, ոչ այլ ինչ են, քան մարդկային էակների՝ մահվան՝ որպես ամեն ինչի ավարտի գաղափարը հաղթահարելու էկզիստենցիալ բռտն պահանջմունքի դրսևորում: Մինչդեռ էվոյուցիայի գիտական տեսությունը, որը ելնում է աշխարհում մարդու տեղի մասին ավելի համեստ, սակայն իրատեսական պատկերացումից, հենվում է մի շարք գիտությունների կողմից ստացված ապացույցների վրա:

Այս համատեքստում Մանիֆեստում դատապարտվում են այն առանձին գիտնականների փորձերը, որոնց նպատակն է զանգվածային լրատվության միջոցների օգնությամբ հասարակական կարծիքի վզին փաթաթելու բնական երեվոյթների այնպիսի բացատրություններ, որոնք ելնում են այնկողմնայինի, տրանսցենդենտի գոյության ենթադրությունից:

Արդի գիտական կոսմոլոգիական և էվոյուցիոն ուսմունքները հիմքեր չեն տալիս այնպիսի մտային կոնստրուկցիաների համար, որոնց համաձայն հավատը քայլում է այն սահմաններից առաջ, որոնք մատչելի են մարդկային իմացությանը:

Մանիֆեստում առաջադրվում է այն պահանջը, որ մարդկության համար եկել է ժամանակը՝ գիտակցելու սեփական հասունությունը, դեն նետելու հնադարյան մոգական մտածողության և առասպելագործության մնացուկները, որոնք նենգափոխում են բնության և ամբողջությամբ վերցրած աշխարհի ճշմարտացի ըմբռնումը...

Եվ այնուամենայնիվ չենք կարող չնշել, որ իր արժանիքներով ու գրավչությամբ հանդերձ՝ Մանիֆեստը, ցավոք, գերշ չէ նաև վիճահարույց հարցադրումներից, անընդունելի դրույթներից: Նրանում, մեր կարծիքով, առկա են ինչպես քաղաքակրթության անցած ուղու, այնպես էլ արդի համաշխարհային զարգացումների ու մարդկության ապագայի վերաբերյալ որոշ միակողմանի գնահատականներ, ոչ իրատեսական կանխագուշակումներ:

1. Մանիֆեստում զարմանալիորեն շրջանցված են հումանիզմի գաղափարների պատմական զարգացման այնպիսի նշանավոր փուլեր, ինչպիսին գերմանական դասական փիլիսոփայությունն է ու մարքսիստական ուսմունքը:

2. Աչքի է զարնում Մանիֆեստի հեղինակների կողմից արդի աշխարհում տիրող սոցիալ-տնտեսական, ռազմաքաղաքական ու այլևայլ հակասությունների, սուր կոնդիկտների ու կոլիզիաների իրական պատճառների ու դրանց հաղթահարման ուղիների անտեսումը, այդ փաստաթղթում տեղ գտած որոշ հարցադրումների վերացական-հաշտարարական, պացիֆիստական բնույթը:

3. Մանիֆեստում իդեալականացված է, մասնավորապես, Միավորված Ազգերի Կազմակերպությունը սուվերեն պետությունների ասամբլեայից այսպես կոչված Ժողովուրդների ասամբլեայի վերածելու գաղափարը, տրանսֆորմացիա, որը Մանիֆեստի հեղինակների համոզմամբ (սակայն հայտնի չէ, թե ի՞նչ թաքրնված ներուժի և ի՞նչ կոնկրետ մեխանիզմների միջոցով) կբարձրացնեն ՄԱԿ-ի աշխատանքի արդյունավետությունը, կկարողանար ծառայել արդի աշխարհի գլոբալ հիմնախնդիրների լուծմանը:

4. Նույնը վերաբերում է նաև աշխարհում անվտանգության ավելի արդյունավետորեն գործող համակարգ ստեղծելու նպատակ հետապնդող այն փոփոխություններին, որոնք Մանիֆեստի հեղինակներն առաջարկում են մտցնել Միավորված Ազգերի Կազմակերպության կանոնադրության մեջ: Խոսքն առաջին հերթին Անվտանգության Խորհրդում պետությունների Մեծ հնգյակին վերապահված վետոյի իրավունքի վերացման մասին է:

Կարծում ենք, որ ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդում վետոյի իրավունքի վերացումը՝ ներկա աշխարհում տիրող ռազմաքաղաքական իրադրության և ազգերի միջազգային համագործակցության շահերի տեսանկյունից ոչ միայն արդարացված չէ, այլև իր մեջ պարունակում է պոտենցիալ մեծ վտանգներ: Իրականում այն ավելի շուտ կծառայի միջազգային անվտանգության՝ մեր օրերում առանց այն էլ երերացող հիմքերի խարխլմանը, ճանապարհ կհարթի միջազգային ռազմատենչ ուժերի համար, կհանգեցնի տնտեսապես ու ռազմական առումով հզոր երկրների դիկտատի ուժեղացմանը, թույլ զարգացած երկրների դեմ նրանց ագրեսիվ գործողությունների արդարացմանը, աշխարհում անարդարությունների ու անկայունության աճին:

5. Ոչ իրատեսական ու ռոմանտիկական է թվում նաև ապագայում Համաշխարհային Պառլամենտի ստեղծման գաղափարը, պլանետար մարմին, որը դառնար Եվրոպական Պառլամենտի գաղափարի զարգացումը, ներկայացնեն մարդկանց, այլ ոչ թե կառավարությունների շահերը, կարողանար լուծել արդի աշխարհի սուր ու կնճռոտ հարցերը, հաստատեր միջազգային կայուն ու արդարացի խաղաղություն, երկրների ու պետությունների միջև ակտիվ ու փոխշահավետ համագործակցություն:

Այս գաղափարն, իր արտաքին փայլով ու գրավչությամբ հանդերձ՝ հազիվ թե հնարավոր լինի ներկա պայմաններում իրատեսական ու կենսունակ համարել: Եվրամիությունում հատկապես վերջին տարիներին ընթացող մի շարք նեգատիվ պրոցեսներ սասանում են իրերի նման ընթացքի իրատեսականության նկատմամբ հավատը՝ այդ հեռանկարը դարձնելով մշուշապատ ու պատրանքային:

Ուստի անհրաժեշտ է ընթանալ ոչ թե ՄԱԿ-ի ու նրա այս կամ այն մարմնի գործունեությունը կանոնակարգող փաստաթղթերի անհարկի ու արհեստական վերանայման ու դրանք առանձին պետությունների մասնավոր շահերին հարմարեցնելու, այլ ՄԱԿ-ի՝ որպես միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանման ու ամրապնդման, պետությունների միջև համագործակցության զարգացման միջազգային կազմակերպության լիարժեք գործունեության ապահովման, նրա որոշումների անվերապահ կատարման, աշխարհում ՄԱԿ-ի հեղինակության ամրապնդման ու դերի բարձրացման ուղիով:

Григор Асартян – Современное мировое гуманистическое движение: “Гуманистический манифест 2000. Призыв к новому планетарному гуманизму” (статья вторая). – Статья посвящена анализу основополагающего документа современного мирового гуманистического движения - “Гуманистического манифеста 2000. Призыва к новому планетарному гуманизму”, разработанного Международной академией гуманизма в 1999 году. В статье рассматриваются сущность и специфические особенности планетарного гуманизма, вопросы, касающиеся его роли в решении глобальных проблем современности, преодолении антиподов гуманизма. В ней выражено также критическое отношение автора к некоторым положениям Манифеста.

Grigor Asartyan – World modern humanist movement: “Humanist manifesto 2000: A call for new planetary humanism”. – The article is dedicated to the fundamental document of the world modern humanist movement “Humanist Manifesto 2000: a Call for New Planetary Humanism”, developed in 1999 by the International Academy of Humanism. Analyzed are the gist and peculiarities of planetary humanism, issues related with its role in solving the global problems of modernity, in withstanding the antipodes of humanism.

ԱՆՁԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՏ ԴԻՄԿՈՒՍԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

ՄԵՐԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հողվածում ուսումնասիրված է անձի քաղաքական վարքագիծի ազդեցությունը ազատության և անվտանգության արդիականացման նպատակով ծավալված նրա գործունեության վրա: Ակնհայտ է որ ազատության և անվտանգության համար մղվող պայքարի նոր ակիքը ինչպես ժողովրդավարացման գործընթացում ծնված բարդությունների, այնպես էլ քաղաքականության դերակատարների անպատասխանատու, չիմնավորված նկրտումներով հազեցած գործունեության արդյունք է: Այս համատեքստում անձի քաղաքական ազատությունը դիտարկված է որպես դիսկուրսային գործունեության արդյունք: Հողվածի հեղինակը համոզված է որ Մերձավոր Արևելքում, ԱՊՀ երկրներում անորոշություններով հղի քաղաքական գործընթացները վկայում են որ անհրաժեշ է «ազատություն» և «անվտանգություն» հասկացությունները ուսումնասիրել նորովի՝ շեշտելով դիսկուրսային գործունեության բազմաչափությունը: Դա հնարավորություն կտա անձ-հասարակություն-պետություն մակարդակներում համադրել նրանց ազատության սահմանները՝ բարձրացնելով քաղաքական դերակատարների պատասխանության մակարդակը:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ Քաղաքական գործունեություն, ցանցային կառավարում, ազատության սահմաններ, պատասխանատվություն, պոզիտիվ և նեգատիվ ազատություն, ազատականություն, հաղորդակցական տեխնոլոգիաներ, դիրսկուրսային հմտություններ, դիրսկուրսի դերակատարների ազատություն:

Արդի համընթանրացման և ժողովրդավարացման գործընթացներին զուգահեռ աշխարհի տարբեր մասերում տեղի են ունենում այնպիսի քաղաքական փոփոխություններ, որոնց դերակատարները յուրովի պայքարում են իրենց քաղաքական ազատությունների սահմանների ընդարձակման համար: Մերձավոր Արևելքում, ԱՊՀ երկրներում տեղի ունեցող քաղաքական քառսային գործընթացները վկայում են որ անհրաժեշտ է «ազատություն» և «անվտանգություն» հասկացությունները նորովի ուսումնասիրել: Ակնհայտ է որ ազատության և անվտանգության համար մղվող պայքարի նոր ակիքը ժողովրդավարացման գործընթացում ծնված բարդությունների արդյունք է: Սակայն ազատության և անվտանգության որակական փոփոխության համար ծավալած պայքարը չի ենթադրում «...քաղաքացիներ անձնական իրավունքների և հասարակության հետ քաղաքական և մշակութային կապերով պայմանավորված սոցիալական համերաշխություն և անհատական ինքնորոշում ապահովող քաղաքական կառույցներից դուրս գործողություններ: Այդ իսկ պատճառով հարկավոր է վերջ դնել ինչպես սոցիալական հավասարությանը ուղղված հռետորաբանական կոչերին, այնպես էլ համաշխարհային պետության կոսմոպոլիտ միֆին, որոնցում մոռացվում է ազգային քաղաքացիության և կոլեկտիվ նույնականացման արժեքները»³⁴⁶: Ելակետ ընդու-

³⁴⁶ *Д. Дзоло*, Демократия и сложность. Пер. с англ. А. Калинина, Н. Эдельмана. М. А. Юсима - М.: Изд. дом Гос. ун-та, Высшей шко-лы экономики, 2010, с. 16-17.

նելով այս մոտեցումը փաստենք որ քաղաքական գործունեությունը և ազատության քաղաքականությունը բարդ, բազմաշերտ երևույթ է: Անտիկ փիլիսոփա՝ Արիստոտելը քաղաքականությունը համարում էր մարդկանց շփման բարձրագույն ձև, իսկ մարդուն քաղաքական կենդանի (Zoon politikan), որի գործունեության հիմքում ընկած է նրա բնական պահանջմունքներն ու ձգտումները³⁴⁷: Ուստի քաղաքականությունը իր արժեքային կողմնորոշումներով հասարակական կյանքի կազմակերպման և կառավարման, մարդկային հարաբերությունների ակտիվության ապահովման գործընթաց է: Համաձայն Մ.Վեբերի «քաղաքականությունը ազդեցության տարածում է՝ պետության կառավարման վրա»³⁴⁸: Արդիական է բրիտանացի Դեյվիդ Հելդի մոտեցումը, ըստ որի քաղաքականությունը կենսագործունեության բոլոր ոլորտներում հնարավորությունները ազատ կառավարելու, ինչպես նաև սոցիալական խմբերի, հասարակության և արտաքին, և՛ ներքին կառույցներին համընդհանր փոխկապվածություն ապահովող երևույթ է³⁴⁹: Բրունո Լեոնին կարծում է, որ յուրաքանչյուր մարդ ազատ է, եթե կարող է ինչ-որ ձևով իրեն գերծ պահել այլ մարդկանց կողմից հարկադրված քաղաքականությունից: Այս իմաստով՝ «ազատություն», «հարկադրում» և «քաղաքականություն» հասկացությունները անխուսափելիորեն կապված են իրար հետ, և երբ մարդիկ խոսում են ազատության մասին, նկատի ունեն այն պոզիտիվ ազատությունը, որի շրջանակներում կարելի է քաղաքականություն վարել»³⁵⁰:

Պոզիտիվ ազատությունը հասկացվում է որպես «ազատություն ինչ-որ բանի համար», «ինչ-որ բանի ազատություն»: Այստեղ մենք առնչվում ենք պոզիտիվ ազատության միանշանակ սահմանման բացակայության հետ: Ազատությունը որպես անձի պաշտպանության անհատապաշտական ըմբռնում և սեփականության անձեռնմխելիություն, տարընթերցում չեն առաջացնում՝ ի տարբերություն այն հարցի, թե ինչի համար է մարդուն անհրաժեշտ ազատության քաղաքականություն վարել: Դա, մասնավորապես, արտացոլված է անգլերեն լեզվում առկա «ազատություն» բառի տարբերակման մեջ: Այսպես ազատություն («liberty»)՝ որպես հարկադրանքի սահմանափակում, ազատում իսկ ազատություն, անկախություն («freedom»)՝ նախ և առաջ, որպես ընտրության իրավունք: Ամենաընդհանուր ձևով պոզիտիվ ազատությունը կարելի է սահմանել որպես անձի ինքնազարգացման, ինքնակատարելագործման հնարավորություն, ներքին ներուժի, ստեղծագործական ունակությունների բացահայտում: Մյուս կողմից՝ ազատության դրական և բացասական հասկացությունները կապում են այնպիսի կատեգորիաների հետ, ինչպիսիք են ներքին և արտաքին ազատությունը³⁵¹:

Ուստի քաղաքական ազատությունն հենց այս իմաստով այն արժեքային համակարգն է, որի շրջանակներում մարդը կարող է քաղաքականության կրող և արարող հանդիսանալ՝ չենթարկվելով ուրիշների կողմից միջամտության: Եթե

³⁴⁷ *Аристотель*, Политика: [пер. с древнегреч.], М.: АСТ, 2010, с. 20

³⁴⁸ *Вебер Макс* Политика как призвание и профессия <http://www.kant.narod.ru/weber.htm>

³⁴⁹ *David Held*, "Political Theory and the Modern State", Stanford University Press, 1989
<http://books.google.am/books?id=QYVZ3TjL0UC&pg=PA319&dq=Political+Theory+and+the+Modern+State:+David+Held&hl=hy&sa=X&ei>

³⁵⁰ *Леони Бруно*, Свобода и закон, пер. с англ. В. Кошкина, под ред. А.Куряева, М. ИРИСЭН, 2008, с. 64-65.

³⁵¹ Տե՛ս *Н.А. Басенко, Т.В. Милевская*, Политическая свобода: опыт дискурс-анализа. см: «Актуальные проблемы теории коммуникации», Сб. научных трудов. СПб.–Изд-во СПбГПУ, 2004, с.88 (http://www.russcomm.ru/rca_biblio/b/basenko-milevskaya.shtml)

հարկադրական գործողությունների պատճառով վերոնշյալ քաղաքականության շրջանը նեղանում է, ապա կարելի է ասել, որ անձը գտնվում էմ հարկադրանքի վիճակում: Հարկադրանքը ենթադրում է այլ մարդկանց կանխամտածված ներխուժումը այն շրջանը, որտեղ անձը իրավունք ունի գործել անարգել կերպով: Անձը այն ժամանակ է գրկվում քաղաքական ազատությունից, երբ մարդիկ խանգարում են նրան իր լիազորությունների շրջանակում քաղաքական գործունեություն իրականացնել:

Որպես ռացիոնալ և իռացիոնալ գործողությունների հատուկ տեսակ քաղաքականությունը պահանջում է բարձր պրոֆեսիոնալիզմ և աշխատանքի բաժանում, քանի որ այդ ոլորտի սխալ որոշումները կարող են ն՝ ազգային, ն՝ համաշխարհային հասարակության համար թանկ արժենալ խճճելով քաղաքական ազատության և քաղաքական խաղերի սահմանները: Քաղաքական մարդու (homo politicus) բնութագիրն է, նա ակտիվ անհատ է, ով իր քաղաքական դերի կատարման սահմաններում ձգտում և հասնում է իրեն անհրաժեշտ նպատակներին: Սակայն նշենք որ կյանքի տարբեր ոլորտների միջև սահմանները պայմանական են. «Սոցիալական համակարգերը կազմված են ոչ թե մարդկանցից, այլ դերերից. օրինակ՝ ընտանիքը կազմված է մոր, հոր, կնոջ, ամուսնու, եղբայրների և քույրերի դերերից: Ընտանիքը միայն մեկն է այն խմբերից, որն ունի միմյանց հետ փոխկապակցված դերեր, որոնք իրականացվում են անդամների կողմից, որոնք և կարող են իրականացվել այլ դերեր արտաընտանեկան հարաբերություններում...»³⁵²:

Մարդիկ, ունենալով տարբեր արժեշտահային համակարգեր, տարբեր պատկերացումներ են մշակել անձի քաղաքական վարքի որակական բնորոշիչների մասին՝ ցանկանալով տեսնել վստահություն ներշնչող, իր խոստումներին հավատարիմ, և պատասխանատվություններից չխուսափող առաջնորդներ: Այս նկատառումներով վարքաբանները իրավացիորեն նկատել են որ քաղաքականությունը մարդու գործունեության էության առանձին կողմերն է համակարգում՝ իրենց դերային բազմազանության մեջ: Այդ առումով Փոլ Լազարսֆելդը իր «Ժողովրդի ընտրություն» աշխատանքում Օհայո նահանգի (այդ ժամանակ Էրայի կոմսություն) ընտրությունների հետազոտության ժամանակ՝ մշակեց ընտրողների վարքի ազատ դրսևորման հետևյալ ձևերը.

1. Առանձին գործիչների գործողություններ և մասսայական ելույթներ

2. Իշխանության կազմակերպված սուբյեկտների ակտիվություն և ամբոխի պահվածք

3. Ակցիաներ համակարգի օգտին կամ նրա դեմ: Որևէ թեկնածուի օգտին ազատ քվեարկելը կամ ընտրություններին չմասնակցելը նույնպես համարվում է քաղաքական վարքի դրսևորում, քանի որ ցանկացած արարք հասկանալու և գրնահատելու համար պետք է նախ և առաջ ուսումնասիրել դրա պատճառները³⁵³:

«Սառը պատերազմի» մեկնարկից հետո կարևորվեց քաղաքական ազատության սահմանների ընդարձակման հիմնախնդիրը՝ մարդու ազատության ի-

³⁵² *Г. Алмонд, Дж. Пауэлл, К. Стром, Р. Далтон*, Сравнительная политология сегодня: Мировой обзор: Учеб. Пособие/Сокр. пер. с англ. А. С. Богдановского, Л. А. Галкиной; Под. ред. М. В. Ильина, А. Ю. Мельвиля.-М., АСПЕКТ Пресс, 2002, с. 381.

³⁵³ *Paul F. Lazarsfeld, Bernard Berelson, Hazel Gaudet*, The People's Choice. How the Voter Makes Up his Mind in a Presidential Campaign, New York/London 1944

րավունքների և ոչ թե դասակարգայնության տիրույթներում: Արդեն 1941թ.-ին ԱՄՆ առաջին տիկնոջ Էլենորա Ռուզվելտի և քաղաքագետ Վենդել Ռիլլիի կողմից հիմնադրած Freedom House ոչ կառավարական կազմակերպությունը լինելով «Ժողովրդավարության և ազատության անկեղծ ձայնը ամբողջ աշխարհում» իր ամենամյա «Freedom in the World» զեկույցով գնահատում է բոլոր երկրում քաղաքական և քաղաքացիական ազատության մակարդակը: Freedom House-ը Հարավային Աֆրիկայից մինչև Հորդանան, Ղրղզստանից մինչև Ինդոնեզիա համագործակցելով տարածաշրջանային ակտիվիստների հետ քաղաքացիական հասարակությանը աջակցություն ցուցաբերելու համար, «...աշխատում է պաշտպանել կանանց իրավունքները, ձգտում է արդարության հանուն խոշտանգված զոհերի, պաշտպանում է լրագրողների շահերը»³⁵⁴..... և վստահեցնում որ մարդու անփոփոխ էություն գոյություն չունի, մարդը օժտված է պատմականորեն ձևավորված ստեղծագործական ընդունակություններով: Ուստի կրում է անհատական պատասխանատվություն իր գործողությունների հետևանքների համար³⁵⁵:

Մարդ-անհատը քաղաքական սոցիալականացման է ենթարկվում **անձ-քաղաքացի լինելով**: Մարդու անձնավորումը (անձ դառնալը) քաղաքացիական դիպլոմատային գործունեություն վարելու հիմքն է: Միայն այս պարագայում է քաղաքացին որպես հասարակության լիիրավ ազատ անդամ ակտիվորեն մասնակցում է երկրի հասարակական և քաղաքական կյանքին: Քաղաքական գիտության մեջ անհատի հիմնախնդիրը դիտարկվում է հետևյալ պարամետրերով.

1. Անհատը, որպես մարդ , ունի հոգեֆիզիոլոգիական առանձնահատկություն: Այդ տեսանկյունից է հետազոտվում քաղաքական լիդերի անձնային առանձնահատկությունները՝ բացահայտվելով նրա որոշիչ դերը մեծ քաղաքականության մեջ:

2. Անհատը որոշակի էթնիկական, դասակարգային, էլիտար, պրոֆեսիոնալ խմբի ներկայացուցիչ է:

3. Անհատը, որպես հասարա-քաղաքական կյանքի հարաբերականորեն ինքնուրույն մասնակից, ունի քաղաքական ազատության իրավունք:

Մարդկանց կյանքում քաղաքականությունը պատմական զարգացման գործընթացում միանշանակ չի արժեվորվել: Անտիկ աշխարհում մարդը համարվել է քաղաքական էակ, միջին դարերում՝ կրոնական էակ, վերածնության դարաշրջանում բանական էակ: Անտիկ աշխարհում քաղաքական իրավունքով օժտված էին միայն պոլիսներում ապրող քաղաքացիները, որոնց հիմնական խնդիրն էր պահպանել և պաշտպանել պետականությունը: Միջնադարում մարդը համարվել է կրոնական էակ: Հավատը, սերը, և հույսը առ Աստված մարդկային կյանքի վերջնական նպատակն է: Ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության ձևավորման գործընթացներում մարդ-անհատը աստիճանաբար ձեռք է բերում քաղաքական կարգավիճակ, գիտելիքներ և քաղաքական գիտակցություն, քաղաքական շահեր և այլ կողմնորոշիչներ: Սկսած 17-18-րդ դարերից առաջին պլան է մղվում մարդու քաղաքական էակ լինելու հանգամանքը: Քաղաքական կյանքում առավելապես կարևորվում է **մարդ-անհատին** քաղաքականության մեջ ներգրավելու հիմնախնդիրը: Ակնհայտ է, որ իրենց շահերով

³⁵⁴ http://en.wikipedia.org/wiki/Freedom_House

³⁵⁵ Freedom House, Reports, Freedom in the World: Methodology

նպատակներով, մտքերով ու զգացումներով քաղաքականությունն արարում են և՛ զանգվածները, և՛ անհատները, և՛ կազմակերպությունները, և՛ պետությունը: Բոլոր մակարդակներում քաղաքականության դերակատար է մարդն՝ մարդուց անկախ քաղաքականություն և քաղաքական գործնեություն չկա: Որպես սոցիալական երևույթ քաղաքականությունը մարդ-անհատ-անձ քաղաքացիների գործունեությանը հաղորդում է կենսական բովանդակություն: Ուստի անհրաժեշտ է խուսափել երկու ծայրահեղություններից: Առաջին մարդ անհատին չպետք է մեխանիկորեն նույնացնել քաղաքական կազմակերպությունների և հասարակական խմբերի հետ: Երկրորդ՝ առանց անձի քաղաքական ազատության ապահովման անհատը չի դառնում քաղաքական կյանքի կերտողը և արարողը: Ուստի տարբերակենք անհատի հետևյալ տիպերը.

➤ Անահատը որպես քաղաքացի օտարված է քաղաքական գործընթացներից և բացասական, անտարբեր վերաբերմունք ունի քաղաքականության նկատմամբ: Վերջինս մի դեպքում կարող է լինել թույլ սոցիալականացման արդյունք, մյուս դեպքում՝ բողոքի ձև է՝ անհեռատես, ապակառուցողական քաղաքականության նկատմամբ:

➤ Անհատը որպես հասարակական կազմակերպության, զանգվածային շարժումների և այլ միությունների անդամ, որը հետաքրքրվելով քաղաքական գործունեությամբ ունի իր կարծիքը այս կամ այն իրադարձության նկատմամբ:

➤ Անհատի ամբողջական կայացած տիպ է կուսակցության անդամը, որը ընդունելով նրա ծրագիրը և կանոնադրությունը ծավալում է քաղաքական ակտիվ գործունեություն:

➤ Անհատը որպես հասարակական քաղաքական գործիչ: Դրանք են նշանավոր գրողները, գիտության և մշակույթի գործիչները, որոնք ներգրավվում են քաղաքականության մեջ որպես և՛ ընդդիմախոսներ, և՛ համախոհներ, և՛ ռազմավարական մտածողներ:

➤ Անհատի բարձրագույն տիպը քաղաքական գործիչն է, քաղաքական լիդերը, քաղաքական, գաղափարական ֆորմալ և ոչ ֆորմալ կազմակերպությունների ղեկավարները:

Այսպիսով, **մարդ-անհատ-անձ** կայացումը որպես քաղաքական գործունեության պատասխանատուների՝ կենսաբանական (սեռ, տարիք, առողջական վիճակ), հոգեբանական (կամք, բնավորություն, հուզականություն, մտածողություն) և սոցիալական (արժեքայի համակարգ, նպատակ, աշխարհայացք, դիրքորոշում) բարդ, բազմաչափ բնութագրիչների ամբողջություն է: Արդի քաղաքական գործունեությունը երիտասարդացել է: Այն հատկապես դրսևորվում է հեղափոխությունների, ճգնաժամային իրավիճակների շրջանակներում, երբ քաղաքականության մեջ ընդգրկվում են տեղեկատվա-հաղորդակցական տեխնոլոգիաների օգնությամբ ազատությունը և՛ ռեալ, և՛ վիրտուալ մակարդակներում կառավարող քաղաքական գործիչներ: Անձի քաղաքական ազատության սահմանների ռեալ և վիրտուալ ընդարձակման գործընթացը աշխարհայացքային սկզբունքների, հայացքների և համոզմունքների ամբողջություն է: Այս որոշում է առանձին մարդու, սոցիալական խմբի, դասակարգի կամ, ամբողջությամբ վերցրած՝ հասարակության գործունեության ուղղությունը և վերաբերմունքը իրականության նկատմամբ: Ուստի անհրաժեշտ է նկատի ունենալ որ նույնիսկ տեղեկատվա-հաղորդակցական զարգացած տեխնոլոգիաների պայմաններում աշխարհայացքը և աշ-

խարհաընկալումը նույնական չեն: Անհատի աշխարհայացքը ընդհանուր աշխարհայացքի կոնկրետացումն է, իսկ անհատական աշխարհըմբռնումը բովանդակության առումով որոշակի կողմնորոշման, գիտելիքների, հարաբերությունների, դիրքորոշման, զգացողության համակարգ է: Այդ առումով ՀՀ Սահմանադրությունը փաստելով պետության իրավական բնույթը ի սկզբանե ընդարձակեց անձի քաղաքական ազատության սահմանները որպես քաղաքական գործունեության և՛ դերակատար, և՛ սուբյեկտ: Դա նշանակում է ազատ դիսկուրսի միջոցով սովորել գիտակցել, արտահայտել և պաշտպանել սեփական շահերը քաղաքական գործընթացներում՝ կրելով պատասխանատվություն սեփական գործունեության համար: Նմանօրինակ մոտեցումը դիսկուրսային հետազոտությունները այլևս չեն դիտարկում նեղ իմաստով, որոնց համար դիսկուրսը բառերի ու նախադասությունների շղթա է, որը հեղինակը վերլուծում էր կառուցողական լեզվաբանության մեթոդների միջոցով: Դիսկուրսային վերլուծությունը մտավոր սխեմաների վերլուծություն չէ, որոնք օգտագործում են մարդու կողմից տեքստը հասկանալու գործում: Դիսկուրսը իմացության հիերարխիկ և ցանցային բարդ համակարգ է, որը առկա տեքստից բացի իր մեջ ներառում է նաև տարբեր տեսակի արտալեզվաբանական երևույթներ՝ **գիտելիք աշխարհի, ազատության, անվրտանգության նպատակների և իշխանական հարաբերությունների մասին**: Այլ բառերով, դիսկուրս վերլուծությունը տեքստի մեկնաբանումն է կոնկրետ քաղաքական հանգամանքներում, կոնկրետ մշակույթում, կոնկրետ պայմաններում: Դիսկուրսի թեորիայի մեջ կա նաև իմաստաբանություն, սոցիալական լեզվաբանություն, հաղորդակցություն, քաղաքագիտություն: Դրա պատմությունը ներկայացված է այնպիսի անուններով, ինչպիսիք են Ա. Գրամշին, Լ. Ալտյուսսերը, Մ. Ֆուկոն, Ժ. Դելեզը: Հենց լեզվի հիմնավորված դերը քաղաքական կյանքում ստիպում է խոսել դիսկուրսային վերլուծության մեթոդաբանության մասին: Խոսքը ներառում է պատմական հիշողություն, սոցմշակութային և էթնոմշակութային արժեքաբանություն, առկա հրամայականներ, խնդրադրում և նպատակներ, որոնք էլ հնարավորություն են տալիս գնահատել հասցեատիրոջ այս կամ այն գործունեությունը: Այս առումով պոստմոդեռնիզմի շրջանակներում տեղի ունեցող դիրսկուրսային գործընթացները համակարգելիս Պ. Բուրդիեն և Մ. Ֆուկոն արմատապես փոխեցին իշխանության իրականացման վերաբերյալ հայեցակարգերը, որի տիրույթներում անձի քաղաքական ազատության մեկնաբանությունները ժամանակի մարտահրավերներին հավասարաթեք են դառնում: Քաղաքական իրավիճակային գործունեությունից էլնելով նրանք համադրեցին և՛ պետական, և՛ հասարակական, և՛ միջազգային հարաբերություններում՝ դիսկուրսային գործունեության միջոցով բացահայտելով անձի ազատ նույնականացման մեխանիզմները: Մ.Ֆուկոյի հայեցակարգում սուբյեկտը չի դառնում իշխանության հարկակաղրանքի մեխանիկական կրող էթե կարողանում է նպատակաղղված օգտվել քաղաքական ազատությունից: Այս առումով էլ ինտերնացիոնալ հարաբերություններում **առանցքային գերիշխող, դոմինանտ** է դառնում դիսկուրսը: Մ.Ֆուկոն դիսկուրսը անվանում է իշխանության կրողներ, որոնք ենթարկվելով հեղինակի կարգապահական սկզբունքներին կարող են լինել «ճիշտ» և «կեղծ»: Որպիսզի պարզ լինի թե՛ դիսկուրսների ընթացքում ինչն է «կեղծ» կամ ինչն «ճիշտ» անհրաժեշտ է որ հասարակությունը ընկալի նրա ենթարկվող ու բացառող գործառույթի խաղային բնույթը: Ֆուկոն իր «Գիտելիքի հնագիտություն» աշ-

խատության մեջ անդրդարձել է դիսկուրսի էությանը՝ շոշափելով գիտելիքի ստացման կոգնիտիվ շրջանակների հիմնախնդիրը՝ կապված այս կամ այն դարաշրջանը բնորոշող կոնցեպցիաների և տեքստերում դրանց արտահայտման յուրահատկությունների հետ: Ըստ Ֆուկոյի՝ գոյություն ունի դիսկուրսիվ կարգ: Այսինքն՝ դիսկուրսն «անանուն, պատմական, ժամանակով և տարածությամբ դետերմինացված կանոնների ամբողջություն է, որոնք տվյալ դարաշրջանում և տվյալ սոցիալական, տնտեսական, աշխարհագրական կամ լեզվային միջավայրի համար որոշել են փոխազդեցության արտահայտման պայմանները: Դիսկուրսը հաղորդակցության սուբյեկտի սոցիալական մարկեր է: Այս խնդիրը հստակ արտահայտված է «քաղաքական արդյունավետ գործունեության դիսպուտ» հայեցակարգում, որի հիմքում դրված է ոչ թե կառավարման բացասական կողմերը, այլ նաև դրական արդյունքներն³⁵⁶: Արդյունավետ գործունեության դիսկուրսի միջոցով բացատրելով ազատության արժեքների (իմաստների) ձևավորված մեխանիզմները Մ.Ֆուկոն **ինտերնացիոնալ քաղաքականությունը ներկայացնում է անվտանգության արդիականացման գործընթաց**: Այս մոտեցումն առկա է նաև Պ.Բուրդիեի հայեցակարգում, համաձայն որի **մարդիկ ենթարկվելով իշխանության կառուցվածքներին ընկալում են դրանք ինքնին անհրաժեշտություն քաղաքական ազատության համար**: Սուբյեկտի գործողությունների ազատության իր հայեցակարգում Մ.Ֆուկոն զարգացնում է **դիսկուրսի իշխանությունը, դիսցիպլինար իշխանությունը, պրոդուկտիվ իշխանությունը և բիոիշխանությունը**: Դիսկուրսը որպես տարբեր տեսակետների համադրություն կամ համակարգում իրականացնում է երկու գործառույթ՝ **ենթարկող և բացառող**: Սակայն, հստակ չի սահմանվում թե այս կամ այն իրավիճակում որն է գործառնվում՝ ստեղծելով **«իշխանության մեջ հակադրություն»**: Այս իշխանության պարագայում Մ.Ֆուկոն ներկայացնում է ոչ միայն իշխանության բացասական կողմերը (բացառում, հպատակեցում) այլ նաև յուրաքանչյուր անձին ազատորեն «արտադրական ապարատ» ինտեգրելու դրական «էֆֆեկտները»: Այս պարագայում դիսցիպլինար իշխանությունը խմբավորում է անհատական «մարմիններ» (սոցիալական մարմին)՝ ստեղծելով սուբյեկտներ: Իր հերթին, Մ.Ֆուկոն իշխանության ռեալիզացման միակ արդյունավետ ռեսուրսը համարում է և՛ գիտելիքի, և՛ սուբյեկտների «արտադրությունը»՝ տարբերակելով իշխանության երեք ասպեկտ. Իշխանություն՝ իբրև **ազատ մարդկանց միջև ռազմավարական դաշինք**, իշխանություն՝ իբրև **գերիշխում-հպատակեցում** և իշխանություն՝ իբրև **իշխելու հմտություն**, որը փոխկապակցված է առաջին երկուսին: Նման մոտեցմանը համաձայն՝ գերիշխանությունը պետք է հասցնել նվազագույնի՝ պահպանելով դիսկուրսի իշխանության ազատությունը³⁵⁷: Այսպիսով դիսկուրս վերլուծությունը ենթադրում է հիմնախնդրի մեկնաբանության այնպիսի տեխնիկա, որը կբացահայտի նրա սոցիալակոյթային, գաղափարական, կրոնական, քաղաքական եզրերը: Դա առաջին հերթին տեքստային աշխարհները դիալեկտիկորեն և մետաֆիզիկորեն հետազոտելու, սոցիալառուցողականության, վիրտուալ դիսկուրսի միջոցով անվրտանգության և ազատության հետազոտության հրամայականներն են: Այդ առումով անհրաժեշտ է նշել հենց դիսկուրսի մեթոդի նորարարությունը, որը տեղի է

³⁵⁶ *Фуко Мишель*, Археология знания, http://www.gumer.info/bogoslov_Buks/Philos/fuko_arh/

³⁵⁷ *Политика и личность.*, (под ред. П. Йоганнес, З.Фриц, С.Ульрих, Ц. Аннетте), Харьков, Гуманитарный Центр , 2012, с.64,65,67:

ունենում համացանցային հաղորդակցման միջոցով: Արդի դիսկուսային գործունեության քաղաքական վերլուծությունը չափազանց բարդ է՝ բազմաչափ, իսկ այդպիսի վերլուծության մեթոդականությունը մշակվում է փորձելով պատասխանել հետևյալ հարցին. «որո՞նք են լեզվական և հոետորական երևույթները, որոնք ստիպում են մեզ ունենալ, կամ պաշտպանել այս կամ այն տեսակետը»: Արդի դիսկուսի հետազոտությունը ոչ այլ ինչ է, քան պատմության հոլովույթում կայացած պրակտիկ քաղաքական հոետորաբանություն: Այն իր բազմաչափությամբ ներառում է դիսկուսի ինչպես ալիգորիկ քննադատական վերլուծության ավանդույթը (Ջ.Օրուել), այնպես էլ տեղեկատվական տեխնոլոգիաների մանիպուլյացիոն ազդեցության միջոցով (Գ.Լասուել, Է.Տոֆֆլեր, Մ.Մակլյուն, Մ.Կաստել, Ռ.Դեբբե, Է.Հիդդենսի), համըդհանրացնող գլոբալ տարածության մեջ ազատության և անվտանգության խաղային բնույթը: Ակնհայտ է որ անձի քաղաքական ազատության ապահովման և անվտանգության արդիականացման շրջանակում կարևոր է սոցկառուցողականության ավանդույթը: Այս առումով որոշիչ են այն արժեքաբանական մեկնությունները որոնք առկա են տեղական և գլոբալ ՋԼՄ-ներում՝ քաղաքական դաշտի, սոցիալական խնդիրների, գեների, պատմական հիշողության և այլի վերաբերյալ: Այս համատեքստում կարևորենք ինֆորմացիոն դաշտի միջոցով ազատությունը դեկավարելու մասին:

Քսանմեկերորդ դարում «ներկայացման հասարակության» մեջ միմյանց հետ հաղորդակից են դառնում ամբողջ աշխարհը ցանցավորած սուբյեկտ-դերակատարները: Գոյության երևույթը իր տեղը զիջում է հաղորդակցության այն երկվայթին, որը տարածության և ժամանակի մեջ ընդարձակում է սեփական պատկերացումները ազատության և անվտանգության մասին: Մակայն քննադատելով տեղեկատվական ոլորտի մանիպուլյացիոն դիսկուսան Պ.Բուրդեն, Մ. Ֆուկոն տեղեկատվության տարածման գլոբալ խնդիրները քննարկում են որպես կախյալ զարգացման և մշակույթային իմպերիալիզմի տարբերակ: Պ.Բուրդեն դիտարկելով «միջավայրը» որպես մեկ ամբողջություն, հարկ է համարում այն տարբերել առանձին «ոլորտներից», որոնք բաշխված են ըստ կապիտալի բնույթի՝ ներկայացնելով «միջավայրը» իբրև «ոլորտների ոլորտ» ուր անձի քաղաքական ազատությունը նպատակաբանորեն միավորում է անվտանգության ջատագովներին³⁵⁸:

Այս առումով հատկապես ակտիվ զարգանում է տեղեկատվական իրավունքի խնդիրը, որովհետև տեղեկատվական պատերազմները և ընտրական տեխնոլոգիաները մեր իրականության դիսպուտի անբաժան մասն են: Անհասկանալի է ինքը իրականությունն է ավելի օպերատիվ ներկայացնում նյութը կամ առավել ակտիվորեն կուտակվում են գիտելիքները և մշակվում դիսկուսային վերլուծության մեթոդը: Այդ իմաստով համացանցի և ինֆորմատիվ դաշտի միջոցով տարաբնույթ տեղեկություններ են հաղորդվում 2011թ. Սեպտեմբերի 11-ի իրադարձությունների, 2005թ.-ին Ֆրանսիայում և 2011թ.-ին Մեծ Բրիտանիայում տեղի ունեցող անկարգությունների, Եգիպտոսի և Սիրիայի դեպքերի մասին: Նշված դեպքերից յուրաքանչյուրը ունի իր պատկերացումները քաղաքական ազատության, ազատության և անվտանգության մասին: Համացանցի միջոցով մենք հետևեցին ԱՄՆ-ի և Ֆրանսիայի նախագահական ընտրությունների քարո-

³⁵⁸ Политика и личность., (под ред. П. Йоганнес, З.Фриц, С.Ульрих, Ц. Аннетте), Харьков, Гуманитарный Центр 2012. с 70-71:

գարշավին, Բապանիայում և Հունաստանում տեղի ունեցող ցույցերին, դաշնակից ուժերի գործողություններին Լիբանանում և Մ.Քաղաֆիի, Ս.Հուսեյնի և Օ. Բեն Լադենի ոչնչացմանը, ինչպես նաև համաշխարհային տնտեսական ճգնաժամին: Ապակառուցողականության, խոսքի անորոշության մեջ խճճված դերակատարների դիրսկուրսային գործունեության իրատեսության բարձրացման առումով քաղաքական փորձագետ «Նախագահական խառնվածք. Կանխագուշակելով Սպիտակ Տան աշխատանքի արդյունքները» գրքի հեղինակ Ջեյմս Բարբը կարևորեց անձի քաղաքական ազատության և ազգային անվտանգության արդիականացման գործընթացում ԱՄՆ-ի նախագահների անձնական բնութագիրը. «Նախագահի համար բնավորությունը ամեն ինչ է. Նախագահը չպետք է խելացի լինի. Նա կարող է խելացիներին ներգրավվել իր աշխատանքի մեջ: Սակայն նախագահը չի կարող գնել խիզախություն և պատշաճ վարք, նա չի կարող վարձակալել բարոյական բարձր արժեքներ, ազատասիրություն: Նախագահը դրանք իր հետ պետք է տանի Սպիտակ Տուն»³⁵⁹: Փաստորեն նախագահի անձնական բնութագրով է երաշխավորված, որ երկրի ղեկավարումը, անկախ փոփոխվող իրավիճակներից, կարողանա դիրսկուրսային արդյունավետ գործունեություն ծավալել՝ ապահովելով և՛ ազատություն, և՛ անվտանգություն: Պատմության մեջ գրանցվել են մի շարք այդպիսի օրինակներ, երբ Սպիտակ Տան տերերի անձնական հատկանիշներն բնութագրել են ԱՄՆ քաղաքական կուրսը: Այսպես՝ Ֆրանկլին Ռուզվելթի լավատեսությունը թույլ տվեց ԱՄՆ դուրս բերել «Մեծ ճգնաժամից» և հաղթել Երկրորդ Համաշխարհային պատերազմում: Հարրի Տրումենը պրագմանտիզմի արդյունքում ԱՄՆ-ը միջուկային զենք օգտագործեց Ճապոնիայի դեմ: Թրումենն անձամբ ընդունեց այդ որոշումը՝ իր վրա վերցրնելով պատասխանատվությունը: Ինքնուրույն և վճռական Դուայթ Էյզենհաուերը ի գործու եղավ դիմակայել իր մերձավորների ճնշմանը՝ զինված առճակատում թույլ չտալով կոմունիստների հետ: Կարիբյան ճգնաժամի ժամանակ Ջոն Բեննեդին ցուցաբերեց իրեն բնորոշ զսպվածություն, ինչը թույլ տվեց ԱՄՆ-ին և ԽՍՀՄ-ին դուրս գալ վտանգավոր իրավիճակից՝ կանխելով պատերազմը: Արկածախնդիր Ռիչարդ Նիքսոնը պաշտոնական հարաբերություններ հաստատեց կոմունիստական Չինաստանի հետ, ինչը սկզբունքորեն անհնարին էր թվում նրա նախորդների համար: Ռոնալդ Ռեյգանը պատմության մեջ մտավ որպես ԱՄՆ ռազմական հզորության համար ներդրումներ կատարող նախագահ, սակայն հենց նա զանգվածային ոչնչացման զենքի պաշարների կրճատում իրականացրեց բանակցությունների գնալով Սիխայիլ Գորբաչովի հետ: Բիլ Բլինթոնը տնտեսական բարեփոխումների գործում կարողացավ հաղթահարել ոչ միայն քաղաքական հակառակորդների, այլ նաև համախոհների դիմադրությունը³⁶⁰:

Տրեղ Գրինսթեյնը նշում է վեց հատկանիշ, որոնք ազդում են քաղաքական գործիչների դիրսկուրսային գործունեության արդյունավետության վրա՝ **շփում, կազմակերպչական ունակություն, քաղաքական հմտություններ, մարտավարական կարողություն, իմացաբանական ոճ, բանական զգացմունքայնություն**: Ֆ. Գրինսթեյնի կարծիքով բնական զգացմունքայնությունը, այսինքն՝ սեփական «Ես»-ը ղեկավարելու և կառուցողական նպատակներով այն օգտագործելու կա-

³⁵⁹ <http://www.goodreads.com/quotes/tag/politics>

³⁶⁰ http://www.psymag.am/am/article/view/amn-naxagahneri-dasakargumy/amn-naxagahneri-dasakargumy_01-5.html

րողությունը քաղաքական գործիչների ամենակարևոր հատկանիշն է: Համաձայնվելով Ֆ. Գրինսթեյլի հետ նշենք որ արդի տեխնկատվա-հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացման մակարդակը փոխել է ոչ միայն ազատության համար վարվող քաղաքականության սահմանները, այլ նաև պատկերացումները նրա մասին՝ բարձրացնելով քաղաքական հարաբերություններում առաջնորդի պատահանատվության մակարդակը՝ ազատության և անվտազության ապահովման գործընթացում: Քաղաքական հարաբերությունները որպես գործունեության առանձնահատուկ տեսակ և՛ համակարգային, և՛ իրավիճակային բնույթ ունեն: Այս համատեքստում որոշիչ է դիրսկուրսային գործունեություն ծավալած սուբյեկտ-դերակատարի դիրքորշումը անձի քաղաքական ազատության սահմանների նկատմամբ:

Мери Маргарян – Политическая свобода личности как результат дискуссионной деятельности. – В работе изучено влияние политического поведения личности на развернутую с целью модернизации свободы и безопасности его деятельности. Очевидно, что новая волна борьбы за свободу и безопасность является результатом как порожденных в процессе демократизации вызовов, так и безответственных, насыщенных необоснованными амбициями действий политических акторов. В этом контексте политическая свобода личности рассматривается в качестве результата дискуссионной деятельности, являющаяся основным компонентом эволюционной модернизации национальной безопасности. Автор статьи выражает мнение, что полные неопределенности политические процессы на Ближнем Востоке, в странах СНГ свидетельствуют о том, что понятия “свобода” и “безопасность” должны рассматриваться в гармонии с новыми поколениями вызовов, придавая важность ценностной многогранности дискуссионной деятельности. Это позволит на уровне личность-государство-общество конвергировать границы их свободы, расширяя степень ответственности политических акторов.

Ключевые слова: политическая деятельность, сетевое управление, границы свободы, ответственность, позитивная и негативная свобода, либерализм, информационно-коммуникационные технологии, дискуссионные навыки, свобода дискуссионных акторов.

Meri Margaryan – Political freedom as a result of discussion activity. – The article highlights the impact of political behavior of individual on his activity developed for the modernization of freedom and security. Obviously, the new wave of struggle for freedom and security is a result of both the challenges, which appeared in the process of democratization, and irresponsible, full of unjustified ambitions of political actor`s activities. In this context political freedom of individual is viewed as the result of discussion activity as the main component of evolutionary modernization of national security. The author thinks that full of uncertain political processes in the Middle East and in the CIS countries evident the fact that “freedom” and “security” should be viewed in harmony with new generations of challenges paying attention to polyhedral value of discussion activity. This will allow on the level of person-state-society to converge the mergins of freedom, enlargening the responsibility of political actors.

ՊԱՌԼԱՄԵՆՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ
ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԵՂԻՇԵ ԲԱԶՈՑԱՆ

Պառլամենտական վերահսկողությունը պետական վերահսկողության հիմնական ձևերից մեկն է և ընդհանուր առմամբ ունի քաղաքական, իսկ ավելի նվազ դեպքերում՝ վարչական բնույթ: Պառլամենտական և կիսանախագահական հանրապետություններում այդ տերմինի հիմնական նշանակությունն ամբողջա՝ նում է գործադիր իշխանության կամ կառավարության գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու մեջ³⁶¹: Պառլամենտական վերահսկողության խնդիրների գիտական հետազոտումը մեր ժամանակներում այդ հասկացության որոշարկմանն ուղղված և արդեն ձևավորված ուղիների տեսական ու բովանդակային ճիշտ իմաստավորում է պահանջում, որից բխում է նաև պառլամենտական վերահսկողության, որպես ինստիտուտի՝ բնութագրական հատկանիշների բացահայտման անհրաժեշտությունը:

«Վերահսկողություն» եզրույթը իրավաբանական կամ այլ գրականության մեջ բավականին հաճախ է հանդիպում և բնականաբար դրա օգտագործման բնագավառների տարբերություններն էլ այդ տերմինի բովանդակությունը դարձնում են ոչ միանշանակ: Դրա հետ մեկտեղ իրավունքի տեսության, սահմանադրական կամ վարչական իրավունքի բնագավառներին վերաբերող բազմաթիվ աշխատությունների վերլուծությունը վկայում է այն մասին, որ ուսումնասիրողների մոտ պառլամենտական իրավունքի էության կամ բովանդակության բացահայտման առումով միասնություն չկա: Պառլամենտական վերահսկողությունը ներկայացվում է որպես գործառույթ, ձև, գործունեության պայման, գործոն, համակարգ, ինստիտուտ, մեթոդ և այլն: Սակայն այս մոտեցումները միտված են ոչ թե և ոչ այնքան վերահսկողության, որպես հասկացության համար բոլորի կողմից ընդունելի, համընդհանուր բանաձևի բացահայտմանը, որքան կարող են համարվել այդ երևույթի իմաստավորմանն ուղղված գիտական տարբեր՝ իրավական, փիլիսոփայական, սոցիալական ուղղությունների ներկայացուցիչների գիտական <շահերի> տարբերության արդյունք: Ընդհանուր առմամբ կարելի է համաձայնել այդ բնորոշումներից յուրաքանչյուրի հեղինակի հետ, քանի որ վերջին հաշվով վերը նշված էլեմենտներից որևէ մեկն առկա է այն մեծ և տարողունակ հասկացության մեջ, որն անվանվում է «վերահսկողություն»:

Ժամանակակից գրականության մեջ «վերահսկողությունը» բնորոշվում է որպես ստուգում, ուսումնասիրություն, որը նպատակ ունի ստուգել օրենքների, հրամանագրերի, կառավարչական որոշումների իրականացումը³⁶², որպես սոցիալական կարգավորիչների միասնական համակարգ /պետական ինստիտուտներ, իրավունք, բարոյականություն, սովորույթ/³⁶³:

³⁶¹ Большой юридический энциклопедический словарь, М., 2005 с 425

³⁶² Социальное управление: Словарь М. 1994 с74

³⁶³ *С.С. Алексеев*, Проблемы теории права: курс лекций. Т. 1, Свердловск 1973 с 69

Իրավագիտության մեջ հատկապես շեշտվում է անհրաժեշտությունը դիտարկել «վերահսկողությունը» որպես կառավարչական գործունեության առանձնացված, ինքնուրույն ձև³⁶⁴։ Ռուս պետականագետ Ստրաշունը «վերահսկողությունը» համարում է կառավարման անբակտեղի գործառնություններից մեկը, որը թույլ է տալիս կառավարչական գործունեության փաստական արդյունքները համադրել ցանկալիի հետ և բացահայտել անկատարությունների պատճառները³⁶⁵։

Վերահսկողական գործունեությանը ներհատուկ են հետևյալ գծերը՝

1/ նպատակային նշանակությամբ և առկա խնդիրների մասով ունակ է լուծելու իր առջև դրված հարցերի բավականին մեծ շրջանակ՝

ա/ ճիշտ վերլուծելով իրերի առկա վիճակը դիտարկման /վերահսկողության/ ներքո գտնվող իրավահարաբերության օբյեկտի գործունեության բարելավման համար ունակ է արդյունավետ որոշումներ ընդունելուն ուղղված գործողություններ իրականացնել, իսկ օբյեկտի մոտ ոչ իրավաչափ վարքագիծ հայտնաբերելու դեպքում համապատասխան միջոցներ կիրառել այդ թվում նաև ուղղված ապագայում թույլ տրվելիք անհամապատասխանությունների կանխմանը,

բ/ հասնել իր իսկ կողմից ընդունված որոշումների արագ իրականացմանը

2/ վերահսկողությունը որպես գործունեության ձև իր բովանդակությամբ միաբնույթ չէ

3/ այն իրականացնում են հատուկ սուբյեկտները, որոնք առանձին իրավական ակտերով են ճանաչվել վերահսկողական գործառնություն իրականացնելու իրավունքի կրողներ (պետական իշխանության մարմիններ, պետական և հասարակական կազմակերպությունները և այլն)

4/ այդ գործառնության իրականացման հետևանքով ստացվող արդյունքների յուրատեսակ բովանդակությունը (հետևանքը պատասխանատվության վրա հասնելն է կամ անհատական-իրավական հանձնարակականը՝ ուղղված սխալների վերացմանը), որն անմիջականորեն արտացոլում է կապը գործողության ու հետապնդվող նպատակի միջև։

Այսպիսով «վերահսկողությունը» նախատեսում է որակյալ և հետևողական դիտարկում այն բանի նկատմամբ, որպեսզի պետական մարմինների և պաշտոնատար անձանց փաստացի գործունեությունը խստորեն համընկնի նորմատիվ ակտերի կարգադրագրերին և այդ փաստի հաշվառմամբ առավելագույնս ապահովվի գործադիր իշխանություն իրականացնողների կողմից իրավակարգի, հասարակության շահերի, քաղաքացիների իրավունքների և ազատությունների պահպանմանն ուղղված գործառնությունների իրականացումը։

Ռուս սահմանադրագետ Չիրկինը համարում է, որ վերահսկողական գործունեությունը որպես այդպիսին ներհատուկ է պետական իշխանության գրեթե բոլոր մարմիններին... իշխանության այս կամ այն թևն իր կազմակերպական դրսևորումը գտնում է որոշակի մարմնի մեջ կամ միաբնույթ մարմինների համակարգում³⁶⁶։

Պետական վերահսկողությունը պետությանը ներհատուկ գործառնություններից մեկն է, որն իրականացվում է օրենքների ու այլ նորմատիվ ակտերի կար-

³⁶⁴ *В.М. Горшенев, И.Б. Шахов*, Контроль как правовая форма деятельности. М. 1987 с. 14

³⁶⁵ *Б.А. Страшун*, Конституционное право зарубежных стран: Учебник М. 1996 с. 304

³⁶⁶ *В.Е. Чиркин*, Контрольная власть «Государство и право» 1993 N4, с 11

գաղափարների կատարման, պետական կարգապահության ապահովման, պետական ու հանրային ֆինանսական միջոցների ու գույքի պատշաճ, նպատակային օգտագործման նպատակով: Այն իր բնույթով հանրային է, քանի որ իրականացվում է պետական մարմինների կողմից և դրսևորվում է իրավական ուղղվածությամբ: Պետական վերահսկողության առարկան բոլոր իրավական ակտերն են և վերահսկողության ներքո գտնվող վերահսկողական իրավահարաբերությունների սուբյեկտներն իրենց գործունեության՝ օրենքներում, ենթաօրենսդրական ակտերում ամրագրված պահանջներին համապատասխանության մասով: Եվ քանի որ այդ մարմինների գործունեությունը կարգավորվում է նորմատիվ ակտերով, ապա վերահսկողության առարկա է դառնում այդ գործունեությունն իր ամբողջ ծավալով առանց որևէ սահմանափակման³⁶⁷:

Պետական վերահսկողությունն ունի տարատեսակներ, որոնց տարբերակումը կախված է կոնկրետ այդ գործունեությունն իրականացնող մարմինների բնույթից: Այսպես պետական վերահսկողության տարատեսակներից են՝

ա/ նախագահական վերահսկողությունը, որպես պետության գլխի կողմից անմիջականորեն իրականացվող գործունեություն,

բ/ պառլամենտական վերահսկողությունը, որն իրականացվում է օրենսդիր բարձրագույն իշխանության մարմինների կողմից գործադիր իշխանության մարմինների գործունեության նկատմամբ,

գ/ գործադիր իշխանության մարմինների վերահսկողությունը, որն իրականացվում է գործադիր մարմինների կողմից գործադիր իշխանության համակարգի ներսում,

դ/ դատական կամ սահմանադրական վերահսկողությունը, որն իրականացվում է օրենսդիր և գործադիր իշխանության մարմինների իրավական ակտերի սահմանադրականությունն ու օրինականությունը ստուգելու նպատակով:

Ընդ որում պետական վերահսկողության բոլոր տեսակները պետականաշինության ժամանակակից փուլում կոչված են ապահովելու պետական իշխանության առանձին թևերի ինքնուրույնությունը և <ճառայում են> զսպումների ու հակակշիռների համակարգի արդյունավետ գործունեության ամրագրմանը պետական իշխանության մարմինների համակարգում:

«Պառլամենտական վերահսկողություն» հասկացությունը որպես իրավական կատեգորիա սկսել է շրջանառվել իրավունքի՝ մասնավորապես սահմանադրական իրավունքի տեսության մեջ պառլամենտարիզմի առաջացման ու կայացման հետ գրեթե միաժամանակ: Պառլամենտական վերահսկողության որպես պետական վերահսկողության առանձին տեսակի յուրահատկությունն ու տեղը պետական վերահսկողության ընդհանուր համակարգում պայմանավորված է պառլամենտի՝ որպես օրենսդիր ու ներկայացուցչական բարձրագույն մարմնի իրավական ու քաղաքական բնույթով, ինչպես նաև պետական իշխանության մարմինների համակարգում վերջինիս զբաղեցրած բացառիկ ու առանձնահատուկ տեղով:

³⁶⁷ *А.И. Козлов*, Институт парламентского контроля в Российской Федерации и государствах Центральной и Восточной Европы; автореф. дис. канд. Юр. наук, М 2011 с 18

Պետական վերահսկողության մասին ավելի մանրամասն տես. Тарасов А. М. «Государственный контроль» сущность, содержание, современное состояние; статья// Журнал российского права 2002 N1, Լուվիի «Государственный контроль в России» մենագրությունը, М 2008 с. 10-101

Քննարկելով «պառլամենտական վերահսկողություն» հասկացության մեջ օրենսդիր մարմնի՝ գործադիր իշխանության գործունեության նկատմամբ վերահսկողական գործառույթներ իրականացնելու իրավունքի առկայության տեսական հիմքերի խնդիրը պետք է ասել, որ այդ իրավունքն անմիջականորեն բխում է օրենսդիր իշխանության ներկայացուցչականությունից, որպես ժողովրդաիշխանության և ժողովրդի սուվերենության սկզբունքի դրսևորում ու արտահայտման հիմնական եղանակ: Սրանից իր հերթին բխում է օրենսդիր իշխանության առաջնայնության սկզբունքը, քանի որ այն օրենքներ ընդունելու միջոցով իր կամքն արտահայտելուն ուղղված հենց ժողովրդի կողմից լիազորված միակ իշխանությունն է, որին վերապահված է նաև այդ օրենքների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու իրավունքը: Այսօր գոյություն ունեցող պետությունների սահմանադրությունների ճնշող մեծամասնությունն այս կամ այն ձևակերպմամբ պետական իշխանության աղբյուր ու միակ կրող է համարում ժողովրդին և խոսքը ոչ միայն Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո անկախություն ստացած պետությունների մասին է, այլ նաև դեռևս 19-րդ դարում /1874 թ/ իր Հիմնական օրենքն ընդունած Շվեյցարական Համադաշնության /Շվեյցարիայի 1874 թ. Գործող սահմանադրության 138-142 հոդածներում ամրագրված է, որ այդ երկրի պետական իշխանության բարձրագույն ինստիտուտն ու միակ աղբյուրը ժողովուրդն է/:

ՀՀ սահմանադրությունն այդքան արմատականորեն չի ամրագրում ժողովրդի՝ որպես իշխանության միակ աղբյուրի, կարգավիճակը, սակայն իր 2-րդ հոդվածով սահմանում է, որ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին, ինչն իր ներքին բովանդակությամբ նույնանում է վերն ասվածին:

Սկզբնապես պառլամենտական վերահսկողությունը սոցիալական արմատներ ու նշանակություն է ունեցել և նրա իրական բովանդակությունը պարզապես հանգել է բացարձակապետությունն այլևս չհանդուրժող ու թագավորի հետ իշխանությունը երկրում կիսել ցանկացող նոր ազնվականության՝ ինքնակալի անսահման իշխանությունը սահմանափակելու ձգտմանը: Այս պատճառով էլ պետք է նկատել, որ նախ պառլամենտական վերահսկողությունն ի հայտ գալու սկզբնական ժամանակներից իր գործառույթային նշանակությամբ ընկալվել է որպես անմիջականորեն պառլամենտի անդամների կողմից իրականացվող գործունեություն, ինչը հաստատող կարծիքներ կան իրավաբանական գրականության մեջ³⁶⁸ և հետո պառլամենտական վերահսկողությունը հենց իր սկզբնական կոնկրետ պատմական և սոցիալական նշանակությամբ նախատեսել է վերահիսկողություն հատկապես գործադիր բարձրագույն իշխանության նկատմամբ, իսկ ավելի կոնկրետ այն պաշտոնատար անձի /թագավորի/ նկատմամբ, որն անկախ իր իրավաբանական և փաստացի կարգավիճակից իրականացրել է երկրի ներքին և արտաքին կառավարումը: Մա մեր խորին համոզմամբ բանալին է պառլամենտական վերահսկողության, որպես սկզբում սոցիալական, ապա նաև իրավական ու քաղաքական երևույթի էության բացահայտման և այն փոխանցել է իր սկզբնական անմիջական բովանդակային նշանակությունը նաև այդ հասկացության ժամանակակից ու բարդ ծավալին, որն արդեն արդյունք է սոցիալական գոր-

³⁶⁸ *А. Шаю*, Самоограничение власти. Краткий курс конституционализма. М. 2001 с. 163

ծընթացների բարդացման ու ժամանակակից կառավարման հրամայականներով պայմանավորված պետական ինստիտուտների առաջանցիկ զարգացման: Հենց այդ պատճառով էլ ցանկացած պետության օրենսդիր բարձրագույն մարմնին՝ անկախ երկրի կառավարման ձևից և «գապումների ու հակակշիռների» համակարգում նրա համար հատկացված տեղից, ներհատուկ է գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու լիազորությունը, որը պետականաշինության ժամանակակից փուլում, ինչպես վերևում արդեն ասվել է, բխում է օրենսդիր իշխանությունը ներկայացնող մարմնի ներկայացուցչականությունից՝ որպես ժողովրդի հավաքական կամքն արտահայտողի: Այդ հիմքով իսկ կարելի ասել, որ գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողության լիազորությունը պառլամենտի բնական հատկությունն է և նրա ներկայացուցչականության իրավաբանական դրսևորումը: Շարունակելով զարգացնել այդ միտքը պետք է ասել, որ գործադիր իշխանության նկատմամբ օրենսդիր մարմնի վերահսկողության լիազորությունը անհրաժեշտության ու պատճառականության երևույթների փոխմիասնության հարթությունում նաև փիլիսոփայության կատեգորիա է: Պատճառական կապը հարաբերություն է երևույթների միջև, որում մի երևույթը, որը կոչվում է պատճառ, որոշակի պայմանների առկայության դեպքում անհրաժեշտաբար ծնում է մյուս երևույթը, որը կոչվում է հետևանք: Պատճառը ոչ միայն նախորդում է հետևանքին ժամանակային առումով, այլև ծնում է հետևանքի առաջացումը և գոյությունը: Պատճառական հարաբերության մյուս հատկությունը նրա անհրաժեշտությունն է, այսինքն եթե պատճառն առաջանում է որոշակի ֆիքսված արտաքին ու ներքին պայմաններում, ապա անհրաժեշտաբար ծնում է որոշակի հետևանք³⁶⁹: Այստեղից նաև հայտնի բանաձևը՝ հավասար պատճառները ծնում են հավասար հետևանքներ: Քննարկվող համակարգում պատճառի կատեգորիան գործադիր իշխանությունն է ու նրա գործունեությունը, իսկ պառլամենտական վերահսկողությունը՝ բնականաբար, վրա հասնող հետևվանքը և ահա թե ինչու: Խնդիրը իշխանության այս երկու տեսակների բուն բովանդակության՝ էության մեջ է: Գործադիր իշխանությունն իր տեսակով անընդհատ ու օպերատիվ կառավարման գործառույթների մի ամբողջական շղթա է, որն իր բնույթով զգայուն է, ճկուն, արագ արձագանքող, կտրուկ գործողությունների ընդունակ, իր «զինանոցում» ունի կատարողների հսկայական բանակ, հարկադրանքի տարր կիրառելու լայն հնարավորություններ, տեխնիկական միջոցների անսպառ «շտեմարան» և հենց այդ պատճառով էլ զավազանց շարժունակ է, զարգացման առումով ընդլայնման մեծ հակումներ ունեցող, շարունակ իր սահմաններից դուրս ձգտող ու դրա համար էլ բովանդակությամբ «ագրեսիվ» և բնույթով դիկտատորականի վերածվելու մշտական վտանգով լի:

Օրենսդիր իշխանությունն իր էությամբ իրավաստեղծ է, սահմանադիր, պետության ու հասարակության զարգացման ռազմավարությունը նախանշող և չնայած պետական կառավարում իրականացնելու իմաստով կառավարման որոշակի գործառույթներ է իրականացնում, այդ կառավարումը հարկադրանքի տարրով զուգորդված անընդհատ ու օպերատիվ բնույթ չունի, գործառույթային առանձնահատկություններով պայմանավորված հասարակական կյանքի ազդակներին արձագանքելու առումով ավելի նվազ զգայուն է, որոշումներ կայաց-

³⁶⁹ *Ս. Հովսեփյան*, Սոցիալական փիլիսոփայություն, Երևան 2003 էջ 25

նելիս ավելի դանդաղաշարժ /իմաստուն անշտապողականություն/, միաժամանակ նաև կարծիքների ամենալայն հաշվառման հնարավորությամբ օժտված, զարգացման դինամիկայի առումով ավելի պահպանողական, կառավարման գործադիր թևին հատուկ վարչաօրհանայական միջոցներից զուրկ ու ավելի շատ *խորհրդա-քան-ա-*տվական մեթոդներին հակված և հետևաբար զարգացման չափազանց հավակնություններ չունեցող ու դիկտատորականի վերածվելու «վտանգին» ավելի անհաղորդ: Ասվածն ամբողջացնելու համար փաստենք, որ հասարակությունն իր էությամբ ներկայանում է որպես մարդկանց բազմաբնույթ հանրությունների /սոցիալական խավեր, խմբեր, դասակարգեր և այլն/ միջև պատմականորեն ձևավորված կապերի ու հարաբերությունների համակարգ և հենց վերջինն էլ իր քաղաքական կազմակերպման մեխանիզմում տարբեր հանրությունների շահերի ու հետաքրքրությունների հավասարակշռության պահպանման նպատակով այդ մեխանիզմի էլեմենտներից մեկի՝ «պատճառ» կատեգորիա հանդիսացող գործադիր իշխանության չափազանց հավակնությունները զսպելու և այն գործունեության նորմալ հուն վերադարձնելու նպատակով ձևավորում է հասարակական պատվեր՝ պառլամենտական վերահսկողության տեսքով, որն էլ որպես հետևանք իրեն ծնող պատճառի համարժեք ներգործությամբ ձգտում է չեզոքացնել վերջինիս:

Վերադառնալով պետա-իրավական տեսական հարթությունում «վերահսկողություն» տերմինի որոշարկումներին պետք է ասել, որ գերմանացի պետականագետ Գեորգ Ելինեկը դրա տակ հասկանում էր պետական մարմինների ու անձանց՝ պետության համար կարևոր, գործողությունների համապատասխանության ստուգումը համապատասխան նորմերին: Ըստ Ելինեկի վերահսկողությունն իր բնույթով կարող է լինել քաղաքական և իրավական: Իրավականի տարատեսակներն են վարչականը, ֆինանսականը և պառլամենտականը: Ընդ որում պառլամենտական վերահսկողության նշանակությունն ու զարգացման ընթացքը տարբեր են առանձին պետություններում և դա իրականացվում է կառավարման մարմինների գործունեության նկատմամբ պառլամենտական քննադատության միջոցով սահմանադրական գործիքների օգնությամբ /հարցեր, հարցապնդումներ, պարսավանքի բանաձև, հետաքննչական հանձնաժողովներ և այլն/, իսկ դրա իրավական դրսևորումը կախված է պառլամենտի կոնկրետ ***/իրավականից տարբերվող փաստացի/*** ուժից³⁷⁰ /ավելացումը մերն է/:

Ժամանակակից ուսումնասիրողներն արդեն պառլամենտական վերահսկողության էությանն ավելի կոնկրետ իմաստ են հաղորդում սահմանելով այն որպես պետական իշխանության բարձրագույն օրենսդիր մարմնի կողմից իրականացվող տարբեր միջոցների ամբողջություն ուղղված համակարգի գործունեության ստուգմանն ու դիտարկմանը, ինչպես նաև այդ ստուգման արդյունքում հայտնաբերված անհամապատասխանությունների վերացմանը³⁷¹, որպես հիմնականում գործադիր իշխանության մարմինների գործունեության ստուգման կարգը սահմանող նորմերի համակարգ, որն իրականացվում է ինչպես պառլամենտական մեծամասնության, այնպես էլ ընդդիմադիր փոքրամասնության կողմից և ուղղված է այդ գործունեության գնահատմանը՝ պատժամիջոցների հնա-

³⁷⁰ *Г. Еллинек*, Право современного государства; Общее учение о государстве, Т. 1 СПб. 1908 с. 586

³⁷¹ *М.М. Угяцев, А.А. Корнилова*, Контрольные функции региональных парламентов; сравнительный анализ//Право и политика, М 2001 N1 с 30

րավոր կիրառամբ³⁷²: Գերմանացի հեղինակ Վ. Ստեֆանին ավելի ամբողջական է իր որոշարկման մեջ, ըստ որի պառլամենտական վերահսկողությունը իրենից ներկայացնում է ուրիշների՝ մասնավորապես կառավարության ու կառավարման մարմինների վարքագծի ստուգման ու որոշարկման պառլամենտական ընթացակարգ՝ պատժամիջոցների կամ իրավապարտադիր որոշումների անմիջականորեն կամ անուղղակի հնարավոր կիրառամբ, ինչպես նաև տեղեկատվության ստացման, վերամշակման և գնահատման արդյունքում հավանություն կամ քննադատություն ներառող քաղաքական դիրքորոշման դրսևորում³⁷³: Ֆրանսիացի ուսումնասիրողների կարծիքով էլ պառլամենտական վերահսկողությունը միջոցների ամբողջություն է, որը թույլ է տալիս պառլամենտի պալատներին պատկերացում ձևավորել կառավարության գործունեության վերաբերյալ և իրականացվող քաղաքականության հետ խորը անհամաձայնություն ունենալու դեպքում տապալել նրան³⁷⁴:

Մեր բնորոշամբ պառլամենտական վերահսկողությունը պետական իշխանության կրողը հանդիսացող ժողովրդի կողմից վերջինիս կամքն արտահայտող օրենսդիր մարմնին անմիջականորեն հաղորդված բացառիկ լիազորությունն է՝ ժողովրդի անունից և ի շահ նրա ընդունված օրենքների կատարման ուղղությամբ գործադիր իշխանության իրականացրած քայլերին հետևելու, դրանց կատարման ընթացքը ստուգելու և ոչ պատշաճ կատարումից առաջացած հետևանքները վերացնելու համար: Այս որոշարկման մեջ ժողովուրդը որպես մեկ ամբողջություն դիտելու իրողությունը անշուշտ թելադրված է սահմանադրական իրավունքում ընդունված նրա իրավական կարգավիճակի ընկալումից, որը որպես իշխանության աղբյուր մեկ ամբողջության մեջ է ընդունակ իրեն պատկանող ամբողջից ինչ-որ մաս փոխանցել իր իսկ կողմից կազմավորված մարմնին և դրանից բխող ներկայացուցչության ինստիտուտը, որը կազմում է օրենսդիր բարձրագույն մարմնի էությունը, հենց այդ բովանդակությամբ պետք է ընկալել: Ֆրանսիայի 1791թ-ի սահմանադրության հեղինակներից աբբա Սիեյեսի համոզմամբ ներկայացուցչականությանը հատուկ է երկու հատկանիշ՝ նախ լիազորվածների իշխանությունը անսահմանափակ չէ և ազգի /ժողովրդի/ ընդհանուր իշխանության սոսկ մի մասն է կազմում և հետո լիազորվածներն այդ իշխանությունն իրականացնում են ոչ իրենց, այլ ուրիշի՝ ազգի իրավունքով, որը նրանց է վստահել իրեն պատկանող իշխանությունը³⁷⁵: Սակայն քաղաքական ու սոցիալական իմաստով ժողովուրդը բազմաշերտ հասկացություն է և բաղկացած լինելով տարբեր շահեր ու հետաքրքրություններ ունեցող հանրություններից /խավեր, խմբեր, դասակարգեր և այլն/ նրա ամբողջությունը «ժողովրդական կարծիքի» արտահայտման իմաստով բացարձակ երևույթ ու մեկընդմիջտ տրված կատեգորիա չէ և այն անհրաժեշտ է ընկալել դինամիկ շարժման մեջ՝ որպես հասարա-

³⁷² *Е.В. Коврякова*, Парламентский контроль; зарубежный опыт и российская практика, М. 2005 с 12

³⁷³ *Srefani W. Formen*, Verfahren und Wirkungen der Parlamentarischen Kontrolle //Parlamentsrecht und Parlamentspraxis in der Bundesrepublik Deutschland. Berlin 1989 s 1325. Հղումը ըստ Козлов А. И. Институт парламентского контроля в Российской Федерации и государствах Центральной и Восточной Европы; автореф. канд. Юр. наук, М 2011 с 23

³⁷⁴ Исполнительная Власть, Законодательная Власть и Судебная Власть во Франции: Российско-Французская Серия «Информационные и учебные материалы» - Новая серия; N6 Посольство Франции в России. Министерство Иностранных Дел Франции 1996, с 96

³⁷⁵ *Аббат Сийес*, От Бурбонов к Бонапарту /состав.,пер., вступ ст. М. Б. Певзнера/ СПб 2003 с 194

կական տարբեր խմբերի մշտական փոխգործակցության հետևանք³⁷⁶: Ժողովրդի և նրա կամքի արտահայտման երևի հենց այդպիսի ընկալման համատեքստում էլ գիտական գրականության մեջ կարծիքներ են հնչում այն մասին, որ էմպիրիկ ճանապարհով հնարավոր չէ որոշել թե դրսևորվում է արդյոք ժողովրդի կամքը տվյալ պահին թե ոչ, ամրագրված է արդյոք կոնկրետ որոշումը հասարակական ընդհանուր ոգով թե՞ ոչ և ժողովուրդը կազմող ամբողջության մեջ ինչքան մարդ է կողմ կամ դեմ իշխանական որոշմանը³⁷⁷:

Ինչպես երևում է վերը բերված բնորոշումների ամբողջությունից և ռուս և եվրոպացի հեղինակները պառլամենտական վերահսկողությունը բնորոշում են որպես գործադիր իշխանության մարմինների՝ հատկապես կառավարության նկատմամբ պառլամենտի կողմից իրականացվող գործունեություն, թեև կան հեղինակներ, որոնք պառլամենտական վերահսկողությանը ավելի լայն մեկնաբանություն են տալիս³⁷⁸ և առանձին դեպքերում տարածում են նաև պետության գլխի, դատական իշխանության, զինված ուժերի³⁷⁹ և տեղական ինքնակառավարման վրա³⁸⁰: Վերևում մենք արդեն փաստարկել ենք, որ պառլամենտական վերահսկողությունը, որպես քաղաքական ու իրավական երևույթ, սկզբնավորման ժամանակ իր պատմական, առաջնային նշանակությամբ նախատեսել է ստուգման ու դիտարկման գործունեության իրականացում թագավորի /պետության գլխի/ նկատմամբ, որի տնօրինության ներքո էր ներքին ու արտաքին կառավարման ֆունկցիաներն ամբողջությամբ: Մակայն պետական իշխանության եռմիասնության համակարգում օրենսդիր իշխանության, որպես «բոլոր իշխանությունների» միակ աղբյուրը համարվող ժողովրդի կամքն արտահայտող միակ ներկայացուցչի /ուղղակի ընտրություններով ընտրված նախագահը և տեղական ինքնակառավարման մարմինները նույնպես կարող են համարվել ներկայացուցչական, բայց միայն պառլամենտն է ապահովում ամբողջ ժողովուրդը կազմող բազմաշերտ հանրությունների շահերի իրական ներկայացուցչություն/ բացառիկ կարգավիճակն ու քաղաքական ժողովրդավարական ռեժիմի պայմաններում պետական մեխանիզմում պառլամենտի ունեցած առանձնահատուկ դերը /պառլամենտարիզմ/ թույլ է տալիս ժամանակակից պետության մեջ խոսել նաև գործադիրից բացի այլ ոլորտների վրա տարածվող պառլամենտի համապարփակ վերահսկողության մասին, որը պայմանավորված է նաև այդ հասկացության քաղաքական նշանակությամբ: Այս առումով վերը բերված կարծիքներն անկասկած պայմանավորված են պառլամենտական վերահսկողության հենց այդ բովանդակությամբ:

Մակայն այստեղ անհրաժեշտ է հաշվի առնել մի նկատառում. պառլամենտական վերահսկողության լայն մեկնաբանության շրջանակներում խոսել նաև

³⁷⁶ *Հրանուշ Հակոբյան*, Պառլամենտը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում, Ե. 2007 էջ 95

³⁷⁷ *В.И. Ирхин*, Проблемы правового статуса народа как суверенного носителя власти в государстве /Конституционное и муниципальное право 2010 N3 с. 49

³⁷⁸ *А.Б. Зеленцов*, Контроль за деятельностью исполнительной власти в зарубежных странах. М. 2002 с 13-14,

³⁷⁹ *И.А. Ракитская*, Формы парламентского контроля в Скандинавских странах и Финляндии, автореф. дис. Канд. Юр. Наук М. 2001 с 15

³⁸⁰ *А.А. Керимов*, Парламентаризм в современной России; особенности становления и развития. Дис. Канд. полит. наук, Екатеринбург 2006 с 69

պետության գլխի նկատմամբ վերահսկողության առանձին ուղղության մասին, տարբերելով դա գործադիր իշխանության նկատմամբ իրականացվողից, մեր կարծիքով, այնքան էլ ճիշտ չէ առնվազն երկու պատճառով: Նախ իշխանությունների տարանջատման արդեն հայտնի տեսությունը դեռևս վաղուց հաստակ սահմանել է պետական իշխանության երեք թևերի համակարգը, այն ամրագրվել ու գործում է ժամանակակից ժողովրդավարական երկրների մեծ մասում և հենց այդ դասական տարաբաժանմանը համապատասխան «հակակշիռների և զբալոսների» ամերիկյան համակարգն էլ բավականին հաջող կերպով պետական մեխանիզմի հավասարակշռությունը տեղաբաշխել է երեք հնարավորինս հավասար ուղղություններով: Եվ Լոքի խոսքերով ասած «ստեղծվածը /*օրենսդիր իշխանության կողմից*/ ավելացումը մերն է/ անընդհատ իրագործող» գործադիր իշխանությունն այդ տեսության գիտական էությանը համապատասխան հանդես է գալիս մեկ դեմքով՝ պետության գլխի /թագավոր, նախագահ/ ու կառավարության հետ միասին՝ անկախ նրանից, թե կառավարման ձևից կախված պետական մարմինների համակարգում գործադիր ֆունկցիաներ իրականացնող պետության գլուխն ու կառավարությունը նույնանում են մեկ մարմնի մեջ, թե հիմնական օրենքով երկուսն էլ առանձին նախատեսված են: Վերջին ժամանակներում իրավաբանական գրականության մեջ պետական իշխանության երեք՝ օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերից բացի՝ նախագահական ինքնուրույն ճյուղի գոյության մասին կարծիքները³⁸¹ որպես տեսական ընդհանրացումներ անշուշտ գոյություն ունենալու իրավունք ունեն և հիմնված լինելով առանձին երկրների պետական մեխանիզմի սահմանադրական կարգավորումների՝ դրսևորմամբ իրավական ձևի և պետական իշխանության իրացման պրակտիկ դիտարկումների վրա, անշուշտ, ըստ դրա՝ իմա պետական իշխանության իրացման արտահայտման ձևի, հիմնավորված համարվելու համար որոշակի կովաններից զուրկ չեն, բայց ըստ բովանդակային կողմի ոչ միայն հիմնավոր չեն այլև ինքնահակասության տարրեր պարունակելով մեծ հաշվով հակասում են գիտականորեն ապացուցված ու պետությունների գերակշիռ մասի կողմից ամրագրված իշխանությունների տարանջատման դասական եռաթև սկզբունքին: Իշխանության երեք հայտնի թևերից դուրս իշխանության նոր ճյուղի փնտրտուքները վտանգավոր է համարում «Հայաստանի Հանրապետության սահմանադրության մեկնաբանություններ» հիմնարար աշխատության՝ սահմանադրության 5-րդ հոդվածը մեկնաբանող հեղինակը, ըստ որի դրանք արդյունք են իշխանության գործառնական կամ կառուցակարգային բաժանման շփոթի: Պետության գլխի կարգավիճակն իշխանության նոր ճյուղի առկայությունն չի նշանակում: Այնտեղ, որտեղ կա իշխանությունների բաժանում, այնտեղ չի կարող լինել նախագահական առանձին իշխանություն, որը չի համընկնում գործադիր իշխանության հետ³⁸²: Հետևաբար, Նախագահը դուրս չի մնում իշխանությունների եռաճյուղ բաժանումից, այլ տե-

³⁸¹ *Л.А. Окузьков*, Президент Российской Федерации. Конституция и политическая практика. М. 1996 с 5, 77 Чиркин В. Е. Элементы сравнительного государственоведения. М., 1994 с 18 Չիրկինն իր այս աշխատության մեջ նախագահական իշխանությունն անվանում է արբիտրաժային, Арутюнян А. Институт Президента Республики Армения, Ереван 1996 с 23, Козлова Е. И., Куцафин О.Е. Конституционное право России. М., 1999 с 374

³⁸¹ *Н.А. Сахаров*, Институт президентства с современным мире, М. 1994 с 110, Հղումը ըստ Арутюнян А. Институт Президента Республики Армения, Ереван 1996 с 233

³⁸² Проблемы общей теории права и государства; Учебник для вузов под. Ред. Нерсесянца В.С. М. 2006 с 580

դավորվում է այդ համակարգում: Իշխանությունների եռաթև բաժանման համակարգում Նախագահը համարվում է բարձրագույն գործադիր մարմին, որն իր կողմից ձեռավորված կառավարության հետ մեկտեղ իրականացնում է գործադիր իշխանություն³⁸³:

Ասվածի ամբողջ տրամաբանությունից պարզ է դառնում, որ գործադիր իշխանության գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու պաշլամենտի իրավունքը բնական իրավունք է և ծագում է ժողովրդի սուվերենության սկզբունքից, սակայն պետական իշխանության կոնկրետ մեխանիզմում դրսևորվում է պոզիտիվ իրավունքի միջոցով՝ իշխանությունների տարանջատման սկզբունքը պետական իշխանության համակարգում ամրագրելու ճանապարհով: Այս կապակցությամբ օրենսդիր բարձրագույն մարմին վերահսկողական լիազորություններ վերապահելը արդեն դիտվում է որպես այդ սկզբունքի իրացման հետևանք ժողովրդավարական ժամանակակից պետության մեխանիզմում: Այստեղից նաև բացահայտվում է օրգանական կապը իշխանությունների տարանջատման սկզբունքի և պաշլամենտական վերահսկողության ինստիտուտի միջև և այն անմիջականորեն ենթադրում է գործադիր իշխանության նկատմամբ պաշլամենտական վերահսկողության իրականացում: Ընդ որում այդ կապը միակողմանի չէ, քանի որ անմիջականորեն բխելով վերոնշյալ սկզբունքի էությունից պետական կյանքում իրականացման ճիշտ մեխանիզմների կիրառման պարագայում պաշլամենտական վերահսկողության իրավունքն իր հերթին հանգեցնում է պետության մեջ իշխանությունը թևերի բաժանելու համակարգի ապահովմանը, կայունացնում է բալանսը դրանց միջև և այդպիսով իսկ նպաստում է իշխանությունների տարանջատման սկզբունքի փաստացի իրագործմանը: Հետևապես պետք է ասել, որ պաշլամենտական վերահսկողությունը հակակշիռների և զապումների համակարգում գլխավոր գործող օղակն է իշխանության հատկապես օրենսդիր և գործադիր թևերի փոխհարաբերությունների միջակայքում և հենց այդ օղակի գործունեության միջոցով է ապահովվում իշխանության բոլոր թևերի ինքնուրույնությունը և ըստ այդմ նաև պետական իշխանության իրացման արդյունավետությունն ընդհանրապես: Այն հանդես է գալիս որպես գործադիր իշխանությունը ներկայացնող պաշտոնատար անձանց իրավական պատասխանատվության գործիք և նպաստում է կառավարության աշխատանքի օպտիմալացմանն ու հավասարակշռվածությանը, հասարակության ու պետության ընդհանրական շահերն արտահայտող որոշումների ընդունմանը: Ընդ որում ինչքան կոնկրետ երկրում զարգացած է պաշլամենտական վերահսկողության մեխանիզմը, ինչքան խորն ու լայն են դրա ավանդույթներն ու իրականացման ոլորտները, ինչքան բազմաթիվ ու բազմաբովանդակ են դրա մեթոդները, այնքան հնարավորինս առանձին են իրենց գործառույթներում իշխանության օրենսդիր և գործադիր թևերը և այդքանով պակասում է բնույթով «սահմանախախտ» գործադիր իշխանության կողմից պետական մեխանիզմի հավասարակշռության խախտման հնարավորությունը: Այսինքն պաշլամենտական վերահսկողությունն իր գործունեությամբ հստակ որոշում է օրենսդիր իշխանության գործառնության սահմանը և այդ սահմանաբաժանն այնտեղ է, որտեղ սկսվում են գործադիր ու դատական իշխանությունների լիազորությունները: Իհարկե, այստեղ պետք է

³⁸³ Հայաստանի Հանրապետության սահմանադրության մեկնաբանություններ /Գ. Հարությունյանի ընդհ. Խմբ.-մբ, Ե. 2010 թ էջ 94

նկատել, որ պառլամենտական վերահսկողության վերը նշված որակները առավել զարգանում են ժողովրդավարական կայուն զարգացման ավանդույթներ, հանրային իրավագիտակցության բարձր մակարդակ ունեցող և հանրային կարծիքը բյուրեղացնելու ընդունակությունն ապահովող, պառլամենտարիզմի տեսական պոստուլատները գործադրող, պառլամենտի դերի դոմինանտությամբ կառավարման կարգը պահպանող երկրները: Այդ որակներից գուրկ չեն նաև դասական նախագահական կառավարման ձև ունեցող որոշ երկրներ, ինչպես օրինակ ԱՄՆ-ն, սակայն իրապես բոլոր այդ հատկանշները կարող են դրսևորվել գերազանցապես պառլամենտական հանրապետություններում կամ սահմանադրական միապետություններում, որտեղ պառլամենտարիզմը, որպես օրենսդիր մարմնի գերակայությամբ գործող քաղաքական-պետական հաստատությունների կառավարման փիլիսոփայություն փաստացի ամրագրված է և որտեղ պառլամենտական վերահսկողությունը գործադիր իշխանության նկատմամբ որպես օրենսդիր մարմնի լիազորություն բխում է ոչ միայն այդ մարմինը ձևավորող ժողովրդի բնական իրավունքից, այլև դա կառավարման կենսակերպ է՝ առանձին իրավական ակտերով ու սահմանադրական համաձայնություններով հաստատված: Հետևապես այդպիսի երկրներում պառլամենտական վերահսկողությունը իրերի դրության մեջ է և ոչ այնքան «կարևորվող», մինչդեռ սահմանադրական այդ ինստիտուտի դերն ու նշանակությունը իրապես կարևորվում է կառավարման նախագահական ու կիսանախագահական կարգ ունեցող երկրներում, որտեղ օրենսդրորեն պառլամենտարիզմը որպես կառավարման համակարգ ամրագրված չէ, իսկ պառլամենտը փաստացի երկրորդում է գործադիր իշխանությանը: Դե իսկ պառլամենտական վերահսկողության կազմակերպումն ու իրականացումը ընդհանուր առմամբ կոնկրետ վերցրած երկրում պայմանավորված է բազմաթիվ գործոններով, որոնցից կարևորագույններն ըստ Ջելենցովի պետության ձևն է, իրավական ու մշակութային՝ մեր ավելացմամբ նաև քաղաքական, ավանդույթներն են, պետական կառավարման հրապարակայնությունն ու թափանցիկությունը և այլն³⁸⁴: Այս համատեքստում անհրաժեշտ է համաձայնվել Ռ. Ենգիբարյանի հետ, ըստ որի կոնկրետ քաղաքական ու սոցիալական իրավիճակը, որում գործառնում են ներկայացուցչական ինստիտուտները, էական ազդեցություն է թողնում նրանց գործունեության՝ այդ թվում նաև պառլամենտական վերահսկողության առանձնահատկությունների վրա³⁸⁵: Գործադիր իշխանության նկատմամբ պառլամենտի վերահսկողական լիազորությունների սահմանադրական հիմքը հիմնական օրենքի տեքստում իշխանությունների տարանջատման սկզբունքի ամրագրումն է:

Հայաստանի Հանրապետության սահմանադրությունն իր 5-րդ հոդվածով ամրագրել է այդ սկզբունքը սահմանելով, որ պետական իշխանությունն իրականացվում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման ու հավասարակշռման հիման վրա: Սակայն երկրի հիմնական օրենքը պառլամենտական վերահսկողությունը գործադիր իշխանության նկատմամբ որպես Ազգային ժողովի լիազորությունների առանձին ինստիտուտ չի ամրագրել, այլ բավականացել է միայն պառլամենտական վերահսկողության ֆինանսաբյուջետային ոլորտի առանձնացմամբ 77-րդ հոդվածում սահմանելով Ազգային ժողովի իրա-

³⁸⁴ *А.Б.Зеленцов*, նշվ. աշխ. Էջ 14

³⁸⁵ *Р.В. Енгибарян*, Конституционное развитие в современном мире. Основные тенденции. М. 2007 с 353

վունքը վերահսկողություն իրականացնելու պետական բյուջեի կատարման, ինչպես նաև օտարերկրյա պետություններից ու միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների և վարկերի օգտագործման նկատմամբ: Հայաստանի Հանրապետությունը հետևել է այն երկրներին, որոնք պառլամենտի վերահսկողական լիազորությունների դետալիզացիան իրականացրել են օրենսդիր բարձրագույն մարմնի ամենօրյա աշխատանքի կազմակերպումն ու իրականացումը կանոնավորող առանձնահատուկ իրավական ակտով՝ կանոնակարգօրենքով: Մինչդեռ եվրոպայի բազմաթիվ երկրներ իրենց հիմնական օրենքներում /Բուլղարիայի Հանրապետության սահմ. 62-րդ հոդված, Մոլդովայի Հանրապետության սահմ. 66-րդ հոդված կետ <ֆ>, Լեհաստանի Հանրապետության սահմ. 95-րդ հոդված 2-րդ մաս, Խորվաթիայի Հանրապետության սահմ. 80-րդ հոդված, Սլովակիայի Հանրապետության սահմ. 86-րդ հոդված, Ռեկրահիայի Հանրապետության սահմ. 85-րդ հոդված կետ 13/³⁸⁶ ամրագրելով բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու պառլամենտի իրավունքը նաև առանձին ամրագրել են պառլամենտի վերահսկողության իրավունքը կառավարության գործունեության նկատմամբ ընդհանրապես: Ընդ որում այդ երկրներից Բուլղարիան, Ռեկրահիան, Սլովակիան, Լեհաստանը և Խորվաթիան իրենց սահմանադրությունների համաձայն համարվում են կառավարման խառը /պառլամենտա-նախագահական տարրերի համակցմամբ/ ձև ունեցող երկրներ: Մա ինչպես արդեն ասացինք պառլամենտարիզմին բնորոշ իրավիճակ է և տվյալ դեպքում պետական իշխանությունն իրացնելու կոնկրետ երկրի ժողովրդի ընտրությունը: Սրան պետք է ավելացնել նաև այն ոչ պակաս կարևոր հանգամանքը, որ եթե վերը նշված երկրներից որոշների կառավարման խառը համակարգում քիչ ավելի շատ թեքում կա դեպի պառլամենտական հանրապետություն, ապա պետության գլխի ընդգծված դոմինանտությամբ կառավարման կիսանախագահական ձև ունեցող այնպիսի երկրում ինչպիսին Ռուսաստանի Դաշնությունն է, որտեղ պառլամենտարիզմի ավանդույթներին երկիրը ծանոթացել է 1905 թվականին օրենսդիր մարմնի՝ Պետական Դումայի ստեղծմամբ, սկսած 2005 թ.-ից օրենսդրորեն լուրջ քայլերն են արվում բարձրացնելու պետական Դումայի դերն ու հեղինակությունը պետական մեխանիզմում՝ վերջինիս համար գործադիր իշխանության նկատմամբ իրական վերահսկողություն իրականացնելուն ուղղված իրավական հիմքեր ստեղծելով: Նախ և առաջ մշակվել և ընդունվել է «Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի պառլամենտական քննություն և մասին» ՌԴ օրենքը, 2008թ.-ին սահմանադրության 103-րդ հոդվածում նոր <Վ> կետի ավելացմամբ փոփոխություն կատարելու միջոցով ամրագրվել է կառավարության գործունեության վերաբերյալ ամենամյա հաշվետվությունները լսելու Պետական Դումայի իրավունքը, իսկ 2010թ.-ից մշակվել և Պետական Դումայում շրջանառության մեջ է դրվել «Ռուսաստանի Դաշնության պառլամենտական վերահսկողության մասին» ՌԴ օրենքի նախագիծը, որն առայժմ գործադիր իշխանության դիմադրության պատճառով³⁸⁷ չի հաջողվում օրենք դարձնել: Այս կապակցությամբ ավելորդ չէ նշել, որ իրենք ռուսաստանցի ուսումնասիրողներն են³⁸⁸ փաս-

³⁸⁶ Конституции государств Европы. В 3 томах., Под. Общей ред. Л. А. Окунькова., М. 2001

³⁸⁷ **Տ.Ա. Авакьян**, Современные проблемы конституционного и муниципального строительства в России., Конституционное и муниципальное право N 3 М. 2010 с 8

³⁸⁸ **Տ.Ա. Авакьян**, նշվ. աշխ., Гусаров Д. А. Парламентский контроль и парламентское расследование в Российской Федерации; автореф. дисс. Канд. юр.наук СПб 2005 с 7, Коврякова Е. В. Парламентский

տում, որ պետական իշխանության հորիզոնականում հավասարակշռությունը խախտված է հոգուտ գործադիր իշխանության և նման իրավիճակը վատ է անդրադառնում պետության ամբողջ ֆունկցիոնալ գործունեության վրա: Հայաստանի Հանրապետության համար պետք է ասել, որ թեև 2005թ. –ի նոյեմբերին հանրաքվեով ընդունված սահմանադրական փոփոխությունները պետական իշխանության մարմինների համակարգում ՀՀ Ազգային ժողովի դերի բարձրացման առումով որոշակի դրական տեղաշարժ ապահովեցին, սակայն գործադիր իշխանության նկատմամբ ՀՀ Ազգային ժողովի վերահսկողության իրականացման կոնտեքստում որևէ առաջընթաց չի գրանցվել և այդ ոլորտում պառլամենտի ունեցած գործիքները դեռևս բավականին թույլ են: 2002թ. –ին ուժի մեջ մտած ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգ-օրենքն իր 11-րդ և 14-րդ գլուխներով է կարգավորում ՀՀ ազգային ժողովի վերահսկողական գործառույթը՝ սահմանափակվելով միայն բյուջեի կատարման վերաբերյալ օրենսդիր մարմնին եռամսյա և տարեկան ընդհանուր հաշվետվություններ ներկայացնելու ՀՀ կառավարության պարտավորության ամրագրմամբ, ինչպես նաև պատգամավորներին ու պատգամավորական խմբակցություններին համապատասխանաբար *ամիսը մեկ անգամ* և *յուրաքանչյուր նստաշրջանի ընթացքում* մեկ անգամ կառավարությանը հարցերով ու հարցապնդումներով դիմելու իրավունք վերապահելով:

Егише Базоян – Понятие и содержание парламентского контроля. – Парламентский контроль одна из форм государственного контроля. Носит общий политический и реже – административный характер. Основное значение этого института в парламентарных странах и полупрезидентских республиках сводится к осуществлению контроля со стороны парламента над исполнительной властью или к деятельности правительства. Изучение проблем парламентского контроля в наши дни требует научного осмысления по определении сущности этого термина и из этого вытекает также необходимость раскрытия характерных особенностей института парламентского контроля.

Право парламентского контроля относится к полномочиям защитной деятельности законодательной власти. При этом данное право является ведущим, так как лишь при осуществлении контроля могут быть выявлены какие-либо нарушения или обнаружены возможные пути для их совершенствования, что, в свою очередь, только и может послужить основанием для принятия иных защитных мер.

Сущность контроля в парламенте обусловлена правом народа контролировать деятельность всех структур, которым он передал властные полномочия с учетом современной специфики реализации системы разделения властей. Парламентский контроль необходим, прежде всего, для того, чтобы не позволить администрации узурпировать власти:

Понятие парламентского контроля как юридической категории складывалось в теории конституционного право почти одновременно с возникновением и

контроль в зарубежных странах; автореф. дис.канд. юр. Наук М. 2002 с 3, Իր աշխատության մեջ Կովրյակովան նշում է, որ ՌԴ սահմանադրության ամրագրած պետական մեխանիզմում պառլամենտական թույլ վերահսկողության պատճառով գործադիր իշխանության ներկայացուցիչների կողմից իշխանության չարաշահումներն ու իրավախախտումները սահմանադրության ընդունման առաջին տարիներին սովորական երևույթ էին դարձել:

становлением парламентаризма а особенности и место парламентского контроля как особого вида в системе государственного контроля обусловлены уникальным статусом парламента в государственном механизме среди органов государственной власти.

Yeghishe Bazoyan – *The concept and content of parliamentary control.* – The parliamentary control is one of the type of state control. In generally it have a political character, but some time it may be administrative. The main importance of this institution in parliamentary countries and semipresidential republics comes down of the implementation of control by Parliament over the executive power or activities of the government. The study of the problems of parliamentary control today requires scientific understanding of the definition of the essence of the term and this implies the need disclosure characteristics of the institute of parliamentary control.

The right to parliamentary control refers to the protective powers of legislature. And in this case this right is leading, because only when monitoring can be detect of any infringement or found the possible ways to improve them, which, in turn, can only serve as a basis for the other protective measures.

The control essence in parliament is due to people's right to control the activities of all the structures, which he handed authority, taking into account specifics of the modern system of separation of powers. Parliamentary control is necessary, first of all, in order not to allow the administration to usurp power.

The concept of parliamentary control as a legal category was formed in the theory of constitutional law, almost simultaneously with the emergence and establishment of a parliamentary system. Characteristics and location of parliamentary control as a special type in the system of state control due to an extremely important role of the parliament in the state mechanism.

Տ Ն Տ Ե Ս Ա Գ Ի Տ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

ՀՀ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԱՌԿԱ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԵՌԱ-ՏԱՐԻՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԱԿՄԵԼ ՊՈՏՈՍՅԱՆ, ՇՈՂԻԿ ՔՈԼՅԱՆ

2012 թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ-ի գյուղական առկա բնակչությունը կազմել է 1232118 մարդ, որից 606606-ը (49,2 %-ը) տղամարդիկ, 625512-ը (50,8 %-ը)՝ կանայք: Ըստ հիմնական տարիքային խմբերի այն ունի հետևյալ պատկերը: Մինչև 15 տարեկանները կազմում են ընդհանուր բնակչության 20,5 %-ը, որից 10,8 %-ը՝ տղամարդիկ, 9,7 %-ը՝ կանայք: Աշխատանքային տարիքի բնակչությունը կազմում է 67,3 %-ը (33,4%-ը՝ տղամարդիկ, 33,9 %-ը՝ կանայք), իսկ մեծահասակները՝ 12,2 %-ը (5,1 %-ը՝ տղամարդիկ, 7,1 %-ը՝ կանայք):

ՀՀ գյուղական բնակչության սեռատարիքային կառուցվածքն ըստ մարզերի առանձնանում է որոշակի տարբերություններով, որն ընդհանրացված տեսքով ունի հետևյալ պատկերը:

- 1) Տարիքային հիմնական խմբերից մինչաշխատունակ բնակչության բաժինն առավել բարձր է Գեղարքունիքի (21,9%-ը) և Արագածոտնի (21,6 %-ը) մարզերում: Դրանցում մինչաշխատունակ բնակչության բաժինը հանրապետության միջին ցուցանիշից բարձր է համապատասխանաբար 1,4 և 1,1 տոկոսային կետերով: Գեղարքունիքի մարզում մինչաշխատունակ բնակչության հանրապետության միջինից բարձր տոկոսը պայմանավորված է Մարտունու և Գավառի տարածաշրջանների գյուղական բնակչության ծնելիության համեմատաբար բարձր ցուցանիշներով, իսկ Արագածոտնի մարզում՝ գյուղական բնակչության մեջ եզրի բնակչության առկայությամբ, որոնք ավանդաբար աչքի են ընկնում ծնելիության բարձր ցուցանիշով:
- 2) Գյուղական բնակչության մեջ հանրապետության միջին ցուցանիշից մինչաշխատունակ բնակչության առավել ցածր տոկոս ունեն Լոռու (19,8 %-ը), Վայոց ձորի և Շիրակի (19,8 %-ը) մարզերը: Իսկ Տավուշի, Մյունիքի, Արարատի և Արմավիրի մարզերում այդ ցուցանիշը քիչ է տարբերվում հանրապետության միջին ցուցանիշից (աղ. 1):
- 3) ՀՀ-ում գյուղական բնակչության տարիքային կառուցվածքում աշխատանքային տարիքի բնակչության ամենամեծ բաժին (68,7 %) ունի Կոտայքի մարզը: Արարատի և Արմավիրի մարզերում այդ ցուցանիշը ՀՀ-ի միջինից մեծ է տոկոսային 1,1 կետով, իսկ Գեղարքունիքում՝ հավասար է հանրապետության միջին ցուցանիշին:
- 4) ՀՀ-ում գյուղական բնակչության մեջ աշխատունակ բնակչության ամենավորը (62,7) տոկոսային ցուցանիշ ունի Տավուշի մարզը, որտեղ աշ-

խատունակ բնակչության բաժինը հանրապետության միջինից ցածր է 4,6 %-ով: Այդ ցուցանիշը հանրապետության միջինից ցածր է նաև Սյունիքի (3,2 %-ով), Արագածոտնի (1,4 %-ով), Վայոց ձորի (0,6 %-ով) և Լոռու (0,5 %-ով) մարզերում:

- 5) ՀՀ մարզերի գյուղական բնակչության տարիքային կառուցվածքում առավել ակնհայտ տարբերություններ կան հետաշխատունակ (մեծահասակ) բնակչության մեջ: Այդ ցուցանիշով ամենաբարձր (16,4 %) և ամենացածր (10,8%) տվյալներ ունեցող Տավուշի և Գեղարքունիքի մարզերի միջև տարբերությունը կազմում է 5,6 տոկոսային կետ: Այն հանրապետության միջինից մեծ է նաև Սյունիքի (3,1 %-ով), Լոռու (2,1 %-ով) և Վայոց ձորի (1,5 %-ով) մարզերում: Արագածոտնի և Շիրակի մարզերում այն մոտ է հանրապետության միջին ցուցանիշին, իսկ Կոտայքի, Արարատի և Արմավիրի մարզերում՝ ՀՀ միջին ցուցանիշից ցածր է համապատասխանաբար 1,3, 1,0 և 0,9 տոկոսային կետով:
- 6) Հանրապետության բոլոր մարզերում մինչաշխատունակ բնակչության տարիքային խմբում տղամարդկանց տոկոսային բաժինը գերազանցում է կանանց, իսկ հետաշխատունակ տարիքային խմբում՝ գերազանցում են կանայք: Բացառությամբ Արագածոտնի, Գեղարքունիքի և Վայոց ձորի, մնացած բոլոր մարզերում աշխատունակ տարիքի գյուղական բնակչության մեջ ավելի մեծ տոկոս են կազմում կանայք:

Գիտագործնական և կիրառական տեսակետից առավել մեծ կարևորություն և հետաքրքրություն է ներկայացնում ՀՀ գյուղական առկա բնակչության հիմնական տարիքային խմբերի բաշխման վերլուծությունն ըստ գյուղական համայնքների, որը հնարավորություն է տալիս բացահայտել և առանձնացնել գյուղական համայնքների ու բնակավայրերի այնպիսի խմբեր, որոնք միմյանցից տարբերվում են բնակչության հիմնական տարիքային խմբերին բնորոշ առանձնահատկություններով և դրանց հիման վրա նաև զարգացման միտումներով և հեռանկարով: Այդպիսի խմբերի առանձնացման համար որպես չափորոշիչ (չափանիշ) մեր կողմից ընտրվել է ՀՀ գյուղական առկա բնակչության մեջ հիմնական տարիքային խմբերի հանրապետության միջին տոկոսային ցուցանիշները:

Գյուղական ցանկացած համայնքի ու բնակավայրի զարգացման և հեռանկարի առումով կարևորագույն դեր ունի բնակչության տարիքային կառուցվածքում աշխատունակ բնակչության տեսակարար կշիռը: Դրա համեմատաբար բարձր ցուցանիշի դեպքում բնակավայրը կարող է ապահովված լինել աշխատանքային ռեսուրսներով (երբեմն ունենալ նաև աշխատանքային ռեսուրսների ավելցուկ), իսկ ցածր լինելու դեպքում՝ ունենալ աշխատանքային ռեսուրսների պակաս: Բացի դրանից գյուղական բնակավայրերում աշխատանքային տարիքի բնակչության բարձր ցուցանիշը նպաստում է գյուղատնտեսության աշխատատար և ինտենսիվ ճյուղերի զարգացմանը և բնակավայրի սոցիալ-տնտեսական առաջընթացին, իսկ աշխատանքային տարիքի կամ աշխատանքային ռեսուրսների ցածր տոկոսի դեպքում գյուղատնտեսության ինտենսիվացման և բնակավայրի սոցիալ-տնտեսական զարգացման հնարավորությունները նվազում են:

ՀՀ գյուղական բնակչության բաշխումն ըստ հիմնական տարիքային խմբերի և սեռի
01.01.2012 թ.³⁸⁹

Մարզեր	Ընդամենը՝ բացարձակ թվերով և %-ով			Տղամարդիկ, բացարձակ թվերով և %-ով			Կանայք, բացարձակ թվերով և %-ով			ընդամենը ամբողջ բնակչությունը (%-ով)
	մինչաշխատունակ	աշխատունակ	հետաշխատունակ	մինչաշխատունակ	աշխատունակ	հետաշխատունակ	մինչաշխատունակ	աշխատունակ	հետաշխատունակ	
Արագածոտն	24988/21.6	76357/65.9	14485/12.5	13228/11.4	38200/33.0	6181/5.3	11760/10.2	38157/32.9	8304/7.2	115916/100
Արարատ	42888/20.4	143917/68.4	23640/11.2	22205/10.6	71318/33.9	9749/4.6	20683/9.8	72599/34.5	13891/6.6	210445/100
Արմավիր	41813/20.3	141085/68.4	23216/11.3	21986/10.7	69384/33.6	9480/4.6	19827/9.6	71701/34.8	13736/6.7	206114/100
Գեղարքունիք	36423/21.9	112221/67.3	18122/10.8	19316/11.6	56714/34.0	8077/4.8	17107/10.3	55507/33.3	10045/6.0	166766/100
Լոռի	22014/18.9	77536/66.8	16600/14.3	11684/10.0	38520/33.2	6663/5.7	10330/8.9	39016/33.6	9937/8.6	116150/100
Վոտայք	25528/20.4	86036/68.7	13726/10.9	13500/10.8	41997/33.5	5575/4.4	12028/9.6	44039/35.2	8151/6.5	125290/100
Շիրակ	24743/19.8	85076/68.1	15041/12.1	13016/10.4	42237/33.8	6356/5.1	11727/9.4	42839/34.3	8685/7.0	124860/100
Սյունիք	10140/20.6	31565/64.1	7552/15.3	5246/10.7	15627/31.8	3196/6.5	4894/9.9	15938/32.3	4356/8.8	49257/100
Վայոց Ձոր	7500/19.6	25427/66.7	5203/13.7	4006/10.5	12800/33.6	2152/5.6	3494/9.1	12627/33.1	3051/8.1	38130/100
Տավուշ	16588/20.9	49629/62.7	5203/13.7	8681/10.7	24124/30.5	5347/6.8	7907/10.2	25505/32.2	7626/9.6	79190/100
ՀՀ-ում	252625/20.5	828849/67.3	150558/12.2	132868/10.8	410912/33.4	62776/5.1	119757/9.7	417928/33.9	87782/7.1	1232118/100

³⁸⁹ Աղյուսակը կազմված է 01.01.2012 թ. դրությամբ «ՀՀ գյուղական բնակչության սեռատարիքային կազմի մասին» պետական վիճակագրական հաշվետվության տվյալներով:

Ինչպես արդեն նշել ենք, ՀՀ-ի գյուղական բնակչության մեջ աշխատանքային տարիքի բնակչությունը կազմում է 67,3%: Այդ ցուցանիշը հանրապետության միջինից բարձր է կամ հավասար ՀՀ գյուղական համայնքների 48,7 %-ում (421 գյուղական համայնքում): Մնացած 444 գյուղական համայնքում այն ցածր է ՀՀ միջին ցուցանիշից: Աշխատունակ բնակչության տոկոսային մեծությամբ ՀՀ միջինից տոկոսային բարձր ցուցանիշ ունեցող գյուղական համայնքներն առավել մեծ թիվ են կազմում Արմավիրի, Արարատի, Կոտայքի և Շիրակի մարզերում, իսկ ավելի փոքր՝ Տավուշի, Սյունիքի և Լոռու մարզերում: Տավուշի մարզի 57 գյուղական համայնքից 52-ում աշխատունակ բնակչության բաժինը ցածր է ՀՀ-ի միջին ցուցանիշից: Մարզի բոլոր երեք տարածաշրջանների գյուղական համայնքների բնակչության մեջ աշխատունակ բնակչության տոկոսը ցածր է ՀՀ-ի միջինից, 16 գյուղական համայնքում (գյուղական համայնքների 28,1 %-ը) այն չի հասնում նույնիսկ 60 %-ի, իսկ Բարեկամավան համայնքում՝ կազմում է ընդամենը 45,7 %:

Սյունիքի մարզում գյուղական համայնքներից աշխատունակ բնակչության առավել ցածր տեսակարար կշիռ ունեն Մեղրու և Կապանի տարածաշրջանները: Կապանի տարածաշրջանի 35 գյուղական համայնքներից ընդամենը 4-ում է աշխատունակ բնակչության բաժինը գերազանցում ՀՀ-ի միջին ցուցանիշը, իսկ Մեղրու տարածաշրջանում՝ 11 գյուղական համայնքից մեկում: Բացի այդ, Կապանի տարածաշրջանի 35 գյուղական համայնքներից 15-ում աշխատունակ բնակչության տոկոսը չի անցնում 60-ից, իսկ 4 գյուղական համայնքում (Կաղնուտ, Ձորաստան, Վանք և Վերին Խոտանան) այդ ցուցանիշը տատանվում է 44-ից 50%-ի սահմաններում:

Չնայած որ Սյունիքի մարզի Գորիսի և Սիսիանի տարածաշրջաններում գյուղական համայնքների թվաքանակում Կապանի և Մեղրու տարածաշրջանների համեմատությամբ ավելի շատ գյուղական համայնքներում (14 համայնքում) է աշխատունակ բնակչության տոկոսը բարձր ՀՀ միջին ցուցանիշից, սակայն այս տարածաշրջանների 41 գյուղական համայնքում՝ (գյուղական համայնքների 74,5 %-ում) աշխատունակ բնակչության մասնաբաժինը ցածր է ՀՀ միջին ցուցանիշից, իսկ 15 գյուղական համայնքում այն պակաս է 60 %-ից: Լոռու մարզում գյուղական համայնքների ավելի քան 58 %-ում (105-ից՝ 61-ում) աշխատունակ բնակչության բաժինը ցածր է հանրապետության միջին ցուցանիշից: Ըստ տարածաշրջանների պատկերն այսպիսին է: Գուգարքի տարածաշրջանի՝ 15, Թումանյանի՝ 20, Սպիտակի՝ 7, Ստեփանավանի՝ 8 և Տաշիրի՝ 11 գյուղական համայնքում աշխատունակ բնակչության բաժինը ցածր է հանրապետության միջին ցուցանիշից: Սիսիանի Թումանյանի ու Գուգարքի տարածաշրջանների 13 գյուղական համայնքում աշխատունակ բնակչության բաժինը չի գերազանցում 60 %-ը, Արդվի, Դսեղ, Շամուտ, Չկալով, Ձորագյուղ և Քարաբարդ գյուղական համայնքներում այդ ցուցանիշը տատանվում է 43,0-ից 47,6 %-ի սահմաններում, իսկ Ազնվածոր գյուղում, որտեղ 2012 թ, հունվարի 1-ի դրությամբ առկա բնակչությունը կազմել է 418 մարդ, աշխատունակ բնակչությունը կազմում էր ընդամենը 36 %: Մարզի տարածաշրջաններից աշխատունակ բնակչության տեսակարար կշիռը համեմատաբար բարձր է Սպիտակի (20-ից 13-ում) և Ստեփանավանի (18-ից 10-ը) տարածաշրջանների գյուղական համայնքներում:

ՀՀ մարզերի գյուղական համայնքների բնակչության հիմնական տարիքային խմբերի տոկոսային մեծությամբ ՀՀ միջինից բարձր և ցածր ցուցանիշ ունեցող գյուղական համայնքների թիվը (01.01.2012 թ.)³⁹⁰

ՀՀ մարզերը	Աշխատունակ բնակչության տոկոսային մեծությամբ ՀՀ միջին ցուցանիշից բարձր և ցածր ցուցանիշ ունեցող գյուղական համայնքների թիվը		Հետաշխատունակ բնակչության տոկոսային մեծությամբ ՀՀ միջին ցուցանիշից բարձր և ցածր ցուցանիշ ունեցող գյուղական համայնքների թիվը		Մինչաշխատունակ բնակչության տոկոսային մեծությամբ ՀՀ միջին ցուցանիշից բարձր և ցածր ցուցանիշ ունեցող գյուղական համայնքների թիվը		Ընդամենը թվերով և տոկոսներով
	բարձր	ցածր	բարձր	ցածր	բարձր	ցածր	
Արագածոտն	53/47.3 ³⁹¹	59/52.7	43/38.4	69/61.6	58/51.8	54/48.2	112/100
Արարատ	63/67.7	30/32.3	28/30.1	65/69.6	41/44.1	52/55.9	93/100
Արմավիր	65/69.1	29/30.9	24/25.5	70/74.5	41/43.6	53/56.4	94/100
Գեղարքունիք	41/48.2	45/51.8	35/40.7	51/59.3	49/57.0	37/43.0	86/100
Լոռի	44/41.9	61/58.1	73/69.5	32/30.5	39/37.1	66/62.9	105/100
Կոտայք	40/66.7	20/33.3	17/28.3	43/71.7	25/41.7	35/58.3	60/100
Շիրակ	70/66.7	45/33.3	40/34.8	75/65.2	49/42.6	66/57.4	115/100
Սյունիք	19/18.8	82/81.2	81/80.2	20/19.8	44/42.6	57/57.4	101/100
Վայոց Ձոր	21/50.0	21/50.0	28/66.7	14/33.3	11/26.2	31/73.8	42/100
Տավուշ	5/8.8	52/91.2	49/86.0	8/14.0	31/54.4	26/45.6	57/100
ՀՀ-ում	421/48.7	444/51.3	418/48.3	447/51.7	388/44.9	477/55.1	865/100

Արագածոտնի և Գեղարքունիքի մարզերում ևս գյուղական համայնքների ընդ-հանուր թվաքանակում գերակշռում են այն համայնքները, որոնցում աշխատունակ բնակչության բաժինը ցածր է հանրապետության միջին ցուցանիշից (աղ. 1): Արագածոտնի մարզում աշխատունակ բնակչության հանրապետության միջինից ցածր տոկոս ունեցող գյուղական համայնքները գերակշռում են Արագածի (22-ից՝ 19-ը) և Թալինի (40-ից՝ 24-ը) տարածաշրջաններում: Արագածի տարածաշրջանի 14 գյուղական համայնքում աշխատունակ բնակչության բաժինը տատանվում է 41,5-ից 58,6 %-ի սահմաններում: Մարզի մյուս՝ Աշտարակի և Ա-

³⁹⁰ Աղյուսակը կազմած 01.01.2012 թ. դրությամբ «ՀՀ գյուղական բնակչության սեռատարիքային կազմի մասին» պետական վիճակագրական հաշվետվության տվյալներով:

³⁹¹ Համարիչում՝ գյուղական համայնքների թիվը, հայտարարում՝ նույնը՝ տոկոսով:

պարանի տարածաշրջաններում գերակշռում են աշխատունակ բնակչության տոկոսային մեծությամբ հանրապետության միջինից բարձր ցուցանիշ ունեցող գյուղական համայնքները: Գեղարքունիքի մարզի Սևանի, Գավառի և Մարտունու տարածաշրջաններում գերակշռում են աշխատունակ բնակչության մասնաբաժնով ՀՀ-ի միջին ցուցանիշից բարձր տոկոս ունեցող գյուղական համայնքները, իսկ Կրասնոսելսկի և Վարդենիսի տարածաշրջաններում՝ գերակշռում են ՀՀ միջին ցուցանիշից ցածր տոկոս ունեցող գյուղական համայնքները:

Վայոց ձորի մարզում աշխատունակ բնակչության տոկոսային մեծությամբ ՀՀ միջին ցուցանիշից բարձր և ցածր ցուցանիշ ունեցող գյուղական համայնքների թիվը հավասար է, սակայն Վայքի տարածաշրջանում առավել շատ են ցածր ցուցանիշ ունեցող գյուղական համայնքները, իսկ Եղեգնաձորի տարածաշրջանում՝ հակառակը:

Արմավիրի, Արարատի, Կոտայքի և Շիրակի բոլոր տարածաշրջաններում, բացառությամբ Ամասիայի տարածաշրջանի, որտեղ աշխատունակ բնակչության տոկոսային մեծությամբ հանրապետության միջին ցուցանիշից բարձր և ցածր ցուցանիշ ունեցող համայնքների թվերն իրար հավասար են, մնացած բոլոր տարածաշրջաններում գերակշռում են աշխատունակ բնակչության տոկոսային մեծությամբ հանրապետության միջինից բարձր ցուցանիշ ունեցող գյուղական համայնքները:

Այսպիսով, ՀՀ գյուղական համայնքների աշխատունակ բնակչության տարածքային տարբերությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ.

- 1) ՀՀ գյուղական համայնքների բնակչության տարիքային կառուցվածքում աշխատունակ բնակչության տոկոսային մեծությունն ունի տարածաշրջանային զգալի տարբերություններ,
- 2) ՀՀ-ում առավելապես կենտրոնական դիրք ունեցող և մայրաքաղաքին մոտ ընկած Արմավիրի, Արարատի, Կոտայքի և Շիրակի մարզերում առավել մեծ թիվ են կազմում ՀՀ միջին ցուցանիշի համեմատ աշխատունակ բնակչության ավելի բարձր տոկոս ունեցող գյուղական համայնքները: Դրանց 362 համայնքից 235-ում (65,7 %) աշխատունակ բնակչության բաժինը բարձր է ՀՀ միջին ցուցանիշից: Նշված մարզերի բոլոր տարածաշրջաններում, բացառությամբ Ամասիայի, առավել մեծ թիվ են կազմում ՀՀ միջին ցուցանիշի համեմատ աշխատունակ բնակչության ավելի մեծ տոկոս ունեցող գյուղական համայնքները,
- 3) Տավուշի, Սյունիքի, Լոռու, Արագածոտնի և Գեղարքունիքի մարզերում, (որոնք առանձնանում են լեռնային բարդ ռելիեֆով, սոցիալ-տնտեսական զարգացման առավել սուր հիմնախնդիրներով, իսկ Տավուշի, Սյունիքի և Գեղարքունիքի մարզերը՝ նաև սահմանամերձ դիրքով) ավելի մեծ թիվ են կազմում ՀՀ միջին ցուցանիշի համեմատ աշխատունակ բնակչության ավելի ցածր տոկոս ունեցող գյուղական համայնքները: Դրանց 461 գյուղական համայնքից 299-ում (64,8%) աշխատունակ բնակչության բաժինը ցածր է ՀՀ միջին (67,3%) ցուցանիշից: Բացի Աշտարակի, Ապարանի, Գավառի, Մարտունու, Սևանի, Սպիտակի և Ստեփանավանի տարածաշրջաններից, այդ մարզերի մնացած բոլոր տարածաշրջանների գյուղական համայնքների թվաքանակում գերակշռում են աշխատունակ բնակչության ՀՀ միջին ցուցանիշից ցածր ցու-

ցանիշ ունեցող գյուղական համայնքները:

Գյուղական բնակավայրերի զարգացման և հեռանկարի առումով բացի աշխատունակ բնակչության տեսակարար կշռից էական դեր ունի նաև մեծահասակ բնակչության մասնաբաժինը բնակչության ընդհանուր թվաքանակում: Վերջինիս բարձր լինելու դեպքում նվազում են տվյալ բնակավայրի բնակչության վերարտադրության ցուցանիշները և մեծանում բնակչության ծերացման նախադրյալները, որոնք իրենց բացասական ազդեցությունն են թողնում բնակավայրի սոցիալ-տնտեսական զարգացման ու առաջընթացի վրա և հարյուրավոր փոքր ու միջին մեծության գյուղեր կարող են հայտնվել բնագրկման վտանգի առաջ:

Հայաստանի Հանրապետության 418 (48,3 %) գյուղական համայնքում մեծահասակ բնակչության մասնաբաժինը բարձր է միջին հանրապետական ցուցանիշից (12,2%-ից): Տավուշի, Սյունիքի, Լոռու և Վայոց ձորի մարզերում ակնհայտորեն գերակշռում են մեծահասակ բնակչության տոկոսային բարձր ցուցանիշ ունեցող գյուղական համայնքները: Այդ մարզերի 305 գյուղական համայնքներից 231-ում (75,7 %) մեծահասակ բնակչության մասնաբաժինը բարձր է հանրապետության միջին ցուցանիշից:

Այդպիսի գյուղական համայնքներն առավել բարձր (86%) տեսակարար կշիռ ունեն Տավուշի մարզում: Մարզի 57 համայնքից 38-ում (66,7%) մեծահասակ բնակչության բաժինը մեծ է 15 %-ից, իսկ 9-ը գյուղական համայնքում՝ 20 %-ից: Զորական, Ծաղկավան, Մոսեսգեղ և Չինչին գյուղերում մեծահասակ բնակչությունը 25 %-ից ավելին է, իսկ Բարեկամավան գյուղում կազմում է 37,5 %:

Սյունիքի մարզի բոլոր տարածաշրջաններում ևս ավելի մեծ թիվ են կազմում մեծահասակ բնակչության տոկոսային մեծությամբ ՀՀ միջին ցուցանիշը գերազանցող գյուղական համայնքները: Մեղրու տարածաշրջանում այդպիսիք են 11-ից 10-ը, Կապանի տարածաշրջանում՝ 35-ից 32-ը, Գորիսի տարածաշրջանում՝ 23-ից 16-ը և Միսիանի տարածաշրջանում՝ 32-ից 18-ը: Մտահոգիչ է այն փաստը, որ Սյունիքի մարզում զգալի թիվ (42) են կազմում այն գյուղական համայնքները, որոնց բնակչության տարիքային կառուցվածքում մեծահասակ բնակչության բաժինն անցում է 20 %-ից: Միայն Կապանի տարածաշրջանում այդպիսիք են 35 գյուղական համայնքից 23-ը, իսկ 17 գյուղական համայնքում այդ ցուցանիշը գերազանցում է 25 %-ը: Կապանի տարածաշրջանի Առաջաձոր, Նորաշենիկ, Չափնի, Սևաքար, Վերին Խոտանան, Մեղրու տարածաշրջանի Գուղեմնիս և Կուրիս, Միսիանի տարածաշրջանի Թանահատ, Լձեն և Գորիսի տարածաշրջանի Քաշունի գյուղական համայնքներում մեծահասակ բնակչության տեսակարար կշիռը ավելի քան 2,5 անգամ գերազանցում է հանրապետության միջին ցուցանիշը: Մի շարք համայնքներում մեծահասակ բնակչության բաժինը ՀՀ-ի միջին ցուցանիշը գերազանցում է ավելի քան երեք անգամ:

ՀՀ-ի գյուղական համայնքների բնակչության տարիքային կառուցվածքում մեծահասակ բնակչության բաժինը հանրապետության միջին ցուցանիշից բարձր է նաև (69,5 %) Լոռու մարզում: Այդպիսի գյուղական համայնքների բացարձակ թվով (73) այն զիջում է միայն Սյունիքի մարզին: Մարզի բոլոր տարածաշրջաններում գյուղական համայնքների կեսից ավելին ունեն մեծահասակ բնակչության 12,2%-ից բարձր ցուցանիշ, սակայն դրանք առավել մեծ թիվ են կազմում Թումանյանի տարածաշրջանում՝ 27 գյուղական համայնքից 24-ը: Մարզի 10-ը գյուղական համայնքի բնակչության տարիքային կառուցվածքում մեծահասակ բնակչության

չության մասնաբաժինը 25 %-ից ավելի է, իսկ դրանցից 5-ում` 30 %-ից ավելի:

Վայոց ձորի մարզում ՀՀ միջին ցուցանիշից բարձր մեծահասակ բնակչություն ունեցող գյուղական համայնքների թիվը երկու անգամ գերազանցում է մնացածին: Վայքի տարածաշրջանում այդպիսիք են 16 գյուղական համայնքից 14-ը, իսկ Եղեգնաձորի տարածաշրջանում` 26-ից 14-ը: Եղեգնաձորի տարածաշրջանի Գողթանիկ և Հորս գյուղերում մեծահասակ բնակչության տոկոսն անցնում է 25-ից:

Գյուղական համայնքների բնակչության տարիքային կառուցվածքում մեծահասակ բնակչության մասնաբաժնի առավել բարենպաստ պայմաններ ունեն Արմավիրի, Կոտայքի, Արարատի, Շիրակի, Արագածոտնի և Գեղարքունիքի մարզերը: Այդ մարզերի 560 գյուղական համայնքներից 373-ում (66,6%) մեծահասակ բնակչության բաժինը ցածր է հանրապետության միջին ցուցանիշից: Բացառությամբ այդ մարզերի մեջ Կրասնոսելսկի, Վարդենիսի և Արթիկի տարածաշրջանների մնացած բոլոր տարածաշրջաններում գյուղական համայնքների թվաքանակում ավելի մեծ թիվ են կազմում բնակչության տարիքային կառուցվածքում հանրապետության միջին ցուցանիշից մեծահասակ բնակչության ավելի ցածր տեսակարար կշիռ ունեցող գյուղական համայնքները:

Ընդհանրացնելով ՀՀ գյուղական համայնքների բնակչության տարիքային կառուցվածքում հետաշխատունակ բնակչության տարածաշրջանային տարբերությունների վերլուծությունը կարող ենք եզրակացնել, որ.

- 1) Հանրապետությունում ծայրամասային ու սահմանային դիրք զբաղեցնող Սյունիքի, Վայոց ձորի և Տավուշի, ինչպես նաև սոցիալ-տնտեսական զարգացման սուր հիմնախնդիրներով աչքի ընկնող Լոռու մարզերի բոլոր տարածաշրջանների գյուղական համայնքների թվաքանակում ավելի մեծ տոկոս են կազմում մեծահասակ բնակչության ՀՀ միջին ցուցանիշից ավելի բարձր ցուցանիշ ունեցող գյուղական համայնքները, որն իր բացասական ներգործությունն է ունենում այդ գյուղական համայնքների ինչպես ժողովրդագրական իրավիճակի, այնպես էլ դրանց սոցիալ-տնտեսական զարգացման վրա,
- 2) Ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական զարգացման համար գյուղական համայնքների բնակչության տարիքային կառուցվածքում մեծահասակ բնակչության տոկոսային ցուցանիշի քիչ թե շատ բարենպաստ պայմաններ ունեն Արմավիրի, Արարատի, Կոտայքի, Արագածոտնի և Գեղարքունիքի մարզերը:

Իրենց նշանակությամբ գյուղական բնակավայրի բնակչության տարիքային կառուցվածքում առանձնահատուկ դեր ունեն մինչաշխատունակ բնակչության բացարձակ թիվը և տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր թվաքանակում: Դրա մեծությամբ է պայմանավորված գյուղական բնակավայրերում կրթամշակութային, առողջապահական, սպորտային և սոցիալական որոշակի ծառայությունների զարգացման մակարդակը, աշխատանքային տարիքի բնակչության համալրումը նորերով և սոցիալ-տնտեսական բնույթի մի շարք այլ խնդիրների լուծումը: ՀՀ-ի պարագայում գյուղական բնակավայրերի բնակչության տարիքային կառուցվածքում մինչաշխատունակ բնակչության բացարձակ թիվը և տոկոսային մեծությունն ունեն բացառիկ դեր և նշանակություն, քանի որ հանրապետության հարյուրավոր գյուղական բնակավայրերում կրթամշակութային և ա-

ռողջապահական հաստատությունների պահպանումն ու հետագա զարգացումը մեծապես պայմանավորված են նաև տվյալ գյուղական բնակավայրի բնակչության տարիքային կառուցվածքով, մասնավորապես՝ դպրոցահասակ երեխաների թվաքանակով:

Ի տարբերություն բնակչության աշխատունակ և հետաշխատունակ տարիքային խմբերի, ՀՀ գյուղական համայնքների թվաքանակում մինչաշխատունակ բնակչության տոկոսային մեծությամբ հանրապետության միջինից (20,5%) մեծ և փոքր ցուցանիշ ունեցող գյուղական համայնքների թվաքանակների միջև տարբերությունն էլ ավելի մեծ է (աղ. 2): Մինչաշխատունակ բնակչության տոկոսային մեծությամբ ՀՀ-ի միջին ցուցանիշից փոքր մեծություն ունեցող բնակավայրերի թիվը 10,6%-ով գերազանցում է հանրապետության միջինից մեծ ցուցանիշ ունեցող գյուղական համայնքների թվին: ՀՀ 10-ը մարզերից յոթում, բացի Արագածոտնից, Գեղարքունիքից և Տավուշից, գյուղական համայնքների թվաքանակում ավելի մեծ թիվ են կազմում մինչաշխատունակ բնակչության տոկոսային մեծությամբ ՀՀ-ի միջին ցուցանիշից փոքր մեծություն ունեցող գյուղերը: Այդ յոթ մարզերի 610 գյուղական համայնքից 361-ում (59,2 %) մինչաշխատունակ բնակչության տոկոսային մեծությունը փոքր է ՀՀ (20,5 %) միջին ցուցանիշից:

Այդպիսի գյուղական համայնքներն ավելի մեծ տոկոս են կազմում Վայոց ձորում: Եղեգնաձորի տարածաշրջանում նման ցուցանիշ ունեն 26 գյուղական համայնքից 23-ը, Վայքի տարածաշրջանում՝ 16-ից 8-ը: Լոռու մարզի չորս տարածաշրջաններում, բացի Տաշիրից, գյուղական համայնքների թվաքանակում ավելի մեծ թիվ են կազմում մինչաշխատունակ բնակչության տոկոսային մեծությամբ ՀՀ միջին ցուցանիշից փոքր մեծություն ունեցող գյուղական համայնքները: Ստեփանավանի տարածաշրջանում այդ ցուցանիշն ամենաբարձրն է՝ 78 %:

Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Արարատի և Արմավիրի մարզերում, բացի Ամասիայի, Աշոցքի, Գորիսի, Սիսիանի և Արարատի տարածաշրջաններից, մնացած տարածաշրջանների գյուղական համայնքների թվաքանակում ավելի մեծ թիվ են կազմում մինչաշխատունակ բնակչության տոկոսային մեծությամբ ՀՀ միջին ցուցանիշից փոքր մեծություն ունեցող բնակավայրերը: Հրազդանի տարածաշրջանում այդպիսի գյուղական համայնքների թիվը իրար հավասար է:

Գեղարքունիքի և Տավուշի մարզում, չնայած, որ գյուղական համայնքների ընդհանուր թվաքանակում գերակշռում են մինչաշխատունակ բնակչության տոկոսային մեծությամբ ՀՀ միջին ցուցանիշը գերազանցող գյուղական համայնքները, սակայն Գավառի, Կրասնոսելսկի, Տավուշի և Նոյեմբերյանի տարածաշրջաններում ավելի մեծ թիվ են կազմում այդ ցուցանիշից փոքր մեծություն ունեցող գյուղական համայնքները: Նմանատիպ պատկեր կան նաև Արագածոտնի մարզում: Այստեղ ևս, չնայած գյուղական համայնքների 51,8 %-ը կազմող բնակավայրերում մինչաշխատունակ բնակչության տոկոսային մեծությունը բարձր է ՀՀ-ի միջին ցուցանիշից, սակայն մարզի Աշտարակի և Ապարանի տարածաշրջաններում 50 գյուղական համայնքներից 39-ում մինչաշխատունակ բնակչության տոկոսային մեծությունը փոքր է ՀՀ միջին ցուցանիշից՝ 20,5 %-ից:

Այսպիսով, ՀՀ գյուղական համայնքների բնակչության մինչաշխատունակ տարիքային խմբի տարածաշրջանային վերլուծությունը ցույց է տալիս, որ 37 տարածաշրջանից 23-ում ավելի մեծ թիվ են կազմում մինչաշխատունակ բնակչության տոկոսային մեծությամբ ՀՀ միջին ցուցանիշից փոքր մեծություն ունեցող գյուղական համայնքները:

ՀՀ տարածաշրջանների գյուղական համայնքների բնակչության հիմնական տարիքային խմբերի տոկոսային մեծությամբ ՀՀ միջինից բարձր և ցածր ցուցանիշ ունեցող գյուղական համայնքների թիվը (01.01.2012 թ.)³⁹²

Մարզերը և տարածաշրջանները	Գյուղական համայնքների ընդհանուր թիվը	Աշխատունակ բնակչության տոկոսային մեծությամբ ՀՀ միջին ցուցանիշից բարձր և ցածր ցուցանիշ ունեցող գյուղական համայնքների թիվը		Հետաշխատունակ բնակչության տոկոսային մեծությամբ ՀՀ միջին ցուցանիշից բարձր և ցածր ցուցանիշ ունեցող գյուղական համայնքների թիվը		Մինչաշխատունակ բնակչության տոկոսային մեծությամբ ՀՀ միջին ցուցանիշից բարձր և ցածր ցուցանիշ ունեցող գյուղական համայնքների թիվը	
		բարձր	ցածր	բարձր	ցածր	բարձր	ցածր
Արագածոտնի մարզ	112	53/47,3	59/52,7	43/38,4	69/61,6	59/51,8	53/48,2
Արագածի	22	3	19	7	15	20	2
Աշտարակի	30	21	9	11	19	7	23
Ապարանի	20	13	7	9	11	4	16
Թալինի	40	16	24	16	24	28	12
Արարատի մարզ	93	63/67,7	30/32,3	28/30,1	65/69,9	41/44,1	52/55,9
Արտաշատի	38	29	9	9	29	11	27
Արարատի	29	15	14	11	18	18	11
Մասիսի	26	19	7	8	18	12	14
Արմավիրի մարզ	94	65/69,1	29/30,9	24/25,5	70/74,5	41/43,6	53/56,4
Արմավիրի	37	21	16	15	22	17	20
Բաղրամյանի	15	13	2	1	14	7	8
Էջմիածնի	42	31	11	8	34	17	25
Գեղարքունիքի մարզ	86	41/48,2	45/51,8	35/40,7	51/59,3	49/57,0	37/43,0
Գավառի	11	9	2	1	10	2	9
Կրասնոսելյակի	14	3	11	12	2	5	9
Մարտունու	16	11	5	0	16	14	2
Սևանի	10	7	3	3	7	6	4
Վարդենիսի	35	11	24	19	16	22	13
Լոռու մարզ	105	44/41,9	61/58,1	73/69,5	32/30,5	39/37,1	66/62,9
Գուգարքի	21	6	15	16	5	8	13
Թումանյանի	27	7	20	24	3	8	19
Սյիտակի	20	13	7	11	9	8	12
Ստեփանավանի	18	10	8	12	6	4	14
Տաշիրի	19	8	11	10	9	11	8
Կոտայքի մարզ	60	40/66,7	20/33,3	17/28,3	43/71,7	25/41,7	35/58,3
Կոտայքի	30	19	11	9	21	12	18
Նաիրիի	16	12	4	3	13	6	10
Հրազդանի	14	9	5	5	9	7	7
Շիրակի մարզ	115	70/66,7	45/33,3	40/34,8	75/65,2	49/42,6	66/57,4
Ախուրյանի	33	24	9	11	22	7	26
Ամասիայի	18	9	9	1	17	11	7
Անիի	16	11	5	4	12	7	9
Աշոցքի	25	14	11	11	14	15	10

³⁹² Աղյուսակը կազմած է 01.01.2012 թ. դրությամբ «ՀՀ գյուղական բնակչության սեռատարիքային կազմի մասին» պետական վիճակագրական հաշվետվության տվյալներով:

Արթիկի	23	12	11	13	10	9	14
Մյունիքի մարզ	101	19/18,8	82/81,2	81/80,2	20/19,8	44/43,6	57/56,4
Գորիսի	23	5	18	16	7	17	6
Կապանի	35	4	31	32	3	5	30
Մեղրու	11	1	10	10	1	3	8
Միսիսի	32	9	23	23	9	19	13
Վայոց ձորի մարզ	42	21/50,0	21/50,0	28/66,7	14/33,3	11/26,2	31/73,8
Եղեգնաձորի	26	18	8	14	12	3	23
Վայքի	16	3	13	14	2	8	8
Տավուշի մարզ	57	5/8,8	52/91,2	49/86,0	8/14,0	31/54,4	26/45,6
Իջևանի	24	2	22	19	5	19	5
Նոյեմբերյանի	17	2	15	14	3	7	10
Տավուշի	16	1	15	16	0	5	11
Ընդամենը ՀՀ-ում	865	421/48,7	444/51,3	418/48,3	447/51,7	387/44,7	478/55,3

Այսպիսով, ՀՀ գյուղական առկա բնակչության սեռատարիքային կառուցվածքի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ.

- 1) Վերջին տարիներին ՀՀ-ում ստեղծված սոցիալ-տնտեսական իրավիճակն իր անմիջական ազդեցությունն է թողել գյուղական բնակչության սեռատարիքային կառուցվածքի վրա,
- 2) Հանրապետության մարզերի և տարածաշրջանների գյուղական բնակչության բաշխումն ըստ հիմնական տարիքային խմբերի և սեռի ունի նկատելի տարբերություններ, որն առավել ցայտուն է դրսևորվում գյուղական համայնքների մակարդակով:
- 3) հանրապետության հարյուրավոր գյուղական համայնքներում և բնակավայրերում առաջացել է առկա բնակչության տարիքային հիմնական խմբերի ոչ նպաստավոր իրավիճակ, մասնավորապես տարիքային հիմնական խմբերի տոկոսային մեծությունների նկատելի շեղումներ հանրապետության միջին ցուցանիշից, որն իր անմիջական ազդեցությունն է թողնում այդ գյուղերի ժողովրդագրական գործընթացների և բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման վրա,
- 4) ՀՀ միջին ցուցանիշի համեմատ գյուղական համայնքների բնակչության տարիքային հիմնական խմբերի տոկոսային մեծությունների առավել ակնհայտ տարբերություններ կան հատկապես Մյունիքի, Վայոց ձորի, Տավուշի և Լոռու մարզերում, որոնք առանձնանում են լեռնային բարդ ռելիեֆով, բնական համալիրի տարրերի բազմազանությամբ, սահմանամերձ ու ծայրամասային դիրքով, տարածաշրջանային իրավիճակով և վերջապես սոցիալ-տնտեսական զարգացման առավել սուր հիմնախնդիրներով,
- 5) Հանրապետության գյուղական համայնքներում առկա բնակչության սեռատարիքային կառուցվածքում ստեղծված իրավիճակը հանրապետական, մարզային և տեղական ինքնակառավարման մարմիններից պահանջում է իրականացնել սոցիալական, տնտեսական, ժողովրդագրական, հարկային և տարածաշրջանային այնպիսի քաղաքականություն, որոնք կնպաստեն գյուղական համայնքների սոցիալ-տնտեսական զարգացմանը, ժողովրդագրական գործընթացների բարելավմանը և գյուղական համայնքների բնակչության սեռատարիքային կառուցվածքի առավել նպաստավոր իրավիճակի ձևավորմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մանասյան Մ.Գ. ՀՀ տարարնակեցման համակարգը Ե. 2005 թ.
2. Պոտոսյան Ա.Հ. ՀՀ գյուղական բնակչությունը և բնակավայրերը Ե. 2013 թ.
3. Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2012 թ., վիճակագրական ժողովածու, Ե.2012 թ.

Аксел Подосян, Шогик Кольян – Региональные особенности и проблемы полоозрастной структуры сельского населения РА. – В статье на основании обобщений и анализа показателей населения сельских общин РА (по состоянию на 01.01.2012г.) дается половозрастная структура имеющегося в республике сельского населения, а также его региональные различия по марзам, а на уровне сельских общин дается анализ основных возрастных групп населения.

Aksel Potosyan, Shoghik Qolyan – Regional peculiarities and problems of sex-age structure of rural current population RA. – In the article on the basis of sex-age composition of the rural population in communities RA (2012. 01.01) it given the a sex-age structure of the rural population of RA, regional differences. On rural community level the analysis of the distribution of the current population by age groups, as well as the main issues is given.

**ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ՎԱՆՅԱ ՂԱԶԱՐՅԱՆ

Հանրային կառավարման և մակրոտնտեսական քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը հարկաբյուջետային քաղաքականությունն է, որը կողմնորոշիչ ու հիմնարար նշանակություն ունի ինչպես տնտեսության ընդհանուր զարգացման, ներդրումային միջավայրի բարելավման, ընդլայնված վերարտադրության ապահովման, այնպես էլ սոցիալական տարաբնույթ հիմնախնդիրների լուծման և բնակչության կենսամակարդակի բարձրացման հարցում:

Հարկաբյուջետային արդյունավետ քաղաքականության մշակումն ու իրականացումը խիստ բարդ խնդիր է ցանկացած, առավել ևս շուկայական հարաբերություններին անցման փուլում գտնվող երկրների համար: ՀՀ-ում տվյալ ոլորտի վերափոխումների գործընթացը սկսվեց սոցիալ-տնտեսական և աշխարհաքաղաքական բարդ իրավիճակում. շարունակվում էր տնտեսական անկումը, տնտեսության վրա առկա էր պատերազմական և տնտեսական շրջափակման անմիջական ազդեցությունը, երկրաշարժի ավերիչ հետևանքների վերացումը պահանջում էր հսկայական ջանքեր ու միջոցներ: Այսպիսի պայմաններում հարկաբյուջետային քաղաքականության մշակումն ու իրականացումը հանրապետությունում օբյեկտիվորեն չէր կարող լինել համակարգված, ամբողջական և հիմնավորված: Այդուհանդերձ իրականացվող վերափոխումները հետապնդում էին հարկման բազայի ընդլայնման, հարկային հարաբերությունների օրենսդրափրավական հիմքերի ձևավորման ու դրանց շարունակական կատարելագործման նպատակ: Մասնավորապես՝ հարկաբյուջետային քաղաքականության հիմնական խնդիրներ էին համարվում.

- պետության և տնտեսավարող սուբյեկտների շահերի ու հետաքրքրությունների մերձեցումը,
- հարկային եկամուտների տեսակարար կշռի մեծացումը համախառն ներքին արդյունքում,
- բյուջետային երկաստիճան համակարգի և պետական ֆինանսների արդյունավետ կառավարումը,
- միջբյուջետային հարաբերությունների կանոնակարգումը և պետական գործառույթների ֆինանսավորման իրական չափերի ապահովումը,
- հարկային բեռի բաշխման արդարացիության և հիմնավորվածության ապահովումը,
- տնտեսական աճին, այդ թվում՝ ներդրումային ակտիվության բարձրացմանը նպաստող հարկային համակարգի ձևավորումը,
- տնտեսության իրական հատվածի՝ որպես պետության եկամուտների հիմնական աղբյուրի գործունեության հնարավորությունների ընդլայնումը,

- ձեռնարկատիրական ակտիվության ուղղությամբ հարկային մեխանիզմների կարգավորիչ և խթանիչ լծակների օգտագործման արդյունավետության բարձրացումը,
- հարկային եկամուտների կառուցվածքում ուղղակի և անուղղակի հարկերի միջև օպտիմալ հարաբերակցության հաստատումը,
- պետբյուջեի պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրների ընդլայնումը,
- հարկային և մաքսային վարչարարության արդյունավետության, ինչպես նաև այդ մարմինների աշխատակիցների մասնագիտական մակարդակի բարձրացումը,
- օրենսդրության պահանջների պատշաճ կատարման ապահովումը, հարկաբյուջետային քաղաքականության արդյունքների կանխատեսման մեթոդական հիմքերի մշակումը,
- հարկային քաղաքականության իրականացման գործընթացում «խաղի» հիմնական կանոնների կայունության ապահովումը և հարկման մեխանիզմների շարունակական կատարելագործումը,
- ֆինանսատնտեսական քաղաքականության տարբեր ուղղությունների (մասնավորապես՝ հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների) միջև փոխհամագործակցման մակարդակի բարձրացումը,
- օրենսդրական դաշտի պարզեցումը, կատարելագործումը և օրենսդրության կիրառման նկատմամբ վերահսկողության գործուն մեխանիզմների ստեղծումը³⁹³:

Նշված հիմնախնդիրների գերակշիռ մասը ներկայում արդեն իսկ լուծված է, իսկ որոշ մասն էլ կարգավորման ընթացքում է: Դրան նպաստեցին օրենսդրական բազմաթիվ փաստաթղթերի ընդունումը և կազմակերպակառուցվածքային միջոցառումների իրականացումը: Մասնավորապես՝ մինչև 2013 թ. ընդունվել են ՀՀ Մաքսային նոր օրենսգիրքը և հարկային նոր օրենսդրությունը, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», «Պետական տուրքի մասին», «Գանձապետական համակարգի մասին», «Դրամարկղային գործառնությունների մասին», «Ֆինանսական համահարթեցման մասին», «Հաշվապահական հաշվառման մասին», «Առևտրի տրանզիտային գործունեության մասին», «Եկամտային հարկի մասին», «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կազմակերպություններում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքները և ենթաօրենսդրական բազմաթիվ այլ իրավական ակտեր:

Հարկ է սակայն նշել, որ այս բնագավառում վաղ է խոսել վերափոխումների ավարտի մասին, քանի որ հարկաբյուջետային լիարժեք համակարգի կայացման առումով դեռևս անհրաժեշտ է լուծել առանցքային մի շարք խնդիրներ, ինչպես ձեռնարկատիրական ակտիվության ուղղությամբ հարկային մեխանիզմների կարգավորիչ և խթանիչ լծակների օգտագործման արդյունավետության բարձրացումը, հարկային բեռի բաշխման արդարացիության և հիմնավորվածության ապահովումը, հարկային ու մաքսային արդյունավետ վարչարարության իրակա-

³⁹³ Վ. Բոստանջյան, Գ. Կիրակոսյան, Ա. Մաֆայան, Հարկաբյուջետային քաղաքականության կատարելագործման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Երևան 2004, էջ 10-15:

նացումը, հարկային և բյուջետային օրենսդրությամբ սահմանված «խաղի» կանոնների կայունության ապահովումը, պետբյուջեի եկամտային մասի կառուցվածքում հարկերի տեսակարար կշռի մեծացումը, հարկային եկամուտների կառուցվածքում ուղղակի և անուղղակի հարկերի միջև օպտիմալ հարաբերակցության հաստատումը, ՀՆԱ-ում հարկային եկամուտների տեսակարար կշռի մեծացումը և այլ:

Հայաստանի տնտեսության ազատականացման ժամանակահատվածում իրականացված վերափոխումները հիմնականում ուղղված էին շուկայական տնտեսության պահանջները բավարարող միջավայրի ու ենթակառուցվածքների ձևավորմանը: Սկզբնական ժամանակահատվածում նշված գործընթացի արձանագրած տնտեսական ճգնաժամի դրսևորումները պայմանավորված էին ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ բնույթի բազմաբնույթ գործոններով: Մասնավորապես, շուկայական հարաբերությունների անցման մշակված մոդելի, գիտական մոտեցումների վրա հիմնված տնտեսական քաղաքականությունը, բարեփոխումների ռազմավարության բացակայությունը, օբյեկտիվ այլ գործոնների հետ մեկտեղ, ակնհայտ նպաստեցին երկրի տնտեսական և քաղաքական համակարգերում ճգնաժամային երևույթների դրսևորմանը: Այս առումով Ղարաբաղյան պատերազմից հետո արձանագրվում են որոշակի դրական միտումներ տնտեսական համակարգի բնականոն գործունեության ապահովման տեսանկյունից: Մասնավորապես 1994 թ. մինչև 2013 թ. ընթացիկ ժամանակահատվածը ներառյալ հանրապետությունում արձանագրվում է տնտեսական աճ՝ 1994-2013 թթ. միջինը կազմելով տարեկան 7.4%: Բացառություն է միայն 2009 թ. 14.4% տնտեսական անկումը³⁹⁴: Հատկանշական է, որ 2002-2003 թթ. տնտեսական աճը կազմել է երկնիշ թիվ և նույն ժամանակահատվածում սղաճի ցուցանիշները պահպանվել են վերահսկելի շրջանակներում ու տարեկան կտրվածքով չեն գերազանցել 3%-ի սահմանագիծը, ինչը ձևավորել է գների փոփոխության ռացիոնալ սպասումներ և վերածվել է տնտեսական կայուն աճի գրավականի: Նշված դրական միտումների մասին է վկայում նաև այն փաստը, որ մինչև 2001 թ. տնտեսական աճի արդյունքում զբաղվածության աճ չէր գրանցվել, սակայն սկսած 2002 թ. տնտեսական աճին և զբաղվածությանը զուգահեռ, ավելացել են բնակչության դրամական եկամուտներն ու ծախսերը: Այսպես, եթե 2002 թ. բնակչության նշված եկամուտներն ու ծախսերը ավելացել էին համապատասխանաբար 14.6%-ով և 17.2%-ով, ապա 2003թ. այդ ցուցանիշների աճը կազմել է համապատասխանաբար 15.1% և 17.5%³⁹⁵:

Վերջին տարիներին բավականաչափ դրական միտումներ են արձանագրվել նաև երկրի ֆինանսական հնարավորությունների ամրապնդման ու ընդլայնման առումով: Մասնավորապես, սկսած 2001 թ. հարկային եկամուտները շարունակաբար աճել են, և դրան զուգահեռ պետական բյուջեի դեֆիցիտի չափը ՀՆԱ-ի նկատմամբ որոշակիորեն նվազել է: Այս մոտեցումը առավել կարևոր ամրագրում ստացավ ճգնաժամից հետո՝ պայմանավորված ճգնաժամի բացասական հետևանքները մեղմելու համար հսկայական պետական նոր պարտքի կուտակման հետ, ինչը դրա կառավարման անվտանգության, վերահասկելության

³⁹⁴ www.armstat.am

³⁹⁵ ՀՀ վիճակագրության, պետական ռեզիստրի և վերլուծության նախարարություն, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2002 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան 2003թ.:

ապահովման անհրաժեշտությամբ պայմանավորված սահմանափակեց պետության հնարավորությունները հետագայում նոր պետական պարտք ձևավորելու համար: Պետական պարտքի կայունության ապահովման խնդիրը ստացավ նաև օրենսդրական ամրագրում, սահմանելով, որ պետական պարտքը տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ չպետք է գերազանցի Հայաստանի Հանրապետության նախորդ տարվա համախառն ներքին արդյունքի 60 տոկոսը, իսկ եթե պետական պարտքը տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ գերազանցում է Հայաստանի Հանրապետության նախորդ տարվա համախառն ներքին արդյունքի 50 տոկոսը, ապա հաջորդ տարվա պետական բյուջեի դեֆիցիտը չպետք է գերազանցի Հայաստանի Հանրապետության համախառն ներքին արդյունքի վերջին երեք տարիների ծավալների միջին ցուցանիշի 3 տոկոսը³⁹⁶: Այդ ցուցանիշը 2013 թ. պետական բյուջով նախատեսված է 2.64 տոկոս³⁹⁷: 2012 թվականին Հայաստանի պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 44.1 տոկոս³⁹⁸, իսկ 2013 թվականին ըստ նախատեսվածի կկազմի 42.4³⁹⁹ տոկոս: Միաժամանակ, հաշվի առնելով պարտքի կառավարման արդյունավետության կարևորությունը հարկաբյուջետային, արտաքին և ընդհանրապես մակրոմիջավայրի կայունության ապահովման տեսանկյունից, ներդրվեց և պարբերական բնույթ ստացավ պարտքի կայունության վերլուծությունը, որը հնարավորություն տվեց գնահատել միջնաժամկետ և երկարաժամկետ ժամանակահատվածում պարտքի կայուն մակարդակը և դրա վրա ազդող մակրոտնտեսական գործոնները⁴⁰⁰: Նշված վերլուծությունը առավել կենտրոնացված է միջնաժամկետ գնահատականներին, իսկ այդ ուղղությամբ կառավարության իրականացվելիք քաղաքականության հստակեցման համար արդեն 2010 թվականին «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան մշակվեց և հաստատվեց ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարությունը՝ որպես ՄԺԾՕ փաստաթղթի անբաժանելի մաս: Մի շարք քայլեր են իրականացվել հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման, ինչպես նաև բյուջետային կարգապահության ամրապնդման ուղղություններով: Ըստ էության իրականացված բարեփոխումների արդյունքներն արտացոլվեցին մակրոտնտեսական ցուցանիշների բարելավման մեջ, ինչը վկայում է նաև 2001-2008 թթ. արձանագրված համախառն ներքին արդյունքի աճի բարձր տեմպերը՝ կազմելով միջին տարեկան 10-12 տոկոս: Ընդ որում 2001-2003 թթ. միջին տարեկան աճի տեմպերը ավելի քան կրկնակի գերազանցել են նշված ժամանակահատվածին նախորդած երեք տարիներին արձանագրված աճի տեմպերը: Ընդահնուր առմամբ իրականացվող հարկաբյուջետային քաղաքականությունը կարելի է բնորոշել դրան համահունչ հարաբերությունների պարզեցման և կայունացման միտումներով: Հիշյալ ժամանակահատվածում, ինչպես վերջին տարիներին, իրականացվող հարկաբյուջետային քաղաքականությունը պայմանավորված էր նաև մակրոտնտեսական կայունությամբ ու տնտեսական աճով: Այն ուղղված է եղել հստակ և արդարացի հարկային

³⁹⁶ «Պետական պարտքի մասին», 26.05.2008 ՀՕ-78-Ն ՀՀ օրենք, հոդված 5:

³⁹⁷ «ՀՀ 2013 թ. բյուջետային ուղերձ» մաս 1-ին, աղյուսակ 1.1:

³⁹⁸ ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2014-2016 թթ. ռազմավարական ծրագիր, աղյուսակ 12

³⁹⁹ «ՀՀ 2013 թ. բյուջետային ուղերձ» մաս 3-րդ, աղյուսակ 3.1:

⁴⁰⁰ Տե՛ս «Հայաստանի պարտքի կայունության վերլուծություն» փաստաթուղթը, ՀՀ ֆինանսների նախարարություն, 2011թ (http://www.minfin.am/up/macroid/DSA12.10.pdf)

դաշտի ապահովմանը, ՀՀ կառավարության ու տնտեսավարողների շահերի արդյունավետ համադրմանը: Հարկային քաղաքականության շեշտադրումներն աստիճանաբար ուղղորդվում են վարչարարության ոլորտ, ինչը թույլ կտա օգտագործել հարկման առկա ներուժը՝ նպաստելով պետական բյուջեի հնարավորությունների մեծացմանը և տնտեսության կարգավորման գործում հարկաբյուջետային քաղաքականության դերի բարձրացմանը՝ առանց տնտեսության վրա հարկային ճնշման ավելացման: Վերոնշյալ սկզբունքներն արտացոլվել են վերջին տարիներին կատարված օրենսդրական մի շարք փոփոխություններում և անհրաժեշտ է, որ այդ սկզբունքները դրավեն նաև հետագա օրենսդրական փոփոխությունների հիմքում:

Չնայած վերջին տարիներին հանրապետությունում իրականացված հարկաբյուջետային քաղաքականության ոլորտում արձանագրված որոշակի հաջողություններին, այնուամենայնիվ պետք է նշել, որ դեռևս շարունակում են գոյություն ունենալ մի շարք հիմանխնդիրներ, առանց որոնց լուծման գրեթե անհնար է երկրի հարկաբյուջետային համակարգի կայուն զարգացումը: Մեր կարծիքով ՀՀ հարկաբյուջետային քաղաքականության երկարաժամկետ զարգացումների առանցքային հենակետ պետական բյուջեի եկամուտների համալրման տեսանկյունից պետք է լինի ներքին ռեսուրսների արդյունավետ հավաքագրումը և մասնավորապես հարկերի հավաքագրման մակարդակի բարձրացման ապահովումը, իսկ ծախսերի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով իր ուրույն դերը պետք է ունենա ներկայումս աշխարհի շատ երկրներում ներդրված, իսկ շատերում էլ ներդրման փուլի մեջ գտնվող արդյունքների վրա հիմնավոր ծրագրային բյուջետավորումը: Ծրագրային բյուջետավորումը, որպես պետական ֆինանսների կառավարման արդիական և առավել արդյունավետ տարբերակ, արագ տարածում է գտել աշխարհի շատ երկրներում: Մի շարք հետխորհրդային երկրներ նույնպես անցել են ծրագրային բյուջետավորման տարրերի ներդրմանը⁴⁰¹, քանի որ «շնորհիվ արդյունքների վերաբերյալ հաշվետվության և հետևողական մոնիտորինգի՝ ծրագրային բյուջետավորումը թույլ է տալիս ժամանակին հայտնաբերել պետական մարմինների գործունեության, մատուցվող ծառայությունների և ոչ ֆինանսական արդյունքների հետ կապված խնդիրները և շտկել դրանք»⁴⁰²:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Վ. Բոստանջյան, Գ. Կիրակոսյան, Ա. Սաֆարյան «Հարկաբյուջետային քաղաքականության կատարելագործման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում», Երևան 2004, էջ 10-15:
2. www.armstat.am
3. ՀՀ վիճակագրության, պետական ռեզիստրի և վերլուծության նախարարություն, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2002 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան 2003թ.:

⁴⁰¹ R. Bennett, 1997. Local Government in Post Socialist Cities. Discussion Paper no. 2. Budapest LGI-OSI, 20-35:

⁴⁰² К.Х. Иполятов, Экономическая безопасность: стратегия механизмы саморегуляции в рыночной экономике (мировой опыт и Россия). Вопросы экономики N 3, 1996 г. 14-22:

4. «Պետական պարտքի մասին», 26.05.2008 ՀՕ-78-Ն ՀՀ օրենք, հոդված 5:
5. «ՀՀ 2013 թ. բյուջետային ուղերձ» մաս 1-ին, աղյուսակ 1.1:
6. ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2014-2016 թթ. Ռազմավարական ծրագիր, աղյուսակ 12:
7. «ՀՀ 2013 թ. բյուջետային ուղերձ» մաս 3-րդ, աղյուսակ 3.1:
8. «Հայաստանի պարտքի կայունության վերլուծություն» փաստաթուղթը, ՀՀ ֆինանսների նախարարություն, 2011թ (<http://www.minfin.am/up/macroind/DSA12.10..pdf>):
9. Bennett, R. 1997. *Local Government in Post Socialist Cities*. Discussion Paper no. 2. Budapest LGI-OSI, 20-35:
10. Иполитов К. Х. *Экономическая безопасность: стратегия механизмы саморегуляции в рыночной экономике* (мировой опыт и Россия). Вопросы экономики N 3, 1996 г. 14-22:

Ваня Казарян – Конструктивные особенности повышения эффективности налогово-бюджетной политики в РА. – В данной статье описываются основные особенности и пути улучшения налоговой системы в РА.

Vanya Ghazaryan – The formation specifications and guidelines to increase the effectiveness of fiscal policy in RA. – This article describes the main features of the establishment and the ways of improvement of the fiscal system in RA.

**ԹԵՀՐԱՆԻ ՆԱՀԱՆԳԻ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ
ՆԵՐՈՒԺԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԸ**

ՀՈՍՍԵՒՆ ԷԲՐԱՀԻՄԻ ՔԻԱՍԱՐԻ

Թեհրանի նահանգը զբաղեցնում է 18909 քվմ մակերես: Այն ընկած է մեր-
ձարևադարձային լայնությունների հյուսիսային շրջաններում՝ հյուսիսային լայ-
նության 34°52՛-ից մինչև 36°21՛-ից և արևելան երկայնության 50°10՛-ից մինչև
53°10՛-ի աշխարհագրական կոորդինատների սահմաններում: Նահանգի տա-
րածքի համաաշխարհագրական դիրքը, մակերևույթի բնույթի, առանձնահատ-
կությունները, կլիմայական պայմաններն ու լանդշաֆտային մնացած բաղադրիչ-
ները և մարդկային հագարավյա գործունեությունը ձևավորել են տարածքի զբո-
սաշրջային յուրահատուկ ներուժ:

Թեհրանի նահանգի համար զբոսաշրջային ներուժի գրավչություն ապա-
հովող բնական էլեմենտներից են տարածքի ձևաբանական (գեոմորֆոլոգիական)
տարրերն ու միավորները, ջրագրական ցանցը և կլիմայական պայմաններն ու
ռեսուրսները:

Նահանգում զբոսաշրջային գրավչության կարևոր տարրերից են լեռնային
տարածքների առանձին շրջանները և բարձունքային տեղամասերը: Տարածա-
շրջանի առավել բարձրադիր շրջաններն ընկած են հյուսիսային մասում, որի
կենտրոնական հատվածում ընկած է Ալբորզի լեռնաշղթան: Վերջինիս ամենա-
բարձր գագաթը Դամավենդն է 5671 մ բարձրությամբ: Նահանգի հյուսիսարևմտյան
մասում ձգվում են Թալեղան լեռները, իսկ հյուսիսարևելյան շրջանում՝ Ֆիրուզ-
քուհի լեռնաշղթան: Սավաղքուհ լեռնաշղթան ձգվում է մինչև Ֆիրուզքուհի ձորը
(Հաբալուդի ակունքը): Թեհրանի նահանգի հարավային և արևելյան մասի լեռ-
նահովտային շրջաններում կան ցածրադիր լեռներ, որոնցից ամենանշանավոր-
ներն են Հասանաբադի ու Նամաքի լեռները՝ հարավում, իսկ Բիբի, Շահրբանու,
Սարխես Հեսարն ու Ալդադերը՝ հարավարևելյան մասում: Արևելյան մասում
գտնվում է Ֆիրուզքուհի բարձունքը: Քահարի լեռները, որոնք սկիզբ են առնում
Քարաջի գետի արևմտյան ձորից, շարունակվում են մինչև Թալեղան Ռուդ գետից
հարավ՝ դրան զուգահեռ:

Նահանգի տարածքում ռելիեֆի տարրերից զբոսաշրջային գրավչություն
ունեն նաև Թուրնիքի, Բիյուք աղայի, Ռուդաֆշանի և Յախեմորադի քարայրները
և Ֆարոխզադի, Դարքեի Դարբանդի, Հեսարաքի, Քարաջի, Ջաջրուդի, Քեն Սուլա-
դանի և Քարդանի ձորերը: Զբոսաշրջային գրավչության առումով պակաս կարե-
վոր դեր չունեն նաև ստորոտային նպաստավոր պայմաններ ունեցող Արնգեի,
Ուշան Ֆաշանի, Էվինի, Դիզինի և Աբալի տարածքները, որոնք կարող են օգտա-
գործվել որպես չմշկահարթակներ: Լեռնագնացության համար կարող են օգտա-
գործվել նաև Փալանգչալի և Շիրվիալայի ապաստանները և Քալքազալի գագաթը:

Թեհրանի նահանգի լեռնագրական միավորների զբոսաշրջային յուրովի
գրավչությունների մասին հանգամանալից պատկերացում է տալիս ստորև բեր-
վող աղյուսակը:

Կարգ	Լեռնագրական միավորը	Զբոսաշրջային գրավչություններ	Տարածման շրջանը
1.	Դամավանդ թար	Դամավանդի շրջկենտրոն: Թարի շրջան: Կանաչ տարածք, հարմարավետ կլիմայական պայմաններ, գեղեցիկ բնական տեսարաններ, մշակութային ձգողականություն Դամավանդ գետ, Ռուդեհեն գետ, Գիլան, Չափան գյուղ	Թեհրանի արևելյան մաս, Դամավանդի շրջկենտրոն
2.	Ֆիրուզբուհ	Ֆիրուզբուհի մաս, Ռուզաֆշան գյուղ, Արզմանդ, ունի կանաչ տարածք	Թեհրանի արևելյան մաս, Ֆիրուզբուհի շրջկենտրոն
3.	Ռուդբար Ղասրան	Ղասրան Ռուդբարի մաս ունեն Ահարի գյուղեր, Շեմշաք, Ռուդաք, Հաջիաբադ, Դարբանդ սար, Չիրվարդ, Դորդո, Լալուն, Ուշան ֆաշամ, Յիմիքուն, ունի գետ, կանաչ տարածք, այգիներ, ջրվեժներ, լեռնագնացության ճանապարհներ	Ռուդբար ֆաշան
4.	Քարաջի առանցք Չալուսի ճանապարհի շարունակությամբ	Քարաջ, Չալուս, Ադրան, Շահրեստանաք, Վարանքե Ռուդ, Նեսա, Վելայաթ Ռուդ լեռնագնացություն	Քարաջ
5.	Զիլադի շրջկենտրոն և Սայի շրջան, Թալեղանի տարածք	Թալեղանի մասը համարվում է Սալջիլադի, Սաֆարանի գյուղերի, Ուպանի, Լաքունդարի, Ջովիստանի քաղաքային շրջանի, Շահրաբի և բնական կանաչ տարածք, այգիներ, գետեր, աղբյուրներ, լեռնագնացություն	Թալեղան

Թեհրանի նահանգի զբոսաշրջային բնական ներուժի մեջ առանձնահատուկ դեր ունեն ջրային ռեսուրսները՝ գետերը, լճերը, աղբյուրները, ջրամբարները և ջրվեժները: Նահանգի արևմտյան հատվածում գտնվող Ալամութ և Թալեղան, հյուսիսարևելյան մասում գտնվող Ֆաջարուդ, Ֆիրուզբուհ, Վարի, Քարաջի և արևմուտքում գտնվող Հաբլեի, Թալեղան և Արևհատ գետերը հանդիսանում են ձգողականություններ դրանց ափերին հանգստյան տների ստեղծման և զբոսաշրջիկների հանգիստը կազմակերպելու համար: Զբոսաշրջային գրավչությունն են ապահովում նաև բնական Թար, Մուսեջ և Հովեյր լճերը, ինչպես նաև հյուսիսային շրջանի ջրամբարների լճերը՝ Լար լճի ջրամբարը, Լաթիանի, Քարաջի, Թալեղանի և Ամիրքաբիբի ջրամբարները:

Նահանգի տարածքում զբոսաշրջային գրավչության առումով իրենց դերն ունեն նաև հանքային աղբյուրները, որոնք գտնվում են գերազանցապես տարածաշրջանի հյուսիսարևելյան շրջաններում: Դրանցից կարելի է առանձնացնել Դամեվանդի գերազանց աղբյուրները, Դուլե Դոխտարի, Հարազ Աբալի, Գաչասարի, Վալեի, Քարաջի Շահ Դաշտի, Ալբուրզի հանքային, Ռեյ քաղաքի Ալիշեշմ, Թիզաբի և Գելե-Գիլեի աղբյուրները: Տարածաշրջանի ջրային ռեսուրսների մեջ զբոսաշրջային իրենց ձգողականությամբ կարևորագույն դեր ունեն նաև ջրվեժները, որոնցից կարելի է նշել Ադրանի Փիչի, Դոդոլուի, Սանգանի, Լարի, Աբալի և Ջարջրադի ջրվեժները (Թեհրանի նահանգի աշխարհագրություն, 2006 թ.):

Յուրահատուկ աշխարհագրական դիրքի շնորհիվ Թեհրանի նահանգի տարբեր շրջաններում ձևավորվել են տարբեր կլիմայական պայմաններ, որոնք

իրենց ներգործությունն են ունենում տարածքի զբոսաշրջային ներուժի վրա: Նահանգի կլիմայի ձևավորման վրա իրենց ներգործությունն են ունենում երեք հիմնական գործոններ. 1/ անապատային և կիսաանապատային տարածքները, 2. Ալբուրգի լեռնաշղթան և նրա ճյուղավորությունները և 3/ արևմտյան խոնավ քամիները: Նշված գործոնների ազդեցության տակ Թեհրանի նահանգում ձևավորվում են կլիմայական երեք գոտիներ, որոնք կարելի է համարել ուղղաձիգ կլիմայական գոտիներ: Նահանգի 3000 մ-ից բարձր շրջանները՝ Դամավանդը, Ֆիրուզքուհը, Քալուն Բասթաքը և Թաղալն ունեն ցրտաշունչ երկար ձմեռներով կլիմա, ստորտային շրջանները՝ 2000-3000 մ բարձրություններում կլիման համեմատաբար երկար և ցրտաշունչ ձմեռներով է (Այդալիսիք են Աբալին, Ֆիրզուքուհի վարչական կենտրոնը, Դամավանդի շրջկենտրոնը, Գավանդուքը, Ամիր Քաբիր ջրամբարի շրջանը և Թալեղանի ձորը): Իսկ 2000 մ-ից ցածր շրջաններում, բարձրության նվազմանը համեմատ կլիման դառնում է համեմատաբար չոր: Վարամին և Շահիրարը ինչպես նաև Քարաջ քաղաքի հարավը գտնվում են կլիմայական այս գոտում: Թեհրան քաղաքի կլիման լեռնային շրջաններում մեղմ է, անցումային, իսկ դաշտային մասում՝ կիսաանապատային: Այն ավելի շատ հակում ունի դեպի չոր կլիման: Կլիմայական նշված առանձնահատկությունները, միջնորդավորված նահանգի տարածքի բնական այլ բաղադրիչներով անմիջական ներգործություն են ունենում զբոսաշրջային ներուժի բնասաշխարհագրական տարրերի վրա՝ պայմանավորելով դրանց դրական կամ բացասական կողմը:

Թեհրանի նահանգն առանձնանում է ոչ միայն բնածին, այլ նաև մարդածին զբոսաշրջային ներուժ ունեցող գրավչություններով: Նահանգն հյուսիսից սահմանակից է Մազանդերան և Գիլան նահանգներին, հարավ-արևմուտքից՝ Ղոմի նահանգին և այլ կենտոնական նահանգների, արևմուտքից՝ Ղազվինի նահանգին, իսկ արևելքից՝ Մեմանի նահանգին: Նահանգի վարչական տարածքի քաղաքներից են նաև Էսամշահրը, Դամավանդը, Ֆիրուզքահը, Ռեյը, Ռոբաթ, Քարիմը, Շիմիրանը, Փաքդաշտը, Վարամինը, Փիշվանը, Սալարդը, Ղոդսը, Շահիրարը /Իրանի տվյալների հավաքման կենտրոն, 2006 թ./

Նահանգի զբոսաշրջային մարդածին գրավչության տարրերից են Թեհրանում Միլլադի աշտարակը, Էմամզադեների դամբարանները (Մալեհին, Ձեյդին, Դավուդին, Սեյդ Էսմայիլին, Սեյդ Նասրոլլահին, Էյն-Ալի, Ձեյնալին և այլն): Այս կառույցների շաքրին են պատկանում նաև Ազգային այգու կամարը (Սար Դարե Բադ Մելի), Ազադի հրապարակը, թանգարանները, Ոսկեղենի թանգարանը, Գուլիստանի պալատը և այլն: Կարևոր մզկիթներից են Էմամ Խոմեյնի, Ջամեյնի, Մարզի, Շահիդ Մոթահարու և այլն: Ջբոսաշրջային գրավչություն ունեցող կառույցներից են նաև Իվանական ազգային ժողովի շենքը, Թեհրանի Մեծ Շուկան, զբոսաշրջային գյուղերը, պտղատու այգիները և գյուղատնտեսական տարածքները:

Ռոբաթքարիում կան 32 բլուր և հնէաբանական վայրեր, ինը Էմամզադե և սրբավայր (որոնցից են Էմամզադե Էմադը և Էմամզադե Մոհամմադը), երկու պատմական քարվանսարա, մեկ կամուրջ, ջրաղաց, երեք հին սառցատուն, Ֆաթալիշահի ժամանակակից մնացած վեց դղյակագյուղ:

Դամավանդի կարևոր տեղավայրերից կարելի է առանձնացնել Շեյխ Շաբալի Դամբարանը, Ջամեյի մզկիթը, Հոսեյնիյենները, որտեղ լաց են լինում Հոսեյնի համար, Թար լիճը, Թիզաբը, Սանգեփոլը, Վալիրանի լեռները, շրջակա գյուղերը և այլն (Դամավանդի վարչական կենտրոն, 2010):

Տեսաճանաչողական տեսակետից Թեհրանի նահանգում գերակշռում են Թեհրանում գտնվող և միջազգային շինություններ համարվող մարդածին գրավչությունները, որոնք ունեն առավելապես ազգային գործունեության մակարդակ: Թեհրանի նահանգի գրավչությունների 46,34 %-ը տեսաճանաչողական առումով մարդածին գրավչությունն է, 38,0 %-ը՝ մշակութային գրավչություն, իսկ 16 %-ը բնական գրավչությունները: Այդ բոլորը, թե՛ Թեհրանում և թե՛ գյուղական վայրերում ներկայացվում են որպես Թեհրանի մեկօրյա այցելությունների գրավչություններ:

Մարդու ստեղծած գրավչությունների քանակական առավելությունը, որը սովորաբար միջազգային է, պայմանավորված է այն հանգամանքով, որ զբոսաշրջության զարգացումն ու բարգավաճումը շատ քիչ է կախված տարածքի աշխարհագրական պայմաններից և հմուտ ու խելացի ծրագրավորումների միջոցով կարելի է գործոնների և մարդու ստեղծած տարրերով առավել շահավետ ձեռքբերումների հասնել: Ուստի, արդյունավետ ծրագրավորումներով կարելի է զբոսաշրջային գործունեությունը զարգացնել քաղաքներում և վարչական կենտրոններում և Թեհրանի վարչական կենտրոնում նվազեցնել զբոսաշրջային աշխուժությունը:


Թեհրանի նահանգի մշակութային գրավչությունները կազմում են ընդհանուր գրավչությունների 28 %-ը: Ընդհանրապես, այն գրավչությունները, որոնք ֆիզիկական առումով գտնվում են տարածքի վրա, իրենց վրա կրում են նահանգի պատմական զարգացման ընթացքի ազդեցությունը: Իսկ այն գրավչությունները, որոնք ոչ ֆիզիկական և շոշափելի կաղպարներ ունեն, հասարակական այն բարքերն են (վարվելաձևերը), որ նահանգի պատմական անհատականության ձևավորմամբ և անցյալի դեպքերի հնոցում յուրահատուկ տեսք են ընդունել, որոնցից ամենակարևորներից մեկը ժողովրդական (ֆոլկլորային) սովորույթներն են կամ ժողովրդական տարածված մշակույթը: Սակայն ղեկավարման բացակայության պատճառով այս խմբի գրավչությունների զգալի մասը գտնվելով հասարակական բարքերի ազդեցության տակ, կոդմնորոշված են դեպի արևմուտք և կործանման ու ոչնչացման եզրին են կանգնած:

Տարածքի վրա հաստատված և մշակութային ձգողականությունների շարքին դասվող գործոնների մի մասը տեղակայված է Թեհրանի վարչական կենտրոնում և կազմում է 53.2 %-ը, իսկ Վարամին քաղաքը կազմում է բոլոր գրավչությունների 14,5 %-ը: Թեհրանի նահանգին ենթարկվող մյուս բոլոր քաղաքներին ու կենտրոններին բաժին է ընկնում մշակութային բոլոր գրավչությունների 10%-ից ոչ ավելին և իրականում այդ վարչական շրջանների մրցակցային ունակությունն այլ վարչական կենտրոնների և Թեհրանի համեմատությամբ շատ ցածր է:

Թեհրանին և Վարամինին հաջորդում են Փաքդաշտը 8,06 %-ով, Դամավանդն ու Շեմիրանաթը 4,84-ական %-ով, Ֆիրուզքուհը 3,23 %-ով և Շահրիարը՝ 1,61 %-ով: Այս բաժնում ևս մշակութային գրավչության տեսակետից շատ խիստ կենտրոնացում է նկատվում Թեհրան քաղաքում, և հենց այդ պատճառով էլ տեղորոշման գրավչությունների բարեկարգումը մեծ դժվարություն է ներկայացնում:

Թեհրանի նահանգում մարդու ստեղծած ձգողականությունները կազմում են նահանգի ընդհանուր ձգողականությունների 46 %-ը և ունեն գործնական բազմապիսի նշանակություններ: Դրանց թվին են պատկանում, օրինակ, պատ-

մական շինությունները, չմշակահարթակները (Թեհրանում չկան), թատրոնները, կինոթատրոնները, մշակույթի տները, մարզահամալիրներն ու սրահները, հիվանդանոցները, առևտրական և վարչական կենտրոնները, որոնք, յուրովի դեպի իրենց են ձգում զբոսաշրջիկներին աշխարհի տարբեր անկյուններից:



Թեհրանի նահանգի մշակութային գրավչությունների տեղաբաշխումն ըստ քաղաքների

Նահանգի զբոսաշրջության ամենակատիվ կենտրոններից մեկը կենսամակարդակի ապահովագրական հիմնակառույցն է, ինչպես նաև քաղաքայնացումը, նրա վարչական կառավարման վայրերը և դեպի աշխարհի այլ երկրներ տարանցիկ զբոսաշրջություն կատարելը, ինչը նրա ամենակարևոր դերերից է: Հետևաբար, նախագծված բոլոր գրավչությունների հերթականությունը կարելի է տալ հետևյալ աղյուսակով.

Աղյուսակ 2.

Զգոգության անուն	Պատմական շրջան	Ցուցանիշի յուրահատկությունը և ձգոգությունը	Գտնվելու վայրը	Զգոգության տեսակ	Արժեքային գործնության տիրույթը
1. Ազգային այգի	Ժամանակակից	վայրի կյանք, կանաչ տարածք, զբոսաշրջության հնարավորություն	Թեհրան	մարդու ստեղծած	ազգային
2. Ազգային այգի	Ժամանակակից	վայրի կյանք, կանաչ տարածք, զբոսաշրջության հնարավորություն ցուցաբերող	Թեհրան	մարդու ստեղծած	ազգային
3. Չիթգերի այգի	Ժամանակակից	Հանգստի հնարավորություն, կանաչ տարածք, հեծանավահրապարակ, խաղա-դաշտ, զբոսնելու հնարավորություն	Թեհրան	մարդու ստեղծած	ազգային
4. Սորխե հետար անտառային այգի	Ժամանակակից	կանաչ տարածք, հանգստանալու հնարավորություն	Թեհրան	մարդու ստեղծած	ազգային

5. Ղեյթարիէի այգի	Ժամանակակից	կանաչ տարածք, զբոսնելու հնարավորություն	Թեհրան	մարդու ստեղծած	ազգային
6. Քաղաքիային այգի	Ժամանակակից	կանաչ տարածք, հանգստանալու հնարավորություն, կինոյի դահլիճ և գրախանութ	Թեհրան	մարդու ստեղծած	ազգային
7. Ջամշիդիէի այգի	Ժամանակակից	հանգստի հնարավորություն կանաչ տարածք,	Թեհրան	մարդու ստեղծած	ազգային
8. Դավիդանի այգի	Ժամանակակից	հանգստանալու հնարավորություն, կանաչ տարածք,	Թեհրան	մարդու ստեղծած	ազգային
9. Փարդիսանի այգի	Ժամանակակից	վայրի կյանք, կանաչ տարածք, հանգստանալու հնարավորություն,	Թեհրան	մարդու ստեղծած	ազգային
10. Թալեղանի այգի	Ժամանակակից	հանգստի և կանաչ տարածքի, հնարավորություն,	Թեհրան	մարդու ստեղծած	ազգային

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Թեհրանի նահանգի աշխարհագրություն*, Թեհրան 2006 (պարսկերեն)
2. *Դանավենդ վարչական կենտրոն*, 2010 թ. (պարսկերեն)
3. *Իրանի տվյալների հավաքման կենտրոն*, Թեհրան 2006 թ. (պարսկերեն)

Hossein (Ebrahimi) Kiasari – *The main elements of tourism potential of Tehran province.* – In every country or region the main prerequisite for the design and development of tourism is touristic resource availability of the region and its targeted usage.

The article is using factual basis analysis to demonstrate and evaluate the main elements (natural, historical-cultural) of tourism potential of Tehran Province, Islamic Republic of Iran.

Хоссеин Ебрагими Киасари – *Основные компоненты (элементы) туристского потенциала Тегеранской провинции.* – Основными предпосылками формирования и развития туризма в какой-либо стране/ территории/ являются наличие туристических ресурсов и их целенаправленное использование.

В статье на основании анализа фактического материала представлены основные компоненты (природные, культурно-исторические и др.) туристского потенциала и их оценка Тегеранской провинции Иранской Исламской Республики.

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱԳՈՒՍՏԻ ԷԹՆՈՍՏԱԿՈՒԹԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳՐԻ ՇՈՒՐՁ («Հայ ազգագրություն» դասընթացի դասախոսությունների շարքից)

ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Հագուստը զգեստ, հանդերձ, տարագ նշանակությամբ հայոց բառարաններում ներկայացվում է որպես զգեստների ամբողջություն, հագուստ-կապուստ՝ վրայի բոլոր շորերը՝ հագուստեղենը⁴⁰³ հագնելու իր, զգեստ, վրայի շոր, ընդ որում՝ սպիտակեղենը, կոշիկը, գլխարկը հագուստ չեն կոչվում⁴⁰⁴: Նաև զգեստավորման հարդարանքի այն ձևը, որ տվյալ ժամանակ ընդունված է և որին հետևում են, մոդա⁴⁰⁵, վրան միաժամանակ կրելու շորերի ամբողջություն, զգեստների ամբողջություն⁴⁰⁶, զգեստի՝ հագուստի կամ հարդարանքի որևէ ժամանակ կամ որևէ վայրում ընդունված ձև, որևէ ժողովրդի յուրահատուկ զգեստ, զգեստի ազգային՝ տեղային կամ ըստ սեռի, հասակի ընդունված ձև, համազգեստ⁴⁰⁷, մեկ այլ տեղ՝ զգեստ, հանդերձ, շոր, հագնելիք, հագուստ-կապուստ, հագ ու կապ՝ վրան միաժամանակ կրելու ամբողջություն⁴⁰⁸:

Հագուստը մարդու մարմնի արհեստական ծածկոց է և առաջացել է բնակարանին զուգընթաց՝ իբրև արտաքին գործոններից պաշտպանվելու միջոց: Որոշ գիտնականներ դրա առաջացման պատճառը համարել են ամոթի զգացումը, կրոնական պատկերացումները և այլն⁴⁰⁹: Մարդկային առաջին զույգի մասին պատմող ավանդության համաձայն, վերջիններս անսքող մնացին մինչև զգացին իրենց մերկությունը և ամոթահար ծածկվեցին ծառերի հետևում այնքան ժամանակ, մինչև նրանց կերտող ձեռքը փութաց փարատել նրանց շփոթությունը՝ ստեղծելով հանդերձանք: Ուրեմն ամոթի զգացումը եղավ զգեստի ստեղծման առաջին պատճառը:

Տարազը հայոց կենսապահովման մշակույթի անհամեմատ լավ ուսումնասիրված հիմնախնդիրներից է: Ավատական վերնախավի՝ թագավորների, իշխանների, զինվորականների, եկեղեցականների, հայ թագուհու և կույս աղջիկների հագուստին է անդրադարձել Ղ. Ինճիճյանը⁴¹⁰, իսկ զինվորականների հագուստին՝ Ղ. Ալիշանը⁴¹¹: Վ. Հացունին առավել հանգամանորեն ներկայացրել է հայ-

* Սույն հաղորդմամբ փորձում ենք դասագրքի բացակայության անհրաժեշտությունից ելնելով «Ակունք»-ի տարբեր համարներում բացել «Հայ ազգագրություն» դասընթացի դասախոսությունների շարք:

⁴⁰³ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. Երրորդ (Կ-Մ), Երևան, 1974, էջ 251:

⁴⁰⁴ Տե՛ս *Ստեփան Մալխասեանց*, Հայոց բացատրական բառարան, հ. III (Հ-Ո), Երևան, 2010, էջ 8:

⁴⁰⁵ Տե՛ս նույն տեղում, հ. IV (Չ-Ֆ), Երևան, 2010, էջ 382:

⁴⁰⁶ Տե՛ս *Էդ. Աղայան*, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, էջ 787:

⁴⁰⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 1417:

⁴⁰⁸ Տե՛ս *Ս. Սուրիպայան*, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Երևան, 2009, էջ 564:

⁴⁰⁹ *С.А. Токарев*, К методике изучения материальной культуры, «Советская Этнография», 1970, № 3, с. 7:

⁴¹⁰ Տե՛ս *Ղուկաս Ինճիճեան*, Հնախոսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, Վենետիկ, 1835, հ. Բ, էջ 264-265, 278-286, 288-289:

⁴¹¹ Տե՛ս *Ղևոնդ Ալիշան*, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 420:

կական տարազի զարգացման ուղին՝ վաղ շրջանից մինչև XVII դարը⁴¹²: Հայաստանի տարբեր պատմաագագրական շրջանների տարազների վերաբերյալ նյութեր է հրատարակվել Ե. Լալայանի ջանքերով «Ազգագրական հանդես»-ի էջերում «Զգեստ ու զարդ» բաժիններում: Մասնագիտական քննության առումով մեծ է Պատմության պետական թանգարանի երկարամյա աշխատողներ Ա. Պատրիկի⁴¹³ և Ն. Ավագյանի վաստակը⁴¹⁴: Ա. Պատրիկը տվել է հայկական տարազի բազմադարյան պատմության ուրվագիծը՝ վաղնջական ժամանակներից մինչև XX դ. սկիզբը, ուր տրված է նաև հայկական ժողովրդական պատմաագագրական շրջանների տարազաձևերի քարտեզը, իսկ Ն. Ավագյանը մանրամասնությամբ ներկայացրել է Հայաստանի տարբեր պատմաագագրական շրջաններին բնորոշ տարազային համալիրների նկարագիրն ու բնութագրությունը: Հայկական տարազի ուրվագիծն է տրված «Կովկասի ժողովուրդներ» երկհատորյակի «հայեր» բաժնում⁴¹⁵ և բոլորովին վերջերս հրատարակված «Народы и культуры» շարքից «Հայեր» աշխատության⁴¹⁶ մեջ: Մասնագիտական հետաքրքրություն է ներկայացնում Վ. Բդոյանի «Հայ ազգագրություն» ուսումնական բուհական ձեռնարկը⁴¹⁷: Ուրարտական զգեստին են անդրադարձել Ս.Ս. Եսայանն ու Ս.Գ. Հնայակյանը⁴¹⁸, իսկ հելլենիստական դարաշրջանի հայկական տարազին՝ Գ. Տիրացյանը⁴¹⁹: Պոնտոսի հայության տարազի վերաբերյալ ուշագրավ է Ի.Վ. Կուզնեցովի աշխատությունը⁴²⁰: Հայկական տարազի զարդանախշման արվեստին է նվիրված Ա. Ստեփանյանի մենագրությունը⁴²¹: Տարազի վերաբերյալ բազմաթիվ ուսումնասիրությունների հեղինակ է Ս. Պողոսյանը⁴²²: Մասնագիտական քննության տեսակետից կարևոր ներդրում է նաև Հեղինե Փափագյանի «Հայկական տարազ»⁴²³ աշխատությունը՝ ազգագրագետ Ս. Պողոսյանի խմբագրությամբ ու ծավալուն ներածական խոսքով: Հայկական տարազի ուսումնասիրությանն անդրադարձել են նաև Գ. Բրուսյանը⁴²⁴ և այլ ուսումնասիրողներ⁴²⁵:

Տարազը պատմական տարբեր դարաշրջաններում զանազան երկրներին, ժողովուրդներին, էթնիկական և տարածքային խմբերին, բնակչության որոշակի

⁴¹² Տե՛ս Վ. **Հազունի**, Պատմություն հին հայ տարազին, Վենետիկ, 1923:

⁴¹³ Տե՛ս Առաքել **Պատրիկ**, Հայկական տարազ (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Երևան, 1967, նաև 1983:

⁴¹⁴ Տե՛ս Ն. **Ավագյան**, Հայկական ժողովրդական տարազը (XIX-XX դդ. սկիզբ), Երևան, 1983:

⁴¹⁵ Народы Кавказа (Народы мира: Этнографические очерки), т. 2, М., 1962, с. 513-520.

⁴¹⁶ Армяне. Серия "Народы и культуры", М., 2012, с. 247-275.

⁴¹⁷ Տե՛ս Վ. **Բդոյան**, Հայ ազգագրություն. համառոտ ուրվագիծ, Երևան, 1974, էջ 95-112:

⁴¹⁸ Տե՛ս Ս.Ս. **Եսայան**, Ս.Գ. **Հնայակյան**, Ուրարտական զգեստը, «Պատմաբանասիրական հանդես», 1980, 3, էջ 203-215:

⁴¹⁹ Տե՛ս Գ. **Տիրացյան**, Դիտողություններ հելլենիստական դարաշրջանի հայկական տարազի մասին, «Տեղեկագիր», 1959, 11-12, էջ 97-101:

⁴²⁰ **И.В. Кузнецов**, Одежда народов Понта, М., 1955.

⁴²¹ Տե՛ս Ա. **Ստեփանյան**, Հայ ժողովրդական տարազի զարդանախշերը, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 22, Երևան, 2007:

⁴²² Տե՛ս Ս. **Պողոսյան**, Ծիրակ. Ջավախքի հայոց ավանդության տարազը (թեկնածուականատենախոսության սեղմագիր), Եր., 1994, նույնի՝ Ծիրակ-Ջավախքի տղամարդու ավանդության տարազ, Պատմաբանասիրական հանդես, 1993, 1, էջ 122-133, նույնի՝ Հարսանեկան հագուստը Ծիրակ-Ջավախքում (XIX-XX դ. սկիզբ), Բանբեր Երևանի համալսարանի, 1991, 3, էջ 132-141, նույնի՝ Մանկան հագուստը Ծիրակի և Ջավախքի պատմաագագրական շրջաններում, Լրաբեր հաս. գիտ., 1993, 1, էջ 77-84 և այլն:

⁴²³ Տե՛ս Հեղինե **Փափագյան**, Հայկական տարազ, Երևան, 2008:

⁴²⁴ Տե՛ս Գ. **Բրուսյան**, Հայկական տարազ, Երևան, 2007:

⁴²⁵ Տե՛ս Հայտնի և իր տարազները, «Հայ կին միություն», Թեհրան, աթ:

շերջերին բնորոշ հագուստն է՝ ձևվածքի, գույնի նյութի տեսակի, արտաքին հար-
դարանքի առանձնահատկություններով: Ամեն մի ժողովրդի տարազը պայմա-
նավորված է տվյալ երկրի բնակլիմայական և աշխարհագրական պայմաններով,
ազգային ավանդներով, կենցաղով, տվյալ երկրի բնական արտադրանքով,
տնտեսավորմամբ, տնտեսական զբաղմունքներով, պատմաքաղաքական պայ-
մաններով: Կարևոր դեր են խաղացել նաև բնակչության ներգաղթերն ու արտա-
գաղթերը, հարևան ժողովուրդների հետ ունեցած մշակութային կապերը:

Տարազը հարմարեցվել է աշխարհագրական միջավայրին և տնտեսական
գործունեությանը: Այն մարմնի շուրջ ստեղծել է արհեստական միկրոկլիմա,
պաշտպանել մեխանիկական, քիմիական վնասվածքներից, փոշուց, կեղտից,
խայթոցներից և այլն: Տաք գոտիներում տարազի գլխավոր գործառույթը մարմի-
նը զարդարելն է եղել⁴²⁶:

Տարազի ծագումն ու զարգացումը ընթացել է բազում հարյուրամյակների
ընթացքում՝ հիմքում ունենալով զարդարանքը, կիրառական և բարոյական գոր-
ծառույթները: Այն զարգացել է պարզունակ, անկար հարդերձանքից մինչև բարդ
ձևվածքի հագուստները:

Ավանդական տարազը մարդու ցեղային, դասային, սեռային պատկանե-
լությունը ցույց տվող անձնագիր է: Այն կայուն հատկանիշներով յուրահատուկ
էթնիկական ցուցիչ է, որը կապված լինելով տվյալ էթնիկական ընդհանրության
ծագման, զարգացման, պատմական ճակատագրի, որոշակի բնակլիմայական
միջավայրի հետ՝ արտացոլում է տվյալ էթնոսի մշակութային ինքնատիպու-
թյունն ու ազգային խառնվածքի որոշ առանձնահատկություններ: Տարազը սերտո-
րեն կապված է նաև էթնիկական ընդհանրության հոգեկան կերտվածքի առանձ-
նահատկությունների հետ⁴²⁷:

Միևնույն ժողովրդի տարազները կարող են տարբերվել միմյանցից կախ-
ված աշխարհագրական պայմանների առանձնահատկություններից, կլիմայա-
կան փոփոխություններից՝ ամառային, աշնանային, ձմեռային, գարնանային,
տարիքից մանկական, մեծահասակների և տարեցների, սեռից կանացի և տղա-
մարդու, նպատակից՝ տոնական, սգո, աշխատանքային, տնային, հարսանեկան և
այլն: սոցիալական դիրքից՝ հարուստներ և աղքատներ, քաղաքացիներ և գյուղա-
ցիներ:

Տարազային համալիրն ունի տարբեր գործառույթներ՝ կիրառական, սո-
ցիալական, սեռատարիքային, գեղագիտական, ծիսահմայական, հարզի համար-
վելու և այլն: Մարդուն պաշտպանելով ցրտից կամ շոգից՝ հագուստը կատարել է
գործնական գործառույթ, իսկ մարմինը զարդարելով՝ ձեռք է բերել գեղագիտա-
կան նշանակություն: Գեղագիտական գործառույթը շատ կարևոր դեր է խաղացել
տարազի համալիրում՝ հիմնական միտում ունենալով դուր գալ, գրավել հակա-
ռակ սեռի ուշադրությունը: Պատահական չէ, որ ժողովուրդն առանձնահատուկ
ուշադրություն է դարձրել տարիքային առանձին խմբերի հագուստին՝ հատկա-
պես հոգալով չամուսնացած աղջիկների ու տղաների, երիտասարդ հարսների
հագուստ-կապուստը:

Առտնին, առավել ևս տոնածիսական հագուստը, ինչպես նաև վերջինիս ա-
ռանձին տարրերը կիրառականից զատ, ունեցել են նաև հմայական, պահպանա-

⁴²⁶ Տե՛ս *C.A. Токарев*, նշվ. հոդվ., էջ 8:

⁴²⁷ *Մ. Պողոսյան*, Հայկական տարազի համալիրները (պատմաազգագրական ակնարկ (տե՛ս Ն. Փա-
փազյան, Հայկական տարազ, էջ 13-27):

կան գործառույթ՝ նպատակ ունենալով զերծ պահել հազուստի այս կամ այն տարրը կրողին՝ «չար» ուժերի վնասաբեր ազդեցությունից:

Տարազի համալիրում կյանքի այս կամ այն փուլին գուզընթաց, վերոհիշյալ գործառույթներից մեկը կամ մի քանիսը դառնում են առավել էական: Հազուստի առտնին տարբերակը որոշ առանձնահատկություններով հանդերձ՝ ընկած է տոնածիսական հիմքում⁴²⁸:

Տարբեր դարերում հազուստը մարդուն կապել է իր մասնագիտությանը, ծննդավայրին, ազգությանը: Հազուստի սոցիալ-տարբերակիչ գործառույթը միավորելով միևնույն սոցիումին պատկանող մարդկանց՝ միաժամանակ անջատում է նրանց մյուսներից: Միջնադարում գյուղացիները կրում էին խղճուկ զգեստներ, իսկ ավատատերերի հազուստն աչքի էր ընկնում իր ճոխությամբ: Յուրաքանչյուր դաս ուներ իր հազուստը, ինչը խստորեն պահպանվում էր: Հազուստի միջոցով թերևս կարելի է զանազանել սոցիալական առանձին խմբերի, սակայն մեր օրերում աստիճանաբար ավելի դժվար է դառնում դրանից կռահել կրողի ընտանեկան կարգավիճակը, տարիքը, մասնագիտությունը, որևէ կրոնի դավանելը և թե տվյալ հազուստը ինչ առիթի ու միջավայրի համար է նախատեսված:

Հազուստով կարելի է բացահայտել նաև կրողի ներաշխարհը, տրամադրությունը, գաղափարը: Մեր ազգային տարազը համապատասխանել է հայ մարդու վարք ու բարքին, նրա հասարակության մեջ գրաված դիրքին, բարոյական չափանիշներին, հոգեկերտվածքին, մասնագիտական հմտություններին, պահվածքին ու ճաշակին: Նրանում ամփոփված է եղել հայ մարդու ամոթխածությունը, միաժամանակ և արժանապատվությունը, կրթական մակարդակը, բանիմացությունը, մասնագիտությունը: Հազուստը, ինչպես և անհատի վարք ու բարքը, կենցաղը, մշակութային շատ տարրեր մշտապես գտնվել են հանրային մշտաբթուն հսկողության տակ, որն արգելում էր յուրաքանչյուր շեղում սովորութային գրված և չգրված իրավունքից, ավանդական բարքերից: Այն սերտորեն կապված է եղել էթնիկական ընդհանրության հոգեկան կերտվածքի առանձնահատկությունների հետ:

Տարազը և զարդարանքներն իրենց հետ բերած արվեստով նյութական մշակույթի ամենից կայուն տարրերն են: Դրանց մեջ մասնագետները որոնում և գտնում են ամենանախնական երևույթների լուր վկայություններ, որոնք առնչվում են ժողովրդի պատմական խոր անցյալին: Չկա ժողովուրդ, որ իր տարազի ուշ շրջանի արվեստով անմիջականորեն կապված չլինի իր նախնիների արվեստի հետ: Եթե նույնիսկ տարազի ձևերն ու զարդարման արվեստը բավական հեռացել են հնագույն ձևերից, այնուամենայնիվ այդօրինակ տարրերի պահպանումն անխուսափելի է: Կասկած չկա, որ վաղ շրջանից ժառանգված տարազաձևերն իրենց անընդհատ զարգացման ճանապարհին կրել են որոշակի փոփոխություններ՝ արտացոլելով նաև այն ժողովուրդների տարազաձևերի մասնակի ազդեցությունները, որոնց հետ երկարատև շփման մեջ են եղել: Այդպիսի փոխազդեցություններ միջնադարում եղել են հայկական և պարսկական, արաբական ու վրացական, հունական ու այլ ցեղերի ու ժողովուրդների տարազաձևերի միջև, որոնց հետ մեր ժողովուրդը գտնվել է երկարատև շփումների մեջ:

Տարազի համալիրների զարգացման ու փոփոխությունների պատմությունն անշուշտ կապված է մեր ժողովրդի պատմության, տեղաշարժերի, նրա

⁴²⁸ Տե՛ս՝ **Մ. Պողոսյան**, Հայկական տարազի համալիրները, էջ 14:

մշակույթի տարբեր ճյուղերի ձևավորման և տարածման հետ⁴²⁹: Եվ քանի որ տարազի կրած փոփոխությունները արտաքին ազդեցությունների արդյունք էին, դրանց ավելի շատ պիտի ենթարկվեր հայ ազնվական դասը, որը քաղաքական սերտ հարաբերությունների մեջ էր օտարների հետ և համեմատաբար քիչ գեղջկական տարազն ու առավելապես կանանց հանդերձանքը, քանզի ընտանեկան ներամփոփ կյանքը նրանց հեռու էր պահում արտաքին հաղորդակցություններից ու ազդեցություններից⁴³⁰:

Մատենագիրները և այլ աղբյուրներ հակառակ աշխատավոր դասի տարազակների, համեմատաբար հարուստ նկարագրություններ են թողել վերնախավի հազ ու կապի վերաբերյալ: Դրանցից տեղեկանում ենք, որ միջնադարյան օրենքների համաձայն կախման մեջ գտնվող հայկական բարձրաստիճան անձիք բարոյական ազդեցությամբ կրում էին նաև օտարներից նվեր ստացած կամ պարտադրված շքեղ տարազներ: Իրականում աշխատավոր ժողովուրդը սեփական տարազից այնքան էլ հեշտությամբ չէր հրաժարվում:

Երկրում ավատատիրական հարաբերությունների երկարաձգման, նահապետական ընտանեկան հին կարգերի, կրոնա-բարոյական, օժիտի ու այլ սովորույթների երկարատև պահպանումը կանանց տարազների անխաթար պահպանման խթան են հանդիսացել, մինչդեռ տղամարդիկ եղել են ավելի ազատ իրենց հանդերձանքի ընտրության պարագայում: Առավելապես այն շրջաններում, ուր հայ բնակչությունը փոքրամասնություն է կազմել, որտեղ հայ տղամարդը հարկադրված ընդունել է տեղում իշխող տարազը: Ուստի ազգային անհատականության արտահայտիչը հայ կնոջ տարազն էր⁴³¹:

Այդուհանդերձ, հայ ժողովուրդը գտնվելով Արևելքի և Արևմուտքի ոճերի բախման ու համադրման մի մարզում, հաճախ ինքն էլ ներգործուն դեր է կատարել հարևան ժողովուրդների տարազի վրա⁴³²:

Առևտրաարդյունաբերական և ապա դրամատիրական նոր հարաբերությունները հայկական գլխավոր քաղաքներում և հայաշատ այլ կենտրոններում, ուր առավելապես կենտրոնացած էին բուրժուականացող խավերը, հայկական ավանդական տարազը ենթարկվեցին որոշ վերամշակման ու կատարելագործման, հարմարեցվելով քաղաքային նոր կենցաղավարությանը: Քաղաքային տարազը տեղի տվեց եվրոպականին, իսկ գեղջկականը՝ երկար պահպանեց ազգային յուրօրինակ ավանդույթները:

Գյուղական շրջաններից քաղաք ներթափանցած տղամարդիկ այդ նորաձևությունների առանձին տարրեր տեղափոխում էին գյուղաշխարհ⁴³³: Սակայն այդ գործընթացը հայկական գյուղական ոչ բոլոր շրջաններին և ոչ բոլոր խավերին էր հատուկ: Արևմտյան Հայաստանում՝ Վասպուրականը, Մուշը, Մասունը իսկ Արևելյան Հայաստանում՝ Լոռին, Զանգեզուրը, Արցախը և Զավախքը բավական անաղարտ էին պահել տեղական տարազները: Փոխառումն հիմնականում ժառանգեց բուրժուական վերնախավը և մտավորականության մի մասը: Փաս-

⁴²⁹ Տե՛ս **Ն. Ավագյան**, Հայկական ժողովրդական տարազը (XIX դ. վերջ – XX դ. սկիզբ), Երևան, 1983, էջ 8:

⁴³⁰ Տե՛ս **Վ. Հազունի**, նշվ. աշխ., էջ 11:

⁴³¹ Տե՛ս Հայուհին և իր տարազները:

⁴³² Տե՛ս **Ա. Պատրիկ**, Հայկական տարազ. հանագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, 1983, էջ 14:

⁴³³ Տե՛ս **Գ. Բրուսյան**, Հայկական տարազ, էջ 10:

տորեն XIX-XX դարերը մի ժամանակաշրջան է, երբ ազգային տարազը կորցնում է իր հարաբերականորեն կայուն վիճակը և արագորեն փոփոխվում էր կամ փոխարինվում օտարով⁴³⁴։ Այդ գործընթացը երիտասարդության մեջ ավարտվեց 1920-ական թվականների վերջերին, իսկ մտավորականությունը ամբողջապես քաղաքային տարազով էր։ Միյուրեքի հայությունը լիովին ընդունել էր եվրոպականը։

Գյուղական վայրերում հին ավանդույթների պահպանման շնորհիվ տարբեր սեռերի և հասակների ազգային տարազի համալիրները տարբեր ժամանակներում ավելի դանդաղ էին զիջում իրենց տեղերը։ Եթե նոր սերնդի տղամարդկանց տարազը 1930-ական թվականներին գրեթե քաղաքայնացած էր, մինչդեռ ավագ սերնդի տղամարդիկ հին տարազը պահպանեցին մինչև 1950-ական թվականների վերջերը⁴³⁵։ Ավագ սերնդի կանայք ավելի պահպանողական գտնվեցին՝ հին տարազը տեղ-տեղ պահպանեցին մինչև 1980-1990-ական թվականները (Չանգեզուր, Արցախ)։

Այսպիսով, հայկական ազգային-ավանդական տարազը XX դարի կեսերից սկսեց աստիճանաբար դուրս մղվել կիրառությունից։

Մեկ հանգամանք ևս։ Պատմական Հայաստանի տարբեր կողմեր ձգվող անանցանելի լեռնաշղթաների գոյությունը պատճառ է դարձել շատ շրջանների մեկուսացման առիթ տալով տեղական ուրույն տարազային համալիրի ձևավորմանը։ Հանգամանալի պրպտումների միջոցով հաջողվել է գատորոշել առանձին գավառների տարազի բնորոշ կողմերը, ավանդական ձևերը, հարևան գավառների հետ ունեցած նմանություններն ու տարբերությունները, որոնք արտահայտվում էին ձևավածքի, զարդարման եղանակի, նյութի տեսակի և որակի ու գույների յուրօրինակությամբ⁴³⁶։ Յուրաքանչյուր ազգագավառին բնորոշ տարազ բնակիչների ճաշակի, տեղական ոճի, աշխարհագրական դիրքի և այլնի արտահայտիչն է։

Այսպիսով, մինչև XX դարի սկզբները, իսկ որոշ ավանդապահ շրջաններում անգամ մինչև մեր օրերը բնաշխարհի ինքնատիպությանը և բնակչության տնտեսավարման ձևերին համապատասխան գոյությունը ունեին պատմական զարգացման երկարաջև ուղի անցած տարազի բազմաթիվ ինքնատիպ խմբեր, որոնք համահայկական ընդհանուր գծերին զուգահեռ, ունեին նաև տվյալ շրջանին բնորոշ յուրահատկություններ։ Հայկական տարազի առանձին խմբերը, նրանց տարբերակները հիշեցնում են մեր հարուստ ու գեղեցիկ լեզվի զանազան բարբառները, որոնք չափազանց ինքնատիպ լինելով հանդերձ անխզելիորեն կապված են միասնական լեզվին։

Հայոց ավանդական տարազային համալիրները գրեթե համընկել են Պատմական Հայաստանի աշխարհներին։ Հայաստանի պատմության պետական թանգարանի ֆոնդերում պահվող բազմաքանակն խմբերի հիման վրա ազգային տարազի ուսումնասիրողներից մեկը՝ Առաքել Պատրիկը իր «Հայկական տարազ» գրքում կազմել է տարազի մի հետաքրքիր քրտեզ, որում Պատմական Հայաստանի 15 աշխարհների տարազի համալիրների խմբերում հաշվվում է 47 տարազանուշ, գրեթե նույնքան էլ կազմել են հայոց բարբառները։ Այդ և ավելի բազմաքա-

⁴³⁴ Տե՛ս **Ն. Ավագյան**, նշվ. աշխ., էջ 9։

⁴³⁵ Տե՛ս **Գ. Բրուսյան**, նշվ. աշխ., էջ 12։

⁴³⁶ Տե՛ս **Ն. Ավագյան**, նշվ. աշխ., էջ 8։

նակությունը հաշվառելիս՝ պետք է նկատի ունենալ, որ տարազային այդ խմբերը նաև ունեցել են իրենց սեռա-տաիրքային տարբերակաները. կանանց մոտ այն կազմել է գուտ տարիքային. մանկական, արբունքի շրջան, երիտասարդ և ապա՝ տարեց կնոջ, տղամարդկանց մոտ՝ երեք. մանկական, երիտասարդ և ապա տարեց մարդու համալիրներ: Բայց քանի որ նշվածը ունեցել է նաև գյուղական և քաղաքային տարբերակներ, ապա այդ թիվը շատ ավելի մեծ կլինի:

Հայկական տարազը պատմական զարգացման երկարատև ուղի անցած համակարգ է (նույնքան հին է, որան հայ ժողովրդի պատմությունը)՝ առանձին, ինքնատիպ խմբերով, որոնք ընդհանուր են կառուցվածքով: Բոլոր տարազախումբերում այն կազմված է ներքնազգեստից, վերնազգեստից, գլխի հարդարանքից և զարդարանքից, ազանելիքից (գուլպա, ոտնաման, տղամարդկանցը նաև՝ ոտքի փաթաթան, սոնապան): Տարբերությունները հաճախ ոճավորման մեջ են, իսկ հագուստի ոճը դրսևորվել է ձևվածքային լուծման, հիմնական ձևերի, հագնելու եղանակի,, գունային համադրության, գեղագարդման եղանակների մեջ:

Ընդհանուր բնութագրով, հայկական տարազն առանձնանում է երկարափեշությամբ, արձակ է, ունի կտրվածքներ առջևից, կողքերից, ուղեկցվում է գոտիով, գունային համադրությունում գերակշռել է կարմիր, կապույտ, կանաչ, մանուշակագույն, դեղին գույները: Գունազադրվել է երիզ-քողով, ասեղնագործության տարբեր ձևերով:

Մեզանում մեկ համահայկական ընդհանուր տարազ չի եղել: Հայոց տարազի համակարգը կազմել են արևմտահայկական՝ Վասպուրական, Աղձնիք, Տուրուբերան, Բարձր Հայք, ներառյալ՝ Շիրակ-Ջավախք, Տրապիզոն (Պոնտական Հայաստան), Փոքր Հայք, Կիլիկիա և արևելահայկական՝ Այրարարատ (ներառյալ Թիֆլիս, Պարսկահայք), Սյունիք-Արցախ, Գուգարք, Վայոց ձոր և այլ համալիրներ:

Արևմտյան և արևելյան Հայաստանի տարազի համալիրները տարբերվել են նրանով, որ կնոջ, անգամ տղամարդու տարազն արևմտյան գավառներում ճոխ է ասեղնագործվել և գոգնոցը նրա տարազի բաղկացուցիչ մասն է կազմել, մինչդեռ, արևելյանում՝ դրանք գրեթե բացակայել են:

Հայ կնոջ զգեստը բոլոր գավառներում գրեթե նույն էր՝ նույն ներքնազրգեստ շապիկը (սպիտակ կամ կարմիր), կարմիր վարտիքը՝ ներքին եզրում զարդարված: Ձգեստը պճղնավոր էր, կողքերից՝ ճեղքվածքներով: Բոլոր համալիրներում կրծքի և կողքերի ճեղքվածքները հարդարվել են քողերով կտրվածքը կտորից նեղ երիզներով: Տարազի պարտադիր մաս էին կազմում երկար կտորից կամ մետաքսյա մի քանի տակ իրանի շուրջ փաթաթվող գոտիները:

Արևելյան Հայաստանում տղամարդու տարազն, ի տարբերություն կնոջ տարազի, բնութագրվում էր ընդհանուր գծերով: Այն ավելի փոփոխական էր և անհամեմատ արագ է կորցրել ազգային նկարագիրը: Տղամարդու տարազը բաց ու ընկալունակ համակարգ էր, ինչը արդյունք էր տղամարդկանց հասարական, տնտեսական և ընտանեկան ազատ դրության, միջլեթնիկական բազմակողմանի, երկարատև մշակութային, տնտեսական կապերի: Արևելյան գավառներում տարածվել էր «կովկասյան» կոչված տարազաձևը, որը կազմված էր ներքնազգեստից, արխալուղ կարճ վերնազգեստից ու չուխայից (երկարափեշ տաք վերնազգեստ): Չմոռանք հագել են երկար, լայն մուշտակ առանց գոտու, գլխին կրել գառան կամ ոչխարի մորթուց գլխարկ: Վերջինս կիրառական նշանակությունից գատ և անկախ, մի կողմից տղամարդու պատիվն էր, մյուսից՝ առնչվում էր ազ-

գային վարք ու բարքի, պահվածքի չափանիշներին:

Արևմտահայերի տղամարդկանց տարազն էակնորեն տարբերվում էր. այն կազմված էր ասեղնագործ տարրերից՝ ելակ – կարճ, անթև զգեստ, վերնաշապիկ, կարճ վերնագգեստ: Հագուստը զարդարվել է գերազանցապես երկրաչափական պատկերներով, բուսանախշերով: Շապիկի թևքերը հարդարվել են ասեղնագործ հավելվածով, մեջքին կապել են բրոյա գոտի, որը միաժամանակ գրպանի դեր է կատարել:

Ձմռանը բամբակե ներդիրով զգեստների վրայից հագել են ոչխարենուց մուշտակներ կամ այծի մազից կարճ վերնագգեստներ: Գլխի հարդարանքը կազմել են թաղիքե սպիտակ գդակները՝ մետաքսյա ծոպազարդ գլխաշորով: Տղաները կրել են ամբողջովին ասեղնագործ, գունազարդ գոտի: Արևմտահայ տղամարդկանց տարազն առանձնանանում էր ինչպես կարճ վերնագգեստի առկայությամբ, այնպես էլ ասեղնագործ բանվածքներով: Գույնի, զարդանախշերի, կապույտ ուլունքների, ծոպերի ու կապ-հանգույցների միջոցով փորձել են ապահովել հագուստը կրողի պաշտպանությունը փորձանքներից, չարակամ, վնասաբեր ուժերից:

Երկու խոսք հարսանեկան, տոնական զգեստների մասին: Տոնածիսական հագուստն արտացոլում է մարդկային կյանքի այս կամ այն փուլը՝ ծնունդ, հարսանիք, մահ: Հարսանեկան հանդերձներն արտահայտում են կյանքի ամենացրնծուն հանդեսի խորհուրդներն ու խնդիրները: Այն կրողը համեմատվել է ծաղկող ծառի հետ, իսկ հանդերձանքը՝ ծառայել է որպես զարդարանք: Այն ուղեկցվել է սրբազան նշանակություն ստացած տարրերի՝ գոգնոց, գոտի, քող, ուսկապ պարտադիր առկայությամբ: Հարսանեկան զգեստը առանձնացել է գունագեղ, բարձրորակ կտորների ընտրանիով, կանաչ, կարմիր, կապույտ և այլ վառվռուն գույների մետաքսե, թավշե կտորներից կարված զգեստի վրա, գոտկամասում կարմիր գույնի թավշե, մահուղե գոգնոց, որն ամրացվել է մետաքսե գոտիով: Կրծկալը զարդարվել է լիմոնաձև, ծաղկաձև նախշերով: Այս ամենը միտված է եղել ամուսնական գույգի բեղմնավորության և արգասավորության խթանմանը:

Հարսնացուն մտնելով ամուսնական տարիքային խմբի մեջ, ի տարբերություն աղջիկների, արդեն կրում է գլխի բարդ հարդարանք, որը պահպանվում է ամբողջ կյանքում: Հարսի գլխին կապել են կարմիր և սպիտակ գույների մետաքսե քող, մեկը մինչև կրծքամաս, ծածկելով երեսը, մյուսը՝ ուսերն ի վար:

Գլխի հարդարանքից բացի, հարսն ուներ նաև հարուստ զարդարանք:

Փեսայի հագուստը ծիսական իմաստ էր ստանում ուսկապ-կոսբանդի գործածությամբ՝ կանաչ, կարմիր գունային զուգորդությամբ:

Հագուստի գունային նրբերանգների ընտրությունը՝ կարմիր, կապույտ, կանաչ, կարմիր գույնի գերակշռությամբ տարազի առանձին մասերի ասեղնագործությունը, հագուստի որոշ տարրերի՝ գոտու, գոգնոցի, կրծքկալի, գլխի բարդ հարդարանքի, ճակատնոցի, քունքամասերի, գլխաշորի զարդերը և բուսական, երկրաչափական նախշերով նպաստել են գույգի բեղմնավորությանը, արգասավորությանը:

Տարազն ներառում է ինչպես հագուստը, այնպես էլ գլխանոցը, ագունելիքը և դրանց աձանցվող արդուզարդը: Այժմ անդրադառնանք դրանց կիրառման առանձնահատկություններին ու ծիսական խորհուրդներին:

Գլխի հարդարանք: Սա տարազի կարևորագույն մասերից է և իր ամբողջության մեջ պահպանում էր հնագույն տարրեր՝ կապված տեղական ավան-

դույթների հետ: Երկու սեռի գլխի հարդարանքներն էլ պահպանում էին սեռատարիքային դասակարգման բազմաթիվ մանրամասներ: Տարիքային մի փուլից մյուսին անցնելուն զուգընթաց զգեստի տարատեսակների հետ փոփոխության էր ենթարկվում նաև գլխի հարդարանքը⁴³⁷:

Տղամարդկանց գլխի հարդարանքներում զարդանախշմամբ առանձնանում էր **արախչին** կոչվող գլխարկատեսակը, որը քաթանից կարված 10-15 սմ բարձրությամբ, գլանաձև ու տափակ զագաթով գդակ է՝ կողային և զագաթային մասերն ամբողջությամբ կամ մասնակիորեն ասեղնագործված: Այն լայն տարածված է եղել արևմտահայոց մեջ: Տղամարդկանց գլխի հարդարանքի մյուս տեսակները՝ **քոլոզ**, **փափախ** և այլն չէին զարդանախշվում:

Տղամարդու գլխարկը կիրառական նշանակությունից զատ և տիպից անկախ, մի կողմից տղամարդու պատիվն էր, մյուս կողմից առնչվել է ազգային վարք ու բարքի, պահվածքի չափանիշներին: Տղամարդու համար դգակ-գլխարկը զուգորդվել է տղամարդկային արժանապատվության հետ: Այս իմաստով ծեսերում կարևորվում էր գլխարկը դնելու և հանելու պարագան: Եկեղեցի մտնելիս, թաղման թափորի և արժանապատիվ մարդկանց հանդիպելիս անպատճառ հանել են գլխարկը: Այն զցելը համագոր էր պատվագուրկ անելուն⁴³⁸:

Կանանց գլխի հարդարանքը բազմամաս էր ու բարդ կառուցվածքով: Նրանում ցայտուն էին արտահայտված սոցիալական և տարիքային փոփոխությունները: Աղջկա, ամուսնացած կնոջ և այրի կնոջ գլխի հարդարանքը տարբերվել է ինչպես կառուցվածքով, այնպես էլ զարդանախշմամբ ու գույնով: Մինչև արբունքին հասնելը գլխաբաց էին, որից հետո ծածկում էին գլխաշորով: Գլխաշորը ոչ միայն տարիքային հասունացման խորհրդանիշ էր, որի պատճառով նշանդրեքին ասում էին «Եկել ենք մի լաչակ ուզելու»⁴³⁹:

Խիստ տարբեր են եղել կանանց գլխի հարդարանքի տիպերը. բաց և փակ: Փակ տիպի գլխի հարդարանքը չէր ենթադրում գոգնոցի պարտադիր առկայությունը՝ բացառությամբ Վասպուրականի հայ կանանց: Նրանց գլխի հարդարանքը փակ տիպի էր՝ գոգնոցի առկայությամբ:

Հայոց մեջ տարածված էր դեմքը՝ քիթ-բերան, ծնոտ ծածկելու սովորույթը, բայց ավելի պարզեցված, քան Արևելքում: Օրինակ՝ Վանում կանայք ամուսնանալիս կրել են գլանաձև գլխրակ, որի գլխին ամրացվել է եռանկյունաձև գլխաշորով: Ճակատը հարդարել են ճակատակալով՝ կապույտ ուլունքներով, արծաթե ճակատագարդերով, մեծ ու փոքր կիսալունաձև կենտրոնական զարդով. քունքամասերը զարդարել են եռանկյունաձև ակնագարդ կախիկներով: Գլխի հարդարանքը ամբողջացվել է եռանկյունաձև կարմիր քաթանե գլխաշորով, որի հետևի անկյունը քառակուսի դաշտով հարդարվել է կենաց ծառերի, երկրաչափական ու կենդանական ասեղնագործ պատկերներով: Սյունիք-Արցախում ամուսնությունից հետո կնոջ գլուխը կապում էին հատուկ աշտարակ դնելով գլխին, փակում էին բերանը և քթի ծայրը:

Բարձր Հայքին բնորոշ էր բաց տիպի գլխի հարդարման համալիրը: Օրինակ՝ կարնեցիներով բնակեցված Ջավախքում, նաև Շիրակում ճակատակալը

⁴³⁷ Տե՛ս **Ն. Ավագյան** նշվ. աշխ., էջ 81:

⁴³⁸ Այսու մասին մանրամասն տե՛ս **Ա. Մսեկիսնյան**, Հայ ժողովրդական տարազի զարդանախշերը, էջ 22 և այլն:

⁴³⁹ Տե՛ս **Ռ. Նահապետյան**, Աղձնիքահայերի ամուսնահարսանեկան սովորույթներն ու ծեսերը (պատմագագրական ուսումնասիրություն), Երևան, 2007, էջ 68:

հայտնի էր վարդ անվամբ, որը ասես չքնադ մի պարտեզ լիներ՝ ասեղնագործ ժանյակով, բնական գուներանգներով, նրբահյուս ծաղիկներով՝ որոնք գարնան շունչ ու հոգի են տվել կրողին: Պատահական չէ, որ միջնադարյան տաղերում կինը ներկայացվել է նաև բուսական նիշով՝ համեմատվելով վարդի, նարգիզի, մանուշակի; ծառի՝ բարդու, նռենու, արմավենու հետ: Ժողովրդական երգերում կինը համեմատվել է բաղ ու բաղջայի, իսկ աղջիկները՝ կոկոն, տակավին չբացված ծաղկաշխարհի հետ:

Գլխազարդերը մեծ մասամբ ունեցել են փոքրիկ սերմերի, կորիզների տեսք: Իսկ յուրաքանչյուր կորիզ ունի ապագա ծառի բացահայտման ծրագիր: Այդ պատճառով էլ կորիզը դրվել է գլխին մոտ, քանզի գլուխը ևս ծրագրավորող կենտրոն է: Բացի այդ, ճակատակալի հնագույն օրինակներում ծաղիկների հետ միասին ամրացվել են կարմիր պոչով ու կատարով աքաղաղներ (խորոզներ), որոնք ներկայացված են եղել շարժման ձևով: Հայտնի է, որ աքաղաղը առնչվել է պտղաբերության, բեղմնավորման, որդեծնության գաղափարի հետ:

Գլխի հարդարանքի մեջ կապ-հանգույցները գործնականից և գեղագիտականից գատ ունեցել են նաև ծիսական նշանակություն: Հավատում էին, որ այն ապահովում է տան բարեկեցությունը, ամուր ու հաստատուն պահում տունն ու ընտանիքը: Կնոջ գլուխը ծածկելու սովորույթը որոշ ուսումնասիրողներ կապում էին մազերը թաքցնելու գաղափարի հետ, քանզի՝ ժողովրդական ընկալմամբ մազերն օժտված են մոգական գործությամբ, ինչն իր հերթին առնչվում է բուսականության ու արգասավորության գաղափարին⁴⁴⁰:

Գլխի հարդարանքի կապ-հանգույցները ընկալվել է նաև յուրօրինակ պահպանակ ապահովելով կրողի անձեռնմխելիությունը: Դրա հիմքում ընկած է այն մտայնությունը, որ չարը խճճվում է և չի կարողանում անցնել ցանցկեն հյուսքի միջով⁴⁴¹:

Քաղաքային միջավայրում բացառիկ դեպքերում, արևելյան սովորության ազդեցության տակ, արևմտահայ երիտասարդ կանայք քաղաքային միջավայրում թուրքական թաղամասերով ազատ, համարձակ անցնել չէին կարող: Եկեղեցի, շուկա գնալիս կամ առհասարակ փողոցով անցնելիս՝ ծածկվելու էին սպիտակ, կապույտ ծածկոցներով, սավաններով: Աղջիկների ծածկոցը զարդարվել է լիմոնաձև նախշերով, որով ծածկվել է ամբողջ մարմինը գլխով հանդերձ: Կամ էլ ստիպված էին մինչև աչքերը շալերով ծածկվել, որպեսզի չնկատվեր նրանց գեղեցկությունը⁴⁴²:

Այս օտարամուտ, ուշ մուտք գործած սովորույթ է, մուսուլմանական կենցաղի ազդեցության արտահայտություն:

Ազանելիք: Գուլպան և կոշիկը հայոց վաղեմի ժամանակներից տարազի անբաժանելի մասն են կազմել: Կոշիկը և գուլպան Հայաստանում վկայված է հնագիտական պեղումների շնորհիվ դեռևս ք.ա. 6 հազար տարի առաջ Արենիի քարանձավներից մեկում: Թերևս դա աշխարհի ամենահնագույն վկայություններից է, ըստ որում կաշվե այդ կոշիկ-տրեխները պահպանված են անխաթար և գրեթե չեն տարբերվել XX դարի կեսերին գործածած տրեխներից:

⁴⁴⁰ Տե՛ս **Ա. Մտեփանյան**, նշվ. աշխ., էջ 22:

⁴⁴¹ Տե՛ս **Հ. Փափազյան**, նշվ. աշխ., էջ 19:

⁴⁴² Տե՛ս **Ռ. Լահայկեոյան**, Կինը հայոց ավանդական ընտանեկան կենցաղում (ըստ սասունցիների ազգագրական սովորույթների), «Պատմաբանասիրական հանդես», 2009, թիվ 1, էջ 82:

Գուլպա, տղամարդիկ նաև՝ սոնապան կրել են դեռ ուրարտական շրջանում՝ երկայնակի կամ լայնակի գծանախշերով: Դրանք գործվել են բրոնզա, բամբակյա, մետաքսյա թելերից: Գուլպան ունեցել է երեք մաս՝ եզրաշերտ, ճիտք և թաթ: Գուլպաները նախշազարդվել են երկրաչափական, մարդակերպ, թռչնաձև, շրջանաձև, խաչաձև, քառանկյունաձև, եռանկյունաձև զարդանախշերով: Բուսանախշերից ամենատարածվածը կենաց ծառի ծաղկանախշերի մոտիվն է:

Կոշկեղենից զարդանախշվում էին կանանց մաշիկ-հողաթափերը արծաթաթել-ոսկեթել բանվածքով, ուլունքների, թանկարժեք ու կիսաթանկարժեք քարերի օգտագործմամբ: Հայոց կենցաղում առավել կիրառական էին հյուսկեն գուլպաները, թոզլուխները, սոնապանները: Զարդանախշ գուլպեղենն օժիտի պատվավոր տարր էր հայոց մեջ⁴⁴³:

Գուլպան պտղաբերության մոգական խորհուրդ է ունեցել, քանզի գուլպաների լայն փոխանակություն է կատարվել ոչ միայն պսակվողների ազգականների, այլև բոլոր խնամիների միջև⁴⁴⁴: Փեսացուին որպես նվեր ուղարկել են կենաց ծառերով, թռչնազարդերով, ոսկեթելով զարդարված գուլպա և սոնապան: Թրոչնապատկերների մեջ հաճախ կենաց ծառի հետ հանդես է եկել աքաղաղը: Վերջինս սեռական զորության խորհրդանիշն էր⁴⁴⁵: Հարսնախոսությունից մինչև հարսանիքն ընկած ժամանակամիջոցում, մանավանդ տոն օրերին, նվերների փոխանակման սովորույթ կար, որոնց մեջ անպայման գուլպա, գուլպի թել կամ մաշիկ էր լինում: Ազանելիքն առհասարակ, որպես գույգ առարկա, ամուսնացող գույզն ու գուգավորումն է խորհրդանշել: Բացի այդ՝ դրանց նվիրատվություններն ու սիրաշահումները հետապնդել են մի նպատակ՝ միմյանց կապել խնամիացած ընտանիքները⁴⁴⁶:

Հայերը կին թե տղամարդ, հագել են սոնայնագործ կաշվե սրածայր ոտնաման՝ տրեխ՝ բրոնզա կամ կաշվե կապերով: Կանայք տանը հագել են կարմիր, դեղին գույների, ոտքի թաթը քիփ գրկող փափուկ կաշվե ոտնաման՝ դեղին կամ սպիտակ քուղերով եզրազարդված: Դրսում դրա վրայից հագել են սրաքիթ՝ ետնամասը բաց հողաթափ, որի ներքանի վրա ներսից ծառանման, բազմաճյուղ զարդեր են արվել: Նույն նախշերն արվել են նաև ոտնամանի երեսին: Կարմիր մահողով վերնամաս ունեցող ոտնամանը գեղազարդվել է բազմագույն բուսանախշերով: Կանայք տանը հագել են նաև հողաթափի մեկ այլ տեսակ, որի երեսը սև թավիշից էր՝ սրածայր քթամասով, առանց կրունկի, հարթ կաշվե ներքանի վրա⁴⁴⁷:

Յուրաքանչյուր ազգագրական շրջանում ազանելիքն ունեցել է ոչ միայն սոցիալ-տնտեսական դրության ակնհայտ նշաններ, այլև հյուսման ու զարդարման այնպիսի ենթաձևեր, որոնք ներկայացնում էին սեռատարիքային դասակարգման առանձնահատկություններ:

Ոտնամանն ուներ նաև մոգական նշանակություն: Տունը չար աչքից գերծ պահելու համար շեմի վերնամասում հին ոտնաման էին կախում, իսկ հարսանիքի օրը հարսնացուի կոշիկների մեջ զարնանացան ցորեն կամ կորեկ էին լցնում, քաղաքներում՝ մանր դրամ, որպեսզի հարսը կորեկի նման արգասաբեր, պտղա-

⁴⁴³ Տե՛ս **Ռ. Նահապետյան**, Աղձնիքահայերի ամուսնահարսանեկան սովորույթներն ու ծեսերը, էջ 90:

⁴⁴⁴ Տե՛ս **Ն. Ավագյան**, նշվ. աշխ., էջ 91:

⁴⁴⁵ Տե՛ս **Հ. Փափազյան**, նշվ. աշխ., էջ 23:

⁴⁴⁶ Տե՛ս **Ա. Ստեփանյան**, նշվ. աշխ., էջ 24:

⁴⁴⁷ Տե՛ս **Հ. Փափազյան**, նշվ. աշխ., էջ 23:

բեր լիներ⁴⁴⁸:

Գոգնոց, գոսի: Գոգնոցը կամ դրա նախատիպը ևս հագուստի հնամենի տարրերից է: Գոգնոցի գործածությունն անպայմանորեն կապված էր աղջիկների տարիքային հասունացման որոշակի փուլի, այն է հարսնության հետ:

Գոգնոցը քառանկյունաձև, կարմիր մահուդե, մետաքսե կամ բրդե կտոր էր, որի երեք եզրը զարդարվել է ոսկեթել տրեզով: Գոգնոցի եզրագոտին ծաղկանախշերի շարք է կազմել, անկյուններում ասեղնագործվել են կենաց ծառեր կամ նշաձև խոշոր զարդապատկերներ, հաճախ անվատառերով: Հաճախ ասեղնագործվում էին կենաց ծառ, վրան մեկական թռչուն: Սրանք ծլարձակման, գույզի բեղմնավորության, կյանքի հարատևության, սերնդաշարունակման, նաև բարեկեցիկ կյանքի, հարստության խորհրդանիշեր են եղել:

Գոգնոցի երկրորդ տիպը ծածկում էր առաջնամասը՝ կատարելով կրծկալի դեր: Եթե Վասպուրականում գերակշռել է կարմիր, ապա Սասունում կապույտ գույնի բրդյա կտորից լինելը: Առհասարակ, կարմիր, կապույտ գոգնոցը, կարմիր գոտին և գլխի կարմիր քողը սեռային խորհրդանիշեր են: Կարմիր գոգնոցը գուգորդվել է կանացիության, բեղմնավորության, սեռական կյանքով ապրելու և վերջին հաշվով սեռական ամոթի հետ: Գոգնոցը վրայի զարդանախշերով հանդերձ կոչված է զերծ պահել կրողին չար ուժերից, ապահովել որդեճնության կարողությունը, պաշտպանելով կուրծքը և գոտկամասը⁴⁴⁹: Այն պետք է պահպաներ կնոջն ու նրա ապագա պտուղը զանազան չար ուժերից: Այս իմաստով գոգնոցն ինքն էլ վերածվում է պահպանակի, ինչ նշանակությամբ էլ կիրառվում է մի շարք սովորություններում: Այսպես՝ նորածնին փաթաթում էին տատմոր գոգնոցի մեջ, որ առողջ ու երկարակյաց լիներ⁴⁵⁰:

Գոգնոց բառը ծագել է «գոգ» արմատից, որտեղից էլ «գոգո լիքը լինի» օրինանքը, որը շատ զավակներ ունենալու մաղթանք է: Գոգնոցը խորհրդանշել է ամուսնացած կնոջը. կարմիր գոգնոց՝ նշանակել է կին: Երիտասարդ աղջիկը նման գոգնոց չի կրել: Խորհրդանշական է՝ «գոգնոցը խելքի կրերի կնոջը» ժողովրդական առածը:

Հայոց մեջ օգտագործվել են գոտու տարբեր տեսակներ՝ սկսած շալե գործվածքներից մինջև կաշվեղենն ու մետաղականը: Տղամարդկանց ծանր ու լայն գոտիները տարբերվում էին ճարմանդի կառուցվածքով և ունևորության չափանիշ էին համարվում, ինչը հաստատվում է լեզվական տվյալներով: Այսպես «գոտին լայն կապել» նշանակում է բարեկեցիկ կյանք վարել, «գոտին հաստացնել»՝ հարձատանալ և հակառակը:

Տղամարդու գոտին ի սկզբանե հանդես է եկել նաև որպես իշխանության խորհրդանիշ⁴⁵¹: Նախնական մտածողության համաձայն՝ իշխանության որևէ խորհրդանիշ յուրովի անձեռնմխելի է: Գոտուն միայն ձեռքով դիպչելը նշանակում էր ոտնձգություն դիմացինի իշխանության, հեղինակության նկատմամբ կամ շնորհագրկում: Գոտին արձակելը նշանակում էր ոչ միայն պատվազրկել, այլև անպաշտպան թողնել, քանզի այն որպես հմայիլ պահպանակ պաշտպանում էր կրողին: Փաստորեն գոտին իբրև մոգական շրջանակ՝ ըստ ժողովրդական

⁴⁴⁸ Տե՛ս **Ռ. Նահապետյան**, Աղձնիքահայերի ամուսնահարսանեկան սովորույթներն ու ծեսերը, էջ 154:

⁴⁴⁹ Տե՛ս **Ս. Պողոսյան**, նշվ. աշխ., էջ 20:

⁴⁵⁰ Տե՛ս **Ս. Ստեփանյան**, նշվ. աշխ., էջ 16:

⁴⁵¹ Տե՛ս նույն տեղում, էջ 71:

մտածողության ունեցել է պահպանակի նշանակություն: Հավանաբար սրանով կարելի է բացատրել հատուկ ծիսական գոտիների առկայությունը հոգևոր դասի հանդերձանքում, որպիսիք կրում էին պսակադրության, մկրտության ծեսերին, եկեղեցական արարողությունների ժամանակ:

Հարսանեկան ծիսակատարության ընթացքում փեսային գոտի նվիրելը կամ կապելը նշանակել է ոչ միայն սոցիալական վիճակի փոփոխություն, այլ նաև՝ ամուսնական իրավունքի շնորհում:

Խորհրդանշանային այլ բովանդակություն ուներ կնոջ գոտու ծիսական կիրառությունը: Կնոջ գոտին, ինչպես գոգնոցը, անմիջականորեն կապված էր հարսնանալու հետ: Հարսի գոտին կապելը հատուկ արարողություն էր: Այս գործողությունում քավորն իբրև ծիսական անձնավորություն, հարսին առնում էր հմայական շրջանի մեջ՝ «չար ուժերից» պաշտպանելու նպատակով: Այս իմաստով հարսի գոտին կապելն ամուսնական կապի մեջ մտնելու առաջին քայլն է, իսկ արձակելը՝ հարսանեկան ծիսակարգի ավարտական փուլը:

Շատ վայրերում հարսի զգեստները հագցնելիս գոտին կապում էր քավորը: Նա գոտին երեք անգամ պտտում էր հարսի գլխավերևում կամ նրա գոտկատեղի շուրջ՝ ձախից աջ, ապա խփում էր հարսի ուսերին ու ասում. «Աստված քեզ որդի տա»: Մեկ այլ դեպքում, երբ հարսին զգեստավորում էին, հրավիրվում էր քավորը՝ հարսի գոտին կապելու համար: Նա, նախքան կապելը, գոտին երեք անգամ հարսի գլխավերևից զգում էր հարսի ոտքերի առջև: Գոտին հարսի գլխավերևում պտտեցնելիս կամ զցելիս քավորը, թեթևակի խփելով հարսի ուսին, ասում էր. «Աստված քեզ մի դոչ տղա տա» կամ էլ՝ «յոթն ինձ նման, մին քեզ նման»⁴⁵²:

Զարդեր: Զարդն իբրև ավանդական մշակույթի տարր, արտահայտել է կրողի գեղագիտական նախասիրությունները և գեղեցիկի ընկալման առանձնահատկությունները, կարգավիճակը, կենսական այս կամ այն իրադրությունը: Զարդերը կանացի սեռի հագուստի հարդարմանն էին նվիրված, թեև համեստորեն զարդարում էին նաև տղամարդկանց զգեստները,⁴⁵³ քանզի գեղագիտական դերից բացի, զարդերն ունեցել են կիրառական, պաշտպանական հմայական նշանակություն՝ սեռա-տարիքային առանձնահատկություններով: Տղամարդու երբեմնի հարուստ զարդարանքից՝ ուլունքաշարեր, գլխազարդեր, ճակատակալ, ապարանջաններ, բազպաններ, մատանիներ, գոտի և այլն, ավանդական կենցաղում առավել հաճախ գործածվել են վերջին երկուսը⁴⁵⁴:

Հնագույն և վաղ միջնադարյան մատենագրական հարուստ տեղեկություններ կան տոնական ու պաշտոնական զգեստների, ոսկե և արծաթե զարդերի՝ գոտի, մատանի, ապարանջան, մանյակ, գինդ, գլխի հարդարանքի զարդ, նաև օժանելիքի և օծվելու սովորությունների մասին: Այս հաստատվում է նաև մանրանրկարչությամբ և քանդակապատկերներով⁴⁵⁵:

Զարդերի հատուկ խումբ են կազմել հմայիլ պահպանակները՝ սև կամ կապույտ-սպիտակ գունային զուգորդումներով աչքուլունք, հոտուրթներ, բոժոժներ, խաչեր, ոտքի և ձեռքի ապարանջաններ, օձակերպ մատանիներ, շերեփուկաձև, կիսալուսնաձև, եռանկյունաձև, նշաձև կախիկներով մանյակներ ու ականջօղեր՝

⁴⁵² Տե՛ս **Ռ. Նահապետյան**, Քավորը հայոց մեջ, «Պատմաբանասիրական հանդես», 2007, թիվ 1, էջ 130:

⁴⁵³ Տե՛ս **Ն. Ավագյան**, նշվ. աշխ., էջ 93:

⁴⁵⁴ Տե՛ս **Մ. Պողոսյան**, նշվ. աշխ., էջ 23:

⁴⁵⁵ Տե՛ս **Գ. Բրուսյան**, նշվ. աշխ., էջ 11:

որոնցով կանայք նպատակ են ունեցել գերծ մնալ չար ուժերի վնասաբեր ազդեցությունից, միաժամանակ՝ դառնալ առավել գեղեցիկ ու հմայիչ՝ ժամանակի չափանիշներին համապատասխան: Ջարդերը մասերի թվային, գունային խորհրդրդանիշներով կրողին պիտի ապահովեին երջանիկ և արգասավոր կյանք⁴⁵⁶:

Ջարդերի որոշ տեսակներին վերագրվել է առողջապահական հատկանիշներ՝ կայծակի հարվածներից գերծ մնալու համար կրել են դարբնի պատրաստած պողպատե մատանիներ, հավկուրությունը կանխելու համար՝ մարգարիտե զարդեր, նաև զմրուխտ, հակաթույնի չարության համար՝ ավմաստե քար, և այլն:

Ի վերջո հայոց ավանդական տարազի շատ խմբեր ներկայումս, բացառությամբ Արցախի-Չանգեզուրի տարեց կանանց զգեստի, դուրս են եկել կենցաղավարումից, դրանց առանձին տարրեր դարձել են ընտանեկան սրբության մասունքներ, անցյալի վերհուշ կամ թանգարանային նմուշ:

Рафик Нагапетян – Об этнокультурных характерных чертах армянского национального костюма. – Армянский традиционный национальный костюм такой же древний, как и армяне сами. Материал, цвет, дизайн армянского национального костюма совпадают с основными трудовыми условиями, видами занятости, возрастными группами, с природными и географическими условиями, национальными обычаями и бытом армянского народа. Длительные контакты с соседними нациями так же имеют свое отражение на дизайне армянского национального костюма. Аристократический и городской костюмы уступили свое место европейскому, а в сельской местности традиции сохранились дольше. Комплекты сельских костюмов строго отличались друг от друга.

Rafik Nahapetyan – On Some Ethnocultural Characteristics of the Armenian National Costume. – The Armenian traditional national costume is as old Armenians themselves. The material, color, design, embellishments of the Armenian national costume were adjusted to the existent working activities, main occupations, climatic, geographic conditions, national and cultural heritage, lifestyle and historical, political state. The continuous contacts and interaction with neighboring nations also had its impact on the design of the Armenian national costume.

Aristocratic and urban costumes were more prone to changes and the European clothing was used by them much sooner, while the rural population preserved national traditions far longer. The peasants' costume differed from each other in Western and Eastern Armenia women's even men's costumes were heavily embroidered. The other essential difference consisted in the use of apron in Western Armenian regions, as it was considered to be one of inseparable items of clothing, while in Eastern Armenia it was missing.

In all its diversity an important item, the head-dress, preserved and reflected the most ancient features of ethnic culture. Shoes and socks not only expressed the socio-economic status of an individual but also they were of knitted and adorned in a special way with the help of which individuals were divided into age and sex groups. Of special interest is the study of jewelry, its aesthetic, prestigious, healing, magical function.

⁴⁵⁶ Տե՛ս նաև **Չ. Փափազյան**, նշվ. աշխ., էջ 40:

**ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ
ԱՍՏԻՃԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ
ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ 1991-2005ԹԹ.**

ԼԻԼԻԹ ՄԿՐՏՁՅԱՆ

Մասնագիտական կրթության դերը հասարակության բարեփոխման գործընթացում հաստատվում է համաշխարհային փորձով: Այն ցույց է տալիս, որ ժամանակակից շուկայական հարաբերություններին անցումը հաջողությամբ հաղթահարած բոլոր երկրներում (օրինակ՝ հետպատերազմյան Գերմանիան և Ճապոնիան, ԱՄՆ-ն՝ 60-ական թվականներին) մասնագիտական կրթության ոլորտը դիտում էին որպես գերակայող բնագավառ և դրանից ելնելով կառուցում իրենց ներդրումային քաղաքականությունը: ԱՄՆ-ում գործում էր «Կրթության ազգային նպատակներ» ծրագիրը, որում ընդգծվում էր, որ «Կրթությունը կյանքի որակի հիմնական ցուցանիշն է: Դա տնտեսական հզորության և անվտանգության գիտական ստեղծագործական ներուժի, մշակույթի, արվեստի առանցքն է: Կրթությունը 21-րդ դարում Ամերիկայի մրցունակության ապահովման բանալին է»⁴⁵⁷:

Մասնագիտական կրթության ոլորտում պետությունների ուժեղացումն ըստ էության տնտեսական մրցակցություն է, քանի որ արդի պայմաններում կրթությունը դարձել է տնտեսական աճի հիմնական աղբյուր: Մասնագիտական կրթության զարգացման շարժիչ ուժը և բնականոն ընթացքը պարզելու համար անհրաժեշտ է դիտարկել դրա քանակական և որակական աճը նախասահմանող սոցիալ-տնտեսագիտական և գիտատեխնիկական բնույթի ընդհանուր գործոնները:

Հայաստանի Հանրապետության մասնագիտական կրթության համակարգը ձևավորվել է դեռևս 20-րդ դարի առաջին կեսին: Հարմարված լինելով խորհրդրդային պետության տնտեսության առանձնահատկություններին, արհեստագործական և միջին մասնագիտական կրթական համակարգը (որը քանակական աճի առավելագույն ցուցանիշների հասավ 1980-ականների վերջին), կտրուկ անկում ապրեց և կորցրեց իր երբեմնի նշանակությունը 1990-ականների կեսերին՝ սոցիալ-տնտեսական ճգնաժամ ապրող Հայաստանի Հանրապետությունում⁴⁵⁸:

Մասնագիտական կրթական ծրագրերը նպատակաուղղված են կրթության հանրակրթական և մասնագիտական մակարդակների հաջորդականության միջոցով համապատասխան որակավորման մասնագետների պատրաստմանը, կարողությունների և հմտությունների ձևավորմանը, գիտելիքների ծավալի ընդլայնմանը և որակավորման բարձրացմանը⁴⁵⁹:

Եթե մինչև 1990-1991 թվականները մասնագիտական կրթությունը լիովին անվճար էր, ապա 1992 թվականից մասնագիտական ուսումնական հաստա-

⁴⁵⁷ **Հ. Պետրոսյան**, Կրթության ժամանակակից համակարգեր, ուսումնական ձեռնարկ, Երևան, «Լուսաբաց», 2005, էջ 3:

⁴⁵⁸ Մարդկային զարգացման ազգային զեկույց, 2006, էջ 97:

⁴⁵⁹ **Հ. Պետրոսյան**, նշվ. աշխ., էջ 57:

տությունները անվճար պետական պատվերով ուսուցման հետ մեկտեղ սկսեցին իրականացնել նաև սովորողների վճարովի ուսուցումը՝ ինքնուրույն սահմանելով ուսման վարձի չափը:

Հավելված 1⁴⁶⁰

Միջին և բարձրագույն մասնագիտական կրթության անվճար և վճարովի ուսուցման դիմորդների թիվը.

	1992	1993	1994	1995	1996	1997	1998
Բարձրագույն մասնագիտական կրթություն	13927	13483	13145	12998	11799	11633	12965
Միջին մասնագիտական կրթություն	14917	12853	11531	13623	12919	11665	11322

Պետական բուհերի անվճար ուսուցման տեղերի թիվը յուրաքանչյուր տարի հաստատում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը՝ ելնելով համապատասխան մասնագետների պահանջարկից և պետական բյուջեով մասնագիտական կրթության համար նախատեսված գումարների ծավալից: Իսկ վճարովի ուսուցման տեղերի թիվը յուրաքանչյուր տարի հաստատվում են Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից:

Մասնագիտական ուսումնական հաստատություններում ընդունելությունն իրականացվում է մրցութային հիմունքով՝ ընդունելության քննությունների միջոցով⁴⁶¹:

Միջնակարգ մասնագիտական կրթության նպատակը միջին մասնագիտական որակավորման կադրերի պատրաստումն էր, միջնակարգ ընդհանուր կրթության հիմքի վրա ընդհանուր և մասնագիտական գիտելիքների ընդլայնումն ու խորացումը:

Այն իրականացվում էր տեխնիկումների, ուսումնարանների և քոլեջների միջոցով (պետական և ոչ պետական):

Խորհրդային շրջանում միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում կադրեր էին պատրաստում 103 մասնագիտությունների գծով⁴⁶²:

Նախնական և միջին մասնագիտական կրթությունը պետք էր հանդիսանար Հայաստանի Հանրապետությունում աղքատության կրճատման հիմնական երաշխիքը, իսկ բարձրագույն կրթությունը՝ երկրի զարգացման երաշխիքը:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության նպատակն էր հիմնական ընդհանուր կամ միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիմքի վրա սովորողներին պատրաստել նախնական մասնագիտական որակավորում պահանջող աշխատանքային գործունեության:

Նախնական մասնագիտական կրթությունն իրականացվում էր նախնական մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ արհեստագործական ավագ դպրոցներում, ուսումնարաններում, կազմակերպությունների ուսում-

⁴⁶⁰ Աղբյուրը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության բարձրագույն կրթության վարչություն, URL:// [http://www.edu.am/\(11.03.2012\)](http://www.edu.am/(11.03.2012)):

⁴⁶¹ «Կրթությունը Հայաստանում», Երևան, «Զանգակ-97», 2004, էջ 16:

⁴⁶² Տե՛ս URL://[http://www.edu.am/\(11.03.2012\)](http://www.edu.am/(11.03.2012)):

նական կենտրոններում և այլ մասնագիտական ուսումնական հաստատություններում: Համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում նախնական (արհեստագործական) կրթությունը կարող էր իրականացվել նաև անհատական մասնագիտական ուսուցման ձևով (վարպետային ուսուցում), որի իրականացման կարգը սահմանում էր ՀՀ կառավարությունը:

1991 թվականին Հայաստանի Հանրապետությունում հիմնադրվեցին նոր տիպի ուսումնական հաստատություններ՝ *քոլեջներ*, որոնք սակայն պաշտոնապես համարվում էին միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններ: Շրջանավարտներին շնորհվում էր կրտսեր ճարտարագետի կամ դրան համարժեք այլ որակավորում: Ընդունելությունը քոլեջներում կատարվում էր միայն միջնակարգ (լրիվ) ընդհանուր (10-ամյա) կրթության հիմքի վրա, իսկ ուսման տևողությունը 3 տարի էր:

Քոլեջները գործում էին մասնագիտական-տեխնիկական ուսումնարաններին (ՄՏՈՒ) և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններին (ՄՄՈՒՀ)՝ տեխնիկումներին ու ուսումնարաններին զուգահեռ:

ՄՏՈՒ-ներում իրականացվում էր մասնագիտական-տեխնիկական կրթություն: Այստեղ կարող էին ընդունվել հիմնական ընդհանուր (8-ամյա) և միջնակարգ (լրիվ) ընդհանուր (10-ամյա) կրթություն ունեցող անձինք: Ուսումնառությունը տևում էր 2 կամ 3 տարի՝ կախված դիմորդի կրթության հիմքից: Շրջանավարտները ստանում էին բանվորի որակավորում:

ՄՏՈՒ-ներում պատրաստում էին առավելապես արտադրական ոլորտի մասնագետներ: ՄՄՈՒՀ-ներում իրականացվում էր միջնակարգ մասնագիտական կրթություն, և ընդունելությունը կատարվում էր հիմնական ընդհանուր (8-ամյա) կրթության և միջնակարգ (լրիվ) ընդհանուր (10-ամյա) կրթության հիմքի վրա, սակայն ի տարբերություն ՄՏՈՒ-ների, ուսումնառության տևողությունը կախված էր ոչ միայն ընդունվողների նախընթաց կրթության մակարդակից, այն՝ մասնագիտությունից և կազմում էր 2-ից 5 տարի: Շրջանավարտներին շնորհվում էր տեխնիկի կամ դրան համարժեք՝ տեխնոլոգի, հաշվապահի, դասվարի, բուժքրոջ, երաժշտական համույթի կատարողի և այլ որակավորումներ:

Թե՛ մասնագիտական-տեխնիկական, թե՛ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններ հիմնական ընդհանուր (8-ամյա) կրթության հիմքի վրա ընդունվածները ստանում էին նաև միջնակարգ կրթություն, քանի որ մասնագիտական կրթության դիպլոմը միաժամանակ միջնակարգ կրթության վկայական էր համարվում:

Ի տարբերություն ՄՏՈՒ-ների և ՄՄՈՒՀ-ների, որոնք խորհրդային տարիներից էին պահպանվել և գործեցին մինչև 1998 թվականը, նորաբաց քոլեջները շրջանավարտներին շնորհում էին ավելի բարձր՝ կրտսեր ճարտարագետի որակավորում և ապահովում անցում մասնագիտական ուսումնական հաստատություններից բարձրագույն ուսումնական հաստատություններ: Քոլեջներում կիրառվում էին համապատասխան կերպով մշակված ուսումնական պլաններ, ինչի շնորհիվ երկրորդ կուրսը բարձր առաջադիմությամբ ավարտած ուսանողները կարող էին ուսումը շարունակել համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատության 3-րդ կուրսից:

Ինչ էին իրենցից ներկայացնում այդ արհեստագործական ուսումնարանները: Հասարակությունը, հատկապես նրա միջին և տարեց անդամները, լավ են

հիշում խորհրդային տարիներին գործող մասնագիտական-տեխնիկական ուսումնարանների (ՄՏՈՒ) կամ, կամ ինչպես դրանց ընդունված էր անվանել՝ պրոֆտեխուսումնարանների համակարգը, որը ի տարբերություն Ռուսաստանի և մի շարք այլ խորհրդային հանրապետությունների, Հայաստանի Հանրապետությունում անցած դարի 70-80-ական թվականներին արդեն, մեղմ ասած, բարձր հեղինակություն չէր վայելում. դրա պատճառների վերլուծություն չկատարելը համապատասխան իրավասու ատյանների կողմից հանգեցրեց ՄՏՈՒների վարկանիշի էլ ավելի անկմանը 90-ականների ընթացքում, ինչն, ի վերջո, բերեց նրան, որ «Կրթության մասին օրենքում» մասնագիտական ուսումնական հաստատությունների տիպերի շարքում նախնական մասնագիտական (կամ մասնագիտական-տեխնիկական) ուսումնական հաստատությունները պարզապես «մոռացվեցին»: «Կրթության մասին» օրենքը սահմանում էր, որ կրթական ծրագիրը, այն է՝ բանվորական որակյալ կադրերի պատրաստումը, կարող է իրականացվել հանրակրթական դպրոցի արհեստագործական հոսքերում, նաև՝ ձեռնարկությունների ուսումնարտադրական կենտրոններում⁴⁶³: Կարճ ժամանակ անց փորձը ցույց տվեց, որ այս երկու հնարավորությունները կիրառելի չէին. դպրոցում մասնագիտական կրթություն կազմակերպելու բոլոր փորձերը պարզապես ձախողվեցին, իսկ վերոնշյալ ուսումնարտադրական կենտրոնները Հայաստանի Հանրապետությունում առ այսօր գոյություն չունեն: Սակայն «Կրթության մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված էր ևս մեկ տարբերակ, այն է՝ նախնական մասնագիտական կրթության կազմակերպում ավելի բարձր աստիճանի մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ քոլեջներում, որն էլ, ի վերջո, ստեղծված իրավիճակից միակ էլքը դարձավ նախնական մասնագիտական կրթության իրականացման առումով:

Այնուամենայնիվ, Օրենքն ընդունված էր, և դրա դրույթների պահանջները պետք է անշեղորեն կատարվեին: Այսպես 2001 թվականին ՀՀ կառավարությունը հաստատեց «ՀՀ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության համակարգի ռացիոնալացման ծրագիրը»⁴⁶⁴, համաձայն որի այդ պահին հանրապետությունում գործող 58 ՄՏՈՒ-ներից 45-ը վերակազմավորվեցին ավագ դպրոցների (արհեստագործական հոսքով), 9-ը միացվեցին տվյալ բնակավայրում գործող քոլեջներին, իսկ 4-ը, որոնք իրոք գտնվում էին անմխիթար վիճակում, լուծարվեցին: Արդյունքում, 2002-2004 թվականներին նախնական մասնագիտական կրթությունն իրականացվում էր միայն 10-11 քոլեջում, այն էլ որպես երկրորդական գործունեություն: Բնական է, որ ստեղծված իրավիճակը առավել քան մտահոգիչ էր. հանրապետության կրթական համակարգից դուրս էր մնացել դրա կարևորագույն օղակներից մեկը, որն արտերկրի մասնագիտական կրթության ոլորտում ընդգրկված սովորողների թվաքանակով հաճախ ամենաբազմամարդն էր: Բարեբախտաբար, գտնվեցին շահագրգիռ ու նախաձեռնող մարդիք, որոնց թվում էին ինչպես շարքային մանկավարժներ ու հաստատությունների ղեկավարներ, այնպես էլ գիտնականներ, քաղաքական գործիչներ ու վարչական աշխատողներ, որոնք իրենց ձայնը բարձրացրին⁶ հիմնավորելու ու

⁴⁶³ ՀՀ օրենքը «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման մասին», ընդունվել է 08.07.2005 թ., URL://<http://www.mkuzak.am/> (24.10.2010):

⁴⁶⁴ ՀՀ օրենքը «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության համակարգի ռացիոնալացման ծրագիրը», URL://<http://www.arlis.am/>(24.10.2010):

ապացուցելու նախնական մասնագիտական կրթության անհարկի անտեսման, դրա նկատմամբ արհամարհական վերաբերմունքի անթույլատրելիությունն ու կործանարար ազդեցությունը երկրի տնտեսության զարգացման համար: 2003 թվականին նրանց վերջապես արձագանքեց ՀՀ կրթության և գիտության նախարարության նոր ղեկավարությունը, և վերջինիս համար ջանքերի շնորհիվ նույն թվականի դեկտեմբերին ՀՀ Ազգային Ժողովն «Օրենքում» կատարեց համապատասխան լրացումներ ու փոփոխություններ, որոնց արդյունքում ըստ էության վերականգնվեց նախնական մասնագիտական կրթության համակարգը: Այժմ արդեն ՀՀ կառավարությունն ընդունել է համապատասխան որոշում՝ ավագ դպրոցների վերակազմավորված նախկին մասնագիտական-տեխնիկական ուսումնարաններին ինքնուրույն մասնագիտական ուսումնական հաստատության՝ արհեստագործական ուսումնարանի կարգավիճակ շնորհելու վերաբերյալ, և այսօր Հայաստանում այդ անվան տակ արդեն գործում են որակյալ բանվորներ ու արհեստավորներ պատրաստելու կոչված 26 կրթօջախ:

Նախնական մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկը, որը 2003 թ. հաստատել էր ՀՀ կառավարությունը, պարունակում էր 217 մասնագիտություն և մասնագիտացում, որոնցից, սակայն, 2005 թվականի դրությամբ ՀՀ-ում ուսուցանվում էին 65-ը: Ընդունելությունը նախնական մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող և հաստատություններում՝ արհեստագործական ուսումնարաններում, ինչպես և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, իրականացվում է մրցութային հիմունքով, այս սկզբունքը սահմանված է ՀՀ Սահմանադրությամբ, սակայն առանց ընդունելության քննությունների՝ միջնակարգ ընդհանուր կրթության ատեստատի կամ հիմնական ընդհանուր /8-ամյա/ կրթության վկայականի գնահատականների հիման վրա:

Նախնական մասնագիտական կրթությունն իրականացվում էր 26 արհեստագործական ավագ դպրոցներում և 12 միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ քոլեջներում: Համակարգում 2004 թվականին ընդգրկված էր շուրջ 2700 սովորող⁴⁶⁵:

Նախնական մասնագիտական կրթության տևողությունը՝ կախված դիմորդների նախընթաց կրթությունից (հիմնական ընդհանուր կամ միջնակարգ (լրիվ) ընդհանուր) և ընտրած մասնագիտություններից, 1-3 տարի է:

Նախնական մասնագիտական կրթության օղակի անհրաժեշտությունը պայմանավորված էր կրթության շարունակականությունը ապահովելու, կրթության համակարգի բաղադրիչներն ամբողջացնելու տրամաբանությամբ, տնտեսական վերակենդանացմանը զուգահեռ արհեստագործական և միջին կրթությամբ աշխատուժի նկատմամբ ձևավորվող պահանջարկով, գործազրկության ու աղքատության կրճատման խնդիրներով⁴⁶⁶:

1991 թվականից հետո ընկած Ժամանակահատվածում նախնական մասնագիտական կրթության համակարգը զգալի փոփոխություններ է կրել նաև մասնագիտական առումով, ինչը անմիջականորեն կապված է երկրի տնտեսական կառուցվածքում տեղի ունեցած փոփոխությունների հետ: Մասնագիտությունների ցանկում մեծացել էր առևտրի և սպասարկման բնագավառների մասնագի-

⁴⁶⁵ «Կրթությունը Հայաստանում», 2004, էջ 18:

⁴⁶⁶ Մարդկային զարգացման ազգային զեկույց, 2006, Կրթությունը Հայաստանում, Երևան, 2006, էջ 97-98:

տությունների տեսակարար կշիռը, մինչդեռ արդյունաբերության և շինարարության մասնագիտություններով սովորողների թվաքանակը խիստ նվազել էր:

2004 թ. հատկացվել է ընդամենը անվճար ուսուցման 1980 և վճարովի ուսուցման շուրջ 400 տեղ: Իհարկե ընդունելության մրցութայնության սկզբունքը ապահովում է լավագույն, առավել արժանի դիմորդների ընդունելություն, սակայն նշենք, որ զարգացած, մասնավորապես եվրոպական երկրներում այս մակարդակի մասնագիտական կրթությունը մատչելի է բոլորի համար. այն լիովին անվճար է և տեղերը գործնականում անսահմանափակ են: Այդ երկրների կառավարությունները երիտասարդների համար արհեստագործական կրթության ապահովումը դիտարկում են որպես սոցիալական և որոշ չափով անգամ քաղաքական խնդիր: Հասկանալի է, որ մեզանում, ներկայիս սուղ բյուջետային հնարավորությունների պայմաններում, անհնար է ՀՀ կառավարությունից պահանջել լիակատար ու համատարած անվճար մասնագիտական կրթություն, սակայն դա պետք է դառնա երկրի գերխնդիրը, ինչը պետք է լուծում ստանար հետագա տարիների ընթացքում:

2004 թ. նախնական մասնագիտական ուսումնական հաստատություններն ըստ էության առաջին անգամ կատարեցին ընդունելություն նոր կարգավիճակով՝ որպես արհեստագործական ուսումնարաններ, և գործնականում այդ համակարգը դեռ նոր պետք է հզորանա և ընդլայնվի՝ ինչպես ուսանողների թվաքանակի, այնպես էլ մասնագիտությունների ընդգրկման իմաստով:

Չնայած կատարված վերափոխումներին⁸ հանգում ենք այն եզրակացությանը, որ նախնական և միջին մասնագիտական կրթությունը, այնուամենայնիվ, նորանկախ Հայաստանի Հանրապետությունում, կորցնելով իր երբեմնի դերակատարումը կրթական համակարգում՝ չկարողացավ ամբողջությամբ արձագանքել նոր հասարակության պահանջները:

Лилит Мкртчян – Организация первой степени специального образования за годы независимости Республики Армения: 1991-2005. – Роль специального образования в процессе реформирования общества утверждается международным опытом. Система специального образования Республики Армения была создана еще в первой половине 20-го века. Привыкнув характерные черты советской экономики состоянии системы начального специализированного и профессионального образования резко упал и потерял свое былое значение в середине 1990-х годов в Республике Армения страдает от социально-экономического кризиса.

Целя неспециализированных образовательных проектов для подготовки квалифицированных специалистов релевантно, сформировать умения и навыки, расширить спектр знаний и разработать квалификации через преемственность общеобразовательных и специализированных уровней образования.

Несмотря на внесенные изменения, мы приходим к выводу, что начальное и профессиональное образование утратившую былую роль в образовательной сфере не смогла полностью отвечать требованиям нового общества в Армении.

Lilit Mkrtchyan – Organization of the first degree of specialized education during the independence years of the RA: 1991-2005. – The role of specialized education in the process of the reformation of society is approved by the international experience.

It shows that in the countries having successfully passed to the market relations the field of specialized education was regarded as a superior sphere and taking into consideration this fact they created their investment policy. The system of specialized education of the Republic of Armenia was formed still in the first half of the 20th century. Being accustomed to the characteristic features of the Soviet state economy the system of primary specialized and vocational education drastically collapsed and lost its former significance in the mid 1990's in the Republic of Armenia suffering from socio-economic crisis.

The goals of specialized educational projects are to prepare relevantly qualified specialists, to form abilities and skills, to expand the range of knowledge and to develop qualification through the succession of general education and specialized education levels.

In spite of the changes made we come to the conclusion that primary and vocational education having lost its has-been role in educational sphere couldn't completely meet the requirements of the new society in the newly independent Republic of Armenia.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Պ Ա Տ Մ Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ВАЛЕРИ ТУНЯН

Армяно-русские отношения в церковной сфере

1836 – 1917 гг. 3

Ա Ն Ի Ո Ւ Թ Ո Ւ Ջ Յ Ա Ն

Հինգերորդ դարի հայ պատմագրությունը Միքայել

Նալբանդյանի գնահատությամբ..... 24

Մ Ե Լ Ի Ն Ե Ա Ն Ո Ւ Մ Յ Ա Ն

Յոզղատի հայության տեղահանության և կոտորածների

դատավարությունը՝ ըստ օսմանյան «Մեմլեքեթ» օրաթերթի 36

Հ Ա Ս Մ Ի Կ Մ Ի Մ Ո Ն Յ Ա Ն

Արևմտահայ քաղաքական մտքի դիրքորոշումը Հայաստանի

առաջին Հանրապետության գոյության նկատմամբ..... 42

Մ Ա Ր Ի Ա Մ Հ Ո Վ Մ Ե Փ Յ Ա Ն

Արևմտահայ գրատպության պատմությունից..... 50

Մ Շ Ա Կ Ո Ւ Թ Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ա Ր Ա Ր Ա Տ Ա Դ Ա Ս Յ Ա Ն

Երվանդ Քոչարի տարածության մեջ..... 57

Ա Ն Ն Ա Ա Ս Ա Տ Բ Յ Ա Ն

Արամ Սաթունցի ստեղծագործությունը

(նվիրվում է ծննդյան 100-ամյա հոբելյանին)..... 77

Լ Ի Լ Ի Թ Հ Ա Կ Ո Ր Յ Ա Ն

Նիկոլ Գալանդեթյան. Մանկավարժական գործունեությունն

ու մանկական ստեղծագործությունները..... 84

Ա Ն Ն Ա Գ Ի Լ Ա Վ Յ Ա Ն

Թատրոնը և դրամատուրգիան

Դերենիկ Դեմիրճյանի գնահատմամբ..... 88

Գ Ր Ա Կ Ա Ն Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ա Բ Դ Ա Մ Ա Ր Հ Ա Տ Յ Ա Ն

Համո Սահյանի սիրերգության գույները

(Նվիրվում է Հ. Սահյանի ծննդյան 100-ամյակին) 97

Ա Ր Մ Ի Ն Ե Ա Դ Ա Մ Յ Ա Ն

Նեոռոմանտիզմի տեսական ըմբռնումը

ռուս գրականագիտության մեջ..... 120

Հ Ա Ս Մ Ի Կ Վ Ա Ն Յ Ա Ն

Լեզգենդի ժանրային առանձնահատկությունները..... 120

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ANNA STEPANYAN

La lexicographie franco-arménienne et l'arménien moderne 127

ԼՈՒՄԲԵ ՀՈՎՀԱՆՆԻՄՅԱՆ

Դերբայ + գոյական կադապարով բառակապակցությունների
կիրառությունները Պարույր Սևակի պոեզիայում 134

ԻՍԱՍՏԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԳՐԻԳՈՐ ԱՍՍՏՐՅԱՆ

Ժամանակակից հումանիզմի տարատեսակները.
Էկոլոգիական հումանիզմ (Էկոհումանիզմ)..... 139

ԳՐԻԳՈՐ ԱՍՍՏՐՅԱՆ

Արդի համաշխարհային հումանիստական շարժումը.
“Հումանիստական մանիֆեստ 2000. Նոր պլանետար
հումանիզմի կոչ” (հոդված երկրորդ)..... 143

ՄԵՐԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Անձի քաղաքական ազատությունը որպես
դիսկուսային գործունեության արդյունք 149

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԵՂԻՇԵ ԲԱԶՈՅԱՆ

Պառլամենտական վերահսկողության
հասկացությունն ու բովանդակությունը..... 159

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱԿՍԵԼ ՊՈՏՈՍՅԱՆ, ՇՈՂԻԿ ՔՈԼՅԱՆ

ՀՀ գյուղական առկա բնակչության սեռա-տարիքային կառուցվածքի
տարածաշրջանային առանձնահատկությունները և հիմնախնդիրները..... 173

ՎԱՆՅԱ ՂԱԶԱՐՅԱՆ

Հարկաբյուջետային քաղաքականության ձևավորման
առանձնահատկությունները և արդյունավետության
բարձրացման ուղենիշները Հայաստանի Հանրապետությունում 185

ՀՈՍՍԵԻՆ ԷԲՐԱՀԻՄԻ ՔԻԱՍՍԱՐԻ

Թեհրանի նահանգի զբոսաշրջային ներուժի հիմնական տարրերը..... 191

ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ

ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Հայկական ազգային հագուստի էթնոմշակութային
բնութագրի շուրջ 197

ԼԻԼԻԹ ՄՎԼՏՉՅԱՆ

Մասնագիտական կրթության առաջին աստիճանի կազմակերպումը
ՀՀ-ում անկախության տարիներին 1991-2005 թթ. 211

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ «ԱԿՈՒՆՔ» ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Ակունք» հոդվածների ժողովածուում տպագրության ներկայացվող հոդվածների տեխնիկական պահանջները.

- Տպագրության ներկայացվող հոդվածները պետք է գրված լինեն Word տեքստային խմբագրի օգնությամբ:
- Հոդվածները ներկայացնել հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներով:
- Հոդվածի շարվածքը լինի Unicode-ով (հայերեն հոդվածների դեպքում՝ նաև Sylfaen տառատեսակով), տառաչափը՝ 12, միջտողային հեռավորությունը՝ 1.5, թղթի ֆորմատը՝ A4:
- Հոդվածի սկզբում գրել վերնագիրը՝ մեծատառերով, հաջորդ տողում՝ հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ մեծատառերով:
- Հղումները դնել տողատակում՝ համարների աճման կարգով, նշել աղբյուրը՝ հեղինակին, վերնագիրը, հրատարակության վայրը, տարեթիվը (պարբերական հրատարակության դեպքում՝ նաև համարը) և էջը:
- Հոդվածի վերջում գրականության ցանկի առկայության դեպքում հղումների համարների հերթականությունը պետք է համընկնի տեքստում դրանց հանդիպման հերթականության հետ: Գրականության ցանկում նշել գրքի/հոդվածի հեղինակին, վերնագիրը, հրատարակության վայրը, տարեթիվը (պարբերական հրատարակության դեպքում՝ նաև համարը), հոդվածների դեպքում՝ հոդվածի առաջին և վերջին էջերի համարները: Օրինակ՝

1. Harary F., *Graph Theory*. Addison-Wesley, Reading, MA, 1969.

2. Давтян Н.Н., *О наименьшем и наибольшем возможных числах вершин с интервальным спектром на множестве правильных реберных раскрасок дерева*. Математические вопросы кибернетики и вычислительной техники, т. 32, Ереван, 2009, с. 107–111.

- Հոդվածի վերջում գրել համառոտ ամփոփումներ. հայերենով գրված հոդվածների համար՝ ռուսերեն և անգլերեն լեզուներով, ռուսերենով գրված հոդվածների համար՝ հայերեն և անգլերեն լեզուներով, անգլերենով գրված հոդվածների համար՝ հայերեն և ռուսերեն լեզուներով:
- Հոդվածին անհրաժեշտ է կցել նաև (առանձին էջով կամ առանձին ֆայլով) հոդվածի վերնագիրը և հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, ինչպես նաև հեղինակի (հեղինակների) հեռախոսի համարը (համարները), էլեկտրոնային փոստի հասցե (e-mail):
- Հոդվածները ներկայացնել էլեկտրոնային տարբերակով
 - Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ, բնագիտական ֆակուլտետի մասնաշենք՝ Նարինե Դավթյանին, կամ
 - ուղարկել akunq.yusib@gmail.com և banber_ib@ysu.am էլեկտրոնային հասցեներով:

Ա Կ Ո Ւ Ն Ք

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԹԻՎ 2(8)

Չամարի պատասխանատու՝ Ա.Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Չամակարգչային ձևավորումը՝ Ն.Ն. ԴԱՎԹՅԱՆԻ

Ստորագրված է տպագրության 22.11.2013 թ.:

Չափսը՝ 70x100^{1/16} :

Տպաքանակ՝ 100: Պատվեր՝ 86:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1:

Երևանի պետական համալսարանի
օպերատիվ պոլիգրաֆիայի ստորաբաժանում
Երևան, Ալ. Մանուկյան 1: